



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

С. А. АВАКЯН

ФОНЕТИКА АРМЯНСКИХ  
ЛАПИДАРНЫХ НАДПИСЕЙ  
(X—XIV ВВ.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1973

003.071

✓

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

108365

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
(X—XIV ԳԳ.)

Երախտագրությունս արժ' ապրիլ 1973-ին,  
նկատելով Ձեր աշխատանքը, ազատազուրկ կարգի մեջ  
և աջակցություն ընդհանուր հարցերով, ձեր  
համար կատարված աշխատանքները:

Վավարյան  
Յ. Մ. Յ.





Աշխատության մեջ վիճազրական հուշարձանների նույնական վերծանությունների հիման վրա քննվում են նրանցում արտացոլված հնչյունական իրողությունները, դասական հայերենի հնչյունական համակարգի կրած փոփոխությունները, ետդասական հայերենի և կենդանի խոսվածքների հնչյունափոխական երևույթների ներթափանցումները:

Պատասխանատու խմբագիր  
Վ. Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ



## Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Ներկա աշխատութիւնը նվիրւած է ժ—ժԴ դարերի վիմական արձանագրութիւններում ավանդւած հայերենի հնչյունական օրինաշափութիւնների ուսումնասիրութեանը: Միջնադարի վիմական բնագրերը շարագրւած են մեծ մասամբ ժամանակի ավելի հասկանալի, պարզ գրաբարով, որը իր բոլոր հատկանիշներով զգալապէս տարբերւում էր դասական և ետդասական գրական հայերենից: Սակայն արձանագրութիւններ կազմողները կամ փորագրողները, հմուտ չլինելով նույնիսկ այդ ոչ խրթին գրաբարի իմացութեան մեջ, հաճախ արձանագրւող բնագրերն են ներմուծել իրենց կենդանի բարբառների բազմաթիւ տարրեր՝ առօրյա, աշխարհիկ կյանքին ու կենցաղին կամ տնտեսական գործարքներին վերաբերող նոր բառեր, տերմիններ ու դարձվածքներ, նույնիսկ քերականական իրողութիւններ, որոնցով այդ բնագրերի լեզուն ավելի հեռանալով գրական հայերենից, այս կամ այն շափով կարող է արտացոլել կենդանի խոսվածքների վիճակը վկայւած ժամանակաշրջանում:

Վիմական բնագրերում ավանդւած հնչյունական օրինաշափութիւնների կամ նրանցում դասական հայերենի հնչյունական համակարգի կրած փոփոխութիւնների մասին պատկերացում են տալիս հին հայերենի բնիկ կամ հետագայում փոխառւած լեզվական միավորների գրային արտահայտութիւնները կամ տառաշարքերի փորագրութիւնները, հատկապէս նրանցում ավանդական ուղղագրութեան դանազան խախտումներն ու շեղումները, փոխառյալ բառերի ու հատուկ անունների տարրեր տառադարձութիւնները:

Հանրահայտ իրողութիւն է, որ հին ձեռագիր մատյաններում և վիմագրերում նկատւող ուղղագրական շեղումներն ու տարբերեցումները մեծ մասամբ ներկայացնում են տվյալ միավորի



հնչումը ավելալ ուղորտում և բոլոր դեպքերում արտացոլում հեղինակների խոսակցական լեզվի արտասանությունը, ըստ որում, գրաբարին անհարազատ ձևերը հաճախ օրինաչափ ու կանոնավոր են այն խոսվածքներում, որոնցից դրանք ներթափանցել են:

Սակայն, շպետք է կարծել, թե վիժակա՛ն բնագրերում փորագրված լեզվական միավորները ժամանակին արտասանվել են ճիշտ այնպես, ինչպես արտահայտում են մեսրոպյան այբուբենի գրերը, այսինքն գոյություն է ունեցել լիակատար համասլատասխանություն այդ միավորների գրային արտահայտության և կենդանի լեզվում դրանց հնչման միջև, ինչպես այդ կարելի էր ասել և դարի գրական հուշարձաններում վկայված ձևերի մասին: Ավելի հաճախ վիժագրերում կարդացվող տառաշարքերը կամ բառաձևերը փորագրված են սոսկ գրաբարի ուղղագրության հետևություններով, զգալի շափով անկախ ու հեռու իրական, կենդանի արտասանությունից, քանի որ, իբրև ընդհանուր կանոն, վիժակա՛ն արձանագրությունները, սկսած հնագույն՝ Տեկոթի բնագրից (Ն դ.) մինչև վերջին դարերի վիժակա՛ն հիշատակարանները, հորինում էին միայն ժամանակի գրաբարով, ամեն կերպ ձգտելով անաղարտ պահպանել ավանդական ուղղագրությունը և ազատ մնալ խոսակցական լեզվի ազդեցություններից: Սակայն այդ նրանց մասամբ էր հաջողվում, ուստի և վիժագրերում զգալի են բարբառներից կամ միջին հայերենից եկող լեզվա-քերականական, մանավանդ հնչյունական իրողությունները՝ իբրև գրական հայերենի տարբեր ավանդախախտումների:

Իր հերթին դասական գրաբարի հնչյունական համակարգը ևս չէր մնացել և դարձում ամբողջով և՛ վիճակում, այլ նկատելի փոփոխություններ էր կրել հետագա դարերի մատենագրական հուշարձաններում և վիժակա՛ն բնագրերում, հատկապես հին հայերենի ձայնորդների ու երկբարբառների արտասանության և նրանց գրային արտահայտության ուղորտում, ըստ որում, այդ հնչույթներն արտահայտող մի շարք տառաձևեր փոխել էին իրենց զորությունը և այլևս չէին ներկայացնում և՛ դարի հնչումը, թեև սահմանված ուղղագրությամբ շարունակվում էին նրանց հին կիրառությունները:

Մյուս կողմից, քննության ենթակա արձանագրություններում փորագրված տառաձևերով հազիվ թե հնարավոր լիներ արտահայտել ժամանակի կենդանի խոսվածքներում արտասանվող բոլոր հնչյունները կամ նրանց տարբերակները: Բնական է կարծել,



որ եղած տառաձևերը իրականում կարող էին ներկայացնել նաև հին հայերենի հնչյունների այնպիսի հատկանիշներ, որոնք անձանոթ էին դասական գրաբարի հնչյունական համակարգին և հատուկ միայն բարբառային արտասանությանը, թեև չէին հասցնում հնչույթային տարբերակման: Այսպես է, օրինակ, բաղաձայնների քմայնացման պարագան. արդի մի շարք բարբառների փաստերը թույլ են տալիս ենթադրել, որ միջին դարերում ևս պայթական բաղաձայնները որոշ դիրքերում արտասանվել են քմայնացած, սակայն այս երևույթը որևէ գրային արտահայտություն չի ստացել ոչ միայն ուշ շրջանի գրաբար կամ միջին հայերեն երկերում, այլև բարբառային արտասանության իրողություններով հարուստ վիմական բնագրերում:

Այստեղից, վիմական բնագրերում փորագրված տառաձևերի իրական արտասանությունը վկայված ժամանակաշրջանում հավաստի որոշելու և նրանցում արտացոլված հին հայերենի հնչյունական համակարգի համապատասխանությունները սահմանելու համար անհրաժեշտ է ելակետ ընդունել ժամանակակից բարբառների և խոսվածքների արտասանական և հնչյունափոխական օրինաչափությունները, որոնք կարող են պարզել, թե որտեղից են ներթափանցել արձանագրություններում և միջնադարի այլ գրավոր հուշարձաններում նկատվող բարբառային շեղումներն ու նորարանությունները:

Վիմական բնագրերում արտացոլված հնչյունական փոփոխությունները ուսումնասիրելու համար հիմք են հանդիսացել մեզ հասած արձանագրությունների հավաստի և ստուգելի վերծանությունները, այն տեղաշարժերի հաշվառմամբ, որոնք միջին դարերում առաջացել էին լեզվական միավորների արտասանության և գրության միջև: Դասական գրաբարի հնչյունական օրինաչափությունների բոլոր շեղումներն ու խաթարումները քննության են ենթարկվում արձանագրություններում փորագրված նույնական վկայությունների հիմամբ, դրանցում արձանագրված հնչյունափոխական երևույթները դիտելով հտղասական գրաբարի, միջին հայերենի և արդի բարբառների հետ ունեցած առնչություններում, ձգտելով ամեն մի առանձին դեպքում որոշել գրաբարին կամ միջին հայերենին անհարազատ իրողությունների ակունքները:

Ի տարբերություն ձեռագիր սկզբնաղբյուրների, վիմական արձանագրությունների փորագրման, ուրեմն և մեր հետազոտության մեջ առկոչվող վկայությունների տեղն ու ժամանակը առա-



վել կամ սլակաս ստույգ որոշվում է եղած տարեթվերով կամ 32-րդ էջում նշված եղանակներով, իրողություն, որ հնարավորություն է տալիս հավաստել վիճազրերում արտացոլված հնչյունափոխական երևույթների ժամանակագրությունը, այդ փոփոխությունները տարամանակյա բնութագրությունների ենթարկելու համար: Մինչդեռ մեզ հասած մատենագրական երկերը հրատարակման ներկա վիճակով գրեթե ղուրկ են այդպիսի հնարավորությունից, քանի որ այս դեպքում առառավելն կարելի է դիտել այս կամ այն միավորի հիշատակությունը կամ առկայությունը տվյալ ձևագրի ընդօրինակության մեջ, բայց ոչ նրանց առաջացման կամ փոխակերպության ընթացքը և պատմական հաջորդականությունը:

Վիճական արձանագրություններում արտացոլված հնչյունական համակարգի փոփոխություններն ուսումնասիրելիս օգտագործել ենք այն աղբյուրները, որոնք պարունակում են հավաստի վերծանված և աներկրա որոշված, ստուգելի բնագրեր. դրանք են՝ «Դիվան հայ վիճագրության»—«Corpus»-ի երեք պրակները, Կ. Ղաֆաղարյանի կազմած՝ Հովհաննավանքի, Սանահնի, Հաղբատի վիճագրերի ժողովածուները և առանձին վերծանողների՝ Աշխ. Քալանթարի, Ս. Տեր-Ավետիսյանի, Ս. Բարխուդարյանի, Ս. Սաղումյանի անտիպ հավաքածուները:

ԳԱ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճագրական ամենամյա գիտարշավների ընթացքում շրջագայելով Հայաստանի և Ադրբեջանի հնավայրերը, մենք առիթ ենք ունեցել ի նորո կամ առաջին անգամ ընդօրինակելու և վերծանելու մեծ թրվով վիճական բնագրեր, որոնք կազմում են մեր հավաքածուն: Այս աշխատության մեջ մեր հավաքածուի նյութերին դիմում ենք այն դեպքերում, երբ. ա. տվյալ բնագիրը շունի դիտական, ստուգելի վերծանություն, այսինքն տեղ չի գտել վերը հիշված աղագիր ժողովածուներում, բ. տվյալ բնագրի վկայության՝ հրատարակի վրա եղած վերծանությունը ինչ-որ շափով ճշգրտվում է մեր ընթերցումով:

Արևմտյան Հայաստանում գտնվող հուշարձանների՝ ընդօրինակության համար անմատչելի վիճագրերից բաղված վկայությունները անհրաժեշտ դեպքերում մեջ ենք բերում Ն. Սարգիսյանի և Կ. Բասմաշյանի ըստ ամենայնի վստահելի, թեև անստուգելի, վերծանություններով:

Հնչյունափոխական երևույթները լուսարանող վկայությունները գյուրընկալելի դարձնելու նպատակով ներկայացնում ենք



հնարավորին չափ կարճառոտ բառակապակցությունների կամ ամփոփ նախադասությունների մեջ, ամեն անգամ նշելով հնչյունափոխված միավորների սկզբնաձևերը կամ նկատված փոփոխությունների ընթացքը:

Այդ վկայությունների հետ անհրաժեշտ տեղեկություններ են հաղորդվում ավյալ արձանագրության մասին, ըստ այսմ, նշվում է հուշարձանը, որից առնված է քաղվածքը, փորագրման ժամանակը՝ հայկական մեծ թվականով, եթե պահպանվել է թվագիրը (ՄԼԲ, ՆԿԱ, ՈՂԲ, ՉԸ և այլն) կամ նշելով դարը, եթե անթվական է (Ժ, ԺԱ, ԺԳ և այլն), վերջում համառոտագրությամբ նշվում է այն աղբյուրը, որից քաղված է վկայությունը:

Փաստական նյութի ընկալումը դյուրին դարձնելու նպատակով անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրության ներածական մասում տեղավորել հայկական վիմագրական հուշարձանների գիտական նշանակության և նրանց հետազոտությունների պատմության համառոտ տեսությունը:

Այս աշխատությունը վիմական բնագրերի հնչյունական օրինաչափությունների ամբողջական հետազոտության առաջին փորձն է և հավակնություն չունի լիակատար կամ սպառիչ լինելու:





Ա. ՄԻՋԻՆ ԴՍՐԵՐԻ ՎԻՄԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐՆ ԻՐԻՎ ՀԱՅԵՐՆՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

Միջնադարի հայկական նյութական մշակույթի բարձրարվեստ կոթողների, ճարտարապետական մեծաքանակ կանգուն կամ կիսակործան հուշարձանների հետ պահպանվել և մեզ են հասել նաև նրանց հնամենի որմերին փորագրված կամ ներկադեղերով զրդրված հաղարավոր արձանագրություններ, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական պատմության, ժողովրդի կյանքի ու կենցաղի, դիտության և մշակույթի ուսումնասիրության համար: Տարբեր ժամանակների վիճական հիշատակություններ ունեն պատմական Հայաստանի ընդարձակ տարածքի առավելապես անմատչելի ծերպերում, անտառապատ լեռնալանջերին և նախալեռնային գեղատեսիլ հովիտներում կանգնած հողեր կամ աշխարհիկ շինվածքները՝ խոշոր վանական հուշարձանախմբերը, տաճարներն ու եկեղեցիները, գավիթներն ու գրատները, քաղաքական կամ իշխանական դարապաս-ապարանքները, նստոցներն ու հովանոցները, կամուրջները, հյուրատներն ու կարավանատները, ձիթհանքները, աղբյուր-հուշարձանները և ամենից բազմաքանակ կոթողային հուշարձանները՝ լինեն դրանք միայնակ խաչքարեր, թե որմնափակ խաչարձաններ կամ մատուռ-դամբարաններ:

Տարբեր են մեզ հասած վիճական բնագրերի ծավալն ու բովանդակությունը, փորագրման եղանակներն ու հնագրական հնարանքները՝ տեղն ու ժամանակը, սակայն դրանք բոլորն էլ առավել կամ պակաս արժեքավոր և արժանահավատ տեղեկություններ են հաղորդում ժամանակի պատմական անցքերի, սոցիալական առօրյայի, հատկապես երկրի ներքին կյանքի, կենցաղի ու իրավական հարաբերությունների մասին, որ դժվար է գտնել գրական այլ աղբյուրներում:



Մեկ տասնյակ հազարից անցնում է գիտությունը հայտնի հաշատառ մեծ ու փոքր վիճազրերի ընդհանուր քանակը, որ պարունակում է մեկ-երկու բառից կամ կարճառոտ նախադասությունից սկսած մինչև մի քանի էջ զբաղեցնող երկարաշունչ արձանագրություններ, ինչպես Տիգրան Հոնենցի, Վահրամ Պահլավունու կառուցողական-նվիրատվական ընդարձակ բնագրերը Անիում և Մարմաշենում, կամ Քարկոփի վանքինը Վայոց ձորում, հուշարձանների հնամենի որմերին փորագրված մի վիթխարի «քարեղեն մատենագարան», որ մագաղաթյա ու թղթե մատենադարանի հետ կազմում են միջնադարյան Հայաստանի, երբեմն նաև հարևան երկրների պատմության աղբյուրները: Մեզ հասած հայերեն հնագույն արձանագրությունը փորագրվել է դրերի ստեղծումից մի քանի տասնամյակ անց՝ և դարի վերջերին Տեկոսի նշանավոր տաճարի մուտքի շրջանակին և պատմում է հուշարձանի կառուցման ու կառուցողների մասին:

Դատելով մեզ հասած վիճակի բնագրերից, հայերեն հնագույն վիճարձանագրությունները մինչև ժ դարը այնքան էլ մեծ թիվ չեն կազմում և մեծ մասամբ շինարարական բնույթի են: Նրանցում պատմվում է միջնադարյան ճարտարապետության աննառու հուշարձանների կառուցման կամ վերականգնման հանգամանքների, հովանավորների, նպաստավորողների և շինարարների մասին:

Հետագա ժամանակներում և հատկապես ժ—ժԴ դարերում առաջանում են վիճական արձանագրությունների նոր տեսակներ՝ նվիրատվական, պաշտոնական-արտոնագրային, հիշատակագրային և այլն, որոնցով ծածկվում են հողեր և աշխարհիկ կառուցվածքների սրբատաշ պատերը և կոթողային հուշարձանների հարթ կամ ձևավոր մակերեսները՝ վերածվելով պայմանագրերի և վաճառագրերի յուրատեսակ դիվանների:

Պաշտոնական-արտոնագրային վիճագրերում Բագրատունի և Կյուրիկյան թագավորները, տեղական իշխանական տների ներկայացուցիչները կամ նրանց վասալներն ու պաշտոնյաները, այլև հողեր բարձրաստիճան հայրերը շարագրում են իրենց հրովարտականներն ու հրամանագրերը զանազան կարգադրությունների, հողօգտագործման կամ ոռոգման վեճերի լուծման, հարկերի ու պարտույթների սահմանման կամ դիզման, հողեր կյանքի ու ներքին կազմակերպության, դավանաբանական երկպառակությունների կարգավորման և այլ օրինականացումների մասին, որով



այդ բնագրերը ներկայանում են իբրև աշխարհիկ և հոգևոր իշխանութիւնների դիվանների վավերագրեր՝ սրբագործված և հաստատված այն վանական կենտրոնների կողմից, որոնց պատերին փորագրված են գրանք:

Հիշատակագրային արձանագրութիւնները, անկախ իրենց բաղմազան բնույթից, նաև կառուցողական բնագրեր են, քանի որ պատմում են կոթողային հուշարձանների կանգնման շարժառիթների, պատմական նշանակալի իրադարձութիւնների ու դեպքերի, կառուցողական գործերի, բնական աղետների ու պատահարների և ամենից հաճախ կյանքից հեռացած ակնառու կամ հասարակ մարդկանց օրերի ու գործերի մասին, որ կարճառոտ ներկայացնում են գերեզմանական հուշարձանների դամբանագրերն ու բարեխոսութիւնները:

Սակայն պահպանված վիմական հիշատակարանների մեջ առավել պատկառելի թիվ են կազմում նվիրագրութիւնները, նվիրատվական բաղմաթիվ և բաղմապիսի արձանագրութիւնները, որոնք յուրատեսակ պայմանագրեր են նվիրատուի և հոգևոր հաստատութեան միջև հաստատված գործարքի մասին, որով նվիրատուն իր զանձագին կամ հայրենիք ունեցվածքը օտարում է վանքին և դրա դիմաց համապատասխան հատուցում՝ պատարագաժամեր ստանում տարվա որոշ տոներին:

Չնայած հիշյալ բնագրերի բովանդակութիւնների զգալի միօրինակութեանը, նրանցում ամբողջված հասկացութիւնների, իրողութիւնների, բառամթերքի որոշ սահմանափակութեանը և շարադրանքի կաշկանդվածութեանն ու կաղապարին, արձանագրութիւնները առաջնակարգ, անփոխարինելի աղբյուրներ են մնում հատկապես երկրի ներքին կյանքի, ժողովրդի կենցաղի, սովորութիւնների, սոցիալական վիճակի, իրավական կացութեան, գոյութիւն ունեցած հարկերի ու պարհակների մասին, բնագավառներ, որոնք մեծ մասամբ դուրս են մնացել ժամանակի պատմագիրների տեսադաշտից և հազվադեպ են լուսարանվում նրանց տարեգրութիւններում:

Այսպիսով՝ միջնադարյան Հայաստանի քաղաքական, սոցիալատեսական կյանքի իրական, գիտական պատմութիւնը դժվար է ներկայացնել սոսկ հայ կամ օտար պատմիչների տարեգրութիւններով, առանց քննարար օգտագործելու այն վիթխարի ու բաղմարովանդակ նյութը, որ ամբարված է ժամանակաշրջանի վիմագրական հուշարձաններում կամ ձեռագրերի հիշատակարաններում:



Հայ վիճազրերի այս նշանակությունը լավ էր հասկանում դեռևս Սյունյաց ԺԳ դ. պատմիչ Ստ. Օրբելյանը, որն իր «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ պատմական իրադարձությունների կամ վանական կենտրոնների հիմնադրման ու կառուցապատման առթիվ հայ պատմագրության մեջ առաջին անգամ բառացի, հատվածաբար կամ վերապատմումով մեջ է բերում Սյունիքի և Վայոց ձորի տարբեր ժամանակների, իրեն մատչելի մի շարք վիճակային արձանագրությունների և կալվածագրերի ընդօրինակություններ, որոնց մի մասի բնագրերը շին հասել մեզ և բանասիրությանը հայտնի են նրա մեջբերումներից: Ժէ դարի պատմիչ Զաքարիա Սարկավազը ևս իր «Պատմագրության» երրորդ մասը, որտեղ շարադրվում է Հովհաննավանքի Կոնդակը, կազմել է՝ օգտագործելով հուշարձանախմբի մի շարք կարևոր արձանագրությունները, որոնց բավականին հարազատ արտագրությունները տեղափոխված են գրքի վերջում:

Նոր ժամանակներում, ընդհանուր լուսավորական շարժման և ազգային զարթոնքի շնորհիվ ծավալվում են վիճակային արձանագրությունների հայտնաբերման, ընդօրինակման ու հրատարակման ջանքեր, և հրատարակ են գալիս պատմական Հայաստանի տարբեր գավառների, առանձին խոշոր հուշարձանախմբերի կամ հնավայրերի տեղագրություններ՝ նրանց վիճակային հիշատակարանների առավել կամ պակաս նույնական կամ ամբողջական վերծանություններով (Մ. Բժշկյան, Շ. Շահխաթունյանց, Ս. Զալալյանց, Ն. Սարգիսյան, Ռ. Նրզնկյան, Ա. Մխիթարյան, Ստ. Մխիթարյան, Մանկունի, Մ. Բարխուդարյան, Մ. Սմբատյան և ուրիշներ), որոնց շնորհիվ վիճակային բնագրերը ավելի հաստատուն տեղ են գրավում պատմագիտական սկզբնաղբյուրների շարքում: Բազմավաստակ Ղ. Ալիշանի «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան» տեղագրական պատմա-աշխարհագրական ստվարածավալ հատորները կազմված լինելով մեծ մասամբ ձեռագրական, մատենագրական աղբյուրների, հատկապես հրատարակված կամ նորահայտ վիճագիր հիշատակարանների ու նյութական մշակութային այլ հուշարձանների նյութերի լայն օգտագործումով, նոր, ավանդական պատմագրության մեջ մինչ այդ անծանոթ էջեր էին բացում հայոց աշխարհի այդ գավառների առավել մութ և չուսաբանված ժամանակաշրջանների պատմության գրքում:

Վիճակային բնագրերի լայն օգտագործումով են ստեղծվել նաև հայագիտներ Մ. Բրոսեի, Վ. Լանդլուայի և ուրիշների հայագիտական աշխատությունները:



Հայերեն վիճարձանագրութիւնների գիտական ընդօրինակութեան, վերձանութեան և քննական ուսումնասիրութիւնների նոր, ավելի բեղմնավոր շրջանը կապւած է հայագիտութեան և հայ գիտական արձանագրագիտութեան մեծ երախտավոր ն. Մառի և նրա աշակերտների գործունեութեան հետ: Գեոևս «Կովկասի հնագիտական թագի խոշորագույն մարգարիտի»՝ Բագրատունիների ուստան Անիի պեղումները սկսելու օրերին և հետագա քսանամյակի ընթացքում Մառը հրապարակում է առավելապես արևմտյան Շիրակի մի շարք նորահայտ արձանագրութիւնների իր կատարած վերձանութիւնները, որոնք աչքի են ընկնում ընդօրինակութիւնների բացարձակ նույնականութեամբ, խաթարված կամ եղծված հատվածների վերականգնումների բացառիկ համողչութեամբ և, մանավանդ, բնագրերի վերլուծութիւնների և մեկնութիւնների սպառիչ խորութեամբ: Մառը և նրա աշակերտները, առաջին հերթին Ղ. Օրբելին, ստեղծում են վիճական արձանագրութիւնների արտագրման, վերձանութեան և հրապարակման գիտական նոր, ժամանակի առաջավոր արձանագրագիտութեան մակարդակի և նախկինից արմատապես տարբերվող սկզբունքներ՝ հատկապես տվյալ հնավայրի կամ առանձին հուշարձանի հավաքվող բոլոր տեսակի վիճագրերի հնարավոր լրիվութեան, բացարձակ նույնականութեան, օժանդակ լուսարանող նյութեր՝ լուսանկարչական կամ դժագիր արտասպատկերներ և գիտական համակողմանի ու սպառիչ վերլուծումներ:

Այս սկզբունքների կիրառումով ն. Մառը, Ղ. Օրբելին, Վ. Բենեշևիչը և ուրիշներ վերձանում և հրատարակում են արևմտյան Շիրակի հնագույն (է—ժ դդ.) շինարարական արձանագրութիւնները, որոնց մի մասը մինչ այդ բանասիրութեանը հայտնի էր աղավաղ և ուսումնասիրութեան համար անօգտագործելի ընթերցումներով:

Մեր օրերում հայ արվեստի և նյութական մշակույթի պատմութեան խոշոր մասնագետ բազմաշխատ Գ. Հովսեփյանը իր արվեստարանական, պատմա-բանասիրական ուսումնասիրութիւններում հյուսիսային Հայաստանի առանձին իշխանական տների, հողեր ու մշակութային կենտրոնների քաղաքական ու շինարարական գործունեութեան պատմութեան գրվագները վերականգնում է առավելապես նրանց թողած բազմաթիվ վիճագրերի օգնութեամբ, որոնց զերակշռող մասը գիտական շրջանառութեան մեջ են մըտնում հեղինակի անխոցելի վերձանութեամբ:



Վերջին տասնամյակներում հայկական վիմագրերի ընդօրինակության, գիտական հրատարակման և քննական ուսումնասիրությունների գործը աննախադեպ ծավալներ է ստանում. հրատարակ են գալիս վիմագրերի հմուտ վերծանող պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ծավալուն հետազոտությունները՝ նվիրված միջնադարյան Հայաստանի առավել նշանավոր հոգևոր ու մշակութային կենտրոնների՝ Հովհաննավանքի, Սանահնի, Հաղբատի պատմական կյանքին, ճարտարապետական հուշարձանների գիտական-վերլուծական նկարագրությանը և բոլոր արձանագրությունների սպառիչ ընդօրինակությանը և մեկնաբանությանը:

Հայաստանի ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտում կազմակերպվում է հայ վիմագրության հատուկ բաժին, որը հայկական արձանագրությունների խոր գիտակ Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ ամենամյա գիտարշավների ընթացքում այցելում է մեր և հարևան հանրապետությունների հնավայրերն ու հուշարձանները և նորագույն տեխնիկայի միջոցների օգնությամբ ընդօրինակում, սևեռակում և վերծանում գիտությանը հայտնի կամ նորահայտ ամեն տեսակի վիմական հիշատակությունները, հայկական արձանագրությունների բազմահատոր հավաքածուն՝ «Կորպուսը» կազմելու և հրատարակելու համար: Արդեն հայագիտության սեղանի վրա են այդ «Կորպուսի» երեք ծավալուն, պատշաճորեն հրատարակված հատորները, մյուսները լույս կտեսնեն մոտակա տարիներին, և այսպիսով, ուսումնասիրողների տրամագրության տակ կգրվեն պատմական Հայաստանի | գրեթե բոլոր գավառների հազարավոր արձանագրությունների «վիմաքանդակ մատյանները»՝ հրատարակված նույնական և ստուգելի ընդօրինակություններով, քննական վերլուծություններով և անհրաժեշտ օժանդակ նյութերով:


Սակայն վիմական արձանագրությունները ամենից առաջ և առաջին հերթին լեզվական հուշարձաններ են, վկայված ժամանակաշրջանի գրական կամ խոսակցական լեզվի պատկերն արտացոլող վիմագիր հիշատակարաններ, որոնց հավաստի վերծանությունները և մեկնաբանությունները զգալի Թպաստ կարող են լինել ամեն ինչից բացի նաև հայերենի պատմության, մասնավորապես միջին հայերենի, հայ բարբառների ձևավորման և նրանց հնչյունական ու լեզվա-քերականական իրողությունների ուսումնասիրության գործին:

Եվ հիրավի, վիմական ընդգրկում ավանդված այլևայլ տեղե-



108365

կությունները, հասկացութիւններն ու տերմինները ընկալելու և նրանց իրրև տարրեր բնույթի ուսումնասիրութիւններէ ատաղձ կամ պատմական սկզբնաղբյուր օգտագործելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ընթերցել, վերծանել և շաղկապել պահպանված տառաշարքերը, հավաստիորեն գտնել նրանց շարահյուսական կապը, մի խոսքով, վերականգնել, որոշել, բացազատել առանձին նախադասութիւնները և ամբողջ բնագիրը, որով միայն հնարավոր է հասու լինել այն իմաստներին, որ դրել են նրանց մեջ հետազոտվող վիճազրի հեղինակները: Իսկ բնագիրը հավաստիորեն որոշել կամ վերականգնել կարելի է միայն այն դեպքում, երբ վերծանողը քաշատեղյակ լինի ոչ միայն բովանդակ հայ վիճազրութեան հնագրական բաղմազան ոճերին ու դպրոցներին, որ անհրաժեշտ է եղած տառաշարքերը ստույգ ընդօրինակելու համար, այլև, որ ավելի կարևոր է, այն գրական լեզվին կամ ժամանակի կենդանի բարբառներին, որոնց համադրութեամբ շարադրված են միջին դարերի արձանագրութիւնները: Բացի դրանից, վիճական բնագրերի բոլոր տեսակի հետազոտութիւններից, այդ թվում նաև նրանց լեզվա-քերականական, մանավանդ հնչյունաբանական վերլուծութիւններից առաջ անհրաժեշտ է ունենալ պահպանված տառաշարքերի հավաստի և ստուգելի վերծանութիւններ, որպեսզի եզրահանգումները կառուցվեն իրական փաստերի վրա: Վիճական բնագրերի անորոշ կամ անիրական վերծանութիւնների հիման վրա կատարված հետազոտութիւնները հասցնում են նրան, որ հաճախ նրանցում ավանդված անծանոթ հասկացութիւնները, տերմինները, տեղանունները, անձնանունները կամ ամբողջ բնագրեր ընկալվում և մեկնաբանվում են իրականից, քարի վրա փորագրվածից անճանաչելիորեն հեռացած և աղավաղված, որի հետևանքով այդ բնագրերը կորցնում են իրենց պատմագիտական, աղբյուրագիտական կարևոր նշանակութիւնը հատկապես հայերենի պատմութեան ուսումնասիրութեան համար: Կարելի է ցույց տալ բաղմաթիվ դեպքեր, ըստ որում նաև նորագույն ուսումնասիրութիւններում, երբ բնագրերի ոչ քննական օգտագործումն ու մեկնաբանութիւնը նյութ են տվել այնպիսի թյուր պատկերացումների կամ եզրահանգումների, որոնք ընդհանուր ոչինչ չունեն այդ բնագրերի արտահայտած իրական իմաստի հետ: Մի կողմ թողնելով անծանոթ կամ քիչ գործածական անձնանունների, աշխարհագրական անունների և նոր տերմինների բաղմաթիվ աղավաղումները, որոնք սովորական են նախկին վերծանութիւններ-





րում և երբեմն նույնությամբ օգտագործվում են նաև նորագույն աշխատություններում, կարելի է հիշել սոցիալ-տնտեսական, հարկային-պարհակային մի շարք կարևոր տերմինների ու հասկացությունների մթագնումը կամ անիրական մեկնությունները այդ դրժերում: Գսեղի Բարձրագույն վանքի ԺԳ դարի մի նվիրագրում փորագրված՝ ետու զիմ սկին յեկեղեցին նախադասության մեջ ընծայված ունեցվածքը յ-գրի անհարկի վերականգնումով հասկացվել է՝ այլին (<այզին), փոխանակ սկի-ի (<սկին), կամ նույն Գսեղի հին կոթողի վրա փորագրված արտոնագրում վերծանվել է. ես՝ վարհամ զԱտարշին արձանն թողի, ըստ էության անհիմաստ նախադասությունը, մինչդեռ տվյալ տառաշարքերը հստակ կարդացվում են. ես՝ վարհամ զԱտարժին արզանն թողի, ըստ այդմ, սրողվել է արզան (= ալան) ջրահարկի կարևոր տերմինը և արզան-ը դարձել է արձան: Նույն ջրահարկի հասկացությունն է ավանդված նաև Կեշառիսի ԺԳ դարի մի արտոնագրում, որով Խաղբակյան Պապաբը վանքին նվիրած այգիները ազատել է հարկերից, նշելով՝ ազատ յամէն հարկէ ի յարգնու եւ ի ձեռնաւորէ: Այս վկայությունը ևս անձանոթ է մնացել հայագիտությանը, քանի որ ընդօրինակողները քննվող տերմինը վերծանել են ի յարզանէ կամ ի յարզնաւ ("), որ երկու դեպքում էլ հետու է իրականից<sup>1</sup>:

Չագավանքի ՉԶԳ (1325) թվակիր արտոնագրում վերացվող մի քանի պարտույթներից հետո կարդացվում է. եւ զամենայն ցեղ կոռ եւ զհասարա..., խաթարված տառաշարքը, որը զիտական շրջանառության մեջ է առնվել մի դեպքում իրրև մոնղոլական շրջանում հայ բնակչությանից գանձվող եզնահարկ, մյուսում՝ իրրև ամբողջների պարիսպները կառուցելու կամ վերականգնելու պարտավորություն: Այնինչ պարզվում է, որ առկա է զհասարակ (= հասարակաց) բառը, որ տվյալ իրադրության մեջ նշանակում է. ամբողջ, ամբողջովին, լրիվ, և ուրեմն հասարա հարկի կամ պարտույթի վերականգնումը արհեստական է<sup>2</sup>: Հառիճի պատմական

<sup>1</sup> Տե՛ս Գ. Ասրգոյան, «Բարձրագույն» վանքը և նրա վիճագրությունը, «էջմիածին», 1957, 11—12, էջ 48—51, Հ. Նդիագարյան, Կեշառիսի վանքը և նրա վիճագիր արձանագրությունները, «էջմիածին», 1955, 12, էջ 44. Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., Գ, էջ 20, Ս. Բարխուդարյան, Գիտություններ և նոր ելույթներ հին Հայաստանի ուսողման գործի վերաբերյալ, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», Ժողովածու, Երևան, 1964, էջ 276:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական պատմություն..., Գ, էջ 283, Բ. Ասաֆեյյան, Քաղաքները..., Բ, էջ 232:



գերեզմանոցի Չէ (1258) թվականով տապանագրի՝ այս է շիրիմ հանգիստ և բնակարան էրէմիայ երաժըշաի նախադասութեան ընդ-գծված բառերը վերծանվել են՝ էրեսաւեր Աստուածապաշտի, որի հետեանքով Երեմիա երաժիշար ներկայացվել է իբրև ոմն աստվա-ծապաշտ Երեմիա<sup>3</sup>: Կեշառիսի Կաթողիկէ եկեղեցու շինարարական արձանագրութեան վերջում կառուցող Վասակ Խաղբակյանի նվի-րած ունեցվածքը հասկացվել է. կալաւ շինակնատուն կամ լաւ շինական, մինչդեռ իրականում վանքին նվիրվել է՝ երկու շինակ-նատուն, մեկը՝ Նորաշենում, մյուսը՝ Կարենիսում, որ, հավանա-կան է, գյուղերի անուններ են: Այստեղ էլ մթազնել և շի վերա-կանդնվել շինակնատուն շատ կարևոր կազմութեանը, որն ի դեպ, նույն գրութեամբ հանդիպում է նաև Արցախի Գաղի վանք հուշար-ձանի վիմագրերում<sup>4</sup>:

Վիմական բնագրերի վերծանութեաններում աղավաղված ու անիրական բառերը առաջանում են ոչ միայն տառաշարքերի սխալ ընթերցումներից, այլ հաճախ նաև նրանց ոչ ստույգ բառանշատու-մից, երբ նույնիսկ բացարձակ նույնական ընդօրինակված տառա-ձևերը ոչ ճիշտ բառաբաժանման են ենթարկվում, այսինքն բա-ռակազմի և բառավերջի որոշ հատվածներ անջատվում են նրան-ցից, կցվում հարևան բառերին և եղած տառաձևերով ստեղծում այլ, բնագրին անհարիր լեզվական միավորներ կամ անորոշ տա-ռախմբեր: Հր. Աճառյանի «Արմ. բառարանում» հայերեն բնիկ բառարմատների թվում տեղ են գտել վիմագրերից քաղված՝ կա-լաս, տանձոլայ, ծաքիւրայ բառերը՝ վկայված միայն վիմագրե-րում: Հայագետը կալաս տառաշարքը առանց ստուգաբանութեան փորձի մեկնում է՝ իշխանական տիտղոս, իսկ տանձոլայ, ծաքիւրայ համարում՝ նորագլուխ, անհայտ իմաստով բառեր<sup>5</sup>: Պարզվում է, որ երեքն էլ արդյունք են բնագրերի անհաջող բառանշատման, ըստ այդմ, կալաս առաջանում է Վահանավանքում Շահանդուխտի

3 Տե՛ս Հ. Եղիազարյան, Հառիճա վանքը և նրա վիմագրութեանը, «Էջմիա-ծին», 1957, Ս. էջ 63, Ե. Տեր-Մինասյան, Հառիճա վանքի արձանագրութեանների առթիվ, «Էջմիածին», 1958, Ա. էջ 45:

4 Տե՛ս Հ. Եղիազարյան, Կեշառիսի վանքը..., «Էջմիածին», 1955, 12, էջ 45, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., Գ, էջ 8—9, Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական ե-րեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Գաղի եկեղեցիները և վանական շինու-թեանները, Երուսաղեմ, 1938, էջ 95:

5 Հ. Աճառյան, «Արմ. բառարան», Գ, էջ 706, 1106, 2, էջ 772, Ս. Բարխու-դարյան, Գիվան հայ վիմագրութեան, պր. II, էջ 138, Կ. Ղաֆաղարյան, Սանահ-նի վանքը..., էջ 133:



ՇԼԷ (1068) Բ. արձանագրության՝ որդո Աշոտկա վասն բառերից, որոնք վերծանվել են՝ որդի Աշոտի կալասն, տանձուլայ-ն Հալուց Թառի ԺԳ Գ. մի նվիրագրի՝ գնեցաք զՏանձուլանց Շիկի նորքն բառերն են, որ Մանկունին կարդացել է՝ գնեցաք զտանձուլան Ջաշիկին որ քնի և այլն: Ինչ մնում է ծափրայ-ին, ապա այստեղ էլ Սանահնի ՈՂ (1221) Բ. նվիրագրին է սխալ բառանշատվել. իրականում կարդացվում է՝ տվաք ի Սանահինս ի Մաղերոյն, ըստ այդմ ընդգծվածը Մաղեր (=Մաբեր չձայր) գյուղանվան բացառական հոլովածն է (ի Մաղերոյն=Մաբերից, Մաբեր գյուղից) և ոչ թե նորագյուտ արմատ:

Կեչառիսի ՈԿԲ (1213) Բ. նվիրագրի բոլորովին վերջերս կատարված վերծանության մեջ, հատուցման բանաձևում կարդացվել է. ով առաջնորդ լինի զմերն առնէ նոր կիրակէին անորոշ նախադասությունը, մինչդեռ նախորդ ընդօրինակողները՝ սկսած Հ. Շահաթունյանցից մինչև Գ. Հովսեփյանը տվյալ հատվածը վերծանել են ստույգ՝ զսէրն առնէ նոր կիրակէին, թեև առանց մեկնաբանելու ընդգծված հարադրությունը: Այսպիսով, նորագույն հրատարակության մեջ մթազնել է սէր առնել (հուն. agápe v = հավատացյալների համայնական ընթրիք, մատաղ) կարևոր հատկացությունը, որը վկայված է նաև Հոռոմոսի վանքի ՈՂԸ (1229) Բ. բրնագրում (ի մեր սլատարագի յաւրն հասարակաց սէր առնէ...), դիտված ու արժեքավորված Ն. Մառի կողմից դեռևս 1913 Բ. «Վիմական տարեգիր» ժողովածուի կարևոր առաջաբանում<sup>6</sup>:

Ստույգ ընդօրինակված տառաշարքերի անիրական բառաբանման հետևանքով կարող են մթազնել կամ աղավաղվել ոչ միայն առանձին բառեր ու տերմիններ, այլև քերականական իմաստներ արտահայտող ձևույթներ ու թեքույթներ՝ հոլովական, խոնարհման վերջավորություններ, որոնց հավաստի վերականգնումները կարևոր են վիմական բնագրերի հատկապես լեզվաբանական հետազոտությունների համար:

Բառահարաբերական ձևույթների անտեսման այդ կարգի օրինակ է տալիս Սանահնի վանքում Դավիթ Շոթոռկա որդու ՈՂԱ (1222) Բ. նվիրագրի առաջին նախադասությունը. ես՝ Դավիթ իշխան, որդի Շոթոռկաէ գնեցի զՈռնակ... ընծաէցի յԱձածինս...:

<sup>6</sup> Տե՛ս Հ. եղիազարյան, Կեչառիսի վանքը..., «Էջմիածին», 1955, 12, էջ 40, Հ. Շահաթունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 192, Գ. Հովսեփյան, Խաղրակյանք..., Գ, էջ 32, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ XVII, Ն. Սարգիսյան, Տեղագրությունք..., էջ 162:



Հնդօրինակները կա՛ն դանց են առել Շորակէ շարքի վերջնահանգ է-ն, կամ այն համարել Շորոսիկ անձնանվան սեռականի երկրորդ հոլովակազմիչ՝ Շորոսիկ > Շորոսկա > Շորոսկաէ, մինչդեռ այլ վիճազրեբում ավանդված վկայությունների քննությունից պարզվում է (Մ-ի կարավանքում ժԳ գ. էգրեցաք ամիւ Սարգսի որդոյն (Մ-ի), իՐ: ժամ էգրեցին (Մ-ի), Օձունում ժԳ գ. :Ա: ժամ էգրեցին (Մ-ի, ՍԲ), էգնեցի յԱրտաւազայ (Մակարավանք ԶԲ Մ-ի), էգնեցի գլուսերին գայգին (նա ժԳ Մ-ի և այլն), որ մեջ բերված տառաշարքերը բառանշատելիս է-ն հարկ էր կցել ոչ թե Շորակա բառին, այլ հաջորդ՝ գնեցի բայաձևին և համարել ե նախահավելվածի տարբերակ (է), որ դասական հայերենում դրվում էր անցկատարյալ ժամանակի միավանկ բայաձևերի վրա՝ նրանց բառային ամբողջությունը պահպանելու համար<sup>7</sup>:

Կարելի էր երկար թվարկել նման օրինակները, և նրանք անառարկելի կհամոզեն, որ հայկական վիճազրական հուշարձանների բոլոր տեսակի հետազոտությունների առաջին կարևոր նախապայմանը այդ բնագրերի նույնական, անթերի ու հավաստի վերծանումն է, նրանց՝ իրրև վկայված ժամանակաշրջանի լեզվամտածողության միավորների ստույգ վերականգնումն ու մեկնաբանությունը: Այստեղից, վիճական բնագրերի պատմագիտական, իրավագիտական, ազգագրական և այլ բնույթի ուսումնասիրությունները կարող են արդյունավետ և սպառիչ լինել միայն այն ժամանակ, երբ այդ բնագրերը մինչ այդ կանցնեն լեզվագիտական քննությունների բովով, որոնց ընթացքում հնարավոր ճշտությամբ կորոշվեն յուրաքանչյուր լեզվական միավորի և բոլոր տառաշարքերի ընթերցումը և տվյալ իրադրության մեջ արտատառաշարքի իմաստը, այսինքն հետազոտողների տրամադրության տակ կորվեն բացառիկ նույնական ընթերցված, վերծանված և գիտականորեն հավաստած, ստուգելի բնագրեր, որոնցում բացավելին բոլոր տեսակի տարրնթերցումները կամ իմաստային անորոշությունները: Հակառակ դեպքում անխուսափելի են վրիպումներն ու անիրական մեկնությունները նույնիսկ այն վիճազրեբում, որոնց տառաշարքերը ընդօրինակված են առանց զգալի շեղումների կամ տարրնթերցումների:

Նշում ենք այդ կարգի բազմաթիվ վրիպումներից մի քանիսը վերջին տարիների հետազոտություններում: Հոփսիսիմե տաճարի

<sup>7</sup> Տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., պր. Ա, Երուսաղեմ, 1935, էջ 22, Կ. Ղաֆազարյան, Սանահնի վանքը... էջ 108:



Չե՛ն (1296) թ. անաղարտ բնագրում պարզ փորագրված և հրատարակված է քանիցս. բողաֆ զՀիոիփսիմուցս զբարակին շարխաւն եւ զշահնախն բարակի հակն, ընդգծված բառը ուսումնասիրողները հասկացել են հակ, կապոց, տվյալ դեպքում՝ բամբակի որոշ ֆանակուրյուն, որ տրվել է հարկահավաք պաշտոնյային՝ շահնային: Մինչդեռ բնագրի և հատկապես հակ բառի լեզվաբանական վերլուծութիւնը կարող էր պարզել, որ այն ծագում է մոնղ. *hagg* արմատից և նշանակում է միայն՝ հարկ, տուրֆ, հասույք, որ նույն իմաստով այլ վիմագրերում գործածվում է ինքնուրույնաբար կամ կազմութիւններում (հմմտ. զՀալիձորոյ հակն սահմանէցաֆ—Ամաղու ՉԻԴ Դ III 235, զեգին ու կովին գլխահակ..., զձեռնվորահակ—Օձուն ՉԻԴ ԺԳ դ. ՄՎ, բողի զձեռնաւորահակս—Հաղբատ ՈՂԱ ԿՂՀԲ 252, տվաֆ ձիրայիհանաց հակէ կէս լիւր ձէր—Հովհաննավանք ՊԱ ԿՂՀ 81 և այլն): Այսպիսով, հակ բառի անիրական մեկնութիւն հետեանքով անտեսվել և հայագիտութեանն անմատչելի է դարձել վիմագրերում պահպանված հարկային կարևոր տերմինը՝ շահնայի օգտին գանձվող հասույթի հասկացութիւնը՝ շահնահակը (=շահնահարկ), որ Ուրծի և Նորագավթի նույն ժամանակների արձանագրութիւններում հենց այդպես էլ փորագրված է. *թողի զշահնայիակն գեղիս...*, զշահնայիակ<sup>8</sup>:

Նույնպիսի անիրական մեկնութիւն հանդիպում է Մրենի տաճարի ՉԻԹ (1320) թ. արտոնագրում, որի միակ, ըստ ամենայնի նույնական վերծանութիւնը պատկանում է Ն. Մառին. «Ես՝ Իւանիկս իմ ամիրութենս եւ Աւտաշին ձեռնաւորութե զայս արձան հաստատեցաք ու զձրիհանն եկեղեցոյս ընձայ տվաք»: Վերծանողը լիովին բացահայտված համարելով բնագիրը սոսկ նշում է խոսակցական լեզվից եկող նրա մի քանի նկատելի նորաբանութիւնները, որոնց թվում և զձրիհանն, որ հեղինակի կարծիքով, գրաբար կանոնավոր սպասելի էր՝ զձիրահանն, ըստ որում, ամբողջ վերծանութիւնից պետք է հասկանալ, որ մոնղոլական հարկահան պաշտոնյաներ Իւանիկ ամիրան և Աւտաշ ձեռնաւորը իրենց ձիրահանքը նվիրել են եկեղեցուն:

<sup>8</sup> ՏԵՄ Գ. Հովսեփյան, *Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն, «Արարատ», 1898, էջ 441—443, Չաղալանից ծողովը, «Շողակաթ» հայագիտական ժողովածու, Վաղպատ, 1913, էջ 35, Կ. Բաւմաշյան, Հայոց հին գեղարվեստի վարպետները, Փարիզ, 1926, էջ 61, Ս. Պողոսյան, Գյուղացիների ճարտացումը..., Երևան, 1956, էջ 222, նյութեր Հայաստանի գյուղատնտեսութեան և գյուղացիութեան պատմութեան, էջ 194, Կ. Ասատրյան, Մի էջ Նորագավթի պատմութեանից, ՊՔԸ, 1963, 4, էջ 249:*



Բնագրի լեզվաբանական բնութիւնը պետք է պարզեր, որ (զ) ձրիհանն կապակցութիւնը ձիրահանք, սասաւնոց իմաստով չի համապատասխանում վկայված ժամանակաշրջանի հայերենի բառակազմական օրենքներին, քանի որ այս պարագայում սպասելի էր և այլ վիմագրերում բազմիցս վկայված է՝ ձիրահան, ձիրհաց, ձիրատուն, ձիրահանք և այլն (ձէք > ձիր-ա-հան (ք)—ա հոդակապով կամ առանց նրա), մինչդեռ իրականում առկա է ոչ թե ձրիհան անհավանական բարդութիւնը, այլ ձրի հակ բառակապակցութիւնը (հատկացուցիչ հատկացյալ, նաև որոշիչային հարարբնութիւն իմաստով), որ այսպիսով հավաստում է հատուկ ձերի հարկի՝ ձիրահարկի գոյութիւնը միջնադարյան Հայաստանում, ավանդված նաև Մարմետի Չեմ (1299) թ. հրամանագրում. «Բեսուտին հրամանաւն արձանագիր եղեւ, որ զձիրին հարկն ի սբ Ածածինս տան անխափան»։ Եվ բնական է, որ Մրենի բնավող բնագրում ձրի հակը՝ ձիրահարկը եկեղեցուն ընծա են տալիս կամ զիջում ոչ թե ինչ-որ մեծահարուստներ, այլ հենց հարկահավար պաշտոնյաներ, որոնք միայն իրավասու էին զիջել կամ նվազեցնել որոշ հարկեր<sup>9</sup>։

Լինելով վկայված ժամանակաշրջանի հայերենի, հատկապես կենդանի, խոսակցական լեզվի կամ բազմաթիվ հայ բարբառների վստահելի հուշարձաններ, վիմական բնագրերը միաժամանակ բովանդակ հայերենի պատմութիւն կարևոր, անփոխարինելի աղբյուրներ են, առանց որոնց դժվար է պատկերացնել միջին հայերենի և բարբառների նախնական փուլերի ուսումնասիրութիւնը, նրանց տարամանակյա բնութիւնը։ Արդարև, ամեն մի կենդանի և հատկապես մեռած լեզվի հեռավոր անցյալի վիճակն առավել կամ սլակաս լրիվութեամբ հնարավոր է վերականգնել այդ լեզվով մեզ հասած գրավոր հիշատակարանների հետազոտութեամբ, ավանդված ձևերի և նրանց առկա համապատասխանութիւնների համեմատական նշանասիրութեամբ։ Այս տեսակետից հայերենագիտութիւնն այնքան էլ նպաստավոր պայմաններ չունի։ Ծիշտ է, մեզ է հասել պատմա-գրական, գեղարվեստական, հոգևոր ու գիտական բովանդակաշար բազմադան ու հարուստ գրականութիւն, ստեղծված գրերի գյուտի առաջին օրերից մինչև ուշ միջնադարը։ Սակայն այդ ամբողջ գրական արտագրանքը շարադր-

<sup>9</sup> Տե՛ս *Н. Марр*, Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1893, стр. 88—90, *И. Орбели*, Надписи Мрена, *անտիպ ժողովածու*, էջ 4, Ալիշան, Այրարատ, էջ 61.—այստեղ զձիրին հարկն զիջված է իբրև տեղանուն։



ված է բացառապես հին գրական հայերենով՝ գրաբարով, նրա տարբեր լեզվաոճական նրբերանգներով, մշակվածության աստիճաններով, կենդանի բարբառների կամ հարևան լեզուների հետ ունեցած տարբեր շփումներով ու ներթափանցումներով: Ավանդված գրաբար մատենագրությունը հնարավորություն է տալիս բացառիկ մանրակրկիտությամբ վերականգնել վաղուց մեռած հայերենի լեզվա-քերականական, նույնիսկ հնչյունաբանական իրողությունները, նույն և դարում ստեղծված գրական հնագույն երկերի կամ թարգմանությունների լեզվում տարբերել այսպես կոչված դասական կամ ոչ դասական հայերենների մանրադիտակային թվացող նրբերանգները: Սակայն գրաբարով հորինված այդ ճոխ և բազմերանգ գրականությունը նույնքան էլ անտարբեր է շրջապատող միջավայրի կենդանի, խոսակցական լեզվի, հայ բարբառների կամ գեղջուկ բանի, ռամկոտեն հայերենի նկատմամբ և համարյա ոչ մի պատկերացում չի տալիս տվյալ ժամանակաշրջանի նրանց վիճակի մասին:

Տարբեր են այդ իրողության պատճառները. գրականության՝ հոգևոր դասի մենաշնորհ լինելը, հայ բարբառների անմշակությունը, նախնական շրջանում գրաբարի զգալի շափով հասկանալի լինելը, կրոնական արարողությունների գրաբար լեզվով կատարելը և այլն և այլն, սակայն դրանք չեն փոխում դրությունը. գրաբար մատենագրության մեջ խոսակցական լեզուն, հայ բարբառները կամ միջին հայերենը նկատելի արտացոլում չեն գտել: Ճիշտ է, հին բնագրերի, հատկապես ձեռագրերի տարընթեքումների հետազոտությունը կարող է որոշ նյութ տալ դրանցում հեղինակների կամ արտագրող գրիչների խոսվածքներից եկող ներթափանցումների մասին, սակայն մեզ հասած ձեռագրերի ուսումնասիրության և համահավաք քննական հրապարակման ներկա վիճակում հազիվ թե հնարավոր լինի երաշխավորել այդ բնույթի հետազոտությունների հաջողությունը:

Այդպիսի հետազոտության առաջին և առավել համապարփակ փորձը կատարել է հայագիտության մեծ երախտավոր Ա. Այտրնյանը մեզանից ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ իր «Քննական քերականություն արդի աշխարհաբար լեզվի» (1866) աշխատության «նախաշավիղ» տեսական, լեզվագիտական, բանասիրական բնագրծակ առաջաբանում: Այստեղ հայագիտը հայ հին մատենագրության երկերում, ձեռագիր մատյաններում և հրատարակված վիմական բնագրերում մանրակրկիտ, մեծ ջանա-



սիրությամբ դիտել, առանձնացրել, զտել և բացառիկ հմտությամբ արժեքաւորել է դրանցում ավանդւած հնչյունական, ձևաբանական-բառակազմական բոլոր այն նորարանությունները, որոնք անժանոթ էին դրաբարին, ներթափանցւած խոսակցական լեզվից և կարող էին նյութ տալ ժամանակի (Յ—Ժ դդ.) հայ բարբառների, գեղջուկ բանի կամ իր արտահայտությամբ՝ նախնական ռամկոճեմի վերակազմության համար: Սակայն Այտընյանի հրատալից ուսումնասիրությունը կարող է զգալի շափով կորցնել լեզվագիտական այն վիթխարի արժեքը, որ նա պետք է ունենար հայերենի պատմության, մասնավորապես բարբառների և միջին հայերենի ձևավորման ընթացքը մեկնաբանելու համար, այն պատճառով, որ հեղինակի օգտագործած մատենագրական աղբյուրները հրատարակւած են մեծ մասամբ հետագա դարերի առանձին ընդօրինակությունների և ոչ թե եղած բոլոր ձեռագրերի համահավաք նյութերի հիման վրա, ուստի և մի շարք դեպքերում անհնար է որոշել մեջ բերված վկայությունների հավաստիությունը կամ առաջացման ժամանակաշրջանը: Օրինակ, Ա. Այտընյանը իբրև հին դրաբար մատենագրության մեջ նախնական ռամկորենի արտահայտություններ նշում է Փ. Բուզանդի՝ զառաջել (<առաջեալ), ի ձեռդ քո (<ձեռնդ), գաղտուկ (<գաղա, գաղտնի), վարեալ (<վարալ), յանապատ կողմ (<կողմն), պահկուրիւն (<պահակուրիւն), Գ. Փարպեցու՝ ինք գիտէ (<ինքն), զղեկ շահաստանի (<ղղեակ), ստիպով (<ստիպեալ), նախգոյն (<նախնագոյն), տեղաց (<տեղեաց), թողէք ի բաց զբաներդ (<զբաներդ) և այլ ձևերը<sup>10</sup>, սակայն դժվար է ստուգապես հաստատել, որ դրանք եղել են Փավստոսի և Փարպեցու ինքնագիր օրինակներում, թե՞ առաջացել են հետագա ընդօրինակությունների ժամանակ, ըստ որում չի կարելի մոռանալ, որ հիշյալ հեղինակների և ընդհանրապես հայ մատենագրության հնագույն արտագրությունները ԺԲ—ԺԳ դարերից այն կողմ չեն անցնում:

Հին բնագրերում վկայությունների անորոշությունն առանձնապես զգալի է հնչյունական փոփոխությունները ուսումնասիրելիս. եթե արտագրության ընթացքում առանձին բառերի, ձևույթների և թերույթների փոխանակումը կամ միմյանց փոխարեն կիրառելը կարող է այնքան էլ հաճախակի չլինել, սպա մի գրի փոխարեն մյուսը՝ մեծ մասամբ իր հնչածը գրելը պետք է որ սովորա-

<sup>10</sup> Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն..., էջ 73—76:



կան լինել նույնիսկ գրագետ ու հմուտ գրիչների համար, մանավանդ գրաբարյան լեզվական միավորների արտասանութեան և նրանց գրութեան օրավոր խորացող անհամապատասխանութեան պայմաններում: Փավստոս Բուզանդի «Պատմութեան» այն հրատարակութեան մեջ, որից նշուի է քաղել Ա. Այտրնյանը, հանդիպում են հայերենի պայթական, պայթաշփական ձայնեղների խըլացման կամ խուլերի ձայնեղացման մի քանի հնագույն օրինակներ, հատկապես և՛ ռնգային ձայնորդից հետո. այսպես, կ>զ՝ մանգիկ, ցանգուրիւն, բնգեր, բնգալա, անգելանց, գ>կ՝ կանկնել, տիրանեկն (<տիրանեկն), ծ>ծ՝ պանծացեալք, բնծայիւք. տ>դ՝ բնդանեց, յրնդանուրիւն և այլն<sup>11</sup>: Քվում է, այս վկայութեանները բավարար հիմքեր են տալիս հավաստիորեն որոշելու տվյալ հնչյունափոխութեան ժամանակաշրջանը, որ ինքնին շատ կարևոր նշանակութեան կունենար հայերենի հնչյունափոխութեան պատմութեան համար: Սակայն, հազիվ թէ հնարավոր լինի հիշյալ հնչյունափոխված ձևերը աներկրա վերագրել հեղինակին կամ նրա ժամանակաշրջանի արտասանութեանը, առանց մանրակրկիտ քննելու Փ. Բուզանդի երկի պահպանված բոլոր ձևագրերը: Ավելի համոզիչ կլինել նրանց ժամանակը որոշելիս հիմք ընդունել առնվազն տվյալ ձևագրի ընդօրինակութեան տարեթիվը: Ինքը՝ Այտրնյանն էլ զիտակցել է հին մատենագրութեան ծայրերում պահպանված նորարանութեանների առաջացման և եղած վկայութեանների հավաստիութեան անորոշութեանը, «սակայն յընդհանուրն առյալ հարյուրավոր և ավելի դեպքերուն վրա ամենուն մեկանց շենք կրնար լիուլի վստահութեաննիս շղնել, մանավանդ ուր որ ամեն ձևագիր օրինակներն իրար միարանին, կամ թե երկու նոյն կարգի գրութեաններ իրարու վկա կելլեն»<sup>12</sup>, այսինքն, ամեն մի առանձին դեպքում պետք է նկատի ունենալ քննվող ձևերի գրչութեանը նույն գրվածքի եղած ձևագրերում, կամ տվյալ վկայութեանն ստուգել և ճշգրտել նույնանման այլ բնագրերում կամ թարգմանութեաններում:

Միջնադարի հայ բարբառներով կամ նրանց գրական տարբերակներով հորինված գրականութեան պակասը կարող էր մասամբ լրացնել ժ դարի աշխարհիկ պատմիչ Շապուհ Բագրատունու երկը, որ ժամանակակից և հետագա հեղինակների (Հ. Գրաս-

11 Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 24, 29, 47, 49, 56:

12 Ա. Այտրնյան, Քննական բերականութեան..., էջ 63:



խանակերտցի, Ուխտանես, Սամուել Անեցի, Մխիթար Անեցի, Կ. Գանձակեցի) տեղեկություններից դատելով, գրված է եղել ոչ ըստ Բերքադական հրահանգացն, այլ գեղջուկ բանիւ, և ըստ այդմ, բացառիկ արժեք պետք է ունենար հատկապես ժամանակի խոսակցական լեզվի և բովանդակ հայերենի պատմության համար: Սակայն Շապուհի գրվածքը դեռևս մնում է հայ դպրության կորուստների շարքում և առայժմ չկան բավարար հիմքեր 1921 թ. հրատարակված «Պատմություն Շապուհի Բագրատունւոյ» անավարտ պատմությունը Շապուհի ժ դարում գրած և անհետացած երկի ընդօրինակությունը համարելու: Մյուս կողմից, Շապուհ Բագրատունու անունով հրատարակված «Պատմության» միակ ձեռագիրը բոլորովին ուշ շրջանի է՝ ժԸ—ժԹ դդ. և հրատարակողների կարծիքով, արտագրությունը կատարված է վերին աստիճանի անխընամ և անհասկացած ձևով, հավանաբար կիսագրագետ գրչի կողմից, որը թույլ է տվել ակնհայտ վրիպումներ ու տառասխալներ, նույն բանի կամ հատուկ անվան այլ և այլ գրչություններ, բաղմամբիվ շրմբոնված կամ անորոշ տառաշարքեր, բնագրի առանձին բառերի, նախադասությունների կամ հատվածների բացթողումներ և այլն<sup>13</sup>: Այս բոլորը, ձեռագրի այլ ընդօրինակություններ շունենալու պայմաններում, ղգալի շափով նսեմացնում են նորագյուտ պատասխիկ հատկապես լեզվագիտական արժեքը, նույնիսկ եթե ընդունենք, որ նրա նախօրինակը իրոք շարադրվել է ժ դարում և այն էլ գեղջուկ բանիւ: Ինչ մնում է կարծեցյալ Շապուհի գրվածքի լեզվին, ապա չի կարելի շահամաձայնել Հ. Աճառյանի կարծիքի հետ, ըստ որի այդ լեզուն ոչ միայն գեղջուկ բարբառ չէ, այլ նույնիսկ շատ ավելի գրաբար է, քան օրինակ, Վարդան Արևելցու լեզուն, ըստ որում, նորագյուտ ձեռագրի արտատոց սխալներն ու գրաբարից կատարված անհարիւր շեղումները, որոնք ակներևաբար շին եղել բուն օրինակում, մեծ մասամբ արդյունք են տգետ գրչի անշնորհքության և այդ պատճառով շին կարող արտացոլել Շապուհի երկի գեղջուկ բանի լեզվական օրինաչափությունների հնագույն վիճակը<sup>14</sup>:

<sup>13</sup> Պատմություն Շապուհի Բագրատունու, էջմիածին, 1921, էջ XXXI:

<sup>14</sup> Հ. Աճառյան, Հայերեն նոր բառեր Շապուհ Բագրատունու «Պատմության» մեջ, «Բաղմամբիկ», 1922, էջ 180, 181, և Ալինյան, Շապուհ Բագրատունի և յուր պատմությունը, Մատենագրական հետազոտություններ, հատ. Ա, 1922, վիճակ, էջ 222—223: Բ. Ավդալբեկյան, Կարծեցյալ Շապուհ, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 191—192:



Մի կողմ թողնելով կարծեցյալ Շապուհի երկում տեղ գտած պարոն, ֆրանկաց զօրք, կատապան և այլ միավորները, որոնց հիշատակությունը հավանաբար անսպասելի է ժ դարի ձեռագրում և ակներևաբար հետագա ընդմիջարկության արդյունք է, կարելի է նշել մի քանի լեզվա-քերականական ձևեր, որոնք նույնպես, դատելով հայերենի պատմության իրողություններից, անհարիր են Շապուհի երկի ժամանակին՝ ժ դարին. դրանցից են կու մասնիկը բայերի սահմանական ներկայի կառուցվածքում (եթէ այրա, որ կու տառապի, տուր դմայ մասն ինչ ի նշխարաց իմոյ..., մեծ բարկութիւնն զոր կու գործեմք, իմ այրս Դեբենն բողել է զիս և զայլազգի կին մի կու սիրէ), մեք > մենք, տամք > տանք, փոփոխությունները (և մենք տանք զնայ փոխ տեառն զամենայն աւարս կենաց իւրոց), ֆ նորամուտ գրի կիրառությունը (և անուն նորա Ջաֆրան) և այլն<sup>15</sup>: Հնարավոր է, որ այս ձևերը արտագրությունների սրբագրումներ լինեն կամ հետագա ընդմիջարկություններ, սակայն բոլոր դեպքերում հազիվ թե հնարավոր լինի Շապուհի անունով հրատարակված «Պատմության» մեջ ավանդված հիշյալ վկայությունները հավաստիորեն վերագրել ժ դարին, ինչպես վարվել են որոշ ուսումնասիրողներ:

Սակայն տարբեր շրջանների գրաբարով հորինված մատենագրությունից բացի մեզ են հասել նաև միջին գրական հայերենով, առավելապես կիլիկյան գրական լեզվով գրված պատմագրական, բժշկագիտական, իրավաբանական, փիլիսոփայական, գեղարվեստական, արձակ և շափածո մեծաթիվ գրվածքներ, բնագիր կամ թարգմանական բժշկարաններ, ախրապատիներ, դատաստանագրքեր, երկրագործության և անասնապահության ձեռնարկներ, առակաների ու զրույցների ժողովածուներ և երգարաններ, դիտական շարագրություններ, այլև կիլիկիայի արքունական դիվանի մի քանի արտոնագրեր ու դաշնագրեր, որոնց լեզվարանական քրնություններ հնարավոր է իրական, ամբողջական պատկերացում ստեղծել ոչ միայն միջին գրական հայերենի, այլ նաև նրա հիմքում ընկած խոսակցական լեզվի կամ բարբառների մասին:

Պարզվում է, սակայն, որ միջին գրական հայերենով հորինված այս հարուստ գրականությունը, շնայած լեզվա-ոճական ակնառու տարբերություններին, ձևարանական-բառակազմական և մանավանդ հնչյունափոխական իրողությունների բազմազանու-

15 Պատմություն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 35, 38, 40, 56, 66:



թյանը, հիմնականում ներկայացնում է միայն կիլիկյան միջին գրական հայերենը, որ կիլիկիայի և նրան հարող արևմտահայ այլ բարբառների մշակմամբ ու նորմավորմամբ ստեղծված պետական գրական լեզու է: Ըստ որում, միջին հայերենն ուսումնասիրող հայագետները՝ Յ. Կարստը, Լ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ կիլիկյան միջին հայերենը շեն նույնացնում ընդհանուր, համահայկական միջին հայերենի հետ, իրավամբ գտնելով, որ Հայաստանում և նրանից դուրս այդ նույն ժամանակ կային կիլիկյան հայերենին զուգահեռ միջին հայերեն այլ բարբառներ, որոնք սակայն, պատմական պայմանների բերումով շրարծրացան պետական գրական լեզվի աստիճանի, ինչպես այդ տեղի ունեցավ կիլիկյան խմբի միջին հայերեն բարբառների հետ:

Հայագետ Յ. Կարստը կիլիկյան միջին հայերենի պատմական բերականությունը նվիրված իր մենագրության մեջ քանիցս շեշտում է, որ իր ուսումնասիրությունն առարկան տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում տարածված միակ համընդհանուր լեզուն չէր, թեև գրական հուշարձաններով առավել լրիվությամբ ավանդված կարևոր բարբառն էր, և որ նրան զուգահեռ գոյություն ունեին միջին հայերեն այլ բարբառներ ևս, որոնք ավանդված լինելով հատուկեմա, ամբողջական հետազոտության համար ոչ բավարար հիշատակարաններով, դուրս են մնացել միջին հայերենն ուսումնասիրող հեղինակների ուշադրությունից: Անդրադառնալով այն տեղին, որ գրադեցնում է կիլիկյան միջին հայերենը գրական հուշարձաններով ավանդված միջին հայերեն մյուս բարբառների շրջանում, Յ. Կարստը գտնում է, որ կիլիկյան հայերենը կազմում է բավանդակ հայերենի արևմտյան կամ փոքրասիական բարբառախմբի հարավային ճյուղը, հանդիսանալով վերջինիս հարավարևմտյան բարբառը: Նույն՝ արևմտյան բարբառախմբի հյուսիսային ճյուղը (ավանդված Ամիրգովլաթ Ամասիացու, Ասար Սեբաստացու, Գալուստի բժշկագիտական երկերում և Կոստանդին Երզնկացու քերթվածներում) պահպանելով արևմտյան հայերենի բոլոր հիմնական հատկանիշները (կու, կ, նա(յ) մասնիկներ, ձևարանական և բառամթերքի ընդհանրություններ, նմանություն Կ. Պոլսի բարբառին և այլն), միաժամանակ ի հայտ է բերում մի շարք էական տարբերություններ հարավային ճյուղի համեմատությամբ, որոնցից հատկապես նշելի են Ա. Նդ. գործիական հոլովի հատուկ, կիլիկյան վերջավորությունը ամ (օմ)՝ կարամ, ոսպամ անծանոթ է հյուսիսային խմբի բարբառներին, բա-



նի որ այստեղ գործում է ով՛ կարով, ոսպով կամ՝ կարով, վոսպով: Բ. Միայն կիլիկյան հայերենում հայտնի դերանունները՝ իսա, ինա, իտա, նարա, նաբա և այլն, որոնք հյուսիսային խմբում չեն հանդիպում, Գ. Բայերի լծորդությունների տարբերություններ, այսպես, կիլիկյան հյուզում՝ մտել (= մտանիմ), գտնուլ (= գտանեմ), իջնուլ (= իջանեմ), տեսնուլ (= տեսանեմ), հյուսիսային հյուզում՝ մտնուլ (մտնել), գտնել, իջնել, տեսնել, Դ. Գերանունների հոգնակի թվի վերջավորությունները ուզդ. և սևո. հոլովներում. կիլիկյան խմբում՝ ու, ոց, հյուսիսային խմբում՝ դրանց դիմաց՝ ուն, ոնց և այլն<sup>16</sup>:

Միջին գրական հայերենով կամ ժամանակի պարզ գրաբարով շարագրված երկերի շարքում Յ. Կարստը միանգամայն առանձնակի տեղ է հատկացնում վարդան Արևելցու «Պատմությանը», նրա լեզուն համարելով արդի արևելյան դավառաբարբառների նախակարապետը, այդ բարբառների սակավաթիվ գրական արտահայտություններից առավել նշանակալիցը և նախնազույնը<sup>17</sup>:

Այսպիսով, հայագետներին հաջողվել է առավել կամ պակաս մանրամասնությամբ վերականգնել կիլիկյան միջին գրական հայերենի ամբողջական պատկերը՝ հիմք ընդունելով այդ լեզվով կամ նրա տարատեսակներով ավանդված բազմազան գրական հուշարձանները: Նույնը չի կարելի ասել միջին հայերենի մյուս բարբառների, հատկապես կենտրոնական Հայաստանի, Մեծ Հայքի, Հյուսիսային Հայաստանի և Արցախական աշխարհի միջին հայերեն բարբառների կամ նրանց գրական արտահայտությունների մասին, մի խոսքով արևելահայ կամ արդի ում, լիս հյուզերի բարբառների մասին: Հարցի ուսումնասիրության ներկա վիճակով առառավելն հնարավոր է սոսկ հավաստել, որ արևելյան միջին հայերենը կամ նրա գրական տարբերակները լեզվափերականական, բառապաշարային կամ հնչյունական զգալի ընդհանրությունների հետ, ի հայտ են բերում նաև մի շարք արմատական տարբերություններ կիլիկյան միջին հայերենից (բազաձայնական տարբեր համակարգեր, երկբարբառների այլևայլ պարզումներ, կու, ում, նայ մասնիկներ, զանազան հոգնակերտներ, բառամթեր-

<sup>16</sup> Տե՛ս J. Karst, Historische Grammatik, S. 137—140, Գ. Հովհանյան, Հետազոտությունք..., Բ, էջ 508—509:

<sup>17</sup> J. Karst, նշված աշխատությունը, էջ 3—4:



քի և փոխառությունների տարբերություններ և այլն), սակայն այս համոզման համար դարձյալ հիմք է ծառայում ոչ այնքան արևելահայ բարբառների հնագույն վկայությունների ուսումնասիրությունը, որքան այդ բարբառների կամ նրանց ժառանգորդների ժամանակակից նկարագիրը:

Արևելյան միջին հայերեն բարբառների կամ նրանց գրական արտահայտությունների մասին մեր պատկերացումները շատ աղոտ են և եղած գրական աղբյուրներով էլ հազիվ հնարավոր լինի ավելի իրական ու ամբողջական դադափար կազմել նրանց մասին: Այսպիսի գրական աղբյուրներ ասելով սովորաբար հասկանում են ուշ միջնադարի գրական հայերենով՝ ավելի պարզ գրաբարով հորինված պատմագրական կամ զիտական գրվածքները: սրոնցում նկատվում են ժամանակի արևելահայ բարբառների հնչյունական կամ լեզվա-քերականական առանձին երևույթներ՝ ներթափանցված արևելյան կամ հյուսիսային Հայաստանի գավառներում ապրած հեղինակների լեզվական միջավայրից: նրկատի են առնվում հատկապես Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշի, Վանական Վարդապետի և ուրիշների երկերը, որոնց ձևադրերի լեզվաբանական քննությունը կարող է որոշ նյութ տալ արևելահայ բարբառների նախնական վիճակի ուսումնասիրության համար: Այդ տեսակետից առանձնապես արժեքավոր է Վարդան Արևելցու «Պատմության» վերջին մասը, հայ իշխանների ու հեղինակի՝ Կարակորում իլխանական արքունիքը կատարած առաքելության և Հուլաղու խանի մոտ տեղի ունեցած բնդունելության ու զրույցի նկարագրությունը, որ ուսումնասիրողների կարծիքով արևելյան միջին գրական հայերենի եղակի օրինակ է համարվել, թեև գրաբարի զգալի խառնուրդով: Այս հատվածում է, որ առաջին անգամ կիրառված է արևելյան հայերենի ամենամեծ հեղափոխիչը՝ ում մասնիկը թե՛ իրրև ներդոյական հոլովի նոր վերջավորություն (ի սրտումս դրի գոն խօսիդ) և թե՛ անկատար գերբայը ձևավորող մասնիկ (ֆեզ աղօքֆ են առնում)<sup>18</sup>: Սակայն այս բոլորը գրաբար մատենագրության մեջ սուկ արևելահայ բարբառների առանձին հետքեր են և շատ բան չեն ավելացնում նրանց նկարագրին:

Արևելահայ բարբառներով կամ նրանց գրական տարբերակ-

<sup>18</sup> Հավանումն պատմության Վարդանա Վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 157, Գր. Վանցյան, «Ում» մասնիկի ծագումը, ZAPH, Marburg, 1903, էջ 167—169:



ներով շարադրված գրականության, իշխանական կամ հոգևոր դիվանների գրագրության սլակասը զգալի շափով կարող են լրացնել մեզ հասած հազարավոր վիմաքանդակ արձանագրությունները և հին ձեռագիր մատյանների հիշատակարանները, որոնք ի տարբերություն գրաբար գրվածքների, հորինված են կամ այդ կարգի գրություններին հարմարեցված, միանգամայն պարզ ու հասկանալի ետդասական գրաբարով, կամ այդ գրաբարի ու ժամանակի խոսակցական լեզվի, տվյալ միջավայրի բարբառի առավել կամ սլակաս խառնուրդով. կան արձանագրություններ էլ, որոնք փորագրված են միայն բարբառով, առանց գրաբարի նկատելի ներթափանցումների:

Հավաստի վերծանված վիմական բնագրերը հայերենի պատմության մյուս գրական աղբյուրների համեմատությամբ ունեն զգալի առավելություններ, որոնցից նշելի են. Ա. Մեսրոպյան գրքով հնագույն արձանագրություններ փորագրվել են սկսած Ե—Ձ դարերից, ավելի մեծ թվով՝ Է—Թ դարերում, դրանք հայերեն բրնագրերի նախնական օրինակներ են, մինչդեռ հայերեն հնագույն ամբողջական ձեռագրերը ավելի ուշ շրջանից են, օրինակ, հնագույն թվակիր ձեռագիրը՝ Լազարյան ճեմարանի ավետարանը 887 թ. է (ՅԼԶ), Ազաթանգեղոսի կրկնագիր սլատառիկը՝ Թ—Փ դարից, իսկ դասական մատենագրության կարևորագույն երկերը մեզ են հասել մեծ մասամբ ետին դարերում կատարված ընդօրինակություններով: Բ. Պահպանված վիմական բնագրերը մեզ են հասել մեծ մասամբ սկզբնաձևով, առանց արտագրությունների կամ հետագա ընդմիջարկությունների, այնպես, ինչպես փորագրվել են ժամանակին, մինչդեռ հայերեն ձեռագրերը հետագա դարերում բազմիցս ընդօրինակվել են և մեզ հասել զանազան տարբերակներով, հաճախ առանց նախօրինակի և բոլորովին ետին ժամանակների արտագրություններով: Այս սլաքանդան էական նշանակութուն ունի մանավանդ այդ բնագրերի լեզվաբանական տարամանակյա բնության տեսակետից, երբ անհրաժեշտ է լինում ստույգ որոշել այս կամ այն լեզվա-քերականական միավորի վկայության ժամանակաշրջանը: Գ. Ուսումնասիրվող անթվական վիմագրերի փորագրման, ուրեմն և նրանցում ավանդված լեզվա-քերականական իրողությունների ժամանակը տարբեր միջոցներով (հիշատակված անձերի ժամանակագրություն, տառաձևերի հնագրական վերլուծություն, հուշարձանի պատմա-գեղարվեստական տարեգրություն, բնագրի տեղագրություն, նույն կամ հարևան հուշարձանների թը-



վագրված այլ բնագրեր և այլն) հնարավոր է որոշել մինչև մեկ-երկու տարվա, առառավելն մեկ-երկու տասնամյակի ճշտությամբ, իրողություն, որ շատ կարևոր է լեզվական ձևերի պատմության տեսակետից: Չեռագիր մատյանների գրչության տեղը և ժամանակը որոշելը զգալի դժվարությունների հետ է կապված և հաճախ այդպիսի ճշտությամբ չի որոշվում: Մյուս կողմից, ձեռագրերում ավյալ ընդօրինակության տեղն ու ժամանակը որոշելը միշտ չէ, որ կարող է նպաստել քննվող լեզվական միավորի վկայության ժամանակը պարզելուն, քանի որ շատ հաճախ եղած նյութերով դժվար է որոշել, թե երբ է ծագել այդ վկայությունը՝ նախօրինակից, թե հետնադարյան որևէ ընդօրինակությունից: Գ. Վիմական արձանագրությունները իրենց առանձնահատուկ բովանդակության շնորհիվ, այլև հորինված կամ փորագրված լինելով մեծ գրագիտություն չունեցող, հասարակ մարդկանց կողմից, ավելի են ներթափանցված կենդանի խոսվածքների բազմաթիվ իրողություններով, մինչդեռ ձեռագիր մատյաններն ստեղծող ավելի հմուտ և գրագետ հեղինակները կամ գրիչները հարազատ էին մնում դասական կամ հաղասական գրարարի ուղղագրությանը և հազվադեպ էին շեղվում նրա օրինաչափություններից:

Վիմական բնագրերի, իբրև լեզվի պատմության սկզբնադրյուրների այս առավելությունները, միաժամանակ, հնարավորություն են ստեղծում հայ նյութական մշակույթի պատմաբանների համար ճարտարապետական ակնառու կամ դարակազմիկ կոթողների կառուցման: Ժամանակը որոշելու՝ նրանց որմերին փորագրված բնագրերի լեզվա-քերականական ձևերի կամ տառաձևերի հնագրական քննությամբ, մանավանդ այն դեպքերում, երբ այլ միջոցներով, հատկապես հուշարձանի կառուցողական ձևերի գեղարվեստա-ճարտարապետական վերլուծություններով կամ պատմիչների վկայություններով այդպիսի տեղեկություններ չեն ստացվում: Այդ վերաբերում է առավելապես հայերեն հնադուրյն կառուցողական (կտիտորական) արձանագրություններին (Ձ—է դդ.), որոնք մեզ են հասել կամ ղգալապես խաթարված ու եղծված վիճակում, կամ առանց պարզորոշ տարեթվի, կամ վերանորոգումների հետևանքով կատարված արտագրություններով, որ բոլոր դեպքերում դժվարացնում է այդ բնագրերի փորագրման, ուրեմն և ավյալ շինության կանգնման ժամանակի որոշումը, բայց այս, թվագրման միակ միջոցը մնում է այդ բնագրերի լեզվաբանական տարամանակյա քննությունը:



Վիմական բնագրերի և ձեռագիր հիշատակարանների այս կարևոր նշանակությունը հայերենի և հատկապես արևելահայ միջին հայերեն բարբառների հնագույն շրջանների պատմության համար գիտակցել են հայոց լեզվի պատմությանը դրազվող հայագետները՝ Ա. Այտրնյանը, Ղ. Հովնանյանը, Յ. Կարստը, Ն. Մառը, Հ. Աճառյանը, Ս. Ղազարյանը և ուրիշներ:

Ա. Այտրնյանը իր ձեռքի տակ ունենալով միայն Մ. Բժշկյանի, Հ. Շահխաթունյանցի և Մ. Բրոսեի ժողովածուներում և Ստ. Օրբելյանի ու Զաքարիա Սարկավազի երկերում մեջ բերված հազիվ մի քանի հարյուր վիմական բնագրեր, այն էլ մեծ մասամբ ոչ նախանձելի վերծանություններով, այն միտքն է հայտնում, որ «այս արձանագրությունները, մեր միջին և ստորին դարուց բարեղեն մատենագարաններն են», որ ընդհատելով բուն մատենագրության լուսնունդը, հաջորդներին ավանդում են «կերպավորյալ աշխարհաբար լեզուն, որը ժամանակի մատենագրությունից բոլորովին տարբեր բնություն ու կազմություն ունի»<sup>19</sup>:

Ղ. Հովնանյանը նույնպես մեծ կարևորություն էր տալիս վիմական բնագրերին, իբրև նախնյաց ուսման և պատմության առավել արժանահավատ աղբյուրների և Ալիշանի հատորներում ամփոփված արձանագրությունները նկատի ունենալով՝ դատում է, որ «նույն արձանագրությանց հարուստ հավաքածուին վեր ի վերոյ հետազոտությունն իսկ բավական է տեսնելու, թե այնչափ բազմության մեջ շատ ցանցառ են այնպիսիք, յորս ակնհայտնի շերտան ցույցը ուսմանության: Նորանոր բառեր, հին բառից նոր նշանակություններ, ի հնույն տարբեր ձևեր և օտարուտի կազմակերպություններ, ամենայն ինչ առատությանը սփռյալ է անոնց մեջ»<sup>20</sup>: Ղ. Հովնանյանի «Հետազոտությունը նախնյաց ուսման և պատմության վրա» արժեքավոր աշխատությունը անավարտ է մնացել, հրատարակված առաջին մասում բնության են ենթարկվում նախնյաց ուսման և պատմության աղբյուրները, որոնց թվում, ցավոք, վիմական արձանագրությունները չեն վերլուծվում, թեև նրանց նշանակության մասին հեղինակը արտահայտել է հիշյալ համոզումը:

Ա. Այտրնյանը և Ղ. Հովնանյանը այդ համոզման էին հասել ծանոթանալով ընդամենը մի քանի հարյուր վիմական բնագրերի, իսկ Հ. Աճառյանի կազմած «Հայարձանը» բովանդակում էր

19 Ա. Այտրնյան, Քննական բերականություն, էջ 140—141:

20 Ղ. Հովնանյան, Հետազոտությունը նախնյաց ուսման և պատմության վրա, մասն Ա, Վիեննա, 1897, էջ 28:



ավելի քան 2000 արձանագրություններ, որոնք անփոփոխ քաղ-  
ված էին նախկինում հրատարակված ընդօրինակություններից և  
հավանաբար պահպանում էին նրանց բոլոր արատները, սակայն  
նույնիսկ այդ տեսքով էլ չեն դադարում միջին հայերենի և հայ  
բարբառների արժանահավատ աղբյուրներ լինելուց, և այդ է  
պատճառը, որ Հ. Աճառյանը հայոց լեզվի պատմությանը նվիր-  
ված մենագրության մեջ նրանց լեզվագիտական նշանակության  
մասին գրում է. «Արձանագրությունների և հիշատակարանների  
մի կանոնավոր հետազոտություն պիտի կարողանա անշուշտ ա-  
վելի շատ բան ասել այս շրջանի հայերեն բարբառների վերաբեր-  
մամբ, ուստի անհրաժեշտ է կազմել մեր 2000-ից ավելի հին ար-  
ձանագրությանց և 20.000-ից ավելի ձեռագրերի հիշատակարան-  
ների ուսումնասիրությունը, որով թերևս կարողանանք որոշ շա-  
փով հասնել մեր նպատակին»<sup>21</sup>, այսինքն հայ բարբառների ծագ-  
ման, նրանց քերականական ձևերի լուսարանության կնճռոտ  
հարցերի լուծմանը:

Ն. Մառը հայկական վիճական բնագրերի քննական ուսում-  
նասիրությունը անհրաժեշտ էր համարում ոչ միայն նրանց պատ-  
մագիտական վիթխարի արժեքը հաշվի առնելով, այլ նաև հայե-  
րենի պատմության և մանավանդ ավանդված վիճագրական հու-  
շարձանների հավաստի վերծանության և մեկնաբանության տե-  
սակետից: Վիճական բնագրերի, հատկապես հնագույն կառուցո-  
ղական արձանագրությունների լեզվա-քերականական իրողու-  
թյունների վերլուծությամբ Ն. Մառը աշխատում էր պարզել պատ-  
մական հայ ճարտարապետության նշանավոր կոթողների, նրանց  
գեղարվեստա-հորինվածքային ձևերի դարգացման ժամանակա-  
գրության հարցերը, որ բացառիկ նշանակություն է ներկայացնում  
հայ ժողովրդի շինարարական արվեստի պատմության համար<sup>22</sup>:

Սակայն, որքան էլ անցյալի հայագետները գիտակցեին մեզ  
հասած վիճական բնագրերի բացառիկ կարևորությունը հայերենի  
պատմության առավել անձանոթ և քիչ ուսումնասիրված շրջաննե-  
րը լուսարանելու համար, նրանք հնարավորություն չունեին ձեռ-  
նամուխ լինելու վիճագրական հուշարձանների լեզվաբանական  
համապարփակ հետազոտությանը առնվազն երկու պատճառով:

21 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ, էջ 254, 385:

22 Տե՛ս Н. Марр, К датировке ктиторской надписи Текорского храма, ХВ, 1914, вып. I, стр. 57—58. Կ. Պատանյանց, Վիճական տարեգիր, առա-  
ջարան, էջ X—XV.



Ա. Հրապարակի վրա դեռևս չկային մեզ հասած արձանագրությունների քիչ թև շատ լիակատար հավաքածուներ, որոնք նվազագույնս պարունակեին եղած նյութերի զգալի մասը: Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիրը», որ այդ բնույթի առաջին ժողովածուն էր և ընդգրկում էր հրատարակված բնագրերի զգալի մեծամասնությունը, պարունակում էր միայն 1400 մեծ և փոքր վիմագրեր: Նույնիսկ Հ. Աճառյանի կազմած անտիպ «Հայարձանը», որ ամենալիակատարն էր իրագործված կամ կիսակատար մնացած «Հայարձանների» մեջ (հայկական բոլոր հրատարակված վիմագրերի ժողովածուներ կազմելու իրենց ծրագրերի մասին մամուլում XX դարասկզբին ազդեր են հրատարակել նաև Կ. Բամաջյանը և Ն. Լալայանը) և հեղինակի ասելով պարունակում էր մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները՝ գրերի գյուտի ժամանակներից մինչև 1500 թ.՝ շուրջ 2050 բնագրեր, բրնականաբար շեր կարող հայերեն վիմագրերի լիակատար հավաքածուն լինելը քանի որ ներկայացնում էր միայն մինչ այդ մամուլում կամ տեղագրական երկերում հրատարակվածները, որ մեզ հասած վիմագրերի ընդհանուր թվի շատ փոքր մասն էր կազմում: Բ. Հրապարակի վրա եղած վիմական բնագրերը աննշան բացառությամբ (նկատի ունենք Ն. Մառի, Հ. Օրբելու և Գ. Հովսեփյանի հրապարակումները) ընդօրինակվել, վերծանվել և հրապարակվել էին էական բացթողումներով, աղավաղումներով և ընդմիջարկություններով, որոնց հետևանքով ներկայացված բնագրերը զգալի չափով հեռացել էին բարի վրա փորագրվածից և այդ տեսքով հազիվ թե իրական պատկերացում տային վկայված ժամանակաշրջանի կենդանի լեզվի, խոսվածքների, մանավանդ նրանց հնչյունաբանության մասին: Բնագրերի այլափոխումները առանձնապես նկատելի էին նրանց հրատարակման ժամանակ, երբ վերծանողները մտահոգվում էին ոչ այնքան տառաշարքերի նույնական վերարտադրումով, որքան նրանց արտահայտած ընդհանուր բովանդակության վերականգնումով, ըստ այդմ, առանձին բառերի, անձնանունների և տեղանունների գրությունը գիտակցաբար հարմարեցվում էր ժամանակի ուղղագրությանը, որ արտահայտվում էր՝ առ հնչյունակապակցության փոխարեն օ տառաձևի գրությամբ. և, է ձայնավորներն արտահայտող գրերի, յ, յ, Վ տառաձևերի կիրառությունների սրբագրումով, կցագրերի և փակագրերի անտեսումով կամ ոչ իրական բացումով, երբեմն նաև հոլովման կամ խոնարհման վկայված ձևերը հարմարեցնելով ուշ



շրջանի գրաբարի կամ ժամանակակից հայերենի ձևաբանական օրինաչափություններին, մի խոսքով վիմական բնագրերը այդ հրապարակումներով ներկայանում են զգալի շափով սրբագրված կամ գրաբարին հարմարեցված տեսքով, որի հետևանքով գրաբարից կատարված բազմաթիվ շեղումներն ու նորաբանությունները, որ ամենից ավելի կարևոր արժեք ունեին հայերենի պատմության համար, սքողվում, մթադնում, դուրս էին մնում ուսումնասիրողների տեսողաշտից՝ վերածվելով հին գրական հայերենի առավել կամ պակաս օրինաչափ միավորների:

Այստեղ հարկ ենք համարում նորից շեշտել միջնադարի հայերեն վիմական արձանագրությունների լեզվա-քերականական իրողությունների, հատկապես նրանցում արտացոլված հնչյունական փոփոխությունների ուսումնասիրության համար հավաստի, բացարձակ նույնական և ստուգելի բնօրինակություններ ունենալու անհրաժեշտությունը, առանց որի դժվար են, եթե ոչ անհնար, նման հետազոտությունները: Արդարև, եթե արձանագրությունների պատմագրական, իրավագիտական, ազգագրական և այլ բնույթի հետազոտությունների համար կարևորը առաջին հերթին այդ բնագրերի հիմնական բառային կամ շարահյուսական բովանդանությունն է, ապա նույն բնագրերի լեզվաբանական բնությունն է, համար առաջնայինը ավանդված միավորների հնչյունական կացությունն ու փոփոխություններն են, քերականական իմաստներ արտահայտող թերույթներն ու ձևույթները, իհարկե վերջին հաշվով նաև նրանց բնդհանուր բովանդակությունն ու շարահյուսական կապը:

Պատմաբանի, իրավագետի կամ ազգագրագետի համար, օրինակ, թանաթի վանքի ԺԳ դարի բնագրերից մեկում կարդացվող՝ կատվհատին ալգան էլ տվաֆ նախադասությունը տվյալ իմաստը կարտահայտեր նաև այն դեպքում, եթե շարադրված իմաստը կարտահայտեր նաև այն գեպքում, եթե շարադրված իմաստի գրաբարի օրինաչափություններով՝ կտալատի արգանն այլ տուաֆ կամ՝ արգանն կտալատի այլ տուաֆ և այլն, բայց այդ, կտալատ = կատվհատ, արգանն = ալգան, այլ = էլ, տուաֆ = ալգաֆ, կտալատ = կատվհատ, արգանն = ալգան, այլ = էլ, տուաֆ = ալգաֆ զույգերը հեշտությամբ բնկալվում են երկու ձևով էլ, և ամբողջ նախադասությունը բոլոր դեպքերում արտահայտում է նույն միտքը՝ ավեցինեֆ կտավատի արգանը (= ջրահարկ) նույնպես: Ակնհերև է նաև, որ տվյալ նախադասության լեզվաբանական ջրնությունը չէր կարող բավարարվել սոսկ նրա հիմնական բովանդակության բացահայտմամբ, այլ, բացի դրանից, պետք է որոշեք նաև մեջ բերված դուգահեռ ձևերի փոխադարձ առնչությունները,



Նրանց ծագումնաբանությունը և տեղի ունեցած փոփոխությունների վերլուծությունը: Այդպիսի բնությունամբ կարող էր պարզվել, որ կտաւատ, արգան, այլ, տուաւ նախնական, կանոնավոր գրաբարյան ձևերից հետագայում այլևայլ հնչյունական փոփոխությունների հետևանքով առաջացել են՝ կատվիատ, ալգան, էլ, տվաւ, ըստ այսմ, տեղի են ունեցել՝ երկրարբանների պարզում (այլ > էլ, այ > է) կամ վերածում երկհնչյունի (տուաւ > տվաւ = աւա > վա), և հազագի հավելում և տա > աա գրափոխություն (կտաւատ > կատվիատ) և այլն:

Այստեղից, բնական է այն վճռական նշանակությունը, որ ստանում են այդպիսի բնությունների համար վիմագրերի հավաստի և տառացի ընդօրինակությունն ու հրատարակությունը: Կարելի է հիշել ոչ թիշ թվով օրինակներ, երբ նույնիսկ հայերենի պատմության ակնառու գիտակներ անիրական ու սխալ հեռուությունների են հանգել՝ հիմք ընդունելով վիմական բնագրերի ոչ նույնական, ուչ ժամանակի ուղղագրությանը հարմարեցված կամ խմբագրված վերծանություններ: Ա. Այտրեյանը, ձեռքի տակ ունենալով Բագավանի տաճարի 639 թ. շինարարական արձանագրության՝ Հ. Շահխաթունյանցի միակ, անճանաչելի աղավաղ ընդօրինակության՝ սա շէն եկաւ ամենայն իրօք, անորոշ նախագասությունը, հավաստում է եկաւ (=եկն) անց. կատարյալ ժամանակի բայաձևի առկայությունը տվյալ բնագրում, ուրեմն և ժամանակի (է դ.) գրական լեզվում: Մինչդեռ գրանից մեկ դար հետո լույս տեսած՝ Հ. Օրբելու նույնական ընդօրինակության մեջ տվյալ հատվածը կարգացվում է՝ վզենակաւ ամենայն իրաւ, ըստ այսմ, առկա է վզենակ = ծախս, վնաս բառի գործիական հոլովաձևը, և ոչ թե եկաւ բայը, որ այսպիսով արհեստական ու անսպասելի վերականգնում է<sup>23</sup>: Հ. Աճառյանը Բշնիի Պէ (1358) թ. աշխարհարար առաջին արձանագրության մեջ արևելահայ բարբառային ձևերը որոշելիս ի շարս այլոց զնում է նաև բերաց (=բբեր, բերաւ, բբեց) բայաձևը՝ դարձյալ հավատալով Հ. Շահխաթունյանցի վերծանությանը (զբջնու բբերս ի մեր ձեռս բբաց), մինչդեռ նույն բնագրի վերջերս հրատարակված ավելի ստույգ վերծանությունից պարզվում է, որ բարբի վրա այդ կապակցությունը պարզ կարգացվում է. զբջնու բբերս ի մեր ձեռս եբեա, ուրեմն վկայված է

<sup>23</sup> Տե՛ս Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 350, Ա. Այտրեյան, Քննական քերականություն, էջ 120—130, Ի. Օրբելու, Избранные труды-1963, стр. 271.



ոչ թե բերաց, այլ՝ երեւա, որ պակաս կարեւորութիւն շունի աշխարհաբարի կամ միջին հայերենի բայական համակարգերի ուսումնասիրութեան համար<sup>24</sup>։

Քերականական իմաստներ արտահայտող ձևայինների և թերայինների զուգադիր ձևեր հաճախ ի հայտ են գալիս նաև այն դեպքերում, երբ վերժանողները ստիպված են լինում վերականգնել տվյալ միավորների խաթարված կամ եղծված տառաշարքերը և, հետամուտ լինելով միայն հիմնական բառիմաստին, անտեսում են այդ միավորների ժամանակագրութիւնը, որի հետևանքով երբեմն հին բնագրերն են ներմուծվում ավելի նոր, նույնիսկ ժամանակակից հայերենին հատուկ ձևեր։

Ահա այդպիսի վերականգնումներից երկու օրինակ. ն. վարագա վանքից փոքր-ինչ արևմուտք, ձորակում ընկած է մի անշուք փոքրիկ խաչքար, որի երեսի կարճառոտ հիշատակագրում հստակ երևում են՝ ի ԹՎ. ՉԲ Աձ ողորմ Շառաւ որ ջուր բե, գրեբը, որոնք ընդօրինակվել և վերականգնվել են տարրեր ձևով, ըստ այսմ, մի դեպքում, երկրորդ նախագասութիւնը ստացվել է՝ որ ջուր բերաւ, մյուսում՝ որ ջուր բերեաց<sup>25</sup>։ Ակներև է, որ երկու վերականգնումն էլ՝ թե՛ բերաւ և թե՛ բերեաց ստույգ են արտահայտում բնագրի բառային իմաստը, սակայն ոչ այն բայաձևով, որ սպասելի էր ՉԲ (1253) թ. արձանագրութեան մեջ, այլ արդի հայերենի և բարբառների օրինաչափութիւններով։ Ուստի ավելի օրինաչափ կլինէր տվյալ խաչքարի հիշատակագրի բե ստորոգյալը վերականգնել բեր կամ երբե, թեև այս դեպքում էլ նրա իմաստը նույնն է մնում։

Հաղրատավանքի բակում կանգնեցված խաչարձաններից մեկի ՈԿ (1211) թ. արձանագրում բաց է թողնվել տամ բայի դիմավոր ձևը (անց. կատ. ժամանակ, հոգնակի թիվ, I դեմք) և ավելի ուշ, ազատ մնացած մասում փոքրագրվել բայասկզբի Տ գիրը՝ աւելի փոքր տառաձևով։ Հարց է առաջանում, ինչպե՞ս վերականգնել Տ-ով սկսվող ստորոգյալ-բայը։ Նկատի ունենալով, որ ամ-

24 Տե՛ս Հ. Շահխարունյանց, Եջվ. աշխ., էջ 183—184, Ե. Մուշեղյան, Բջնիի 1958 թ. արձանագրութեան առթիվ, «ԳԱ Տեղեկագիր», 1956, էջ 98—99, Հ. Անաույան, Հայոց լեզվի պատմութիւն, Բ, էջ 253։

25 Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյանի հավաքածուն ԳԱ Հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտում, Կ. Ղաֆաղարյան, Պատմա-հնագիտական դիտողութիւններ նոր Բերդի Կյուրիկյան իշխանութեան մասին, «Տեղեկագիր», ԳԱ հայկական ֆիլիալի, 1940, 4—5, էջ 173, պահպանված տառաշարքերի ընդօրինակութիւնը մեր հավաքածուից։



բողջ բնագիրը շարադրված է ժամանակի (1211) թ. ոչ այնքան խրթին գրաբարով և համարյա զուրկ է խոսակցական լեզվի ներթափանցումներից, հնարավոր է վերականգնել կանոնավոր գրական՝ տուաֆ, նակ՝ տվաֆ, տաֆ, ետուաֆ հնչյունափոխված ձևերը, ինչպես սովորական են ժամանակի այլ վիմագրերում, մինչդեռ վերականգնվել է ա՛ռււիւնր<sup>26</sup>, որ անհարիր է տվյալ բնագրին և միայն հատուկենա հիշատակություններով վկայված ավելի ուշ շրջանի վիմագրերում և ձևագրերի հիշատակարաններում: Տուիւնֆ վկայությունը հիմք էր տալիս հոգնակի բայաձևերում մֆ > նֆ (տուաֆ > տուիւնֆ) փոփոխության ժամանակը դնել ժԲ—ժԳ դդ., մինչդեռ իրականում այդ երևույթը գիտվում է ավելի հետագա շրջանի գրական հուշարձաններում:

Վիմական բնագրերի անորոշ կամ աղավաղ մեկնությունները հաճախ առաջանում են պահպանված տառաշարքերի ոչ հավաստի, անիրական բառանշատումից կամ նրանցում եղած տառակցումների անստույգ բացումից, երբ խախտվում է լեզվական միավորների շարահարությունը, և աղճատվում են բառային կամ քերականական իմաստները: Ինչպես նշեցինք, միջնագարի վիմական արձանագրությունները, ձևագիր մատյանների նման, ներկայանում են իրրե առանձին գրերի, կցագրերի կամ փակագծերի համատարած շարքեր, առանց բառերի կամ նախադասությունների բաժանման, արտհության կամ բացահայտության նշանների, հատուկ կամ հասարակ անունների դատորոշման: Վերծանողի հմտությունից է կախված պահպանված կամ վերականգնված տառաշարքերի ստույգ, իրական բառարածանման, նախադասությունների անշատման, հատուկ անունների կամ նոր տերմինների բացահայտման հաշոգությունը, մի խոսքով ամբողջ բնագրի իրական բովանդակության վերականգնման հավաստիությունը:

Իրրե օրինակ նշում ենք տառաշարքերի անստույգ բառանշատումից կամ կցագրերի ու փակագրերի ոչ ճիշտ բացումից առաջացած անիրական վերծանությունների մի քանի դեպքեր նորագույն ուսումնասիրություններից:

Անիում, Տիգրան Հոնենցի միանգամայն անաղարտ պահպանված երկարաշունչ բնագրում (ՈԿԳ—1215 թ.), վանքին արված նվերների շարքում պարզ փորագրված է. պահէլգն ու լանջնին շուր-

<sup>26</sup> ՏԵ՛ս Կ. Առֆաղարչյան, Հաղբատ, 1963, էջ 231: Описание монастырей Ахнатского и Сананинского архимандрита Иоанна Крымского, СПб, 1863, стр. 23, այսուհի բայաձևը վերականգնված է տուաֆ:



վի Գլիձորի դուռն, որտեղ բացարձակ ստույգ ընթերցված գրքերի անստույգ բառանշատման հետևանքով ընդգծված բառերը ազավաղվել են, ճիշտը կլինե՞ր՝ լանջն ինչու՞րվի Գլիձորի դուռն, ըստ սյգմ, նախադրությունը ոչ թե չուրվի է, այլ՝ ինչու՞րվի, որ այս ձևով չկայված է հենց նույն բնագրի հաջորդ տողերում. ի Բէշէն նակապէն ինչու՞րվի կարմունջն, և սովորական կիլիկյան միջին հայերենի գրական արտադրանքներում: Բացի գրանից, ճշգրտվում է նաև լանջնին ընթերցումը, ըստ այսմ, առկա է ոչ թե նի հոգնակերտով կաղմութուն, այլ լանջ բառը ն հոգով, ոչ թե լանջ-նի-ն, այլ լանջ-ն<sup>27</sup>:

Ամաղուի նորավանքում Ստ. Օրբելյանի Չեէ (1298) թ. նըշանավոր բնագրում վանքին նվիրված Չվա գյուղի արժեքի մասին ասված է. և տվելի գինն :ԻԱ: հազար դրամ<sup>28</sup>, այստեղ բոլոր գրքերը ճիշտ են արտագրված, սակայն տվելի բառը, որ վերծանողի կարծիքով հավանաբար ներկայացնում է տվել ի բայաձևի հնչյունափոխված տարբերակը (<տուեալ էի), անսովոր է ժամանակի վիժական բնագրերում և կասկածելի, ուստի ավելի բընական կլինե՞ր եղած տառաշարքերը բառանշատել՝ և տվել ի գինրն :ԻԱ: հազար դրամ, ըստ որում ի-ն նախգիր է և ոչ թե դիմային վերջավորություն<sup>29</sup>:

Հովհաննավանքի Ոե (1181) թ. բնագրում վերծանված է՝ ուրֆ միարանֆ ժԿ առուն կգար անհասկանալի նախադասությունը, որտեղ կգար բայաձևը իրական լինելու դեպքում, զգալի հետաքրքրություն կներկայացներ կ եղանակիչի ծագման առեղծվածը պարզարանելու համար: Պարզվում է, սակայն, որ տեղի է ունեցել եղած տառաշարքերի ու կցագրերի ոչ ստույգ վերծանում և բացում, ըստ որում, հարկ էր բառանշատել ոչ թե՛ ժԿ առուն, այլ՝ ժ կանոն, ոչ թե կգար, այլ՝ կարգ: Նույն ձևով արդ կցագիր շաղկապը վերծանվել է անորոշ դար, որ անհարիր է վկայված իրադրությանը<sup>30</sup>:

27 Հ. Օրբելի, Գիվան, պր. 1, Երևան, 1963, էջ 63, J. Karst, Historische Grammatik..., էջ 258, WBM, ինչու՞րվի, չուրվի բառերի տակ:

28 Ս. Բարխուդարյան, Գիվան, 111, էջ 216:

29 Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Քիֆլիս, 1910, էջ 493, պատմիչը ազատ շարադրանքով մեջ բերելով տվյալ նվիրագիրը, քննվող կապակցությունը տալիս է մեր նշած բառանշատումով. և սուեալ էաբ ի դինն ԻԱ հազար դրամ:

30 Կ. Առֆադարյան, Հովհաննավանքը..., էջ 76—77, Ս. Ավագյան, Վիժագրական սրբագրումներ, ՊԲՀ, 1968, № 4, էջ 221:



Հալաստի ընդօրինակված տառաձևերի վերծանման վրիպումներ են առաջանում նաև հատուկ անունների՝ տեղանունների՝ կամ անձնանունների զատորոշման, նրանց զլխագրով հրատարակելու ժամանակ, քանի որ քարի վրա բնագրերի բոլոր տառաձևերը միատեսակ են փորագրված և այդ անունները զլխագրով չեն արտահայտվում: Այդ է պատճառը, որ հաճախ վերծանությունների մեջ տեղի է ունենում հասարակ և հատուկ անունների շփոթում, երբ հատուկ անունները ընկալվում են իբրև հասարակ բառեր և հակառակը: Մի կողմ թողնելով նախկին վերծանությունները, որոնցում այս կարգի վրիպումները շատ սովորական են, կարելի է հենց նորագույն, ըստ ամենայնի զիտական հրատարակություններում ցույց տալ նման օրինակներ: Այսպես, Հովհաննավանքի, Սանահնի և Հաղբատի արձանագրություններում եղբայրկան (<Եղբայրիկ), մարծպան, մայր (Տիկնա), եղածորս (ուղղելի է՝ Եղածոր<այգեձոր — Հաղբատ ՈՒԸ — ԿՂՀԲ 208 — վերծանված է առաջի եղածորս... իսկ արձանագրության գծագրում, էջ 131՝ առաջի էկղածորս) զիտվում են իբրև հասարակ անուններ, մինչդեռ այդ դեպքում անբացատրելի է մնում թեկուզ մարծպան բառի իմաստը ԺԲ — ԺԳ դդ. վիմագրերում, եթև այն անձնանուն շհամարենք: Ակնհայտ է, որ Մարծպանը, եղբայրիկը, Մայրտիկինը, եղածորը (<Այգեձոր) պետք է զնել մեծատառով և համարել հատուկ անուններ, որ հաստատվում է նաև այլ վիմագրերում ավանդված վկայություններով (հմմտ. ես՝ Վահրամ ուղի եղբայրկան — նույն Հովհաննավանք ՈԿԵ ԿՂՀ 84, :Բ: տիկնա = Հագարտիկնա = Հագարտիկին — ն. տ. ԿՂՀ 85 (Բ) Տիկինմաւրն (<Տիկինմայր կամ Մայրտիկին)... :Բ: Տիկինմաւրրն — Հաղբատ ՉՄ ԿՂՀԲ 167 և այլն):

Դրան հակառակ, նույն հուշարձանների բնագրերում զլխագրով հրատարակված՝ Աւագ (Չաքարիա), Պիտակ, Փարջիկ, Նորին բառերը պետք է սկսվելին փոքրատառով, քանի որ առաջին երկուսը որակական ածականներ են, իսկ վերջինները՝ հասարակ գոյականներ<sup>31</sup>: Վայոց ձորի Աբատեսի վանքի ԺԳ դարի բնագրերից մեկում պարզ կարդացվում է «Աձ ողորմի ևացան», վերծանողը ընդգծված բառը մեծատառով է հրատարակել և անձնանուն է համարում (Դ III 123, 415), մինչդեռ պարզվում է, որ ևացան ևոցա գերանվան հնչյունափոխված ձևն է և հանդիպում է այլ բր-

<sup>31</sup> ՏԷՍ Կ. Ղաֆաղուրյան, Հովհաննավանքը..., էջ 76, 77, 79, 121, Հաղբատ, էջ 131, 208, Սանահնի վանքը, էջ 181, 200, Ս. Ալուզյան, Վիմագրական սրբագրումներ, ՊԲՀ, 1968, № 4, էջ 216:



նագրերում ևս (նաֆա—նաֆան < նոֆա, սացա—սացան < սոցա և այլն):

Այս կարգի վրիպումներից ազատ չեն նույնիսկ հայ արձանագրագիտության ճանաչված գիտակները; երբ հիմնվում են վիմական տառաշարերի անորոշ կամ-կասկածելի վերծանությունների վրա: Ն. Մառը «Վիմական տարեգրի» նշանավոր առաջարկում մի շարք էական ճշգրտումների հետ մեջ է բերում նաև մի քանի անհավանական վերականգնումներ: Այսպես, Տեղերի ՈԿԲ (1213) Թ. նվիրագրի՝ ետու յԱռան զիմ այգին ի Թամիր նախադասության ի Թամիր տառաշարքը հասկանում է ոչ թե տեղանուն՝ Թամիրում գտնվող այգին < այգին ի Թամիր, այլ հասարակ անուն՝ քամիր, որ հեղինակի կարծիքով, կարող էր ծագել արարտամիր = հողամշակում իմաստից: Այնինչ բնագիրը ավելի ստույգ վերծանվում է. ետույառաջ զիմ այգին ի Թամիր և յետ իմ մահուան՝ այլ զինչ լինի, ըստ այդմ՝ ոչ թե՛ յԱռան (Առանում գտնվող այգին), այլ՝ յառաջ (առաջ Թամիրի այգին, իսկ հետո՝ ինչ լինի), վրիպումն առաջացել է յառաջ մակրայի յԱռան ընթերցումից, որի հետևանքով ծագել է անիրական Առան տեղանունը: Բազմայրի բնագրերից մեկում հստակ կարդացվող՝ եւ զիր գանձով շինած տներն ի Գաղտ դռանն խեչ երեւ ի սբ Մայրս լուսոյ, Ն. Մառը ընդգծված բառը համարել է խաչերես > խչերես անձնանվան հապավումը կամ խաչ > խեչ բառը, մինչդեռ իրականում խեչ նըշանակում է մոտ, բով, կից և ըստ այդմ ավյալ հատվածը պետք է հասկանալ՝ տներն ի Գաղտ դռանն խեչ, այսինքն Անիի Գաղտ դռան մոտի տներ... երեւ (= տվեց)<sup>32</sup>:

Երբեմն հավաստի արտագրված և վերծանված տառաշարերը ազավազված են ներկայանում տպագրական այլևայլ վրիպումների հետևանքով: Նույնիսկ «Դիվան հայ վիմագրության» ամեն տեսակետից կատարյալ պրակներում տպագրվել են՝ փրենդուկն (Անի ՈԿԴ Դ I 63), փրկուքին (Արատես ՆԺԴ ԴIII 122), զրխաչս (Քարագլուխ ՉԼԹ Դ III 177), զրմուր (Անի ԺԳ Դ I 1), Բարսրդի (Անի ՈԹ Դ I 2), զրիւ (Անի ՈԿԶ Դ I 16), զրնել էի (Անի ՉԼԷ Դ I 29), Վրաց (Անի ՆԾ Դ I 35) և այլն, այնինչ իրականում, բարի վրա, ինչպես նաև այդ գրքերում զետեղված լուսանկարներում կամ գծագիր ընդօրինակություններում հիշյալ բառերը փոքրագրված են առանց բ-ի՝ փնդուկն, զխաչս, փրկուքին և այլն,

<sup>32</sup> Տե՛ս Ն. Սարգսյան, Տեղագրութունք..., էջ 184, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ X, Վիմագրական սրբագրումներ, ՊԲԸ, 1968, № 4, էջ 214:



ըստ այդմ, բնագրերի վերծանութիւնները շարելիս անհարկի կիրառւիլ են տողադարձի ժամանակակից կանոնները և ավելացւիլ գաղտնավանկերում հնչվող ը-երը: Ավելորդ է ասել, թէ ինչ մուտքութեան մեջ կարող էր ընկնել այդ բնագրերի հնչյունաբանութիւնն ուսումնասիրողը, եթէ իրական համարեր հիշյալ բառերի ը-ով գրութիւնը, ուրեմն և արտասանութիւնը:

Հավանաբար նույնպիսի տպագրական վրիպակով Անիի ՆՁԵ (1036) թ. բնագրում վերծանվել է. Գրիգոր Պահլաւուն, մինչդեռ լուսանկարում և գծագրի վրա ընդգծվածը հլ > լն գրափոխութեամբ է՝ Պալիաւուն (Գ I 48): Նույնն է տեղի ունեցել և Ավանի ՉԼԳ և ՉԼԶ թթ. արտոնագրերում, որտեղ բնագրի և գծագրի՝ ի ջուլանկէ. զջուլանկէրոյն բառերը տպագրվել են կանոնավոր, այսինքն առանց հա > ահ տեղափոխութեան՝ ի ջուլանկէ, զջուլանկէրոյն (ԿՂԱ 19—21):

#### Բ. ԱԿՆԱՐԿ ՎԻՄԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԵՋՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Նախորդ հատվածի շարադրանքից ակնհայտ դարձավ, որ վիմական բնագրերի լեզվաբանական հետազոտութիւնների համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ բնութիւնն առարկա տառաշարքերի բացարձակ նույնական և ստուգելի ընդօրինակութիւններ, որպէսզի բոլոր զեպրերում հնարավոր լինի ստուգել կասկածելի միավորների համապատասխանութիւնը իրականի՝ քարի վրա փորագրվածի հետ, այս զեպրում միայն կարելի է ճիշտ գաղափար կազմել վիմագրերում ավանդված հնչյունական կամ լեզվա-քերականական օրինաչափութիւնների մասին: Այս տեսանկյունից մոտենալով քննվող նյութին, հարկ է ամենից առաջ պարզել, թէ ինչպիսին է մեր ուսումնասիրութեան առարձի՝ մեզ հասած վիմական արձանագրութիւնների ընդօրինակութեան, վերծանութեան, հրատարակման և նրանց լեզվագիտական ուսումնասիրութեան վիճակը մինչև սույն աշխատութեան երևան գալը, այսինքն, կարևոր է որոշել, թէ որտեղ են ամբարոված և ինչպէս են մշակված կամ վերլուծված մեկ տասնյակ հազարից ավելի վիմական բնագրերը: Մեր նպատակից դուրս է վիմարձանագրութիւնների ընդօրինակման, հրատարակման և ուսումնասիրութիւնների պատմութեան մանրամասն տեսութիւնը՝ սկսած առաջին ընդօրինակող Ստ. Օրբելյանից մինչև «Դիվանի» ընթացիկ պրակները, քանի որ դա մեզ հետու կտաներ և մանավանդ ո՞ր



դա առանձին ուսումնասիրութեան առարկա է: Բացի դրանից, վիմագրերի հավաքման և հրատարակման առանձին գրվագներ բավականչափ լուսարանված են նորագույն մի քանի հրատարակումների մեջ: Հայ վիմագրերի հավաքման պատմութեան ավելի ամբողջական ընդհանուր տեսութունը տալիս են Ս. Բարխուդարյանը «Գիւլանի» առաջին պրակին կցած «Հայկական վիմագրութուն» հանգամանալի առաջարկում և Հ. Օրբելին՝ նույն պրակում հրատարակված «Հայկական վիմական արձանագրութունների գիտական նշանակութունը» դասախոսութեան մեջ, որ հեղինակը կարգացել է Ս. Պետերբուրգի համալսարանում դեռևս 1914 թ.:

Սակայն հիշյալ վիմագրագետները նախորդ տեղագրողների վաստակը գնահատելիս, իրենց նպատակներից ելնելով, սովորաբար ավելի մեծ ուշադրութուն են դարձնում նրանց կատարած ընդօրինակութունների կամ հավաքված վիմագրական նյութի բանակին, ծավալին, մի խոսքով, ընդգրկման լայնութեանը, իսկ ընդօրինակութունների որակը, նույնականութունը, վերծանութեան խորութեանը հարցերը պատշաճ վերլուծութեան շնն ենթարկել կամ բավարարվել են ընդհանուր գիտողութուններով:

Մինչդեռ մեր հետազոտութեան համար ավելի կարևոր է վիմական բնագրերի արտագրութունների և հրատարակումների հենց այս կողմի լուսարանումը, այսինքն այն պարագան, թե ի՞նչ հարադատութեամբ են ներկայացվում քարի վրա փորագրված տառաշարքերը թղթի վրա, գրքերում, և, ըստ այդմ, ինչ շափով են վստահելի եղած ընդօրինակութունները իբրև բնագրերի լեզվաբանական հետազոտութունների աղբյուրներ:

Հայկական վիմագրերի առաջին ընդօրինակողը եղել է ԺԳ դարի պատմիչ Ստ. Օրբելյանը, որը Սյունյաց նահանգի պատմութունը շարադրելիս, այլ աղբյուրների հետ օգտագործել է նաև վանական շինութունների պատերին փորագրված մի շարք արձանագրութուններ: Օրբելյանը հայ պատմիչներից առաջինն էր, որ գիտակցեց վիմական բնագրերի՝ իբրև պատմագիտական աղբյուրների կարևոր նշանակութունը և նշանավոր պատմական անձերի կամ հոգևոր կենտրոնների հեռավոր կամ մոտ ժամանակների գործունեութունը ներկայացրեց իր վերծանած արձանագրութունների նյութերով, իր «Պատմութեան» նախաբանում պատմիչը բանիցս նշում է Սիսական նահանգի տարեգրութեան հենց այդ աղբյուրների մասին. «Բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝



տեղեկացայ յաշխարհս հեռաւորս եւ մօտաւորս, ի վանորայս եւ յարկեղս կտակարանաց... և յարձանագրութեանց եկեղեցեաց և ի յիշատակարանաց գրոց»։ Կամ մի այլ տեղ. «Եւ ահա զայս ամենայն ծանեաք յիւրոց արձանագրութեանցն, և այլն՝ էր որ ի գրոց, էր որ տեղեացն և ի վկայիցն»<sup>33</sup>։

Ստ. Օրբելյանի գրքում ընդհանուր առմամբ հիշատակված է 20 արձանագրության մասին, սակայն դրանցից բառացի ընդօրինակումով և ամբողջությամբ մեջ են բերվում միայն ինը մյուսները կամ սոսկ հիշվում են՝ «եւ գրէ ինքեան արձան», առանց «որ ունի օրինակ զայս» ավելացնելու, այսինքն առանց բնագրերը ղետեղելու կամ համառոտակի վերապատմելով բովանդակությունները։ Օրինակ, Սեանի վանքում Սյունյաց Մարիամ իշխանուհու ՅԻԳ (874) թ. արձանագրության պատճենը չի ընդօրինակված, սակայն՝ և տայ (Աշոտ) ի ժառանգութիւն սուրբ եկեղեցոյ գեաղս թվարկման մեջ բառացի արտագրված է բնագրի այդ մասը, ըստ որում, ընդօրինակությունն այնքան նույնական է, որ նույնիսկ հնարավորություն է ընձեռում վերականգնել արձանագրության եղծված կամ անորոշ հատվածները։ Այսպես, փորագրված գյուղերի անունները ըստ Կ. Ղաֆաղարյանի ընդօրինակության կարգացվում են. գՎարսերն, գԳոմաձուր, Յամաֆաբերդ, Բերդֆ, Ունեցտափ, որն գՎոակծնկին... նույն տեղանունները պատմիչի մոտ նշված են. գՎարսերն, գՅամաֆաբերդ, գԳոմաձուրն, գԲերդֆն, գՈւնեցտափ և զորսն Կոակծին, ըստ այդմ. վիմագրի որն անորոշ միավորը շտկվում է՝ զորսն<sup>34</sup>։ նույնպիսի վերապատմումով է ներկայացվում նաև հայերեն հնագույն և կարևոր վիմագրերից մեկը՝ Մղուկ գավառի Թանահատ բազիլիկ եկեղեցու արձանագրությունը, որի մասին պատմիչը հիշատակում է վանահայր Մխիթարի գործունեությունը նկարագրելիս. «զոր և արձանն եցոյց, եթէ արար հարկատու մեքուրայ, այսինքն եկեղեցոյս»։ Թանահատի եկեղեցու հարավային ավանդատան պատին պահպանված տառաշարքերը հաստատում են, որ Օրբելյանը իր գրքի «Վասն Թանահատի վանից և հարն Մխիթարայ» գլուխը

33 Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 10. 72:

34 նույն տեղում, էջ 174, Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 68, 88, Լ. Մելիքսեր-Քեկ, Երևանի հիշատակությունը Սեանի 874 թ. արձանագրության մեջ, «Տեղեկագիր» ԳԱ Հայկական ֆիլիալի, Երևան, № 4—5, 1940, էջ 117:



շարադրել է այս բնագրի հիմամբ, ավանդելով և ստուգարանելով միայն այստեղ վկայված մեքսա(յ) բառը<sup>35</sup>:

Մաքենոցաց վանքի, Կոթնավանքի, Գնդեվանքի հնագույն շինարարական արձանագրությունները դեռ Օրբելյանի ժամանակ բայրայված, եղծված են եղել և մեզ չեն հասել (վասն հնութեանն և խախտելոյ քառացն ոչ կարացնաք գրովանդակն իմանալ). սակայն, դատելով մյուս, անեղծ պահպանված վիմագրերի վերծանություններից, պատմիչը այդ կարևոր բնագրերը ընդօրինակել և մեզ է ավանդել մեծ խնամքով և հարազատությամբ, որ ավելի է մեծացնում նրանց պատմագիտական արժանիքները:

Սակայն, Ստ. Օրբելյանի կատարած վերծանությունների հարազատության մասին ավելի հստակ գաղափար կարելի է կազմել համեմատելով մեզ հասած անեղծ և պարզ կարդացվող վիմագրերի ստույգ ընդօրինակությունները նրա կատարածի հետ: Գրանցից են Վանեվանի, Քարկոփի վանքի, Գնդեվանքի, Տաթևի վանքի և Ամաղուի նորավանքի արձանագրությունները: Հաջորդ համեմատական տախտակը պարզում է Ստ. Օրբելյանի վերծանությունների նույնականության կամ թույլ տված շեղումների պատկերը, որն արտացոլում է միայն բնագրերի տարբերությունները:

Պահպանված է վիմագրերում  
Տաթևի վանք — ԶԻԴ (895) թ.

Դ II 13

Ովանէսի

զկնի Սողոմոնի

սկիզբն արարաք շինած...

Քարկոփի վանք — ՅՄԹ (910)

Դ III 206

Ի վաղընջուց..., սահմանովք

իշխանին և իմ Շուշանիս

հլանել ի մարմնո

տն իմոյ Աշոտին

յանուն սրբոյ և միշտ կուսի

զևաղն զԱրաստամոզ

ի շորեք եկեղեցիքդ եղիցին

վերծանված է Ստ. Օրբելյանի  
գրում «Պատմութիւն ևահանգին Սիսական», էջ 224

Յովհաննէս

զկնի Սաղամանի

արարի սկիզբն շինուածոյ

էջ՝ 236—237

Ի վաղընջուց..., սահմանաբն  
իշխանին Աշոտի և ինձ՝ Շուշանայ

հլանել ի մարմնոյ

տեառն իմոյ Աշոտի

յանուն սրբուհոյ և միշտ  
կուսին

զիւղն Արաստամոզիս

շորս եկեղեցիքդ լիցին

35 Ստ. Օրբելյան, Կղզ. աշխ., էջ 161, Ս. Քարխուղարյան, Գիվան, պր. 2, էջ 95:



ապա էթև ոչ  
գրեցաւ յիշատակարան կտա-  
կիս այս  
ՅՄԹ՝ Թուականութեանս հատց

Վանեվան — ՅՄԹ (903) Թ. ՄՎ  
Յանուն Այ ես՝ Շապուհ հայոց  
սպարապետ  
որդի Աշոտի  
Թաղաւորի մեծի Սընպատայ  
ան Եւանիսի  
քսպառելոց են եւ վաղիւ կորըն-  
չելոց  
տուն Այ կանգնել  
մեծափափազ տենչանովք

Ամաղու — ՈՂ (1221) — Դ III 211  
որդի Ալակուսին, Թոռն մեծի  
Աւրպելեանց  
հայրենեցն փոխան երեւ  
զՀարաշկարերդ  
այլ յետ բերաք զեղ ՚Բ:  
զԱզարակի ձոր ու Տխարք

Ամաղու — ՉԾՉԺ (1261) — Դ III 219  
Այս գիր յիշատակի իմ Ամսոյատա  
որ զգաւիթս շինեցի  
եւ հտու յիմ հայրենացն  
այդին ի կիրակնաշրովն  
Ասփաին

Ամաղու — ՉԽԷ (1298) Դ III 216  
հտու զՉվա գեղն  
գոր գնել էի յիմ ախրարէն  
Ջալալէն եւ տվելի գինն  
:ԻԱ: հազար գրամ

ապա Թէ ոչ  
գրեցաւ յիշատակ կտակիս  
այս  
յՅՄԹ՝ Թուականիս հայոց

էջ՝ 181—182  
Յանուն Աստուծոյ ես՝ Շապուհ  
հայոց  
սպարապետ որդի Աշոտոյ  
Թաղաւորի մեծին Սմբատայ  
տեառն Յովհանիսի  
սպառելոց են եւ վաղիւ կո-  
րնչելոց  
տուն Աստուածոյ կանգնեալ  
մեծափափազ տենչանաւք

էջ 359—360  
որդի էլիկուսին Թոռն մեծի  
Աւրպելեանց  
եւ փոխան հայրենեաց իմոց  
զՀրաշկարերդ  
Թափեցի եւ զԱզարակի ձոր...  
հտու եւ զՏխարք գիւղն

էջ 360—361  
Այս գիր յիշատակի իմ Սմ-  
բատայ է  
որ զաղաւթարանս շինեցի  
եւ հտու յիմ հալալ հայրե-  
նեացն  
այդին ի կիրակաշրովն  
Ասփային

էջ 493—494  
ընծայեցի... գիւղն Չուայ  
գոր գնեալ էի յիմ եղբարէն  
Ջալալէն  
եւ տուեալ էաք ի գինն :ԻԱ:  
հազար գրամ:



Այս համեմատութիւնից երևում է, որ Ստ. Օրբելյանը արձանագրութիւնները մեջ է բերում բավականաչափ նույնական ընդօրինակութեամբ, առանց հիմնական բովանդակութեան ղգալի խմբագրումների կամ շեղումների: Նույնը դժվար է ասել ընդօրինակված վիմագրերի ուղղագրութեան մասին. այստեղ պատմիչը ամեն կերպ աշխատում է փորագրված տառաշարքերը սրբագրել գրաբարի ուղղագրութեան կանոնների համեմատ, նրանցում ավանդված խոսակցական լեզվի, բարբառային հնչյունական կամ ձևաբանական իրողութիւնները փոխարինել ժամանակի գրաբարի ձևերով: Այսպես, Ովանէս, Սողոմոն, Եւանէս, Սընպատ, Սմպատ, Ալակում, Շապու, Աւպելանց անունների բարբառային արտասանութիւնը շտկում է՝ Յովհանէս (Յովհաննէս), Սաղաման, Սմբատ, Ելիկում, Շապուն, Աւրէլեանց կամ՝ գեաղ, գեղ, երեա, ախբաււէն, յեա բերաւ, գալիք ձևերը փոխարինում է համապատասխան, ավելի գրական՝ գիւղ, ետ, եղբաււէն, քափեցաւ, աղաւթաւն բառերով, վերականգնում է բառերի ուղիղ և թեք հոլովաձևերում ա, ո ձայնավորներից հետո արդեն շհնչվող, բայց ավանդաբար գրվող յ-ն, որ վիմագրերում մեծ մասամբ չէր փորագրվում՝ հաոց, Սմպատա, Չվա, իմո, մաւմնո, Ասիաին բառերը դարձնելով՝ հայոց, Սմբատայ, Չուայ, իմոյ, մաւմնոյ, Ասիային կամ վերականգնում է վիմագրերում սլարզ ձայնավորների վերածված երկբարբառները՝ կանգնել, Աւպելանց, հայրենեց (հայրենաց), գնել էի, շինածոյ սրբագրելով՝ կանգնեալ, Աւրէլեանց, հայրենեաց, գնեալ էի, տուեալ, շինուածոյ, դանց է առնում գրութեամբ արտահայտված ր-երը՝ ի վաղընչուց, Սընպատայ, քապանելոց, կորնչելոց ուղղելով՝ ի վաղընչուց, Սմբատայ, սպանելոց, կորնչելոց: Նկատվում են նաև ձևաբանական իրողութիւնների սրբագրման գեղերը. բնագրում սլարզ կարգացվող սահմանով, տենչանով, Շուշանի, Աշոտի, մի՛ ոք իշխեսցէ, կիրակնաչրով միավորները հարմարեցվել են գրաբարի օրինաչափութիւններին՝ սահմանաւ, տենչանաւ, Շուշանայ, Աշոտոյ, մի՛ ոք իշխեսցէ, կիրակաչրով և այլն:

Այստեղից, հազիվ թե հնարավոր լինի Ստ. Օրբելյանի ընդօրինակութիւններով իրական պատկերացում կազմել մեջ բերված վիմական բնագրերի լեզվի, հատկապես նրանց հնչյունաբանութեան մասին, քանի որ նրանցում ավանդված բարբառային տարրերը, որ առավել կարևոր են հայերենի և բարբառների պատմութեան համար, սրբագրված, մոտեցված են ժամանակի գրա-



կան հայերենի՝ գրաբարի օրինաչափություններին: Այս սյարագան հարկ է նկատի ունենալ հատկապես այն արձանագրությունների լեզուն քննելիս, որոնց բնագրերը մեզ չեն հասել և գիտությանը ներկայանում են միայն Ստ. Օրբելյանի ընդօրինակություններով:

Հայերեն վիմագրեր են ընդօրինակված նաև Սանահնի վանքի «Քոթուկ»-ում, որը վանական հայրերի կողմից տարբեր ժամանակներում լրացված ձեռագիր մատյան է, որտեղ, ի թիվս վանքի պատմության և կալվածքների հետ առնչություն ունեցող այլ կարևոր վավերագրերի, մեջ են բերված նաև հուշարձանների պատերին նախկինում փորագրված նվիրատվական կամ շինարարական մի շարք արձանագրություններ: «Քոթուկ»-ի մեզ հասած կրկու ձեռագրերը (Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 3031, 8150) շատ ավելի ուշ շրջանի են, քան նրանցում արտագրված վիմական բնագրերը և այդ պատճառով կարող էին որոշակի արժեք ներկայացնել միայն եղծված կամ անհետացած արձանագրությունները վերականգնելու համար, եթե ընդօրինակությունները կատարված լինեին քիչ թե շատ հարազատորեն: Սակայն անեղծ պահպանված բնագրերի և «Քոթուկ»-ում նրանց արտագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ արտագրողները հարազատ չեն մնացել քարի վրա փորագրվածին, արտագրել են զգալի աղավաղումներով, կրճատումներով, բնագրերը հարմարացրել են ոչ թե ժամանակի գրական հայերենին, ինչպես վարվում էր Ստ. Օրբելյանը, այլ հակառակը՝ իրենց խոսակցական լեզվին, ուշ շրջանի (ԺԶ—ԺԷ դդ.) բարբառներին, երբեմն էլ անորոշ կամ շփոթացված տառաշարքերը վերծանել են ժողովրդական ստուգաբանության օգնությամբ: Օրինակ, «Քոթուկ»-ում վկայված են՝ հանօղ րլի, վրէժխնդիւր շրլի, Զագաււց (= Զաւարէ), Քուրք (= Քուրդ), Յոուուգնայ, Յոուուուգնայ (= Ռուսուգան), խաշգուտին (<խաշգոյտին<խաշգիտ), լիքն հող (<լմն հող), Դանէլանց (<Ձնէլանց), մրհասիլէ, իմ մհասիլած (<ի մուհասլաց), ամէն մի բան (<ամէն միաբանքս), իգու հնք (<ի Կոհանքն), հոգայիային (<հոգոյն Ափային), ազատ ի Զատե Սալամունց (<յազատ ի զԱրէսայամանց), ինն փերք գիրք (<ԺԳ գիրք) և այլն: Մի շարք դեպքերում բնագրերի հայկական մեծ թրվականը արտահայտված է այլ տառաձևերով. օրինակ, Տուտեոր-



դու խաշարձանի ՈւՊ-ն դարձել է՝ ԶՃԼԳ, «Միրանավոր» խաշարի ՈւՄ-ն՝ ԶՃՀԱ, Դավթի նվիրագրի ՉԷՆ-ն՝ ԷՃՀՆ և այլն<sup>36</sup>:

«Քոթուկ»-ում զեանդված Սանահնի վանքի 27 արձանագրությունների ընդօրինակությունները որոշակի արժեք կարող են ունենալ միայն ավելի ուշ շրջանի բարբառային ձևերի ուսումնասիրության համար, իսկ բուն բնագրերի լիզվի հետազոտության համար նրանք որևէ արժեք չեն ներկայացնում<sup>37</sup>:

Փամանակագրության կարգով հաջորդ հեղինակը, որ ընդօրինակել է վիմագրերը, ժէ դարի պատմիչ Զաքարիա Սարկավազն է, որն իր «Պատմագրության» կրթորդ գրքում Հովհաննավանքի Կոնդակի մեջ մտցրել է «թէ արձանքն որ յորմունս և թէ յիշատակարանս գրոց»: Ի տարբերություն Ստ. Օրբելյանի, Զաքարիան վիմական բնագրերը չի օգտագործում պատմական անցքերի շարագրման ընթացքում, իբրև նյութը պարզարանող աղբյուրներ, այլ վիմագրերի հավաքածուն մեջ է բերում վանքի կալվածքների գույքագրման առիթով, պարզելու համար, թե դարերի ընթացքում ինչ նվերներ է ստացել Հովհաննավանքը: Բացի դրանից, Զաքարիայի արտագրությամբ են մեղ հասել նաև սոլասալարների քույր նանայի (Վանենի) կազմած ընդարձակ տապանագիրը, որից միայն առանձին բեկորներ են մնացել, ինչպես նաև Օշականի եկեղեցու ԶԼԷ (1288) թ. կարևոր արձանագրությունը, որը այժմ ծածկված է ծեփով և անմատչելի ընդօրինակության համար:

Բնագրերը արտագրելիս Զաքարիան ձգտում է հնարավորին չափ ստույգ ընթերցել տառաշարքերը, «զի ընթեռնելով վարձանս եւ զկոնդակն՝ ոչ յարին առ միմիանս եւ զմեզ այսպանիցեն՝ սուտ համարելով զմեզ», և այդ նրան ընդհանուր առմամբ հաջողվել է:

36 Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր N 3031, Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը, արձ. N N 13, 21, 30, 31, 45, 64, 127, 169, 175:

37 Սանահնի վանքի արձանագրությունների ժողովածուում պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը «Քոթուկ»-ից քաղել և հրատարակել է այն բնագրերը, որոնք չեն պահպանվել կամ ծածկված են հետագա շինությունների պատերով. դրանք են N N 185, 186, 188 արձանագրությունները: Բացի դրանցից «Քոթուկը» իբրև առաջին ընդօրինակող է նշված նաև N N 12, 29, 30 բնագրերի մատենագրության մեջ. ստացվում է, որ Սանահնի հուշարձանների արձանագրություններից «Քոթուկ»-ում տեղ են գտել միայն վեցը, հեղինակը հենց այդպես էլ գրում է. «Քոթուկ»-ի մեջ ընդօրինակված են մեր ժողովածուի 12, 28, 29, 30, 186, 187 արձանագրությունները, մինչդեռ «Քոթուկ»-ի N 3031 ձեռագրում գտնում ենք բացի նշվածներից Սանահնի շուրջ 21 այլ բնագրեր (տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը..., էջ 65, N 3031 ձեռագիր):



Կարելի է նշել միայն բնագրերի բոլոր կցագրերի կամ հասցա-  
վումների բացումը, ուղղագրական սրբագրումները, որ հեղինակը  
կատարում է գիտակցաբար, նպատակ ունենալով ավանդված ձե-  
վերը հարմարեցնել իր ժամանակի գրաբարի օրինաչափություն-  
ներին, ըստ որում, սրբագրություններն ու խմբագրումները նույնն  
են. ինչ տեսանք Ստ. Օրբելյանի «Պատմության» մեջ: Այսպես, 3-ի  
բաց թողում՝ Այսմատուր, հաոց, Թաիկ, շրչագաուրե, իմո, կո-  
չեցա, մերո, հանո, րնծա, որ պատմիչը վերականգնում է իր վեր-  
ծանության մեջ՝ Յայսմատուր, հայոց, Թայիկ, իմոյ, կոչեցայ և  
այլն: 3-ի անհարկի հավելում՝ Կարայպետիս, քազավորայգաւրն,  
Ամսաշխան, Ռհանայվանք, որ հեղինակն արտագրում է կանոնա-  
վոր, առանց 3-ի՝ Կարայպետիս, քազաուրաց ուղի, Ամսաշխան և այլն:  
Բառամիջում իրար հաջորդող բաղաձայնների մեջ ր-ի գրությունը,  
որ հաճախ է դիտվում Հովհաննավանքի բնագրերում Զաքարիան ար-  
տագրում է առանց ր-ի՝ Կոստընտին = Կոստանդին, բաւրնդակ =  
բովանդակ, ապրսպարեցաք = ապսպարեցաք, վերականգնում է  
վիմագրերում պարզ ձայնավորի կամ երկհնչյունի վերածված եր-  
բեմնի երկրարբանները՝ հանո եղել, տվի, տվել էր, էլել էր, տվաք  
ձևերը խմբագրելով՝ հանո եղեալ, տուի, տուեալ էր, էլեալ էր,  
տուաք: Դիտվում են նաև ձևարանական սրբագրումներ՝ Մամա-  
խարունի, Մարծպանի, կենդանի ենք, էգեց, գրիս ձևերը փոխա-  
րինված են գրաբարյան կանոնավոր՝ Մամախարունա, Մարծպա-  
նայ, կենդանի ենք, էգոց, գրոյս և այլն: Զաքարիայի ընդօրինա-  
կություններում նկատվում են նաև շգիտակցված բառեր կամ ա-  
զավազումներ. օրինակ, մանդատորբախուցէսի կարգացվել է՝  
մանավանդ որ քայխուցեսի, շարիատ-ը՝ շարինատ, Մախուրին՝  
Մախարին, Բեսունի-ն՝ Բեսուն և այլն<sup>38</sup>:

Վիմագրերի վերծանության մեջ Զաքարիան մի քաչլ առաջ  
է անցնում Ստ. Օրբելյանից և նրանից ավելի ստույգ արտագրում  
տառաշարքերը: Չնայած դրան, «Պատմության» մեջ ներկայաց-  
ված նրա վերծանությունները զգալի շափով սրբագրված լինելու  
հետևանքով հազիվ թե իրական պատկերացում տան այդ բնա-  
գրերի լեզվի, մասնավորապես նրանց հնչյունական փոփոխու-  
թյունների մասին:

Ստ. Օրբելյանի և Զաքարիա Սարկավազի վերծանություն-  
ների մանրամասն բնութայունը անհրաժեշտ համարեցինք այն

<sup>38</sup> Զաքարիա Սարկավազի Պատմագրություն, հատ. Գ, Վաղարշապատ, 1870,  
էջ 16—24, Կ. Ղաֆազարյան, Հովհաննավանքը..., էջ 84, 100:



պատճառով, որ հետագա շրջանի, հատկապես ժՅ դարի վերժանողները, կրկնելով նրանց վերժանությունների արատներն ու բացերը, ոչ մի շափով առաջ չանցան նրանցից, երբեմն էլ իբրև նոր վերժանություն ներկայացնելով նրանց կամ հետնորդների մինչ այդ հրատարակված ոչ նույնական արտադրությունները:

Սակայն հայերեն վիմագրերի հավաքման, հրատարակման և ուսումնասիրության համակարգված և կանոնավոր ջանքերը ծավալվում են ժՅ դարի առաջին կեսերին, երբ իրար հակից հրատարակ են դալիս Հայաստանի տարբեր գավառների կամ առանձին հնավայրերի պատմա-աշխարհագրական, տեղագրական նրկարագրություններ, որոնցում սովորաբար ներկայացվում էին նաև հնագիտական-ճարտարապետական հուշարձանների առավել նշանակալից և անեղծ արձանագրությունների ընդօրինակություններ: Այդպիսի ժողովածուներից առաջինը բանասեր Մ. Բժշկյանի «Ճանապարհորդություն ի Լեհաստան» սովար ուղնորությունն է, որ լույս է տեսել 1830 թ. Վենետիկում: Հեղինակը նպատակ է ունեցել քայլ առ քայլ ներկայացնել Անիի անկման և ամայացման վերջին դրվագները, անեցիների արտագաղթը Եվրոպայի երկրները և այնտեղ նրանց ստեղծած նյութական և հոգևվոր մշակույթի հուշարձանները: Այս նպատակով Բժշկյանը այցելել է Լեհաստանի, Հունգարիայի, Մուլդավիայի, Բուլղարիայի, Ռուսաստանի երբեմնի հայկական գաղութները և հանգամանորեն նկարագրել այդ բնակավայրերի և հուշարձանների ժամանակակից վիճակը, ընդօրինակել և հրատարակել պահպանված արձանագրությունները, որոնք մեծ մասամբ վերաբերում են ետին ժամանակներին: «Ճանապարհորդության» սկզբում «Մնացորդը Մնույ և Շիրակ գաւառին» վերնագրի տակ հեղինակը զետեղել է Անիի, Հովհաննավանքի, Մարմաշենի, Հաղբատի, Օղուզլուի, Հառիճի, Վարդարլուրի, Օձունի մի քանի կարևոր արձանագրություններ ոչ թե սեփական ընդօրինակությամբ, այլ վերցնելով էջմիածնեցի երկու քահանաներից, որոնք «անձամբ շրջիալ օրինակէին կրկին քահանայք բանիրունք տէր Խաչատուր և տէր Յովհան էջմիածնեցիք»: Հիշյալ քահանաները դեռևս 1804 թ. արտագրել են Անիի բոլոր երևացող արձանագրությունները, սակայն Բժշկյանի գրքում զետեղված են դրանցից միայն երկուսը, ըստ այսմ միանգամայն նույնական վերժանությամբ: Օրինակ, Ահարոն մազիստրոսի՝ անձանոթ տերմիններով ու նոր բառերով խճողված ընդարձակ արտոնագիրը տպագրված է միայն ուղղագրական աննշան սրբագրումներով, որ երևում է հաշորդ համեմատությունից:



Փորագրված է Մայր տանա-  
րի ամ. պատին Գ I 38

կամօք, իմո, մանկութեան  
ծիրանածին թագուհուն  
բաւանդակ, մութասիրն, զոր  
տախն

Վերձանված է — Բժշկյան,  
էջ 73

կամօք, իմոյ մանկութեան  
ծիրանածին թագուհուն  
բովանդակ, Մութայիրն, զոր  
տան:

Մյուս արձանագրությունները ևս կաշատուրը և Յովհանը ար-  
տագրել են այս կարգի սրբագրումներով (գուցե և Բժշկյանն է  
սրբագրել հրատարակելուց առաջ, զժվար է որոշել): աւ-ի փո-  
խարեն օ, ա, յ-ի վերականգնում ըստ դրաբարի ուղղագրության,  
բոլոր կցագրերի և հատալումների բացում և այլն: Կան նաև ակ-  
ներև վրիպումներ, որոնց մի մասը գալիս է Զաքարիա Սարկա-  
վագից, որից հավանաբար օգտվել են բահանաները. օրինակ, Հով-  
հաննավանքի բնագրերից մեկում վրաց արքունի տիտղոս ման-  
դատորքախոյցէս կարգացվել է՝ մանաւանդ որ քայխոցեսի, նույնը  
Մարմաշենում՝ Մանդատուր Բախուցէիս և անձնանուն է դիտված,  
Հաղբատի բնագրում՝ արարել ամիւ սպասալար-ը՝ Արասակ մեր  
սպասալար, Զաֆաւէի և Իւանէի Բոյրն է Գաւին տապանագիրը  
վերածվել է՝ Զաֆաւէի և Իւանէի Բոյր նէզաւին և այլն<sup>39</sup>:

Հետագա տասնամյակներում և ամբողջ ԺԹ դարի ընթացքում  
հետաքրքրությունը պատմա-ճարտարապետական հուշարձաննե-  
րի և նրանց պատերին փորագրված արձանագրությունների նը-  
կատմամբ ավելի է մեծանում: Երևան են դալիս ճանապարհորդա-  
կան-տեղագրական, պատմա-աշխարհագրական մի շարք աշ-  
խատություններ, որոնցում մեծ տեղ է հատկացվում ավյալ հը-  
նավայրի կամ առանձին հուշարձանների բնագրերին: Գրանցից  
վիմագրական հուշարձանների ընդգրկման տեսակետից առավել  
նշանակալից են Հ. Շահխաթունյանցի «Ստորագրութուն Կաթու-  
ղիկն էջմիածնի և հինգ գավառացն Արարատա» երկհատոր (Վա-  
ղարշապատ, 1842 թ.), Ս. Զալալյանցի «Ճանապարհորդութիւն  
ի Մէծն Հայաստան» նույնպես երկհատոր (Տփլիս, 1842 թ. 1858  
թ.), Ն. Սարգիսյանի «Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս» (Վե-  
նետիկ, 1864 թ.), Մ. Միրախորյանի «Նկարագրական ուղևորու-  
թյուն ի հայարնակ գաւառս արևելյան Տաճկաստանի» եռահատոր

39 Մ. Բժշկյան, Ճանապարհորդութուն ի Լեհաստան..., Վենետիկ, 1830,  
էջ 80, Կ. Ղաֆաղաւյան, Հաղբատ, էջ 185:



(Պոլիս, 1884—1885 թթ.), Մ. Բարխուդարյանի «Արցախ» (Բաբու, 1895 թ.), Մ. Սմբատյանի «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» (Վաղարշապատ, 1895 թ.), «Նկարագիր Շամախվա թեմի» (Վաղարշապատ, 1897 թ.), «Նկարագիր Սուրբ Կարապետի վանաց Երնջակա» (Տփլիս, 1904 թ.) տեղագրական ծավալուն գրքերը, որոնցում հեղինակները զետեղում են վերնագրերում նշված գավառների բաղմամբիւլ արձանագրութիւններ՝ մեծ մասամբ սեփական ընդօրինակութիւններ:

Հիշյալ ժողովածուներից բացի հրատարակվում են նաև միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային առավել նշանավոր կենտրոնների պատմական տարեգրութիւններ և հուշարձանների նկարագրութիւններ նվիրված առանձին մենագրութիւններ, որոնցում նույնպես լայնորեն ներկայացվում են նրանց որմերին փորագրված վիմական բնագրերը:

Այդ բնութի գործերից հատկապես նշելի են Ա. Մխիթարյանի աշխատանքները նվիրված Հառիճի, Հոռոմոսի, Մարմաշենի, Շիրակի այլ վանքերի և Անիի հուշարձանների նկարագրութիւններ և արձանագրութիւններին, Մանկունու և Ստ. Մխիթարյանի ժողովածուները, որտեղ առաջին անգամ ներկայացվում են Գեղարդավանքի (Այրիվանք) պատմութիւնն ու արձանագրութիւնները, Ռ. Երզնկյանի «Հնախոսական տեղագրութիւն Հաղբատա աշխարհահոռակ վանից» (Վաղարշապատ, 1886 թ.) գիրքը, որը Հաղբատի վիմագրութիւն երկրորդ քիչ թե շատ ամբողջական ժողովածուն է Հ. Ղրիմեցու այդ ժամանակ անտիպ հավաքածուից հետո, Մ. Գևորգյանցի «Համառոտ տեղագրութիւն հնութիւնց մեծին Շիրակա և մայրաքաղաքին Անվո» (Ալեքսանդրապոլ, 1903 թ.) աշխատութիւնը, որտեղ ավելի լրիվ և նոր վերձանութիւններով են հրատարակվում նշված հնավայրերի վիմական բնագրերը:

Տեղագրական մենագրութիւններից բացի վիմական արձանագրութիւնները լայն արտացոլում են գտնում նաև դարավերջի հայ սյարբերական մամուլում, հատկապես գրական-գիտական, պատմա-բանասիրական կամ ազգագրական հանդեսների էջերում: Այս առումով առանձնապես նշանակալից է «Բյուրակն», «Փորձ», «Արձագանք», «Լումա», «Արարատ», «Արաքս» և ամենից ավելի «Ազգադրական հանդես», «Բաղմավեպ», «Հանդես ամսօրյա», «Բանասեր» հանդեսների նպաստը հայերին վիմագրերի ընդօրինակման և հրատարակման գործին: Մամուլում հրատարակված



տեղագրութիւններից հատկապես նշելի են վաստակաշատ Ե. Լա-  
 շայանի՝ պատմական Հայաստանի տարրեր պատմա-ազգագրա-  
 կան շրջանների տեղագրական-ազգագրական տեսութիւնները  
 (Ջալախք, Վարանդա, Սիսիան, Զանգեզուր, Գանձակ, Գեղարքու-  
 նիք, Վասպուրական և այլն), որոնցում զգալի տեղ է հատկաց-  
 ված նաև այդ վայրերի հուշարձանների եկարագրութեանը և վե-  
 տեղված է նրանց արձանագրութիւնները: Վիմագրերի ավելի նույ-  
 նական ընդօրինակութիւններով և նրանց հմուտ վերծանութիւննե-  
 րով աչքի են ընկնում Հ. Քաջերունու (բժիշկ Գարբիել Հովհան-  
 նիսյան) «Ճանապարհորդական նկատողութիւնք» և «Ճանա-  
 պարհորդական հիշատակարանք» հոդվածաշարերը («Փորձ»՝ 1886,  
 1887 թթ., «Արարատ»՝ 1888 թ., «Արձագանք»՝ 1884—1885 թթ.)  
 նվիրված Վայոց ձորի տեղագրութեանը և վիճական բնագրերին,  
 Ի. Հարութեանյանի, Գ. Երզնկյանի, Կ. Հովհաննէանյանցի (Կրպե)  
 հոդվածները Խժկոնքի, Սանահնի հուշարձանախմբերի և Կայնն  
 և Կայծոն ամրոցների մասին: Այլազգի հայագետներից հայերեն  
 վիճարձանագրութիւնների վերծանման, հրատարակման և բննա-  
 կան ուսումնասիրութեան զգալի աշխատանքներ են կատարել  
 հատկապես Յ. Դյուրուան, Մ. Բրոսեն, Վ. Լանգլուան և ուրիշներ:  
 Խոշոր արժեք է ներկայացնում մասնավորապես Մ. Բրոսեի Les  
 ruines d'Ani (Ս. Պետերբուրգ, 1860 թ.) ծավալուն աշխատութիւ-  
 նը, որտեղ առաջին անգամ տրված է Բագրատունիների մայրա-  
 քաղաքի վիճարձանների համակողմանի բնական ուսումնասի-  
 րութիւնը, նրանցում ավանդված մի շարք տերմինների և հասկա-  
 ցութիւնների մեկնարանութիւնը, ժամանակագրական բաղմամբիվ  
 դիտողութիւններ և այլն, թեև այս բոլորի համար հիմք են ըն-  
 դունված հրատարակի վրա եղած ոչ այնքան հաջող ընդօրինակու-  
 թիւնները: Մ. Բրոսեի նշանակալի աշխատանքներից է նաև Հով-  
 հաննէս Ղրիմեցու ձեռագիրը՝ Հաղբատ, Սանահնի վանքերի պատ-  
 մութիւնը և նրանց արձանագրութիւնների ընդօրինակութիւննե-  
 րը հատվածաբար ուսերեն թարգմանութեամբ հրատարակելը, որ  
 իրականացվել է 1863 թ.: Ղրիմեցու արժեքավոր ձեռագիրը բնա-  
 գրով անհայտ էր մնացել հայագիտութեանը և միայն վերջերս հրա-  
 տարակվեց Կյուլբենկյան մատենաշարով (1963թ.):

Հայերեն վիճագրերի վերծանութեանը, հրատարակմանն ու  
 մեկնարանութեանը նվիրված հիշյալ գործերի շարքում իրենց նշա-  
 նակութեամբ, բնդրկման լայնութեամբ և գիտական մակարդակով  
 առանձնանում են բաղմահմուտ Ղ. Ալիշանի պատմա-աշխարհա-



դրական, տեղագրական-բանասիրական համապարփակ ժողովածուները՝ «Շիրակ» (1881 թ.), «Սիսուան» (1805 թ.), «Այրարատ» (1890 թ.), «Սիսական» (1893 թ.), որոնցում ամփոփված են պատմական Հայաստանի այդ շրջանների՝ գիտությունը հայտնի կամ անծանոթ բազմաթիվ արձանագրությունների հնարավորին շափճչորտված ընդօրինակություններ: Ալիշանը իր հրատարակած վիճարձանագրությունները տեսել է միայն լուսանկարներում և նրանց վերծանությունները մեջ է բերում մինչ այդ հրատարակված տեղագրություններից, սակայն այդ անելիս նա կուրորեն չի հետևելում նախորդ ընդօրինակողներին, այլ բոլոր դեպքերում աշխատում է հասնել բնագրերի լիակատար նույնականության, նրանց իրական և հավաստի մեկնաբանության, եղծված կամ խաթարված տառաշարքերի, անծանոթ տերմինների, տեղանունների ու անձնանունների ստույգ վերականգնումների: Հայագետի բազմակողմանի հմտությունը, մատենագրական ու ձեռագրական նյութի խոր իմացությունը հնարավորություն են տալիս անորոշ, խաթարված կամ զծվարընկալելի բնագրերում նշմարել այն իմաստները, որ նրանց մեջ գրել են փորագրողները և որ աննկատ են մնացել կամ մթաղնել նախորդ ընդօրինակություններում: Միայն երկու օրինակ Ղ. Ալիշանի այս հմտալից շտկումներից. Սաղմոսավանքի հնագույն բնագրերից մեկում առաջին ընդօրինակող Հ. Շահխաթունյանցը կարդացել էր. Ես՝ Վաչէ որդի Քրդին, որդո Վաչէի և Տարխուշանի... յիմն արեասեռ. Ալիշանը առանց տեսնելու բնագիրը կամ նրա լուսանկարը, դատողության ուժով ընդգծված բառերը ստույգ վերականգնում է. և Եսրիշանի... յիմ Բնարանս...: Ավանի հին տաճարի ՉԼԴ (1285) թ. արտոնագրի նախաբանը՝ «յաշխարհակալութե արեայից արեային Արղուրեան... Ալիշանը ուղղում է՝ արեայից արեային Արղուն ղանի...<sup>40</sup>: Միշտ շէ, որ Ալիշանին հաջողվում է հավաստիորեն և սպառիչ կերպով վերականգնել իր ձեռքի տակ եղած ոչ այնքան կատարյալ վերծանությունների կասկածելի հատվածները, շատ հաճախ եղած նյութերով այդպիսի ճշգրտումներ կատարելը վեր է լինում նույնիսկ նրա ուժերից, սակայն բոլոր դեպքերում նրա քննախույզ միտքը չի զոհանում առկա թեական ընթերցումներով և ուղիներ է որոնում հասնելու բնագրերի ավելի իրական մեկնությունների:

Հրատարակված վիճական բնագրերի վերծանությունները

<sup>40</sup> Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն..., Բ. էջ 122—123, 160. Ալիշան, Այրարատ, էջ 162, 293, Կ. Վաֆապուրյան, Ավանի երկնագլխի ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 19:



ճշգրտելու և նրանցում ավանդված հասկացությունների, տերմինների կամ առանձին բառերի մեկնարանության նշանակալի փորձ է Մ. էմինի «Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего» (Մոսկվա, 1881) ժողովածուն, որտեղ հեղինակը առանձին է թարգմանել և հմտությամբ մեկնարանել Կարսի, Անիի և արևմտյան Շիրակի այլ հուշարձանների շուրջ 200 առավել կարևոր և ամբողջական արձանագրություններ, քաղված ն. Սարգիսյանի ըստ ամենայնի վստահելի ընդօրինակություններից:

Մ. էմինի այս աշխատանքի մասին խոսք կլինի վիճական բրնագրերի ուսումնասիրությունները բննելիս, այստեղ նշում ենք այդ բնագրերի թարգմանության և երկլեզվյան հրատարակման իրողությունը:

Հայերեն վիճական արձանագրությունների ընդօրինակությունների և հրատարակությունների մեր համառոտ, ոչ ամբողջական ուրվագծից ակնհայտ դարձավ, որ արդեն ժԹ դարի վերջերին մեղ հասած բնագրերի զգալի մասը առավել կամ պակաս հարադատ արտագրություններով ծանոթ էր հայագիտությանը և հաստատուն տեղ էր գրավում պատմագիտական աղբյուրների շարքում: Հաշվի առնելով վիճական արձանագրությունների արտագրության, վերծանության և մանավանդ հրատարակության հետ կապված ահագին դժվարությունները, որ պետական կամ հասարակական մարմինների հովանավորության կամ դույզն ինչ օժանդակության բացակայության պայմաններում գրեթե անհնար էին դարձնում նման ձեռնարկման իրականացումը, պետք է երախտագիտությամբ նշել, որ կատարված էր վիթխարի, անգնահատելի մեծագործություն՝ ժամանակի և մարդու ավերածությունից ազատելու և հաջորդ սերունդներին ավանդելու մեր պատմության և մշակույթի արժանահավատ վիճագիր վկանները: Արդարև ժԹ դարի ընթացքում այս կամ այն կերպ արտագրված կարևոր բնագրերի մի մասը այսօր այլևս գոյություն չունի կամ անմատչելի է նոր ընթերցումների համար, սակայն մնում է թղթե մատյաններում, շնորհիվ այն ընդօրինակությունների, որ մեղ են թողել այդ կարևոր գործին նվիրված մի խումբ անշահախնդիր խանդավառներ:

Սակայն, պատշաճը հատուցելով վիճական բնագրերի ընդօրինակությամբ և հրատարակությամբ զբաղվող անցյալի մտավորականների խոշոր վաստակին և ըստ արժանվույն գնահատելով հավարված հսկայական, մեծարժեք նյութը, միևնույն ժամանակ չի կարելի շնչել անցյալ դարում կատարված ընդօրինակությունների գիտական ցածր մակարդակը, նրանցում տեղ գտած մի շարք



արմատական բացերն ու թերությունները, որոնք այս կամ այն շափով հատուկ են բոլոր վերժանողներին և զգալապես նսեմացնում են հրատարակված վիժագրերի պատմագիտական, աղբյուրագիտական կարևոր նշանակությունը հատկապես նրանց լեզվաբանական ուսումնասիրության համար:

Նախորդ ընդօրինակությունների այդ հիմնական թերություններն ու արատները կարելի է ամփոփել մի քանի ընդհանուր կետերում. 1. Տվյալ գալաօրի կամ առանձին հուշարձանախմբի ընդօրինակվող ամեն տեսակի արձանագրությունների և բեկորների ոչ լրիվություն, ոչ լիակատարություն, որ առանց բացառության բնորոշ է բոլոր վերժանողներին: Իբրև կանոն սովորաբար արտագրվել են տվյալ հուշարձանի միայն լավ պահպանված, հեշտ ընթերցվող բնագրերը, եղծված, խաթարված կամ քարերը խաթարված, հողմահարված վիժագրերը, դժվար վերժանելի, ոչ ամբողջական տառաշարքերը զանց են առնվել, ըստ այդմ, արտագրվելիք բնագրերի ընտրությունը պայմանավորված է եղել կամ վերժանողի անձնական մտահորիզոնով ու նախասիրություններով, որոնցով որոշվել է բնագրերի կարևորությունը կամ անկարևորությունը, և արտագրվել միայն կարևոր համարվածները, կամ այդ բնագրերի դյուրին և արագ ընդօրինակման պարագայով, այս գեղբում գրի են առնվել միայն անեղծ պահպանված, դյուրընթեռնելի տառաշարքերը: 2. Ստույգ և պահանջվող մանրամասնություններ չեն նշվել ընդօրինակված արձանագրությունների տեղը, ո՞ր հուշարձանի, ո՞ր պատին, դրսի՞ց թե ներսի՞ց, ինչպիսի՞ն են նրանց հնագրական հատկությունները և պահպանության վիճակը արտագրության պահին և այլն: 3. Հրատարակված վիժական արձանագրությունների ոչ նույնական, ոչ հարազատ ընդօրինակությունները, որի հետևանքով նրանք զգալի շափով հեռացել են իրականից, բարի վրա փորագրվածից: Ընդօրինակությունների ոչ նույնականությունը հիմնականում արտահայտվել է. ա. Բնագրերի փակագիր կամ կցագիր տառակապակցությունների և հապավումների բացումով, առանց հատուկ նշաններով արտահայտելու դրա շնորհիվ ավելացված նոր գրերը, որի հետևանքով անորոշ է մընում, թե որն է իրականը՝ փորագրվածը և որը՝ վերժանողների ավելացրածը: Բ. Բնագրերի առանձին բառերի գրությունը համապատասխանեցնելով արդի ուղղագրությանը կամ վկայված ժամանակի գրական հայերենի օրենքներին, ըստ այդմ, աւ-ի փոխարեն բաղաձայնից առաջ օ-ի գրությամբ, է, ե, յ, վ, յ գրերի կիրա-



սուբյուկտների սրբագրումներով ըստ գրաբարի, սյարզ ձայնավորների կամ երկհնչյունների վերածված գրաբարյան երկբարբառների վերահանդնումով, բարբառային կամ միջին հայերենի ձևաբանական իրողությունները՝ հուլովման և խոնարհման վերջավորությունները հարմարեցնելով գրաբարի օրինաչափություններին, հատուկ անունների արդի գրությունը և այլն և այլն: Այս խմբագրումների հետևանքով անհնար է դառնում հավաստի դադափար կազմել բարի վրա փորագրված լեզվա-քերականական իրական ձևերի մասին: գ. Բնագրերի առանձին, անկարևոր նկատված հատվածների, հատկապես նախարանի, անեծքի ու հատուցման ձևակերպումների գիտակցաբար բացթողնելը կամ, ընդհակառակը, սյարզ դարձնելու նպատակով կատարված անհարկի ընդմիջարկությունները, հավելումները կամ խմբագրումները, որոնց հետևանքով հաճախ դուրս են մնում այնպիսի տառաշարքեր, որոնք կարող էին նպաստել ամբողջ բնագրի ստույգ վերծանությունը, կամ բնագրում շեղած միավորների հավելումով աղավաղվում է նրա իմաստն ու լեզվա-քերականական կառուցվածքը: գ. Բնագրերի ջարդված, եղծված, անհետացած մասերը կամ շեն վերծանվում կամ վերծանվում են առանց որևէ հիմնավորման կամ նշումների, որի հետևանքով անորոշ են մնում դրանց վերականգնումների հավաստիությունը կամ եղծված, անհետացած հատվածների երկարությունն ու նրանց տեղում վերականգնված գրերի բանակը, համապատասխանությունը: և. Հրատարակված բնագրերին շեն կցվում օժանդակ, լուսարանող նյութեր՝ լուսանկարներ, տառաձևերի գծագրական ընդօրինակություններ կամ պատճենումներ (էստամպատ), որի հետևանքով վերծանությունների նույնականությունը, հատկապես երկբայի հատվածների հավաստիությունը անստուգելի է մնում և կարոտ նոր ընթերցումների:

Տարբեր են վիմագրերի ընդօրինակության և հրատարակության գործում տեղ գտած հիշյալ բացերի ու արատների պատճառները՝ վերծանողների մասնագիտական հմտություն և փորձ շունենայլը, նյութական և տեխնիկական միջոցների սակավությունը, արձանագրությունների հավաքման նպատակների ոչ հստակ գիտակցումը, վիմագրերի ընդօրինակման ավանդույթի բացակայությունը, վերծանվող տառաշարքերի զգալի մասի հողմահարված, եղծված ու զժվարքնթեռնելի լինելը, հայ հնագրության իբրև արձանագրագիտության օժանդակ գիտության բացարձակ անմըշակ լինելը կամ նրա խանձարուրային վիճակը և այլն, սակայն



այս բոլորը ոչ մի շափով չեն մեղմում ստեղծված անմխիթար դրուժյունը՝ ժԹ դարում հրապարակված վիմական արձանագրությունները, շնայած իրենց պատկառելի քանակին և ընդգրկման լայնությանն ու աշխարհագրությանը՝ զգալի շափով զիջում են իրենց խորությամբ, նույնականությամբ վերժանությունների որակով, որի հետևանքով տվյալ վերժանությունները չեն կարող լեզվաբանական քննությունների ատաղձ ծառայել և պատկերացում տալ վկայված ժամանակաշրջանի այն լեզվի մասին, որով շարադրված են այդ բնագրերը, քանի որ, ինչպես քանիցս համոզվեցինք, քարի վրա փորագրված կամ ներկադեղով գրված տնօրացարքերը թղթի վրա փոխանցվել են ոչ իրենց իրական տեսքով կամ պատճենով, այլ հաճախ անճանաչելիության շափ ազավազված, սրբագրված, խմբագրված, մի խոսքով հարմարեցված հին գրական հայերենի հնչյունական, ձևաբանական օրինաչափություններին կամ ժամանակակից հայերենի ուղղագրությանը:

Դարավերջի ընդօրինակողներից շատերը ոչ մի քայլ առաջ չանցան ոչ միայն Ստ. Օրբելյանից կամ Զաքարիա Մարկավազից, այլ նաև դարասկզբի վերժանողներ Հ. Շահխաթունյանցից կամ Ս. Զալալյանցից, երբեմն էլ նրանցից ոմանք անփոփոխ արտագրում էին նախորդների վերժանությունները՝ ներկայացնելով իրրև սեփական խոնջանքի արդյունք:

Իհարկե, անարդարացի կլիներ այս կշտամբանքը հավասար շափով տարածել հայ վիմագրերի անցյալի բոլոր վերժանողների վրա. նրանցից ոմանք, օրինակ, Ն. Սարգիսյանը զգալի շափով ազատ է վերը հիշված թերություններից: Հայտնի է, որ Սարգիսյանի «Տեղագրությունը»-ը շատ բարձր է գնահատել Ղ. Ալիշանը, այն համարելով «պատկառազոյն եւ շեւ ես հրատարակեալ վաստակ», իսկ նրա հեղինակին՝ «հաւատարմագոյն ընդօրինակող հայ արձանաց»<sup>41</sup>: Եվ իրօք, Սարգիսյանի «Տեղագրությունը»-ը ընդօրինակությունների և հրատարակության հարազատությամբ մեծապես տարբերվում է մյուսներից և հանդիսանում մինչմառյան արձանագրագիտության բարձրագույն աստիճանը: Սակայն, չքնայած ավելի նույնական ընդօրինակություններին, Ն. Սարգիսյանի հավաքածուն նույնպես լիովին ազատ չէ այն էական վրիպումներից ու բացերից, որոնք ընդհանուր էին բոլոր հրատարակություններին և մասամբ պայմանավորված հայ արձանագրագիտու-

41 Կենսագրություն Հ. Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 127:



թյան և հնագրության ցածր մակարդակով կամ նյութատեխնիկական միջոցների սակավությամբ:

Այսպիսին էր հայկական վիմագրական հուշարձանների արտադրության հրապարակման և ուսումնասիրության վիճակը ժԹ դարի վերջերին, երբ հայագիտության անդաստանում երևաց Ն. Մառը:

Անիի հնագիտական պեղումներն սկսելու օրերին 1893 թ. Ն. Մառը հրատարակում է «Նոր նյութեր հայ վիմագրության» շարքը, որտեղ միանգամայն նոր, նախորդ հրապարակումներից արմատապես տարբերվող եղանակներով ընդօրինակում, վերծանում և մեկնաբանում է արևմտյան Շիրակի մի շարք նորահայտ վիմական բնադրեր, որոնք աչքի են ընկնում ոչ միայն արտադրությունների բացարձակ նույնականությամբ և ճշգրտությամբ, այլև եղծված կամ անհայտացած հատվածների վերականգնումների համոզչությամբ, բնադրերի ըստ ամենայնի սպառիչ և լիակատար վերլուծությամբ, օժանդակ լուսաբանող նյութերի հրատարակությամբ: Հետագա տասնամյակներում Ն. Մառը և նրա աշակերտները Անիի պեղումներին զուգընթաց վերծանում և հրատարակում են Բագրատունիների մայրաքաղաքի և մերձակայքի առավել նշանակալից արձանագրությունները, հատկապես հնագույն հայերեն (է դար) շինարարական (կտիտորական) բնադրերը, որոնք կամ բուլորովին անծանոթ էին բանասիրությանը, կամ հրապարակված ոչ իրական, անօգտադործելի վերծանություններով: Նոր, գիտական բնական արձանագրագիտության սկզբունքները շարադրվում են Ն. Մառի «Аркауи-монгольское название армян» (1905 թ.), «К датировке ктиторской над. Текор. храма», (1914 թ.) հոդվածներում և հատկապես Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիր» ժողովածուի արժեքավոր առաջաբանում (1913):

Հայերեն վիմական արձանագրությունների գիտական նշանակության և նրանց բնական ուսումնասիրությունների հարցերը արծարծվել են նաև Հ. Օրբելու հայտնի դասախոսության մեջ՝ կարգացված Պետերբուրգի համալսարանում 1914 թ., որ թեև միայն վերջերս հրապարակ եկավ, սակայն վկայում է, որ հեղինակը դեռ այն ժամանակ հետևում էր Ն. Մառի մշակած սկզբունքներին: Զգտելով հրատարակչական տպատառերը մոտեցնել և հարմարեցնել քարի վրա փորագրված հայերեն տառաձևերին կամ կրցադրերին, Ն. Մառը և Հ. Օրբելին հետագայում ստեղծում են արձանագրությունների տպագրական առանձին տառատեսակներ և նրանցով հրատարակում իրենց կատարած վերծանությունները:



Հետագա տասնամյակներում մինչև 20-ական թվականները Մառի և նրա աշակերտներն ու հետևորդները՝ Հ. Օրբելին, Վ. Բենեշևիչը, Աշխարհբեկ Քալանթարը, Ս. Տեր-Ավետիսյանը և ուրիշներ, նոր, գիտական եղանակներով վերծանում և հրատարակում են առանձին կարևոր վիճակյալ բնագրեր կամ տարրեր հուշարձանախմբերի բոլոր վիճագրերի լիակատար հավաքածուներ, որոնցից հատկապես նշելի են Հ. Օրբելու հետազոտությունները Բագավա-նի, Մրենի, Բագարանի, Ալամանի, Նախիչևանի, Քալինի, Արուճի, Հոփոսիմեի է դարի շինարարական արձանագրությունների մասին, Մարմաշենի վիճագրերի ժողովածուն (1914), Անիի ժողովածուն, որը պատրաստ էր տպագրության դեռևս 1920 թ., սակայն լույս տեսավ միայն 1966 թ., Մրենի ժողովածուն (անտիպ), Վ. Բենեշևիչի մենագրությունը՝ նվիրված Անիի՝ Բյուզանդական տիրապետության 20-ամյա ժամանակաշրջանի (1045—1065) արձանագրությունների վերծանությանն ու մեկնությանը, Ս. Տեր-Ավետիսյանի «Սանահնի, Քորայրի, Ախթալայի, Օձունի արձանագրությունների ժողովածուն» (անտիպ), Աշխարհբեկ Քալանթարի «Վանատանի արձանագրությունները» ժողովածուն (անտիպ) և այլն:

Սովետական շրջանում, հատկապես վերջին տասնամյակում Մառի և Օրբելու մշակած վիճագրերի վերծանության, հրատարակության և բնական ուսումնասիրությունների գիտական սկզբունքները ավելի զարգացան և կատարելագործվեցին, հատկապես ընդօրինակվող վիճագրերի լուսաբանող օժանդակ նյութերի և հրատարակության նոր եղանակների տեսակետից: Ավելի նպատակահարմար համարվեց Մառի և Օրբելու հատուկ տառաձևերի փոխարեն, որոնք շնայած իրենց պատկառելի քանակին (շուրջ 500 համալիր) ի վիճակի չէին արտահայտելու հայկական արձանագրությունների բազմազան տառաձևերի կամ կցագրերի ու փակագրերի բոլոր առանձնահատկությունները, կիրառել ամբողջ արձանագրության դժադիր ընդօրինակությունը, որ պատճենահանվում էր յուսանկարից և հրատարակության մեջ տեղադրվում բրնագրի վերծանության կողքին՝ դյուրին դարձնելու համար վերջինիս ընկալումը և ստուգումը:

Նորագույն հրատարակություններում իրրև անհրաժեշտ պայման վերծանություններին պետք է կցվեին բնագրերի հստակ լուսանկարները և ըստ ամենայնի լիակատար մատենագիտությունը,



կարևոր տարրն իր ցումների բնությամբ, անհասկանալի կամ կասկածելի տառաշարերի, նոր տերմինների ու հասկացությունների, տեղանունների և անձնանունների հնարավոր սպառիչ վերլուծությամբ:

Այս գիտական սկզբունքների առավել հմտալից կիրառությունը դառնում ենք ամենից առաջ հայ նյութական մշակույթի և արվեստի պատմության գիտակ Գ. Հովսեփյանի պատմագիտական, արվեստագիտական այն աշխատություններում, որոնց հիմնական ատաղձն ու աղբյուրները հայերեն վիճագրերն ու ձեռագիր մատյաններն են, ըստ որում, հեղինակը առկոչվող արձանագրությունները մեջ է բերում մեծ մասամբ սեփական, ըստ ամենայնի անխոցելի ընդօրինակություններով, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ բնագրերը մինչ այդ բանիցս հրատարակվել են: Այս տեսակետից հատկապես նշանակալից են Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ» եռահատոր հմտալից ուսումնասիրությունը, որի Գ հատորում ղետեղված են նախորդ հատորներում օգտագործված վիճագրերի ամբողջական և մանրամասն վերծանություններն ու տարրն իր ցումները, «նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» շարքը (1935—1945 թթ.), «Հավուց թառի Ամենափրկիչը» (1937 թ.), «Ազիզբեկներ և նրանց շինարարությունը» (1921 թ.), «Տարսայիճ Օրբելյանի և Մինախաթունի սերունդը» (1947 թ.) արժեքավոր հետազոտությունները, որոնք նույնպես պարունակում են բազմաթիվ արձանագրություններ հեղինակի բացառիկ նույնական ընդօրինակությամբ և պատշաճ հրատարակությամբ: Հայատառ արձանագրությունների և ձեռագրերի տառաձևերի հնագրական առանձնահատկությունների ուսումնասիրության լուրջ փորձ է Գ. Հովսեփյանի 1913 թ. հրատարակած «Քարտեզ հայ հնագրություն» ժողովածուն, որտեղ առաջին անգամ լուսանկարներով ճշգրտվում են հատկապես հնագույն (է—ժ դդ.) մի շարք կարեւոր վիճագրերի ընթերցումները:

Նույն սկզբունքների կիրառմամբ բանասեր Կ. Բամաշյանը Փարիզի «Revue de l'Orient chretien» հանդեսում 1920—1930 թթ. հրատարակում է Անիի, Բագնայրի և Մարմաշենի արձանագրությունների լիակատար թողովածուները՝ սեփական, նախորդներից շահեկանորեն տարբերվող վերծանություններով, բնագրերի ֆրանսերեն թարգմանությամբ, մանրամասն բացատրականներով, և օժանդակ, տեղեկատու այլ հավելվածներով:



Մեր օրերում վիճական արձանագրությունների հավաքման, վերձանման և հրատարակության գործը հաջողությամբ և ավելի լայն ծավալով շարունակել են Ն. Մառի և Հ. Օրբելու արձանագրող աշակերտներ Կ. Ղաֆաղարյանը և Ս. Բարխուդարյանը, որոնց գիտական անխոնջ ջանքերով հազարավոր վիճական բնագրեր առաջին անգամ կամ ճշգրտված վերձանություններով հայտնի դարձան բանասիրությանը:

Մեր ուսումնասիրության համար առանձնապես կարևոր են պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի կազմած ժողովածուները, որոնցում տեղավորված են միջնադարյան Հայաստանի նշանավոր վանական կենտրոններ Հովհաննավանքի, Սանահնի և Հաղբատի վանքերի բուլբոլ արձանագրությունները՝ ստույգ վերձանություններով և օժանդակ, լուսաբանող բաղմամբով նյութերով:

Հմուտ վիճագրագետ Ս. Բարխուդարյանը հրատարակ է հանել «Գրվան հայ վիճագրության» բաղմահատորյակի երկու պրակները, որոնք բովանդակում են Ջանգեղուրի և Վայոց ձորի հուշարձանների արձանագրությունները՝ բացարձակ նույնական ընդօրինակություններով, լուսանկար և զծագիր արտադատակերներով և բնագրերի վերլուծություններով:

Հրատարակության ընթացքի մեջ են Ս. Բարխուդարյանի կազմած «Գրվանի» հերթական պրակները, որոնց ավարտումով հայագիտությունը կստանա հայերեն վիճական արձանագրությունների լիակատար հավաքածուն՝ Corpus-ը՝ միանգամայն վստահելի, նույնական և ստուգելի ընդօրինակություններով, մանրամասն վերլուծություններով և համապատասխան լուսաբանող կամ տեղեկատու հավելվածներով:

Սակայն վավերական, նույնական և ստուգելի վերձանություններով կներկայացվեն միայն այն բնագրերը, որոնք մատչելի են ընդօրինակման կամ լուսանկարչական սեկուման համար, ինչ մընում է իսպառ կամ մասամբ եղծված, բայքայված, անհետացած կամ ուսումնասիրության համար անմատչելի արձանագրություններին, ապա սրանց համար ստիպված ենք հիմք ընդունել նախկին վերձանությունները, որքան էլ ոչ իրական, ազավաղված արտագրություններով հայտնի լինեն նրանք: Այս կարգի բնագրերի մեջ մեծ թիվ են կազմում մասնավորապես Արևմտյան Հայաստանի կանգուն կամ կիսավեր հուշարձանների բաղմամբով արձանագրությունները, որոնք առայժմ անմատչելի են նոր հետազոտություն-



ների համար և բուրբուլին անծանոթ են գիտութեանը կամ հայտնի են հատուկներ, ոչ կատարյալ արտադրութեաններով:

Իսկ ինչպիսի՞ն է մինչև այժմ վերծանված ու հրատարակված վիճակահան արձանագրութեանների լեզվաբանական հետազոտութեանների վիճակը կամ ի՞նչ է արված այդ բնագրերի հնչյունական, լեզվա-քերականական օրինաչափութեանների ուսումնասիրութեան ուղղութեամբ:

Հարկ է նշել, որ հայ լեզվաբանական միտքը բանասիրութեանը հայտնի վիճակահան բնագրերի քննական հետազոտութեան բրնագավառում զգալի շափով ետ է մնում հայագիտութեան մյուս ճյուղերից: Մինչդեռ վիճարձանագրութեաններում ավանդված սոցիալ-տնտեսական, առևտրական, հարկային-պարհակային և աշխարհիկ կյանքի ու կենցաղի հասկացութեանները, տերմինները կամ պարզապես զրաբարին կամ միջին հայերենին անծանոթ բառերը այս կամ այն չափով հետազոտութեան առարկա են դարձել և մեկնաբանվել պատմագիտական, իրավագիտական, ազգագրական բնույթի աշխատութեաններում կամ հենց բնագրերի վերծանութեանների ընթացքում, այդ նույն միավորների կամ բովանդակ վիճագրութեան լեզվական առանձնահատկութեանները դեռևս այդպիսի ուսումնասիրութեանների չեն արժանացել և ներկայումս էլ կարո՞ւ են հենց նման քննութեանների: Մի կողմ թողնելով մեզ հասած վիճակահան բնագրերի լեզվական իրողութեանների մասին առանձին ուսումնասիրութեանների կամ հոդվածների բացը, հայերենագիտութեանը դեռևս չի պարզել վիճագրերի լեզվի տարբեր կողմերին վերաբերող մի շարք էական, վիճելի հարցեր, որ տասնամյակներ առաջ նրա լուծմանն են ներկայացրել վերծանող վիճագրագետները կամ հնագետ-պատմաբանները: Միայն երկու օրինակ այդպիսի հարցերից. Տեկորի տաճարի հայերեն հնագույն և բոլոր տեսակետներից շատ կարևոր շինարարական արձանագրութեան մեջ հստակ կարդացվող հիմնաբեկքա բայաձևը ն. Մառին հիմք է տվել կասկածի տակ առնելու բնագրի Ծ դարում փորագրվելու փաստը<sup>42</sup>, քանի որ, ըստ հեղինակի, տվյալ բայաձևի գոյութեանն այդ դարում անհավանական է և ժամանակավրեպ, ըստ այդմ ժամանակի դասական զրաբարում սպասելի էր՝ հիմն արկանել ա-

<sup>42</sup> Մառը անտես է արել զրաբարի և առհասարակ հայերենի այն օրենքը, ըստ որի երբ բայը բարդվում է, փոխում է իր խոնարհումը. արկանելմ-արկի. բայց հիմնաբեկմ-հիմնաբեկցի, ձայնաբեկմ-ձայնաբեկցի: Այս օրենքը կենդանի էր հինգերորդ դարում, կենդանի է և այժմ (ժան. խմբ.):



նորոշ գերբայից՝ հիմն արկաւ տեղիս, այսինքն ոչ թե հիմնարկեցաւ, այլ՝ հիմն արկաւ: Նույն հիմնարկեցաւ և մի քանի այլ ոչ կանոնաւոր գրաբար համարված ձևերի (հայիոց = հայոց < հայոց, զուգակրցի < զուգակցի և այլն) պատճառով Մառը կասկածելի է համարում նաև Արուճի տաճարի կառուցողական արձանագրութեան փորագրման ժամանակը, որ մատենագրական արժանահավատ տվյալների հիմամբ թվագրում է 666—668 թթ.: Ելնելով ն. Մառի որդեգրած այն վարկածից, ըստ որի «հայերեն հնագույն բնագրերում լեզվական անհետողականությունները (դասական գրաբարից կատարված շեղումները) անհանդուրժելի են»<sup>43</sup>, նրա աշակերտները, հատկապես Հ. Օրբելին հայատառ նախնազույն (Ձ—Թ դդ.) արձանագրություններում նկատվող ամեն մի ուղղագրական շեղում, գրաբարին այս կամ այն չափով անհարազատ կադմոսթյուն կամ խոսակցական լեզվից եկող ներթափանցում անհարիր են համարել հաճախ նաև տիրակալների զահակալութեան տարիներով ստույգ թվագրված բնագրերին, դրանք համարելով նախնական բնօրինակներից կամ ձեռագիր վավերաթղթերից շատ ավելի ուշ ժամանակներում կատարված արտագրություններ, թեև բոլոր այսպիսի դեպքերում շինությունների կառուցման ժամանակը որևէ կասկած չի հարուցել և համապատասխանել է պահպանված բնագրերում նշված տարեթվերին:

Այսպես է, օրինակ, Հռիփսիմեի տաճարի շինարարական արձանագրության պարագան. Կոմիտաս կաթողիկոսի անվամբ այս բնագիրը, որը պետք է փորագրված լիներ տաճարի կառուցումն ավարտելուց հետո (618 թ.) և մինչև կառուցողի մահը՝ 628 թ., Հ. Օրբելին վերագրում է Ժ—ԺԱ դդ. այն հիմնական պատճառաբանությամբ, թե բնագրում հիշատակված եկեղեցապան, Հռիփսիմեի<sup>44</sup> ձևերը անհարիր են է դարին և ավելի ուշ շրջանի բարբառային արտասանության արդյունք, քանի որ դասական գրաբարում դրանց փոխարեն սպասելի էր՝ եկեղեցեպան, Հռիփսիմեի<sup>45</sup>:

<sup>43</sup> Н. Марр, К датировке ктиторовой надписи Тегорского храма, ХВ, 1914, т. III, вып. I, стр. 57—58, 4. Կոստանյանց. Վիճական տարեգիր, էջ IX—X:

<sup>44</sup> Արձանագրությունների ուղղագրությունը հիմք ընդունելով չի կարելի ըստույգ թվականները կասկածի տակ առնել: Կասկածողները ըստ երևույթին չեն իմացել, որ ե-ն ավելի հին է, քան է-ն (ժան. խմբ.):

<sup>45</sup> Н. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 405—406.



Տեկորի, Արուճի և Հոփսիմի տաճարների շինարարական արձանագրությունների լեզվագիտական հետազոտությունը կարող էր պարզել, թե դրանցում փորագրված հիշյալ ձևերը ինչ շափով են անհանդուրժելի և ժամանակավրեպ Զ—է դարերի դրական հայերենին ու տեղական խոսվածքներին, որոնց համադրությամբ շարագրվում էին միջնադարի վիճական արձանագրությունները: Սակայն այս կարևոր հարցը, որ առաջադրվել է ավելի քան կես դար առաջ, դեռևս քննության առարկա չի դարձել և չի ստացել իր պատասխանը:

Ն. Մառը և Հ. Օրբելին աշխատում էին անթվական վիճական արձանագրությունների փորագրման ժամանակը հավաստիորեն որոշել բնագրերի հնագրական և լեզվա-քերականական հատկությունների համակողմանի քննությամբ, և հնագույն ոչ ստույգ թվագրված կամ անթվական բնագրերի նկատմամբ նրանց կակածամտությունը պայմանավորված էր ավելի շատ ճշմարտությանը հասու լինելու նրանց ձգտումով, ինչպես նաև հայ արձանագրագիտության և հնագրության խանձարուրային վիճակով:

Հետագա ուսումնասիրողները, հատկապես հայ դասական ճարտարապետության որոշ պատմաբաններ, խիստ ծայրահեղություն հասցնելով Մառի և Օրբելու «լեզվական անհետևողականությունների» այդ վարկածը, հնագույն վիճական բնագրերի լեզվում դասական կամ ոչ դասական գրաբարից կատարված ամեն մի խոտորում և նորաբանություն սովորաբար վերագրում են միայն ուշ ժամանակներին, երբեմն այդպիսի պատճառարանությամբ և ոչ առանց միտումնավորության մի քանի դար առաջ բերելով այդ բնագրերի փորագրման, ուրեմն և ճարտարապետական կոթողների կառուցման ժամանակը, նույնիսկ այն դեպքերում, երբ հայ մատենագրական աղբյուրների ստույգ տեղեկություններով կամ այլ միջոցներով հաստատվում է վիճագրերում հիշատակված պատմական անձերի և իրադարձությունների համապատասխանությունը հենց այն ժամանակներին, որ նշված է տվյալ վիճագրերում:

Վիճական բնագրերի լեզվաբանական ուսումնասիրության առաջին օրինակը դարձյալ տալիս է Ա. Այտրնյանը նույն «Քննական քերականության» նշանավոր «նախաշավիղ»-ում (1866 թ.): Իր ձևերի տակ ունենալով Ստ. Օրբելյանի, Զաքարիա Սարկավաղի պատմագրական երկերում և Մ. Բժշկյանի, Հ. Շահխաթունյանցի տեղագրական աշխատություններում ամփոփված միայն մի



քանի հարյուր բնագրերի ոչ այնքան նույնական ընդօրինակու-  
 ֆյուններ. Այսընչանք գրանցում ավանդված լեզվա-քերականա-  
 կան իրողությունները իրավամբ դիտում է իբրև ժամանակի «կեր-  
 պավորյալ աշխարհաբար լեզվի» կամ «նախնայաց սամկորենի» ար-  
 տահայտություններ, որոնք զգալի շափով տարբերվում են վկայված  
 ժամանակաշրջանի գրական հայերենի օրինաչափություններից: Մի-  
 ջին դարերի հայերեն վիճական արձանագրությունները կամ իբ-  
 արտահայտությամբ՝ «միջին և ստորին դարուց քարեղեն մատե-  
 նագարանները» համարելով հայերենի, հատկապես հայ բարբառ-  
 ների խոսակցական լեզվի պատմության ավելի արժանահավաս-  
 աղըսուրներ, քան գրարար մատենագրության մեջ ավանդված ա-  
 ոսանձին վկայություններն են, Այսընչանք եղած սակավաթիվ բը-  
 նագրերից հմտորեն առանձնացնում և համակարգում է այն նրե-  
 վույթները, որոնք անհարազատ են գրական հայերենին և արտա-  
 ցում են ժամանակի կենդանի խոսվածքների կամ գավառա-  
 կանների նկարագիրը: Աստիսով, հայերենագիտության մեջ առա-  
 ջին անդամ Ա. Այսընչանք ընդհանուր դիպուկ գիտողություննե-  
 րով բնութագրում և արժեքավորում է գրարարից տարբերվող ձե-  
 վերը, այն նոր կամ «ժողովրդյան լեզվին այն մեկ երեսը», որ  
 դրոշմված է հնամենի քարերի վրա և շին հանդիպում գրարարի  
 հուշարձաններում: Ըստ հեղինակի այդ նոր ձևերն են. ա. Գրա-  
 բար մատենագրության մեջ չվկայված նոր բառեր կամ նոր ի-  
 մասաներ՝ համեմաղ, խոստակղար, շար (=հարկ), սեերես, վաղն  
 (=վաղի), հայրենիք (=կալվածք, սեփականություն), ջրբափ  
 (=ջրվեժ), ձեռնատուր (=հարկահան պաշտոնյա) և այլն, բ. Գրա-  
 բարյան բառերի նոր ձևեր. ջաղաց (=ջրաղացք), էգի (<այգի),  
 կարմունջ (<կամուրջ), մին (=մի), հեռացնել (=հեռացուցա-  
 նել), գ. Անունների հոգնակիների և հոլովման տարբերություններ  
 և գուգադիր ձևեր. մարդէն, ջրէղ, յիւ հաւատէն, բերանէն, վնոի,  
 հանապարհովն — փոխանակ՝ մարդոյն, ջրոյղ, հաւատոյ, բերա-  
 նոյ, վնոոյ, հանապարհաւ, կղպականի (=կուղպակք), ջաղացա-  
 նի (=ջրաղացք), գետերէն և նաւերէն (=ի գետոց և ի նաւոց)  
 և այլն գ. նախդիրների գեղջում. հազարէն հազար նալար, նոսա  
 վերայ, շէնին առաջել (=ի շենին), ե. Բայերի խոնարհման ոչ  
 գրարար, բարբառային ձևեր. երես (=էտ), դրեալ էր (=եղեալ),  
 շիշխէ ոք հեռացնել (=մի ոք իշխեսցէ հեռացուցանել), սեւերես  
 լինի (=լիցի) և այլն: գ. Համաձայնության և խնդրառության նոր  
 եղանակներ. երկ, ոք այս գոյս խափանել ջանա (=գայս գիրս),



Երէ ոք իմ աներոյս յափշտակէ (= գիմ տունն), Է. Նոր, գրական հայերենին անժանոթ փոխառյալ բառեր. հաւրամ, հալալ, ապիգար, փեղամբար, նալար, կուզպակ և այլն<sup>46</sup>:

Մեծ հայագետի այս ընդհանուր դիտողությունները, իհարկե, շեն կարող ամբողջական պատկերացում տալ միջին դարերի վիճական բնագրերի լեզվա-բերականական, մանավանդ հնչյունական օրինաչափությունների մասին, ինչպես այդ նկատում ենք հնագույն գրական հուշարձաններում «նախնյաց ոսակորենի» արտահայտությունների բնության ժամանակ, քանի որ Այտրնյանի հետազոտության ենթակա վիճագրական նյութը անհամեմատ աղքատ է եղել և ներկայացված մեծ մասամբ ոչ նույնական, աղավաղված ընդօրինակություններով, որ, իհարկե, չէր կարող հավասարի պատկերացում տալ ավանդված լեզվի մասին և մի շարք դեպքերում հիմք է ծառայել անիրական և թյուր եզրահանգումներին: Օրինակ, Բջնիի Պէ (1358) թ. մեզ արդեն ծանոթ առաջին աշխարհարար արձանագրության մեջ պարզ փորագրված՝ երէց եւ շինական, ի մեր ձեռք երեւ, խլել էր. կացուցել ձեերը Այտրնյանի ձեռքի տակ եղած վերծանության մեջ ներկայացված են՝ բէց եւ շինական, ի մեր ձեռք բերաց, խլեր էր, կացուցէր ընթերցումներով, որոնք հիմք են հանդիսացել հավաստելու բերաց, բէց անիրական բառերի և լ>բ (կացուցել>կացուցեր, խլել>խլեր) հնչյունափոխության առկայությունը այդ բնագրում: Նույն ձևվով հիմք ընդունելով ընդօրինակողների՝ սոքա տուին տարէնը :Բ: ժամ նախադասության ընդդժված բառի վերջնահանգը ք-ի գրությունը, Այտրնյանը այն դիտում է իրրե ք հոդի առաջին և միակ հիշատակությունը՝ «բովանդակ հնությանց մեջ»՝ նրա առաջացումը իրավամբ հանելով բառավերջի դադանավանկում (իր բառով՝ կիսավանկ վերջում) բաղաձայնների մեջ հնչվող ք-ից<sup>47</sup>: Պարզվում է, սակայն, որ իրականում, քարի վրա ընդդժված բառը հստակ կարգացվում է ոչ թե տարենը, այլ՝ ի տարենըն (ՄՎ), որն այսպիսով արտացոլում է ոչ թե ք-հոդի առկայությունը, այլ սոսկ նրա առաջացման նախորդող ճղակը, ըստ որում, վիճագրե-

46 Ա. Այտրնյան, Քննական քերականություն..., էջ 143—145:

47 Ա. Այտրնյան, Քննական քերականություն..., էջ 168—169, Բջնիի արձանագրության հավասարի վերծանությունը տալիս է. Ե. Մուշեղյան, «Բջնիի 1358 թ. արձանագրության առթիվ», «ԳԱ Տեղեկագիր», 1956, էջ 97—100, նույն բրնագրի թարգմանությունը տե՛ս «Еще раз о надписи из селения Бджин от 1358», Աշխատություններ ԳԱ Հայաստանի պետական պատմական թանգարանի, 1959, հ. ժ. էջ 171—278:



բում տվյալ ի տարին բառի մեջ ք հոդի առաջացումը տեղի է ունենում հետևյալ ընթացքով. ի տարին > տարեն, \* տարեն :Գ: տար... , տարեն :Ա: ժամ (վերնաշեն, Գյուլումբուլաղի վանք, ԺԳ դար Գ III 97, 119), :Գ: ժամ տարեն (Մշկավանք ԺԳ ՄՎ—տարենն) :Ժ: դեհեկան տարենն..., :Բ: պատարագ..., տարենն :Բ: ժամ... տարենն :Խ: փասգ — Բարձրաբաշ ՈՂԳ ՄՎ, Մաբց ՉԳ ՄՎ, Սաղմոսավանք ԺԳ ՄՎ, Կարմրավոր ՉՉԳ ՄՎ, >տարեն -ըն, որ վերկայված է միայն Հաղարծնի վանքի վերը հիշված ԺԳ դարի բրնադրում: Այսպիսով, վիմագրերում եղած վկայություններով հասցիվ թե հնարավոր լինի հավաստել ք հոդի գոյությունը, լ > (խել > խլե) անցումը ԺԳ դարում:

Չնայած այս կարգի վրիպումներին, որոնք մեծ մասամբ պալիա են անստույգ վերձանություններից, Այսրենյանի խորամիտ դիտողությունները այսօր էլ պահպանում են իրենց գիտական նշանակությունը՝ մեզ հասած վիմական բնագրերի լեզվական օրինաչափություններն ընկալելու և արժեքավորելու համար:

Հետագա տասնամյակներում հայերենի տարբեր շրջանները և հատկապես միջին հայերենն ուսումնասիրող հայագետները մանրազնին հետազոտության ենթարկելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի դրական հուշարձանների լեզուն, գրեթե աչքաթող են արել վիմական արձանագրությունները, նրանցում ամբարված խոսակցական լեզվի կամ տեղական բարբառների բազմաթիվ տարրերը: Նույնիսկ բուն միջին հայերենին նվիրված այնպիսի մի համապարփակ մենագրության մեջ, ինչպիսին է Յ. Կարստի «Կիլիկյան միջին հայերենի պատմական քերականությունը», հայատառ վիմական բնագրերը համարյա ոչ մի արտացոլում չեն գտել ինչպես շահավենք Շիրակի ԺԳ դարի արձանագրություններից քաղված այն մի քանի օրինակները, որոնք մեջ են բերվում եւս երկրորդադարի փոփոխությունը և պարզ ձայնավորի լուսաբանելու համար<sup>48</sup>, մինչդեռ Կարստը «Պատմական քերականության» մեջ կիլիկյան միջին հայերենի իրողությունները ամենուրեք քննում է ոչ թե հայերենի մյուս շրջաններից կտրված ու մեկուսացված, այլ դասական գրաբարի, նոր բարբառների և արդի աշխարհաբարի հետ ունեցած առնչությունների ու պատմական կապի մեջ, ուստի և սպասելի էր վիմական բնագրերում ավանդված լեզվական

<sup>48</sup> J. Karst, Historische Grammatik des Kilikisch-armenischen, Strassburg, 1901, S. 71.



Երևույթների ներգրավում այդ ուսումնասիրությունների ոլորտը:

Միջին հայերենի մյուս նշանավոր գիտակ Ղ. Հովնանյանը, ինչպես տեսանք նախնյաց ոսկորների մասենագիտության վերլուծության մեջ գրական այլ հուշարձանների շարքում հիշատակում է նաև միջին դարերի վիմական բնագրերը՝ իբրև ժամանակի խոսակցական լեզվի, կենդանի խոսվածքների արժեքավոր նմուշներ, սակայն կիսակատար մնացած մենագրության հրատարակված մասում այդ բնագրերի արժեքավորումը կամ լեզվաբանական բնությունը չի հանդիպում<sup>49</sup>:

Նույնն է գրությունը նաև Հ. Աճառյանի՝ համընդհանուր հայերենի պատմությանը նվիրված ծավալուն մենագրության մեջ: Միջին հայերենի նկարագրությունը գրեթե անփոփոխ մեջ բերելով Յ. Կարսաից, հեղինակը միաժամանակ նշում է, որ կլիկյան միջին հայերենից բացի գոյություն են ունեցել միջին հայերենի այլ բարբառներ ևս, որոնց ծագման և պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն հենց վիմական արձանագրությունները, ուստի և նրանց լեզվաբանական հետազոտությունը հրատարակելով անհրաժեշտություն է հայերենագիտության համար<sup>50</sup>: Սակայն մեծ հայազեար հայերենի պատմությանը և լիակատար քերականությանը նվիրված աշխատություններում վիմական բնագրերի բնությունը չի տալիս, թեև ձևերի տակ ունեցել է հրատարակված արձանագրությունների լիակատար հավաքածուն՝ իր իսկ կազմած «Հայարձան»-ը:

Վիմական բնագրերում արտացոլված հնչյունական փոփոխությունները ալիքի բնագործակ բնույթ է պրոֆ. Ս. Ղազարյանը «Միջին հայերեն» աշխատության առաջին մասում, որն ամբողջությամբ նվիրված է միջին հայերենի հնչյունաբանությանը: Նրկարագրելով հին հայերենի ձայնավոր, բաղաձայն հնչյունների և երկբարբառների զանազան փոփոխությունները միջին հայերենի գրական հուշարձաններում, հեղինակը յուսաբանող վկայությունների շարքում երբևի՜ մեջ է բերում նաև վիմագրության փաստերը, որոնք մեծ մասամբ բաղված են հավաստի կամ ստույգի հրատարակված, վստահելի աղբյուրներից, մասնավորապես հեղինակի ձևերի տակ եղել են պրոֆ. Կ. Ղաֆազարյանի՝ Հովհաննավանքի և Սանահնի արձանագրությունների ժողովածուները և

49 Տե՛ս Ղ. Հովնանյանց, Հետազոտությունը նախնյաց ոսկորների վրա, մաս Ա, Վիեննա, 1897, էջ 27—28:

50 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 254:



2. Յրբեւու «Անիի արձանագրութիւնները» այն ժամանակ անտիպ հաւաքածուն: Պրոֆ. Ս. Ղազարյանը հատուկ չի քննում մեզ հասած վիճական բնագրերի ամբողջական հնչյունաբանութիւնը, այլ նրանցում փորագրված առանձին վկայութիւնները առկոչում է այսպես կոչված համընդհանուր միջին հայերենի հնչյունափոխական իրողութիւնները պարզարանելու համար, ըստ այսմ, հեղինակը վիճագրերում ավանդված հնչյունական համակարգերը և առանձին փաստերը նույնացնում է միջին հայերենի հետ, որ կարող է այնքան էլ հիմնավոր չլինել և պահանջում է ավելի մանրամասն քննութիւն: Իրեւ օրինակ առնենք պայթական և պայթաշրփական բաղաձայնների համակարգի խնդիրը. պրոֆ. Ս. Ղազարյանը ընդհանուր միջին հայերենին, ուրեմն և վիճական բնագրերին հատուկ է համարում երկաստիճան խլաղուրկ բաղաձայնական համակարգ. հիմք ընդունելով Կիլիկիայի գրական հայերենի և նրա հիմքում ընկած կիլիկյան խմբի բարբառների իրողութիւնները, մինչդեռ պարզվում է, որ միջին հայերենը, հատկապես նրա արևելյան բարբառները ունեցել են նաև բաղաձայնական այլ համակարգեր՝ եռաստիճան, երկաստիճան խլաղուրկ, եռաստիճան տեղաշարժ-տեղափոխութեամբ և այլն, իսկ ժ—ժԴ դարի վիճական բնագրերում, ինչպես և արևելահայ մի քանի խոսվածքներում, ի տարբերութիւն կիլիկյան գրական հայերենի երկաստիճան խլաղուրկ համակարգի, հիմնականում արձանագրվում է եռաստիճան անտեղաշարժ համակարգ<sup>51</sup>:

Հայերենի պատմական հնչյունափոխութեան առանձին երկվայթների ձևավորման ժամանակագրութիւնը հնագույն վիճական արձանագրութիւնների վկայութիւններով որոշելու փորձ է Ա. Աբրահամյանի արժեքավոր ուսումնասիրութիւնը այդ երկվայթների ժամանակաշրջանի մասին: Այստեղ հեղինակը հայերենագիտութեան մեջ առաջին անգամ հին վիճագրերում փորագրված ձևերի օգնութեամբ հմտորեն որոշում է հայերենի պատմութեան համար կարևոր նշանակութիւն ունեցող մի շարք հնչյունական փոփոխութիւնների, այդ թվում որոշակի դիրքերում  $\epsilon = \text{վ}$  նույնացման,  $\omega > \text{o}$  (ո),  $\omega > \text{վ}$  անցման և բառավերջում  $\text{u}$ ,  $\text{w}$  ձայնավորներից հետո  $\gamma$ -ի անկման իրեն կաշուն օրինաշարժութեան ձևա-

51 Ա. Ղազարյան, Միջին հայերեն, Երևան, 1960, էջ 167, 170, 2. Մուրադյան, Միջին հայերենի բաղաձայնական համակարգի հարցի շուրջը, ՊՐԶ, 1969, № 2, էջ 95, 98—99:



վորման կամ համենայն դեպս նրանց նախնազույն հիշատակությունների ժամանակաշրջանը<sup>52</sup>:

Թեև հեղինակը իր այս հետազոտության մեջ օգտագործում է հնագույն ոչ բոլոր վիճական բնագրերը և ոչ այնքան ստույգ վերծանություններով (օրինակ Կեչաուխի և Վանեվանի արձանագրությունների փաստերը), հիշյալ հնչյունափոխական երևույթների առաջացման ժամանակաշրջանի մասին նրա եզրահանգումները պահպանում են իրենց գիտական հավաստիությունը և հաստատվում նոր վկայություններով:

Հայագետների շրջանում ավելի մեծ ուշադրության է արժանացել վիճական բնագրերի բառամթերքի ուսումնասիրությունը, այդ բնագրերում ավանդված բազմաթիվ նոր բառերի, տերմինների, հասկացությունների, տեղանունների կամ անձնանունների վերականգնման, ստուգաբանության և համակողմանի մեկնաբանության հարցերը: Եվ դա հասկանալի է, վիճական արձանագրությունների ամեն բնույթի հետազոտությունների համար առաջին հերթին անհրաժեշտ է հղել հասու լինել առանձին բառերի ու տերմինների կամ ամբողջ բնագրի բովանդակության բացահայտմանը: Հավանաբար այդ է պատճառը, որ վիճական արձանագրությունների բառամթերքի քննությամբ և ստուգաբանությամբ ավելի հաճախ զբաղվել են ոչ այնքան բառարանագիրներն ու լեզվաբանները կամ հենց բնագրերի վերծանողները, որքան այլ հարակից գիտնականներ՝ պատմաբաններ, իրավագետներ, հնագետներ, արվեստագետներ, տնտեսագետներ և այլն:

Այս կարգի աշխատություններից մեր ուսումնասիրության համար հատկապես արժեքավոր են վիճագրերի երկլեզվյան ժողովածուները, որոնցում հեղինակները վիճական բնագրերը թարգմանում են մի այլ լեզվի՝ հիմնականում ռուսերենի կամ ֆրանսերենի, և ըստ այդմ, պահանջի թելադրանքով ստուգաբանում կամ մեկնաբանում այս կամ այն անձանոթ բառը կամ տերմինը: Դրանցից արժանի են հիշատակության հայագետ Մ. Բրոսեի *Les ruines d'Ani* (1860), *Voyage archeologique en Transcaucasie* և մյուս ուսումնասիրությունները, որոնցում հեղինակը մեծ հմտությամբ առաջին անգամ թարգմանում, ստուգաբանում

52 Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի մասին, ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 4, էջ 72—78:



և մեկնում է Անիի, Մարմաշենի, Հառիճի, Հովհաննավանքի, Հաղբատի և Սանահնի առավել կարևոր վիմագրերում վկայված բազմաթիվ բառեր ու տերմիններ, այդ վիմագրերի օգնությամբ ճշգրտելով Հայաստանի պատմության ժամանակագրության այլևայլ հարցեր: Բրոսեն շի տեսել իր քննած արձանագրությունները և նրանց մասին դատում է նախորդների ոչ այնքան հաջող ընդօրինակություններով (Հ. Շահխաթունյանց, Ս. Ջալալյանց, Մ. Բրժժչկյան, Ա. Մխիթարյան և այլն) և շնայած դրան, մի շարք դեպքերում դատողության ուժով շատ էական շակումներ է կատարում այդ բնագրերի առանձին բառերի ընթերցման և մեկնարանության մեջ: Ցայտուն օրինակ կարող են ծառայել Բջնիի Պէ (1358) Թ. և Հովհաննավանքի անթվական (Ամսաջանի) արձանագրությունների նրա հմտալից վերլուծությունները, որոնք մինչև օրս էլ պահպանում են փրկնց գիտական արժեքը<sup>53</sup>:

Ավելի նշանակալից է Մ. էմինի կազմած ուսերեն ժողովածուն՝ Կարսի, Անիի և մերձակայքի առավել արժեքավոր և ամբողջական շուրջ 200 արձանագրություններով, որոնք քաղված են Ն. Սարգիսյանի ըստ ամենայնի նույնական վերծանություններից<sup>54</sup>: Մ. էմինը բնագրերը թարգմանելիս մեծ մասամբ ստույգ է արտահայտում նրանց իմաստները, հաճախ առաջին անգամ բացատրելով մատենագրության մեջ շվկայված և անծանոթ բառերն ու հասկացությունները, սակայն մի շարք դեպքերում նորահայտ տերմիններն ու փոխառյալ բառերը թարգմանելիս կա՛մ բոլորովին դանց է առնում դրանք, կա՛մ առաջարկում անճիշտ մեկնություններ: Թրինակ, յեա աեւման տարարիս..., գոր տարարովս խուպանեալ էր..., կապակցությունները չեն թարգմանված, հավանաբար տարար + ով + ս (=բարարովս = բարարների օտաբ. ժամանակ) բառը անհասկանալի համարելով (էջ 41):

էջ 14, 17 բաց է թողնված զվեցկէ կոո (=արուրի կոո), ազաաի խալաէ (=խալայ = հարկի տեսակ), խասիւնչու (=տերունի) կապակցությունների մեջ նույնպես անբացատրելի նկատելով ընդգրծված բառերը:

էջ 7 դոնագիր-ը բացատրվում է подворная подать = ծխա-

<sup>53</sup> *St'a M. Brosset*, Rappports sur un voyage archeologique dans la Georgie et dans l'Arménie, st. Peter., 1849, p. 103—115.

<sup>54</sup> *H. Эмин*, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, стр. 1—88.



հարկ, երգահարկ, այնինչ դոճազիրը բաղաբը մուսք գործող ապ-  
րանքներից անմիտ աճցահարկ է:

էջ 14, ամեն ցաղ բաժ-ը հասկացվել է носильщик хвороста,  
հավանաբար ցաղ <ցեղ = տեսակ բառը ընկալելով՝ ցախ, մինչդեռ  
նշանակում է ամեն տեսակի բաժ:

էջ 43, Հագրալեկն գրավենց ի Գարեգոյնէն թարգմանված է  
Хазрбек выкунил у Гарегина, այնինչ գրառակաճեւ = վաշխով  
տրված դրամի դիմաց իրը գրավ վերցնել և ոչ թե փրկագնել:

Ռախս — արար. բառը զիտաւագ նշանակութեամբ բանիցս  
բացատրվում է блюстителем порядка, որ այնքան էլ ստույգ չէ:

էջ 35, 79, Ջապուռիշի և ջրահին բաժն թարգմանվել է де-  
ревни Ануриш и Джрсаи, ըստ այդմ ապուռ իշի (= իշահարկ)  
և ջրահին հարկերը դիտված են գյուղանուներ (էջ 51):

էջ 67, զԱղի աղբերն պահեզն հասկացվել է с местом для  
склада соль, այնինչ նկատի ունի Աղի աղբյուր կոչվող բանջա-  
րանոցը կամ այգին և այլն:

1916 թ. հրատարակ է գալիս Մոսկվայի հնագիտական ըն-  
կերության «նյութեր Կովկասի հնագիտության» շարքի հերթա-  
կան 13-րդ սովարածավալ, ճոխ ձևավորված հատորը, որտեղ  
ամփոփված են Գառնիի, մերձակայրի և վայոց ձորի մի շարք  
հուշարձանների վիճական արձանագրությունները՝ ուսանելն  
թարգմանութեամբ, լուսանկարներով, գծագիր պատկերներով և  
հանդամանալի բացատրություններով: Բնագրերի ընդօրինակու-  
թյունները, պատճենումները ու լուսանկարումները տեղում 1908—  
1909 թթ. կատարել են ուսա հնագետ Վ. Միսոնը և նկարիչ Տա-  
րազրոսը, իսկ վերձանությունները՝ պատճենումների ու լուսանը-  
կարների վրայից և ուսանելն թարգմանությունը՝ կազարյան ճե-  
մարանի դասախոս Քր. Քուչուկ-Հովհաննիսյանը<sup>55</sup>: Այս պարագան  
զգալի շափով ազդել է ժողովածուում տեղ գտած արձանագրու-  
թյունների վերձանության և թարգմանության որակի վրա, ըստ  
որում, դրանք մեծ մասամբ հիշեցնում են ժՔ դարասկզբի տե-  
ղագրական երկերի անհաջող վերձանությունները՝ ոչ լրիվություն,  
ազավաղումներ, սխալ ընկալված բառեր, ժամանակակից ուղ-  
ղագրության կիրառում և այլն. թերություններ, որոնք ոչ մի շա-

<sup>55</sup> Материалы по археологии Кавказа. М., т. XIII. Կամուսի Գ.  
Ուրարտայի և Քր. Քուչուկ-Հովհաննիսյանի խմբագրութեամբ, Գ. Հովսեփյան,  
Հավոց թատի Ամենափրկիչը... էջ 16, Ս. Թախտաղաչյան, Գիգան, սյր. 3, էջ 52,  
77, 156:



փով շքարելավելով նույն բնագրերի նախորդ ընդօրինակությունները, մեծապես իջեցնում են հրատարակչական և ձևավորման բարձր արժանիքներով օժտված ժողովածուի գիտական նշանակությունը մանավանդ բնագրերի լեզվարանական հետազոտությունների համար: Իրրև օրինակ կարելի է նշել մի քանի ակընհայտ վրիպումներ այդ ժողովածուից. ես՝ Գրիգոր կառեպանսու : ես: դահեկան: Ընդգծվածը դրված է մեծատառով և գիտված սղզանուն, մինչդեռ կառեպան այստեղ նշանակում է այգեպան (այլ բնագրերում՝ բյուզանդական պաշտոնյա, թեմի կառավարիչ, էջ 41): «Ես՝ Աւետիս, Մխիթար ուղիք Խոցաղեղա...», վերծանվել է «... ուղի Քիոցաղեղա (էջ 105): «Ես՝ Հասիկ շինեցի գասարանոցն վերծանված է. ես՝ Հասմիկ շինեցի ամարանոցն (էջ 129), այսինքն ձիրահաներ հասկացվել է ամառանոց: «Չասարանոցիս շաւէքն ի հիւսնէն գնեցի, վերծանվել է՝ զսրանոցի շաւէքն... և ընդգծվածը թարգմանվել՝ четверть мельницы, այստեղ էլ ձիրահաներ ջրաղաց է ներկայացվել (էջ 138): «Վաղցանոյ ոռոց արուն...» վերծանվել է. Վաղցանոյ ոռոց արուն..., և թարգմանվել՝ Вагцанские угодья виноградных лоз..., այսինքն, Վաղիցանոյ ծայրի, վերջի արար հասկացվել է՝ խաղողի վազեր (էջ 82) և այլն:

Վիճական արձանագրություններում վկայված լեզվա-քերականական նորարանությունների և անձանոթ բառերի բացատրությունները տալիս է բանասեր Կ. Բասմաջյանը՝ Անիի, Բաղնայրի և Մարմաշենի բոլոր արձանագրությունների ֆրանսերեն ժողովածուի բառարանում և հանդամանալի վերլուծություններում, որ հրատարակված է «Revue de l'Orient chretien» հանդեսի 1920—1930 թթ. համարներում: Հեղինակը իր կատարած վերծանություններից առանձնացնում, արժեքավորում և ֆրանսերեն մեկնարանում է հիշյալ բնագրերում գրաբարից կատարված բոլոր տեսակի հնչյունական, քերականական, ձևաբանական շեղումները, անձանոթ տերմիններն ու բառերը, հատուկ անունները կամ կասկածելի տառաշարքերը, որի շնորհիվ հատկապես Անիի և Բաղնայրի շատ կարևոր արձանագրություններ ներկայանում են ոչ միայն ըստ ամենայնի հավաստի, երբեմն նաև ստուգելի վերծանություններով, որ կարելի էր գտնել նաև Ն. Սարգիսյանի և Հ. Օրբելու հավաքածուներում, այլև բնագրերի լեզվարանական անհրաժեշտ քննություններով, որ դժվար է գտնել նույնիսկ նորագույն հրատարակություններում: Կ. Բասմաջյանի այս առումով



աննախագիս ժողովածուի երկկողմյան բառարանում և բնագրերին կցված հանգամանալի ծանոթագրություններում կարելի է գտնել բազմաթիվ փոխառյալ կամ անծանոթ բառերի, հնչյունական կամ քերականական նոր, գրաբարից տարբերվող իրողությունների այս կամ այն շափով սպառիչ բացատրությունները, որոնցից շատերը հայագիտության մեջ ճանաչում են ստացել հեղինակի այս աշխատության շնորհիվ (գրավեճ, համբելե, մուխրասիբ, շահապ, զուկակ, Սառանփողոց, դոնագիր և այլն)<sup>56</sup>: Սակայն միշտ չէ, որ Կ. Բասմաջյանը հասու է լինում բացատրվող վիճաբերում վկայված միավորների իրական իմաստներին, մի շարք դեպքերում նրա բացատրությունները հնուս են իրականից, որ մեծ մասամբ պայմանավորված էր հայագիտության զարգացման ընդհանուր մակարդակով, երբեմն նաև հեղինակի անուշադրությամբ: Այսպես, օրինակ, արֆայուն, արֆաուն բացատրվում archonte (№ 70, 112), մինչդեռ գեոեա 1905 թ. ն. Մառը համոզիչ պարզել էր արֆաուն-ը, որ բրիտանյանների մոնղոլական անվանումն է: Գահեկ < գահեակ ընկալվել է իբրև գայեակ = gouvernante (№ 74), այնինչ առկա է գահեակ = տասանորդ (պրս. dah yak = տասից մեկը): Ընձէ, բնձելոյն բացատրվում են՝ բնձայ, բնձայ, բնձայելոյն (№ 23, 181), իրականում վկայված է՝ հնձէ, հնձելոյն (ծախք զբնձելոյն = հնձելու ծախք — Գ I 37): Վեցկէ կոռ թարգմանված է վեց կոռ (№ 23), այնինչ խոսքը արուի (= վեցկի) կոռի մասին է: Բյուզանդական իպատոս (իպատ) գինվորական տիպոսը թարգմանված է արգիական հիպատոս = consul, որ անհարիր է վկայված իրողությանը և ավելի ստույգ բացատրված Վ. Բենեշևիչի և Ի. Ֆասի այդ արձանագրություններին նվիրված ուսումնասիրություններում և այլն<sup>57</sup>:

Չնայած այս կարգի մասնակի անճշտություններին Կ. Բասմաջյանի ժողովածուն, ինչպես նաև «Բանասեր»-ի էջերում նրա հրատարակած մյուս վերծանությունները աչքի են ընկնում բա-

<sup>56</sup> К. Basmadjian, Les inscriptions armeniennes d'Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931, տվյալ բառերի տակ:

<sup>57</sup> Сува В. Бенешевич, Три Анийские надписи..., Петербург, 1921, стр. 26—28, И. Фаас, С. А. Егузаров, Исследование по истории арм. права публичного и частного, вып. I, по надписям г. Ани и Ширака, Киев, 1919, գրքի գրախոսությունը, տպագրված «Записки коллегии востоковедов при Азиатском Музее Российской Академии наук», Л., 1925, стр. 485—486.



ցարձակ նույնական ընդօրինակություններով և ըստ ամենայնի մանրամասն վերլուծություններով, իսկ բնագրերի լեզվագիտական քննության տեսակետից մնում են չգերազանցված:

Վիմական բնագրերում ավանդված բառամթերքի հատկապես միայն վիմագրերից հայտնի բառերի ու տերմինների և անձնանունների ստուգաբանությունները գտնում ենք հայերենի բառարաններում, դրանցից մեր հետազոտության համար առանձնապես օգտակար են Հ. Աճառյանի Արմ. և Անձնանունների բառարանները, Յ. Կարստի Wörterbuch des Mittelarmenischen և Ն. Բյուզանդացու անավարտ «Բառգիրք ստորին հայերենի» անտիպ բառարանները, որոնց ձեռագիրը և մանրաժապավենը պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում<sup>58</sup>: Այս բառարաններում հեղինակները առանձին բառահոգվածների տակ հրատարակված արձանագրություններից բազում են բացատրվող բառերի վկայությունները և տալիս նրանց ստուգաբանությունն ու բացատրությունը: Սակայն հիշյալ բառարանները վիմագրերի նոր բառամթերքի ընդգրկման ծավալով դժվար է լիակատար համարել, քանի որ դրանցում բացատրվում են նույնիսկ հրատարակի վրա եղած արձանագրությունների անհասկանալի բառերի ու տերմինների մի մասը միայն, այն էլ հաճախ ներկայացված ազավազված ոչ իրական ընթերցումներով, որ զգալի շարժում նվազեցնում է այդ ստուգաբանությունների հավաստիությունը: Նույնիսկ Յ. Կարստի անտիպ բառարանում, որ իր պարունակած միջին հայերենի բառամթերքի քանակով ամենից ամբողջականն է եղածների մեջ և ավարտվել է վերջին տարիներին, տեղ չեն դրել հրատարակված վիմագրերի բազմաթիվ նոր բառեր ու հասկացություններ, հարկային-պարտույթային, տնտեսական ու սոցիալական տերմիններ, որոնցից շատերը մինչև օրս էլ մնում են չբացատրված կամ անստույգ համարված բառերի շարքում:

Վիմական արձանագրություններում փորագրված անհասկանալի բառերի ու տերմինների, տեղանունների կամ անձնանուն-

<sup>58</sup> J. Karst, Wörterbuch des Mittelarmenischen historisch-etymologisch auf grund alten Sprache und unter Berücksichtigung der neuarmenischen Dialekte, հեռագրա հղումներում՝ WBM, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հայագետ Յ. Կարստի արխիվ, Ն. Բյուզանդացի, Բառգիրք, ստորին հայերենի և մատենագրությանց ժԱ—ԺԷ դարուց, անավարտ, պարունակում է Ա.—Պ գրերը, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մանրաժապավեն:



ների մեկնությունները տալիս են նաև այդ բնագրերի վերծանողները կամ գրանք իբրև աղբյուր օգտագործող մյուս հետազոտողները: Այս կարգի աշխատանքներից հատկապես արժեքավոր են նշանավոր բանասեր Թ. Ավդալբեգյանի 20-ական թվականներին գիտական հանդեսներում («Նորք», ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի Տեղեկագիր) հրատարակած անասագիտական ուսումնասիրությունները, որոնցում առաջին անգամ բացառիկ հրմտությամբ բնություն և ևնթարկվում և սոցառիչ լուսարանվում արձանագրություններում վկայված մի շարք սոցիալ-տնտեսական, հարկային ու վարչական բաներ, տերմիններ, շատ հաճախ գուգրնթացարար ճշգրտելով նրանց վերծանությունները (հաս, սակ, բած, խալայ, հակ, տամղա, վաճառիկ, նորհ, մատաղիս, դահիակ, վախմ, շահնա և այլն)<sup>59</sup>:

Իրենց վերծանած կամ հետազոտած վիմական բնագրերի լեզվա-բերականական առանձնահատկությունների մասին ուշագրավ գիտողություններ են արել հայ վիմագրության հմուտ վերծանողներ Գ. Հովսեփյանը, Կ. Ղաֆաղարյանը, Ս. Բարխուդարյանը, որոնք հրատարակվող արձանագրությունների նախկին տարբնթերցումները ճշգրտելու և հնագրական առանձնահատկությունները որոշելու վասպակցությամբ երբեմն ներկայացնում են այդ բնագրերում տեղ գտած առանձին լեզվա-բերականական, հնչյունական շեղումները, բարբառային նորարանություններն ու անծանոթ միավորները, տալով նրանց այս կամ այն չափով բնդունելի մեկնարանություններ:

Վիմագրերում ավանդված սոցիալ-տնտեսական, վարչա-կառավարչական կամ հարկային առանձին տերմինների բնությունը կարելի է գտնել նաև միջնադարյան Հայաստանի օգտամության տարբեր կողմերին նվիրված մեկնագրություններում կամ հոգվածներում, որոնք հրատարակ են կել վերջին տասնամյակներում (նկատի ունենք Հ. Մանանդյանի, Ս. Եղիաղարյանի, Խ. Սամվելյանի, Ս. Հակոբյանի, Բ. Առաքելյանի, Ս. Երեմյանի, Հր. Բարթիկյանի և ուրիշների աշխատությունները):

59 Տե՛ս Թ. Ավդալբեգյան, «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ», «Հաս, բած, սակ», «Հայ շինականի ու զեղչկուհու աշխատավարձը V դարում», ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի Տեղեկագիր, 1926 թ., № 1, 1927 թ., № 2, 1928 թ., № 3, «Բաճրան և մուրը XVII և XVIII դարերում», «Նորք», 1923, Բ, էջ 141—168:



Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա ԶԱՅՆԱՎՈՐ

Ա ձայնավորը հին հայերենի կայուն հնչյուններից էր և իբրև կանոն հնչյունափոխության էր ենթարկվում սակավ դեպքերում, այն էլ մեծ մասամբ բարբառային արտասանության ազդեցությամբ: Գրարարի բերականները նշում են այդ կարգի բառերում ա-ի հնչյունափոխության կամ անկման մի քանի օրինակներ՝ արմատ > արմտիք, զանձատուն > զանձտուն, պահակուրին > պահկուրին, վատատունիկ > վատտունիկ, լարակամ > շարկամ, ալանշալ > ալքնջօք և այլն<sup>1</sup>, որտեղ արմատական կամ հոդակապային ա-ի սղումը շեշտը կորցնելու կամ շեշտից անմիջապես առաջ գտնվելու հետևանք է<sup>2</sup>: Միջին հայերենում առաջանում են ա ձայնավորի հնչյունափոխության նոր երևույթներ, որոնք ակնառու ցույց են տալիս, որ ա հնչյունը ևս ի, ու, է ձայնավորների նման կարող է հնչյունափոխվել ք-ի կամ սղվել շեշտակորույս կամ նախաշեշտ դիրքում, հատկապես բազմավանկ բառերում, օրինակ՝ գրաական > գրական, հաասար > հաւսար, վանաականեար > վանոկներ, գանգատաւոր > գանգաւոր, ամբացուցանեմ > ամբցնեմ, պակասեցուցանեմ > պակսեցնեմ և այլն<sup>3</sup>:

1 Ա. Այսրնյան, Քննական բերականություն..., էջ 72—73, Վ. Ասաբեկյան, Ժամանակակից հայերենի հնչյունարանություն..., Երևան, 1955, էջ 100:

2 Այս փոփոխությունները ամենայն հավանականությամբ ձեռագրական են և գալիս են ուշ շրջանի արտագրություններից (ծան. խմբ.):

3 J. Karst, Historische Grammatik..., S. 12—13:



Ժ—ԺԴ դարերի վիճական արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում և ձայնավորի սղման կամ այլ ձայնավորի փոխվելու իրողությունները ավելի հաճախանում և տիրապետող օրինաչափություն են դառնում: Նկատելի է ա-երով հարուստ գրաբարյան արմատների կամ ածանցման ու բարդության մեջ հոդակապի սղման, ամփոփման և պարզեցման ընդհանուր ձգտում, որի հետևանքով և հնչյունը հին, գրաբարյան արտասանությունը պահպանում է սոսկ միավանկ բառերում, շեշտակիր դիրքերում կամ քերականական տարրեր իմաստներ արտահայտելիս: Մնացած դեպքերում ա-ն կարող է հեշտություն սղվել կամ հնչյունափոխվել այլ հնչյունի, մեծ մասամբ ը-ի, մի իրողություն, որ լայնորեն դիտվում է միայն հայ բարբառներում: Վիճական բնագրերում և ձայնավորի հնչյունափոխության կամ սղման դեպքերը այնքան սովորական են, որ երբեմն դժվար է զբրանցում որևէ օրինաչափություն սահմանել, ուստի այդ փոփոխությունները այստեղ բնության ենք առնում հետևյալ հիմնական դժերով:

Ա. Հին հայերենի և հետագայում փոխառված երկվանկ բառերի կամ անձնանունների արմատական և հնչյունը շեշտից զբրկվելով սղվում է. «Զկենաց եւ զմատղաց (<մատղ) (Անի ՈԿԹ Դ I 17): Վարհամ>Վարհմա, «ես՝ Սամուկսթի դուստր Վարհմա» (Հոռոմոս ԶԺԵ ՍԱՐ 157), «ես՝ Խոսրով ուղի Վարհմա Լաւոցո» (նա ԺԳ ՍԱՐ 147): Զաղաց>չաղչաց, «Յողար գիարաճ շաղչաց վերի Շիրակ» (Շիրակավան ՈԶ ՍԱՐ 171), «զմեր դանձագին դՋրձորիկ վանքն փւր սահմանաւքն, շաղցովն» (Բագնայր ԶԺԵ ԲԱՍ 183): Նարգիս>նրջիս, արար. nargis ծաղկի անունից<sup>4</sup>. «Սարգիս քահանա եւ քոյր մեր ննիս» (Մրեն ԺԳ ՍԱՐ 199), «:Բ: Նրջսին եւ :Բ: Աղուտին» (Բարձրաբաշ ՈԶԸ ՄՎ), «...դեանութենն ժամն նրջիսին արնեն» (Ծաթեր ԶԽԶ ՄՎ), «ես՝ Գրիգոր սնուցած մեծին Սարգսի դստերն նրջսին» (Հառիճ ՈԶԴ ՄՎ), «:Ա: իմ մաւր նրնսին» (Աղջոց վանք ՈՀ Հով ԽԱՂ III 67), «ողորմի վահրամայ եւ նրջսի (Ամաղու ԺԴ Դ III 225), «ած ողորմի նրջսին» (նա 113), «Ճգնաւորն պատրոն նրջիսնէ» (Սանահին ԺԳ ԿՂՍ 171): Բագրատ>Բագրտա, «Կամ եղև իմ Բագրտա մագիստրոսիս եւ Արևելից կատապանիս» (Անի 1060 Դ I 37): Աշնակ>Աշնկի, «...տալ դայգին Աշնկի, որ ի մեր կորդո արկած էր» (Անի ՆԶԵ Դ

<sup>4</sup> Հ. Անադյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 99:



1 49), «Յիմ գանձագին հէրէնեցն յԱշնկու» (Բագնայր ԶԺԱ ՍԱՐ 181): Քարհատ > քարհախն, «Քարհախն :ծ: գանկն» (Անի ՈԿԳ Գ 1 63), «տվար զմեր գանձագին հայրենիքն զՔարհախն գանկն» (Հոռոմոս ԺԳ ՍԱՐ 147): Ոչխար > ոչխրին, «թողի... զոչխրին աղլահակն» (Անի ԶԾ Գ 1 28): Սահակ > Սհակայ, «ես՝ վահրամ կանգեացի զխաշս իմ հարն Սհակայ (Սիսիան Գ II 30), «զշարաթ արն Սհակա եւ խաշարին ժամ առնենք» (Հաղրատ ԿՂՀԲ 157), շարունակության մեջ՝ «հաստատեցի զՍահակա եւ զխաշարին»։ Հասան > Հասնա, «եզդու Ապիհասնա եւ խատապա» (Խրժկոնք ՆԶԲ Հով ՔԱՐ 14), «:Ա: իմ պապին՝ Բլիհասնա» (<Արլիհասնա) (Հոռոմոս ԶԻԲ ՍԱՐ 150): Շուշան > Շուշնա, «:Ի: դեհ Շուշնա, :Զ: առու այգի» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 59): Քարէխաա Շհանայ (<Շահան) եւ Տիրամարն» (Վարդենիկ ԶԼԹ ՍՍ): Ոստան > Ոստնի, «...ես՝ Գրիգոր, որդի Սմպատա Ոստնի աէր» (Յազայրար ՈԿ Գ III 142): Մեգար > մեգրով «...դիպանացն այգին մեգրով» (Հաղրատ ՈՂԲ ԿՂՀԲ 206): Ընձակ > Ընձկան, Գազան > Գազնին, վկայված են Կարսի պարիսպների մեջ ազուցված սրբատաշ բեկորի արձանագրության մեջ: «Կատարեցաւ բրջներս ձեռամբ Ընձկանն, Գազնին եւ Ոլտին» (Կարս ՈԶԳ ՕրԾ III 470):

Հ. Անառայանը Ընձկանն սեռական հոլովածից անձնանվան ուղիղ ձևը ենթադրաբար վերականգնում է ոչ թե Ընձակ, այլ՝ Ընձիկ, հավանաբար անհավանական համարելով Ընձակ > Ընձկանն փոփոխությունը<sup>5</sup>: Մեր մեջ բերած ցանկից ակնհայտ է, որ նշված հնչյունափոխությունը կամ ա ձայնավորի սղումը օրինաչափ է այդ ժամանակների վիմագրերում և միջին հայերենում: Հենց նույն արձանագրության մեջ մյուս վարպետի անվան վկայված հոլովածներ նույնպես արդյունք է շեշտակորույս ա-ի անկման՝ Գազան > Գազնին, որն, ի դեպ, այս վերականգնումով տեղ է զբտել «Անձնանունների բառարանի» հավելվածում<sup>6</sup>: Բագնայր > Բգնայր > Բգնէր, «տուի զիմ կուղպականին... ի Բգնայրին վանս» (Բագնայր ՆՂԱ ՍԱՐ 178), «եսու զՄուլուրին հողն... ի Բգնայր» (նա ԺԳ ՍԱՐ 186), «եսու զիմ գանձագին հայրենիքն զնորսն ի մեր ուխտ ի Բգնայրս» (նա ԶԺԱ ՍԱՐ 187), «ու զիմ որդոյն բաժինն զՍասնին ի Բգնեւս տվի» (նա ԶԺԱ ՍԱՐ 189), «Ի մեր սեփական սր ուխտն Բգնեք» (նա ԶԺԵ ՍԱՐ 189): Մանրաշ > Մանթշա, «տվար

5 Հ. Անառայան. Անձնանունների բառարան, Բ, էջ 239:

6 նույն տեղում, Ե, էջ 247:



զմանրչա կէսն» (Սանահին Ու ԿՂՍ 106): Խոյլան > Խոյլնա (Ն. Գևորգի Ու ՄՎ): Ճոնակ > Ճոնկանն, «Ճոնկանն ննչեցելոյ ի Քս» (Մշո Առաք. վանք ՇՂԳ Միրախոր Ա 43): Առաջի > առջի, «զինչ առջի թագաւորութենն լի է» (Տեկոր ՆՁՆ ՍԱՐ 208), «Ես՝ Սերսր սարկաւագս սր ուխտիս շինեց զսր Առաքեալս ի վերայ առջին հիմանն» (Սղիշա Առաք. վանք ՈՂԳ ՍԲ), «Ի դոսնս վանիցս առջև (Անի ՈԿԳ Գ I 83): «Ի հիմանէ > ի հիմնէ, «զոր ես ի հիմնէ շինել էի» (Անի ՈԿԳ Գ I 63):

Բ. Բաղմովանկ բառերի արմատական ա ճնշումը շեշտից զրկվելով կամ նախաշեշտ դիրքում բնկնում է, ըստ այդմ մի բանի ա-երից սղվում է շեշտին անմիջապես նախորդողը: Հնագույն վկայութիւնը Ամբերդի ՆՂՆ (1026 թ.) նշանավոր հրամանագրում. «Քաղաղաշաի բարակն» (<Քաղաղաշաի բամբակն) (ՄՎ): Աւերակ > ավերկով, «յԱնու հողէն ի վաղաւիրուն ի: ավերկովն» (Հոռոմոս ՉԺՆ ՍԱՐ 157): Շինական > շինակնաց, շինակնատուն, «Ամենիցուն լինէր սիրելի, պիտանի պարոնաց, շինակնաց» (Բնունիս ՉՁ Գ II 116), «զրիս ընծա: Վ: լաւ շինակնատուն ի նորաշէնքն երես» (Կեշառիս ՈԿԳ ՍԲ), «տոփ սր կաթողիկէս Վ: շորեցայ հող, ի: շինակնատուն» (Գաղի վանք ԺԳ Մով 95, ՍԲ): Խանապար > խանապրի, «խանապրի դասն զիմաց է» (Անի ՉԼէ Գ I 29), «Եւ ընծայեցար զմեր գանձագին զխանապրին գանկրն» (Կարմիր վանք ՉԻ)՝: Վանասար > վնասար, «վնասարս վնասուայ մարմնագոյն Սիրանէս բարգոթծին հերեմիք ազի» (Հայրձոր ԺԳ Գ II 52): Վնասար բառի մեջ կարելի էր դիտել ոչ թե ա ձայնավորի սղում, այլ բառի հապավված կամ կրճատ դրութիւն, սակայն հանդանունը երկու անգամ էլ փորագրված է առանց հապավման նշանի, որ բացատում է հապավումը: Աբրահամ > Աբրհամայ, Աբրէհմայ, «Կանկնեցաւ խաշս ի բարեխաւս Աբրհամայ» (Հերհեր ԺԳ Գ III 68), Աբրէհմայ (Կարս ՈՁՆ ՍԱՐ 103): Կուրապաղատ > Կուրապաղտին, «: Ա: ինձ, Վ: Կուրապաղտին» (Հոռոմոս ՉԺՆ ՍԱՐ 157): Հագարբէկ > Հագրպեկ, «Չոր իմ որդին Հագրբէկն ի Գարէգոյնէն գրակնեց» (Հոռոմոս ՉԺԸ ՍԱՐ 158): Բագարան > Բագրնի, Բագրնոյ, «Ետու զիմ գանձագին այգին ի Բագրանի» (Բագարան ԺԳ ՍԱՐ 182), «որ չկա ոչինչ աղման Բագրնէ» (Մրեն ԺԱ Օրծ Մ 8), «Ետու եւ Մսեղին տներն Բագրնի... ի Բագրնի» (Բագարան ՆՁԳ ՍԱՐ, 203), «Ես՝ Ածատուր

7 Կ. Բաւմաշյան, Անիի դրացի Կարմիր վանքը, Վնասան, 1911, էջ 123:



Բագրնոյ երէցս հասու զիմ Աորճաց էդին» (Բագնայր ժԳ ՍԱՐ 204), «Եւ այդի մի ի Բագրան» (Խժկոնք ՈԿ ՍԱՐ 210), «զննցի զայդին, որի Բագրան» (նտ ՈՂԹ ՍԱՐ 210), «Իջուցի Բագրնի հացն եւ զգրամն» (Մրեն նՂ Օրճ Մ 2), «Եւ զայդի մի ի Բագրան» (Կարմիր վանք ԶԻ)<sup>8</sup>: Գանեկան > զանեկնով, «Ես՝ Առան միայրս նեցա Ածածնիս ի: զահեկնով» (Մորոձորո վանք ժԲ ՄՎ), «Բ: արժամ Տիրատրո, որ լե: դանեկն ետ ի դաւիթս» (Ազջոց վանք ժԳ Հով ԽԱՂ III 89), «Միարանեցա սր Ստեփանոս լե: զեկան» (Ազջոց ժԳ Հով ԽԱՂ III 73): Ագարակ > Ագրկի, «Գնեցի զՇահկանն զհողն, որ յԱգրկին» (Բագնայր ժԳ ՍԱՐ 182), «Գ: ար լ: Գ: զիշեր Ագրկուց» (Տեկոր նՁԵ ՍԱՐ 208), «էտու զիմ այդին... որ յԱգարկէն է» (Բագնայր ժԳ ՍԱՐ 204): Զիրահանք > ձիրահնաց, «Ետու ձիրահնաց ազցաւդի բար» (Բագնայր ժԳ ՍԱՐ 186), «Ետու զիմ ձիրահնաց կէս ահն» (Բագնայր ժԳ ՍԱՐ 182): Մարգարիտ > մարգրատ, «Եւ զարդարեցի... ախամբ եւ մարգրտաւ եւ կանթեղար» (Անի ՈԿԴ Դ I 63): Համարեմ > համբեմ > համբելէն «...թողար զկովերոյն եւ զիշանուն զհամբելէն... ..զկովին համբելէն» (Անի ԶԿԹ, ԶՄ Դ I 27, 28): Նայրանդանց > նայրանդնոց > նալանդնոց (այրս. nalband = պայտաւ բանից), «Ետու երկու կողպակ յիմ կողպականոյն որ ի նալանդնոցին» (Բագնայր ժԳ ՍԱՐ 186): Հարաշկարերդ > Հրշկարերդ, «Ետու յիմ հալալ հայրենարածնէն ի Հրշկարերդ զՔարկոփելանին» (Ամաղու ԶԽէ Դ III 216): Գերմաստի > Գերմատու, «Ետու զիմ գանձագին հողերն զԳերմատու տնափնիրն» (Արշո տոթճ ժԳ ՍԱՐ 191): Ալաման > Ալման, «Ես՝ Խոսրովանոյշ զԱլմանս հարկս եւ թաստակս... թողի» (Ալաման նՂ Մարք ՀՄ 76): Մահանգ > Մրհանգ > Մրհանգ, «Ես՝ Սրհանգս կանգնեցի զխաշս (Հավաստու ՈԻԲ Հով ԽԱՂ I 31): Ապարանուց > Ապրնուց, «Ակն մի ջաղաց յԱպրնուց ձորին» (Անի ժԳ Դ I 58): Զաղաց > ջղաց, «Եւ էր մեր լ: Բ: ահն ի ջղածմարին խամո շինած» (Մաղկեվանք ԶԼԳ ՄՎ): Տառապեալ > տառպել, «Վս՝ որ տառպելն անասուն շկամի պահեալ» (Սձոն ԶԻԳ ՄՎ): Դղակակարոց > գղակկարոց > գղակկրոց (Անի ԶԼէ Դ I 29): Կապալատր > կապլվոր, «Ոչինչ ազգով իցէ, որ կապլվոր լինի» (Անի ԶԺԸ Դ I 24): Բազազփողոց > բազզփողոց > բազփողոց, «Ետու զԲազզփողոցի տունս» (Անի ժԳ Դ I 68), ի Բազրզնոցին (Բագնայր ժԳ ԲԱՍ 153), «էտու նվեր ի Բազզփողոցին կողպակ մի» (Բագնայր ժԳ ԲԱՍ 185): վայոց ձորի վիմագրերում բանիցս

8 Կ. Բաւմաշյան, նշվ. աշխ., էջ 128:



հիշատակված տեղանունը՝ Մեռկածոր, (Գ III 35), Մեռկածո-  
 (87), Մեռուակածո (87), Մեռոկածո (149) հնարավոր է լինում  
 վերականգնել Սա. Օրբելյանի «Պատմության» մեջ ավանդված հի-  
 շատակությանը՝ «եա և ի վանսն Յաղացքարոյ զիւղ ի Գեղարքու-  
 նի զՔառնակերն և այգի մի ի Մառկայ ձորի»<sup>9</sup>, ըստ այդմ, տե-  
 ղանվան նախաձևը պետք է համարել՝ Մառուակայ ձոր: Վիմա-  
 գրերում տվյալ տեղանունը փորագրված է նախաշեշտ ա-երի սը-  
 ղումով կամ ա > ք անցումով (Մեռկածո, Մեռոկածո): Երբեմն  
 սղվում կամ ք ձայնավորի են վերածվում բառի կազմում եղած  
 երկու ա-երը. այսպես պակասեցուցանել բայը Հաղքատի վան-  
 քի ԺԱ. դարի արձանագրության մեջ փորագրված է պկսուցանել.  
 «Եթէ որ այս գրոյս հակառ կա կամ պկսուցանել ջանա- իմ մե-  
 ղացն... պարտական է» (ԿՂՀԲ 156): Ընդգծված պատճառական  
 բայը փորագրված է առանց հապավման նշանի, այսինքն շի կա-  
 բելի մտածել, թե ա ձայնավորի սղումը երկու դեպքում էլ կրճատ  
 գրության հետևանք է:

Ա. ձայնավորի հնչյունափոխության և սղման մեր թվարկած  
 բոլոր օրինակներում չէ, որ այդ հնչյունը շեշտից զրկվելով կամ  
 նախաշեշտ դիրքում թուլանում, անհետ ընկնում է: Մի շարք  
 դեպքերում ա-ն վերածվում է ք ձայնավորի, որը հայերենի ար-  
 տասանության և գրության օրինաչափություններով հաճախ բա-  
 դաձայնների մեջ կամ որոշ կապակցություններից առաջ կարող  
 է հնչվել, առանց գրությանը արտահայտվելու: Որ մեջ բերված  
 բառերի մի մասում ա-ն հնչյունափոխվել է ք-ի լավագույն ա-  
 պացույց են վիմական բնագրերում այդ բառերի գրության գույա-  
 հեռ ձևերը՝ առանց ք-ի և ք-ով: Այսպես, Վահրամ > Վահրմա,  
 հանդիպում է նաև Վահրմայ. «Որչափ կենդանի եմ իմ եղբայրն  
 Վահրմայ» (Անի ՈԶԳ Գ I 36), խանապրի նաև՝ խանապրի (Անի  
 ԶԼԷ Գ I 29), Կոստանտին > Կոստնտին, նաև՝ «Կոստրնդին կարո-  
 դիկոս հայոց» (Հովհաննավանք ՈՂԲ ԿՂՀ 95), Սառանփողոց >  
 Սառնփողոց, նաև՝ Սառնփողոցին կուղպակ (Բագնայր ԺԳ ԲԱՍ  
 170) և այլն:

Գ. Ա ձայնավորը ընկնում է հին հայերենի պատճառական  
 բայերի ուց—ան (<ոյց—ան) ածանցում: Ի տարբերություն միջին  
 հայերենի գրական հուշարձանների, վիմական արձանագրությու-  
 ներում այս հնչյունափոխության վկայությունները այնքան էլ հա-

<sup>9</sup> Սա. Օրբելյան, Պատմություն..., էջ 424:



Ճախ շին և դալիս են ավելի ուշ շրջանից, ԺԱ դարից, որ հավանաբար ապացույց է այդ երևույթի սահմանափակ տարածման: Մեշ ենք բերում եղած օրինակները. դարձուցանեն > դարձնեն, «զիմ: :Դ: Ի: դրամն ու զ :Դ: ջորին ի նորավանս դարձնեն (Ամադու. Ձե Դ III 220): Մատուցանել > մատուցնել, «Ձամենայն եկեղեցիքս Շասոհանն մատուցնել» (Սանահին ՇԺ ԿՂՍ 148), «մատուցէ պատարազ :Ա: սը Գրիգորին» (Անի ՁԻ Դ I 43): Սնուցանող > սնցնող, «Ես՝ Մալիբա... սնցանող Խորիշահի» (Հովհաննավանք ԺԳ ԿՂՀ 100):

Դ. Ա ձայնավորն ընկնում է ան սոսկածանցավոր բաղմավանկ բայերի ածանցում: Ինչպես և ուց(ան) պատճառական բայերի ածանցի դեպքում, ան ածանցում ա-ի անկման դեպքերը վիճական բնագրերում հազվադեպ են և վկայված միայն ԺԱ դարից հետո. պետք է կարծել, որ փոփոխությունը նոր էր սկսվել և դեռևս լայն տարածում չուներ: Նկատված օրինակներից նշելի են. շհասանի > շհասնի «որ շհասնի ի յԱնի ոչինչ ոյժ» (Անի 1060 Դ I 37), խափանել > խափնել, «Ով որ հակառակի կամ խափնել շանա» (Հովհաննավանք ՊԱ ԿՂՀ 81): Անցանեմ > անցնեմ, «Եւ աւր անցնէ, նզովեալ լիցի» (Անի նՁԹ Դ I 33): «որ կաշառաւր հայր մտն կրկին նզովի (Հառիճ ԺԳ ՄՎ), Սկսանեմ, սկսեմ, «նոր կիրակէին սկսեն առնել զիմ ժամն» (Բարձրաբաշ ՈԿԸ ՄՎ):

Ե. Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճական բնագրերում մի առանձին խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնցում ա հոդակապը բացակայում է, այսինքն անհոդակապ կազմությունները: Դժվար է հաստատապես պնդել, թե բոլոր այդ դեպքերում ա հոդակապը եղել է և հետագայում ընկել է հնչյունափոխությամբ, այսինքն անհնար է ստուգապես հավաստել, թե հայերենում առանց հոդակապի բարդությունները ամենուրեք առաջանում են հոդակապավոր ձևերից՝ ա հոդակապ ձայնավորի հնչյունափոխությամբ կամ սղումով<sup>10</sup>: Սակայն եթե բոլոր բարդությունների նկատմամբ այդպիսի բացատրությունը փոքր-ինչ համարձակ է և դժվար ապացուցելի, ապա/կրկնակի ձևերով՝ անհոդակապ և հոդակապով վկայված բառերի մասին նույն մեկնությունը թվում է համողիչ և ընդունելի: Հիշյալ կրկնակ ձևերում իրրե կանոն հոդակապավոր բառերը ավելի նախնական են, կանոնավոր և վկայված դասական հայերենի գրական հուշարձան-

10 Տե՛ս Վ. Առախլյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 11:



ներում, մինչդեռ նույն բառերի անհոգակապ տարբերակները ավանդված են հետագա դարերի մատենագրության մեջ կամ վիժական բնագրերում և հավանաբար ներթափանցված են ժամանակի կենդանի լեզվից, բարբառներից, որտեղ օրինաչափ էր ասումը բոլոր դիրքերում: Կարելի է հաստատապես հավաստել, որ միջին հայերենում և արդի խոսվածքներում բառաբարդությունները և ածանցումները մեծ մասամբ կազմվում են առանց հոգակապի, մինչդեռ հին հայերենում անհոգակապ կազմությունները հազվագեղ էին: Օրինակ, միջին հայերենի ծառայակ, հացպան, ջաղցպան, վանդկան (վանդական), սինաղպան, ազոխչուր, աղլիակ, բազզնոց, բազկնոց<sup>11</sup> կազմությունները դրաբանում վրկայված են և հոգակապով՝ ծառատակ, հացպան, ջրաղացապան, վանառական և այլն: Վիժական արձանագրություններում հանդիպում են թե հոգակապով և թե անհոգակապ բառեր, սակայն զուգադիր ձևերի մեջ գերակշիռը անհոգակապ կազմություններն են: Մյուս կողմից, նշելի է նաև, որ հնագույն բնագրերում ավելի տարածված են և օրինաչափ և հոգակապով կազմությունները, այնինչ ավելի ուշ շրջանի վիժագրության մեջ, սկսած ժԱ. դարից անհոգակապ ձևերը հաճախանում և տիրապետող են դառնում: Իրողությունը ակնառու երևում է եկեղեցեպան բարդության մեջ: Սյունի վանքի հավանաբար է դարի կարճատև հիշատակագրություններում երկու անգամ նույն գրությամբ փոքրագրված է. Յոհանէս եկեղեցեպան (Գ II 87, 88) (եկեղեցի + ա + պան = եկեղեցեպան և ե ձայնավորի սղումով՝ եկեղեցեպան), նույն բառը Կոմիտաս կաթողիկոսի՝ Հոսիոսիմի տաճարի 618 թ. շինարարական արձանագրության մեջ վկայված է և հոգակապով՝ եկեղեցապան՝ («ես՝ Կոմիտաս եկեղեցապան», Օրծ ՄԿ 407), որտեղ բարդությունը կազմվել է առանց եկեղեցի բառի վերջնահանգ ի-ի (ի + ա = ե), սոսկ նրա անկումով և և հոգակապով՝ եկեղեց + ա + պան: Այս վանքերի և այլ հուշարձանների ավելի ուշ շրջանի արձանագրություններում տարբեր հնչյունական փոփոխություններով ավանդված է նույն բարդության անհոգակապ ձևը՝ եկեղեցպան. «եկեղեցպան ազաթից ժամ» (Սյունի վանք Գ II 87), «ի բարեխաւսութիւն ինձ՝ եկեղեցպանիս Յիսէի» (Խձկոնք նՁ)<sup>12</sup>, «և որ գԳրի-

<sup>11</sup> Տե՛ս J. Karst, Historische Grammatik..., S. 74—75, WBM, ավյալ բառերի տակ:

<sup>12</sup> «Արարատ», 1964, էջ 391:



դոր իրիցու որդիքս յեկեղեցականութենէ հան է... պարտական լիցի» (Անի նՁԳ Գ I 46), «եւ եկեղեցեացոյ ամեն հոգոց առ եկեղեցականին է» (Անի նՁՁ Գ I 49), «եւ եթէ որ խափանէ կամ հայր կամ եկեղեցական... պարտական է» (Հաղրատ ԺԱ ԿՂՀԲ 156), «որ խափան է հայր կամ եկեղեցական նոյնված է» (Սանահին ՈՒՁ ԿՂՍ 111): Այսպէս նաև՝ նրագալոյց, Գանձահան, ալգեհատ, մայրաբաղախ, նորապետ, հողահատ, չաղացարակ, կամուրջախել, նորահատ, Աղաչատափ, ձիբահանք, փակակալ, Բարագործ, գայլաձագ, ջրափող, ոսկեզած, հազարաղեղ, Խորանշատ եւ բազմաթիվ այլ կազմութիւններ վիճական բնադրերում մեծ մասամբ ավանդված են անհոգակապ գրութեամբ: Ահա համապատասխան վկայութիւնները. «զնրագլուցին ժամն իմ հարազատին կատարեն» (Մորոձորս վանք ՈԿԲ ՄՎ), «Քարարիտո ձորն Գանձահանի ստովն ու ներքի ջրախառովն» (Թանասա ՉՀԱ Գ III 396), «էտու յԱյգեհատին գճորս գշինական» (Հաղրատ ՈԻԲ ԿՂՀԲ 176), եւ հառու յածաշեն վայրաբաղախ Սանահինս» (Սանահին ՇԺ ԿՂՍ 147), «զնեցար... զնուպետին ալգին ի վէղի» (Ամադու ՉԽԱ Գ III 238), «Գնեցար Շորէրեսին չաղացբազն եւ շինեցար եւ տվաք (Բազնայր ՈԿ ՍԱԲ 203), «հառու զկարմրնջխելին ներքի չաղացն» (նա 204), «յիշեցի Քս Ած զՄխիթար, զթանկիկն ...զնուհատն» (Արշնատիճ ՍԱԲ 192), «ես՝ Կուկորս զԱղբերկա հողն զԱղջրտափ ոսկով զնեցի» (Հերհեր ՉԽՁ Ղ III 52), «զՈրձարարին հողն ի յԱղջրտապ» (Հերհեր ՉՂԳ Գ III 56), «զնեցի... կուղպականի Գ: եւ ձիբհաց եւ ալգի» (Անի նՁԵ Գ I 44), «հառու ձիբհաց կես ակն... հառու ձիբհաց աղցաղի բար» (Բազնայր ՈՂԱ ԲԱՍ 175), «հայր վարդան եւ Տրդատ փակակալ... հաստատեցար» (Բազնայր ՈԿ ՍԱԲ 203), «Մխիթար, Շնահար աղբար Բարագործ յիշեցեր» (Գամուր ՉԺՁ Գ III 193), «Ի սր Ածածնիս Խորանշատ» (Խորանշատ ՈՀԱ ՄՎ):

Ա հոգակապի հնչյունափոխութեամբ կամ սղմամբ հին լեզվի վարդապետ — ուսուցիչ, վարժապետ, ուսյալ բառից իմաստի երկփեղկման հետեանքով առաջացել է նրա առանց ա-ի տարբերակը՝ վարդապետ > վարդպետ > վարպետ, որը հետանալով նախնական նշանակութիւնից ստացել է իմաստային նոր բովանդակութիւն՝ նախարարապետ, շինարար-վարպետ, յաշնորեն հայտնի միջին դարերի վիճակագրութեան մեջ: Այս նոր իմաստով վարդապետ բառի առաջին կիրառութիւնը Բաղազանի տաճարի 639 թ. շինարարական արձանագրութեան մեջ է, նրա վերջարանում, որտեղ հիշատակվում է հուշարձանի ճարտարապետի անունը՝ «վար-



դասվետուրյամբ Բարսեղի Գոռաղճեցւոյ» (Օրճ ԻԴ 386): Հետագայում վարդպետ ձեռով նաւարապետ, վարպետ իմաստով բառս հիշատակվում է բազմիցս. «Մոմիկ վարդպետ» (Ամաղու ժԳ Գ III 229): «Ես՝ վարդպետ (=վարդպե՞տ) կազմեցի տապանանիս» (Հերհեր ՉԽԵ Գ III 59), «Ես յիմ մտաց դուս՝ առանց վարդպետի ձեւեցի ու հիմն ձգեցի դարապասիս ու դրախտիս» (Մրեհ, ՉԻԵ Գ I VI), «զԳրգորիկ բաշ վարդպետ յիշեցէք, (Բնունիս ՉՄ Գ II 117)»<sup>13</sup>:

է. Ա ձայնավորն ընկնում է աբար, աուր, ացի, ալան, անի վերջածանցներում, նրանցով կազմված բառերի շեշտակիր կամ նախաշեշտ վանկերում. Բաժարար > բաժրար, «Ես՝ Սարգիս Միլենց բաժրարս թողի զբաժն մեծ եւ զփոքր (Անի ժԳ Գ I 3), այսպես նաև Կիլիկիայի Լեոն Գ թագավորի 1283 թ. Ճենովայի վաճառականներին տված արտոնագրում. «Ու յղարկէ զիր մարդն ու զփայտն ի բաժտունն»: Նույն ժամանակների գրական երկերում ավելի սովորական են ա-ով ձևերը, օր.՝ բաժապետ<sup>14</sup>: Կարկոտաբարոց > կարկոտաբրոց, երկու անգամ նույն գրությամբ վկայված է Լոռի բերդի պարիսպների մեջ ազուցված երեսապատման բարի անթվակիր, հավանաբար ժԳ դարի արձանագրության մեջ. «Թողի զկարկոտաբրոցի... արրոցին կարալն (ՄՎ): Հաւատաուր > հաւէավուր = կույս, միանձնուհի. «Ես Խաթուիս հաւէավուրս միարանեցայ սր նշանիս» (Հոռոմայր ժԳ)<sup>15</sup>: Թագաուր > բագուր. «Ին: Ղ:Թ: Թվականութենս հաոց Կորիկէ բագուրս շինեցի» (Վարդաբրուր 1050 ՍՍ), «սր եւ ինքնակալ բագուրին Կոստանդեա Մանումախին» (Կեչառիս Շ Հով ԽԱՂ III 28): «Ես՝ Քստուր Կողբեցի (Սանահին ՉԳ ԿՂՍ 165), «Ես՝ Հասան Կողբեցի» (Բագնայր ՈՍԸ ՍԱՐ 180): «Թողի զչաղացնոյս (<չաղացանոյս) ամէնոյն զզամղէն» (Անի ժԳ Գ I 28): Եւ այլ բազում գրավեւած էր (Անի ՈԿԳ Գ I 63): «Հաղբայէկն գրակեցց» (Հոռոմոս ՉԺԸ ՍԱՐ 158):

Շեշտից զրկված կամ նախաշեշտ ա ձայնավորի անկման նկարագրված երևույթները, ինչպիս տեսանք, անձանոթ էին հին հայերենին և անտարակույս պետք է բացատրվեն հայ բարբառների հնչյունափոխական օրինաչափությունների ազդեցությամբ, բա-

<sup>13</sup> Վարդպետ տերմինի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Բախտուրյան, Միջնադարյան հայ նարտարապետներ..., էջ 18—20:

<sup>14</sup> Ղ. Հովհաննյան, Հեռագոտությունը..., մասն Ա, էջ 260:

<sup>15</sup> Ս. Զալալյանց, Ճանապարհորդութուն..., Ա., էջ 98:



նի որ նույն փոփոխությունները ավելի լայն տարածումով ներկայումս էլ անդի են ունենում արդի հայերենի տարբեր խոսվածքներում:

Իբրև տվյալ հնչյունափոխության հավանական ակունք կարելի է նշել Մեղրու, Ղարաբաղի, Ագուլիսի, Շամախիի, Մշո, Խոյի, Ն. Զուղայի բարբառները, որտեղ հին հայերենի և ձայնավորի անկումը կամ ը-ի վերածվելը օրինաչափ է բոլոր դիրքերում. շեշտի ազդեցությամբ կամ անկախ նրանից: Բառասկզբի դիրքի համար ա-ի անկման լավագույն օրինակներ են Մեղրու բարբառի ծիլէ (<ածելի), նաևուխ (<անաևուխ), րածիլ (<արածիլ), քացէ (<աքացի) ձևերը<sup>16</sup>: Մյուս բարբառներում նույն դիրքում ավելի օրինաչափ է ա>ը անցումը. այսպես, Ղարաբաղի բարբառում ունենք՝ ըոնել (<արիւնել), ըղաշանֆ (<աղաշանֆ), Շամախիում և Ագուլիսում՝ ըոնատ, ըոնայտ (<առնէտ), Մեղրիում՝ ըմանալի (<արմանալ), ըղաման (<աղաման), ընգնատակ (<ականջատակ), Մշո բարբառում՝ ըծել (<արծել), ըսել (<ասել) և այլն<sup>17</sup>: Սակայն բառասկզբի դիրքում և ձայնավորի սղումը կամ ը-ի վերածվելը վիճական բնագրերում արձանագրված է մի քանի օրինակներով (առատ>ըռատ, Աղայան>Ղղայան, Արխատակէս>Ղոստակ), որ հավանաբար վրկայում է այդ փոփոխության սահմանափակ տարածումը վկայված ժամանակաշրջանում: Դրա փոխարեն արձանագրություններում, ինչպես տեսանք, ավելի մեծաթիվ են և օրինաչափ բառամիջի ա-երի անկման կամ ը-ի հնչյունափոխվելու վկայությունները, որոնք նույնպես կարող են բացատրվել բարբառային միջավայրի ազդեցությամբ: Արդի նկարագրված բարբառներում իբրև ընդհանուր կանոն նախաշեշտ ա-երը (այդ թվում և հոդակապը) կարող են սղվել կամ հնչյունափոխվել ը-ի նույնիսկ բառերի անփոփոխ ձևերում, շեշտակիր կամ նախաշեշտ վիճակում. օրինակ, ղզար (<հազար), մխար (<մախար), (Ն. Զուղա — 52), բաժնել (<բաժանել), հավտալ (<հավատալ), սաղգէլ (<սատակէլ), ամչրնալ (<ամաչել), հասկրնալ (<հասկանալ) (Կա-

16 է. Աղայան, Մեղրու բարբառը, էջ 21:

17 Կ. Դավրյան, Բարբառային քարտեզը, էջ 24, Ռ. Բաղրամյան, Շամախիի բարբառը, էջ 17, Զ. Անառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 30:



բին — 12), բգառել (<ագառել), հրլիվոր (<ալետոր) (Հոտի)<sup>18</sup>,  
կրցցնել (<հարցանել), մրհար (<համար) (Ղարարադ — 24):

Հայ բարբառների մեծ մասում այս հնչյունափոխությունն ա-  
վելիք ընդհանրական է մանավանդ շեշտափոխության դեպքում,  
բառերի աճման կամ ձևաբանական-բառակազմական փոփոխու-  
թյունների ժամանակ, ըստ այդմ, նախաշեշտ և ձայնավորները  
սղվում են կամ վերածվում ր-ի: Հայանի է, որ բարբառներում  
բառային շեշտը ընկնում է վերջին (հիմնականում Կ ճյուղի բար-  
բառներում՝ Վանի, Շատախի, Մշո, Կարնո, Պուլսի, Առախալի և  
այլն) կամ վերջընթեր վանկի վրա (մեծ մասամբ արևելահայ բար-  
բառներում՝ Ղարարադի, Ագուլիսի, Մեղրու, Շամախիի, Հոտու,  
Կողենի, Կարճեանի, Կարավարերգի և այլն), ըստ այսմ էլ, առաջին-  
ներում շեշտակորույս դիրքում սղվում կամ ր-ի է վերածվում շեշ-  
տին նախորդող, այսինքն վերջընթեր ա-ն, իսկ երկրորդ խմբի բար-  
բառներում՝ սրան նախորդող: Օրինակ, հայերենի դանակ, աշխարհ,  
կախալ, սշխար, արշառ, ամաշել, ալետոր, հաստալ, կառկալան  
և այլ բառեր առաջին խմբի բարբառներում դառնում են՝ դանգի,  
ախշրի, կախվի, օշխրի, աշոու, ամշրնալ, խալրվոր, ավաալ, կառ-  
կրուան, մինչդեռ նույն միավորները վերջընթեր վանկը շեշտող  
բարբառներում օրինաչափորեն վկայվում են՝ տրեակի, բշխարի,  
կրեալի, վրխնարի, բշառի, հրմալեշիլ, հրլիվոր, հրվատալ, կր-  
կատան ձևերով:

Այս տեսանկյունից բնեկրով վիճադրերում ավանդված ա-ի  
հնչյունափոխության վկայությունները, նկատում ենք, որ նրանց  
զգալի մասը գալիս է այն խոսվածքներից, որոնցում բառային  
շեշտը գտնվում է վերջին վանկի վրա, և ըստ այդմ, սղվում կամ  
հնչյունափոխվում է միայն նախաշեշտ վերջընթեր ա-ն, սրանցից  
են, օրինակ, վիճադրերում վկայված՝ Վառհմա (Վահրհմա),  
ջաղչաց, ջաղցով, Աշնկի, խանապրի, Գագնին, Մանրչա, մառ-  
զրուալ, ասարնոց (ասրնոց), աերկով, դանեկնով ձևերը, որոնց  
գիմաց մյուս խմբի բարբառները կունենային՝ Վրհրամա, ճրղա-  
ցի, ճրղացով, Աշնակի, մրբարիտով, սրբանոց և այլն, այսինքն  
սպասելի էր նախաշեշտ՝ վերջընթեր վանկին նախորդող ա-ի փո-  
փոխություն: Սակայն մի քանի վկայություններում կարելի է  
նկատել ա-ի սղում այն դիրքում, որ հատուկ է վերջընթեր վան-

18 Հ. Անտոյան, Քննություն և Ջուղայի բարբառի, էջ 52, Մ. Ասատրյան,  
Հոտու խոսվածքը, Երևան, 1967, էջ 45:



կը շեշտող բարբառներին. օրինակ, Սնակայ, Հգարմել, Հըշկա-  
բնոյ, պկտուցանել ձևերում ա ձայնավորի փոփոխությունը կարող  
է բացատրվել միայն այդ բարբառների օրինաչափություններով,  
քանի որ վերջին վանկը շեշտող բարբառներում զրանց փոխարեն  
սպասելի էր օրինաչափ՝ Սանկայ, Հագրմել, Հարըշկաբեոյ, պակ-  
սրցանել և այլն:

Շեշտակորույս կամ նախաշեշտ ա-ի անկման փոփոխություն-  
ներից բացի, միջնագարի վիմական բնագրերում հին հայերենի  
ա ձայնավորը կարող էր հնչյունափոխվել կամ վերածվել այլ  
ձայնավորի: Այս իրողությունը թեև չի տարածվում բոլոր դեպքե-  
րի վրա և օրինաչափության չի հասել, սակայն չի կարելի և պա-  
տահական վրիպում համարել, այլ՝ տվյալ դիրքում այդպիսի  
հնչման կամ արտասանության հետևանք, որը և արտահայտվել  
է նաև գրությունը, արձանագրություններում:

Վիմական բնագրերում կարելի է նկատել ա-ի հնչյունափո-  
խության հետևյալ դեպքերը.

Ա. Բառասկզբում կամ բառամիջում շեշտից զրկված ա-ն  
փոխվում է ր ձայնավորի: Այս փոփոխության մասին արդեն նը-  
շել ենք ա հնչյունի անկման կամ սղման երևույթները բննելիս,  
բայտ այդմ, հիշյալ օրինակների մի զգալի մասում ա-ն անհետ  
չի կորչում, այլ միջբաղաձայնային դիրքում հաճախ փոխարին-  
վում է ր ձայնավորով, որը երբեմն արտահայտվում է նաև գրու-  
թյամբ: Վկայված բառերի զուգահեռ՝ ր-ով և առանց նրա գրու-  
թյունը ապացույց է, որ երկու դեպքում էլ ր-ն արտասանվել է:  
Ա>ր հնչյունափոխությունը դիտվում է հետևյալ բառերում. «Խա-  
նապրի (<խանապար) զոսնն դիմաց է» (Անիի ՉԼԷ Գ I 29),  
«Մեր և բարնդակ (<բառնդակ) ազգի մեղացն պարտական ե-  
ղիցին» (Հովհաննավանք ՉԻԸ ԿՂՀ 107), «Ետու խաշ մեծածախ  
և աւետարան, Սաղրնփողոցին (<Սաղաջփողոց) կուղպակ» (Բաղ-  
նայր ԺԳ ԲԱՍ 170) «վասն ամիրսպասալար Զարարէի հոգոյն հար  
շահրշահի (<Շահանշահ)» (նտ), «Կոստրնդին (<Կոստանդին)  
կաթողիկոս հոռոց» (Հովհաննավանք ՈՂԲ ԿՂՀ 95), «Եւ կամաւ  
Կոստրնդեայ կաթողիկոսի» (Բջնիի ՉՄՎ): Բառասկզբում ա>ր  
փոփոխությունը մեծ մասամբ տեղի է ունենում ռ, դ բաղաձայն-  
ների առաջ. «Ետու... դեալին Ըղալանին (<Աղալան) հողերն»  
(Բանատ ՉՉԵ Գ III 80), «Հաստատեցար առաջնորդը սր ուխ-  
տիս... Ըստակ (<Ռստակէս<Արխտակէս), Սարգիս Փայլակ»  
(Աձրնկալ ՈՄՉ ՄՎ), «մեզ յիշատակ կատարեն՝ զհնամար զուա-



բակաց և բուստ (<առատ) բոսնկաւ (<ոսնկաւ)» (Ամազու  
Չեկ Դ III 216):

Բ. Մի շարք բառերում ա ձայնավորի փոխարեն փորագրված է է զիրք, որ հավանաբար արտացոլում է հանաչեղվային ա-ի ա-նաչնաչեղվային միջին բարձրացման արտասանությունը՝ ա> ան> է բնթացքով: Այս փոփոխությունը անձանոթ է ոչ միայն հին գրական լեզվին, այլև միջին հայերենին և լայնորեն դիտվում է հասկացես արդի արեւլահայ բարբառներում: Ղարաբաղի, Շամախի, Մեղրու, Ն. Զուղայի, Կարճևանի և նրանց հարող մյուս բարբառներում ա> է հնչյունափոխություն է առաջանում բառամիջում, անկախ շեշտի ազդեցությունից, հաճախ շեշտակիր փեճակում. օրինակ, պէմբակ (<բամբակ), պէնչար (<բանչար), շեփէր (<շարար), պէն (<բան), պէնալ (<բանալ), կ'նեզ'աա (<զանգաա), բէց (<բաց), ձէխ (<ձախ), ժէնգ (<ժանգ), խէ-ռուր (<հարիւր)<sup>19</sup>:

Մի բանի բարբառներում ա> է փոփոխությունը նկատվում է մեծ մասամբ բառակզրի նախաշեշտ կամ շեշտակիր դիրքում. այսպես, Խոյի բարբառում ունենք՝ էրին, էրմիզ, էժան (<արին, արմուկն, արժան), Կարնո բարբառի որոշ խոսվածքներում՝ էնէլ, էխտել, էվէնալ (<անել, յաղբել, աւելանալ), Մշո, Շատախի, Վանի բարբառներում՝ էլուր, էրուն, էրմունգ, էրժար (<ալիւր, արին, արմուկն, արժար)<sup>20</sup>:

Այստեղից, պետք է կարծել, որ Ժ—ԺԴ դարերի վիմագրերում տվանդված ա> է հնչյունափոխության վկայությունները կարող էին առաջանալ հիշյալ բարբառների ազդեցությամբ: Վիմագրերում տվյալ հնչյունափոխության նկատված դեպքերն են. «Կատարեցար զէկեղեցիս Ախէլֆալաֆիս (<Ախալֆալաֆիս)» (Անի Չե Դ I 68), «Այս է հանկիստ շնորհաց Աբրէհամ (<Աբրահամ) քահանայի» (Կեչառիս ՉԻԲ ՍԲ), «Ես՝ Խաթուիս հաւէտլորս (<հաա-

19 Կ. Գավրյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 24, Բ. Բաղրամյան, Շամախի բարբառը, Երևան, 1964, էջ 18, է. Ազայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 23, Հ. Ահառյան, Քննություն Ն. Զուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 52, Հ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 20:

20 Մ. Ասատրյան, Խոյի (Ուրմիայի) բարբառը, Երևան, 1962, էջ 25, Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 14, Հ. Ահառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1959, էջ 29—30, Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 34:



տաւոր — այստեղ՝ միանձնուի, կույս հավասար) միաբանեցայ սր նշանիս» (Հոռոմայր ժԳ)<sup>21</sup>, «ՄԲ խաչս բարեխաւս Ուստիան հաւետուորին» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 109), «էտ ՚ի դէմէկան» (<դանեկան) (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 58), «Կանկեցաւ խէչս» (<խաչս) (Անի ՈԿէ Գ I 71), «Ես՝ Ամիրբէկս կանկեցի զխէչս (<խաչս) (Սիսիան ՉՄՁ 91), «Ես՝ Տէրունս որդի Խալըլին իմ ազրէրացոյս կանկեցի զխէչս» (Թումանյան ՉԼ ՄՎ): նաև խաչ բառից կազմված Խեչերես անձնանվան մեջ. «Ես՝ Շանուշս կենակից Խէչերեսի անդարձաւ Խէչերեսին (<Խաչերես) շինեցի զբուրջներս» (Անի ժԳ Գ I 4): Խաչ, Խաչերես բառերում ա > է փոփոխությունը պետք է բացատրել այդ բառերի անհնչյունափոխ, նախնական ձևերում ա ձայնավորի այ արտասանությամբ՝ խայչ, որ բազմիցս վկայված է նույն ժամանակների այլ վիմազրբերում. «Ես՝ Սարգիս քահանայ եւ Մեծանց բոյր իմ կանգնեցար զխայչս» (Աշտարակ ՉԻԲ ՄՎ). «Ազգին է խայչս» (Անի ժԳ Գ I 65) և այլն: Իսկ, ինչպես հայտնի է, այ երկրարբառի վերածվելը է ձայնավորի օրինաչափ է միջին հայերենում և հատկապես քննվող ժամանակաշրջանի վիմական բնազրբերում: Խաչ > խայչ փոփոխությունը ավելի հանդամանալի քննում ենք «Հնչյունների հավելում» բաժնում:

Գ. նախորդ հնչյունափոխության հետ նույնը պետք է համարել ա ձայնավորի վերածվելը ե-ի, որի հնչումը վիմական բնազրբերի տառադարձումներից դատելով վաղուց նույնացել էր է-ի հետ: Բազմաթիվ օրինակներից մեջ ենք բերում մի քանիսը: նախնադույն հիշատակությունը գտնում ենք Ալամանի ս. Անանիա հին տաճարի շինարարական արձանագրության մեջ, որ փորագրվել է է դարի կեսերին. «Քսան եւ եթն եմոյ Հերակղի բարեպաշտ թագաւորի...» (Օրճ ԻՏ 395), այստեղ ամոյ (<\*ամի) բառի փոխարեն պարզ կարդացվում է՝ եմոյ: նույն ժամանակների այլ վիմազրբերում բառս կանոնավոր է. օրինակ, Բագավանի տաճարի 639 թ. բնազրում՝ «Քսան եւ մի ամոյն (Օրճ ԻՏ 371): Ա > Ե փոփոխության վկայությունները հետագա դարերում ավելի հաճախանում են «Ետու :Ա: Եւծարի (<արծար) խաչ» (Սանահին ՊԵ ԿՂՍ 152): «Ջեանուրբենն (<գայտնուրբենն) ժամ նրջիսին ար-

21 Առնում ենք Ս. Տեր-Ավետիսյանի անտիպ հավաքածուից. զգալի տարբերքումներով հրատարակված է Ա. Ջալալյանց, Ճանապարհորդություն... Ա, էջ 98:



նեն» (Մաթեր ԶԽԶ ՄՎ): «Գնեցի դսր նշանս եւ զընդացակն (<զաղացակն) եւ տվի վանք» (Մեծարանց ԶԽԲ)<sup>22</sup>: «Ես՝ Ազրէ-րիկ տվի... ջնդացն (ջաղացն ջրաղացն)» (Արդանիշ ՈԿԵ ՄՎ, անտիպ) «Խիւլայս ջնդացն (<ջաղաց) ի վանքս տվի..., ով զընդացս խլէ, յայ նդովեսցի» (Հայրավանք ԺԳ ՍԲ): «Եսու լծ: եւ ի: ղեհեկան (<ղահեկան)» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 56, 74): «Ես՝ Վարդաշահ եսու... Ս: ղեհեկան (<ղահեկան)» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 52): «Ես՝ Լուսեղէնս տվի... ղեհեկան» (Անտառոտ ՈՂԷ ՍԲ) :Ա: իմ ծնողացն, տւր :Ա: Յեսմկանն (<Յասմիկ)» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 42), որ Բագնայրի ԺԳ դ արձանագրութեան մեջ հիշատակված է Յասմկանն (<Յասմիկ). «:Ա: իմ հարն, :Ա: Հարկեարին, :Ա: Քոյրկանն, :Ա: Յասմկանն» (Բագնայր ԺԳ ԲԱՍ 202)<sup>23</sup>: «զԱրեհամ կրանաւորս կազմողս յիշեցէք» (Վ. Ղարան-լուխ ՈԿԹ)<sup>24</sup>, նույն անձնանունը Կարսի սարսպի արձանագրու-թեան մեջ՝ Արեհմայ (<Արահմայ) (ՈՉԵ ՍԱՐ 103):

Գ. Ա. > ի հնչյունափոխությունը գիտվում է միայն Գաղի (Գատի) վանք անվան մեջ, որ ավանդվել է նույն հուշարձանի ԶԺԴ Բ. նվիրագրում. «Միաբանեցա սր ուխտիս Գիղու վանից»<sup>25</sup> (այլուր՝ Գատի վանացս, Գաղի վանս, Գաղի վանից, Գաղու վա-նացս): Գիղու վանից գրությունը հավանաբար այդ բառի վրա-ցական արտասանության աղղեցությունը կարելի է բացատրել, եթե բացառվի պատահական վրիպման հնարավորությունը:

#### Ե. Է ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Հին հայերենի գրի առնվելու ժամանակ Ե գրով արտահայտ-վող հնչույթը զգալապես աարբերվել է Է-ով արտահայտվողից: Ե այդ պատճառով նրանք մեսրոպյան այբուրենում գրավում են ի-րենց ինքնուրույն տեղերը: Ենթադրվում է, թե Ե ձայնավորը սկզբնապես արտասանվել է ավելի բաց, արդի հայերենի է հըն-չյունի նման, մինչդեռ հին հայերենի է ձայնավորի արտասանու-թյունը համապատասխանել է Ե + յ երկրարբուին, որից և այն առաջացել է: Ե, Է հնչյունների այսպիսի արտասանությամբ են պայմանավորված այդ գրերի ուղղագրության հիմնական կանոն-

22 Խ. Գաղյան, նշված հոդվածը, «Բանասեր», 1901, էջ 138:

23 ՏԷ՝ ս նահ 2. Ահաոյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 519:

24 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ Հարաբարագեաներ..., էջ 189:

25 Ա. ՏԵ՝-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վաները..., էջ 96:



ներք մեսրոպյան շրջանի գրական երկերում, ըստ այդմ. Ա. Բա-  
 ասկղբում է ունենում են միայն սակավաթիվ միավանկ բառեր՝  
 էգ, էմբ, էակ, էջ, որ շեշտից դրկվելով կարող էր փոխվել ի-ի՝  
 իշոյ, իգաց և այլն: Ե կարող էր լինել թե միավանկ և թե բազմա-  
 վանկ բառերի սկզբում, որ նախաշեշտ կամ շեշտազուրկ դիրքում  
 հնչյունափոխության չէր ենթարկվում՝ եզն > եզնածախ, եզր > եզ-  
 րական, եզրայր > եզրայրասպան, եղեամն > եղեման, Բ. Բառա-  
 վերջում և ձայնավորներին նախորդելիս մեծ մասամբ գրվում է՝  
 է՝ ռոպէ, մարգարէ, էառ, և աճման դեպքում մնում էր անփոփոխ՝  
 մարգարէական, ռոպէահամար, բազէակալ:

Սակայն ե, է ձայնավորների հնչման և գրության այս գրու-  
 թյունը երկար չի շարունակվել: Արդեն հնագույն վիմական արձա-  
 նագրություններում, որոնք վերաբերում են Զ—է դարերին, նը-  
 կատվում են նշված օրինաչափությունների այլևայլ խախտումներ,  
 որոնք ակնհայտ վկայում են այդ հնչյունների արտասանության մեջ  
 տեղի ունեցած որակական զգալի փոփոխությունների մասին: Այդ  
 խախտումները առանձնապես նկատելի են բառերի վերջում, բա-  
 րամիջում միջբաղաձայնային դիրքում կամ ձայնավորներից ա-  
 ռաջ, երբ հանդիպում են ե, է տառաձևերի գործածության շփոթ-  
 ման, իրար փոխարեն օգտագործելու դեպքեր<sup>26</sup>: Իբրև օրինակ  
 սովորաբար մատնացույց է արվում հայերեն հնագույն թվակա-  
 նով արձանագրությունը՝ Ուխտատուր վանականի ՄԼԲ (783) թ.  
 վիմագիրը՝ փորագրված Թալինի մեծ տաճարի մույթի վրա, որ-  
 տեղ սյարդ վկայված են՝ բե (=բէ), խլե (=խլեմ, խլես, խլէ)<sup>27</sup>:

Սակայն հնագույն հայկական վիմական արձանագրություն-  
 ների ուսումնասիրությունից սյարդվում է, որ նրանցում դիտվում  
 են ե, է ձայնավորների շփոթման ավելի հին վկայություններ, ո-  
 րոնք հնարավորություն են տալիս այդ փոփոխության ձևավոր-  
 ման առաջին արտահայտությունները համարել Զ—է դարերից:  
 Այսպես, Մրենի տաճարի է դարի (638—640 թթ) շինարարական  
 արձանագրության մեջ հիշատակված է՝ «ի տանուտերութան

26 Ե և է գրության ճշտագույն սահմանները որոշված չեն: Մենք այժմ հետե-  
 վում ենք Մխիթարյանների սահմանած ուղղագրությանը, մինչդեռ հնագույն ձե-  
 տագրերը ունեն միայն բե, եբե, բեբեի, բեբիւր և այլն: Այնպես որ Զ և է դարե-  
 րի այդգիտի գրությունները հնչյունափոխության արդյունք չեն, ինչպես որ գրում  
 է հեղինակը, դրանք պետք է բնդուեն իբրև գրության իրական փաստեր (ձան-  
 խոբ.):

27 Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913, էջ 10,  
 տախտակ է:



(= տանուտէրութեան) ներսեհի» (Օրժ ԿՏ 401): Գրեթէ նույն ժամանակներում փորագրված Բագավանի տաճարի կառուցողական արձանագրում ևս կարգացվում է՝ տերութեան Վահայնա, փոխանակ կանոնավոր՝ տէրութեան Վահանա (Օրժ ԿՏ 393), իսկ Հոփիսիմե տաճարի պատին փորագրված Կոմիտաս կաթողիկոսի 618 թ. հիշատակագրութեան մեջ պարզ կարգացվում է. սրբոյ Հոփիսիմեի (սպասելի էր՝ Հոփիսիմէի): Երուսաղեմի է դարի նընաշավոր խճանկար արձանագրում Եսայի անունը հավաքված է՝ զսուրբ էսայի, որ վկայում է, թե ե, է գրերի շփոթումը տեղի է ունենում նաև բառասկզբում<sup>28</sup>: Հետագա դարերի արձանագրութուններում և հնագույն ձեռագրերում ե, է գրերի, ուրեմն և հնչյունների շփոթման դեպքերը ավելի հաճախանում են: Անիի պալատական եկեղեցու կառուցողական արձանագրութեան մեջ, որ քաղաքի հնագույն վիճական հիշատակագրութունն է, (Թ—ժ դդ.) պարզ կարգացվում է. «շինեցի սուրբ զէկէղեցի», այսինքն բառամիջում երկու անգամ ե-ի փոխարեն փորագրված է է: Տաթևի վանքի Գավազան-սյան ՅԵԴ (895) թ. կառուցողական արձանագրութեան մեջ նկատվում է հակառակ երևույթը՝ է գրի փոխարեն փորագրված է ե. «Հրամանաւ ւժապահ տերանց (=տէրանց)... կանկնեցաւ արձանս» (Դ II 12): Բացառական հոլովակազմիչը է-ի փոխարեն ե-է փորագրված Գնդեվանքի 931 թ. բնագրում. «Ի Զ: կարգես (=կարգէս) առաջ արարի» (Դ III 14): նույն փոփոխութունը դիտվում է նաև հայերեն հնագույն բնագրերում. Աղաթանգեղոսի նորահայտ կրկնագիր ձեռագրում, որ ուսումնասիրողները Թ—ժ դարերի գործ են համարում, հանդիպում են ավելի հաճախ՝ քե, եքե, քեպեա, եի, եիւ, եւ, եաւ, եիւ, եին, քան սրանց ավանդական գրութունները՝ քէ, քէպէա, եքէ, զիաէւ, վկայէւ, լուսաւրէ, քաւուսցէ և այլն:

Մյուս կողմից, կրկնագրում վկայված են նաև ե-ի փոխարեն է-ի գրութեան դեպքեր՝ կէցէ, մէնակիւ, մէնամարտիկ: նույն իրողութունը նկատվում է նաև Կյուրեղ Երուսաղեմացու երկի Թ դարի ձեռագիր պատառիկներում, որտեղ գրչագրված են՝ քե, եքե, եւ (=իւ), եմանուէղ, շե (=չէ), կարծեին, դնեին, բայց նաև՝ էսայի (=Եսայի), էրուսաղեմացի և այլն<sup>29</sup>: Այս բոլորը ակներև ապացույց են, որ այդ ձեռագրերի ընդօրինակման ժամանակ

<sup>28</sup> Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրութեան, էջ 1, տախտակ Ա:

<sup>29</sup> Տե՛ս Հ. Անառյան, Քննութուն կրկնագիր Աղաթանգեղոսի, «Հանդես ամսօրյա», 1913, № 1, էջ 1—19, Ս. Քոլանջյան, նշվ. հոդվածը, էջ 228:



ավյալ ուրաում ե, է գրերը բառամիջում և բառավերջում միևնույն հնչումն ունենին, ուստի և կիրառվում էին իրար փոխարեն:

Ժ—ԺԳ գրերի վիմական բնագրերում և միջին հայերենի գրական հուշարձաններում ե, է հնչյունների և գրերի նույնացումը համատարած է դառնում և տարածվում բոլոր բաների վրա: Այդ գրերը բոլոր դիրքերում փոխարինում են իրար բառակազմում, բառամիջում և բառավերջում, միջձայնավորային կամ միջբաղաձայնային վիճակում: Ահա մի քանի օրինակներ տարբեր հուշարձանների բնագրերից. Բառակազմում. «Արդ, էթէ այլ ոք հակառակել ջանայ, այլ աւելի ոսամ յուղէ» (Արուճ ՅԺԶ ՄՎ)<sup>30</sup>; «էտու զիմ էզիս... էլի ծառաութին» (Արուճ ՆԾԶ ՄՎ); «էհար Արուճ զԿոշ եւ զԳաւառն» (Արուճ ՅԺԶ ՄՎ): Այս կարգի շեղումների մեջ պետք է նկատի ունենալ բաղաձայնով սկսվող միավանկ բայերի անց. կատարյալ ժամանակի ձևերը, որոնց աճականը կանոնավոր ե-ի փոխարեն հաճախ փոքրագրված է է. օր. «էտվաք զայգի» (Մշակավանք ԺԳ ՄՎ), «զլխահակ վեր էկալաք» (Օձուն ԶԻԴ ՄՎ), «էտու զիմ եզին» (Քրիստափորի վանք ՆԲ ՄՎ), «խաշա առաջնորդի էկեղեցոյն է» (Գնդեվանք 936 թ. Դ III 14), «յառաջնորդութեն հար էսանայ» (Սանահին ՆԿ ԿՂՍ 181), «գրէցին բարէպաշա էպիսկոպոս» (Սանահին ԺՍ ԿՂՍ 99), «էտու աւետարան էսայի» (Անի ՈԶԴ Դ I 35), «հատուցին էրկու ար պատարազ» (Անի ՈԶԹ Դ I 55), «Մխիթար էրէց հաստատեց» (Աղավնաձոր ԶԽԱ Դ III 37), «ես՝ Աշոտ որդի էրկարա տարածամ էլի յաշխարհէ» (Հովհաննավանք ԺԳ—ԺԴ ԿՂԶ 78), «այս է շիրիմ հանդիստ եւ բնակարան էրէմիաի երածըշտի» (Հատիճ Զէ ՄՎ): Բառամիջում, միջբաղաձայնային դիրքում. «Եւ ի տերութի Սմբատայ հաց ասպարապետի Բագրատոնոյ» (Արուճ ՅԺ ՄՎ); «Ազատէցի... զշալակաւոր ի բաժէ» (Արուճ ՆԼԶ ՄՎ); «Որ ոք սպասաւորէցան ի սուրբ էկեղէցիս» (Կոշ ՆԼ ՄՎ); «Դատաւորն աագէրէցն, մանկեազն» (Կոշ ՇԺ ՄՎ); Գրէցին ինձ յիշատակ յալիտէնից... զտան Պէտրոսի որչափ եկեղէցիքս ի շինութենէն» (Սանահին ԺԱ ԿՂՍ 97); «Եւ ի տերութե բաղաքիս» (Անի ԺԳ Դ I 1); «Ե տերութես մանդատորթախուցէս ամիրոպասաւար շահնշահ Սարգսի» (Անի ԺԲ Դ I 2); Բառերի վերջում. «ես՝ եղիշա ի :Զ: կարգես (=կարգէ) առաջ արարի» (Գնդեվանք 32 Դ 14); «Յասմենտ շիշխէ ոք» (Քրիստափորի վանք ՆԲ ՄՎ); «Թե ոք բնդիմանա (նտ ՄՎ):

30 Գ. Հովսեփյան, Բարտեղ հայ հնագրութեան, էջ 11:



«Քե՛ս ամ կամի» (նա ՄՎ): «Առնեն փնոյ թագուհեաց քազոհե» (Թա-  
լին Ժ ՄՎ): «Եւ :ե: ուր (<աւր) ժամ առնե» (Թալին նՄ ԶԱՎ): «Եւ  
էքե որ իմ վճռիս դիմադարձ լինի» (Թալին նԼԶ ՄՎ): «Եւ որ որ  
ստե կամ յափշտակել շանա» (Մրեն 992 ՕրԾ Մ 3):

Մեսրոպյան այբուբենի ե, է տառաձևերով արտահայտվող  
հնչույթների որակական-արտասանական տարբերությունների վե-  
րացումը հետագա դարերում և որոշ դիրքերում նրանց մոտեցումը  
կամ լիակատար նույնացումը պատմական ընդհանրական հըն-  
չյունափոխություն է բովանդակ հայերենում և այդ պատճառով  
շինծու է հայագետ Ի. Աբուլաձեի վարկածը՝ վրացերենի ազդեցու-  
թյամբ բացատրելու տվյալ փոփոխությունը<sup>31</sup>: ներկայացնելով Ժ  
դարի մի վրացերեն ձեռագրի հայերեն հիշատակագրությունները,  
որոնցում երբեմն ե, է գրերը գործածված են իրար փոխարեն  
(պահե ի շաբե, ողորմէա, զուսաուէրէց դանձն զմէր և այլն), հե-  
ղինակը դրանք վերագրում է ձեռագիրն ընդօրինակող վրացի դը-  
պիրներին, որոնք այնքան էլ հմուտ չլինելով գրարարի իմացու-  
թյան մեջ, լուսանցագրությունները կատարել են Տառ-կղարջևիթի  
հայ բնակչության խոսակցական լեզվով՝ մայրենի վրացերենի  
զգալի ազդեցությամբ:

Մինչդեռ ավելի բնական էր կարծել, որ վրացերեն ձեռագրի  
հայերեն հիշատակագրությունները պատկանում են ձեռագիրն  
արտագրող տեղացի հայ գրիչներին, որոնք օրհներգերի վրացե-  
րեն ժողովածուն ընդօրինակելիս, նրա լուսանցընելում թողել են  
բնագրում շեղած տարբեր մակագրություններ՝ իրենց մայրենի  
բարբառով, անկախ վրաց լեզվական միջավայրի ազդեցությունից  
և միանգամայն վարժ ու կատարյալ գրչությամբ:

Որ վրացերեն ձեռագրի գրիչները կամ նրանցից ոմանք հայ  
են եղել, վկայում է նաև Մուսէս (<Մովսէս) հայկական անվան  
հիշատակությունը լուսանցագրերում, որ հենց իր՝ Ի. Աբուլաձեի  
կարծիքով, գրիչներից մեկն է, ազգությամբ հայ<sup>32</sup>:

Հնչման նույնացումից բացի, հին հայերենի ե, է ձայնավոր-  
ները միջին դարերի վիմական բնագրերում ենթարկվել են նաև  
այլ կարգի փոփոխությունների, ըստ որում, յուրաքանչյուր առան-  
ձին դեպքում դժվար է որոշել, թե հնչյունափոխության ենթարկ-

31 ՏԷ՛ս Ի. Աբուլաձե, X դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակա-  
գրությունները, «Բանբեր Մատենադարի», № 4, 1958, էջ 37, 40:

32 նույն տեղում:



վելիս ինչպիսին է հղել հնչյունափոխվող ձայնավորի որակը, արդյոք նրա հնչումը համապատասխանել է գրությանը կամ ավանդական արտասանությանը, թե գրվել ու արտասանվել է նոր օրինաչափություններին համապատասխան: Օրինակ, գրաբարի երէց բառը մի շարք արձանագրություններում ավանդված է նաև երէց գրությունը. «Ես՝ Յովանէս աւագ երէց կանգնեցի զխաշս» (Գաշրենդ ՉԳ ՍԲ), որ մտածել է տալիս, թե բառս արտասանվել է ըստ ավյալ գրություն՝ երէց: Վիճադրերում այս բառը ամենուրեք նախաշեշտ դիրքում վկայված է հնչյունափոխված՝ իրիցուն (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 217), իրիցու (նա 218), իրիցակնոջ (Հոռոմոս ԺԳ ՍԱԲ 148, Անի ՈՂԱ Գ I 17), յիրիցո (նա ՈՂԶ Գ I 18), իրիցապետ (Անի ՈԿԶ Գ I 61), այսինքն նախաշեշտ ե, է ձայնավորները փոխվում են ի-ի: Հարց է առաջանում, երէց բառի մեջ ո՞ր ձայնավորն է հնչյունափոխվել ի-ի, ե, թե է: Եվ բանի որ վիճադրերում ավանդված գրությունը զժվար է ստույգ պատկերացում կազմել ե, է գրերով արտահայտվող հնչյունների մասին, ուստի նրանց կրած փոփոխությունները քննում ենք ըստ հին հայերենի ավանդական գրություն, այսինքն ե-ով կամ է-ով ավանդված բառերում նրանց կրած փոփոխությունները առանձին-առանձին:

Ա. Հին հայերենի Ե ձայնավորի փոփոխությունները: Գրաբարում Ե հնչյունը իրրև կանոն սղվում կամ հնչյունափոխվում էր հազվագեղ, այն էլ մեծ մասամբ դ, ու բաղաձայններից առաջ, նախաշեշտ դիրքում՝ ասեղն-ասղան, քիրեռն-քիրառն, կիւրեղ-կիւրղի: Միջին հայերենում այս հնչյունը մյուս անկայուն ձայնավորների նման հնչյունափոխվում կամ սղվում էր այլևայլ դիրքերում: Վիճական արձանագրություններում ևս նկատվում են ե-ի փոփոխության բազմաթիվ օրինակներ, որոնցից նշելի են. Ա. Ե > ի — երէց բառի մեջ անման ժամանակ և հավանաբար արդյունք է առնմանիչ ազդեցության, որ գործում է շեշտակորույս դիրքում հաջորդ է ձայնավորին փոխարինած ի-ն, այսպիսով, պետք է կարծել, որ նախ տեղի է ունենում երէց > երից և ապա ի ձայնավորի հարնթաց առնմանությամբ՝ իրիցու, գրաբարում սպասելի էր կանոնավոր՝ երիցու, երիցունք, երիցուքին: Բազմաթիվ հիշատակագրություններից մեջ ենք բերում մի բանիսը: Նախնագույնը Ազարակի (Աշտարակի շրջ.) տապանագրում. «Այս է հանգիստ Սահակ իրիցորդոյ» (3Ղ 941 Բ. Հով ՔԱԲ 12), իրիցանի (Անի ՉԺԸ Գ I 24, նա ՉԼԸ 22, նա ՉԻԹ 23, նա 25 Փարպի Ոճ ՄՎ), իրիցակին (Անի ՈՂՄ Գ I 17, Հոռոմոս ԺԳ ՍԱԲ 148), իրիցայ (Անի ՈՂԶԳ



Ի 18, Հերհեր ՇՂԸ Գ III 49, Հովհաննավանք ԶԿ ԿՂՀ 115, Հոռո-  
 մոս ԶԺԵ ՍԱՐ 158, Արշոտոփե ժԳ ՍԱՐ 192, Բաղնայր ՈԶԲ ՍԱՐ  
 201, Խծկոնք ՈԶԲ ՍԱՐ 211, նա ՈԿ, ՈԿԲ), Վարդիրիցո (Պատա-  
 վածոր ՈՂ ՄՎ, Խորանաշատ ՈԿԱ ՄՎ, Բարձրաբաշ ժԳ ՄՎ, Մա-  
 րինե ԶՂ ՄՎ, Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 44), Իրիցուրի (Սաղմոսա-  
 վանք ժԳ ՄՎ), Իրիցու (Անի ՆԶԳ Գ I 46, նա ՆԶԳ Գ I 49, Հաղ-  
 րատ ժԳ ԿՂՀԲ 217, 218, Բաղնայր ԶԺԱ ՍԱՐ 187, Խծկոնք ՈԶԲ  
 ՍԱՐ 214, Ղաշաղան Շէ ՄՎ), Իրիցի (Ամաղու ԶԽԱ Գ III 238),  
 Իրիցապետ (Անի ՈԿԵ Գ I 61), Իրիցուրին (Լմբատ ժԲ ՄՎ): Ամե-  
 նեցուն > ամենիցուն, վկայված է Բնունիսի որմնափակ խաչքարի  
 ԶԶ Բ. հիշատակագրում. «Ամենիցուն լինէր սիրելի» (Գ II 116):  
 Փոփոխությունը հավանաբար առաջանում է բառամիջի երկու և  
 ձայնավորների տարնմանությունը: Նույն տարնմանության հետե-  
 վանքով Սենեքերիմ անձնանվան մեջ առաջին ե-ն փոխվում է ի-ի՝  
 «Սինաֆերիմ Թոռն աւագ Սենաֆերիմա» (Հաղրատ ժԳ ԿՂՀԲ 187):  
 «Ի Բագաւորութեան Սինաֆերիմա» (Բլուր նեԱ ԿՂՀԳ 88): Եւ  
 հոգնակերտ մասնիկը իւ է փորագրված Երևանի Կաթողիկէի ԶՄ  
 Բ. բնագրում վկայված խղիւովն բառում. «Տլի դիմ ի: կուղղակն  
 ներքնատներովն ու խղիւովն» (<խուղ, խղերով = խրեիք, աւ-  
 դաւար): Ենով > Ենով անձնանունը Եղվարդի Զորավար տաճա-  
 րի ժԳ դ. մի նվիրագրում փորագրված է Ենով. «Են՝ Ենով քա՛հ  
 տլի դիմ հայրենի այգին» (ՄՎ): Նույն անունը Ենով, Յինով ձևով  
 հանդիպում է նաև ժԳ—ժԵ դդ. ձեռագրերի հիշատակարաններում,  
 որ ապացույց է այդպիսի արտասանության:

Հավաքական տոհմանունների սեռականի վերջավորությունը՝  
 Ենի, Ենց վկայված է Ինց. «Ետու ի սր Ածածինս Խամբուշինց  
 <Խամբուշենց> դահեկանք ի:» (Անի ՇԳ Գ I 51): Այլ օրինակներ  
 չունենալով, դժվար է ստուգապես հավաստել այս հնչյունափո-  
 խությունը, ըստ այդմ հնարավոր է նաև փորագրողի պատահական  
 վրիպումը: Ուղեաց > ուղեց, Մրենի տաճարի ԶԻԵ Բ. բնագրում  
 վկայված է ուղից, հավանաբար հաջորդ յուրիֆ-ի համանմանու-  
 թյամբ. «Շնահատար արասցէ պարոն Սահմաղինին ուղից ի յոր-  
 դիր»:

Ե > ի փոփոխությունը տեղի է ունենում նկարագրված բար-  
 բառների մեծ մասում: Իրրե բնդհանուր կանոն բառամիջի երկու  
 ե-երից առաջինը վերածվում է ի-ի Ղարաբաղի, Շամախիի, Ն.  
 Զուղայի, Մեղրու, Խոյի, Կարնո, Արարատյան բարբառներում:  
 Նույն փոփոխությունը դիտվում է նաև միջին հայերենի գրական



հուշարձաններում իրեֆ, իրիցկին, իրկունֆ, մինակ, դին <երեֆ, երիցակին, երկունֆ, մենակ, դեն<sup>33</sup>: Վիմագրերում ավանդված ձևերի հետ համադրելի են հիշյալ բարբառներում պահպանված՝ քիքել (*<քեքե*), արեվ (*<աերե*), շիւէփ (*<շերեփ*) (*Ղարաբաղ, Շամախի*), ցիւէկ (*<ցերեկ*), ֆիւէլ (*<ֆերել*), իրես (*<երես*) (*Մեղրի*), յիրիզուն (*<երեկոյ*), յիրէֆ (*<երեֆ*) (*Կարնո*), ավիւրէլ (*<աերել*), քրիզու (*<երեկոյ*) հնչյունափոխված բառերը: Արևելահայ մի քանի բարբառներում ավյալ փոփոխությունը դիտվում է նաև միավանկ բառերում՝ րիլ (*<րել*), շիշ (*<շեշ*), ցիլ (*<ցել*) (*Մեղրի — 33*), (*Ղարաբաղ — 29*), իփ, յիփ (*<երք*) (*Ազուլիս — 44, Քիֆլիս*):

Բ. Ե > ա, ինչպես և միջին հայերենում, այս փոփոխությունը դիտվում է եղբայր բառի սկզբում, ղ բաղաձայնից առաջ: Բաղձաթիվ վկայություններից հիշենք մի քանիսը աարբեր հուշարձանների տարբեր ժամանակների վիմագրերից. «Ախրաւ որդաւրս» (*Աղավնաձոր ՉեՍ. Դ III 37*), «Շնոհոր աղբաւ» (*Գոմոր ՉԺԶ Դ III 83*), «...ոչ որդի ունէր ոչ աղբէր» (*Հերհեր ՉեԴ Դ III 54*), «...: աղբէր ի քս փոխեցան» (*Չառիթափ ՉեԶ Դ III 195*), «Եւ իմ աղբես Մնայատ» (*Հաղարծին ՈԿԸ ՄՎ*), «իմ աղբաւրն» (*Բարձրաբաշ ԺԳ ՄՎ, Սաղմոսավանք ԺԳ ՄՎ, Հառիճ ՉԺԳ ՄՎ, Փարսի ԺԳ ՄՎ*), «...իմ աղբէրս... իմ աւագ աղբաւրս» (*Խաթրավանք ՈԾԳ ՄՎ*), «...իմ աղբրացէ կամ իմ որդից» (*Վարդենիք ԺԳ ՄՎ*), «ես՝ Աղբաւր Ասեղս» (*նա ԺԳ ՄՎ, Ալուշալու ԺԳ ՄՎ*), «իմ աղբայրես» (*Հոռոմայր ԺԳ ՄՎ*), «Եւ աղբայրս իմ սրախողող» (*Գաշթենդ ՉՄ ՄԲ*), «...գնել էի յիմ ախրաւրէն» (*Ամաղու ՉեԶ Դ III 216*): Նույն փոփոխությունը նկատվում է նաև եղբայր > աղբայր բառից կազմված անձնանուններում, տեղանուններում և այլ բարդություններում. «Աղբէրկանն (*<աղբայրիկ*) եւ Սիրեթե» (*Անի ԺԳ Դ I 67*), Աղբերկա հողն (*Հերհեր ՉեԶ Դ III 52*), Եւ Աղբերկան (*ն. Գեաթիկ ՉեԲ ՄՎ*), «ես՝ Աղբայրիկ շինեցի զհկեղեցիս» (*Տեղեր ՈԶ ՄՎ*), «տուին Ա: ժամ Աղբայրա» (*Վաճառ ԺԳ Հով ԽԱՂ III 33*), «ես՝ Աղբայրու (*<եղբայրու*) կանգնեցի խաշս» (*Հերհեր Չե Դ III 54*), «ես՝ Գերգ եւ Աղբրանցս միարանեցար սր ուխախս» (*Տեղեր ՉեԲ ՄՎ*), «Աղբէրացելս (*<եղբայրացեալ*) և Ազատաւրի միարանեցար Աժաժնիս» (*Շխմուրատ ԺԳ ՄՎ*), «:Բ: Աղբէրաղեղին (*<եղբայրաղեղ*) և զայլն մեզ առնեն» (*Հաղբատ ՉեԷ ԿՂՀԲ 159*), «զԱղբայրափոսն այդի անկեցի» (*Վերնաշեն ՉԶ Դ III 99*), «ի տա-

<sup>33</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 49.



բումն և արարաբայրածամ» (<եղբայրածամ) (Ն. Վարադ ՈՄԷ ՄՎ), «հորաղբայր (<հաւրեղբայր) Սմոյատայ» (Ալայադ ԺԳ Գ III 113): նույն բառի հոգնակի թվի տարրեր ձևերում, «Հասանա և Սարգսի՛ իմ աղբէրացն» (Թանատ ԺԳ Գ III 78), «ոչ յիմ հաւր հայրենեցն և ոչ իմ աղբարացն» (Ամադու ԶԻ Գ III 218—220), «ես՝ Տէրունս իմ աղբէրացովս կանկնեցի զխէշս» (Թումանյան ԶԼ ՄՎ), «:Բ: Ինձ, :Բ: Աղբրացին... ևս՝ Վարդան և ամուսին իմ Աղբրացս միարանեցար» (Հոսոմոս ԺԳ ՍՍԲ 163), «հաւր իմ Աղբայրանոյ» (<Աղբայրանի = եղբայրներ) Գյումուշխանե, խաշբար ԶՄԸ Գ III 200), Աղբայր ստանոյ (Զարբանդ ԶՄԱ ՍԲ):

Գ. Ե>ա հնչյունափոխությունը դիտվում է Սենեֆերիմ անձնանվան գրության մեջ. «Ի թագավորութեան Սինաֆերեմա ևս՝ Գորգ կահնեցի խաշս» (Սարիզամիշ ՆեԱ ԿՂԶԳ 88):

Գ. Ե>ը փոփոխությունը, ինչպես և հին լեզվում, դիտվում է Բարսեղ անձնանվան թեր հոլովներում, շեշտակորույս դիրքում, սակայն ի տարբերություն գրաբարի, վիմական բնագրերում անվան հնչյունափոխված ձևը ամենուրեք վկայված է Բարսղի կամ Բարսրղի, որ ապացույց է, թե երկու դեպքում էլ գործ ունենք ոչ թե Ե հնչյունի սղման հետ, ինչպես գրական օրինակներից ելնելով ենթադրվում է հաճախ, այլ Ե>ը անցման, այլապես առանց Ը-ի հնչման գծվար է ենթադրել իրար հաջորդող Ե և Ղ բաղաձայնների արտասանությունը (Բարսղի): Հնագույն հիշատակությունը ավանդված է Անիի վիմագրության մեջ. «Ի հայրապետութեանն Բարսրղի» (ՈԹ Գ I 2), «այս մեր գիր յիշատակի է ար Բարսրղի» (Նա ՈԻԹ Գ I 12), «յիշատակ վղաց իմոց Բարսրղին և Անդրիասին» (Հաղարծին ԺԳ ՄՎ): Առանց Ը ձայնավորի գրության. «Յամս ամապատի և հոգևոր ան Բարսղի» (Անի ՈԽԹ Գ I 47), «Ի տանի Բարսղի» (Մշկավանք ԺԳ ՄՎ):

Այս հնչյունափոխության բազմաթիվ օրինակներ են տալիս արդի բարբառները: Բացի աղբար, ախբար, ախպլե (<եղբայր) ձևից, որ օրինաչափ է խոսվածքների զգալի մասում և հայադեաների կարծիքով ոչ թե Ե>ա անցման արդյունք է, այլ հնդեվրոպական նախաձևի հնագույն բարբառային տարբերակում, Ում, Լիս ճյուղերի մի շարք բարբառներում Ե>ա արտասանությունը նկատվում է նույնպես բառակցում, հաճախ շեշտակիր վիճակում: Այսպես, Ղարբարղի, Ագուլիսի, Մեղրու, Շամախիի, Ն. Զուղայի բարբառներում ունենք՝ աբազ (<երազ), աբաշա (<երաշա), աբակ (<երակ), աբկար (<երկար), աբկան, աբկանի (<եր-



կանք), արասուն (<երեսուն) և այլն, ըստ որում, այստեղ է >ա տեղի է ունենում Ե ձայնորդին նախորդող դիրքում: Մի քանի դեպքերում է >ա փոփոխությունն առաջանում է ա ձայնավորի առնչմանություն հետևանքով. այսպես է օրինակ, պարակամ (<բարեկամ), անանակ (<աղեղնակ) բառերում, երկու ա-երի առնմանությունում, կանափ (<կանեփ), նախորդ ա-ի առաջընթաց առնչմանությունում (Շատախ — 36, Վան — 33, 269):

Սակայն վիճական բնագրերում հանդիպում են նաև այնպիսի բառեր, որոնցում տեղի է ունեցել նախաշեշտ ե-ի անկում կամ սղում, առանց նույն տեղում ը ձայնավորի ներմուծման, համեմայն դեպս այդ բառերի գրություն մեջ: Սիսիանի Սյունի վանք տաճարի հնագույն, հավանաբար է դարի, հիշատակագրություններում երկու անգամ նույն գրությունում վկայված է՝ Յոհանէս եկեղեցական (Դ II 87—88), ընդգծված բարդության դասական ձևն է եկեղեցական (<եկեղեցի + ա + պան), որ քանիցս հիշատակված է հին մատենագրության մեջ: Հետագա դարերի վիճագրության մեջ սովորաբար բառս փորագրված է եկեղեցական կամ եկեղեցական, ըստ այդմ է ձայնավորի սղման կամ հնչյունափոխության դեպքեր չեն նկատվում նույնիսկ բառի հետագա աճման ժամանակ (յեկեղեցականություն — Անի նՁԳ Դ I 46): Նույնը դժվար է ասել ձեռնվորուրիւն, ձեռնվորահակ բառերի մասին, որոնք վկայված են Օձունի հնագույն տաճարի ԺԳ դարի արձանագրության մեջ «Արժանի էլա Ուձնա ձոնվորուրեան..., ձոնվորահակ... վեր կալա» (ՄՎ), նույն տաճարի ԶԻԴ Թ. մի այլ արտոնագրում փորագրված է կանոնավոր՝ ձեռնաուրուր (ՄՎ)<sup>34</sup>: Այստեղ արդեն սուկա է արմատական նախաշեշտ ե-ի սղում միայն գրության մեջ, թեև նրա փոխարեն ը-ի արտասանությունը անկասկած է շորս բաղաձայնների կուտակումից (ձոնվ) խուսափելու նպատակով: Նույն օրինակում հին հայերենի հրեշտակ բառը ն. վարադ վանքի արձանագրություններում երկու անգամ փորագրված է առանց է ձայնավորի, որը հավանաբար հնչյունափոխվել է ը-ի. «Շինալի եկեղեցույս առաջի հրշտակաց... ասասցեն հրշտակ և մարդիկ եղիցի, եղիցի» (ԺԳ ՄՎ): Նույնը Բագնայրում. «Ի հրշտակարնակ սր ուխտիս ի Բագնայրս» (ՈՂԸ ՍԱՐ 179), իսկ Բզենո Նորավանքի ԺԱ դ. Քրիս-

<sup>34</sup> Բնագրի միակ ընդօրինակությունը պատկանում է Ա. Զալալյանցիին, տե՛ս Ըանասյարհորություն..., Ա, էջ 92: Քննվող բառի երեք հիշատակություններն էլ ունակովել և չեն վերձանվել:



տոսի և հրեշտակների քանդակի տակ փորագրված է. «Երեւնցաւ նմա ւած ՚ի: հրշտեկաւ» (Ժ Դ II 49): Անտարակույս է, որ ընդ-գծված բառերը ժամանակին, տվչալ ոչորտում արտասանվել են հրեշտակաց, հրշտակաց, հրբշտակաց կամ հրբշտակ<sup>35</sup>:

Կարելի է մտածել, թե հրշտակ բառի մեջ այս գրությունը չի ենթադրում ե-ի սղում կամ վերածում ր-ի և այս դեպքերում գործ ունենը բառի հասպավման կամ կրճատ գրության հետ, սակայն այս վարկածը բացառվում է, նախ այն պատճառով, որ այդ բառերը փորագրված են առանց հասպավման դժիկի, և ապա՝ հրեշտակ > հրշտակ փոփոխությունը դիտվում է նաև հայերեն հնագույն ձևապրերում, որ սպացույց է, թե հրշտակ գրությունը այդպիսի արտասանության արդյունք է: Այսպես, Հաղարյան ճեմարանի ավետարանում (887 թ.) բառս քանիցս հիշատակված է հրշտակ գրությամբ, մի քանի դեպքում էլ՝ հրաշտակ, իսկ Կյուրեղ Երուսաղեմացու երկի Թ գ. գրչագիր պատասխիկներում՝ հրշտակ, հրբշտական, հրշտակաց<sup>36</sup>:

Վիմական բնագրերում արտացոլված ե հնչյունի սղումը կամ նրա վերածվելը ր-ի անծանոթ են հին հայերենին և անշուշտ ներթափանցված խոսակցական լեզվից, հայ բարբառներից, որանդ հին հայերենում սակավ հնչյունափոխվող ե ձայնավորը խիտ անկայուն է և կարող է զանազան փոփոխություններ կրել բոլոր դիրքերում: Զանց առնելով բառակցքի դեպքերը, որոնք վիմագր-րերում չեն դիտվում (հմմտ. բրվալ < երևալ, րկաթա < երկաթի, բռէխ < երախ, գրղէցէ < եկեղեցի, բախու < երեկոյ, րխս < երեխայ, րէվան < երևան և այլն. Ղարաբաղ — 29, Ազուլիս — 50, Մնդրի 32), իբրև տվչալ հնչյունափոխության հնարավոր աղուներ կարելի է մատնացույց անել ե-ի սղումը կամ ե > ր անցումը բառամիջում, շեշտակիր կամ նախաշեշտ վիճակում, որ լայնորեն դիտվում է մի շարք բարբառներում: Վիմագրերում պահպանված միավորների հետ համադրելի են ե > ր հնչյունափոխության հետև-վչալ ձևերը՝ ածրլի < ածելի, գրեբգման < գերեբգման, վրա < վերայ (Լուի 50), գէրգմբնոց < գերեբգմանոց, մրխ < մեխ, սրխմել < սեղ-մել (Կարին — 15), քրգնէ, մրգի < բեգանէ, մեգի (Մուշ 22), մրնէ,

<sup>35</sup> Վիմագրերում նման սղումները խիտ պայմանական են, հաճախ արվում են տեղ շահելու համար (ժան. խմբ.):

<sup>36</sup> «Աւետարան ըստ թարգմանութեան Կարսեաց մերոց», Մոսկվա, 1889, էջ Թ, Ս. Քուրանչյան, նշվ. հոդվածը, էջ 227:



մբր, շմ < մենմ, մբր, շեմ (*Սասուն 17*), բվբարան < աեաարան (*Ագուլիս 50*) կամ ե-ի սղումբ՝ հայլի < հայելի, գիղնալ < գիտենալ, մօղնալ < մաւտենալ, ալբէլ < աեբէլ (*Կարին 14*), յեասուն < եբեսուն, ծմբիւկ < ձմբեուկ, շիոփի < շերեփի (*Վան 34*): Հին հայերենի հրեշտակ բառի մեջ ե-ի սղումբ դիտւում է միայն Մշո (հրիշտակ, նաև՝ հրշտագ), հարբերդի և Ասլանբեկի բարբառներում (հրշդագ), սակայն հնարավոր չէ վիճադրելու փորագրված հրշտակաց, հրշտակարենակ ձևերը վերագրել այս բարբառներին, քանի որ այստեղ դիտւում է նաև խուլ պայթականների ձայնեղացում՝ հրշդագ, հրշտագ, այնինչ վիճադրելու բոլոր օրինակներն առանց ձայնեղացման են: Մյուս կողմից, բարբառների մեծ մասում հրեշտակ արտասանվում է ե > բ անցումով՝ հրբշտակ, հրորշտակ, խբբրշտակ և այլն, որ կարող է նույնը լինել վիճադրերի՝ հրշտակ (աց) ձևի հետ, միայն այստեղ հնչվող բ-ն գրությամբ չի արտահայտվել, այսինքն արտասանվել է հրբրշտակաց, գրվել՝ հրշտակաց:

Ե. ե > ալ, հին հայերենի պարզ ձայնավորների երկբարբառային արտասանութունը անձանոթ է ոչ միայն գրաբարի հուշարձաններին, այլ նաև միջին հայերենի գրական երկերին: Արդի մի բանի բարբառներում սակավաթիվ բառերում նկատւում է այդ փոփոխութունը (*Մեղրի, Ագուլիս*), որը սակայն առանձնակի է և չի տարածվում այդ կարգի բոլոր բառերի վրա:

Վիճադրության մեջ նման հնչյունափոխության մի բանի արտահայտութուններ են պահպանվել: Այսպես, Ն. Բայազետի խաչբարի Նեթ (1000) թ. հիշատակագրում կարդացվում է. «Ես՝ Հայրակղ կանգնեցի սրբ. Սարգիս», ընդգծված անվան սկզբնաձևն է Հեռակղ (= Հեռակլեւ), ըստ այդմ դիտւում է ե > ալ անցումը: Նույն բնագրի շարունակության մեջ անձնանունը փորագրված է՝ ես՝ Հարակղ, որ արտացոլում է ալ > ա պարզումը<sup>37</sup>: Տվյալ փոփոխութունը կարելի է տեսնել նաև բարայկենդան բառի մեջ, որ փորագրված է Մշկավանքի ԺԳ դ. մի նվիրագրում. «Հաստատեցին ի տարին :Բ: աւր ժամ բուն բարայկենդանին» (*Մվ*): Նույն փոփոխութունը նկատւում է հայրենիք = ունեցվածք, ժառանգութուն բառում, որ Ն. Գետիկի բնագրերից մեկում վկայված է հայրայ-

37 Տե՛ս Թ. Ավդալբեկյան, Նոր Բայազետի նորագույն սեպագիրն ու նրա հրեշտակական ժիշավայրը, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի Տեղեկագիր, 1927, № 2, էջ 16:



նի՛ք ձեռով. «Տվար հաստատ հայրայնի՛ք յազգէ յազգ» (ԺԳ դ. ՄՎ):  
 Հնարավոր է այստեղ այ երկրարբանի առաջացումը դիտել ոչ թե  
 իբրև և ձայնավորի հնչյունափոխության արգասիք, այլ նաև և  
 հոդակապ, որին հետագայում ավելացել է յ հնչյունը (այ), որ  
 բազմիցս դիտվում է այլ արձանագրություններում ևս (հմմտ. նա-  
 վայասարդին — Թանաս Դ III 84, ձեռնայսուն աշայկերտ — Ամա-  
 դու ՈՇ Դ III 212) (ևս՝ Հայրայնիկս» — Թումանյան ԺԳ ՄՎ)<sup>38</sup>:

Արդի մի շարք խոսվածքներում սակավաթիվ բառերում նը-  
 կավում է ի > այ փոփոխությունը մեծ մասամբ շեշտակիր վի-  
 ճակում. սայրել < սիրել, մայս < միս, հայն < հին, պղայնձ < պը-

<sup>38</sup> Հայկական վիճագրերի հմուտ վերծանող Մ. Բարխուդարյանը, հետևելով  
 Գ. Հովսեփյանին, և > այ հնչյունափոխությանը է բացատրում ԺԳ դարի մի քա-  
 նի արձանագրություններում սեռական հոլովածին հարադրվող ծայր բազադրիչ  
 առկայությունը, որը նրա կարծիքով ներ-ի հին ձևն է: Ահա ծայր բազադրիչի՝  
 հեղինակի մեջ բերած վկայությունները. «ես՝ Գրիգոր որդի Վառհամա ծայրին  
 որ մեաց ի պատերազմի հասմ, կանկեցի խաշս» (Հերհեր ՉԼԱ Դ III 67): «Մր  
 Յովաննէլս Յովանիսա ծայրին է, ի տարին թ: աւր ժամ առենն նմա» (Գեղա-  
 սի: ՈԿԴ ՍԲ): «Քս ան ողորմեայ զՔոյրածայրին զբարի տիկնայ հողին» (Գեղե-  
 վանք Ժ դ. Դ III 16): «Սրանց կարելի է ավելացնել ևս երկու հիշատակություն.  
 «ես՝ Նարեր և Նահմայր կանգնեցար զոր Գերգս» (Տեղ ՉԻԱ Դ II 71, սխալ-  
 մամբ բնագծված անունը վերծանվել է՝ Նահմմայր, որը չի հաստատվում արձա-  
 նագրության լուսանկարով), «Խաշս... Հասան, Գաիթ որդիք Պապածայրին ու  
 Աղեկին» (Գյուլամբուլաղի վանք ԺԳ Դ III 120): և. Վարազ հուշարձանի ԺԳ դ.  
 մի նվիրագրում նույն անձնանունը վկայված է այ > է օրինաչափ անցումով. «Ան  
 աւր ժամ Քուրածէրին (< Քոյրածայր) Դաւթի սնուցողին (ՄՎ): Թվում է, այս  
 անձնանուններում երկու բազադրիչները միացնող ա-ն ոչ թե առաջին անվան սե-  
 ռական հոլովակազմի է (Վառհամ-այ), այլ միայն հոդակապ, բառ այդմ կազ-  
 մությունը պետք է համարել ամբողջական, միասնական իսկական բարդություն՝  
 և հոդակապով՝ Վառհամածայր, Յովանիսածայր, Քոյրածայր և այլն: Ա-ն չի  
 կարող սեռականի հոլովական վերջավորություն լինել այն պատճառով, որ Յովա-  
 նէլ և Քոյր անձնանունները չէին հոլովվի և հոլովումով, բանի որ սոցանկի է  
 Յովանի: Յովանու, Քեռ, Քվեր, Քոչ, և ոչ թե՛ Յովանիսա կամ Քոյրա: Բա-  
 ցի գրանից, եթե անձնանունը լիներ Վառհամ ձեր կամ Քոյր ձեր, ապա՝ սրա-  
 կան հոլովում կունենայինք՝ Վառհամ ծայրին, Քոյր ծայրին և ոչ թե Վառհամա-  
 ծայրին, Քոյրածայրին: Մայր արմատը իր հիմնական իմաստից բացի նշանա-  
 կում է նաև՝ նորածագ աւելի նառազայր, մի որևէ բանի ազնվագույն մասը (Հ.  
 Անտոյան, Արմ. բառ., Գ, 730): Թվում է, հիշյալ կազմություններում ծայր բա-  
 զադրիչը կարող էր կիրառվել այդ իմաստներից մեկով, բառ այդմ՝ Վառհամա-  
 ծայր կարող էր նշանակել ավյալ զերգասասանի զավակների ծայր, վերջինը կամ  
 լավագույնը, ազնվագույնը, որի անունը մի զեպրում Վառհամ է (Վառհամածայր),  
 մյուսում՝ Քոյր (Քոյրածայր), Պապ (Պապածայր), Յովանէլ (Յովանիսածայր)  
 և այլն:



ղինձ, Բայնք < Բիր և այլն: Ե > այ հնչյունափոխությունը վը-  
կայված է նույն Ազուլիսի բարբառի բայնակ < աբեգակն ձևում  
(Ազուլիս 51, 60, 94):

Բ. է ձայնավորի հնչյունափոխությունը: Այս հնչյունի կրած  
փոփոխությունները հին գրական հայերենում նկարագրված են  
գրարարի դասագրքերում: Ե ձայնավորի հետ նույնացման երե-  
վույթները վիժական բնագրերում արդեն ցույց ենք տվել: Այս-  
տեղ ներկայացնում ենք է ձայնավորի հնչյունափոխությունը ու-  
սումնասիրվող ժամանակաշրջանի վիժական արձանագրություն-  
ներում:

Ա. է հնչյունն ընկնում է անկախ շեշտից կամ այլ գործո-  
նից հավանաբար բարեհնչունության կամ սեղմության ձգտումով՝  
Պէորգ անձնանվան մեջ՝ Գորգ: Հնագույն հիշատակությունը ըստ  
Աճառյանի է դարից է, սակայն մեջ բերված բուրբ օրինակները՝  
մատենագրությունից կամ ձեռագրերի հիշատակարաններից,  
խակ վիժական բնագրերից ոչ մի դեպք չի հիշվում<sup>39</sup>, մինչդեռ  
դրանք ավելի շատ են և հնագույն վկայություններով. «Ես՝ Գորգ  
կակնեց խաշս» (Սարիղամիշ նեԱ. ԿՂԶԳ 88), «Ե՛սը Գորգի» (Հո-  
ռոմոս նՁԵ ՍԱԲ 106), «զմեղաւոր գՊորգ» (Մշո Առաք ՇՂԳ Մի-  
րախոր Ա. 43—45), «Ես՝ Աշոտ, որդի Գաւրգէ» (Բարձրաբաշ ՈՁՁ  
ՄՎ), «:Ա: Գորգա, Ա. Գրիգորո» (Հաղարծին ԺԳ ՄՎ), «Ես՝ Գոր-  
գե» (Առաքելոց ԶԺԲ ՄՎ), «Ես՝ Գորգ և Սարգիս» (Փարպի ԺԲ  
ՄՎ), «Աձ ողորմէ Գորգայ» (Աղչոց ՈՂ Հով ԽԱՂ III 76), «Ես՝  
Պորգ և ամուսին իմ Գաւրաթ» (Երևան, Կաթող. ԶԿէ ԿՂԵ 179), «Պոր-  
գա վաճառականին» (Սանահին ԶԺԱ ԿՂՍ 151), «Պորգ վարդա-  
պետս (Բագնայր, ԶԻ ԲԱՍ 179):

Բ. է ձայնավորը սղվում է շեշտակորույս վանկում հետևյալ  
բառերում. Յովսէփ > Ուսէփ > Ուսիանց. «Ետու զիմ կէս այգին  
որ ի Խութութիսէ զնեւ ի (< էի) զՈւսիանց» (< զՈւսէփանց)  
(Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 116): Կիրիկէ > Կիրիկէի > Կիրիկի.  
«Ես՝ Մարիամ Բագրատունի դուստր արքայն Կիրիկի» (Սանա-  
հին ՈՂ ԿՂՍ 114): Դեմեարէ > Դեմեարէի > Դեմեարի. «Ի Թագա-  
ւորութի Դեմեարի» (Աշտարակ ԶԼԵ ՄՎ): «Ի Թագաւորութի Դե-  
մեարի» (Մարց ԶԼԳ Հով ԶԺ 76): Տանուտէր > տանուտուրիւն >  
տանուտուրջ, հնագույն հիշատակությունը Անիում, Բագրատ մա-  
դիստրոսի հայտնի արտոնագրում. «Յորժամ առին զտանուտու-

39 Տե՛ս Զ. Անաոյան, Անձնանունների բառարան, Բ, էջ 489, 492.



րիւն» (Մայր տաճար 1060 թ. Գ I 37), «Զժամն Սարգիս տանուարոջն առնեն» (Կեչառիս ԺԳՍԲ), Տանուարուքիւն, տանուարոջ բառերում է հնչյունը ընկել է անհետ, առանց ք-ով փոխարինւիլիս, ինչպես հաճախ տեղի է ունենում ե ձայնավորի անկման ժամանակ: է-ի սղումը նկատուում է նաև էական բայի անց. անկատար ժամանակի բայաձևում, որտեղ է-ն ընկնում է՝ իր արտահայտած իմաստը փոխանցելով դիմային վերջավորութիւնը: Իրողութիւնը դիտուում է նաև արդի մի քանի բարբառներում (Ղարաբաղ, Շամախի, Արարատյան), օրինակ, վերը մեջ բերած Հովհաննավանքի բնագրում. «գնել ի գնափանց փոխ», առաջանում է գնել էի ձևից՝ է-ի անկումով: Ահա մի քանի նոր փաստեր. «Ես երկու որդի ունի» (<ունէի) (Քարաղուփս, ՉՄԲ Գ III 176), «Զմեր պապանց յիշատակ, որ Շատախաշերն տուել ին (<տուեալ էին)» (Հաղրատ ԺԳ ԿՂՀԲ 200), «Վարդապետերն ի քաշին արարել (<էին արարեալ)» (Սանահին ԺԳ ԿՂՍ 125), «որ գնել ին (<գնեալ էին) պարոնաց կամակցութիւն» (Ենոքավան ՉԽ ՄՎ)<sup>40</sup>:

Գ. է ձայնավորի փոխարեն սակավաթիւ բառերում փորագրվել, ուրեմն և արտասանվել է այ երկրարբառը կամ երկհնչյունը: Միջին հայերենում և Ժ—ԺԳ դդ. վիճակն բնագրերում ավելի սովորական է հակառակ՝ այ>է հնչյունափոխութիւնը: Սակայն ավանդված օրինակները ցույց են տալիս, որ դրանք չեն կարող պատահական վրիպումներ կամ փորագրողի սխալներ լինել և հավանաբար ավյալ շրջանում այդպիսի արտասանութիւն գոյութիւն է ունեցել:

Այսպես, միայն Ագուլիսի բարբառում բառամիջի շեշտակիր կամ շեշտահաջորդ է ձայնավորը կանոնավոր կերպով, անկախ որևէ ազդեցութիւնից վերածվում է այ-ի, որ արտասանվում է իրրև ձայնավորի և ձայնորդ բաղաձայնի կապակցութիւն կամ երկհնչյուն. տայր<տէր, պայտֆ<պէտֆ, ըոնայտ<առնէտ, խըլայզ<խլէզ, նաև ածանցավոր կաղմութիւններում՝ անտայր<անտէր, անպայտֆ<անպէտֆ և այլն (Ագուլիս 52—53):

<sup>40</sup> Ամաղուի նորավանքում Սյունյաց եպիսկոպոս պատմագիր Սա. Թրբեյանի ՉԽէ թ. նշանավոր արձանագրում փորագրված է. «զոր գնել էի իմ ախարսէն ի Զաչալէն և ավելի գինն մե հազար դրամ», վերձանոց Ս. Բարխուղարյանը ավել ի առաջացած է համարում ավեալ էի բայաձևից. մեզ թվում է, ավելի հավանական է ավյալ հատվածը բառանջատել. և ավել ի գինն: Եվ հազար դրամ, այսինքն ի-ն դիտել ոչ թե դիմային վերջավորութիւն, այլ նախդիր (ՏԵՍ Գիվան, III, էջ 216):



Մեջ ենք բերում վիմագրերում եղած փաստերը. «Զվարձս Յուդայի առցէ եւ զանայծս (<զանէծս) ժառանգեցէ» (Բաղարան ժԳ ՍևԲ 204, վկայությունն անստուգելի է): «Ես՝ Ռբսապայսս (<Ռստապայսս <Արիստակէս) և այլ միաբանքս հաստատեցար» (Մշկավանք ժԳ ՄՎ): «Որք երկրպագայք (<երկրպագեք, երկրպագանէք) ի ազաթ-յիշեցէք» (Կոշիկ ՈՄԲ Օրծ ԿԻ 197): «Բարեպաշտ իշխանաց իշխանին Այլիկումի (<Էլիկում, Ելիկում) է տապանս» (Ամաղու ՉԳ Դ III 230): Հավանաբար այս ձևից են առաջանում նույն անձնանվան Ալիկում, Ալակում տարբերակները (Ամաղու ժԳ Դ III 217): Միայն երկու դեպքում էական բայի եղակի հրրորդ դեմքի բայաձևը փոքրագրված է այսպես այ (<է) հանդիստ Ովանիսի» (Մոզ ՉեԳ Դ III 24), «Հաստատ այ գիրս» (Հալիձոր ժԳ Դ II 52): Այստեղ այ-ը կարող էր առաջանալ ա-ից յ գրի հավելումով, որ սովորական է այդ ժամանակների վիմական բնագրերում: Ներսէս անձնանունը քանիցս վկայված է Ներսայս գրությամբ, որ անշուշտ այդպիսի արտասանության արդյունք է. «Ես՝ տր Ներսայս եւ Ակոփ եւ Փախշան շինեցար» (Մեյմանա ՈՂԸ ՍԲ), «Ես՝ տր Ներսայս» (նտ ՈՂԹ ՍԲ), «Ես՝ Սումբայս, Մանվէլս, Դանէլս, Նէրսայս միաբանեցար տր ուխտիս» (Խորակերտ ժԳ ՄՎ):

Միայն եղակի հիշատակությամբ վկայված է է>իէ փոփոխությունը Հաղարժնում հայտնաբերված պղնձե բոքի արձանագրության մեջ. «Ես՝ Զոսիմա քահանա եւ եղբայր իմ Սաղարիէլ» (ՈՉԱ 1232 Բ.)<sup>41</sup>:

Գ. է>ա հնչյունափոխությունը նկատվում է էական բայի եղակի հրրորդ դեմքում միակ ստուգելի վկայությամբ. «Ով խափանէ կամ զգիրս ջնջէ, ջնջի յայ ու իմ մեղացս տէր ա» (Մեծարանց վանք ՈՂԹ)<sup>42</sup>, էլիկում, Ելիկում անձնանունը փոքրագրված է Ալակում, Ալամին. «Ես՝ Կիսարիտ որդի Ալակումին... զի հայրն իմ Ալամին» (Ամաղու ՈՂ Դ III 211): Թվում է, հիշյալ դեպքերում նախ տեղի է ունեցել է>այ փոփոխությունը և դրանից հետո առաջացել այ>ա, ինչպես էլիկում>Ալակում>Ալակում:

41 Գ. Հովսեփյան, Քարտեղ հայ հնագրության, էջ 18, տախտակ ԺԵ.

42 Ե. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր», 1901, էջ 140:



Բառավերջում կամ բառերի մեջ հին հայերենի է ձայնավորի վերածվելը ա-ի արևելահայ բարբառների համար սովորական հնչյունափոխություն է, որ կարող է տեղի ունենալ նաև բառերի անփոփոխ ձևերում և անկախ շեշտափոխության ազդեցությու- նից: է>ա փոփոխությունն արտացոլող ձևերից Ղարաբաղի խրմ- բի բարբառներում ունենք՝ կ'ումաշ<գոմէշ, մաշ<մեշ, մաշկ< մեշխ, քա<քէ (էջ 32), Շամախի բարբառում՝ բոնատ<առնէտ, անօրան<անօրէն, մարբարա<մարգարէ (էջ 23), Մեղրու բար- բառում՝ տար<տէր, սագ<սէգ, պրհագ<պահէգ, խրլագ<խլէգ (էջ 35) և այլն:

Նույն օրինաչափությամբ հիշյալ և արևելահայ մի քանի այլ բարբառներում (Արարատյան, Լոռու, Սյունիքի) էական բայի ե- գակի երբորդ զեմբը ամենուրեք ա-է (կարբրմ ա, բյանացալ ա, կյբրբմ ա), ուստի պետք է կարծել, որ վիմագրերում փորագրված ա էական բայը գալիս է այն բարբառներից, որոնց պատմական միջավայրում պահպանվել է տվյալ վկայությունը, մասնավորա- պես Մեծարանց վանքի տէր ա ստորոգյալի ա հանգույցը կարող էր ներթափանցվել ժամանակին (ՈՂԲ — 1243 թ.) Արցախում գոյություն ունեցած խոսվածքներից:

Ե. է>ի փոփոխությունը լայն տարածում ուներ հին հայե- րենում հատկապես շեշտակորույս դիրքում (սէր>սիրոյ, ժապա- ւէն>ժապալինի և այլն): Միջին հայերեն և վիմական բնագրե- րում ևս այդ հնչյունափոխությունը ավելի հաճախ է տեղի ու- նենում, սակայն այստեղ բնությունն ենք առնում է>ի անցման այն դեպքերը, որոնք հին հայերենում չէին հանդիպում և դիտ- վում են միայն վիմագրական հուշարձաններում: Գեւորգ>Գիւորգ, հնադույն վկայությունը պահպանվել է Աթենի Սիոնի հայերեն հիշատակագրություններում, հայ վարպետների անունների հե- տևյալ շարքում՝ Ահարոն, Գիւորգ, Գրիգոր Գապա<sup>43</sup>: Վերձանողի կարծիքով Գիւորգ արտասանությունը վրացերենի ազդեցության հետևանք է և ցույց է տալիս այդ վարպետի վրաստանցի հայ լի- նելը: Սակայն, նույն փոփոխությունը նկատվում է նաև մյուս, զուտ հայկական միջավայրի բնագրերում, ուստի պրոֆ. Լ. Մե- լիբսեթ-Քեկի կարծիքը կարող է այնքան էլ հիմնավոր չլինել: Ահա մյուս օրինակները. «Ես՝ վահանիկ լիմոց ընչից կանգնեցի

<sup>43</sup> Լ. Մեկիսեթ-Քեկ, է գարու հայերեն արձանագրություններ վրաստանում, ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 5, էջ 3—5:



զսուրբ Գիւրգ» (Արատես նժՁ Գ III 122), «Եղբարորդի ան-  
 Գիւրգա» (Մեծարանց վանք ՈՂԴ)<sup>44</sup>, «Ես՝ Գիւրգ կանգնեցի խա-  
 ջըս» (Կոշիկ ՈԿԵ ՍԲ), «Ես՝ հայր Գիւրգ կատարեցի» (Բզկենո-  
 նորավանք նժԱ Գ II 45), «Ես՝ Գրգորիկ որդի Գիւրգայ» (Կար-  
 մրաշեն նժԹ Գ III 41): է-ն հնչյունափոխվում է ի-ի նախաշեշտ  
 կամ շեշտազուրկ դիրքում, բառերի հոլովման, խոնարհման կամ  
 բառակազմական աճման ժամանակ. «Ետու լէ: դահեկան եւ զս-  
 միշանի» (Հաղբատ ժԳ ԿՂՀԲ 227), «Ես՝ հայր Յոհաննէս Խաչի-  
 նէցի» (<Խաչէն) (Սանահին ՈՄԴ ԿՂՍ 183), «Ես՝ Հոգիդեղ (<Հո-  
 գեդեղ) կանգնեցի զխաշս» (Շնհեր ԶԼ Գ II 57), «Տնով և պահի-  
 զով» (<պահէզ) (Անի նժՁ Գ I 49), այլ բնագրերում նաև ան-  
 հնչյունափոխ՝ զխաշով պահէզի կէսն (Անի ԶԼէ Գ I 29), «Վս  
 փրկութն հոգո եղբարորդս իմ Բուրբիլին» (<Բուրբէլ) (Ամաղու  
 ԶԺ Գ III 219): Հին հայերենի բայի սահ. եղանակի ներկա ժամ.  
 հոգնակի երկրորդ դեմքի վերջավորութիւնը՝ է՛ և հնչյունափոխ-  
 վում է ի՛-ի. «որք աղաւթի՛ք այսմ քաւարանիս Սահակ յիշեցէք»  
 (Թանատ ժԳ Գ III 75):

Արեւելահայ մի շարք բարբառներում հին հայերենի է ձայ-  
 նավորը օրինաչափ կերպով փոխարինվում է ի-ով ոչ միայն  
 շեշտակորույս վիճակում, որ լայնորեն դիտվում է նաև գրաբա-  
 րում, այլ նաև անկախ դրանից, բառերի անփոփոխ ձևերում, եր-  
 բմն նաև շեշտակիր վանկում: Օրինակ, Ղարաբաղի, Հաղբու-  
 թի, Շամախի, Մեղրու բարբառներում հայերեն ղէզ. անէժփ,  
 կէս, դէպի, երէց բառերը արտասանվում են՝ տիզ, անիցփը, կիս,  
 դիբի, իրիցի (Ղարաբաղ 32, Շամախի 23, Մեղրի 33): Այստե-  
 դից, բնական է վիճակներում տվյալ դիրքում նկատվող է>ի  
 հնչյունափոխութեան ակունքները որոնել այդ բարբառների խոս-  
 վածքներում:

Մյուս կողմից, նկատի ունենալով բառամիջում գրաբարի ե,  
 է հնչյունների նույնացման իրողութիւնը միջին դարերում, բնա-  
 կան է կարծել, որ տվյալ դիրքում վիճակների մեջ ավանդ-  
 ված ե>ի հնչյունափոխութիւնը նույնն է է>ի փոփոխութեան  
 հետ և նույնպես ներթափանցված հիշյալ խոսվածքներից:

#### Ը ՁԱՅՆԱՎՈՐ

Ը հնչյունը հայերենի ամենաթույլ ձայնավորն է և այդ պատ-  
 ճառով հաճախ իրար հաջորդող բաղաձայնների մեջ նվազ ար-

<sup>44</sup> Խ. Գաղյան, Կշվ. հոդվածք, «Բանասեր», 1901, էջ 148:



տասանվում է, բայց չի գրվում: Հին հայերենի բառերի գրության մեջ ք արմատական ձայնավորի կիրառությունները հազվադեպ էին. բառասկզբում գրանք մեծ մասամբ հանդիպում են կամ քնդ, քսա նախդիրներից ու նրանց հնչյունափոխված ձևերից կազմված բառերում՝ քնդարձակ, քնդարոյս, քնդոծին, քնկեր, քմբե-  
 բանեմ, քնտանի, քտանձնեմ, քտգիւտ, կամ այն դեպքերում, երբ շեշտի ազդեցութեամբ արմատական այլ ձայնավորներ վերածվում են ք-ի՝ քղձալի (<իղձ), քնկանիւմ (<անկանիւմ), քնկողին (<անկողին), քնչասէր (<ինչասէր): Բառամիջում ք ձայնավորը գրվում էր հիշյալ ձևերով բաղադրված բառերում, իսկ բառավերջում ք կարող էր գրվել միայն ն հոդի փոխարեն գործածվելիս, որ ետին դարերի երևույթ է: Այս է ք ձայնավորի գրության վիճակը հին հայերենում: Իսկ ինչպիսի՞ն է նրա արտասանությունը դրաբարյան բառերում. արդյոք հին լեզվում նույնպես, ինչպես միջին հայերենում կամ նոր լեզվում, ք հնչյունը բաղաձայնների մեջ, դադանավանկում կամ բառասկզբում որոշ կապակցություններից առաջ հնչվել է առանց գրվելու, թե այդ փոփոխությունը տեղի է ունեցել ավելի ուշ շրջանում: Մի խոսքով, կարևոր է որոշել, թե հնում ինչպես են արտասանվել այս կարգի բառերը՝ ըստ գրության, առանց ք-ի, թե՛ ք-ով. այսինքն, գլխո՞յ թե գրլխո՞յ, մտի-մըտի, տղայ-տըղայ, մուկն-մուկրն, աստղ-աստրղ, գալստեան-գալքստեան, ստացա-քստացա, զկրակ-ըզկրակ-զրկրակ, հլու-հըլու, զնդան-զընդան և այլն:

2. Աճառյանը հավանական է համարում ք-ով հնչումը նրման դեպքերում գոնե Թ—Ժ դարերում, հիմք ընդունելով Ազաթանդեղոսի նորահայտ կրկնագիր ձևագրում պահպանված օրինակները՝ զժողովրդին, ի տուրնջենէ, նակ՝ յնքեան, յնքրիս, որոնք արտացոլելով այդ ժամանակի հնչումը, ցույց են տալիս, որ ք հնչվում էր նաև այնտեղ, որտեղ չէր գրվում և, ընդհակառակը, կարող էր շգրվել, բայց հնչվել: Հայագետ Ա. Մեյեն գասական հայերենի հնչույթաբանական վերլուծություններով (և (է) նախահավելվածի կիրառությունների քննությամբ հատկապես անց. կատարյալի միավանկ բայաձևերում) անառարկելի ապացույցն է, որ հայերենի դրի առնվելու ժամանակ դադանավանկում կամ բառասկզբի սուլական, շչական + պայքական հնչյունակապակցություններից առաջ ք-ն արտասանվել է, երբևմն օժտված լինելով նաև իմաստազատիչ նշանակությամբ (հմմտ.



վարս—հեր, մագ, վարս—վարժ հայց. հոլով, սանդ—սանդդ;  
և այլ ձևերը)<sup>45</sup>:

Սակայն հայ հին մատենագրության մեջ ավանդված փաստերը հնարավոր են դարձնում ավելի ետ տանել ը-ի արտասանության և գրության այս օրինաչափության առաջացման ժամանակաշրջանը:

Այսպես, Փավստոս Բուզանդի երկի ձևագրերում հանդիպում են՝ ակըմբի (<ակումբի), մարտընչէր, Ռըշտունի, Ըորշտունի, բոագմիկ, Զրկայ (<Զիկ) և այլն<sup>46</sup>:

Հայերեն հնագույն շինարարական արձանագրությունները և արժեքավոր ու հավաստի փաստեր են տալիս այն համոզման օգտին, որ ը-ն հիշյալ դիրքերում հնչվել է նաև Ագաթանգեղոսի կրկնագրից մի քանի դար առաջ, Զ—է դարերում: Այդ փաստերը պարունակող վիճական բնագրերի փորագրման ժամանակը հայագիտության մեջ ստուգապես որոշված է, իսկ նրանց վերծանությունները ստուգվում են տեղի վրա կամ լուսանկարով և որևէ կասկած չեն առաջացնում: Բառամիջում իրար հաջորդող երեք բաղաձայնների մեջ ը ձայնավորների գրության հնագույն վկայությունը գտնում ենք Ապարանից Երևանի թանգարան բերված՝ Դավիթ Գնթունու տապանագրում, որ ըստ պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի Զ դարի գործ է. «Այս է հանգիստ Դավիթ Գրնրունեաց տն որդո Վասակա բարեպաշտի»<sup>47</sup>: Նույն կամ փոքր-ինչ ուշ ժամանակների այլ վիճագրերում ընդգծված տոհմանունը փորագրվել է նաև ավանդական գրությամբ՝ առանց ը-ի. այսպես, «Քս ան յիշեա զԳրիգոր Գնթունեաց տէր» (Զովունի, Պողոս-Պետրոս տաճար Զ—է դդ.)<sup>48</sup>, կամ «Յամս տն Թեոդորոսի Գնթունեաց եպիսկոպոսի» (Մաստարա է դ. ՄՎ)<sup>49</sup>: Հռիփսիմե տաճարի 618 թ.

45 Հ. Անադյան, Քննություն կրկնագիր Ագաթանգեղոսի, «Հանդես ամսօրյա», 1913, № 1, էջ 1—19, A. Meillet, Esquisse..., p. 52—54, է. Աղաջան, Գրարարի թերականություն, Ա, Երևան, 1964, էջ 84—86:

46 Փաստոսի Բուզանդացայ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 38, 56, 61, 62, 65, 128:

47 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 245:

48 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. Գ, Նյու-Յորք, 1944, էջ 23: Ա. Սանինյան, Զովունիի ճարտարապետական խումբը, ԳԱ «Լրատեր», 1968, № 1, էջ 113:

49 Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, էջ 8, տախտակ Գ, այստեղ խնդրո առարկա տոհմանունը վերծանվել է Գնունեաց:



շինարարական արձանագրության մեջ ևս երեք բաղաձայնների մեջ փոքրագրված է ը. «Ես՝ Կոմիտաս և կեղեցական սրբոյ Հոսիսիմէի» (Օրճ ԿՏ 407), իսկ շարունակության մեջ կանոնավոր՝ յաթոս սրբոյն Գրէգորի: Արուճի տաճարի է դարի շինարարական բնագրում ը-ն պարզ կարդացվում է զուգակըցի բառի մեջ, որ արդյունք է շեշտակորույս ի ձայնավորի հնչյունափոխության (<զուգակից>). «Հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգոր Մամիկոնենի հայրոց իշխանի և Հեղինէի նորին զուգակըցի» (Օրճ ԿՏ 402, ՄՎ): Բառասկզբում սա հնչյունակապակցություննից առաջ ը-ի գրության մեզ հայտնի հնագույն վկայությունը՝ ըստացա գտնում ենք Քալինում՝ ներսեհ Կամսարականի կառուցած եկեղեցում ընկած տապանաքարի հիշատակագրության մեջ, որի ժամանակը մոտավոր ճշտությամբ որոշվում է Ը—Ք դարերը: Այսպիսով, սակավաթիվ հնագույն վիմագրերում պահպանված ը ձայնավորի գրության այս փաստերը ևս հաստատում են այն տեսակետը, որ հին հայերենի գրի առնվելու ժամանակ կամ գրանից ոչ այնքան ուշ ը հնչյունը իրար հաջորդող մի քանի բաղաձայնների մեջ կամ բառասկզբում որոշ հնչյունակապակցություններից առաջ արտասանվել է, թեև մետրոպյան ուղղագրությամբ չի արտահայտվել: Սակայն հարցի ուսումնասիրության առկա վիճակով դժվար է հավաստիորեն սահմանել, թե դասական հայերենում բաղաձայնների որ զուգորդություններն են արտասանվել ը-ով և որոնք առանց ը-ի: Ա. Մեյերի և Հ. Աճառյանի աշխատություններում այս կնճիտը կամ զաղտնավանկ և ոչ զաղտնավանկ զուգորդությունների սահմանումը շինք գտնում, քանի որ մեծ հայագետների գիտողությունները վերաբերում են ը-ի հնչմանը բառասկզբի զաղտնավանկում (զրաի, մրաի և այլն), և այսպիսով բաց է մնում բառամիջի կամ բառավերջի բաղաձայն հնչյունակապակցություններում զաղտնավանկի կամ ը-ի առկայության հարցը: Անբացատրելի է, օրինակ, թե ինչու արքս (=արս), ակրն (=ակն), ձուկրն (=ձուկն) և այլ ձևերում առկա է ը-ով զաղտնավանկ, իսկ ազգ, հաստ, դեղձ, մրմունջ, լուրջ և այլ բառերում՝ ոչ:

Գաղտնավանկ և ոչ զաղտնավանկ բաղաձայն հնչյունագործությունների սահմանման առաջին փորձը կատարել է պրոֆ. է. Աղայանը 1964 թ. լույս բնծայած «Գրարարի բերականություն» աշխատության մեջ:

Հետագա դարերի վիժական արձանագրություններում և ձե-



ուսմանը հիշատակարաններում արտասանվող ը-ի գրության դեպքերը ավելի են հաճախանում: Ժ—ԺԴ դարերի վիմագրության մեջ, ինչպես և միջին հայերենում բաղաձայնների միջև գաղտնավանկում կամ բառասկզբում մի քանի հնչյունախմբերից առաջ ը ձայնավորը մեծ մասամբ գրության մեջ զբաղեցնում է իր հնչմանը համապատասխան տեղը, և նթև որոշ դեպքերում էլ չի գրվում, ապա այդ տեղի է ունենում ավանդական գրության հետևությունը:

Վիմական բնագրերում ը ձայնավորի գրության նոր, դրական հայերենին անծանոթ վկայությունները կարելի է բաժանել երկու խմբի. Ա. Ը-ով վկայություններ, որոնցում այդ հնչյունը կամ տառածեր մուտք է գործում և արտասանվում ոչ թե իբրև որևէ հնչյունափոխական երևույթի արգասիք, այլ՝ իրար հաջորդող բաղաձայնների կուտակումից խուսափելու և մեր լեզվի արտասանական օրինաչափություններին համապատասխան բարեհնչյունության թելադրանքով. Բ. Այնպիսի բառեր, որոնցում ը-ն առաջանում է շեշտի ազդեցությամբ, մյուս ձայնավորների հնչյունափոխության կամ սղման հետևանքով: Քննում ենք այս վկայությունները.

Ա. Բառամիջում ը ձայնավորը գրվել և հնչվել է երկու բաղաձայնների մեջ, գաղտնավանկում. «Զիս և ծրնողս... յիշեսչիք» (Անի ՈԹ Դ I 2), «Մրնունդ Քի» (Հաղբատ ԺԱ ԿՂՀԲ 155): Բառավերջի բաղաձայնների և ս, դ, և հոդերի միջև. «Ես՝ Գուհարշահրս կողբացի» (Բաղարան ՈԶԴ ՍԱԲ 204), «միարանք էտուն ի տարենրն է: ար ժամ» (Հաղարծին ԺԳ ՄՎ), այլ բնագրերում բնագծոված բառը՝ տարենն (Բարձաբաշ ՈՂԴ մՎ): «Ե: կարգեցի ի սմա արսս բնտրեալս» (Հառիճ ԺԲ ՄՎ): Միջին հայերենում այս երևույթը ավելի լայնորեն է տարածված. հատկապես շափածո խոսքում, ոտանավորի վանկային ներդաշնակության նպատակով. օրինակ. Շնորհալու «Ողբում»՝ ծրնոտ, լրսողաց, դրպիբ, նրման, ունկրն, վասրն, այծրմ և այլն:

Բ. Իրար հաջորդող երեք բաղաձայնների կուտակման դեպքում, առաջին բաղաձայնից հետո. «Ե: տվար զկորնկանին մեր բաժինն» (Հովհաննավանք ԺԳ ԿՂՀ 88), «Ետու զիմ այգին, որ ի զեղին առաջի բնձանատնով» (<հրնձանատուն>) (Սանահին ԶԼԸ ԿՂՍ 158), «Տա սերմ :Ո: մող և: ծախք զբնձելոյն (<զհրնձելոյն>» (Անի 1060 Դ I 37), «զվերի էգին իւր բնձանովն յիմ խոտհարն :Ը: բարգ խոտի տեղ, որ վանքն բնձէ» (<հնձանովն, հրնձէ)



(Բազմայր ՉԺԱ ԲԱՍ 181), «Զխաշկանց այգին եւ զրնձանն» (Հառիճ ՈՄ ՄՎ), «Ի ժամանակս հայոց Թագաւոր մեծի Սընպատայ» (Վանեկան ՅՄԲ ՄՎ), «Եւ որդեակք իւր Սընպատ, Աբաս եւ Աշոտ» (Հոռոմոս ՆԿԲ ՍԱՐ 168), «Եւ որ որ յայլըշտակել ջանա» (Մրեն ՆեԱ ՍԱՐ 197), Գուար Բրգորոյ Մագիստրոսին» (Տեկոր ՆեԱ ՍԱՐ 197), «Գուար Բրգորոյ Մագիստրոսին» (Տեկոր ՆՂԱ ՍԱՐ 207), «Եւ զգատիկն Մըլֆանա» (Հաղարծին ՈեԳ ՄՎ), «Ա. Շնոհոր տիկնա Ա. Գոհարսրե» (<Գոհարսրի> Գոհարսրի) (Առաքելոց ՉԻԵ ՄՎ), «Առաջնորդ սր ուխտիս Վանքատանայ» (Վանատան ՉԼԲ)<sup>50</sup>, «Ես՝ Վասակ որդի Աբրիկեջի կանգնեցի զխաշս» (Կոշիկ ՈՃեԳ ՕրԾ ՈՒՏ 197), «Ի պարոնութե մեծին Շահրնշահի» (Հոփսիմե ՉեԵ)<sup>51</sup>:

Գ. Իրար հաշորդող շորս եւ ավելի բաղաձայնների կուտակման դեպքում գաղանավանկում. «Այս արձան մշարնջենատու է Գրիգորոյ» (Մարմաշեն ԺԱ ՕրԾ ՈՒՏ 447), «Փոխեցաւ ք մշարնջենական կեանսն» (Անի ԺԳ Դ I 26), «Կտակ մշարնջենատու» (Հաղրատ ՈՄԹ ԿՂՀԲ 168), «Յիշեցի զպանդրխտութիւն տանն» (Անի ՇԳ Դ I 51), «Ի Մերովածուր զմեր ձեռատունկ այգին» (Յաղացքար Չ Դ III 149), «Ես՝ Մկրտիչս շինեցի զեկեղեցիս» (Աղղան ՉԼԵ ՄՎ), «Ետու զծաշով պահէզի, կէսն, որ ի Հովքրքվանց դնել էի» (Անի ՉԼէ Դ I 29), «Բաղում հրճվանաւ եւ վայելուչ ծերնդովք» (Բագարան Ը—Թ դ. 90), «Տվի զիմ գանձագին կուղպականին, որ Վասիին փրնդկին (<փնդուկ) ընդդէմ է» (Բազմայր ՆՂ ՍԱՐ 145), «Որք Երկրպագէք սրջ. խաշիս» (Հառիճ ՈԼէ ՄՎ):

Դ. Բառասկզբում ք ձայնավորը վկայված է ստ, սպ, սփ, սի հնչյունակապակցութիւններից առաջ. «Ըստացա կանգնել զխաշրս» (Դաստակերտ ՉԿԹ Դ II 128), «Խաշիկ կրոնատուր ի հալալ քստացուածոց իւր քստացալ զեկեղեցիս» (Յաղացքար Դ III 146), «Ես՝ Ռստակէս քստացա խորանս» (Աղջոց ԺԳ Հով. ԽԱՂ III 67), «Ես՝ Ըստեփանոս փակայկալ Գանձասարա» (Եղիշ Առաք. վանք ԺԳ ՍԲ), այլ բնագրերում՝ «Ի սր Սրտեփանոսն ժամն իմ մարն արասցեն» (Անի ՆԶԹ Դ I 33), «Միարանէցար Վանքատանայ սր

<sup>50</sup> Աշխ. Քալանթարի «Վանատանի արձանագրութիւնները» անտիպ ժողովածու, որ պահւում է Հնագիտութան եւ ազգագրութան ինստիտուտում:

<sup>51</sup> Գ. Հովսեփյան, Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն, «Արարատ», 1898, էջ 442:



Ածածնին» (Վանստան ժԳ)<sup>52</sup>, «Աւր բանքն ըսպառիս եւ գործքն  
 Թագաւորեն» (Տաղաց քար նՂ Դ III 151), «Իմացայ եւ ծանեայ,  
 Թն ամենայն փառք եւ մեծութիւն ըսպառելոց են» (Վանեւման  
 ՅՄԲ ՄՎ), «Կայս գտի հնար ըսփոփանաց անձին իմոյ» (Հովհան-  
 նավանք ժԲ ԿՂՀ 112—113), «Ես եմ լոյս ընդ հաւր բարձրելոյ  
 անըսկըսքան» (Առաքելոց ժԳ ՄՎ) և այլն:

Անատարակույս է, որ թվարկված բառերի և անձնանունների  
 սկզբում փորագրված ք-ն հնչվել է, և եթե ավելի մեծ թիվ են  
 կազմում նույն դիրքում առանց ք ձայնավորի գրութայն դեպքե-  
 րը, ապա դա պետք է բացատրել գրաբարյան ուղղագրութայն հե-  
 տեությամբ: Մի քանի դեպքերում ք ձայնավորը հանդիպում է  
 բաղաձայնով սկսվող բառերի վրա գրված գ նախդիրից առաջ.  
 «Զաւրացո եւ բարձրացո... ամիրսպասալարն ըզՋախաւիա եւ  
 դիւանէ» (Անի ժԳ Դ I 69), «Կանդնեցար ըզխաշս» (Գյարուտ ՉԷ  
 Դ III 197), «Էղզեղն զՎահանառճի ըզկէսն» (Խժկոնք ՈԿԳ Հով ՔԱՐ  
 17), «Եւ Քս ըզիշողքն (<զիշողքն) յիշէ» (Օձուն ՉՄԵ ՄՎ), «Ըզ-  
 կամուրջն (<զկամուրջ) շինեցի» (Աստղածոր ՉԼԵ ՍՍ):

Ինչպես արդեն նշել ենք, ո, լ ձայնորդներով սկսվող բառերի  
 սկզբում ավելանում է ք ձայնավորը. օրինակ՝ Ռատ > Ըոատ, «Ես՝  
 Տիկին, դուստր Զունդկանն և Կենակից Ըոատին» (Բարձրաքաշ  
 ժԳ ՄՎ): Ռուսուզան > Ըոուսուբան, «Ես՝ Պապարս որդի Պաու-  
 շոյ եւ ամուսին իմ Ըուզուբան փորեցար զժամատունս» (Գեղարդ  
 ՉԼԷ Հով ԽԱՂ III 20), «Ես՝ Ըոուսուզան նմին արքայի դուստր»  
 (Սանահին ՈԼ ԿՂՍ 115): Այս հնչյունափոխութայն վկայություն-  
 ները ներկայացնում ենք «Հնչյունների հավելումը» բաժնում: Ար-  
 նի > րլնի, «Զիթահանքն տվար Եկեղեցուս լոյս լուս րլնի» (Հա-  
 ուիճ ՉՄ ՄՎ):

Գ. Քննարկվող ժամանակաշրջանի վիժական արձանագրու-  
 թյուններում դիտվում են այլ ձայնավորների հնչյունափոխութայն  
 հետևանքով ք ձայնավորի առաջացման հետևյալ դեպքերը. Ա > Ը  
 երևույթը նկարագրել ենք ա հնչյունի փոփոխությունների բաժ-  
 նում, այստեղ մեջ ենք բերում մի քանի նոր օրինակներ. Խանա-  
 պար > խանապարի (Անի ՉԼԷ Դ I 29), Վահրամ > վահրամա (Անի  
 ՈԶԳ Դ I 36), առատ > քոատ (Ամաղու ՉԽԷ Դ III 216), Շահաե-  
 շահ > Շահընշահ (Հաղբատ ժԳ ԿՂՀԲ 156, 192, Բագարան ՈԿ ՍԱՐ

52 Աշխ. Քալուսթուր. «Վանստանի արձանագրությունները», անտիպ ժողո-  
 վածու:



203, Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 1, Հոռոմոս ՈԶԶ ՍԱՐ 146, Բաղ-  
նայր ՈՄԹ ՍԱՐ 180), Ապաստամբ > Ապստամբ > Ապրստամբ  
(Մշկավանք ժԳ ՄՎ). այս անձնանվան մեջ կարելի է դիտել նաև  
Ապրստամբ < ապստամբ փոփոխությունը, եթե ընդունենք, որ  
այն կարող է առաջանալ ապստամբ բառից: Տապանատուն > տա-  
պրնատուն (Բաղարան ՈԿ ՍԱՐ 203): Ե > Ր, կարսեցի > կարսցի >  
կարրցի (Անի ՈԶԳ Գ I 35), Բարսեղ > Բարսրղի (Անի ՈՒԹ Գ I 12,  
ևտ ՈՒ Գ I 2): Ի > Ր, հանգրստարան (< հանգիստ) (Անի ՈԶԸ Գ  
I 17, Հաղարծին ՈԿն ՄՎ, Առաքելոց ժԳ ՄՎ, Հաղբատ ԶԻԳ ԿՂՀԲ  
240, Քանաբեռ ԶԺԵ ՄՎ, Կողբ ՈՒ ՄՎ), հանգրստեան (Ամաղու  
ԶՄԲ Գ III 233), բժրշկուրի (< բժիշկ) (Անի ժԳ Գ I 26), Առս-  
տակէս < Ռրստակէս (< Արիստակէս) (Մշկավանք ԶԺԲ ՄՎ, Մարց  
ԶԳ ՄՎ, Կեչառիս ժԳ ՄՎ), երկրպագէֆ (< երկիրպագէֆ) (Հա-  
ռիճ ՈԼէ ՄՎ), երաժիշտի (< երաժիշտ) (Հառիճ Զէ ՄՎ), Բաղրո-  
նի (< Բաղրին) (Պեմզաշեն նՁԵ)<sup>53</sup>, պարսսպին (< պարիսպ)  
(Մարինե ԶԿԶ ՄՎ), նրնջեցելոց (< նինջ) (Կեչառիս ժԳ ՄՎ, նո-  
րադուզ ժԳ ՄՎ), պղրնձահանացս (< պղինձահանֆ) (Ախթալա  
ՈԼէ ՄՎ), Սեվրննին (< Սեփնն) (Ավան ԶԿԲ ՄՎ), Ի հրմանէ  
(< հիմն) (Անի Ո Գ I 56):

Ու > Ր, ժողովրդոցն (< ժողովուրդ) (Անի ՈԶԸ Գ I 17),  
վերստին (< վերուստ) (Անի Գ I 44, ևտ Ո Գ I 56, Ամաղու ՈԶ  
Գ III 211, Մարմաշեն ՈԶԳ ՕրԾ ՈՒՏ 443, Հաղբատ ՈՒԳ ԿՂՀԲ  
237, Մեծարանց վանք ՈԿԱ)<sup>54</sup>, սրբոյն (< սուրբ) (Անի Ո Գ I 56),  
յանդրգնի (< յանդուրգն) (Հերհեր ԶԼԲ Գ III 51), գալրստեան  
(< գալուստ) (Յաղաց բար նՂԳ Գ 146, 149, Հովհաննավանք, ժԳ  
ԿՂՀ 101, Սանահին, ԶԼԸ ԿՂՍ 164, Վահանավանք ժԱ Գ II 138,  
Մշկավանք ժԳ ՄՎ, Խորանաշատ ժԳ ՄՎ), մորնչէր (< մունչ)  
(Ամաղու ԶԵԹ Գ III 237), Մերնդեան (< մունդ) (Հաղբատ ժԳ  
ԿՂՀՎ 247), ձնրնդովֆ (Բաղարան ժ Մարք ՀՄ 90), Մերնդոց  
(Գեղարդ ՈԼ), կարմրնջխեյին (< կամուրջ) (Բաղարան ՈԿ ՍԱՐ  
203), կարմրնջէն (Մարմաշեն ՈԶԳ ՕրԾ ՈՒՏ 443), շրջանակի  
(< շուրջ) (Կարմրավոր ժԳ ՄՎ), սերնդեան (< սնունդ) (Հառիճ  
ժԲ ՄՎ):

Ը ձայնավորով վկայված վերոհիշյալ բառերը այլ բնագրե-  
րում ավելի հաճախ փոքրագրված են նաև առանց Ր-ի, սակայն

53 Ա. Մանուչարյան. Պեմզաշենի շրատարակված մի արձանագրություն.  
ԳԱ «Տեղեկագիր», 1965. № 5, էջ 87—88:

54 Խ. Գաղյան. նշվ. հոդվ., էջ 139:



այդ շի նշանակում, թե այդ բառերի մեջ տվյալ դիրքում՝ Ք ձայնա-  
 վորը այլևս չէր հնչվում. պետք է կարծել, որ երկու դեպքում էլ  
 Ք-ն արտասանվել է, և բառերի կրկնակ գրությունը առաջանում է  
 արձանագրության հեղինակի կամ փորագրողի գրագիտության  
 աստիճանից: Եթե բնագիր կազմողը հետևել է ավանդական գրու-  
 թյանը, ապա բառերի կազմում հնչվող Ք-երը մեծ մասամբ շնչ-  
 արտահայտվել առանձին գրով, իսկ եթե հեղինակը հմուտ շի-  
 նելով գրական լեզվի և ուղղագրության իմացության մեջ բնա-  
 գիրը շարագրել է բոլոր արտասանության, այդ դեպքում ար-  
 դեն հնչվող Ք ձայնավորները ամենուրեք գրադեցրել են իրենց  
 տեղերը, և այդպիսով նրանց գրությունը, մոտենալով կենդանի  
 արտասանությանը, զգալի շափով հեռացել է մեսրոպյան ուղ-  
 ղագրությունից: Այս իրողությանը արժեքավոր փաստեր է բն-  
 ձևում ուսումնասիրողներին ժամանակի բարբառային հնչման  
 մասին պատկերացում կազմելու համար:

Վիմական բնագրերում նկատվում են նաև այնպիսի դեպքեր,  
 երբ բառակցի արմատական Ք ձայնավորը անտեսվում և շի  
 փորագրվում, սակայն շպետք է կարծել, թե այս դեպքում Ք-ն  
 այլևս չէր հնչվում: Ը տառաձևի բաց թողումը տեղի է ունենում  
 բառամիջում իրար հաջորդող բաղաձայնների մեջ նրա հնչման և  
 գրության օրինաչափության համանմանությամբ, երբ Ք-ն հընչ-  
 վում է, բայց շի գրվում: Այս երևույթը դիտվում է նաև հին ձե-  
 ազրերում. Լազարյան ձեմարանի ՅԼԶ թ. ավետարանում, օրի-  
 նակ, կանոնավոր ձևերի հետ վկայված են նաև առանց արմա-  
 տական Ք-ի՝ յնրբիս (=յրնրբիս), զնկեր (=զրնկեր), զնուրեալ  
 (=զրնուրեալ), յնչից (=յրնչից), յնծայս (=յրնծայս)<sup>55</sup>: նման  
 գրությամբ բառեր հանդիպում են նաև Ազաթանգեղոսի նորա-  
 հայտ կրկնագրում՝ յնքեան, յնրբիս, ինչպես նաև Կյուրեղ Երու-  
 սաղեմացու երկի նորահայտ ձեռագիր պատճառիկներում, որ հե-  
 տադոտող Ս. Քոլանջյանի կարծիքով արտագրվել են Թ դա-  
 րում՝ զնբացս, զնբերցալսղ, զնկերն<sup>56</sup>: Վիմագրերում այդպիսի  
 օրինակները այնքան էլ շատ չեն, բայց կան: Հնագույն վկայու-

55 «Ավետարան բոս թարգմանութեան նախնեաց մերոց», Մոսկվա, 1899,  
 էջ Թ:

56 Հ. Անադյան, Քննություն կրկնագիր Ազաթանգեղոսի, «Հանդես ամսօրյա»,  
 1913, № 1, էջ 1—19. Ա. Քոլանջյան, նշվ. հոդվ., «Բանբեր մատենագրական», №  
 5, էջ 227:



թյանը դանում ենք վահանավանքի ՇԼԵ (1086) Թ. բնագրում, որտեղ քստ նախդիրը փորագրված է ստ. «վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ ստ (=քստ) մարմնո (Գ II 138): «Եթէ որ հակառկայ գրոյս այսորիկ յաւագաց, կամ յնրդանեաց (=յրնդանեաց)» (Անի ԺԳ Գ I 12), Յնտրեալսն (=յրնտրեալսն) (Յաղացքար 226), «Յնտանեաց հակառ կա» (Կոչ Շե ՄՎ), «Զատ յնչից (=ընչից) իւրոյ» (Հովհաննավանք ԺԲ), «Եւ գնեցին յնչից իմոց» (Սաղմոսավանք ԺԳ ՄՎ), «Մինչ յնգուզուտն (=ընկուզուտ)» (Ն. վարագ Ոեկ ՄՎ):

Ինչպես ակնհայտ դարձավ մեր համառոտ տեսությունից, ը ձայնավորի հնչման և գրության՝ վիմական բնագրերում նկատվող շեղումները կարելի է ամփոփել մի հիմնական կետում. հին հայերենի կամ հետագայում փոխառված բառերում արտասանվող ը հնչյունը արտահայտվում է նաև գրությամբ: Հասկանալի է, որ այս իրողությունը չէր կարող տեղի ունենալ գրական արտասանության հետևությամբ, քանի որ գրական հուշարձաններում վկայված ժամանակաշրջանում գրությունն ավանդական էր, չէր համապատասխանում արտասանությանը և զգալի շափով հեռացել էր նրանից: Այն կարող էր առաջանալ կենդանի խոսակցական լեզվի, բարբառային արտասանության ազդեցությամբ, որտեղ ը-ն հնչվում էր բոլոր նշված դիրքերում և, ի տարբերություն մերոսյան շրջանի ուղղագրության, վիմագրերում կարող էր արտահայտվել նաև գրությամբ: Արդի ուսումնասիրված բարբառներում ևս, ինչպես և վիմական բնագրերում, հնչվող ը ձայնավորը կարող է գրվել բացի գրաբարյան կանոնավոր դեպքերից նաև՝ Ա. Բառամիջում, իրար հաջորդող երկու և ավելի բաղաձայնների միջև, նրանց խճողումից խուսափելու և բարեհնչունության նպատակով, Բ. Բառասկզբում սկ, ստ, սպ, սի, շկ, շպ, շտ, զբ հնչյունակապակցութուններից և ո, լ ձայնորդներից առաջ հայերենի արտասանական հնարավորութունների թելադրանքով և բարեհնչունության համար, Գ. Բառասկզբում կամ բառերի մեջ իրրև այլ ձայնավորների հնչյունափոխության արգասիք:

#### Ի ՉԱՅՆԱՎՈՐ

Ի ձայնավորը հին հայերենում իրրև կանոն շեշտակորույս կամ նախաշեշտ գիրքում հնչյունափոխվում էր ը հնչյունի, առանց գրությամբ արտահայտվելու և կամ սղվում էր խոսքու-



Հնչյունափոխական այս հիմնական օինաչափությունը ավելի յայնորեն զործում է նաև միջին հայերենում և վիմական արձանագրություններում, թեև այստեղ դիտվում են ի հնչյունի փոփոխության այնպիսի երևույթներ, որոնք անձանոթ էին զբարբարին և անշուշտ գալիս էին տեղական խոսվածքներից: Մի կողմ թողնելով ի ձայնավորի՝ զբարբարից հայտնի փոփոխությունները, ներկայացնում ենք հնչյունափոխական այն իրողությունները, որոնք հատուկ են միայն Ժ—ԺՊ դարերի վիմական բնագրերին:

Ա. Ի ձայնավորը կարող է սղվել կամ վերածվել ը հնչյունի բառի ուղիղ ձևում, այսինքն անկախ շեշտափոխության ազդեցությունից, մի շարք հաճախ զործածվող անձանուններում և տեղանուններում: Տիգրիս > Տգրիս, «Ի Տգրիս, զջաղացն» (Բագարան ԶԺԱ ՍԱՐ 189): Գրիգոր > Գրգոր, անձանունը մատենագրական երկերում և ձեռագիր հիշատակարաններում այսպիսի փոփոխություն չէր կրում. «սբ Գրգոր» (Ճամբարակ նՁէ ՄՎ), Գրգորէս (Շխմուրատ ԺԲ ՄՎ), «Շինեցի զԳրգորաշէն» (Բարձրաբաշ ԺԳ ՄՎ), Գրգորիկ (Հալիձոր ԶԺԳ Դ II 52, Բնունիս ԺԳ Դ II 117, Կարմրաշեն, նլթ Դ III 41, Աբատես Դ III 125, Մարտիրոս ԺԳ Դ III 180), Գրգոր (Դարաբաս Դ II 112, Կարմրաշեն ԶԼԱ Դ III 67, Շատին ԺԳ Դ III 157, Կարմրաշեն Զ Դ III 43, Ալայաղ ՈՂԶ Դ III 114, Պառավաձոր ՈԻԹ ՄՎ):

Բ. Իկ վերջածանցով մի բանի երկվանկ բառերում ածանցի ի ձայնավորը շեշտը կորցնելով սղվում կամ հնչյունափոխվում է ը-ի: Գրական հայերենում այդ բառերը անփոփոխ են մնում. «Ես՝ Մխիթար որդի Դեղկա (<Դեղիկ) շինեցի զգեալս զՄարտիրոս» (Մարտիրոս ԶԼԲ Դ III 183), «Ես՝ Դուհարշահս կողբացի զհուգակից Դսլրկանն (<Դսլիկ)» (Բագարան ՈՁԴ ՍԱՐ 204), «Ա: Ժամ Յիսկա (<Յիսիկ) անեցո» (ն. վարագ ԺԲ ՄՎ), «Ես՝ Գրբիգոր ես իմ եղբարբս Բշտկա (<Բշտիկ) թոռներս տուար» (Լրմբատ ԺԳ ՄՎ), «Ինձ՝ Դաւթի եւ Կարնկա» (<Կարնիկ) (Սանահին ՈՂԱ ԿՂՍ 108):

Գ. Ի ձայնավորը շեշտից զրկվելով հնչյունափոխվում է ը-ի, փոփոխությունը դիտվում է նաև հին հայերենում, սակայն զբարբարում ը-ն չէր զրվում, մինչդեռ արձանագրություններում այն զրվում է, որ սպացույց է նրա հնչման: Բազմաթիվ փաստերից նշում ենք մի բանիսը. «Վերբաթին նորոգեցի ի հրմանէ (<հիմն)» (Անի Ո Դ I 56), «... :Ա: Նարնչին (<Նարնջ), :Ա: ինձ» (Թատատ ԺԳ Դ III 79, Մշկավանք, ԺԳ ՄՎ), «Ի Ռ Ո Ձ Ժ զրմպիադի



(«նղիմպիադ, ոլիմպիադ») լինելիութի, ՄԿ զպիադի այ մարմնա-  
նալոչ» (Հոռոմոս նՁէ ՍԱՐ 166), «ես՝ Խաշուշս աորնացի (<Ա-  
ռին») (Բաղարան ժԳ ՍԱՐ 204), «եսու զիմ Աարնաց էզին»  
(նա), «Բ: աւր Ազրզին (<Ազրզ)», այլ բնագրերում Ազզին (Գե-  
ղարզ, ժԳ Հով ԽԱՂ III 42, Արշո առիճ ժԳ ՍԱՐ 191, Ամաղու ՈՂ  
Գ III 213, Մշկավանք ժԳ ՄՎ), «ես՝ Տէրունս որդի Խալըլին...  
կակնեցի զխէշս» (Քումանյան ՉԼ ՄՎ), «ես՝ Սամսոն որդի Ար-  
տաշրի (<Արտաշիր)» (Օշական ՈՂԱ ՄՎ), այլ բնագրերում՝  
յԱրտաշրէ (Մրեն ՉԻ Գ I, VI): «Եւ զայն տունն, որ Սեւրթենց երմ-  
նակից Լ (<Երմնակից)» (Բաղնայր ՈՁԲ ԲԱՍ 167): Մնացած օ-  
րինակները նշել ենք ը>ի փոփոխությունները շարադրելիս:

Բառերի անփոփոխ ձևերում շեշտից անկախ, հաճախ նույ-  
նիսկ շեշտակիր վանկում ի ձայնավորի սղումը կամ վերածվե-  
լը ը-ի անձանոթ է հին հայերենին և նկատվում է միայն արևե-  
լահայ մի բանի բարբառներում: Այս հնչյունափոխությունը տի-  
րապետող օրինաչափություն է Ղարաբաղի, Հաղրութի, Շամա-  
խիի, Մեղրու, Ազուլիսի, Կաբավաբերդի բարբառներում, որտեղ  
հին հայերենի ծիա, փիղ, ծիծաղ, լիզել, գիշեր, սիրտ, Բիք, վիզ  
և այս կարգի այլ բառեր արտասանվում են՝ ծրա, փրղ, ծրծաղ,  
ծծաղիլ, լրզել, Բշիւ-Բրշէր, սրտ, Բրք, վրզ (Ղարաբաղ 35, Շա-  
մախի 23—24, Մեղրի 40, Ազուլիս 57, Հաղրութ 22), այսինքն  
առկա է արմատական շեշտակիր ի հնչյունի սղում կամ վերա-  
ծում ը-ի: Վիմական բնագրերում այս կարգի վկայությունները  
այնքան էլ հաճախ չեն, ավելի սովորական է ի>ը նախաշեշտ  
կամ շեշտակորույս դիրքերում, որ տարբեր շափերով տեղի է ու-  
նենում բոլոր բարբառներում և կարող էր ներմուծվել վիմագրու-  
թյան մեջ՝ բնագրի հեղինակների խոսակցական լեզվից:

Գ. Քննվող ժամանակաշրջանի վիմագրերում մի շարք բա-  
ռերում հին հայերենի ի ձայնավորի փոխարեն փորագրված է Ե  
տառաձևը: Հնագույն վկայությունը գտնում ենք Սյունի վանք  
տաճարի մի հիշատակագրության մեջ, որ ըստ տառաձևերի հը-  
նագրական կերպարի ժամանակամերձ է շինությանը՝ է դարին.  
«Շերտեանի Մամեկոնեան (= Մամիկոնեան)» (Սխիան Գ II 88):  
«Քոտն մեծին Մագեստրոսի (= Մագիստրոս)» (Հերհեր ՉԼԲ Գ III  
51), այլ բնագրերում բյուզանդական պաշտոնյան և սրանից ա-  
ռաջացած անձնանունը ավանդված է՝ Մագիստրոս, Մագիստոս  
(Անի 1056—60 Գ I 37, 38): «Պատրոն Ջեանշերն (= Ջիան-  
շեր) և ամուսին իւր Տուլին միարանեցան» (Հաղրատ ժԳ ԿՂՂԲ



147), «Ես՝ Բէսուլունս դուտր Մենասին (=Մինաս) (Հաւուց թառ ժԳ Հով 26), «Տուաք ի հայրոց ի Գատի վանս զԿարմընչատափա այգենն (=այգին)... ով դայն այգենն (=այգին) յայս վանացս հանէ, ի փառաց որդոյն որոշել եղիցի» (Գատի վանք ՈՂ ՍԲ), «Ետու տարենն (=տարին) :Բ: պատարագ...», «Ետուն պատարագ տարենն :Ա: ար» (Մարց ԶԳէ ՄՎ), «Եւ տվի տարենն :Ե: փաս գինի» (Աշտարակ ԶԶԳ ՄՎ), «Ես՝ Մխիթար սահմանեցի տարենն» (Ալայազ ժԳ Գ III 119): «Ճշմարիտ հավատով եւ ուղեղ (<ուղիղ) սրտի» (Ալայազ ՊԱ Գ III 118): Այս փոփոխութիւնը հիշեցնում է Ղարաբաղի բարբառի ի>ըէ կամ ի>է անցումը, որ լայն տարածում ունի բոլոր խոսվածքներում (համտ. ամիս>ամէս, միս>մըէս, գետի>կյէտէ): Սակայն այգի>այգենն կարելի է համարել նաև բառի հոգնակի ձևը՝ այգեանն, որ երկբարբառի պարզումով կարող էր դառնալ այգեն: Այլ օրինակներ շունենալով դժվարանում ենք ստուգապես հավաստել այս երեւույթը:

Ի>է փոփոխութիւնը նկատվում է մի շարք բառերում և հատկապես անձնանուններում կամ տեղանուններում: Եղած օրինակներով դժվար է որևէ օրինաչափութիւն սահմանել այս փոխանցման մասին, սակայն չի կարելի դրանք պատահական սխալագրութիւն համարել, քանի որ ի>է հնչյունափոխութիւնը հաստատվում է նաև արդի բարբառների փաստերով (Ղարաբաղ, Մեղրի, Շամախի): Նշում ենք վիճաբերում նկատված օրինակները. «Այս է հանգիստ Էգնատիոսի (=Իգնատիոս) (Ալայազ ԶԾԳ Գ III 111), «Գնեցի գիտապատարանց այգոյն շորեցն (<շորից) մինն» (Հառիճ ժԳ ՄՎ), «Գրեցին :Զ: պատարագ ի տարոջն :Գ: ինձ Ա: Մենասին (=Մինաս) :Ա: իմ հանին» (Հաւուց թառ ժԳ Հով 26), «Ղազարայ տան զկիսն ինձ եւ կեսն Հնէփսէմեա (<Հնիփսիմէ)» (Բազարան ժԲ Օրճ ՈՒ 468), «Յատուր մեծի հէնգըաբարին :Բ: պատարագ» (Ն. Գետիկ ժԳ ՄՎ), «Կամ եղբարց մեր կամ ազգէ, կամ վանեցս (<վանից) հայր» (Սանահին ժԳ ԿՂՍ 125): «Վարդէվարի յայն գինէն (<գինին) տան ի Լերնն» (Սանահին ԶԻԳ ԿՂՍ 162), «զՀալէձորի (<Հալիձոր) Շնհերոյ նրայ հայրէնիք տվի իւր սահմանաւրն» (Ամադու ԶԻԳ Գ III 235): Գրեզոր հաճախ դորձածվող անձնանունը հին վիճաբերում մի քանի անգամ փորագրված է Գրէզոր(աս), Գրեզոր, այսինքն առկա է ի>է, և անցումը: Հնագույն վկայութիւնը պահպանվել է Հնիփսիմե տաճարի շինարարական արձանագրութեան մեջ, որը փորագրվել է 618 թվականին. «Ես՝ Կոմի-



«ասսակեղեցապան սրբոյ Հովիսիմէի կոչեցայ յաթոս սրբոյն Գրէգորի» (Օրծ ԻՏ 407), ապա Մաստարայի, մոտավորապէս նույն ժամանակների կառուցողական բնագրում. «Գոհանամ այ որ ետ ինձ Գրէգորասայ»<sup>57</sup> և Աշտարակի Կարմրավոր հուշարձանի (է դար) շինարարական արձանագրութեան մեջ. «Գեղարազարէս յԵրիցունեաց Գրեգորի քահանայի» (ՄՎ)<sup>58</sup>: Մի հիշատակութիւն էլ դանում ենք ավելի ուշ շրջանի՝ 1060 թ. Անիի արձանագրութեան մեջ՝ «Յորժամ առին զասնուարութիւնս Մխիթար իսլատոսն Կրտին որդին եւ Գրեգոր Լապաստակա որդին սպաթարկանկիտասն» (Մայր տաճար Գ I 37): Վերջին վկայութիւնը պահպանվել է Անիի ավելի ուշ շրջանի մի արձանագրութեան բեկորի վրա՝ Գրեգոր (ԺԳ դ. Գ I 71): Նույն հնչյունափոխութիւնը տեղի է ունեցել նաև Սարգիս անվան մեջ, որ Արծվանիկի ԺԱ դարի արձանագրում փորագրված է Սարգէս. «Յիշեա Քս ամ զԳուգոր երեց, զԱկոր էրէց, զՍարգէս և ողորմեայ ի բում ահեղ ատենիդ» (ՆՂԳ Գ II 134):

Ի>է. Ե հնչյունափոխութիւնը անձանոթ է դասական և հաղասական հայերենի գրական հուշարձաններին և լայնորեն դիտվում է միջին հայերենով շարագրված երկերում կամ ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես ԺԳ—ԺԴ դդ. ձեռագրերում անվանդված են՝ շառաւեղ, լուսաւեղձ, մենչեւ, ուղեղ, պեղծ, փոխանակ կանոնավոր՝ շառաւիղ, ուղիղ ձեւերի: Ամիրզոյվաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» աշխատութեան մեջ հանդիպում են՝ ջիղ>ջեղ, ծիծ>ծեծ, կից>կեց, շինել>շեւել և այլն:

Տվյալ հնչյունափոխութեան բաղմամբիվ փաստեր են տալիս նաև Ում, Լիս ճյուղերի արևելյան, հատկապէս Ղարարաղի, Շամախիի, Հաղրութի, Մեղրու, Ագուլիսի, Կաքավարերդի, Կարճևանի, Լոռու բարբառները: Մի կողմ թողնելով ի>ըէ փոփոխութիւնը (մըէս<միս, ամըէս<ամիս, քամըէ<քամի և այլն), որ լայնորեն դիտվում է նշված բարբառներում և կարող է նույնը չլինել ի>է անցման հետ, կարելի է նշել այս երևութի բաղմամբիվ արտահայտութիւնները հիշյալ բարբառներում, ըստ այդմ, ի>է օրինաշարիորեն տեղի է ունենում հետևյալ դեպքերում. Ա. Բառամիջում շեշտակիր վիճակում. լէր<լիւր, հէն<հին, մէտ<միտ,

57 Գ. Հովսեփյան, Քարակոչ հայ հնագրութեան, էջ 8, տախտակ Ե:

58 Ալիշան, Այբարատ, Վենետիկ, 1890, էջ 186, այստեղ խնդրո առարկա անձանոթը վերծանված է Գրեգոր:



սէրա < սիրա, ցէց < ցից (*Մեղրի 38*), խէղն < խիղն, աղէֆ < աղիֆ (*Խոյ 27, Լոռի 52*), հէնգ < հինգ, տէզ < տիզ, ֆէք < ֆիք (*Ղարաբաղ 35*), կրնէկ < կնիկ, մըքէն < մքին (*Շամախի 22*): Բ. Երկվանկ կամ բազմավանկ բառերում, շեշտակիր վիճակում. փէլուն < փիլուն, քըշէոֆ < կշիոֆ (*Շամախի 24*), դէզիլ < դիզել, խէզան < խիզան, սէրիլ < սիրել, սէպտակ < սպիտակ, տէկին < տիկին (*Մեղրի 38*): Գ. Երկվանկ կամ բազմավանկ բառերում շեշտահաջորդ վանկում՝ ծաղէզ < ծաղիկ, տէղէն < ղեղին, մօխէր < մոխիր (*Ղարաբաղ 35*), բիրէկ < բոբիկ, ախշէկ < աղջիկ, կարմէր < կարմիր (*Մեղրի 41*), պանէր < պանիր, կօրէզ < կորիզ (*Շամախի 24*), հէրէնջ < երինջ, կացէն < կացին (*Հաղրուի 22*): Դ. Բառավերջի բաց վանկում, շեշտահաջորդ գիրքում. տարէ < տարի, տակոէ < տակոի (*Ղարաբաղ 35*), ծիլէ < ածելի, նալէ < աճալի, բղոնէ < աղաւնի (*Մեղրի 41*), քացէ < աքացի, յէխցէ < եկեղեցի, մօրէ < մորի, խընամէ < խնամի, պէխէ < բոխի (*Շամախի 23*): Ե. Միայն Ազուլխի բարբառում սակավաթիվ բառերում ի > է տեղի է ունենում բառասկզբին, շեշտակիր վիճակում. օրինակ, էլիկ < իլիկ, էմ < իմ, էլաման < իմին (*Ազուլխ 60*):

Ի > և փոփոխության սակավաթիվ վկայութիւններ են սովանդված Մշո, Վանի, Ն. Զուղայի բարբառներում, հետևյալ միավորներում. լեոք < լիք, ծեոտ < ծիրա, քշեոֆ < կշիոֆ, խեմֆ < հիմֆ, հեղ < ջիղ (*Ն. Զուղա 70, Մուշ 27, Վան 37*):

Ինչպես ակներև է, վիճական արձանագրութիւններում ի > է, և վկայութիւններից, տվյալ հնչյունափոխութիւնը մեծ մասամբ արձանագրվում է բազմավանկ բառերում կամ հաճախ զործավող անձնանուններում, շեշտակիր կամ շեշտակորույս վանկերում: Ի հանգող բառերում վերջնահանգ ի > է, և փոփոխութիւնը վիճագրերում շի ավանդված, նույն երևույթը բառասկզբում դիտվում է միայն էգնատիոս (< Իգնատիոս) անձնանվան մեջ:

Այսպիսով, ի > է, և հնչյունափոխութիւն՝ վիճագրութիւն մեջ պահպանված օրինակները կարող էին ներթափանցել այն բարբառներից, որոնցում տվյալ փոփոխութիւնները օրինաչափորեն տեղի է ունենում վերը՝ Ա, Բ, Գ կետերում նկարագրված պայմաններում, դրանք են՝ Ղարաբաղի, Հաղրուի, Շամախիի, Մեղրու, Ազուլխի, Կարճևանի, Կաբավաբերդի, Խոյի, Լոռու բարբառները:

Հ. Աճառյանը և Կ. Բասմաջյանը ի > ոյ հնչյունափոխութիւն արդյունք են համարում Գարէգոյն անձնանունը, որ քանիցս հի-



շատակված է ժԳ դարի արձանագրություններում, և նրանց կարծիքով առաջանում է Գարեգին անունից: Մեջ ենք բերում եղած վկայությունները. «Ես՝ Գարեգոյնս էտու զիմ գանձագին արտն» (Աստվածածին ԲԱՍ 117), «Ես՝ Գարեգոյն էրէց որդի Մանգիկ իրիցու» (Բազմայր ԶԺԱ ՍԱՐ 187), «Զոր իմ որդին Հազրպէկն ի Գարեգոյնէն գրակնեց» (Հոռոմոս ԶԺԸ ՍԱՐ 158): Հագիւթ թե հրնարավոր լինի միջին հայերենի կամ հայ բարբառների օրենքներով արդարացնել Գարեգին > Գարեգոյն հնչյունափոխությունը: Ավելի հավանական է թվում անձնանունը բաղադրված համարել զարի և գոյն բառերից ա հոդակապով՝ զարի + ա + գոյն = Գարեգոյն, զարու գույն ունեցող (հմմտ. զարեղոյր < զարի + ա + դոյր = դյուրել, գուշակել), զարեկուրկոտ < զարի + ա + կուրկոտ, զարեհաց < զարի + ա + հաց և այլն:

Ե. Վիմական բնագրերում առանձին օրինաչափություն է առաջանում ի-ով վերջացող բազմավանկ բառերի հոլովման ժամանակ վերջնահանգ ի ձայնավորի կրած հնչյունափոխության մեջ: Գրարարում այդպիսի դեպքերում ի-ն ո հոլովիչից առաջ կանոնափորապես վերածվում էր ՚-ի (ի + ոյ = ույ). հոգի > հոգույ, զինի > զինույ, տեղի > տեղույ, եկեղեցի > եկեղեցույ, հորեհացի > հորեհացույ և այլն: Հետագա դարերի գրական հուշարձաններում և հատկապես վիմական արձանագրություններում հիշյալ օրինաչափությունը խախտվում է և այս կարգի բառերի թեք հոլովածե վերը կազմվում են առանց ՚-ի, այսինքն տեղի է ունենում ոչ թե բառավերջի ի > ՚ անցում, այլ սոսկ ի ձայնավորի սղում կամ անկում՝ հոգույ, տեղոջ, եկեղեցոյ, որդո և այլն: Ուսումնասիրողները այս նոր հնչյունափոխության սկիզբը համարում են ժ դարը, հիմք բնդունելով 976 թ. կալվածագրում վկայված որդոց (< որդուց), եկեղեցույ (< եկեղեցույ), զայգոյ (< զայգույ) հոլովածեքը: Սակայն հնագույն վիմագրական հուշարձանները նոր փաստեր են տալիս հավաստելու, որ բազմավանկ բառերի վերջնահանգ ի ձայնավորի անկման կամ ի > ՚ հնչյունափոխության խախտումների արտահայտությունները դիտվում են գրանից մի քանի դար առաջ, Զ—է դարերում, և որ ժ, ժԱ դարերում արդեն օրինաչափ ու գերակշիռ էր այդ կարգի բառերի ոչ թե ույ, այլ ոյ հոլովական վերջավորությունը: Նշված հոլովածեի նախնադուլն վկայությունը կարելի է համարել Գավիթ Գնթունու մեղ հայտնի անթվակիր տապանագիրը, որը Զ դարին է պատկանում. «Այս է հանդիսա Գաթի Գրթունեաց տն. որդո (< որդույ) վասակա»: Բազարանի



տաճարի պատին Բուա Առուեղյանի կառուցողական արձանագրու-  
թյան մեջ, որ ստուգապես է դարի 40-ական թվերին է փորագրվել,  
նույնպես վկայված են թեք հորովում վերջնահանգ ի-ի անկման օ-  
րինակներ. «Եւ երեսուն եւ ութ ամոյն կորուսին զԲուան... ան Գրի-  
գորի Վանանդացո» (Օրծ ԻՏ 390): Գրաբարում ընդգծված հոր-  
վածակերը օրինաչափ կլինեն՝ ամոյն (<\*ամի)՝ Բազավանում 639  
թ.՝ Բասն եւ մի ամոյն (Օրծ ԻՏ 371), Ալամանում է դարի 40-ա-  
կան թվերին՝ քսան եւ եւթն եմոյ (Օրծ ԻՏ 395), Վանանդացոյ՝  
Բազավանի 639 թ. բնագրում՝ վարդապետուրյամբ Իսրայէլի Գո-  
ռաղնեցոյ (Օրծ ԻՏ 386):

Հետագա դարերում հնչյունափոխական այս երևույթը լայն տա-  
րածում է ստանում և ընդգրկում է ի հանդող բոլոր բազմավանկ  
բառերը: Ահա մի քանի օրինակներ Թ—ԺԱ դարերի վիմական ար-  
ձանագրություններից. «Ի տերութի Սմբատայ հոռոց աստարապե-  
տի Բագրատուն...», ծառա Սմբատա Բագրատուն (<Բագրատուն-  
ոյ)» (Արուճ 3ԺԶ ՄՎ), «Կապեալ եղիցի հոգոյ (<հոգոյ) եւ մարմ-  
նոյ» (Քոփրիկուլախ նԸ)<sup>59</sup>, «Սմբատա Բագրատունոյ շահանշահի»  
(Հայկաձոր նԼԳ ՄՎ), «Վասն իմ հաւրն հաւոյն (<հոգոյն)» (Ա-  
րուճ նԼԶ ՄՎ), «Որդո Մուէի» (Տումի նեԹ ՄՎ), «Կամ եղեւ ինձ  
Գագկա շահինշահի ուրոյ (<ուրոյ) Աշոտոյ» (Մաստարա նԾԹ  
ՄՎ), «Վասն հոգոյ իմոյ... եւ ուրոց իւրոց» (Մաստարա նԿԳ ՄՎ),  
«Այս իմ գիր է Զարարէ իշխանաց իշխանի ուրոյ Վահրամա..., իմ  
պատրոնին հոգոյն» (Բյուրական նՂԳ)<sup>60</sup>, «Բերի ոսկի մատանեաւ  
գիր պատուփեան զինքնակալ ծիրանեծին բագունոյն (<բագուն-  
ոյն)» (Անի 1060 Գ I 37) և այլն:

Ի ձայնավորի անկման այս դեպքերը ԺԱ—ԺԳ դարերի վիմա-  
գրերում և միջին հայերենում տիրապետող օրինաչափության են վե-  
րածվում, որը և նպաստում է ոյ>ու հնչյունափոխությամբ ի-ով  
վերջացող բազմավանկ բառերի ու հորովման ձևավորմանը: Սա-  
կայն, շպեար է կարծել, թե ի>ւ փոփոխությունն այլևս չի դիտվում  
այդ կարգի բառերի թեք հորովներում: Երկու ձևերն էլ՝ թե ի>ւ և թե  
տոանց ի ձայնավորի՝ հոգոյ = հոգոյ գեո երկար ժամանակ դուզա-  
հեո գործածություն են ունենում: Հավանաբար ժամանակի արտա-  
սանությանը համապատասխանում էր հոգո(յ), մինչդեռ հոգոյ

<sup>59</sup> Աշխ. Քալանթար. «Վանասանի արձանագրությունները» (անտիպ):

<sup>60</sup> Ե. Տեր-Մինասյան. Ամբերգածորի արձանագրությունները, «Էջմիածին»,  
1961, № 5, էջ 48:



պահպանում էր իր գոյութիւնը միայն ավանդական հնչման կամ գրութեան հետևութեամբ: Նոր փաստեր չենք ներկայացնում այս իրողութիւնը հաստատելու համար, բանի որ դրանք բաղմամբիւմ են և գերակշիռ: Անի տեղանվան թեր հուշումներ լիկայութիւնները քաղաքի հուշարձանների տարրեր ժամանակների արձանագրութիւններում լիկայութիւն կարող են լուսարանել քննիւող հնչումնափոխութեան վիճակը: Գրարարյան կանոնաւոր ւ ձեր՝ Անի > Անոյ հանգիստում է ՇԸ, ՈԿԵ, ՉԻՉ թթ. բնագրերում՝ մայրաքաղաքիս Անոյ (Դ I 14, 15, 37), իսկ ի ձայնաւորի սղումով առաջացած Անոյ, Անո փորագրուած է հետևյալ բնագրերում՝ քաղաքիս Անո (ՈԿ Դ I 63), մայրաքաղաքիս Անոյ (ՈՉԸ Դ I 17), մեր՝ Անո գաղմաշիքս (ՉԻԵ Դ I 20), տեսայ զԱնո իրիցանուս (ՉԻԹ Դ I 23), տեսար զԱնո աթոռս (ՉԼԸ Դ I 22), որ Անոյ տաղմաճի էի (անթիւակիր, հավանաբար ԺԳ դ. Դ I 28), Անոյ գաղմաշի (հավանաբար ԺԳ դ. Դ I 30): Նույն Անիի վիճագրութեան մեջ նՁԵ թ. նվիրագրում փորագրուած է ոսկուլ եւ արձարուլ (Դ I 44), իսկ ՈԿԴ թ. ոսկուլ եւ մարգրուաւ, կամ՝ արղոց իւրոց (Դ I 63): Անիի վիճական բնագրերի այս փաստերից պահանջատ է դառնում, որ հնագույն վիճագրութեանում ավելի գերակշիռ է օրինաշարի գրարար՝ Անոյ, ոսկուլ, մինչդեռ ավելի ուշ շրջանում տիրապետող են դառնում՝ Անոյ, Անո, ոսկուլ հնչումնափոխուած ձևերը:

#### Ո (Օ) ՉԱՅՆԱՎՈՐ

Հին հայերենի ո ձայնաւորը միջին դարերում պատմական հնչումնափոխութեան հետևանքով զգալի շարժում փոխել էր իր արտասանութիւնը. բառամիջում և բառաւերջում ո-ն հնչում էր օ, իսկ բառասկզբում՝ վօ: Հնչումնափոխական այս երևույթի առաջին դրսևորումներից են հին ձեռագրերում կամ վիճական բնագրերում պահանջուած այն վիճագրութեանները, որոնցում բառամիջի ո-ի փոխարեն գանում ենք աւ երբեմնի երկրարբառը, որ տրվյալ ոլորտում պարզ օ ձայնաւորին մոտիկ հնչում էր ստացել: Փակ վանկում աւ երկրարբառի օ հնչումնափոխուելը (աւան, աւծ, աղաւթ, առաւատ և այլն) տիրապետող և բոլոր օրինակներն բնագրիկող օրինաշարութիւն է դարձել ԺԲ—ԺԳ դարերում: Սակայն այդ փոփոխութիւնը չէր կարող միանգամից ձևաւորուել, երևույթի դրսևորումները գրարարի գանազան խախտումների և շեղումների ձևով պետք է երևային դրանից մի բանի դար առաջ: Պրոֆ. Ա. Արրահամյանը հատուկ քննութեան նյութ դարձնելով



աւ = օ հնչյունափոխության ժամանակաշրջանի հարցը, հանգում է այն եզրակացության, որ այդ երևույթը սկսվել էր վաղուց, սակայն նրա առաջին արտահայտությունները նկատվում են միայն Ժ—ԺԱ դ.: Իրրև այդ փոփոխության հնագույն օրինակներ հեղինակը մատնացույց է անում վանեվանի տաճարի գմբեթի վրա Շապուհ Բագրատունու ՅՄԲ (903) թ. երկարաշունչ արձանագրությունը, որտեղ վկայված են պաշտոնեայք, տեկչանով և վերր (գրաբարում կանոնավոր՝ պաշտանեայք, տեկչանով), Անիի Արուղամբենք եկեղեցու ԺԱ դարավերջի բնագրից հայտնի փառոֆ (<փառավ), ինչպես նաև Կեչառիսի Աստվածածին տաճարի ՆՁԲ (1033) թ. շինարարական արձանագրության մեջ ավանդված բարեխոսուրն (կանոնավոր՝ բարեխաւսուրն) բառերը, որոնցում առկա է ո, աւ հնչյունների նույնացումը կամ նրանց պոթածություն միմյանց փոխարեն<sup>61</sup>: Չառարկիչով բնավող հրնչյունափոխության ժամանակաշրջանի մասին պրոֆ. Արրահամյանի բնդհանուր եզրահանգման դեմ, հարկ ենք համարում նշել, որ մեջ բերված բառերից երկուսը չեն կարող կովան ծառայել հեղինակի այդ տեսության համար, քանի որ նրանց փորագրման ժամանակը և վերծանությունը հավաստի որոշված չեն: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շապուհ Բագրատունու ՅՄԲ թ. արձանագրության մեջ հստակ կարգացվում է ոչ թե պաշտոնեայք, ինչպես ընթերցվել, հրապարակվել է բազմիցս և հիմք հանդիսացել հեղինակի համար (Շահխաթունյանց, Ջալալյանց, Սմբատյանց, Ալիշան, Լալայան, Կոստանյանց և այլն), այլ գրաբարյան կանոնավոր՝ պաշտանեայք (գրմբեթի վեղարի արևմտյան նիստին՝ ԵՒ ՊԱՇՏԱՆԵԱՆ, իսկ հարավ-արևմտյան նիստին՝ ...ՅՔ ԽՈՐԱՆԻԳ... և այլն — ՄՎ): Մյուս կողմից, հնարավոր չէ աւ = ո նույնացման հնագույն օրինակ նկատել նաև Կեչառիսի բնագրի բարեխոսուրն բառը, քանի որ, շնայած այդ տառաշարքի ընդօրինակության հավաստիությունը, ամբողջ բնագրի իսկությունը կամ հարադատությունը կասկածներ է հարուցում և ՆՁԲ թվագիրը կամ նրա հետագա ՆՄԲ խմբագրությունը ոչ մի չափով չեն համապատասխանում այստեղ հիշատակված պատմական անձերի կամ անցքերի

61 Ա. Արահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի մասին, ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 1, էջ 70—73:



ժամանակագրությունը<sup>62</sup>: Այս կասկածելի բառերի փոխարեն կարելի է *n=wa* նույնացման նոր փաստեր նշել ժ դարի այլ վիմագրերից: Սակայն տվյալ հնչյունափոխական երևույթի հնագույն վկայությունը պետք է համարել ոչ թե Վանեվանի ՅՄԲ Թ. արձանագրության մեջ փորագրված տեղանվագ-ը, այլ Գառնիում կատարանիդե թագուհու կանգնեցրած խաչքարի հիշատակագրի բարեխոսութի բառը. «Թվական ՅԻԸ (879) ես՝ Կատրանիդե հասց թագոհ որ կանգնել զսուրբ խաչս ի բարեխոսութի ինձ»<sup>63</sup>:

Սակայն *n=wa* նույնացման երևույթների առանձին արտահայտությունները նկատում ենք այս վկայություններից շուրջ երկու դար առաջ, հայերեն հնագույն շինարարական արձանագրություններում ևս: Իբրև օրինակ կարելի է հիշել զբարբարի ներկա (ենթակայական) զերբայի ալդ-ոդ վերջավորությունը, որի նախնական օրինաչափ ձևը ուսումնասիրողները համարում են ալդ, առաջացած հնդեվրոպական — *ati* մասնիկից (հմմտ. հին սլավ. *tel.* սուս. *создатель*, լատին. *հուն. ter*, ավելի հնագույն խեթերեն — *atall* (*as*) և այլն)<sup>64</sup>:

Նախնավանի հնագույն տաճարի գոտևորող արձանագրության մեջ, որ անվիճելիորեն փորագրվել է հուշարձանի կառուցումն

62 Կեչաուխի Աստվածածին Եկեղեցու կառուցողական արձանագրության հարազատությունը առաջինը կասկածի տակ է առնում Պ. Հովսեփյանը (Քարտեզ Հայ հնագրության, Վաղարատ, 1913, էջ 13) և առաջարկում բնագրի թվագիրը՝ ՆՁԲ ուղղել ՆՄԲ, համաձայնեցնելու համար բնագրում հիշատակված Գագիկ Ա, Բաղրատունու և Սարգիս կաթողիկոսի ժամանակագրության հետ, քանի որ ՆՁԲ թվականին վաղուց կենդանի չէին ոչ Գագիկ թագավորը և ոչ էլ Սարգիս կաթողիկոսը: Սակայն այս խմբագրումով բնագրի վավերականության նկատմամբ անվստահությունը չի հարթվում, ըստ որում արձանագրության մեջ հիշատակված տաճարի շինարարը՝ Գեղիզո մագիստրոս Հասանի օրդի անհայտ է պատմությունը: Այս և մի քանի այլ փաստերից ելնելով, Ն. Աղոնցը քննվող վիմագիրը «հակասական և կասկածելի» է համարում և նրա փորագրության ժամանակը գրելում Զարբայան շրջանից հետո: Ընդ է, հեղինակը իր նպատակներից ելնելով, համոզիչ չի հիմնավորում այս վարկածը կամ չի տալիս արձանագրության հանդամանալի վերլուծությունը, սակայն բնագրի վավերականության առթիվ նրա արտահայտած կասկածները առայժմ մնում են լիարատված: (Ավելի մանրամասն տե՛ս Պ. Հովսեփյան, Խաղրակյանք..., հատ. Գ, 1942—43, էջ Ի—ԻԲ):

63 Ե. Արաքելյան, Գարն 1, Երևան, 1951, ժող. 84.

64 ՏԷ՝ Ն. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, Ա, Երևան, 1940, էջ 31; Գ. Կապուչյան, К происхождению армянского языка, ԳԱ «Տեղեկագիր» 1946, № 7, ժող. 17—18.



ալարակույց հետո՝ է դարի կեսերին, հստակ կարգացվում է. Գր-  
բիգորի ծնադ (Օրծ ՄՏ 430), նույն դերբայական վերջավորու-  
թյունն է նաև Հոփսիմե տաճարի 618 թ. Կոմիտաս կաթողիկո-  
սի արձանագրում. շինադ (Օրծ ՄՏ 408), կամ Արուճում, Գրի-  
գոր Մամիկոնյանի 666—668 թթ. շինարարական բնագրում. շի-  
նադաց զսա (Օրծ ՄՏ 402): Սակայն վրաստանում գտնվող  
(Գորիի մոտ) Աթենի Սիոնի պատին փորագրված Քողոսակ ճար-  
տարապետի կառուցողական հիշատակագրության մեջ, որ նույն-  
պես ստուգապես է դարի գործ է, պարզ կարգացվում է՝ շինդ  
(նս՝ Քողոսակ շինդ սրոյ եկեղեցոյս)<sup>65</sup>, որ վկայում է, թե  
հիշյալ բնագրերի փորագրման ժամանակ շինդ, ծնդ բառերում  
ս-ն հնչվել է աւ-ի նման, կամ վերջինս այդ դիրքում, փակ վան-  
կում կորցնելով իր երկրաբարառային արտասանությունը վերած-  
վել էր օ պարզ ձայնավորի և կարող էր գրության մեջ նշվել նաև  
ս-ով:

Ժ—ԺԱ դարերի վիժական արձանագրություններում և ձե-  
ռագիր մատյաններում աւ=ս նույնացման արտահայտություն-  
ները ավելի հաճախանում են, որ ապացույց է, թե փակ վանկում  
աւ երկրաբարառի օ արտասանությունն արդեն գերակշիռ օրինա-  
չափություն էր և ընդգրկում էր բոլոր դեպքերը: Վիժական բնա-  
գրերը բազմաթիվ հավաստի փաստեր են տալիս այդ եզրակա-  
ցության օգտին: Միայն Արուճի տաճարի ՆԼԶ (987) թ. կարճա-  
ռոտ արտոնագրում հանդիպում են՝ իմ հարն հաւզոյն (<հոզ-  
ւոյն), մեղաց քաւլուրեան (<քաւլուրեան) (ՄՎ), իսկ Կոշի եկե-  
ղեցու ՆԼ (981) թ. բնագրում՝ ասպարապետութեանն Գրիգարոյ  
(<Գրիգարոյ) (ՄՎ): Թ—Ժ դարերի ձեռագրերի հիշատակարան-  
ներում ևս նկատվում են այդպիսի անցումներ՝ Աշատոյ (<Աշո-  
տոյ) (Թ դար ԳՀՀԶ 89), զմորուսդ (<մարուս) (ԺԲ դ. ԳՀՀԶ  
301): Ազաթանգեղոսի կրկնագիր ձեռագրում, որի գրչության  
ժամանակը ենթադրվում է Թ—Ժ դդ., նույնպես վկայված են  
կրկնակի գրությանը բառեր՝ ս-ով և աւ-ով, այսպես՝ ծնոտ (<ծր-  
նատ), զպիտաղսն (=զպիտողսն), գտեսաւղացն (=գտեսո-  
ղացն), ստացաւղացն (=ստացողացն) և այլն, բայց նաև՝ կարող,

65 Լ. Մեյխեր-Քեկ, է դարու հայերեն արձանագրություններ վրաստանում  
(Ատենի Սիոն). ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 5, էջ 3—5, II. Мурадян, Армянская  
надпись храма Ашотри, ԳԱ «Երաբեր», 1968, № 2, էջ 75—76.



խոստովանող, դառնացողաց<sup>66</sup>: նույն երևույթը ավելի լայնորեն դիտվում է նաև հայերեն հնագույն ամբողջական ձևազրույթ՝ Լազարյան ձևաբանի ՅԼԶ (887) Թ. ավետարանում, որտեղ ու-ի փոխարենն աւ է գրված՝ պարանաւց, Յաւնաննէս, նազարացի, նրշաղ բառերում, բայց գրված է նաև՝ ոզուտ (=աւզուտ), ճնողք, յոժար<sup>67</sup>: Հիմք բնդունելով Ազաթանդեղոսի նորահայտ կրկնագրի զուգահեռ ձևերը Հ. Աճառյանը այն եզրակացությունն է հանգում, որ կրկնագրի բնդորինակության ժամանակ հին հայերենի աւ երկրորդական փակ վանկում արդեն հնչվում էր օ:

Իրողության ապացույց կարող է ծառայել նաև Ժ դարի կեսերին Տայրում բնդորինակված մեզ ծանոթ վրացերեն ձևազրի հայերեն հիշատակազրություններում ի թիվս այլոց ավանդված՝ ոզնիա <աւզնեա, ւժ որհնէ <աւրհնեա բայաձևերը, որոնք արտացոլում են Տայրի հայերի աւ-օ, ո հնչումը վկայված ժամանակաշրջանում<sup>68</sup>:

Հետագա դարերի վիճակն քննարկելու և ձևազրի հիշատակարաններում, մինչև այրուբնեում առանձին օ գրի ստեղծումն ու գործածությունը աւ և ո հանդիպում են կողք-կողքի, զուգահեռ կիրառությամբ, իբրև որոշ զիրբերում միևնույն հնչյունն արտահայտող տառաձևեր: Ահա մի քանի օրինակներ Ժ—ԺԴ դարերի արձանագրություններից. «Աբդ, աւր (<ոբ) որ բնդիմանա իմ հրամանացս» (Մրեն ԺԱ ՍԱԲ 197), «Որ անմաուաց (<անմոուաց) խնդրէ» (նա), «Տր ալորմայ (<ողորմեա) Սահակի» (Մրեն նՂ ՕրԾ Մ 2), «Ընծայեաց Յորդորն յԱրծն բաղարէ յՅ: դահեկան սր կարաղիկէս» (Հաղբատ նՂԳ ԿՂՀԲ 154), «Ես՝ Խաւարեւանիւ չայոց թագոհի» (Տեկոր նի ՍԱԲ 207), «Ետու... զԱրեսայմանց հաղն ամէն շահուղենով» (Սանահին ՈԿԳ ԿՂՍ 122), «Սահակ-գրխատ է, ճնալղի Զարարէա և Իվանէի՝ թագաւորաց հոց» (Անի ԺԲ Գ I 57), «Յիշատակ ինձ և ճնալղաց իմոց» (Անի ՈԿԵ Գ I 4), «Սպասաւորք սորա խաւատացան ժամ կատարել» (Անի ՇԷ Գ I 13), «Ես՝ Մամախաթունս դուստր Խաչերեսին Լաւեցո» (Անի ՈԿԲ Գ I 3), «Վարհմա Լաւեցո» (Հոռոմոս ԺԳ ՍԱԲ 147), «:Զ: աւր ժամ յարբէլն (<յարբարէլն)» (Մեծարանց վանք 2)<sup>69</sup>, «ՄԲ

66 Հ. Աճառյան, *Բնութիւն կրկնագրի Ազաթանդեղոսի, «Հանդես ամսօրյա», 1913, № 1, էջ 1—19:*

67 «Աւետարան բառ թարգմանութեան նախնեաց մերոց», էջ Թ:

68 ՏԷ՝ Ե. Աբուլաձե, *Եղվ. հոգվածք*, էջ 40—41:

69 Խ. Դադյան, *Եղվ. հոգվածք, «Բանասեր», Փարիզ, 1901, էջ 141:*



Պողոս (<Պաղոս) (Կարմրաշեն ԶլԹ Մվ), «Գնեցի ՚Բ: կուղպակ զէորագոյնին եւ զմրսատին զՈշականց» (<Սաշականց) (Անի նՁԲ Գ I 32), «Այգի Ա: յՈշական» (Անի ՈԿ Գ I 63), այլ բնագրերում՝ Աշական, «ես՝ Պարսիմո... ռախ մեծանուն գնաղջն Աշականո», «...ես՝ Արտաշիր Աշականոյ ռայխ» (Բագնայր ՈՅԹ ՈԿ ՍԱՐ 180—181), «Մեղ և ծնողաց բարէխովս (<բարէխաւս)» (Գորխ Զե Գ II 79):

Ու ձայնավորի բառակզրում վօ արտասանվելու պատմական հնչյունափոխութիւնը, որի առաջացման առաջին արտահայտութիւնները ուսումնասիրողները գտնում են դեռևս և դարի գրական երկերում և որը հայերենում ու բարբառներում տիրապետող օրինակափոխութիւն է դարձել (ով, ովկիալոս, ովազիս, ովսաննա բառերի բացատրելի բացատրութեամբ) միջնագարի վիճագրութեան մեջ և հնագույն ձևագրերում համապատասխան վկայութիւններ չի տվանդել և խորհել է տալիս, թե այդ հնչյունափոխութիւնը տեղի է ունեցել շատ ավելի ուշ, քան կարծւում է, համենայն գեղա վիճական բնագրերը նման փաստեր չեն պարունակում:

Ու ձայնավորը հին հայերենի կայուն վիճական ձայնավորներից էր և համարյա չէր հնչյունափոխվում: Գրաբարի բերականները նշում են շեշտակորույս ո-ի սղման մի քանի օրինակներ միայն՝ ծորոք > ծորբին, ծոճորակ > ծոճրակ, որկորամոլ > որկրամոլ<sup>70</sup>: Միջին հայերենում առաջանում են ո-ի հնչյունափոխութեան նոր երևույթներ, որոնց հետևանքով իբրև ընդհանուր կանոն բառամիջում նախաշեշտ դիրքում մեկից ավելի ո-երից մեկը ընկնում է. օրինակ ժողովեմ > ժողվեմ, սովորիմ > սովրիմ, կոտորեմ > կոտրեմ, հոռամբեմ > հոտմբեմ, խորովեմ > խորվեմ և այլն<sup>71</sup>: Գիտվում էին նաև ու հնչյունի՝ այլ ձայնավորների վերածվելու առանձին դեպքեր, այսպես՝ երեկո > իրիկուն, որտեղ > ուրտեղ, լող > լեղ, լոկ > լուկ, նոպա > նուպա և այլն<sup>72</sup>: Վիճական բրնագրերում ու ձայնավորի հնչյունափոխութեան բազմաթիվ օրինակներ են պահպանվել, որոնք թեև չեն դարձել կայուն օրինակափոխութիւն, սակայն ներկայացնելով այդ բառերի արտասանութեան վիճակը տվյալ ժամանակաշրջանում, կարող են պատկերացում

70 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանութիւն, էջ 110—111:

71 J. Karst, Historische Grammatik..., S. 58.

72 նույն տեղում, էջ 57:



տալ այդ երևույթների սկզբնաղբյուրների, այսինքն այն խոս-  
վածքների մասին, որոնց ազդեցությամբ առաջացել են այդ հըն-  
շումները:

Ա. Հին հայերենի ու ձայնավորը մի շարք բառերում, հատկա-  
պես անձնանուններում հնչյունափոխում է ե-ի: Նախնազույն վը-  
կայությունը գտնում ենք Շապուհ Բագրատունու՝ մեզ արդեն  
հայտնի ՅՄԲ (903) թ. արձանագրության մեջ՝ փորագրված վանե-  
վանի տաճարի վեղարի վրա, որտեղ հայոց Յովաննէս և պատմիչ-  
կաթողիկոսի անունը պարզ կարգացվում է՝ Եւանէս. «Եւ վերա-  
դիտողի հայոց հայրապետի ան. Եւանիսի» (ՄՎ)<sup>73</sup>: Նույն անձ-  
նանունը ո>ե փոփոխությամբ հանդիպում է հետագա դարերի  
մի քանի այլ բնագրերում ևս. «Կանգնէցաւ իւէշս ի բարէխաւսու-  
թի Յեւանիսի» (Անի ՈԿէ Դ I 71), «Ես՝ Առուծս ծառայ սր Յեվա-  
նիսի» (Անի Դ I 11), «Ես՝ Եհան ծառայ այ» (Անի ԺԲ Դ I 9),  
«Եհանէս Երէց» (Վաղարշի ԺԲ Դ II 106): «Ես՝ Յեվանէս» (Կոթա-  
վանք նԿԲ ՍԲ), «Ես՝ Նանիս Եւաննիս որդիս զրեցի» (Գարեղջա  
ԶԶԱ)<sup>74</sup>: Նույն անձնանունը Տեկորի նՁԵ թ. արձանագրության  
մեջ փորագրված է՝ Յիվանէս. «նՁԵ թկ. հայոց ի թագավորութեան  
Յիվանէսի շահանշահի» (ՍԱԲ 207), ըստ այդմ տեղի է ունեցել՝  
ո>ե, է>ի — Յովհաննէս>Յեվաննէս>Յիվանէս: Բառամիջում  
ո>ե հնչման այս օրինակները չի կարելի փորագրողների կամ  
բնագիրը կազմողների սխալագրություն համարել, այլ պետք է  
դիտել իբրև այդպիսի արտասանության արգասիք, անկախ նը-  
րանից, թե ինչպես է առաջացել այդ արտասանությունը: ԲՎում  
է, Յովանէս անվան մեջ առաջացած ո>ե փոփոխությունը վեր-  
ջին վանկի է ձայնավորի առնմանության հետևանք է, և պատա-  
հական չէ, որ նույն անձնանվան վերջին վանկի ի ձայնավորի  
(է>ի հնչյունափոխությամբ առաջացած) առնմանությամբ ո-ն  
այս դեպքում վերածվում է ոչ թե ե—է-ի, այլ ի-ի, օրինակ.  
«Ի թագավորութեան Յիվանիսի շահանշահի» (Տեկոր նՁԵ ՍԱԲ  
208): Նույն փոփոխությունը նկատվում է նաև Խոսրովանոյշ  
անձնանվան մեջ. «Ես՝ Խոսրեւանոյշ հաստատեցի զգիրս» (Ալա-

73 Նախորդ հրատարակություններում անձնանունը Սա. Օրբելյանի հետևու-  
թյամբ վերծանված է՝ Յովանիսի կամ Յովհաննու. միայն Ալիշանի «Սրբականում»  
ավելի մտ է իրականին՝ Յեւանիսի (տե՛ս Սա. Օրբելյան, Պատմություն տանն  
Սրբական, լՂ. Ս. Զալալյանց, Ճանապարհորդություն, Բ, էջ 12, Վիմական տարե-  
գիր, էջ 6, Ալիշան, Սրբական, էջ 60):

74 Ա. Մելիքսեր-Քեկ, Վերահայոց վիմական տարեգիր (անտիպ ժողովածու):



ման ԺԱ դ. Mapp HM 81), այլ բնագրերում անունը կանոնավոր է, օրինակ Վանստանի նժ թ.՝ «Ես՝ Խոսրովանյը թագուհի ազատէցի զմանկանց շարիյատս»<sup>75</sup>: Ասոր վերջածանցը փորագրված է անը, դատելով արդի բարբառներում այս ածանցի կրած փոփոխություններից (ըստավեր, կրկնավեր — Ղարաբաղ), պետք է կարծել, որ բնագիր կազմողները հենց այդպես էլ արտասանել են. «Ոչ ամիրայ, ոչ ձեռնաւոր, ոչ հայր փոքրանը (<փոքրանը> (Մարինե ԶԿԶ ՄՎ):

Բ. նախորդ հնչյունափոխության հետ նույնը կարող է լինել բառամիջում  $n > և$  անցումը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, միջին հայերենի գրական երկերում և վիմագրության մեջ ե, է հնչյունները այդ դիրքում նույնացել էին. Յովաննէս > էհանէս > Յէվանէս. «Թողեալ եմ զՏեկորո հարկն վասն Յէվանէս թագաւորի» (Տեկոր նԿէ ՍԱՐ 207), «:Ե: աւր ինձ՝ էհանիսի» (անվան ուղիղ ձևը բնագրի նախաբանում. «Ես՝ Յոհաննէս արքայուն» (Հոսոսոս ԶԲ ՍԱՐ 157), «Ես՝ Ամիրբեկս կանկեցի զԽէշս յիշատակ հար իմ՝ էհանիսի» (Սիսիան ԶՄԶ Գ II 92), «Ես՝ էվանէս եւ ամուսին իմ Խոթիբս (Խոթիվերս) կանկնեցի զխաշս» (Արթիկ ԶԽԲ ՄՎ): Ու գերանունը քանիցս փորագրված է էֆ. «Եթէ մեր կամ վանեցս հայր կամ այլ որ էֆ խափանել ջանա» (Սանահին ԺԳ ԿՂՍ 125), «Թէ ով էֆ մին (<ոմմի(ն) ի մերոց կամ յատարաց» (Շիրակավան ԺԳ ՍԱՐ 171), «Թէ ով էֆ ծռէ կամ մարդ որ խամութն վերա կաշար ասէ» (Երևան — Կաթողիկէ ԶԺԳ ԿՂԵ 170):

Այս հնչյունափոխությունը նույնը պետք է լինի Ում, կիս հյուղերի արևելահայ բարբառներում զիտվող  $n > և$  փոփոխության հետ, որ բառամիջում տեղի է ունենում սովորաբար շեշտակիր վանկում: Օրինակ, Ղարաբաղի խմբի բարբառներում ավանդված են՝ խրնէցի < խնոցի, լէղ < լող, հուլէնը < ոլոն (Ղարաբաղ 37, Շամախի 27, Հազրութ 27, Մեղրի 49): Նույն փոփոխությունը բառասկզբին նկատվում է Ազուլիսի բարբառում՝ էոձակ < որձակ, էխշոր < ոչխար, էջիլ < ոչիլ (Ազուլիս 63): Բացի սրանցից, Ղարաբաղի և Շամախիի բարբառների որոշ խոսվածքներում հին հայերենի բառասկզբի շեշտակիր կամ նախաշեշտ ո-ն հաճախ արտասանվում է վե, օրինակ, վէսկի < ոսկի, վէրքի < որդի, վէտր < ոտն, վէրքեր < որքն, վէտնաման < ոտնաման (Ղարաբաղ 447, Շամախի 25):

75 Աշխ. Փայանբաւ, Վանստանի արձանագրությունները (անտիպ):



Բնական է մտածել, որ մեր առկոչած վիճազրեքում  $n > է$ , և արտասանությունը կարող էր ներթափանցել հիշյալ խոսվածքներից: Մյուս կողմից, գրաբարի ատր վերջածանցը, որ Աշտարակի հուշարձանի արտոնագրում փորագրված է անե (փաֆրանե, որ հավանաբար ԶԿԶ 1317 թ. արտասանվել է՝ փաֆրավէր), նույնպես կարող էր ներմուծվել հիշյալ բարբառներից, քանի որ ատր  $>$ ավէր, ավներ, ավուր փոփոխությունը ավանդված է միայն Արցախի խրատների և Արարատյան խոսվածքներում. օրինակ, Հազրութի և Ղարաբաղի բարբառներում ունենք՝ բերմավէր-անուհաուր, անվանի, մեղավէր-մեղաուր, բաֆավէր-բաֆաւէր  $<$ բազաուր, նիֆնավէր  $<$ նգնաուր, քրրավրեր  $<$ քրավէր  $<$ կորաուր և այլն (Ղարաբաղ, 210, Հազրութ 295, Կոզեն 181):

Գ. Ո  $>$ ա հնչյունափոխությունը դիտվում է առանձին բառերում, որոնցում որևէ օրինաչափություն չի սահմանվում, թվում ենք եղած օրինակները. «Եւ որ ի վանիցս հաղիս ( $<$ հողիս) վերաշինեցար» (Մարմաշին ՈՂԳ ՕրԾ ՈՒՏ 443), «էտու նուէր զերերուս ամենայն հաղովն ( $<$ հող) և զիւր ծագկոցն» (Անի ԺԳ Գ I 58), «Եւ զիմ զեզն... զՄոզորիսն ընծանցի սուրբ Ածածնիս բոլոր իւր հաղահատով (հավանաբար՝ հողասահմանով) սարովն և ջրովն» (Հառիճ ՈՄ ՄՎ): Հող բառում  $n >$ ա անցումը կարող է առաջացած լինել ոչ թե այդպիսի հնչումից, այլ  $n = ա$  գրությունից, որը ինչպես տեսանք, հաճախ նույնանում էր վիճազրեքում: Իրրև ապացույց կարելի է մեզ բերել Սանահինի վանքի արձանագրություններից՝ մեկը, որտեղ հող բառը տառադարձված է ոչ թե հաղ, ինչպես մեր թվարկած օրինակներում, այլ՝ հաու. «Ետու... զԳորտուննք շինական յազատ ի զԱրէսալմանց հաուլն ամէն շահ ու զենով» (ՈԿԳ ԿՂՍ 122): Նույն  $n >$ ա հնչյունափոխությունը տեղի է ունենում նաև շնորհաուր բառում և նրանից կազմված անձնանուններում, որ հաճախ փորագրվում են՝ շնահաուր. «Ած շնահաուր արասցէ պարոն Սահմագինին...», «ած շնահաուր արասցէ յափտեանս ժամանակաց» (Մրեն ԶԺ ԶԻԵ Գ I VI), «Ես՝ Շնահաուր Տպխեցի» (Հաղբատ ԶԲ ԿՂԶԲ 168), «Զվարդէվաոն մարն Արեւշատին, Ասադա, Շնահաուրին, Խոսենա» (Գյուլումբուլաղի վանք ԺԳ Գ III 119): Շնորհաուր բառի մեջ  $n >$ ա արտասանությունը պետք է բացատրել ա ձայնավորի ետընթաց առնմանությամբ:

Ո  $>$ ա հնչյունափոխությամբ կամ ա ձայնավորի առնմանությամբ են առաջանում նաֆա ( $<$ նոֆա), նացա ( $<$ նոցա), սացա



(<սոցա) գերանունները, որոնք քանիցս հիշատակվում են ժԹ—ժԳ-  
դդ. վիմագրերում: Ահա մի քանի օրինակներ. «Ընկալա զսացա  
յոյսն» (Թարձրաբաշ ՈԶԸ ՄՎ), «ի նացա պակասմանն... նացա  
հոգոյն» (Մղարթ ՈՄ ՄՎ), «նացա ժամն..., ի նացա անուն» (Սա-  
նահին Ոն ԿՂՍ 106), «Աժ ողորմի նացան» (Արատես Զ Դ III 123,  
դիտված է անձնանուն, էջ 415), «Նախան տվին ինձ» (Թանատ ժԳ  
Դ III 82), վերջին երկու օրինակում ն-ն հոդ է:

Գերանունների անփոփոխ կամ թեթևած ձևերում  $n > a$  հըն-  
չյունափոխության գրական մի քանի վկայությունները ԶԺԳ (1464)  
թ. մի հիշատակարանում մատնացույց է արել դեռևս Ա. Այտըն-  
յանը, դրանք համարելով լեհահայերի բարբառի հնագույն նը-  
մուշներ. «նացայ հալալ շինեմ ու զնախայ կերակրեմ, ես կուզեմ  
զան նացայ տամ..., և այլն: Նույն փոփոխությունը հունգարահա-  
յերի և մոլդավահայերի խոսվածքներում նկատում է նաև հայագետ  
պրոֆ. Մ. Բիաները այդ հարցին նվիրված հատուկ ուսումնասիրու-  
թյան մեջ. սա-սարայ (<սորա), սոխա-սախայ, սոցա-սացայ և այլն:  
Կիլիկյան գրական հայերենի հուշարձաններում նա-նարա-նարա-  
մէն, նախա-զնախա, նացա, ի նացմէ, (նախա, նացա, նացամէն)  
գերանվանական ուրույն հոլովումը ներկայացնում է Յ. Կարսաթը.  
հիշյալ ձևերը նկատելով իրրև  $n > a$  հնչյունափոխության ար-  
դյունք, որ նույնությունը պահպանվել են նաև Ղրիմի և Ն. Նախի-  
ջևանի հայերի խոսակցական լեզվում: Լ. Աճառյանը Առախալի  
բարբառում հիշյալ գերանուններից նկատում է միայն՝ դարա, նա-  
րա, դացա, նացա, դարամէ, նարամէ, դացամէ, նացամէ ձևերը<sup>76</sup>:

$n > a$  հնչյունափոխությունը տարբեր պայմաններում, բայց  
անկախ շեշտի ազդեցությունից, նկատվում է Ում, իս ճյուղերի  
արևելահայ բարբառներում: Վիմական բնագրերում ավանդված  
վկայությունների հետ համադրելի են այդ փոփոխության մի քա-  
նի արտահայտությունները Մեղրու, Ղարաբաղի, Հաղրութի, Ազու-  
լիսի, Լոռու, Արարատյան բարբառներում, որտեղ բառամիջի շեշ-  
տակիր կամ շեշտահաջորդ վանկերում հատկապես վ-ից առաջ  
n-ն կանոնավորապես վերածվում է ա-ի. օրինակ, հայերենի կով,  
հով, սով, խորոված, խոով, ճիպոտ, մոծակ, ցորեան, որոն և այս

76 Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն..., էջ 192—193, J. Karst.  
Historische Grammatik..., S. 233—235, M. Bittner, Einige Kuriose dem ar-  
menischen Dialekte der Walachei und der Moldau, Հուշարձան գրական ժո-  
ղովածու, Վիեննա, 1911, էջ 363, Լ. Աճառյան, Քննություն Առախալի բար-  
բառի, Երևան, 1953, էջ 155.



կարգի այլ բառեր արտասանվում են՝ կավ, հավ, սավ, խրաված, խրավ, նրպատ, մածակ, ցարան, առն (Ղարաբաղ 37, Ագուլիս 62, Հազրութ 26, Լոռի 55): Նույն օրինաչափությամբ գործիական հոլովի ո-ն (= ու) հիշյալ բարբառների որոշ խոսվածքներում գառնում է ա (ավ)՝ բստ այդմ՝ սառով, գլխով, տներով, գրելով արտասանվում են՝ սառավ, կլխավ, տրներավ, կ՛րիլավ: Սակայն վիճադրերում փորագրված հաղ (<հող) ձևի առաջացումը հնարավոր չէ բացատրել հիշյալ բարբառներում գործող ո>ա օրինաչափությամբ, քանի որ գրանցից և ոչ մեկում հին հայերենի հաճախ գործածվող հող բառը չի արտասանվում հաղ, այլ միայն՝ հող, վրէղ (Ղարաբաղ, Հազրութ 413), հուղ (Մեղրի 278, Ագուլիս 371), հող (Շամախի 210), ֆող (Լոռի 186), մնում է մտածել, որ հաղ (<հող) վկայության մեջ առկա է ոչ թե բառի այդպիսի արտասանություն, այլ հնագրական վրիպում, որի հետևանքով ա հնչյունակապակցության փորագրման ժամանակ անտեսվել է լ տառձևը (հող = հաղ): Ինչ մնում է շնահատը (<շնոհավոր) բառի մեջ առնմանությամբ առաջացած ո>ա հնչյունափոխությանը, պետք է կարծել, որ հնչյունափոխված ձևը վիճադրերում մուտք է գործել այն խոսվածքներից, որոնցում այժմ էլ կենդանի է շնահավոր, շնահավէր արտասանությունը. դրանք են՝ վանի (շնախավոր), Չայլիի և Մարաղայի (շրնախավէր, շրնախավրէր), Ղարաբաղի (շրնահավէր), Ագուլիսի և Մեղրու (շրնավուր, շրնհավուր, շրնավուր) բարբառները:

Գ. Բառամիջում ո ձայնավորը շեշտից զրկվելով կամ նախաշեշտ գիրքում սղվում է կամ հնչյունափոխվում ր-ի: Շատ շեն այդ բառերը, բայց չի կարելի դանց առնել նրանց գոյությունը: Նա զերանվան նորա սևո. հոլովաձևը ժԲ դարից սկսած վկայված է նաև՝ նրա, նրայ, ահա եղած վկայությունները. «եւ նրա մեղացն պարտական եղիցի» (Մակարավանք Ոեծ Մվ), «եւ զայն նրա գատմանն փոխարէնք արարի, որ նրայ հայրենիք լինի յաղզէ յաղզ» (Հալիձոր ժԳ Դ II 52), «Ու զՀալիձորի Շնհերոյ նրայ հայրէնիք տվի իւր սահմանաբն... նրայ հայրէնիք տվի... նրայ հայրէնիք լինի, ի նրայ զեղին կայ» (Ամաղու ՉԻԴ Դ III 235), «նրա հրամանաւ սր Գորգիս տվի» (Կոշիկ ժԳ ՍԲ), «եւ ետ մահու :Գ: ինձ, :Գ: նրա» (Հայրավանք ժԳ ՍԲ): Նույն կաղմությամբ դրա, սրա (<դորա, սորա) հոլովաձևերը ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճադրերում շեն հանդիպում: Այս պարագան, ինչպես նաև նրա (<նորա) հնչյունափոխված հոլովաձևի վկայությունների սակա-



վությունը մտածել են տալիս, թե այդ փոփոխությունները նոր էին առաջանում և վերակշիռ օրինաչափության չէին վերածվել: Գեորգ փոխառյալ անձնանունը արձանագրություններում հաճախ փորագրված ենք տեսնում առանց ու ձայնավորի՝ Գեբգ կամ Գերգ, որը անշուշտ առաջանում է ժողովրդական արտասանության ազդեցությամբ: Բազմաթիվ հիշատակություններից նշում ենք մի բանիսը. «սբ Գերգին գշարաթն եւ զկիրակէն» (Սանահին ՈԿ ԿՂՍ 135), «Ես՝ Գերգ զեղարակին հողն ավի սբ Գրիգորիս» (Հաղարծին ՈԼ ՄՎ), «Վարհամ, Գերգ, Սնպատ, Բարսեղ էրէց» (Քանաքեռ ՉԺԵ ՄՎ), «Ես՝ Գերգ եղբարորդի եւ այլ միաբանքս շինեցար» (Հավապտուկ ՈԺԲ Հով. ԽԼՂ 29), «Զշարաթ աւուրն զպատարազն Գերգայ արնեն» (Հաղբատ ԿՂՀԲ 165), «Եւ յետ իմ զմինն՝ Գերգա, զմինն՝ Մարեմա» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 228), «Հաստատեցաւ ի տարին :Բ: ար ժամ Գերգա» (Մշկավանք ԺԳ ՄՎ), «:Ա: ժամ Քուրդկանն :Ա:՝ Գերգա» (Մակարավանք ՈԼԶ ՄՎ), «Գերգ եւ ամուսին իւր Կատայ եւ զաւակսն նորին շինեցին» (Ն. Գետիկ ԺԳ ՄՎ): Յովանէս միայն մեկ անգամ վկայված է՝ Յուանէս, «Ես՝ Յուանէս կանգնեցի սբ նշանանիս» (Դաշքենդ ՉՄ ՍԲ): Շնորհաւոր > Շնհաւոր. «Կազմեցաւ ձեռամբ Շնհաւորիս» (Մարտիրոս՝ ՉԼԲ Գ III 183): Շորոպիկ > Շորրոպա. «Ես՝ Դաւիթ իշխան, որդի Շորոպա էգնեցի զՌոնակ» (Սանահին ՈԼԱ ԿՂՍ 108), «Ես՝ Դաւիթ որդի Շորոպա ետու զԱպուէ» (Բագարան ՈԿ ՍԱԲ 203): Զարարիա ամիրսպասաւարի՝ Սանահին տված հրովարտական նույն անձնանունը վկայված է այս նախադասության մեջ. «Զոր Դաւիթ իշխան որդի Շորրոպա գնեալ էր զՌոնակն և տվեալ ի դուռն սուրբ Աստուածածնիս» (ԿՂՍ 55, 108), որ ակնառու ապացույց է, թե Շորոպիկ անվան մեջ նախաշեշտ երկրորդ ուն ոչ թե անհետ սղվել է, այլ հնչյունափոխվել ը-ի: Հունարենից փոխառյալ ոլումպիադ, ողիմպիադ, ոլումպիադ, ոլումպիատ բառը՝ բառամյա տոմարական շրջանի իմաստով, Հոռոմոսի վանքի նՁԵ Թ. արձանագրության մեջ երկու անգամ հիշատակված է զրմպիադի, զրպիադի գրությամբ, ուր բառասկզբի նախաշեշտ ուն սղվել է. «Ի ՌՈԶԺ զրմպիադի..., ՄԿ զրպիադի այ մարմնանալոյ եւ ի նՁԵ Թուականին հայոց» (նՁԵ ՍԱԲ 166):

Արևելահայ բարբառներում ու ձայնավորի սղման կամ ը-ի վերածվելու փոփոխությունները օրինաչափ կերպով տեղի են ունենում շեշտակիր կամ նախաշեշտ վիճակում, հաճախ նաև բառերի անփոփոխ ձևերում: Բառասկզբի դիրքի համար կարելի է հիշել Ղարարադի բարբառի՝ րոռալ < որոռալ, րղորմի < ողորմի.



հրլօրէլ < ուլօրէլ (էջ 37), Ագուլիսի՝ բրբտալ < ուրտալ (էջ 68),  
 Մեղբու՝ բղուղիլ < ողղղէլ, ըոձէտու < ուրձատու (էջ 46), Լոու՝  
 բլօրիլ < ուլօրէլ, բղողէլ < ողղղէլ (էջ 189) ձևերը: Բառամիջում n-ի  
 սղումը կամ p-ի վերածվելը տեղի է ունենում նույն օրինաչափու-  
 թյամբ, ինչ նկատեցինք ա ձայնավորի դեպքում՝ երկու և ավելի  
 n-երից ավյալ հնչյունափոխութեանը ենթարկվում է շեշտակիր վան-  
 կին նախորդողը, ըստ այդմ, բառային շեշտը վերջին վանկի վրա  
 գնող բարբառներում հին հայերենի՝ ուլօրէլ, սովօրէլ, մուլօրէլ,  
 բուրբուսնէլ, բուլօրէլ, դողղողալ, շողշողալ, կոտօրէլ և այլ բառեր  
 արտասանվում են՝ օլլօրէլ, սոլվէլ (սովլօրէլ), մօլլօրէլ (մօլլօրիլ,  
 Պուլիս 24), բօրփրսնէլ (պլէօրպրսնէլ — վան, 42), բուլլօրէլ, դող-  
 դրղալ, շողշրղալ, կոտրէլ, այսինքն սղվել կամ p-ի է փոխվել վեր-  
 ջընթեր վանկի n-ն, մինչդեռ մյուս խմբի՝ նախավերջի վանկը շեշ-  
 տող բարբառներում նույն բառերը ավանդված են՝ հրլօրէլ (բլօ-  
 րիլ), սրվէրէլ, սրվօրէլ, սվարիլ, մրլօրիլ (մլլարիլ — Ագուլիս 375),  
 փրփէշնէլ (բրբէշնիլ, բրբէրքնիլ, բրբօրցնիլ — Լոուի 179), արղ-  
 տօղալ (դրղղղալ — Լոուի 180), (դրղղրղալ — Մեղբի 267, դրղ-  
 դրղօլ — Ագուլիս 347), շրղշրղալ, կրտօրէլ (կրտօրէլ, կտտօրիլ —  
 Մեղբի 276), կտարիլ — Ագուլիս 366: Այսինքն n-ի սղումը կամ  
 p-ի փոխվելը դիտվում է կամ վերջընթեր շեշտակիր, կամ նրան  
 նախորդող վանկում:

Այս օրինաչափութեան շնորհիվ հնարավոր է դառնում ստու-  
 զապես որոշել, թե վիճական բնագրերում ավանդված n > qրո, ք  
 վկայութունները հիշյալ բարբառների որ խմբի ազդեցութեամբ են  
 առաջացել, ըստ այդմ, ակներև է, որ Շոքոկա, Շողրոկա (< Շոքո-  
 ուիկ) արտասանությունը կարող էր մուտք գործել վերջին վան-  
 կը շեշտող բարբառներից, քանի որ մյուսներում նույն անձնա-  
 նունը սպասելի էր՝ Շրոկա, Շրքոկա, իսկ Շնահատօ, Շնհատօ-  
 (< շնօրհատօ), դրմպիաղ, դրպիաղ (< ողումպիաղ, ոլիմպիաղ)  
 ձևերը ակներևաբար գալիս են շեշտը վերջընթեր վանկի վրա դը-  
 նող խոսվածքների արտասանությունից:

Ե. Մի շարք բառերում և անձնանուններում n ձայնավորի փո-  
 խարեն փորագրված է ու: Ահա եղած փաստերը. նախնագույն վը-  
 կայությունը կարգացվում է Ախթալայի տաճարում ընկած խաչ-  
 բարի հիշատակագրում, որի ժամանակը դատելով տառաձևերից  
 ԺԱ—ԺԲ դարերն են. «զՄուսէս քահանա յաղաւթս յիշէսցիք» (Մվ  
 անտիպ): Նույն անձնանունը նույն փոփոխութեամբ վկայված է  
 նաև Արցախի Տումի գյուղում գտնված ավելի նախնագույն արձա-



նազրուիցան մեջ. «Ի Թագաւորութեան տն Գագիկա որդո Մուսէի  
 ևս... Սոփի դուստր Մուսէի շինեցի տուն այ» (Տումի նեթ (1000)  
 Թ ՄՎ)<sup>77</sup>, «զՄուսէս Մարգարէին որդին իւր շահ ու զենով» (Սա-  
 նահին ժԳ ԿՂՍ 123), «ես՝ Մուսէս քահանա» (Բագարան ԶԺԱ  
 ԲԱՍ 180), «ես՝ Մուսէս, որ էտու զիմ էգիս» (Թալին նՅԶ ՄՎ),  
 «ես՝ Մուսէս քահանա կազմեցի սր նշանս» (Բագնայր ժԳ ԲԱՍ  
 205), «եւ սպասաւորք խոստացան... Աւ Մուսիսին :Ա: փնձ՝ Ահա-  
 րոնիս» (Երևան, Կաթողիկէ ԶԿԹ ԿՂԵ 181), «ես՝ Մուսէս միարա-  
 նեցա սր նշանիս ընծաիք» (Մեծարանց վանք ժԳ)<sup>78</sup>: Յովսէփ >  
 Յուսէփ > Ոսէփ. «Յուսէփ քաղաքացի» (Սանահին ժԳ ԿՂՍ 173).  
 «Հայր Յուսէփ... հայր Աբրահամ և Յուսէփ փակակալ» (Բագա-  
 րան ԶԺԱ ՍԱԲ 187—189), «ես՝ Յուսէփ Գայլկոնց ևտու զՂարա-  
 պանի խաչի այգոյն բաժինն» (Հավուց Թառ ժԳ Հով ԼԹ 26), ևս՝  
 տր. Յուսէփ միարանեցա սր ուխտիս» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III  
 50), «եւ Եղբայր իմ տր Յուսէփ» (Կեչառիս ԺԱ ՍԲ), «ես՝ Քերուբս  
 (<Քերովրէ, Քերոբ) տուի դայս զիմ գնուած այգին» (Սանահին  
 ՈՂ ԿՂՍ 188): «Գնեցի զխուպանս (<խուպան) և միաւորեալ շի-  
 նեցի և ևտու ի Կաթողիկէ» (Բագարան նՅԳ ՍԱԲ 203), «Որշափ  
 խուպան կայր հոյրատանս տվի» (Մարինե ԶԿԶ ՄՎ), «Տվի հետ իմ  
 գնած Փարսոյ հողին զիմ գնած խուպանն, որ Աւշակնոյ հանդն»  
 (նա), «եւ տվար ընծա զմեր այգին ի Փարսին :Ա: խուպան Աւշա-  
 կան» (Ածընկալ ՈՂԳ ՄՎ), «ևտու :Զ: գ՛ հ և Թափեցի զԳառնոյ  
 խուպան» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 48), «ես՝ Ակոր Ապղարփիփի  
 որդիս էլ տվի զիմ գնած խուպանն» (Մարինե ժԳ ՄՎ), «որ տա-  
 Թարովս խուպանեալ էր» (Հոռոմա Զ ՍԱԲ 187), «տվի ի Մճոկա-  
 ձոր զխուպանին այգին» (Հերմոն ժԳ Գ III 134): Խուպան բառը  
 հավաստի շի ստուգաբանված և անորոշ է, թե խուպան = խուպան  
 ձևերից որն է նախնազույնը: Արդի և ճյուղի բարբառներում ա-  
 վանդված է միայն՝ խուպան, խօբան, խօբան (Մուշ, վան, Խար-  
 բերդ, Սերաստիա, Տիգրանակերտ), որ անհավանական է դարձ-  
 նում n > ու հնչյունափոխութեան ներթափանցումը կենդանի խոս-  
 վածքներից: «Աստ սպանաւ մեծն ի նախարարս որոյ անունն Ա-  
 տում (<Ատում) (Իշխանագոմ, տապանագիր ՈՂԲ, Միրախոր, Ա  
 130—35), «Յարեթական տաւհմիս տումարիս և թուի ԶՃԻԱ» (Թա-  
 լին ԶԻԱ ՄՎ): «ես Հաղարդեղ և Կումիտաս (<Կումիտաս) տուար

77 Ս. Բաբխուղարյան, Արցախ, էջ 79, Սոփի անձնանունը վերծանվել է Ոսէփ:

78 Կ. Գաղյան, նշվ. հոդվածը, «Քանասեր», 1901, էջ 142:



ի սբ ուխտս: Կ: դահեկան» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 53—54), «Ով սպատարագողք, զԿուսիտասն եւ Հաղարդեղն յիշեցէք» (նա ժԳ 42): «Սուրբ և ինքնազալ թագաւորին Կոստանդեա Մաւնումախին» (<Մոնումախ, Մաւնումախ), «Ես սպասաւոր եղբարցս Գրիգոր վարդապետ՝ մականունն Մունունիկ» (<մունունիկ, մունունիկ) (Կեչառիս ՈԿԳ ՍԲ)<sup>79</sup>:

Այս հնչյունափոխութիւնն անծանոթ է գրական հայերենին և լայնորեն տեղի է ունենում տարբեր դիրքերում, հատկապէս արեւելահայ բարբառներում: Մի կողմ թողնելով Թումաս < Թովմաս, Ուհան < Յովհան, Ուսէփ < Յովսէփ, Մուաէս < Մովսէս անձնանուններում ով > ու անցումը, որ դիտվում է գրեթէ բոլոր խոսվածքներում և արդյունք է ո, վ հնչյունների միասնական արտասանութիւն և վ = յ նույնացման (n + i = ու), կարելի է նշել n > ու օրինաչափ փոփոխութիւն մի շարք դեպքեր տարբեր բարբառներում: Այսպէս, միավանկ բառերում շեշտի տակ՝ մում < մում, ծում < ծում, լուղ < լող, ուսպ < ոսպ, խուզ < խոզ, խուտ < խոտ, բուխկ < բոզկ, լուր < լոր, հու < ով, հուրք < ուրք, խուտ < խոտ, հուղ < հող և այլն (Ղարաբաղ 37, Ն. Զուղա 76, Ազուլիս 64, Մեղրի 45, Սասուն 18): Նույն փոփոխութիւնը նկատվում է երկվանկ կամ բազմավանկ բառերում, նախաշեշտ կամ շեշտակիր վիճակում, հատկապէս մի քանի ո-երի դեպքում, մեծ մասամբ ձայնավորների ներդաշնակութիւնն ազդեցութեամբ. Սուղումուն < Սողումուն, կուրկուտ < կուրկոտ, տուրան < տուրոն, կուկում < կոկոն, հաղուղ < խաղող, ախու < ախո, կուպար < կոպար, բուլո < բոլո, ոսկուտ < ոսկու, ուխար < ոչխար, կուտուշ < կոտոշ (Ղարաբաղ 37, Շամախի 25, Ն. Զուղա 73, Մեղրի 45, Վան 42):

Ակնհերե է, որ միջնադարի վիճակներում ավանդված n > ու հնչյունափոխութիւնը կարող էր առաջանալ հիշյալ բարբառների արտասանութիւնն հետևութեամբ:

#### ՈՒ ՉԱՅՆԱՎՈՐ

Գրաբարում ու տառակապակցութեամբ արտահայտվող հնչյունը մյուս ձայնավորների նման շեշտը կորցնելով կամ նախաշեշտ դիրքում մեծ մասամբ սղվում էր կամ հնչյունափոխվում ր ձայնավորի, որը սովորաբար չէր գրվում: Այս օրինաչափութիւնը չէր գործում ու-ով սկսվող միավանկ բառերում (ուրաւեայ, ուխտա-

79 Չ. Անտոյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 419:



պահ, ուշարափ, ունկնդիր և այլն), ուսով վերջացող բառերի բար-  
դության կամ ածանցման ժամանակ, երբ հաջորդ բաղադրիչը ձայ-  
նավորով էր սկսվում (լեզուագար, ածուենի, ուրուական և այլն)  
և մի բանի այլ գեղարարում: Միջին հայերենում և վիմական բնա-  
գրերում ու ձայնավորը ենթարկվում է հնչյունափոխական նույն ե-  
րևույթներին, ինչ դիտվում էր գրական հայերենում: Սակայն այս-  
տեղ առաջանում են հնչյունափոխական նոր իրողություններ, ո-  
րոնք անձանոթ էին գրարարին և անշուշտ գալիս են ժամանակի  
բարբառներից, գրանցից նշելի են.

Ա. Ու ձայնավորը սղվում է նախաշեշտ կամ շեշտից զրկ-  
ված փակ վանկում. «էտու աւետարան էսայի, շրջառ (<շուրջառ,  
գրարարւմ առանց հնչյունափոխության) և վառ» (Անի ՈԿԴ Դ 1  
35), «:Բ: շրջառ այլ ավի» (Սանահին ՈԽԶ ԿՂՍ 111), «Մեծածախ  
գաւազան Է: Գ: շրջառ (նա ԶԺԳ ԿՂՍ 152), «էտու :Շ: սպիտակ,  
:Ա: շրջառ» (նա ԺԳ ԿՂՍ 165): «Շինեցար զպարիսպս զըրջայնա-  
կի» (Աշտարակ, Կարմրավոր ԶԶԳ ՄՎ): «Ես դստեր իմո Ռզուֆա-  
նին (<Ռուզուֆան)» (Մարտիրոս ԶԼԲ Դ III 183), «Ես՝ Ռզուֆանս  
անարժան աղախին Քի» (Մեծարանց վանք ԶԺԳ)<sup>80</sup>: «Որ էր տէր  
Գագա ևւ Տաւռն (<Տաւուր)» (Հաղբատ ԺԳ ԿՂԶԲ 220): «Գրեցաւ  
գիրս Անդրէի, Գանիէի, Տիրաննո» (<Տիրանուն), անձնանվան  
ուղիղ ձևը՝ «Սիմեոն հայր ևւ Տիրանուն երէց շինեցաք» (Հաղբատ  
նե ԿՂԶԲ 142, 248), «Կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութի... Գա-  
նիէի, Տիրաննո, Գերգա» (նա ԺԳ 250): «Արժանի էլա Ուննա (<Ու-  
նուն) ձանկորութի» (Օձուն ԺԳ ՄՎ): «Գրիգոր հեկպին (<հեչուր)  
ևւ Սմայատա» (Հոռոմոս ՈԽԷ ՍԱԲ 149): «Ես՝ Սրահանգս որդի  
ձաջոա (<Ձաջոռ)» (Հավայատուկ ՈԻԲ Հով ԽԱՂ I 31): «Ի տա-  
րին :Ա: ժամ Թրնջին <Թուրինջ)» (Մարտիրոս ԺԳ Դ III 181): «Ի  
յԱնի աներ ևւ կղպականի» (<կուղպակ) (Մարմաշեն նկէ ՕրԾ ՈՒ  
442): «:Ա: ևւ կես կոշտ, :Ա:՝ Արն (<Արուն)» (Արուն 3ԺԶ ՄՎ):  
«Հայրենիքն ի Մողուաց որ է ի հնցէ (<հնուց — ի հնուցէ) զա-  
տեալ ևւ բաժանեալ սահմանաւր» (Բագնայր ՈՂԸ ԲԱՍ 165):

Բ. Մի շարք գեղարարում, հատկապես փոխառյալ անձնանուն-  
ներում, նկատվում է ու > ո հնչյունափոխությունը: Օրինակ, ունի  
իգականանիչ վերջածանցը վիմագրերում մեծ մասամբ փոխա-  
գրված է ոնի, որ հավասարում է ածանցի այդպիսի արտասանու-  
թյունը: նախնագույն վկայությունը գտնում են Գաննիում, Կատ-

80 Խ. Գաղյան, նշվ. հոդվածը, «Բանասեր» 1901, էջ 139:



բանիդե թագուհու կանգնեցրած խաչքարի հիշատակագրության մեջ. «Ես՝ Կատրանիդե հաց քազոն (<քազոնի>), որ կանգնել զսուրս խաչս»<sup>81</sup>: «Ես՝ աթարակ Իւանէ և Խոշակս վրաց և հայոց քազոնի» (Շիրակավան ՈՉէ ՍԱՐ 170), «Տանս վրաց և հաց և Խոփին քազոնի» (Շիրակավան ՈՉ ՍԱՐ 171): Նույն փոփոխությամբ է այլանդլած քազոնի բառը նաև իբրև անձնանուն գործածվելիս, «Ես՝ Խոցազեզս և Քազոնիս միարանեցար սր Աձածնիս» (Տեղեր ԶԷ ՄՎ): «Բմ մարն՝ Քազոնէ» (Արշո առիճ ԶԼՐ ՍԱՐ 192), «Ես՝ Թաիկրազոնի զուսար Շարապշահի» (Հոռոմոս ԶԺԶ ՍԱՐ 158), «Ես՝ Քազոնի զուզակից Շարափշահին ևտու խաչ մեծածախ» (Բազնայր ՈՉԳ ԲԱՍ 170), «Թոռն մեծին Մագեսարոսի և բարեպաշտոնոյ (<բարեպաշտոնի>) Սանդղտոյ» (Հերհեր ԶԼՐ Գ III 51): «Եւ բարեպաշտոնոյ Մամքանի» (Հերհեր ԶեԶ Գ III 68): Արարերենից և այլ լեզուներից փոխառյալ անձնանուններում. «Ես՝ Արոզամր (<Արուզամր>) որդի Վահրամա» (Անի նՁ Գ I 12), «:Բ: Վահրամա, :Ա: Արզոխարունին (<Արզուխարուն>)» (Մշկավանք ԺԳ ՄՎ), «:Ա: Սաղոնին (<Սաղուն>), :Ա: Մանային» (Մշկավանք ԺԳ ՄՎ), «Ես՝ Մոշեղ (<Մուշեղ>) որդի Աբասա» (Երեբույր ԺԲ ՄՎ), «Մասնոյ բաժին Յոդայի (<Յուդա>) աոցէ» (Հայիձոր ՇԺ Գ II 52):

Ու>Ն փոփոխությունը դիտվում է մի քանի այլ բառերում ևս, որոնցում օրինակների սակավության պատճառով զժվար է որևէ օրինաչափություն սահմանել, հնարավոր է նաև, որ զրանց մեջ աեղ գտած լինեն փորագրության վրիպումներ, անկախ այդ բառերի արտասանությունից: Մեջ ենք բերում եղած բառերը. «Ի նՁէ բովականին հայոց» (Մարբուվանք ԺԳ ՍԲ), «Միարանեցար սուրբ ոխախս» (<ուխտ>) (Տեղեր ԶեԲ ՄՎ), «Ետու բնձա :Գ: կողպակ (<կուղպակ>)» (Հոռոմոս ԺԳ ՍԱՐ), «Երկո (<երկու>) կողպակ յիմ կուղպականոյն» (Բազնայր ԺԳ ԲԱՍ 171), «:Բ: տուն և ի վերեն :Գ: կողպակ» (Հոռոմոս ԺԳ ՍԱՐ 147), «Ետու... Սառքճփոզոցին կողպակ» (Բազնայր ՈՉ ՍԱՐ 185—6): «Բազում աշխատութր. բերի գառոյս (<առու>)» (Հայիձոր ԶԺԳ Գ II 52), «Որ գաղոնացիցն (<աղունաց>) զշարաթն իմ մարն» (Հազրատ ՈՂԸ ԿՂԶԲ 175), «Վանելոչ (<վայելուչ>) ցանկալի ամենայն տեսողաց» (Հազրատ նՁԶ ԿՂԶԲ 241), «Այս է հանգիստ Գորգենա (<Գուրգենա>) Բագրատունո» (Սանահին 988 Բ. ԿՂՍ 171), «Որ որ խափանէ և շմատոցանէ» (<ոչ մատուցանէ>) (Սյունի վանք Ժ—ԺԱ Գ II 90),

81 Ե. Արաքեյան, Гарин I, Ереван, 1951, стр. 84.



«Կանկեցի խայշս ի փրկոթե (<փրկութե) հոգ» (Կուրթան ՈՂԵ ՄՎ):

Նկարագրված հնչյունափոխության հետ նույնը պետք է համարել ու>օ (աւ) անցումը, բանի որ, ինչպես նշել ենք, ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական բնագրերում և ձայնավորը բառամիջում և բառավերջում շատ մոտ, համարյա նույն հնչումն է ունեցել աւ (օ) երբեմնի երկբարբառի հետ: Հին հայերենի ու ձայնավորի վերածվելը և (օ) պարզ հնչյունին իբրև կանոն օրինաչափորեն դիտվում է արևելյան խմբի խոսվածքներում: Կ ճյուղի մի բանի բարբառներում ավանդվել են այդ հնչյունափոխության մասնակի դրսևորումները: Օրինակ, Մշո բարբառում՝ օղորք, գրլօխ<ուղլուրդ, գլուխ (էջ 33), Շամախում և վանում՝ կլրլօխ, կլրլէօխ (էջ 60, 254): Ու>ո, աւ (օ) անցումը Ում, Լխ ճյուղերի բարբառներում դիտվում է միավանկ կամ երկվանկ բառերում, շեշտակիր կամ շեշտահարգ վանկում. օրինակ, տօն<տուն, շօխ<շուխ, շօն<շուն, քօխպ<քովպ, քօք<քուք, քօխ<քուխ, մօք<մուք, սօտ<սուտ, կտօր<կտուր, պտօղ<պտուղ, փրփօն<փրփուր, օս<ուս, խօզիլ<խուզել, կանօխ<կանուխ, օզիլ<ուզել, մածօն<մածուն, կակօղ<կակուղ (Ղարաբաղ 4, Ագուլիս 72, Մեղրի 51, Լոռի 53):

Ունի իզականանիշ վերջածանցը կիրառություն չունի հայ բարբառներում, սակայն նրանով կազմված իզական անձնանունները (Քազունի, Սերունի, Պերնունի և այլն) տարածված են եղել ժողովրդի մեջ և վիմագրերում ավանդված ունի<ունի փոփոխությունն այդ կարգի բառերում, անշուշտ, իր ակունքն է առնում ժողովրդական արասանությունից: Վիմական բնագրերում ու>օ, և փոփոխությամբ ավանդված բառերից արդի բարբառներում նույն վիճակում գործածվում են՝ օխտ<ուխտ (Ղարաբաղ 449), յէրկօ<երկու (Վան, Ողմի 258), օղորք<ուղլուրդ (Մուշ 268), ուրիւն վերացական վերջածանցի՝ օրին (էօրին) տարբերակը՝ գլրղօրին<գղղուրին, սրվրօրին<սվրուրին, բխպրօրին<եղբայրուրին լրվօրին, լրվօրուն<լատուրին (Ագուլիս 79, Մեղրի 66, Ղարաբաղ 42):

Մնացած վկայությունները կամ բոլորովին անծանոթ են բարբառներին կամ կիրառված են առանց ո>ու, օ հնչյունափոխության:

Շեշտակիր կամ նախաշեշտ ու-ի վերածվելը ք ձայնավորի ստվորական հնչյունափոխություն է բոլոր հայ բարբառներում և օրին



նաշափ կերպով տեղի է ունենում հատկապես զ բաղաձայնից առաջ, ինչպես միջին հայերենում: Վիմական բնագրերում պահպանված վկայությունների հետ համադրելի են, օրինակ, ուղղորդ > քորք, դորք (Ղարաբաղ, Մեղրի, Կաբավաբերդ, Աբարատյան, Լոռի), ուղարկել > քարկել, հրղարկել, դարկել, զրկել (Ղարաբաղ, Մեղրի, Կաբավաբերդ, Աբարատյան, Լոռի, Ադուլիս, Շամախի և այլն):

Գ. Պատճառական բայերի ոյց > ուց ածանցի ու ձայնավորը նախաշեշտ դիրքում սղվում է կամ հնչյունափոխվում ք-ի, որը չի գրվում. «Ես՝ Մալիբա սնցանող (<սնուցանող) Խորիշահի» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 109), «Ես՝ Արդու սնցանող Թամբէրին» (նա ժԳ ԿՂՀ 88), «Սնցնող Խորիշահի» (նա ժԳ ԿՂՀ 109):

Ավելի հաճախ են այն դեպքերը, երբ պատճառական բայաձևվերում սղվում է ոչ թե ու հնչյունը, այլ ոյց > ուց ածանցը. «Ջատտոզն իւր դամէն զարմացանէր, (<զարմացուցանէր) (Բնունիս 99 Գ II 116), «Որ զայսոց մուտքն ի հիրերին պէտքն անցանեն» (<անցուցանեն) (Ամազու 26 Գ III 220), «Թէ որ չէկեղեցոյս իրաց պակասեցնէ» (<պակասեցուցանէ), «Զիմ անդարձս ալոց կտ դարձանէ» (<դարձուցանէ) (Գեղարդ 21Բ Հով ԽԱՂ III 14): Այս հնչյունափոխությունը հետևանքով են առաջանում ժամանակակից հայերենի պատճառական եցն, ցն ածանցները:

Ե. Մի շարք բառերում ու ձայնավորի փոխարեն փորագրված է իւ: Հավանական է, որ այս դիրքում իւ երբեմնի երկբարբառը արտասանվել է իբրև դերմ. ü, այսինքն առաջնային շարքի ու (ü): Բերում ենք եզած փաստերը. «Ես՝ Շուշան... զիզակից (<զուզակից) Գրիգոր փշխանի» (Անի ննԳ Գ I 33), «Ես՝ Սիթի զիզակից Գրիգոր» (Անի ՈԶԹ Գ I 55), «Ես՝ Մխիթար Խաթենց... և զիզակից իմ Մամշահս շինեցար դարձանս» (Անի ժԲ Գ I 4), «Զիզակից իմ Ասուշիս» (Հոռոմոս ՈԶ ՍԱԲ 147), «Զիզակից իմ Շուշիկ» (նա ՈԶ ՍԱԲ 148), «Ես՝ Շուշիկս զիզակից Խոսրովա» (նա) «զիզակցին իմ: Տիկնոջն» (նա ՈԿԷ ՍԱԲ 152), «Ես՝ Վարճամ... և զիզակից իմ Փառանց» (Բազնայր ՈԶԲ ԲԱՍ 167): Վրացերենից փոխառված Բուրբել անվան մեջ նույնպես տեղի է ունեցել ու > իւ հնչյունափոխություն: Հ. Աճառյանը այդ անձնանվան ծագումը հանում է վրաց. Բերդվեյի ձևից, որը առաջանում է Բիրվիսի ամբողջ անունից և նշանակում է բիրթվիսեցի<sup>82</sup>: Թվարկում ենք Բուրբել >

82 Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Ա, էջ 423, 448:



Բիւրքել անձնանվան հնչյունափոխված հիշատակութիւնները, որ մեծ մասամբ վերաբերում են Վայոց ձորի իշխաններ Օրբելյան տոհմի անդամներին. «Որդոց իմոց Բիւրքելին և Բուխտային» (Ամաղու 20 է Դ III 243), «Բիւրքել իշխանաց իշխան» (նա Դ III 40), «ես՝ պարոն Բիւրքել և ամուսին իմ Վախախ» (նա), «Եղբար մեծ Բիւրքելին» (Ամաղու 24 է Դ III 237), «Զբազ մենամարտիկն զԲիւրքելին» (Արեւելի 22 Դ III 29):

Քեկ հին հայերենի ու ձայնավորի փոխարեն իւ երկհնչյունի փոքրագրումը վիմական բնագրերում սակավաթիվ վկայութիւններով է ավանդված, սակայն արդի նկարագրված բարբառներում նույն հնչյունափոխութեան լայն տարածումը հիմք է տալիս կարծելու, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի խոսակցական լեզվում, գոնե վկայված միջավայրում, այդպիսի արտասանութիւն գոյութիւն է ունեցել, որը և արտացոլվել է վիմագրերում: Որ թրվարկված օրինակներում ու-ի հնչյունափոխութեանից առաջացած իւ-ը հնչվել է առաջնային շարքի ու (գերմ. ü), ցույց է տալիս արդի բարբառներում նույն փոփոխութեամբ առաջացած արտասանութիւնը: Այսպէս է, օրինակ, Ղարաբաղի, Մեղրու, Ադուլիսի, Շամախիի, Լոռու, Վանի, Կաքավաբերդի բարբառներում ու ձայնավորի առաջնային շարքի վերին բարձրացման արտասանութիւնը Աճառյանի օրենքի ազդեցութեամբ կամ անկախ նախորդ ձայնեղ պայթեականների խլացումից: Վանի, Շատախի բարբառներում հայերենի բու, բուրդ, գունդ, դու, դուրս, բագուկ, բուփ, լուծ և այս կարգի այլ բառեր արտասանվում են՝ բիւվ (կոր պիւ), պիւրք, կլիւնդ, աիւ, պագիւկ, բիւփ, լիւծ (վան 43, Շատախ 38), որտեղ իւ-ը (ու) համապատասխանում է առաջնային շարքի ու-ին (ու, գերմ. ü):

Նույն փոփոխութիւնը նախորդող ձայնեղ պայթեականների խլացումով կամ նրանց անփոփոխ վիճակով նկատվում է նաև Ղարաբաղի, Շամախիի, Ադուլիսի, Մեղրու, Կարճեանի, Կաքավաբերդի բարբառներում, որտեղ հայերենի չուր, ֆուն, քրու, լեգու, լու, ձու, ձուկն, ուլունք արտասանվում են՝ ջիւր (եճուր), ֆիւն (ֆուն), ֆոն), քքիւ, լսիւգն, լսն, ծնու, ծնիւնք, հնիւսնք (էօլիւնք), ըստ այդմ, երկու դեպքում էլ թե ու և թե իւ տառադարձված հնչյունը համապատասխանել է ու-ին (ü): Տվյալ հնչյունափոխութեան մեջ որոշակի դեր է խաղացել նաև ձայնավորների ներդաշնակութեան ազ-



դեցութիւնը, որ օրինաչափօրէն գործում է նշված խոսվածքներում:

Վիմագրերում ու > ի փոփոխութիւնն արտացոլող վկայութիւններից հնագույնը Անիի նե՞Գ (994) թ. արձանագրութիւնն է, այստեղից, պետք է կարծել, որ ժ դարում ետին շարքի ձայնավորների առաջնային շարքն անցնելը տեղի էր ունենում գոնե այն բարբառներում, որոնց հետևութեամբ փորագրվել է Շուշան Պահլավունու արտոնագիրը:

Ձ. Չայնավորներից առաջ ու-ն պատմական հնչյունափոխութեամբ թանձրանում և վերածվում է վ շրթնատամնային բաղաձայնի, որը գրութեան մեջ կարող է արտահայտվել նաև արդեն նման հնչում ունեցող Վ-ով: Պրոֆ. Ա. Արրահամյանը պարզել է, որ այս դիրքում ու > վ, և հնչյունափոխութեանը սաղմնավորվելով ավելի վաղ շրջանում, Թ—ժ դարերում արդեն ձևավորվում է իբրև կայուն օրինաչափութիւն, թեև դրանից հետո էլ վիմագրական հուշարձաններում դեռևս շարունակվում է ավանդական, գրբարարյան ու + ձայնավոր գրութիւնը: Իբրև տվյալ դիրքում ու > Վ փոփոխութեան առաջին ուղղակի հիշատակութիւն Ա. Արրահամյանը նշում է Սեանի վանքի ՅԻԳ (874) թ. արձանագրութեան մեջ պահպանված՝ տվաֆ վախս (<տուաֆ) բայաձևը<sup>83</sup>: Սակայն հայերեն հնագույն շինարարական արձանագրութիւնների մեջ ավանդվել են այդ հնչյունափոխական իրողութիւնն արտացոլող մի քանի այլ փաստեր ևս, որոնք հնարավոր են դարձնում ավելի ետ տանել ու > վ, և փոփոխութեան առաջացման ժամանակը: Այսպես, օրինակ, Բագարանի տաճարի հայտնի կառուցողական բրնագրում, որ ըստ ակադ. Հ. Օրբելու փորագրվել է 638 թ. վկայված են՝ Յաուեղեան, Արուանդ անունները, որոնք դասական գրբարարում տառադարձվում են կանոնավոր՝ Աուուեղեան (նույն բնագրի նախարանում «...երանելի տէր Բուա Աուուեղեան ձգեաց զհիմունս սուրբ եկեղեցոյս») և Արուանդ («զԱրուանդ ի գետս և ի մառանս (կամ՝ ի մոայլս)»<sup>84</sup>:

83 Ա. Արրահամյան, Փաստեր..., ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 4, էջ 71—73:

84 Բագարանի տաճարի կառուցողական արձանագրութեան գիտական հրատարակութիւնը տպիս է ն. Մառք «Имя Бут или Буа в армянской надписи VII в.», ЗВО, т. VIII, М., стр. 322—323. ապա ավելի հանդամանորէն ն. Մառքի արձանագրած լուսանկարի վրայից՝ Հ. Օրբելին «Багаранская надпись», ХВ, 1913, т. II, стр. 126 և «Поминательная надпись Бута в Багаране», ХВ, 1914, т. III, вып. I, стр. 76—77: Բնագիրը տեղ-տեղ խաթարված է և լիակատար վեր-



Այստեղից, պետք է կարծել, որ ձայնավորներից առաջ ու > վ, չ փոփոխության առանձին արտահայտությունները նկատվել են դեռևս է դարից սկսած, սակայն պատմական հնչյունափոխության օրենքը ձևավորվում և ավարտվում է ավելի ուշ, Թ—ժ դարերում: Իրողությունն ավելի ցայտուն երևում է այդ դարերի վիճական բրնադրերում պահպանված բաղմամբիվ վկայություններից, որտեղ հնչյունափոխված ձևերը ավելի հաճախ են հանդիպում, քան ավանդական գրական կանոնավոր արտասանությունը: Քննենք այդ վկայությունները ըստ ու-ին հաջորդող ձայնավորների. Ու + Ա = ՎԱ: Այս փոփոխության նախնադույն հիշատակությունը Սեանի եկեղեցու ՅԻԳ (874) Թ. արձանագրության մեջ կարդացվող տվաբ (= առուաբ) բայն է<sup>85</sup>, նույն թվականի Թալինի մի տապանագրում ևս արձանագրված է ու > վա՝ «ՅԻԳ քվականութեան հայոց» (Mapp HM 69), սրանցից բնդամենը յոթ տարի ուշ փորագրված Մալրայի խաչքարի հիշատակագրության մեջ հանդիպում է՝ «ՅԼ (881) թվականութեանս հայոց»: Թվականիս, քվականութեան հաց կամ հայոց (<քուական, քուականութեան) վկայված են նաև Թալինի Քրիստափոր վանքում ՅՂ, ՅՂ ԹԹ. (ՄՎ), Գառնիում՝ ՅԻԸ քվականին<sup>86</sup>, Ագարակում՝ ՅՂ քվական<sup>87</sup>, Մաստարայում՝ նժԹ (ՄՎ), Երեբունյում՝ նՂէ, Կոշում՝ ՇԺ, Շե (ՄՎ), Հերհերում՝ ՇՂԸ (Գ III 49), Սանահնում՝ ԺԱ (ԿՂՍ 99), Տումիում նեթ (ՄՎ).

ժանության չի ենթարկվում հատկապես անձնանունների մասում: Մեր հարցի՝ Առուեղեան, Արուանդ անունների գրության հետ առնչվող բնթերցումները ճշգրտելու կապակցությամբ ուշագրավ դիտողություններ է արել բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը՝ ն. Մառին գրած նամակներից մեկում, որտեղ նամակագիրը, ի շարս այլ կական շտկումների, առաջարկում է Հ. Օրբելու վերձանության «...յրկան տառաշարքի առաջին եզրը վերականգնել եղբայրկան, որդեակի Գառնանը՝ որդեակի ԳՎանան, իսկ Տիրուանդ-ը՝ Արուանդ և այլն (Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյանի նամակները ն. Մառին «Մառը և հայագիտության հարցերը» ժողովածու, Երևան, 1968, էջ 262—264):

85 Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 68, 88: Միգիանի տաճարի անթվակիր հիշատակագրություններից մեկում, որ ամենայն հավանականությամբ ժամանակամերձ է հուշարձանի շինությանը (է դարի կես) վկայված է քվական (<քուական). «Ի քվակուրլ Կոստանդիանոսի Ապրաթա գրեցի» (Մյունի վանք Գ-11 87): Սակայն ժամանակի անորոշության պատճառով զգուշանում ենք այս վկայությունը ուս > վա փոփոխության նախնադույն օրինակ համարել:

86 Ե. Аракелян, Гарин I, стр. 84.

87 Գ. Հովսեփյան, Քարտեղ հայ հնագրության, էջ 12, տախտակ Ժ:



Ն. Բաշաղևտում՝ Նեթ<sup>88</sup>, Վահանալանքում՝ (ՇԼԵ (Դ II 136), Վանեվանում՝ ՆԿԶ (ՄՎ) և այլն:

ՈՒ + Ա = ԻԱ. — Հաղբատում, տաճարի շինության արձանագրքում. «Ի Նե քակ Սիմեոն հայր և Տիրանուն երէց շինեցար զեկեղեցիս» (ԿՂՀԲ 141), Սանահնում՝ «Տաւ զսր Սարգիս տանն» (ՈԱ ԿՂՍ 99), «նԿ քակահիս հայոց» (ԿՂՍ 181), «Ի: ՈԹ: Թ...», «Ի ՈԿԸ ք (Անի Դ I 2, 3), «Մեր նորատաց (<նորատուաց) մեծ և փոքր» (նորադուգ ժԳ ՄԲ), «Զի տա որ ի Յուշապեց գումնս» (Անի ԶԻ ԲԱՍ 65), հմմտ. «...նս՝ Մխիթար քահանա տուա (<ետու) արգիւնս» (Հաղարծին ժԳ ՄՎ), «զԶվա գեղն իւր բուր սահմանաւրն..., տուն մեր շինած ի Զվա» (Ամաղու Զեէ Դ III 216, 224 — Ստ. Օրբելյանի «Պատմության» մեջ նույն գյուղանունը կանոնավոր է՝ «զգանձագին գիւղն Զուայ իւր ամեն սահմանաւրն..., զի գեաւղն իմ Զուայ գանձագին էր»<sup>89</sup>), «նվաղեցաւ (<նուաղեցաւ) հոգի իմ ի գտն արասվաց» (<արտասուաց) (Հերհեր ՇՂԸ Դ III 49): «նս՝ նվաստ (<նուաստ) արեղա Հայրապետ» (Արատես ԶԺԹ Դ III 124): «նս՝ Գրիգոր ամենակրթաւ ծառա Քի» (Տաթև ՇԼԶ Դ II 28): «նվաստ քահանայքս Յոհանէս և Գրիգոր» (Խնձորուտ Զ ՄՎ): «Աղատէցի Էրեւելաց (<յերեւուաց) թաստակաս» (Երեբույք ՆԶէ ՄՎ): «Յեա մահվան (<մահուան) կիշանին» (Բարձրաբաշ ժԳ ՄՎ): «ն և հեա մահվան» (Սանահին ժ—ժԱ ԿՂՍ 101): «Քաղաքավարեցէր քաղում հրեվանաւ» (<հրեւանաւ) (Բաղարան (Mapp HM 90): «Անվանրն (<անուամրն) ալ նս՝ Աշոտ» (Գնդեվանք Դ III 16): նորատուաց (<նորատուաց) (նորադուգ ժԳ ՄՎ), «տվաւ (<տուաւ)» (Շաաին ԶԻԲ Դ III 156, Յաղացբար ԶԴ III 149, Հոսոմոս ՈՂԸ, Բաղարան ՈԶԳ, Անի ժԳ Դ I 65).

Ու + է = Վէ, ՎԵ — Հնագույն օրինակը ժ դարից է, Մրենի արձանագրության մեջ՝ «նս՝ Սոփի... տվեալ (<տուեալ) եմ հաստատեալ» (ժ դ. Օրճ Մ 3): ժԱ — ժԳ դարերում այդ օրինակները հաճախանում են՝ «էտու նվէր (<նուէր) ի Բաղդփոզոցին կուզպակ մի» (Բաղնայր ԶԻ ԲԱՍ 185), «ն և տվար նվէր» (նս ժԳ), «ն և էտու նվէր» (Ամաղու ԶԿԱ Դ III 239), «ն և տվար նվէր (Անի ժԳ Դ I 65), «Զոր ամիրսպաւաւար և ամարակ Սաղուն նուվէր և տէկեղեցոյ» (Աղջոց ժԳ Հով ԽԱՂ 9), այստեղ կարելի է դիտել նաև Վ քաղաձայնի հավելման երևույթը (նուէր > նուվէր):

<sup>88</sup> Բ. Ավարբեղյան. նոր Բաշաղգի նորադուգ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը. էջ 16:

<sup>89</sup> Ստ. Օրբելյան. Պատմություն նահանգին Սրսական. էջ 493-494:



Ու + Ի = ՎԻ — «Եւ դառարումն Սուրբսի վերակացվի (<վերակացաի) ժողովոյս» (Հերհեր ՇՂԲ Դ III 49), «Աւվի (<աւուի, առուի) տակի մեծ այգին» (Սպիտակաւոր ժԳ III 61): Տաւ բայի անց. կատարյալ ժամանակի եղակի առաջին դեմքի և նախահալկելովածով ձևը՝ Ետու արդեն ժ դարից սկսած վկայված է՝ տուի, առանց և աճականի, բայց առաջին դեմքի ի վերջավորությամբ՝ հավանաբար Ետու բայածակի անորոշ դեմքը ալկելի պարզորոշ դարձնելու պահանջով և մյուս բայածակերի համարանությամբ՝ Եկի, տեսի, մտի: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը տուի > տվի հնչյունափոխությունն է, որ քննվող ժամանակների վիճական արձանագրություններում ալկելի լայն կիրառություն ունի, քան կանոնաւոր Ետու-ն: Բաղմաթիվ փաստերից մեջ ենք բերում մի բանիսը. «Տուի զիմ գանձագին կուզպականին» (Բազնայր նՂԱ ՇԻԲ 114), «գնեցի ն: զբամ եւ Էտվի ի սր Առարէլս» (Անի Շէ Դ I 13), «տվի յԱրդարոյն» (Յաղացբար ԶԺԲ Դ III 148), «տվի սր Մարտիրոս իւր մտաւք» (Շատին ժԳ Դ III 157), «ի սր ուխտիս տվի» (Հերհեր ԶԽԶ Դ III 52), «Ես՝ Տարսաիճս տուվի ի Մճոկաձոր զխուպանին այգին» (Հերմոն ժԳ Դ III 134), «միաբանք տվին» (Հերհեր ԶԽԶ Դ III 52), «գիր տվի հայրենեց ազգէ ազգ» (Հալիձոր ԶԺԳ Դ III 52), «տվի զիմ գանձագին տունս» (Անի ՈԶ Դ I 51), «եւ տվի բնձա» (Հոռոմոս ժԲ ՍԱԲ 158), «եւ առաջին տարին տվի ն: կապիճ ցորեն» (Հոռոմոս ԶԲ ՍԱԲ 157), «:Բ: ժամ տվին մեզ» (Հաղարծին ժԳ ՄՎ), արտն Էտվի սր Գրիգորիս» (Հաղարծին ՈՂ ՄՎ), «եկեզեցի տվի շինել Սիրանես վարդպետին» (Ամազու ԶԻԳ Դ III 235), «արդինք տվի» (Ամազու ՈԶԱ Դ III 217): Նույն փոփոխությունը նկատվում է նաև ի քուին, ի քվին ձևերում: Գրաբարում քիւ հորովում է՝ քուայ, քուոց: Արձանագրություններում մեծ մասամբ փորագրված է հնչյունափոխված՝ ի քվին, ի քվի, ի քւ: Հնագույն հիշատակությունը Տաբեի վանքի վիճազրեբում է՝ «Յիշե՛ա Քս քվ նև» (Դ II 32), այնուհետև Բզենո նորավանքում, «ի քվ հա ի: ՇԺԱ»: (Դ II 45): Հաղբատում՝ «ի նկե քվիս ես՝ Մուկն, որդի Հոնովարա» (ԿՂՀԲ 143), ՇԺԶ քվ (ԿՂՀԲ 157), նՀԶ քվ (ԿՂՀԲ 242), վարագավանքում՝ «նլ քվին, ես՝ Խուշուշ դուստր Գագկայ» (ՍԱԲ 257), Մրենում՝ «ի նեԱ քիվականին» (ՍԱԲ 197), Տումիում՝ նեՔ քվիս (ՄՎ), Գաիշ վանքում՝ ի քվիս (ՈՂԵ ՍԲ), նորագուղում՝ ՈՀԵ քվիս (ՍԲ), Զուխտակ վանքում՝ ի քվին ՈՍԶ ՈՂԶ (ՄՎ), Հաղարծնում՝ ՈԿէ



բլի՛ն (ՄՎ), Գեղարդում՝ ի բլի՛ն ՈՂ (Հով ԽԱՂ III 41), Անիում՝  
ի բլի՛ն ՈԾԹ, ՈԿԳ, ՈԶ, ՈԶԳ, ՈԶԷ (Գ I 55, 63, 5, 35, 53) և այլն:



Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճական բնագրերում հին հայերենի ձայնավոր հնչյունների կրած փոփոխությունների մեր շարադրանքը կարելի է ամփոփել մի քանի բնոճանուր դիտողություններով. ա. Վիճական արձանագրություններում պահպանված վկայություններից դատելով, դրաբարի ձայնավորական համակարգի հիմնական փոփոխությունը ա կայուն և հաճախ կիրառվող ձայնավորի սղումը կամ ք-ի հնչյունափոխվելն է նախաշեշտ կամ շեշտակորույս վիճակում, որ տեղի է ունենում բարբառների ազդեցությամբ, քանի որ ա-ի հնչյունափոխությունը բարբառներում բնոճանրական օրինաչափություն է. ք. Ժ—ԺԳ դդ. վիճական բնագրերում հին հայերենի Ե, է ձայնավորները այլևս չեն հակադրվում իրար և իրենց հիմնական հատկանիշներով նույնացել կամ մոտեցել էին այն աստիճան, որ բոլոր դիրքերում կարող էին դորձածվել միմյանց փոխարեն: դ. Գրաբարի Ա ձայնավորը բառամիջում կամ բառերի վերջում (ոյ) նույն հնչումն ունի ա և երկբարբառի պատմական հնչյունափոխությամբ առաջացած օ հնչյունի հետ և այդ պատճառով հաճախ դիտվում էին նրանց շփոթման կամ իրար փոխարեն կիրառվելու դեպքեր, հատկապես բաղաձայնից առաջ. դ. Բ ձայնավորը վիճական բնագրերում վկայված է բոլոր դիրքերում, որտեղ այն հնչվել է, այն է, իրար հաջորդող բաղաձայնների մեջ կամ բառասկզբում որոշ կապակցություններից առաջ: Բ հոգը վիճակրական հուշարձաններում չի հանդիպում, թեև նրա առաջացման նախորդող օղակը դիտվում է բառավերջի և հանդող զաղտնավանկում՝ ի տարեերն (<ի տարեեն) կարգի ձևերում: Ե. Վիճական բնագրերում փորագրված մեսրոպյան այբուրենի գրերը չեն կարող իրական պատկերացում տալ ձայնավորների արտասանական բոլոր հատկանիշների մասին տվյալ շրջանում, մասնավորապես անորոշ է մնում ձայնավորների առաջնային շարքի հնչման կամ փափկացման իրողությունը, որը լայնորեն դիտվում է արդի մի շարք բարբառներում: Արձանագրություններում այս երևույթը գրային որևէ արտահայտություն չի ըստացել, սակայն փափկացման մասին է վկայում մի քանի բնագրերում արձանագրված ա > է հնչյունափոխությունը գրության մեջ:



որը իրականում կարող էր արտահայտվել և ձայնավորի առաջնային շարքի հնչում կամ  $ա = \ddot{a}$  համապատասխանություն: Նույն ձևով, հավանաբար, ու ձայնավորի փափկացումն է ցույց տալիս արոյն, սոյն (= արիւն, սիւն) ձևերի ոչ երկհնչյունը կամ իւ կապակցությունը զիւզակից (= զուզակից) բառերում: Գ. Հին հայերենի սակավ հնչյունափոխվող ա, ո, և ձայնավորները վիժական բրնազրերում երբեմն սղվում են կամ վերածվում այլ ձայնավորների, ըստ որում, օրինակները այնքան էլ մեծաթիվ չեն և մեծ մասամբ բնոգրկում են տեղանուններ կամ անձնանուններ: Վկայությունների սակավությունը պետք է բացատրել նրանով, որ՝ ա. Բնագրերի հեղինակներն աշխատել են խստորեն հետևել գրաբարյան ուղղագրությունը և ազատ մնալ բարբառային արտասանության ազդեցություններից. բ. ա, ո, և ձայնավորների՝ գրաբարին անձանով փոփոխություններն արտացոլող բառերը կամ անունները վիժագրության մեջ են ներթափանցել որևէ խոսվածքից և, բնական է, չէին ներկայացնում տվյալ միավորների օրինաչափ, բնոգրացած արտասանությունը:

Մյուս վրդմից, բնական է նաև այն պարագան, որ ձայնավորների հնչյունափոխության երևույթները վկայված են մեծ մասամբ հատուկ անուններում՝ անձնանուններ և տեղանուններ. հայտնի է, որ վիժական բնագրերում այդ անունները ավելի հաճախ են հիշատակվում, քան մյուս բառերը, և բացի դրանից, հատուկ անունները սովորաբար հայտնի են դառնում ոչ գրական աղբյուրներից, այլ կենդանի խոսքից և այդ պատճառով ավելի են ենթակա բարբառային արտասանության ազդեցություններին. մինչդեռ գրական ճանապարհով վիժագրության մեջ մուտք գործած միավորները ավելի հարազատ են դասական գրությանն ու հնչմանը, ավելի զերծ խոսակցական լեզվից և կող ներթափանցումներից:



## ԵՐԿՐԱՐՐԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին հայերենի հնչութային համակարգում կարևոր դեր ունեին այսպես կոչված բաղադրյալ վանկարները, որոնք ի տարրերություն պարզ, միայն մեկ ձայնավորով վանկերից, ներկայացնում էին կամ ձայնավորի ու ձայնորդի միասնություն մեկ վանկի մեջ, որ առաջացնում էր երկրարբաններ (Էա, Էւ, ուա, ուե, իւ, աւ, այ, ոյ և այլն), կամ երկու ձայնորդի ու ձայնավորի միասնություն, որ տալիս էր եռարարբաններ (Էաւ, Էայ, ուաւ և այլն): Ըստ տվյալ վանկարնում ձայնորդ և ձայնավոր հնչյունների շարադասության տարրերում են բարձրացող կամ ուժգնացող երկրարբաններ, երբ առկա է ձայնորդի և ձայնավորի միասնություն՝ ուե, Էա, ուի և այլն, և իջնող կամ քուլացող երկրարբաններ, երբ դիտվում է հակառակ միասնությունը՝ ձայնավոր + ձայնորդ՝ աւ, այ, ոյ իւ և այլն: Գասական հայերենում եռարարբանները միայն բարձրացող—իջնող էին, քանի որ նրանցում վանկարար ձայնավորը գտնվում էր երկու ձայնորդների միջև՝ Էաւ, ուոյ, տոյ և այլն: Գասական հայերենի գրական հուշարձանների հնչութարանական վերլուծություններից պարզվել է, որ գրի առնվելու ժամանակ հայերենն ունեցել է՝ այ, ոյ, աւ, Էւ, իւ թուլացող (իջնող) և Էա, ուա, ուե, ուի ուժգնացող (բարձրացող) երկրարբաններ, ինչպես և Էաւ, Էայ, ուալ, ուաւ, ուոյ բարձրացող—իջնող եռարարբաններ<sup>1</sup>:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գրաբարի Ե զ հուշարձաններում հիշյալ հնչյունակապակցությունները բոլոր դիրքերում չէ, որ հանդես են գալիս իբրև բաղադրյալ վանկարներ կամ ձայնավոր ու ձայնորդ հնչյունների միասնություն մի վանկում,

<sup>1</sup> Է. Աղայան, Գրաբարի փերականություն, Երևան, 1964, էջ 64, 111:



այսինքն ունեն երկրարբառի հնչութային արժեք կամ արտասանություն. որոշակի դիրքերում այդ կապակցությունները ոչ թե վանկարներ են, այլ սոսկ ձայնավորի ու ձայնորդի կապակցություններ կամ երկհնչյուններ:

Որքան էլ հին հայերենի գրական իրողություններով զժվար է հավաստիորեն որոշել այդ հնչյունակապակցությունների արտասանական որակը տվյալ ոլորտում, հայերենագիտությունը պարզել է, որ թվարկված երկրարբառների մեծ մասը վանկարնային արժեքը պահպանում է սովորաբար միայն մեկ դիրքում, այն է՝ բաղաձայններից առաջ, իսկ մնացած դիրքերում, այսինքն ձայնավորներից առաջ կամ բառավերջում այդ հնչյունների կապակցությունները այլևս երկրարբառներ չէին, այլ հնչվում էին իբրև ձայնավորի ու ձայնորդ բաղաձայնի կապակցություններ, երկհնչյուններ: Այսպես, մայր, գայլ, այգի բառերում այ-ը դասական գրաբարում երկրարբառային հնչում է ունեցել, բանի որ գտնվել է յ, ր, զ բաղաձայններից առաջ: Գրա կողմնակի համոզիչ ապացույցն այն է, որ նոր հայերենում տվյալ պարագայում այ-ը սովորաբար պարզվում է, հնչյունափոխվելով ա կամ է պարզ ձայնավորների՝ մայր > մար, մէր, գայլ > գալ, գէլ, այգի > ագի, էգի, մինչդեռ մյուս դիրքերում՝ հայելի, գոյանամ, տղայ և այլ բառերում այ-ը ձայնավորից առաջ կամ բառավերջում արտասանվել է իբրև ձայնավորի ու ձայնորդի կապակցություն, և այդ պատճառով էլ այդ բառի աճման ժամանակ կամ շեշտի ազդեցությամբ այ-ը չի փոխվում ա-ի կամ է-ի, մնում է անփոփոխ՝ հայելի, հայլի, գոյանամ, տղա: Այ վերջացող բառերը բաղաձայն հնչյունով ամփոփվելիս (հոգ, հոգնակերտ) այդ կապակցությունը նորից է ստանում երկրարբառի արժեք և, ըստ այդմ, վերը հիշված օրինակափոխյամբ նոր հայերենում կամ բարբառներում կարող է հնչյունափոխվել է կամ ա պարզ ձայնավորի. օրինակ, տղայ, փեսայ, ծառայ > տղա, փեսա, ծառա, բայց՝ տղայք, փեսայք, ծառայք > տղէք = տղաք, փեսաք = փեսէք, ծառէք = ծառաք և այլն<sup>2</sup>:

Դասական հայերենի երկրարբառների և երկհնչյունների արտասանության այս վիճակը պայմանավորված էր այդ հնչյունակապակցությունների մեջ մտնող ձայնորդ հնչյունների՝ յ, ռ արտասանության որակով, որ հայագետների կարծիքով տարբեր է եղել տարբեր դիրքերում. օրինակ. աղ, տամ, հատ, սիւն, աղիւս,

2 է. Աղայան. նշմ. աշխ., էջ 115:



սիւմ բառերը արտասանուիլ են aud, taun, haut, siun, a- ius, siukh, իսկ աւագ, կախաւ, ազնիւ, հաւատ, հաշիւ, գաւազան՝ avaz, kak-hav, azniv, havat, hašiv, gavazan, ըստ այդմ, առաջին զեպրում՝ բաղաձայններից առաջ ՚ ոչ վանկարարը հնչվիլ է իբրև ձայնորդ, զգալի շափով մոտենալով ձայնավորի, իսկ երկրորդ զեպրում՝ բառավերջում կամ ձայնավորներից առաջ՝ իբրև բաղաձայն՝ գրեթե նույնանալով շրթնատամնային վ-ի հետ: Նույնը կարելի է ասել նաև մյուս երկրարբանների մասին: Բառավերջի այ, ոչ հնչյունակապակցութունների մասին միայն պետք է ավելացնել, որ այս դիրքում դասական հայերենում անտարակույս հնչվող յ-ն հետագա դարերում պատմական հնչյունափոխությամբ համրացել, այլևս չի արտասանուիլ, որի հետևանքով էլ գրության մեջ նույնպես հաճախ կարող էր շարտահայտուիլ:

Հին հայերենի երկրարբանները և եռարարբանները պատմական հնչյունափոխության ենթարկվելով հետագա դարերում իբրև ընդհանուր օրինաչափություն վերածուիլ են պարզ ձայնավորների կամ ձայնավոր ու բաղաձայն հնչյունից կազմված կապակցութունների: Այս իրողության սաղմերը գտնվում էին դեռևս հին հայերենի օրինաչափություններում, միջին հայերենի գրական հուշարձաններում և նոր լեզվում այն դառնում է տիրապետող օրինաչափություն և հանդեցնում երկրարբանների ու եռարարբանների վերացմանը կամ պարզեցմանը:

Ինչպես մեր համառոտ տեսությունից երևաց, երկրարբանների ու եռարարբանների այս փոփոխությունը նոր չէր հին լեզվի համար. այստեղ ևս երկրարբանները որոշակի դիրքերում, հատկապես շեշտակորույս վանկում, հնչյունափոխվում էին պարզ ձայնավորի՝ մատեան-մատենի, քրիստոնեայ-քրիստոնէի, հրեայ-հրէից և այլն: Բացի գրանից, ինչպես տեսանք, երկրարբանները բառավերջում կամ ձայնավորից առաջ արդեն արտասանվում էին իբրև ձայնավորի և ձայնորդի կապակցութուններ, ուստի հետագա դարգացումը կարող էր տանել զեպի այս երևույթի ընդհանրացում և տարածում բոլոր մյուս դիրքերի վրա:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական արձանագրությունները մեծ մասամբ շարադրված լինելով ժամանակի գրական հայերենի հետևությամբ, սակայն կենդանի խոսակցական լեզվի կամ միջին հայերենի զգալի ներթափանցումներով, արժեքավոր բազմաթիվ տվյալներ են տալիս հին հայերենի երկրարբանների կրած փոփոխությունների ընթացքը պարզաբանելու համար: Ճիշտ



է, վիճական բնագրերում ավանդված վկայութիւններում դասական հայերենի երկրարբանների ուղղագրութեան մեջ կատարված շեղումները հաճախ այնքան էլ զգալի չեն, քանի որ հեղինակները ամեն կերպ աշխատել են հետեւել շարագրանքի կազապարհն և ըստ ամենայնի հարազատ մնալ ավանդական արտասանութեանը կամ գրութեանը, սակայն նույնը չի կարելի ասել կենդանի բարբառներից կամ հարեան լեզուներից եկող բառաձևերի մասին, որոնք ներմուծված են կենդանի լեզվից անմիջականորեն և, ըստ այդմ, նրանցում արտացոլված հնչյունափոխական երևույթները ներկայացված են հնադուրս և հավասարի բազմաթիւ հիշատակութիւններով:

Քննենք հին հայերենի երկրարբանների փոփոխութիւնները ժ—ժԳ դարերի վիճական արձանագրութիւններում:

### ԱՅ ԵՐԿԱՐԲԱՆ

Այ հնչյունակապակցութեանը, ինչպես տեսանք, գրարարում հանդիպում էր երեք դիրքում՝ բաղաձայնից առաջ, ձայնավորից առաջ և բառավերջում: Այս դիրքերից միայն առաջինում այ-ը երկրարբանային արտասանութիւն ունի և ըստ այդմ նոր հայերենում կամ բարբառներում կարող էր հնչյունափոխվել: Զայնավորից առաջ և բառավերջում այ-ը ձայնորդ և ձայնավոր հնչյունների կապակցութիւն էր և ուշ շրջանում արտասանվում և գրվում էր յ բաղադրիչի անկումով: Սակայն վիճական բնագրերը նոր ավյալներ են տալիս այն համոզման օգտին, որ բառավերջի այ շեշտակիր կապակցութեանը ևս շեշտը կորցնելով կարող է հնչյունափոխվել պարզ ձայնավորի կամ իսպառ սղվել: Այստեղից.

Ա. Բառավերջի այ հնչյունակապակցութեանը բառի ամման զեպրում նախաշեշտ կամ շեշտակորույս դիրքում կարող է հնչյունափոխվել ա պարզ ձայնավորի կամ սղվել: Առաջին երևույթը՝ այ>ա մանրամասն շարագրելու ենք յ ձայնորդի փոփոխութիւնները քննելիս և այստեղ գրան չենք անդրադառնա: Այ>գրո հնչյունափոխութեան ավանդված վկայութիւններից կարելի է նշել. Քահանայ սեռ. Բահանայի>Բահանի. «Հաւր իմ Միրաչեր Բահանի» (Գյարուտ ԶԼ Գ III 197), «Այս է հանգիստ Պաւղոս Բահանի» (Մարմաշեն ժԱ ՕրԾ ԻՏ 448): Տղայ>տղայոց>տղոց». «Զաւակաց մերոց Տաւղասլանին և այլ տղոցն» (Քանաքեռ ԶԺԵ ՄԿ): Ափա>ափային>ափին. «Ա: պատարագ Ասլանափին» (Զինչիրու



ՉԾ Հով ՏՄ 18), «Յանուն Ասլան ափին» (Ն. Վարազ ժԳ ՄՎ): Այլ բնագրերում՝ «Ես՝ Ասլան ափայս» (Թանատ 226 Դ III 79): Սատանայ > սատանայի > սատանի. «Մասնակից եւ գեհնակից սատանի Լղիցի» (Առաքելոց 24Թ ՄՎ): «Արեղայ > արեղայի > արեղի. «Հարատոյ գեհն արեղին չրդիրն» (Հոսոմոս 226 ՍԱԲ 158): «Ես՝ Հասան Խաչէնէցի Արեղի որդի ետու բնձա» (Հովհաննավանք ՈԶԹ ԿՂՀ 81): «Արեղին :Գ: Խ:, աշխարհական արեղին՝ :Բ: Խ:» (Բազնայր ՈԿԴ ՍԱԲ 183): Եղբայր > աղբրացէ. «Իմ աղբրացէ կամ իմ որդեց կամ հայ ու կամ վրացի» (Աբուճ 21Դ ՄՎ): Ամիրայ > ամիրայի > ամիրի. «Եւ ի փրկութի հոգոյ ամիրի» (Օշական 2ԽԴ ՎՏ 137), «Թողար... յԱշականոյ ամիրին ու դձեռնաւորին հարկն» (Օշական 2Լէ)<sup>3</sup>, «Յամս ամաղար արև, (<արեայի) Դեմէարտ» (Ախթալա ժԳ)<sup>4</sup>: Այս շարքի մեջ պետք է տեղափոխել նաև ա հանգով այն փոխառչալ բառերն ու անձնանունները, որոնք թեև բառավերջում յ-ով չեն ներփակվում, սակայն թերված ձևերում ստանալով այդ յ-ն՝ ենթարկվում են նույն այ > զրո հնչյունափոխությանը. «Այս իմ դիր է Բէկիա եւ Բաւրինի (<Բաւրինայի)» (Ջուխտակ վանք ժԳ ՄՎ): «Ի տանի Թէոդորոսի :Ա: Ժամ Սէղին (<Սեղային)» (Շխմուրազ ժԳ ՄՎ): «:Բ: Ժամն իմ հար» :Ա: Ժամն Սեղի» (<Սեղայի, Սեղաի) (Անի ժԳ Դ I 31, Կոչիկ ժԳ ՄԲ): «Տուար Ասփին (<Ասփային), որ եկ հուսով» (Մակարավանք ժԳ ՄՎ), «Ժամ Ասփին առնեն» (Յաղացբար 2ԺԲ Դ III 149), «Վս ամուսին իմ Ասփին» (Հերհեր 2ԿԶ Դ III 55), «Պատարազ Ասփին» (Շատին ժԳ Դ III 158), «Եւ ամուսնո իմ Ասփին» (Գադի վանք 2ԺԶ ՄՈՎ 96), այլ բնագրերում՝ կանոնավոր՝ Ասփաին, Ասփային (Ամաղու 2ԿԱ Դ III 239): «Յաշխարհակալ տէրութեան Աւադին, Գոնցին» (<Գոնցային) (Դիլիջան ժԳ ՄՎ), «:Բ: Գոնցին, :Բ. Թուխտենո» (Հերհեր 2ՂԴ Դ III 56), «Տուեցին հոգոյն Գոնցին» (Զինչիրլու 2ՂՆ Հով ՏՄ 23): «Հրամանաւ պարոն Աղբուղին» (<Աղբուղային) (Անի ժԳ Դ I 28), «Վս պարոն Աղբուղին արեւշատութեն» (Անի ժԳ Դ I 30), «...ի պարոնութի իշխանաց իշխանի մեծին Շահանշահի եւ Աղբուղին» (Հոփսիմե 2ԽԵ ՄՎ): Այլ բնագրերում անձնանվան ուղիղ ձևը ավանդված է՝ «Ես՝ պարոն Աղբուղայս» (Անի 2ԼԸ Դ I 22), փոփոխված ձևը՝ «Ողորմութի պարոն»

3 Զաֆարիա Ասրկավազ, Պատմադրություն, Գ, էջ 27:

4 Ս. Տեր-Ավետիսյանի հավաքածու, պահվում է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում:



րոն Աղբուղային և Սիբի խաթունին» (Աշտարակ ԶԿԶ ՄՎ) կամ՝ «Ես՝ Սիբի խաթուն ամուսին Աղբուղային» (Աշտարակ ԶԶԲ ՄՎ); «Ես՝ Հեծուպ և ամուսին փմ Անիփէն, միարանք սահմանեցին ի տարին :Բ: պատարազ... Ա, ինձ՝ Հեծուպ :Ա: Անիփին» (<Անիփային) (Ալուշալու Զ ՍՍ): Այլ վիճադրերում կանոնավոր՝ «Ես՝ Անիփա աղախին Խորիշահի» (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 87), «Կենակցի իմոյ Անիփայի» (Կողբ ՈՆ ՄՎ): «Հաստատեցին, Խ: ժամ Միրզին» (<Միրզային) ի Բջնո եկեղեցիքս» (Բջնի Պէ), նույն բնագրի նախարանում՝ «Ես՝ Միրզէս (<Միրզայս)», այլ բնագրերում՝ «զՄիրզէն հէծելին գլուխ կացուցար» (Բջնի Պէ)<sup>5</sup>: «Վս պարոն Զագին (<Զագային) հոգոյն» (Անի ԺԳԴ Դ I 23), «Աղբուղին և Զագին» (Հոռոմոս ԶԶԵ ՍԱՐ 159), այլ բնագրերում անվան ուղիղ ձևը՝ «Տր ամ պահեա զԶագայ և զպարոն Շահնշահ» (Անի ՈԶ Դ I 5), Բերված ձևը՝ «Վս պարոն Զագին» (Անի ԺԳ Դ I 30): «Աս կայսրն յունաց Միխէլ (<Միխայել)» (Անի ՆԶԴ Դ I 46), «:Բ: Խոցաղեղին, :Բ: Միխէլայ» (Բազնայր ՈԿԴ ԲԱՍ 159): «Եմ որդոյն Անաղի (<Անաղայի)» (Հերհեր ԶԿէ Դ III 56): «Եւ մարն մերս Մարքին (<Մարքային)» (Ենգիջա ԶԿԲ Դ III 204): «Քաշազար Երիտասարդին Փախրաղալին (<Փախրաղալային)» (Ամազու ԶԵԵ Դ III 237), Սմպատա, Փախրաղալին» (Թանատ ԶԵԵ Դ III 86), «Պատարագ Փախրաղալի» (Հերմոնի վանք ԶԵԵ Դ III 136): «Պատարոնացն Գրիգոր աղին (<աղային) և Յովաննիսի» (Անի ԺԳ Դ I 1), «Արզուն աղին և Սախպ Գիւանին» (Անի ԺԳ Դ I 19): «Զիմ որդոյն բաժինն զՍասնին (<Սասնային) ի Բզներս տլի..., :Ե: ժամ Սասնին» (Բազնայր ԶԺԱ ՍԱՐ 188): նույն նվիրագրի առաջին մասում և այլ բնագրերում անձնանվան ուղիղ ձևը՝ «Իմ անդրանիկ որդին Սասնայն» (նտ): «Եկի յԱնի տամղիս (<տամղայիս) վերայ» (Անի ԶԻԲ Դ I 23), այլ բնագրերում բառի ուղիղ ձևը՝ «...բաժ ուղէ կամ տամղայ» (նտ), կամ բառավերջում այ>՝ օրինաչափ փոփոխութեամբ՝ «Թողի զջաղացնոյս ամէնոյ զղամղէն (<ղամղայն)»: Այս հնչյունափոփոխութեամբ, այսինքն այ երկբարբառի սզմամբ պետք է բացատրել Անիում Գլիծոր (<Գայլիծոր) տեղանվան առաջացումը, որ քանիցս վկայում է Անիի և մերձակայքի վիճադրերում կամ ձեռագրերի հիշատակարաններում. «Ետու գիմ զջաղացն որ է Գլիծորին» (Հոռոմոս ՈՍ ՍԱՐ 151), «Են-

<sup>5</sup> Ե. Մուշեղյան, Բջնի 1758 թ. արձանագրության աստիճ. ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 5, էջ 95:



չորվի Գլիձորի գուն... Գլիձորին ջաղաց» (Անի ՈԿԳ Գ I 63), «Ետու զիմ ջաղացն, որ ի Գլիձորին... ետու զիմ կէս ակն ջաղացն ի Գլիձորին» (Բաղնայր ԺԳ ԲԱՍ 197, 198), «Ջաղաց մի յԱնի Գլիձորին» (Հատիճ ՈՄ ՄՎ):

Բառամիջում, նախաշեշտ կամ շեշտակիր վանկում ձայնավորից առաջ այ երկհնչյունի սղման երևույթները դիտվում են գրեթե բոլոր բարբառներում, սակայն տվյալ հնչյունափոխությունը կայուն և արքայեանող օրինաչափություն է արևելահայ խմբի խոսվածքներում: Ղարաբաղի, Արարատյան բարբառներում և նրանց հաբող խոսվածքներում իբրև ընդհանուր կանոն բառամիջում նախաշեշտ դիրքում այ-ը ընկնում է. ա. ձայնավորից առաջ՝ հայելի > հիլի, հելլի, գայի > կի, կարդայի > կրրի, երեխայութիւն > ր-խօրին և այլն: ք. Ա(յ) հանգող բառերի և անձնանունների թեր հոլովաձևերում ձայնավորից առաջ յ վերջնահանգը վերականգնելուց հետո. փեսայ-փէսա, փեսայի-փէսի, փրսէն, սատանայի-սրտանի, Աննային-Աննին, Մարբային-Մարբին, տղային-տղին, երեխայի-րէխի (Ղարաբաղի 46, Մեղրի 59, Լոռի 58):

Այստեղից, վիմական բնագրերում ա (յ) հանգող բառերի և անձնանունների թեր հոլովաձևերում նախաշեշտ այ-ի սղումը կարող էր տեղի ունենալ հիշյալ խոսվածքների հետևությունով:

Բ. Բառամիջում բաղաձայնից առաջ այ հնչյունակապակցությունը, որ այս դիրքում երկբարբառային արտասանություն է ունեցել, հնչյունափոխվում է ա սյարդ ձայնավորի, ըստ որում անկախ շեշտի ազդեցությունից, երբեմն նաև շեշտակիր վիճակում: Այդ հնչյունափոխությունը հատուկ է արևմտյան խմբի հայ բարբառներին (Կ ճյուղ) և վիմագրության մեջ այնքան էլ լայն տարածում չունի: Մեզ ենք բերում հզած սակավաթիվ օրինակները, որոնք հավանաբար ներթափանցված են հիշյալ հայ բարբառներից. «Համ այ (<այյ) թողար գէպեց գինս և խաղողի խալէն» (Մրեն ԶԼԵ ՕճԵ Մ 5), «Ետլի զիմ զրամայգին այգին ի հետ իմ անցման ի յաս (<յայս) սր եկեղեցիս» (Քորայր ԺԲ)<sup>6</sup>, «Ես՝ Սարգիս... ման ի յաս (<յայս) սր եկեղեցիս» (Քորայր ԺԲ)<sup>7</sup>, «Սուրբ վկայարանս զաս (<զայս)» (Երևբույր ԺԲ ՄՎ), «Աս է հանգիստ Սոճահին» (Ալայաղ ՇՀԸ Գ III 112), «Ես Բարինա... կանգնեցի զսինս զաս (Սանահին ՈԼ ԿՂՍ 114), «Չաս այգիս և զրախաս»

6 Ա. Տեր-Ավետիսյանի հավաքածուից (անտիպ):

7 Գ. Սարգսյան, Կապտավանք, «Եջմիածին», 1957, № 2-3, էջ 57:



(Մրեն 226 Դ I VI Mapp HM 82), «Կանգնեցի զխաչս զաս»  
(Անի ԺԳ ԲԱՍ 01):

Թվարկված դեպքերում չ գրի բացթողումը հազիվ թե հնարավոր լինի փորագրողի պատահական վրիպում համարել, պետք է կարծել, որ հիշյալ գրությունը արտացոլել է ավյալ ոլորտում այդ բառերի արտասանությունը: Են՝ բարեպշտ թագուիս դուստր Աբասա, Սմբատ շահանշահի կինս եւ Աշոտոյ մարս (<մայրս> (Երեբունյք ՆՊէ ՄՎ, Հով ՔԱՐ 13), այստեղ բառ բնորոինակված է՝ մայրս: Բնագիրը փորագրված է անկանոն շղագիր տառաձևերով և բարբառային զգայի ներթափանցումներով (յորդէց յրդիս, հգոր<հգար, քագուիս<քագունիս և այլն): Հաջորդ նույնանման փաստերը համոզում են, որ ավյալ դեպքում այ>ա գրությունը հնչման արդյունք է: «Հար (<հայր) Գավիթ ծառս սուրբ վանիս» (Թալին Ժ դ. ՄՎ), «Տուար ի մեր հարենի (<հայրենի) զեղէս Ազրնազեղա հանդէն զՓնակի տափն» (Սաղմոսավանք ԺԳ ՄՎ): Հայրապետութիւն բառը քանիցս վկայված է հարապետութիւն ձևով, այսինքն առանց չ հնչյունի: Հնագույնը Ամբերդի եկեղեցու բարավորի վրա փորագրված՝ Վահրամ Պահլավունու նշանավոր հրովարտակում է. «Ես՝ իշխանս Վարհամ շինեցի զկաթողիկես անթոռ հարապետական» (Ամբերդ ՆՁԵ ՄՎ), այստեղ խնդրո առարկա բառը վերծանված է՝ հայրապետական»<sup>8</sup>, ապա Աղշոց վանքում՝ «Ի հարապետութե՛ն սր Յովանիսի» (ՉԼՁ Հով ԽԱՂ III 9) և մի քանի այլ հուշարձաններում. «Ի հարութե (<հայրութեան) Գրիգորի հգնաւորի» (Սպիտակավոր 22Ա Դ III 96, Հով ԽԱՂ III 22)<sup>9</sup>, «Ով որ հակառ կա ՅԺԸ հարապետաց նդոված է» (Հերհեր 2Ը Դ III 51), «Առաջի Վարագա սր նշանիս եւ սր Հարապետիս» (Թանատ 2ՄՁ Դ III 76), «Եսու զիմ հարենիս (<հայրենիք — սեփականություն, ունեցվածք) մարաքանին ի սր նահատակիս» (Քարաղլուխ 2Խ Դ III 172), «Որ իմ հարենիք էր ի հնուց» (Յաղացքար ԺԳ Դ III 148), «Եսուն ի տարոջն :Գ: աւր ժամ :Ա: ինձ: Վաշլիանն: Ա: Գալկոյն» (<գալուկ, գալկոյն-ն) (Հավուց թառ

8 Ե. Տեր-Մինասյան, Ամբերդածորի արձանագրությունները, «Եջմիածին», 1961, № 6, էջ 50—51:

9 Քարի վրա այս մասում փորագրված է՝ ի հարութե Գրգր հգրի զՏանծի հոդ... այստեղ ի հայրութե Գրիգորի հգնավորի վերծանությունը այնքան էլ համոզել չէ. հավանական է թվում. ի հայրութե Գրիգորի ձ գրի զՏանծի հոդ... այսինքն ոչ թե եզրատու, այլ ձ գրի, որ նվիրված հոդի տարածությունն է ցույց տալիս:







կան լեզվի հետևությունք շարադրված արձանագրություններում:

Քանի որ թ—ժ դարերում է, է գրերով արտահայտվող հին հայերենի հնչյունները գրեթե բոլոր դիրքերում մոտեցել կամ նույնացել էին, ուստի պետք է կարծել, որ այս դեպքում ևս այ երկրաբար կարող էր հնչյունափոխվել միևնույն ձայնավորին, որ բնագրերում փորագրության մեջ կարտահայտվեր և կամ է գր-րերով: Նյութի շարադրանքը մատչելի դարձնելու նպատակով տրվ-յալ հնչյունափոխությունը բնում ենք ըստ ավանդված գրության, նախ այ>ե և ապա՝ այ>է:

Այ>ե փոփոխությունը դիտվում է մի քանի հաճախ գործած-վող բառերում. այգի>եգի — «էտու զիմ եգին սուրբ Քրիստափորի» (Թալին նԲ ՄՎ), «Երես Աշոտ Ավանէ զչաղացն եւ զեգին» (Կոշ նՂ ՄՎ), «Կամ եղև եղբարցս որդոցս...տալ զմեր արկեալ եգին» (Երծ-կոնք նԶԲ ՍԱԲ 209), «Որ զեգին ի վանիցս հանէ» (Հայրավանք ՈԿԹ ՍԲ), «Եւ տվար զՍապոնանց եգին» (նա), «Եգեղեմին (<այգեղեմ) :Ա: տունն եւ տան տեղ» (Արջո առիճ ԺԳ ՍԱԲ 191): Հաղբատի վանքի գրատան նվիրագրերից մեկում վերծանված է եղանոր ա-նորոշ բառը, այնինչ թվում է, պետք է լինի եգանոր <Այգեանոր տեղանունը. «Ետու զիմ հայրենիք այգին, որ առաջի եգանոր» (Հաղբատ ՈԻԸ ԿՂՀԲ 298), այլ բնագրերում՝ Այգեաակ, Ագաաակ, եգեաակ (Բարձրաբաշ ՈՂ ՄՎ): «Ետու զիմ եգիս ի սր Սարգիս» (Բաղարան ԺԳ 96): Հայրենիք>հերենիք (=ունենցվածք, կալվածք, սեփականություն): «Սիրանէս բարգործին հերենիք տվի» (Հալիձոր ԺԳ Գ III 52), «Զմեր հերենի գեղն զԱկող ի վանս տվար... հերե-նիքա ժողովուրդ» (Հերհեր ԶԸ Գ III 81), «Ետու ի հալալ արդեանց եւ հերեանեաց իմոց» (Հերհեր ԶՂԳ Գ III 56), «Գիտի սր Գեր-զըն իւր հերենաւն» (նա), «Ետու հալալ հերենեց, որ ինձ բաժին էր հասել» (Թանաթ ԶԶԵ Գ III 80), «Տվար զեղիս տեղի զերեզմանի մեր հերենի հողէ» (Հաղբատ ԶԻԸ ԿՂՀԲ 265), «Այնչաք իմ հերենի էդոյն, որ ի Լանջին» (Սանահին ԶԵ ԿՂՍ 166), «Ես զհերենիմ տվի անդաւի» (Մարինն ԶՆ ՄՎ), «Իմ հալալ գանձով զնեցի ի հերենէտիրաց» (Անի ՈԿԳ Գ I 63): Եղբայր>եղբեր>աղբեր, նաև իրրև անձնանուն գործածվելիս. «Ես՝ Հաղարշահս եւ իմ աղբերս Սնպատ» (Հաղարձին ՈԿԸ ՄՎ), «Ես՝ Անտոն գսեղեցի եւ իմ եղ-բերս Սարգիս» (Հաղարձին ԺԲ ՄՎ), «զ :Բ: իմ եղբարցն Բուլա-նին եւ Աղբերկանն» (<եղբայրիկ) (ն. Գեաիկ ԶԽԲ ՄՎ), «Ես՝ Մարգալս եւ Պետրոս հոգեւոր եղբեր» (Թալին ՈՀԲ ՄՎ), «Ես՝ Աղբեր Առեզս, Խաչատուր, Խաչայճորտս շինեցար զսր խորանս»



(Ալուշալու ԺԳ ՍՍ): Այրիկ > երիկ — միջին հայերենում ավելի տարածված է բառի այս ձևը, վիմական բնագրերում օրինաչափ է այր, ամուսին. երիկ միայն մեկ օրինակ ունի. «Եւ թէ կին դայրն (թողու)՝ Դ: իցն ՝ Ա: տա յերիկն» (Անի ԶԻԶ Դ I 15): Այգ > եգ — «Մը Գորգն աւր յիմ անուն եւ յեզն կիրակէն՝ Վաչէի» (Սանահին ՈՂԸ ԿՂՍ 134)<sup>13</sup>: Այս > էս, ավանդված է եզակի հիշատակութեամբ Խժկոնքի մի նվիրագրում. «Թէ որ այս հոկառակա եւ յես (<յայս) սրբոցս հանէ...» (ՆԶԲ ՍԱՐ 208): Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմագրերում, ինչպես ստորև կտեսնենք, ավելի սովորական է այս > էս փոփոխությունը: Կարգայք > կարդեք, վկայված է Կուրթանի ԺԳ դ. բնագրում. «Որ կարդեք եւ երկիրպագնէք իշեցէք (ՄՎ): Այ > է հնչյունափոխությունը նույն օրինաչափութեամբ տեղի է ունենում ա(յ)-ով վերջացող մի շարք անձնանուններում, երբ նրանց ավելանում է հոդի բաղաձայնը, օրինակ, «Ես՝ Փախրաղալես կանգնեցի զխաշս ի փրկութի ճորտո իմս Բալաղանին» (Ամաղու ԺԳ Դ III 228): Այստեղ անձնանվան ուղիղ ձևը մյուս վիմագրերից դատելով Փախրաղալա է, դիմորոշ ս հոդն ավելանալիս նրանից առաջ վերականգնվում է յ հնչյունը և ստացվում՝ Փախրաղալայս, որից և այ > է անցումով՝ Փախրաղալես, «Ես՝ Հեճուպս եւ ամուսին իմ Անիփեն (<Անիփայն)» (Ալուշալու ԺԳ ՍՍ): Այլ օրինակներ չկան, քանի որ տվյալ դիրքում ավելի օրինաչափ և տիրապետող է այ > է փոփոխությունը:

Դ. Այ երկբարբառը բառամիջում բաղաձայնից առաջ հնչյունափոխվում է է պարզ ձայնավորի, անկախ շեշտի ներդործությունից, հաճախ շեշտակիր վանկում: Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում այս կարգի բառերի հիշատակությունները բաղմաթիվ են և բոլոր հիմքերը կան համոզվելու, որ այ > է հնչյունափոխությունը տվյալ դիրքում բնագրկում էր բոլոր նման դեպքերը և ձևավորվել էր իբրև գերակշիռ օրինաչափություն: Սակայն հին հայերենի այ երկբարբառը հնչյունափոխված ձևերին զուգահեռ գրություն մեջ շարունակում էր իր գոյությունը, իհարկե ոչ թե հարազատ մնալով ժամանակի արտասանությանը, այլ ավանդական, գրական ուղղագրության հետևությամբ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական բնագրերում այ > է փոփոխությունը դիտվում է հետևյալ կարգի բառերում.

<sup>13</sup> Վերծանող Կ. Չափադարյանը յեզն բառի մեջ տառասխալ տեսնելով, առաջարկում է վերականգնել յեկն և հասկանալ՝ զալիք, յեկն իմաստով. թվում է այստեղ այգ > էգ, եգ (այգուց > էգուց, եգուց և այլն) բառն է:



1. Ա., այ հանգող հին հայերենի կամ հետադայում փոխառված բառերի ու անձնանունների վերջում հոգ ավելանալիս՝ վանկարունը բաղաձայնից առաջ ընկնելով ըստ ընդհանուր կանոնի վերածվում է է-ի, այսինքն տեղի է ունենում այ + դ > էդ կամ ծառայ + դ = ծառայդ > ծառէդ հնչյունափոխություն: Բաղմաթիվ օրինակներից մեջ ենք բերում մի քանիսը. «Ձիմ ոսկի առպնճանի զոնձէն (<զոնցայ) տվաք» (Հերհեր ԶԿէ Դ III 56), այստեղ զոնցայ բառին ն ցուցական հոգն ավելանալով տվեչ է զոնցայն, որից ա՛ զոնցէն: Նույն փոփոխությունը տեղի է ունենում և այն դեպքում, երբ զոնցայ գործածվում է իրրե անձնանուն. «Ես՝ Գոնցէս, թոռն Հասանա» (Ամաղու ԶԴԴ Դ III 223), այլ բնագրերում՝ Գոնցաին (Հերհեր ԶԼԲ Դ III 50—51): «Ես՝ Աղբուղէս եկի յԱնի», այլ բնագրերում՝ «Ես՝ սլարոն Աղբուղայս» (Անի ԶԼԸ Դ I 22, նա ԶՄ Դ I 28): «Թողի զջաղացնոյս ամէնոյ զղամղէն (<ղամղայն)» (Անի ԺԳ Դ I 28), «Թողի զքասանկին զղամղէն» (Անի ԺԳ Դ I 30), «Աւտարականն քան զղամղէն այլ իրբ շտայ» (Բջնի ԶԶԴ)<sup>14</sup>, այլ բնագրերում բառի ուղիղ ձևը՝ «Ի սկզբանէ բաժ ու տամղա չէին տվիլ» (Անի ԶԻԹ Դ I 23): «Ես՝ Սերոբ արեղէս (<արեղայս) առի Բաշարաթի հոդն» (Հերհեր ԺԳ Դ III 57): «Ես՝ Շարէս (<Շարայս) տվի...» (Թանատ ԺԳ Դ III 87): «Ես՝ Բորէս զԱռաւէտկանց այգին տվի» (Վերնաշեն ԶԶԹ Դ III 97), նույն հուշարձանի հաջորդ բնագրում ավանդված է անվան ուղիղ ձևը՝ «Ես՝ Բորա դուստր Զաքարիաի» (նա): «Թողաք զէգից տինո եւ խաղողի խալէն (<խալայն)» (Մրեն ԶԼԵ Օրճ Մ 5), «Թողի զիմ հայրենիք զեղիս զԹալնա գինո խալէն» (Թալին ԶԺԶ)<sup>15</sup>, այլ վիմագրերում բառս ավանդված է կանոնավոր նախաձևով՝ «Ազատ ի խալաէ» (Անի ՆԶԵ Դ I 48), «Ազատեցի ի խալաէ» (Մրեն ԶԻԲ Օրճ Մ 6)<sup>16</sup>: «Ես՝ Սեւինջս եւ իմ ամուսին Յացէս..., ես՝ Զատիկս եւ որդի իմ Սասնէս (<Յացայս, Սասնայս)» (Ն. Վարադ ԺԲ ՄՎ), «Ես՝ Սաս-

14 Գ. Գրիգորյան, Գիտադաստիան միջնադարյան մի տուրքի մասին, ՊԲԶ, 1963, № 2, էջ 262:

15 Զ. Շանխարունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 380:

16 Մրենի այս կարևոր արձանագրության որոշ տառաշարքեր ցայժմ ստույգ վերծանված չեն. այսպես, ըստ Զ. Թրքելու ստացվում է. «...ազատեցի այգիքն Մրենս եւ Աշականս ի հալալ եւ յաւելոդ հարկէ...», որ խիստ անորոշ է, ավելի հարազատ է Ն. Սարգիսյանի ընթերցումը՝ «...ի խալալ եւ յոդ հարկէ» (ՍԱՐ 198): Հավանական է թվում տվյալ հատվածի՝ «...ի խալաէ (<խալայն—հարկի տեսակ) եւ յերուդ հարկէ» վերծանությունը:



նէս եւ եղբարք իմ... միարաննցար սր ուխտիս» (Սաղմոսավանք ժԳ ՄՎ): «Ես՝ Շիրին խաթունս ու Պայալուն խաթունս ու Թաղրէս ու Թալէս ու Խոնէս (<Թաղրայս, Թալայս, Խոնայս) ու Ղայերս թողար զՀոսիսիմուցս յգրարակին շարիատն» (Հոսիսիմն Չեծ ՄՎ)<sup>17</sup>: «Թողի զամէն հարկ՝ զամիրհարկն, զհարսնէհակ, զկովայհամարն... զմահկանէն (<մահկանայն»)» (Բշնի ՉԶԴ ՍԲ): Գառնիի ՉԿԴ Բ., արտանադրում նույն բառի ուղիղ ձևը վկայված է՝ մահկանա, որ բառացի նշանակում է ամսահազկ, ամսավնահ. «Վերուցար զամենայն ցեղ վաճառի տամզա եւ զշաղացի մահկանա<sup>18</sup>»: «Մառէս (<ձառայս) եւ անարժանս Սարգիս» (Գարեհա ՊԱ)<sup>19</sup>: «Զմեր սալահրի մուլահրէն զՄիրզէն հեծելին զլուխ կացուցար... ես՝ Միրզէս» (Բշնի Պէ)<sup>20</sup>: «Ես՝ Փախրաղալէս (<Փախրաղալայս) կանդնցի զխաշո» (Ամաղու ՉԲ Դ III 228), «Ես՝ Փախրայղալէս Տարսայիճին որդի զավզանն թողի» (Աղուզի ժԳ Դ III 97), այլ վիմագրերում կանոնավոր՝ Փախրաղալաին (Ամաղու ՈՂ Դ III 211) կամ՝ «բաշ սպառաղէնն է Փախրաղալայն» (Ամաղու ՉԲ Դ III 230): «Ես՝ Նանէս (<Նանայս) ալի Ածածնիս» (Աղավնաձոր ՉեՉ Դ III 35), այլ վիմագրերում՝ Նանայս (Հովհաննավանք ժԳ ԿՂԶ 112): «Ես՝ Իվանի որդի Խալթին եւ ամուսին իմ Սախուխ եւ Մուրատ փաշէս (<փաշայս) միարաննցար սր նշանիս» (Թանատ ՊԲ Դ III 82) և այլն:

Արդի բարբառներում ես հին հայերենի այ երկբարբառը պատմական հնչյունափոխությամբ իբրև կանոն ամենուրեք պարզվել է, այսինքն վերածվել պարզ ձայնավորների կամ երկհնչյունի՝ Մեր հետազոտության համար կարևոր է որոշել, թե կենդանի, խոսակցական լեզվում կամ բովանդակ հայ բարբառներում ինչ ուղղությամբ է ընթացել այ երկբարբառի պարզումը կամ ինչ ձայնավորների է վերածվել այն:

Նկարագրված բարբառների փաստերը ցույց են տալիս, որ նրանցում այ երկբարբառը տարբեր գիրքերում բաղաձայնից ա-

17 Տե՛ս Գ. Հովսեփյան, *Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրություն*, «Արարատ», 1898, էջ 442, Կ. Քասաղյան, *Հայոց հին զեղարվեստի վարպետները*, Փարիզ, 1926, էջ 61:

18 Տե՛ս Գ. Գեղգուշյան, *Նշված հոդվածը*, ՊՅԶ, 1962, № 2, էջ 264:

19 Л. Меликсет-Бекоев, *Гаресджинская тетралингва эпохи монголов. 1352 г. «Эпиграфика Востока»*, М.—Л., 1953, № 8, стр. 59.

20 Ե. Մուրեղյան, *Բշնիի 1358 թ. արձանագրության առթիվ*, ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 5, էջ 98—99, *Еще раз о надписи из селения Бджин от 1358 г.* «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 5, երևված, 1959, էջ 272—273:



առջ կարող է հնչյունափոխվել է-ի կամ ա-ի, երբեմն նաև վերջինիս առաջնային շարքի արտասանությամբ (ան), որը սակայն հնչութային տարբերակում չի առաջացնում: Բոլոր բարբառների համար ընդհանրական այս օրինաչափությունից բացի, Ղարաբաղի, Մեղրու, Կարճևանի, Աղուլխի, Շամախի բարբառներում բառամիջի շնչտակիր վանկում նկատվում է նաև՝ ալ>ու (ալ>ու) պարզումը՝ գալլ>կյուլ, կյսւլ, գսւլ, ինչպես նաև բառասկզբի ալ>ի փոփոխությունը՝ ալգի>իգի (Մեղրի, Կարճևան), իկյի (Վան), հիկյի (Շատախ), իգյի (Կարավաբերգ), իքյի (Արարատյան), որը պետք է գիտել իբրև ալ>է>ի հնչյունափոխության արդասիր, այսինքն ալ>է փոփոխության շարունակությունը կամ հաջորդ աստիճանը՝ է>ի: Վերջին փոփոխությունները մասնակի երևույթներ են և շեն ընդգրկում բոլոր նման դեպքերը: Ուստի ալ երկրաբար հիմնականում պարզվում է է-ի կամ ա-ի: Հարկ է որոշել թե որ բարբառներում է ալ-ը պարզվելիս տալիս է, որոնցում՝ ա: Արդի բարբառների համեմատական ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ալ>է անցումը հիմնականում գիտվում է արևելահայ կամ Ում, կիս ճյուղերի խոսվածքներում, մինչդեռ ալ>ա պարզումը հատուկ է Կ ճյուղի արևմտահայ բարբառներին:

Իրողությունն ակնառու երևում է հատկապես բառասկզբի դիրքում բաղաձայնից առաջ ալ երկրաբար փոփոխությունից, ըստ այդմ, հին հայերենի այս, այժ և նման բառեր արտասանվում են էս, էժ (էձ)՝ Ղարաբաղի, Շատախի, Հաղբութի, Մեղրու, (ան), Վանի (էսա), Շատախի (ան), Լոռու, Արարատյան, Մշո (իսա, էս, էձ), ն. Զուղայի, Կարավաբերգի (աս, էս), Կոզենի և այլ բարբառներում, իսկ աս (ան), աժ (աձ, ագ)՝ Պուլի (ասիգա, աժ), Նիկոմեդիայի, Ռոդոսթոյի, Կարնո, Զեյթունի, Առախալի (ագ, աձ), Համշենի (իսա, աժ), Խարբերգի, Երզնկայի, Զեյթունի, Սասունի և այլ բարբառներում, որոնք մտնում են Կ ճյուղի մեջ:

Նույն օրինաչափությունը նկատվում է նաև բառամիջում, բաղաձայնից առաջ, ըստ այդմ, գալլ, փալա, հալելի բառերը առաջին խմբի բարբառներն արտասանում են՝ կէլ, գյէլ, կյէլ (երբեմն՝ կյուլ, գսւլ), փէա, փէդ, (երբեմն՝ փատ, փադ), հիլի, հիլէ (որոշ խոսվածքներում՝ հալի, հալլի), իսկ երկրորդ խմբինը միայն՝ գալ, գ'ալ, կյալ, փադ, փսդ — հալլի, խալլի, խալի, խալլիկ: Այս վիճակություններից ակնհայտ է դառնում, որ առաջին խմբի բարբառներում հին հայերենի ալ երկրաբար պատմական հնչյունափո-



խոսքի մէջ բոլոր դիրքերում մեծ մասամբ վերածվում է է պարզ ձայնավորին, մինչդեռ Կ ճյուղի բարբառների զգալի մասում այ-ը նույն դիրքում դառնում է պարզ ա: Իհարկէ, նկատվում են որոշ շեղումներ այս օրինաչափությունից, երբ նույն բարբառում այ երկրաբար մի դեպքում պարզվում է ա-ի և մի այլ դեպքում՝ է-ի. օրինակ, Ագուլխի, Մեղրու, Կարճեանի բարբառներում ունենք՝ իգլի, էգլի, փէտ, էծ (<այգի, փայտ, այծ), որ հավաստում է այ>է անցումը, բայց օրինաչափ է նաև՝ փնտ, գնլ (<գայլ), ան, աւ, ած (<այս, այծ), որ ցույց է տալիս այ>ա ընթացքը: Վանի բարբառում ավանդված է՝ իկլի, փէտ, կլէլ, էսա. էծ և միայն հայելի բառում, այսինքն ձայնավորից առաջ առկա է՝ խայլիկ = այ>ա: Սակայն այս շեղումները մասնակի երևույթներ են, հավանաբար առաջացած հարեան խոսվածքների ազդեցութեամբ և շին խախտում վերը սահմանած՝ այ-ի պարզման հիմնական օրինաչափությունը նկարագրված բարբառներում:

Բառավերջում հին հայերենի այ երկրաբար մի բանի շեղումներով հանդերձ (Մեղրիում՝ բախէ, բրախէ, բէկէ, փրէսէ, սրտանէ, Կարճեանում՝ բրախի, բէկլի, փրէսի, սրտանի (<երախայ. բակլայ, փեսայ, սատանայ), Ագուլխում՝ բրխո (<երախայ), տղո (<տղայ և այլն), բոլոր բարբառներում ներկայանում է առանց յ ձայնորդի, այսինքն տեղի է ունենում այ>ա հնչյունափոխութեան: Այս կարգի բառերը հոգերով կամ ք հոգնակերտով ներփակվելիս վերջնահանգ յ-ն վերականգնվում է և առաջացնում այ երկրաբար, որը նույնպես օրինաչափորեն բաղաձայնից առաջ առաջին խմբի բարբառներում վերածվում է է-ի, երկրորդում՝ ա-ի: Վիմական բնագրերում լայնորեն դիտվող այս իրողութեան համար լավագույն օրինակներ են տալիս Ղարաբաղի, Շամախիի, Արարատյան, Լոռու բարբառները, որտեղ հայերենի փեսայ, տղայ, գուլպայ, վկայ, սատանայ նախ կորցնում են վերջնահանգ յ-ն՝ փէսա, տրղա, գյուրա, վրկա, սրտանա, ապա վերջից հոգ կամ ք հոգնակերտը ընդունելիս նորից վերականգնում յ-ն (Կ ճյուղի արեւմտահայ բարբառներում այս դեպքում յ-ն չի վերականգնվում՝ փէսան, դղաք) փէսայք, տրղայք, գյուրայս, վրկայք, սրտանայք. և ի վերջո այ>է օրինաչափ պարզումով՝ փէսէդ, տրղէք, գյուրէս, վրկէք, սրտանէք և այլն: Կ ճյուղի բարբառներում տվյալ ընթացքը կրկին փէսա, դրղա, բյուրփա, վրգա, սաղանա>փէսաք, դրղաք, բյուրաք, վրգաք, սաղանաք և այլն:

Այս վերլուծութեաններին երևում է, որ վիմական բնագրերում



ալանդված այ՝ա պարզումը կարող էր առաջանալ արդի այն խոսվածքների ազդեցությամբ, որոնցում ուսումնասիրողները արձանագրել են այդ փոփոխությունը: Ինչպես վերևում նշեցինք, սակավաթիվ են այ՝ա արտացոլող վկայությունները, որոնք կարող էին ներթափանցել Ա ճյուղի արևմտահայ բարբառներից կամ միջին գրական հայերենից, որտեղ նույնպես օրինաչափորեն տեղի է ունենում այդ անցումը: Ժ—ԺԳ դարերի վիճազրեբում՝ ավելի հաճախ ու գերակշիռ են այլ վկայություններ, որոնցում արտացոլված է այ կրկրարբառի հնչյունափոխությունը է-ի բառսկզբում, բառերի մեջ բաղաձայնից առաջ, իրողություն, որ ժամանակակից Ա և Ում, կիս ճյուղերի բարբառների հնչյունական համակարգերի, մասնավորապես ձայնավորների և կրկրարբառների համակարգի հիմնական տարբերակիչ առանձնահատկություններից մեկն է:

Արևելահայ բարբառներում, հատկապես Արարատյան բարբառում տվյալ իրողությունն առաջինը մատնացույց է անում պրոֆ. Գ. Զահուկյանը 1956 թ. հրատարակած՝ «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» արժեքավոր հոդվածում<sup>21</sup>, Ընդհանուր գծերով ներկայացնելով միջին հայերենի հնչյունական համակարգի նկարագիրը, հեղինակն իրավամբ գտնում է, որ գրարարյան կրկրարբառների փոփոխությունները, մասնավորապես այ՝ա պարզումը հատուկ է ոչ թե բովանդակ միջին հայերենին կամ նրա հիմքում ընկած բոլոր բարբառներին, ինչպես պատկերացնում էին որոշ հայագետներ, այլ միայն Կիլիկիայի միջին գրական հայերենին, որ ժառանգել էր իր հիմքում ընկած Կիլիկիայի և սրան հարող Ա ճյուղի արևմտահայ այլ բարբառներից: Ըստ այդմ, ենթադրվում է, որ արևելահայ բարբառները, հատկապես Արարատյան բարբառը, այդ շրջանում (ԺԲ—ԺԳ դդ.) ի հայտ են բերում հնչյունական ու ձևաբանական ուրույն, կիլիկյան միջին հայերենից արմատապես տարբերվող հատկություններ, այդ թվում այ կրկրարբառի վերածվելը ոչ թե ա-ի, այլ՝ է-ի՝ գայլ>գէլ, կյէլ, այծ>էծ, փայտ>փէդ, փէտ և այլն: Հեղինակը, հոդվածի նպատակից ելնելով, չի տալիս այս տեսության հիմնավորումը, մասնավորապես անորոշ են մնում միջնադարում արևելահայ խոս-

21 Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը, «Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի», Երևան, 1956, հատ. 57, էջ 83:



վածքների, հատկապես Արարատյան բարբառի աղբյուրները և հավանաբար այդ համոզման է հանգում հիմք ընդունելով հիշյալ բարբառների արդի վիճակը:

Ինչպես հայտնի է, արևելյան միջին հայերենը պատմական պայմանների բերումով չհասավ գրական, սիտական լեզվի աստիճանի, ինչպես այդ տեղի ունեցավ արևմտահայ կամ կիլիկյան միջին հայերենի հետ: Այդ է պատճառը, որ այսօր մեր ձևերի տակ շկան ոչ գրաբար, արևելահայ խոսակցական լեզվով կամ զոնե նրա զրբական արտահայտությամբ շարադրված արտադրանքներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր լինեք գաղափար կազմել ավյալ ժամանակաշրջանի խոսվածքների մասին: Արևելահայ խոսվածքներով կամ նրանց գրական մշակումներով շարադրված գրականության պակասը մասամբ լրացնում են Մեծ Հայքի ամբողջ տարածքի վրա պահպանված մեծաթիվ վիճական արձանագրությունները, որոնք հավաստիորեն արտացոլում են բնիկների խոսվածքների հնչյունական և ձևաբանական իրողությունները:

Ինչպես վիճագրերում հին հայերենի այ երկբարբառի փոփոխությունների նկարագրությունից երևաց, այդ երկբարբառի օրինաչափ, կանոնավոր փոփոխությունը բառամիջում և բառասկզբում բաղաձայնից առաջ նրա վերածվելն է է պարզ ձայնավորին, որ, ինչպես տեսանք, հատուկ է նաև արդի արևելահայ բարբառներին:

Այստեղից, վիճական բնագրերի ստույգ ավյալները ևս հաստատում են պրոֆ. Գ. Զահուկյանի կոհանմամբ՝ Արարատյան կամ արևելահայ բարբառներում այ>է փոփոխության մասին, ի տարբերություն կիլիկյան միջին հայերենի, որտեղ տիրապետող էր նույն պայմաններում այ>ա պարզումը:

Վիճական բնագրերում այ>է, և պարզումն արտացոլող հրենագույն վկայությունը հանդիպում է Թալինի Քրիստափոր վանքի ՆԲ (953) Թ. նվիրագրում «էտու զիմ եզին սուրբ Քրիստափորի» (անտիպ, ՄՎ) կամ դրանից մի քանի տասնամյակ անց Կոշի եկեղեցու պատին փորագրված բնագրում. «Երևտ Աշուս յԱվանէ զչաղացսն եւ զեզին» (Կոշ նլ, անտիպ, ՄՎ):

Այստեղից, ավյալ հնչյունափոխության առաջացման ժամանակը կարելի է համարել Թ—Ժ դարերը, որ կողմնակիորեն հաստատվում է նաև Համամ Արևելցու մեկնության մեջ հիշատակված յեզուց, եզուց (<այգուց<այգ, այ>է, և) բարբառային ձևերով.



«Ի վաղիսն տեսանէ զՅիսուս զի գայ, զոր գոհհիկք յեզուց ասնն. եզուց դառնամք»<sup>22</sup>:

2. Ա լծորգութիւն բայերի սահմանական եզանակի ներկա է անց. անկատար ժամանակների ձևերում, որտեղ այր, այլ հնչյունափոխում են՝ կր, էք: Շատ շին այս կարգի բայաձևերի վկայութիւնները, սակայն չի կարելի հաշվի շաննել դրանք: Ահա նկատված օրինակները. «Որք կարդէք (<կարգայք) յազաթս յիշեցէք» (Խծկոնք ՈԶ ՍԱՐ 213), «Որք կարդէք (Ազարակ ԶԺէ ՄՎ), «ուվ կարդէք» (Ուշի ԺԳ ՄՎ), «ուվ կարդէք» (Ասաղաձոր ԶԺԹ ՄՎ), «որ կարդէք» (Գարեւշա ԳԱ)<sup>23</sup>, հավանաբար կարգայք>կարդէք-ի հեռուցումը, ձևարանական անսահմանութիւն օրենքով: Ով կարդէք (Անի ԺԳ Դ I 29, նա ԺԲ Դ I 50, Մող ԶՄԸ Դ III 25, Ազալնաձոր ԶԻԲ Դ III 37, Գյոյարաս ՈեԹ Դ III 46, Հերհեր ԶԵՆ Դ III 59, Գլաձոր ԶԿ Դ III 102, Մարտիրոս ԶԼ Դ III 181, նա ԶԶ Դ III 185, Վարդենիկ ԺԳ ՍՍ, Գահրաւ ԶԶէ ՍԲ, Հաղրոթ ԶՂ ՍԲ, Վարդենիս ՆՂ ՍԲ, Զրառատ ՈԿԴ ՍԲ, Սիսիան ԶՄԶ Դ II 91): «Տեսար զԱնո արթոս եւ դիրեցանիս, որ հարկ կէր (<կայր) ի վէրէնին» (Անի ԶԼԸ Դ I 22), «Իմ ար ուխաս ավար դինչ այլ հողոյ բաժին կէր» (Հերհեր ԶԶ Դ III 53), «Եւ շինեցի իմ հաւատարմութիւն որ ոչ ում ազնութիւն չկէր» (Կոթ ԺԳ ՄՎ): «Եւ երբէր (<երբայր) յնմ» (Զարեղար ԺԲ ՍԲ): «Որք զվարճանէք (<զուարճանայք) ի ձայնից սորա, ասացէք ար ան ողորմեա Մխիթարա» (Անի ԶԻ Դ I 43):

Կամ բայի անց. անկատար ժամանակի եզակի երրորդ դեմքի կայր>կէր դիտվում է Կ հյուղի մի քանի բարբառներում: Այսպես, վանի, Մշո, Շատախի, Մոկսի, Ոզմիի, Գիւղիինի բարբառներում կամ պակասավոր բայի անց. անկատար. ժամանակը եզակիում չինում է. կի, կէ (<կայի), կիր, կէիր (<կայիր), կէր (<կայր) (հմմտ. հերիաթների նախարանի հայտնի նախադասութիւնը՝ կէր չկէր բախվոր մը կէր): Վիճադրերում ավանդված կայր>կէր վկայութիւնները կարող էին ներմուծվել հիշյալ խոսվածքներից:

Ինչ մնում է ներկայի բայաձևերում այլ>էք փոփոխութիւնը, ապա դրա ակունքները պետք է որոնել Ում հյուղի բարբառներում. համադրելի է, օրինակ, Ղարբարղի բարբառի խոսվածքներում նույն կարգալ բայի կարդէք ձևը բղձական (դրաբարում սահմանական) եզանակի հոգնակի թվի երկրորդ դեմքում՝ կարբանք, կար-

22 Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915, стр. 271.

23 Л. М. Меликсет-Бекоев, Эпиграфика Востока, 224. հողվածք, էջ 59:



քէի, կարբան (Իջևան, Շամշագին, Գրիլիջան): Մյուս կողմից, Ղարբարաղի և Շամախի մի քանի խոսվածքներում հին հայերենի կարդալ անորոշ դիրքայր ավանդված է էլ կամ իլ լծորդությամբ՝ կարբէլ, կարբիլ (Ղարբարաղ 174, Շամախի 77), որ հնարավոր է դարձնում լծորդ ձայնավորի (է) անկայությունը նաև ըզձական, պայմանական, հարկադրական եղանակների բայաձևերում, անկախ այ>է (կարդայլ>կարդէլ) փոփոխությունից: Ահա կարբէլ, կարբիլ բայի ըզձական եղանակի անց. ապառնի ժամանակի պատկերը Մարտակերտի շրջ. հյուսիսային գյուղերի խոսվածքում. կրբբէլի, կրբբէլիւ, կարբէւ, կրբբէլիւն, կրբբէլիւ, կրբբէլիւն: Բարբառը ուսումնասիրողը չի բերում նույն եղանակի ապառնի ժամանակի ձևերը, սակայն դատելով մյուս բայերից ապաստի է. կարբէմ, կարբէս, կարբէ (=կարբա), կարբէն, կարբէլ, կարբէն:

Նույնն է նաև հարկադրական եղանակի բայաձևերում. պրտի կարբէմ, պրտի կարբէս, պրտի կարբէ, պրտի կարբէն, պրտի կարբէլ, պրտի կարբէն... կամ՝ պրտի կրբբէլի, պրտի կրբբէլիւ և այլն: Ակնհերե է, որ վիմական բնագրերում պահպանված՝ որք կարդէլ, որք զվարճանէլ շին ծագում հիշյալ խոսվածքների ըզձական, պայմանական կամ հարկադրական (հին հայերենի սահմ. ներկայի նման) բայաձևերից, այլ գրաբարի սահմ. ներկայի (բարբառներում՝ ըզձական) հոգնակի 2-րդ դեմքի բայաձևից այ>է պարզումով՝ կարդայլ, զուարճանայլ>կարդէլ, զվարճանէլ: Գրալավագույն ապացույցն այն իրողությունն է, որ ավյալ բայաձևերը վիմագրերում վկայված են միայն հոգնակի թվով, երկրորդ դեմքով, որտեղ օրինաչափ է այ երկրորդադի առաջացումը ա խոնարհման բայերում և նրա վերածվելը է-ի:

3. Ա.(յ) հանգոզ գոյականներիին և հոգնակերտ ավելանալիս սրվյալ վանկում տեղի է ունենում այ>է հնչյունափոխություն, քանի որ այս դեպքում այ կապակցությունը ընկնում է բաղաձայնից առաջ. «Գեղո տղէն (<տղայն) գերի թափեցին» (Յաղացքար ԺԶ Գ III 144): «Մեր պարոնէն (<պարոնայլ) հաստատեցին» (Գագի վանք ԶԿԱ ՍԲ): «Ի հայոց կամ ի վրացի գայն գեղարէն (<գիւղորեայլ) հանել ջանան» (Ամաղու ՈՂ Գ III 211): «Եւ այլ ընծէլ (<ընծայլ) տվի» (Գանձասար ԶԲ ՍԲ):

4. Բառասկզբին այ կապակցությունը բաղաձայնից առաջ նախաշեշտ կամ շեշտակիր դիրքում հնչյունափոխվում է է պարզ ձայնավորի. բաղմաթիվ վկայություններից մեջ ենք բերում մի քանիսը. «էս (<այս) իմ գիր է պարոնիս» (Անի ԺԱ Գ I 9, ԲԱՍ



127), «էս ժամս, որ գեղս էհատաւ ի անասնէ» (Յձուն ԶԻԴ ՄՎ), «Զէզին (<այզին) յէս (<այս) եկեղեցոյս հանէ» (Մեծարանց վանք ժԳ)<sup>24</sup>, «Մարդն էն (<այն) նզովել եզիցի» (Անի ժԳ Դ I 28), «Ես՝ Գաւթիս եւ Միրան զաւգանն տվար, ով որ էլ (<այլ) ուզէ, մասն զուգայի առնու» (Լոր ԶՂԴ Դ II 109), «Կատվհատին աւգան էլ (<այլ) տվաք» (Թանաթ ժԳ Դ III 78), «Թաղեցար մեր Սամսոն որդիս ի վանքս, մեր էլ գերեզման հատար» (Յաղացրար ՊԺԶ Դ III 114), «Մեր էլ զհասարակ ի սր Կարապետս ապրսպարեցար» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 101), «Եւ ետուն մեզ տուն եւ այգի զինչ էլ միարանք» (Հաղրատ ԶԻԲ ԿՂՀԲ 198), «Ոչ էլ մեծ կամ փոքր խարն» (Մարինե ԶՀԲ ՄՎ), «Որ զ :Ա: էլ կէսն ես տվի» (Մարինե ԶՀԲ ՄՎ), «Զկես հողին էլ իմ եկեղեցոյս հանդ տվի» (Զինչիրլու ԶՄ Հով ՏՄ 17), «Զաւրացո զթագաւորն մեր ի վերա էլազգեց (<այլազգեաց)» (Կարս ՈԶԳ ՕրԾ ՈՒՏ 470), «Մեր էլ կամակից եղար (Բջնի Պէ)<sup>25</sup>, «Յոհանէս էլ միարանքս տվին» (Չարերգար ժԳ Մով 98), «Տր Բարսէղ եւ էլ միարանքս հատուցին» (Հոռոմոս ԶԲ ՍԱԲ 157), «Ես՝ Ասլլղարիփի որդիս էլ տվի զիմ գնած խուպան» (Մարինե ժԳ ՄՎ):

Այս կարգի բաների շարքում ամենատարածվածը այզին է, միջնագարում հաճախ նվիրարեւրվող կամ վաճառվող-գնվող կալվածք, որ հնչյունափոխված ձևով հիշատակվում է բաղմամբիվ նվիրարդրերում կամ պայմանագրային արձանագրութուններում: Այզի>էզի, հնագույն վկայութունը Կոշի եկեղեցու նլ (981) թրնագրում է. «Երես Աշոտ յԱվանէ զջաղացսն եւ զեզին» (ՄՎ), Սակայն տվելի սովորական է այզի>էզի, որի նախնադույն հիշատակութունը գտնում ենք Թալինի մեծ տաճարի մի նվիրարգրական արձանագրության մեջ, որ անծանոթ է գիտությանը. «Ես՝ Մուսէս, որ էտու զիմ էզիս եւ զհոզս ի սր կաթաղիկէ» (Թալին նՄԶ ՄՎ): Բառի նույն ձևը փոքրագրված է դրանից երկու տասնամյակ անց, Ամբերդի եկեղեցու բարավորին, Վահրամ Պահլավունու նշանավոր հրովարտակի մեջ. «...Սահմանեցի պտուղ... յԱրագածոտնէ յէզին :Բ: փասգի» (Ամբերդ նՀԵ)<sup>26</sup>: Հետագա դարերում էզի հնչյունափոխված ձևը ավելի հաճախ է հիշատակվում, քան դրարարյան այզին: Իրրե կանոնավոր նախաձև գիտակցվելով.

24 Խ. Գաղյան, Մեծարանց որ և Ս. Հակոբա վանքի արձանագրութունները, «Թանաթ», Փարիզ, 1901, էջ 137:

25 Խ. Մուշեղյան, նշվ. հոդվածը, էջ 277:

26 Ե. Տեր-Մինասյան, նշվ. հոդվածը, «էջմիածին», 1951, № 6, էջ 50, 51:



էզի-ն իր հերթին նոր հնչյունական փոփոխութեան է ենթարկւում՝  
էզի > իզի և այս ձևով դարձածովում վիմագրերում:

Ահա էզի բառի վկայութիւններ ժ—ժԳ դարերի վիմական բը-  
նադրերում. «Ետու էզի :Ա: յԱրուճ» (Անի ՈԿԳ Գ 1 63), «Գնեցի ի  
յնրևան զՄեղիսանոյ էզոյն շարէրն» (Կեշտոխ ՈժԲ Հով ԽԱՂ  
30), «Ետու... զՔաղաքափոսին էզին» (Հերհեր ԶՂԳ Գ III 56),  
«Տվար... զՄազմանենց և զԱւանշենց էզին» (Թանատ ԶՂն Գ III  
81), «Տվի զհանդանի էզին» (Ամաղու ԶՂԳ Գ III 223), «էզեց  
(<այգեաց) հոգի շարիատ էր գրած..., վանից էզոյ (<այգոյ)  
շարիատն վեր կալար» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 101), «Զիւր է-  
զին... գնած էզին..., դիմ գնած էզին» (Հաղբատ ժԳ ԿՂՀԲ 247, 249,  
252), «Գնեցի զԱտոմին էզին..., ով զէզին հիւրատանէն հանէ...,  
ալար դմեր գանձագին էզին..., ու այնչար իմ հերենի էզոյն» (Սա-  
նահին ԶԻԳ, Չե ԿՂՍ 162, 163, 166), «Զվերի էզին իւր բնձանովն»  
(Բաղնայր ԶԺԱ ՍԱՐ 189), «Թողար զէզեց դինս և խաղողի խա-  
լէն» (Մրեն ԶԼէ Օրճ Մ 5), «Ետու դիմ Աորճաց էզին..., էտու  
դմեր գանձագին էզին» (Բաղարան ժԳ, ՈՉԳ ՍԱՐ 204), «Ես՝ վա-  
սակ Սիսիաթունս էզի ետու Ածածնիս» (Մշկավանք ԶԺԲ ՄՎ):

5. Հայերեն եղբայր, հայր, գայլ և այլ բառերում և նրանցով  
կազմված բարդութիւններում կամ անձնանուններում բաղա-  
ձայնից առաջ նախաշեշտ կամ շեշտակիր վանկում տեղի է ունե-  
նում այ > է. «Մաթէս և իմ կէնայից Սթէնի և իմ եղբէր (<եղ-  
բայր) Մարկոս» (Անի ԶՄԹ Գ I 64), «Ոչ որդի ունէր ոչ աղբէր»  
(Հերհեր Զեե Գ III 59), «է: աղբէր ի Քս փոխեցան» (Զատիթափ  
ԶեԶ Գ III 195), «Ես աղբէր Ասեզս, Խաշատուր, Խաշաճորատ շի-  
նեցար սր դիտրանս» (Ալուշալու ժԳ ՍՍ): նույն անձնանունը վար-  
դենիկի ժԳ դարի նվիրադրում հիշատակվում է. «Ես՝ աղբար Ա-  
սեզս միարանեցա...» (ՍՍ): «Հասանա և Սարգոս՝ իմ աղբերանցն»  
(Թանատ ժԳ Գ III 78), «Մր խաշս է բարէխաւս առ Քս Աղբէրկանն  
(<եղբայրկան, եղբայրիկ)» (Անի ժԲ Գ I 67), «Ի: Աղբէրաղբիկն  
(<եղբայրաղբ) և զայլն մեղ առնեն» (Հաղբատ ԶԻէ ԿՂՀԲ 159),  
«Ած ող Շահնշահի, Աղբէրաղբիկն» (ն. վարագ ժԲ ՄՎ), «Աղբե-  
րացիս (<եղբայրացեայ) և Ազատարի միարանեցար Ածածնիս»  
(Շիմուրագ ժԲ ՄՎ), «Ես՝ Տէրունս որդի Խալըլին իմ աղբերա-  
ցովս» (<եղբայրացու) կանգնեցի զխէշս» (Գսեղ ԶԼ ՄՎ), «Իմ  
աղբէրս զեկեղեցիս շինեաց» (Խաթրավանք ՈՍԳ ՄՎ), «Ոհայնա-  
վանք ինձ ալին և էրէնիք» (<հայրենիք = կալվածք, սեփականու-  
թյուն) (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 101), «Յիմ գանձագին և էրէնիցն



յկշնկու» (Բաղարան ՉԺԱՍ ՍԱՐ 188), «Տվար գեղիս տեղի գերեզմանի մեր հէրէնի հողէ» (Հազրատ Չի՛՛՛ ՄՎ, ԿՂՀԲ 265), «Մեր հարցն առնեն՝ Հոնային եւ Գէլին (<գայլ>» (Հովհաննավանք Չե՛՛՛ ԿՂ 83):

Ե. Հին հայերենի այ երկրարբանք այգի բառի մեջ մի քանի օրձանագրութիւններում հնչյունափոխված է ի-ի՛ այգի>իգի: Բնչպես նշեցինք, այս փոփոխութիւնը տեղի է ունենում ոչ թէ անմիջականորեն՝ այ>ի, այլ՝ այ>է անցումից հետո, այսինքն նախ կատարվել է այգի>էգի և ապա՝ էգի>իգի, ըստ որում այ երկրարբանի վերածվելը ի ձայնավորին չի դիտվում ոչ միջին հայերենում և ոչ էլ այլ վիճազերերում: Մեջ ենք բերում այ>է ի հնչյունափոխութիւններից. «Տնկեցի գթութուաց կէսս իգիս» (<էգիս<այգիս) (Հալիձոր ՉԺԳ Գ II 52), «Ես՝ Գորդ... տվի գիմ իգին Աձածնիս» (Յաղացքար ԺԲ Գ III 153), «...իգին ու գիմ հովատունն եկեղեցոյս տվի» (Ամաղու ՉԲ Գ III 218—20), «Տվիք գմեր գնած իգին ք Սխտորալէդ» (Թանատ ՊԲ Գ III 82), «Ես՝ Սիմիանս տվի գմեր հայրենի իգին» (նա ՉՅԸ Գ III 76), «Ջաշոյ իգի կուշան» (Վերնաշեն ԺԵ Գ III 101): Այս հնչյունափոխութիւնն արդյունք է՝ Իգանոր (<Այգեձոր) տեղանունը Անիում, հիշատակված մի քանի վիճազերերում. «Ետու գիմ հայրենիք տներն... Իգանորին դռան վանացս ասպնջականոց» (Հոռոմսս ԺԳ ՍԱՐ 155):

Այստեղից, պնդելու է, որ այգի բառի սկզբի այ>ի պարզուձք չի կարելի անմիջական փոփոխութիւն համարել, քանի որ վերկայված օրինակներում ի-ն առաջանում է ոչ թէ այ երկրարբանից, այլ սրա պարզումից առաջացած է-ից:

Նույնն են հավաստում և այն բարբառները, որոնցում հին հայերենի այ-ը բառասկզբին կամ բառերի մեջ բաղաձայնից առաջ կանոնավորապես վերածվում է է-ի, մինչդեռ այգի բառի սկզբին ունեն ի կամ է: Այսպես, Ղարաբաղի, Շատախի, Վանի, Ն. Ջուղայի, Կարճեանի, Կարավաբերդի, Արարատյան բարբառներում ունենք՝ փէտ<փայտ, կյէլ<գայլ, էս<այս, էձ<այձ, բայց՝ հիկյի, իկյի, իգյի, իէյի<այգի, որ ապացույց է, թէ բառասկզբի ի-ն առաջանում է՝ այ>է>ի ընթացքով:

#### ՈՅ ԵՐԿԵՐԵԱՌ

Հայագետները պարզել են, որ ոչ հնչյունակապակցութիւնը ևս այ-ի նման երկրարբանային հնչում է ունեցել միայն բաղաձայնից առաջ, իսկ բառավերջում և ձայնավորից առաջ կամ միջձայնից



նավորային դիրքում արտասանվել է իրրե ձայնավորի ու ձայնորդ բաղաձայնի կապակցություն: Այս դրույթյան ապացույցը ևս հայագետները համարում են այդ դիրքերում ոյ-ի կրած երկակի հնչյունափոխությունը, օրինակ, մի գեպքում գոյ > գո, հանոյ > հանո, բայց հոգնակիում՝ գայլ > գույլ, հանոյլ > հանույլ, այսինքն ենթարկվում է փակ վանկում ոյ > ու սրտամական հնչյունափոխությունը՝ յոյս > յույս, կոյս > կույս և այլն, ուրեմն այստեղ ոյ հնչյունակապակցությունը երկբարբառ է: Մյուս գեպքում՝ ոյ կապակցությունը բառավերջում հնչյունափոխվում է ո-ի՝ գետոյ > գետո, եկեղեցոյ > եկեղեցո, Խորենացոյ > Խորենացո կամ թեք հուլավածակերում՝ ու-ի՝ ամուսնոյ > ամուսնո, երկուանալոյ > երկուանալու, այստեղ արդեն ոյ-ը երկբարբառ չէ, այլ ձայնավոր և ձայնորդ բաղաձայնի կապակցություն կամ երկհնչյուն<sup>27</sup>:

Արդեն նշել ենք, որ հին հայերենի գրական հուշարձաններում և հատկապես հնագույն վիճական հիշատակարաններում բառավերջի ոյ հնչյունակապակցությունը հաճախ ավանդված է առանց վերջնահանգ յ ձայնորդի, որ ապացույց է, թե այս դիրքում արտասանության և դրույթյան մեջ տեղի է ունենում յ-ի անկում կամ ոյ > ո հնչյունափոխություն: Հին հայերենի յ ձայնորդի փոփոխությունները բննկիս նկարագրելու ենք վիճական բնագրերում այդ կարգի բառերի վերջնահանգ յ-ի անկման վկայությունները, որոնցից հնագույնը ավանդված է Զ դարում փորագրված՝ Դավիթ Գնթունու տապանագրում. «Այս է հանգիստ Դաթի Գրթունեաց ան որդո Վասակա» (<որդոյ Վասակայ)<sup>28</sup>: Հետագա դարերի վիճական արձանագրություններում այդ փոփոխությունն արտացոլող վկայություններն ավելի են հաճախանում, տարածվում բոլոր գեպքերի վրա (միայն Աբու-ճի տաճարի ՅԺԶ (867) և ՆԼԶ (987) թթ. բնագրերում հանդիպում են՝ Բագրատուն, Արեո (<Արուն, Արեոյ), հաոց, Աշոտո և այլն) և հիմք տալիս համոզվելու, որ Թ—Ժ դարերում ա, ո ձայնավորներից հետո բառավերջի յ-ն այլևս չէր արտասանվում, թեև այդ ժամանակների վիճական բնագրերում կամ ձեռագրերի հիշատակարաններում գեռևս շարունակվում էր այ, ոյ դրույթունը՝ գրաբարյան ուղղագրության հետևության մը<sup>29</sup>:

27 է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 115:

28 Կ. Վաֆաղաբյան, Դվին բազարը և նրա սեղանները, էջ 246:

29 Ա. Աբրահամյան, Փաստեր..., ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 4, էջ 74:



Բացի ոչ > ու փոփոխությունից ժ—ժԳ դարերի վիճազրեում դիտվում են ոչ կապակցության հնչյունափոխության այլ երևույթներ ևս, որոնցից էականները նշում ենք ստորև. Ա. Բառամիջում, բազաձայնից առաջ, նախաշեշտ կամ շեշտակիր վիճակում ոչ կապակցությունը, որ այս դիրքում երկրարբառային հնչում է ունեցել, վերածվում է ու պարզ ձայնավորի: Այս հնչյունափոխությունը միջին հայերենի գրական արտադրանքների լեզվում արդեն ավարտված օրինաչափություն էր և բնդգրկում էր հին հայերենի ոչ երկրարբառն ունեցող բառերի մեծ մասը<sup>30</sup>: Նույնը դժվար է ասել վիճական արձանագրությունների մասին. հակառակ սպասածի ոչ > ու փոփոխությամբ հիշատակությունները սակավաթիվ են և մեծ մասամբ ավանդված ավելի ուշ շրջանի բնագրերում: Այս պարագան ստիպում է մտածել, որ ավյալ հնչյունափոխությունը վկայված ոլորտում նոր էր ձևավորվում և դեռևս տիրապետող օրինաչափություն չէր դարձել, ինչպես այդ կատարվել էր կիլիկյան հայերենում: Նշում ենք եղած վկայությունները. «Եղբայրն իմ, զոր քի խորագուն (<խորագոյն) հորի» (Անի ԺԲ Գ I 70): «Միաբանքս ետուն մեզ զատկի քաղալուցն՝ (<քաղալոյց) պատարագել» (Հաղբատ ԶԻԲ ԿՂՀԲ 214), «Ճրագալուց ժամն ինձ հրամայեցին» (Հաղարծին ՈՒԲ ՄՎ): «Քուր (<քոյր) ամիրսպասալար Շայանշահի» (Զինչիրլու ԶՄ Հով ՏՄ 16), «Ես՝ Հաւրուր (<հաւրաւոյր) ետու լի: դահեկան» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 54), «Ես՝ Զահա Սալաթաս Հասան փաթշահի Բուրս» (Կարբի ԺԳ—ժԴ ՄՎ), «:Ա: ար ժամ Քուրածէրին» (<Քոյրածայր) (Ն. Վարագ ԺԳ ՄՎ): «Լուս (<լոյս) բլնի» (Հառիճ ԶՄԳ ՄՎ), «Լուս յիշատական բնդ բնկեր ազգական իմն Գրիգորոյ» (Կեշտիս ԺԳ ՍԲ): «Սահմանքս մեր Երասխ, մեր յուս (<յոյս) քս է...» (Յաղացքար ԶԳ III 149):

Բ. Ա բնով արտաքին հոլովման բառերի թեք հոլովածներում, ոչ-ը բազաձայնով ներփակվելով հնչյունափոխվում է ու ձայնավորի: Իրողության հնագույն վկայությունները գտնում ենք Թալինի Քրիստափոր տաճարի արձանագրություններում. «Որ ուխտ եւ յիշատակ կատարեն, միաբան սուրբ Եկեղեցուս» (<Եկեղեցոյս) (3Գ—941 Բ. ՄՎ): «Վասն իմ հոգուս» (<հոգոյս) (Նտ ժ գ. ՄՎ): «Զմեր բաժին գանձով շինած ձիթահանքն տվար Եկեղեցուս» (Հառիճ ԶՄԳ ՄՎ): «Վս մեր հոգուս յիշատակ բերաք զչորս» (Անի ԶՄԲ Գ I 64): «Շահանշահի հոգուն... Եւ վասն քմ հոգուս» (Ալա-

<sup>30</sup> J. Karst, Historische Grammatik, S. 62—64.



ման ժԱ դ. ՍԱԲ 194): «Մին Շաթրարէ, մին ամուսնուն իւրոյ» (Կապտաւազանք ժԳ ՍՍ): «Յիմ խաս այգուն (<այգույն) :ձ: կուժ գինի»: «Եւ իրենց որդուն (<որդույն) Զարարի» (Անի ԶԾԹ Գ 1 64), «Այս իմ գիր է Վարդանայ որդուս» (Անի ԶԶԹ Գ 1 67), «Այս իմ գիրէ Վարդանայ՝ Ումեկես որդուս» (Անի Մայր տաճար ԶԶԸ Գ 1 39), «Ես՝ աթապակ Վահրամ, որդի Իւանէի, որդուն (<որդույն) Զարարիս» (Անի ԶՂԱ Գ 1 44): «Վասն յուսուն (<յուսույն) իմոյ... ոչ որ կայ հակառակ կամաւոր գրուս» (<գրոյս) (Հաստմոս ԶԶԵ ՍԱԲ 158): «Վասն իւր որդեացն արեւուն» (<արեւույն) (Ալաման նՅ)<sup>31</sup>, «Եւ մեր արեւուս համար թողար զվանաց կոսս» (Զազաւան ԶԶԳ ՄՎ): «Ետուար զմին խորանս Իվանոյ Խաչենեցուն» (<Խաչենեցույն) (Ն. Վարազ ժԲ ՄՎ): Սակաւաթիւլ օրինակ ներում ոյ>ու զիտւում է բառավերջում, թեր հոլովաձևերում նաև առանց հօդի. «Ոչ իմ որդու (<որդույ) ոչ իմ աղբար, ոչ իմ աղբի մարդոյ դաւի շկայ» (Հասիճ ԶԾԳ ՄՎ): «Յիշատակ հոգու իմոյ» (Աստղաձոր ԶԾԹ ՍՍ): «Ի վերադիտողութի մայրաբաղարիս Անու» (<Անույ) (Անի ԶՄԱ ԲԱՍ 180): Ոյ>ու փոփոխությունը զիտւում է նաև այնպիսի բառերի թեր հոլովաձևերում, որոնք հոլովւում են միջին հայերենի օրինաչափություններով, հասկապես Եր, անի հոգնակերաներով կաղմված բառերի հոգնակի թեր հոլովներում. «Բարձար ի յԱնն իրիցանուս» («երիցանի>երիցանույ) զբաժն» (Անի ԶԺԸ Գ 1 24), «Տեսայ զԱնոյ իրիցանուս» (Անի ԶԻԹ Գ 1 23), «Երիցանուս զեկաց եւ զբնակաց (Անի ժԳ Գ 1 25): «Այս է հանգիստ Սարգսի, Խանոր իրիցուն (<երիցույն, իրիցույն) որդոյն» (Հաղբաս ժԳ ԿՂԶԲ 217): «Տուար զԹողէոցն աւին կէսն Տեղերուս» (<տեղերոյս) (Տեղեր ժԳ ՄՎ): «Թողար զկովերոյն եւ զիշանուն (<իշանույ) զհամբրելէն» (Անի ԶԿԹ Գ 1 27): «Հատուցին պատարագ... :Ա: Մանկանն :Ա: Թաներուն», նույն բնագրի նախաբանում անվան կանոնավոր հոլովաձևը՝ «Յիշատակ ծնողաց Մանկանն եւ Թաներոյն» (Բագնայր ԶԺԱ ՍԱԲ 187): «Սակաւ ընչիւր մերովք եւ քեռուն (<քեռույն) մերո» (Ն. Գեորգի ԶԽ ՄՎ): «Զայս գիր տվար Անն մուտէրկերուն» (<մուտէրկեր-ոյն, մտաւէրիկ=չուկայի հրակիշ, ոստիկան) (Անի ԶԻԵ Գ 1 22): «Գնեալ էին գինքն ի քոռներուն» (<քոռներոյն) (Անի ԶԼԵ Գ 1 36):

Գ. Ոյ>ու, իրբև ընդհանուր կանոն տեղի է ունենում անորոշ գերբայների սեռ.-ար. հոլովաձևերում: Միջին հայերենի զրակախության մեջ այս հնչյունափոխությունը տիրապետող օրինաչա-

31 Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 125:



փություն է, որի հետևանքով և առաջանում է այդ կարգի բառերի ու (= ոյ) հոլովումը՝ սիրել > սիրելոյ > սիրելու, կենալ > կենալոյ > կենալու, ոսկի > ոսկոյ > ոսկու, Խորենացի > Խորենացոյ > Խորենացու և այլն: Վիժական բնագրերում, հակառակ սպասածի, այս հնչյունափոխական երևույթի վկայությունները չեն պահպանվել. միակ հիշատակությունը ավանդված է Անիի ՉժԸ Թ. արտոնագրում. «Զունի որ իշխանութիւն բաժ ուզելու (< ուզելոյ < յուզելո).... ով այլ խաւսք ասէ կամ սղման անէ բաժ ուզելու : ՅժԸ: հայրապետացն նդոված է» (Անի ՉժԸ Գ I 24)<sup>32</sup>:

Հին հայերենի ոյ երկրարբառը արդի բարբառներում բոլոր դիրքերում պարզվում է, վերածվելով ու ձայնավորին և նրա առաջնային շարքի տարբերակին (նու, իւ, գերմ. ü) կամ ավելի սակավ դեպքերում՝ ի-ի: Այսպես, գրաբարի Բոյր, լոյս և այլ բառեր նկարագրված բարբառների զգալի մասում անկախ ճյուղային պատկանելությունից արտասանվում են՝ Բուր (Բիւր, Բոււր), լուս (լուս = լիւս, լուս) և միայն Ղարաբաղի, Շամախիի, Արարատյան, Լոռու որոշ խոսվածքներում՝ Բիւր (Բէւր, Բյիւր(իկ)), լիս (լիւս): Գիտելի է, որ այ ներկարբառը է-ի պարզող Ում, Լիս ճյուղերի մի քանի խոսվածքներում ևս այս դեպքում տեղի է ունենում և ճյուղի բարբառներին հատուկ ոյ > ու անցումը բառամիջում շեշտակիր վիճակում:

Բառավերջի դիրքի համար բոլոր բարբառներում գործում է ոյ > ու, ու կամ ոյ > ու բնդհանրական օրինաչափությունը, որ կարելի է նկատել ի հանդուգ բառերի և անորոշ դերբայների թեք հոլովածներում կամ ոյ հանդուգ բառերում՝ ծիյու, Բամու, աղալու: Այս բնդհանուր կանոնից շեղվում են Շամախիի, Կոզենի, Պոլսի բարբառները, որտեղ տվյալ պարագային նկատվում է ոյ > ի՝ ծիյի, կյիենի(ի), կարբէլի (< ձիու, գինու, կարղալու) (Շամախի), գյիենի (Կոզեն), գինիի (Պոլիս):

Գրաբարյան ոյ երկրարբառի պարզեցման այս պատկերը արտացոլված է նաև ժ—ժԳ դարերի վիժական բնագրերում: Այստեղ ևս ոյ-ը բաղաձայնից առաջ շեշտակիր կամ նախաշեշտ վիճակում

32 Բնագրի այս հատվածը Գ I, էջ 24 բառանշատված է. «Զունի որ իշխանութիւն բաժ ուզել ու ոչինչ ազգ ով իցէ...» և այլն, այսինքն ու-ն դիտված է շաղկապ: Թվում է ու-ն պետք է կցել ուզել բային՝ ուզելու, բանի որ նույն բայածեր բնագրի շարունակության մեջ ևս պարզ փոքրագրված է. «...կամ սղման անէ բաժ ուզելու...»: Բացի դրանից, արտոնագրում երիցս գործածված է միայն և շաղկապը:



մեծ մասամբ արտահայտվում է ու ձայնավորով. լուս, Բուր, յուս, գրուս (<լոյս, Բոյր, յոյս, գրոյս): Հնագույն վկայությունը Թալի- նի 37 (941) թ. բնագրում է, որ հիմք է տալիս հնչյունափոխու- թյան առաջացումը համարել այս դարից: Վիմագրերում անորոշ դերբայի սևո. հոլովածեր՝ ոյ>ու վկայված է եղակի օրինակով, Անիի ԺԳ դարի մի բնագրում՝ ուզելու (<յուզել): Սա պետք է բա- ցատրել նրանով, որ դրարարի բայական համակարգը արձանա- գրություններում ավանդված է գրեթե անխաթար, առանց բար- բառային զգալի ներթափանցումների, ինչպես այդ նկատվում է ձևաբանական մյուս համակարգերում կամ հնչյունաբանության մեջ:

Վիմական բնագրերում ոյ երկբարբառի սակավաթիվ վկայու- թյուններով ավանդված փոփոխությունները ևս իրենց սկունքներն առնում են կենդանի խոսվածքներից: Զանց առնելով մասնակի օ- րինակները (Բուր<Բոյր), որոնք հավանաբար զուրկ են արտասա- նական հիմքից և պետք է բացատրվեն հնագրական վրիպումնե- րով, մնացած դեպքերը օրինաչափորեն տեղի են ունենում ժամա- նակակից մի քանի խոսվածքներում: Այսպես է ոյ>ի պարզումը՝ Լիսու<Լոյսու, Բիրենց<Բոյրենց, որ ինչպես վերևում տեսանք, այսօր էլ կենդանի է Արարատյան, Ղարաբաղի, Շամախիի մի քա- նի խոսվածքներում:

Միայն Խոսրեանիւշ (<Խոսրուվանոյշ) անձնանվան մեջ դիտ- վող ոյ>ի անցումը, որ վկայված է նի (971) թ. արտոնագրում, մեր կարծիքով արտացոլում է ոյ երկբարբառի պարզումից առա- ջացած ու ձայնավորի առաջնային շարքի արտասանությունը, որ նույն պայմաններում լայնորեն արձանագրվում է նաև արդի մի քանի բարբառներում. օրինակ, ոյ>ու, իւ քմայնացումը դիտվում է Ղարաբաղի (Բիր, Բէր<Բոյր, բայց՝ լուս<լոյս), Շամախիի (Բիր, Բուր<Բոյր, բայց՝ լուս<լոյս), Մեղրու (Բուր, լուս), Կա- քավաբերդի (Բուր, լուս), Խոյի (Բիր, լուս), Ազուլիսի (Բոյր, բայց՝ լիս) բարբառներում:

Դ. Ոյ երկբարբառը բառամիջում բաղաձայնից առաջ են- թարկվում է մի քանի այլ փոփոխությունների ևս, որոնք սակայն վկայված են սակավաթիվ, մեծ մասամբ անստուգելի օրինակնե- րով և այդ պատճառով հազիվ թե հնարավոր լինի մտածել դրանց արտասանական հիմքի մասին: Ավելի հավանական է ենթադրել, որ այդ դեպքում գործ տունը առանձին, պատահական հնչյունա- փոխական երևույթի հետ կամ, որ ավելի սպասելի է, փորագրման



վրիպակի հետ: Բոլոր դեպքերում, վիմական բնագրերում պահպանված այդ փաստերը չի կարելի անտեսել, ուստի և թվարկում ենք ավանդված վկայությունները. Ոյ>ի, գիտվում է Լոյստա ար. Իգ. անձնանվան մեջ, որ առաջանում է լոյս բառից՝ ուս վերջածանցով, վիմագրերում սովորական է օրինաչափ Լուստա ձևը՝ «Ես՝ Լուստա... շինեցի զարձանս, ..., մաւր մերո Լուստին» (Անի ՈժԳ Դ I 6, 69): Արջո առիճի հուշարձանի գույքագրական մի բնագրում հիշատակված է անվան անհնչյունափոխ ձևը՝ «...Բ: տար Լոյստին...», իսկ շարունակության մեջ ոյ>ի փոփոխությանը. «Ես՝ Լիստա այլ հոռու :Գ: արտ» (ժԳ դ. ՍԱԲ 191): Այս հնչյունափոխությունը նկատվում է նույն Բոյր բառի մեջ՝ Հաղբատի ԶԻԲ Թ. արձանագրում. «զԳալթի Բիրենց (<Բոյր> Բիր-ենց) հայրենաւրն» (ԿՂՀԲ 196): Քոյր>Բիր, անշուշտ վիմագրության մեջ է անցել Արարատյան կամ հյուսիսային Հայաստանի բարբառներից, որտեղ հին հայերենի ոյ երկրաբարառ բաղաձայնից առաջ օրինաչափորեն վերածվում է ի պարզ ձայնավորին: Ոյ>ի հնչյունափոխությունը, ինչպես տեսանք, սովորական է արևելահայ մի շարք խոսվածքներում՝ լոյս>լիս, Բոյր>Բիր և կարող էր թափանցել նրանցից:

Ոյ>ո, այս փոփոխությունը օրինաչափ է բառավերջում՝ հա-  
նոյ>հանո, գետոյ>գետո, սակայն մեր օրինակներում այն տեղի է ունենում բառամիջում, շեշտակիր վանկում, բաղաձայնից առաջ, որտեղ, ինչպես տեսանք, սպասելի էր ոյ>ու կամ ոյ>ույ: Ահա եղած վկայությունները. «Ես՝ Ռուսուդան հաւրաբո (<հաւրաբոյր) Թամարի զսիւնս կանգնեցար» (Սանահին ՈՂ ԿՂՍ 115): Բնագրի ընթերցումը ստուգվում է լուսանկարով և կասկած չի հարուցում, թվում է, այստեղ փորագրողը բաց է թողել ո-ին հաջորդող չ կամ չ գրերը, ըստ այդմ բառը կարելի է վերականգնել կամ անհնչյունափոխ, գրաբարյան ձևը՝ հաւրաբոյր կամ ոյ>ու փոփոխությանը՝ հաւրաբու: նույն երևույթը նկատվում է նաև Ալամանի ՆՄ Թ. մի արձանագրում, որը գիտությանը հայտնի է եզակի, անստուգելի հրատարակությանը և կասկածելի է. «Թողել հմ զԱլաման շարյատս վասն իմ հոգոս (<հոգոյս) եւ արեուս (<արեւոյս եւ Շահնշահի հոգոն»<sup>33</sup>: Հավանական է, այստեղ ևս փորագրողը կամ արձանագրության ընդօրինակողը ո գրից հետո զանց է առել չ կամ չ գրերը: Ոյ>ի նկատվում է Խուրովանոյշ անձնան-

33 Ալիշան, Շիրակ, էջ 125:



վան մեջ Տեկորի տաճարի նի թ. արտոնագրում. «Ես՝ Խոսրեւանիչ հայոց թագո՛ւհի հաստատեալ եմ զՏեկորոյ շարչեառն» (ՍԱՐ 205), Այլ բնագրերում նույն անձնանունը ավանդված է կանոնավոր՝ «Ես՝ Խոսրովանոյչ թագո՛ւհի ազատէցի զմանկանց շարիչատս» (Վանստան ն՛Ը)<sup>34</sup>: Ոյ>էւ փոփոխութիւնը բաղաձայնից առաջ չի դիտվում ոչ հնագույն հայերեն ձևադրերում և ոչ էլ միջին հայերենի գրական երկերում կամ բարբառներում, ուստի պետք է մըտածել, որ եզակի օրինակը պատահական հնագրական վրիպակ է:

#### ԱՒ ԵՐԿԱՐՐԱՌ

Աւ հնչյունակապակցութիւնը հին գրական հայերենում հանդիպում էր երեք դիրքում՝ բաղաձայնից առաջ, ձայնավորից առաջ և բառավերջում: Հայագեանները պարզել են, որ աւ-ը երկբարբառային արտասանութիւն ունի միայն առաջին դիրքում՝ բաղաձայնից առաջ՝ աւօ = auj, հաւա = haut, կարաւա = karaut, ամաւք = amauth, իսկ մյուս դեպքերում՝ բառավերջում կամ միջձայնավորային վիճակում աւ-ը ա ձայնավորի և յ ձայնորդ բաղաձայնի կապակցութիւն էր, երկհնչյուն՝ ալ = av, աւագ = avag, գաւագան = gavazan, կախաւ = kakhav, հարկաւ = harkav<sup>35</sup>:

Աւ հնչյունակապակցութեան այս երկակի գրութեամբ է պայմանավորված նրա կրած պատմական հնչյունափոխութիւնը հետագա դարերում, ըստ այդմ, բաղաձայնին նախորդող դիրքում կամ, ինչպէս բնորոշված է ասել, փակ վանկում, աւ-ը օրինաչափորեն վերածվում է օ (ո) պարզ ձայնավորի, իսկ բառավերջում կամ ձայնավորից առաջ՝ աւ > ալ, av հնչյունակապակցութեանը՝ աւօ auj > օօ, կարաւա = karaut > կարօտ, բայց՝ հաւասար = havasar > հաւասար, քաղախաւ = khaçakhav > քաղաքալ:

Աւ > օ և աւ > ալ պատմական հնչյունափոխութեան ժամանակաշրջանը որոշելու համար արժեքավոր ավյալներ են տալիս հայերեն հնագույն վիմական արձանագրութիւնները, քանի որ ձևագիր մատյանները ավելի ուշ ժամանակների արտագրութիւններ լինելով, չեն կարող իրական պատկերացում տալ այդ երևույթի հնագույն վիճակի մասին: Հենվելով վիմագրերի բնձևած փաստերի վրա, պրոֆ. Ա. Արբաճամյանը հիշյալ հնչյունափոխութեան առանձին արտահայտութիւնները տեսնում է ժ—ժԱ դարն-

<sup>34</sup> Աշխ. Բալանբար, Վանստանի արձանագրութիւնները (անտիպ ժողովածու):

<sup>35</sup> Է. Աղայան, Գրարարի բերականութիւն, էջ 119:



քի բնագրերում, թեև երևույթի սկզբնավորումը ենթադրվում է գրանից մի քանի դար առաջ: Ա. Աբրահամյանի անդրաձև կազմից մեջ բերված փաստերը արդեն շարադրել ենք ու (օ) ձայնավորի փոփոխությունները բննկիւս և այստեղ այլևս չենք անդրադառնալ գրանց: Այդ փաստերից երևում է, որ վկայված դեպքերում բառամիջում աւ երկրարբառի փոխարեն հաճախ փոքրագրված է ու տառաձևը, որ տվյալ ժամանակաշրջանում բառամիջում ունեցել է օ-ի մոտ հնչում՝ տենչանով = տենչանաւ, փառու = փառաւ, և հակառակը՝ ու պարզ ձայնավորի փոխարեն գտնում ենք աւ երկրարբառը՝ յաղնամեղ = յողնամեղ, հաւգոյն = հոգոյն, քաղութեան = քողութեան և այլն<sup>36</sup>: Այստեղից եզրակացվում է, որ այս միջավայրում աւ երկրարբառը և հին հայերենի բառամիջի ու (օ) ձայնավորը միեկնույն կամ նման արտասանություն ունեին, և այդ պատճառով գրություն մեջ կիրառվում էին իրար փոխարեն: Նույնը կարելի է ասել և աւ > ալ (av) փոփոխության կամ ա = վ նույնացման մասին: Սեանի վանքի ՅԻԳ (874) թ. արձանագրության մեջ հանդիպում է՝ տվաւ (<տուաւ), Գառնիի տապանագրում՝ ՅԻԸ (879) քվականին (<քուականին), իսկ Կոշի եկեղեցու նլ (981) թ. արտոնագրում՝ «երես Աշոտ յԱվանէ զշաղացսն» (<յԱանէ), որոնք ապացույց են, որ գտնե բառամիջում ձայնավորից առաջ հին հայերենի ա ձայնորդը միեկնույն կամ շատ մոտ հնչում ուներ շրթնատամնային վ ձայնեղ շփական բաղաձայնի հետ և այդ պատճառով հաճախ գրության մեջ փոխարինում էր նրան: Աւ > օ հնչյունափոխության հետևանքով պահանջ է առաջանում նոր, մեքսոսյան այբուբենում շեղած օ տառաձևի, որը հարևան այբուբեններից փոխառվում է՝ սկսած ԺԲ—ԺԳ զգձեռագիր մատյաններում գործածվում է աւ երկրարբառի կամ հնչյունակապակցության փոխարեն բառասկզբում կամ բառերի մեջ բաղաձայնից առաջ՝ աւ > օձ, հաւ > հօւ, առաւաւ > առաւաւ և այլն:

Բաղաձայնից առաջ աւ > օ (ո) պատմական հնչյունափոխությունը ընդհանրական է հայերենի համար և լայնորեն դիտվում է նկարագրված հայ բարբառներում, ըստ որում, որոշ խոսվածքներում տվյալ փոփոխությունը երբեմն տեղի է ունենում նաև ձայնավորից առաջ (մեծ մասամբ ու-ից առաջ), օրինակ, Շամախի բարբառում ունենք՝ առօւ (= առաւաւ), դաղօր (= դատաւ-

<sup>36</sup> Ա. Աբրահամյան, Փաստեր..., ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 4, էջ 75:



տը), բաբօօր (= բաբաւոր), շահօր (= շահահաւոր): Վիմական բնագրերում աւ > օ, ո սյարդումն արտացոլող հիշատակագրությունները սակավաթիվ են, քանի որ աւ հնչյունակապակցության գրությունը ավանդական ուղղագրության հետևությամբ շարունակվում է երկար ժամանակ, ընդհուպ մինչև ժէ—ժԸ դարերը, թեև նրա արտասանությունը, ինչպես և խոսակցական լեզվում, համապատասխանում է կամ օ (ո) սյարդ ձայնավորին՝ բաղաձայնից առաջ կամ ալ հնչյունակապակցությանը՝ մնացած դիրքերում:

Մեզ հայտնի առաջին վիմական արձանագրությունը, որտեղ հանդիպում է օ նորամուտ տառածևը, Հալիժորի խաչքարի հիշատակագրությունն է, որի ժամանակը որոշվում է նրա վաղձողի՝ ճարտարապետ Սիրանեսի կյանքի տարեգրությամբ՝ մինչև 1260 թ.: Ահա բնագրի մեղ հետաքրքրող հատվածը. «Ես՝ Հզարմէլ ու Սիրանէս կանկնեցիներ զխաչս հօրն մերո Գորբա, մօրն մերո Թէնիկա» (Հալիժոր ՉԹ Դ II 53): Դրանից կես դար անց ՉԿԸ թ. Յայջիի կարավանատան շինարարական արձանագրության մեջ ևս փորագրված են օ գրով բառեր՝ զօրութէն, իշխան Օրպէլ (Դ II 32)<sup>37</sup>: Սակայն սրանք միայն առանձին օրինակներ են: Հետագա դարերի վիմական հիշատակարաններում շարունակվում է բոլոր դիրքերում աւ հնչյունակապակցության գրությունը, թեև ակներև է, որ արտասանության մեջ վաղուց, դեռևս ժ—ժԱ դարերից աւ-ը վերածվել էր օ (ո) սյարդ ձայնավորին (բաղաձայնից առաջ) կամ ալ երկհնչյունին՝ մնացած դիրքերում: Այսպիսով, վիմական բնագրերում մինչև ժէ—ժԸ դարերը ըստ էության շարունակվում է աւ կապակցության գրարարյան գրությունը, սրը չի կարող որևէ պատկերացում տալ նրա հնչման մասին: Այդպիսի պատկերացում

37 Պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը հայ վիմագրական հուշարձաններում նորամուտ օ գրի առաջին կիրառության առթիվ այն միտքն է հայտնում, որ այդ գիրը սգործածություն չունի նույնիսկ XIV և XV դարերի արձանագրությունների մեջ: Ըստ Հեղինաչի օ գիրն առաջին անգամ գործածվել է 1520 թվականին, այն էլ միայն Սոլաղա անձնանվան մեջ (տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը, էջ 76): Ընդ տ է, պրոֆ. Ղաֆաղարյանի ասածից չի խժացվում, թե վիմագրության մեջ օ գրի առաջին գործածության ժամանակը որոշելիս նա նկատի ունի միայն Սանահնի արձանագրությունների փաստերը, թե թավանդակ հայ վիմագրությունը, սակայն նույնիսկ նրա գրքում հրատարակված արձանագրությունները առարկում են այդ վարկածի դեմ, ավելի քան 150 տարի էս առնելով օ գրի առաջին կիրառության՝ հեղինակի նշած ժամանակը՝ 1520 թ.: Նկատի ունենք ժողովածուի N 112 Գն (1356) թ. բնագիրը, որի վերջարանում, անեծքի ձևակերպման մեջ պարզ կարգացվում է. «...կատարելիքն օնին (<աւհնին) յայ (տե՛ս նույն տեղում, էջ 152):



կարելի է կազմել այն վկայություններից, որոնցում աւ հնչյունա-  
կապակցությունը առաջվա նման գործածվում է ո (օ) ձայնավորի  
փոխարեն կամ հակառակը, որ ապացույց է թե աւ-ից առաջա-  
ցած հնչյունը նույնացել էր դասական հայերենի բառամիջի կամ  
բառավերջի ո-ի հետ: Հետևյալ մի բանի օրինակները կարող են  
հաստատել այդ իրողությունը. «Ես՝ Կատրանիդե հասոց թագոհ,  
որ կազնել զսուրբ խաչս ի բարէխոսութի (<բարէխաւութի) ինձ»  
(Գառնի ՅԻԹ)<sup>38</sup>: «Շինեցի սուրբն Քրիստափոր մեզ եւ ծնողաց  
բարէխովս» (<բարէխաւս) (Գորիս Չն Դ II 79): Այստեղ կարե-  
լի է դիտել նաև աւ>ով փոփոխությունը, որ հանդիպում է նաև  
կաղարյան ճեմարանի 887 թ. ձեռագիր ավետարանում. ամաւր =  
ամովր, նոբաւ, նոբովք, արաասուաւք > արաասուավք և այլ ձևե-  
րում<sup>39</sup>: «Շինեցի զեկեղեցիս ինձ ի բարէխոսութե» (Կեչառիս ԺԳ  
Հով ՔԱՐ 13, ԵԱՂ III Ի): «Մը Պողոս» (<Պաղոս)» (Կարմրա-  
շեն ՉԼԹ ՄՎ): «Այգի :Ա: յՈչական (<Աւշական» (Անի ՈԿԴ Դ I  
63): «Գնեցի :Բ: կուղպակ զԼորագոյնին եւ զՈրսաւտին Ոչականց»  
(Անի ԺԱ Դ I 32): «Տը Սարգիս ետ :Ձ: աւր սը ժամյութորէկն»  
(Մեծարանց վանք Չ ՍԲ): «Ես՝ Մամախաթուն դուտր Խաչերեսին  
Լառեցա» (<Լոռեցոյ) (Անի ՈԿԲ Դ I 3): «Յիշատակ ինձ եւ  
ծնադաց (= ծնողաց) իմոց» (Անի ՈԿԵ Դ I 4): «Սպասաւորք սորա  
խաւատացան (<խոստացան) ժամ կատարել» (Անի Շէ Դ I 13):  
«Բարձրացուցի բաւանդակ (<բովանդակ) զպարիսպ սորին» (Ա-  
նի 1056 Դ I 38): «Վասն իմ հաւրն հաւոյն (<հոգոյն)..., եւ մե-  
ղաց բաղութեան» (<բողութեան) (Արուճ ՆԼՁ ՄՎ): «Յասպարա-  
պետութեանն Գրիգորոյ» (<Գրիգորոյ) (Կոշ ՆԼ ՄՎ):

Բացի աւ>օ պատմական ընդհանրական հնչյունափոխություն-  
ներից, աւ կապակցությունը վիճական բնագրերում ենթարկվել է այլ  
փոփոխությունների ևս, որոնցից նշելի են.

Ա. Բառամիջում, բաղաձայնից առաջ աւ-ը կարող է վերած-  
վել ու պարզ ձայնավորի, անկախ շեշտի ազդեցությունից, հա-  
ճախ շեշտակիր վիճակում: Շատ շին այս կարգի բառերի հիշատա-  
կությունները, սակայն եղածները չի կարելի հնագրական պա-  
տահական վրիպում համարել, հավանաբար այդպիսի արտասա-  
նություն տվյալ միջավայրում գոյություն է ունեցել: Մեջ ենք բե-  
նում նկատված վկայությունները. հնագույնը Թալինի կաթողիկեի

<sup>38</sup> Ե. Аракелян, Гарин, I, стр. 84.

<sup>39</sup> «Աւետարան քա Մարգմանութեան Եսայեանց մերոց», էջ Թ:



մի նվիրագրում, որն անծանոթ է դիտարկմանը. «էկի ծառայութիւն  
 եւ :ն: ուր (<աւր) ժամ առնե» (ՆՄՁ 1007 Բ. ՄՎ): «Կանկեցար  
 զխաշս հար իմ Հայրապետի եւ մար (<մար) իմ» (Լոր 2Ի Գ II  
 107): «Եւ միարանք :Ա: ժամ սահմանեցին սր Յակոբին տունին»  
 (<տունին) (Հերհեր 2Է Գ III 51): «Ի տունի Անդրէի առնեն :Բ:  
 պատարագ Անդրիասին» (Ն. Գեորգի ԺԳ ՄՎ), Ածածնին տունին  
 ժամ Ասիին առնեն» (Յաղացրար ԺԳ Գ III 149), «Խոստացան :ն:  
 ժամ ի տունի Յովանու» (Մշկավանք ԺԳ ՄՎ), «...սահմանեցար ի  
 տունի խաշին :Բ: շարաթ աւրն :Բ: պատարագ» (Մակարավանք ԺԳ  
 ՄՎ): «Ես՝ Աւար (<Աւար) եւ ամուսին իմ Գուռնիկ միարանե-  
 ցար սր Ստեփանոսի» (Թանատ ԺԳ Գ III 86): Նույն անձնանունը  
 Բագարանի բնագրում՝ «Ես՝ Աւարս կողրացի» (ՈՁԳ ՍԱՐ 204),  
 կամ Օձուն գյուղի եզրին կանգնեցված խաշարձանի հիշատակա-  
 գրութեան մեջ՝ «Ես՝ Աւարս կանգնեցի զխաշս» (Օձուն ԺԳ ՄՎ):  
 «Արժանի էլա Ունա (<Աւնայ <Աւնուն) ձոնվորութի» (Օձուն ԺԳ  
 ՄՎ): «Սմբատ շահանշահի հզարի (<հզար) եւ արքաի արեւշատու-  
 թեան» (Երերույր ՆՂԷ ՄՎ): Նույն բնագրի անավարտ մնացած  
 տարբերակում, որ փոքրագրված է բաղիլիկ տաճարի հարավային  
 մուտքի ճակատակալին, բուն արձանագրութեանից փոքր-ինչ ա-  
 րեւելք, հնչյունափոխված բառը կարգացվում է՝ հզարի («ի հայոց  
 թվակիս ի :ն: Հ: է. յանուն այ հզարի եւ ան...», բնդհատվում և չի  
 շարունակվում — ՄՎ)<sup>40</sup>, որ ապացույց է, թե այստեղ ևս դիտվում  
 է աւ>ու անցումը: «Որք բնթէոնոր, զիս յաղուրս յիշեալիք...  
 զուգնական (<զուգնական) եզե» (Երերույր Ժ—ԺԱ ՄՎ): «Ես՝  
 Առաւտարի (<Առաւտ-իկ) էտու :ն: դահեկան» (Գեղարգ ԺԳ  
 Հով ԽԱՂ III 42): Անձնանունը այլուստ հայտնի չէ և անշուշտ ա-  
 ռաջանում է առաւտ բառից, բայց այդմ նրանում առկա է աւ>ու  
 հնչյունափոխությունը: «:Ա: աւր Հաղարգեղին եւ :Ա: աւր Աղունե-  
 կան» (<Աղունեակ) (Գեղարգ ԺԳ Հով ԽԱՂ III 51): «Ես՝ իշ-  
 խանս, որ իմ սրաի յուժարութի (<յուժարութի) զիմ բնձանն ծա-  
 խեցի» (Լմբատ 2)<sup>41</sup>, «Յուժարութի սրաի իմայ» (Ուղուղու Ժ ՄՎ):  
 «Ի բարէխաւսութիւն ամուսնուս եւ աղբուրս (<եղբարս)» (Տաշ-  
 քենդ 2Ս ՍԲ): «Կամ անմարու (<անմարու) կամ առանց բնարու-  
 թե» (Մրեն 2 Օրճ Մ 7):

Մեր թվարկած վկայություններից երկուսն է, որ թեև գրու-

40 Գ. Հովսեփյան. Քարեղ հայ հնագրութեան, էջ 13, ամբասակ ԺԲ:

41 Լ. Աղբալարյան. Լմբատավանք..., «էջմիածին», 1960, Բ, էջ 57:



թյան մեջ ամենուրեք հնչյունափոխված ենք տեսնում աւ հնչյունա-  
կապակցութիւնը, որ տվյալ դիրքում, այսինքն՝ բաղաձայնից ա-  
ռաջ երկրարբառային հնչում է ունեցել, սակայն իրնականում այս  
դիրքում ու պարզ ձայնավորի է վերածվել ոչ թե հին հայերենի  
աւ երկրարբառը, այլ նրանից առաջացած օ (ո) ձայնավորը, քա-  
նի որ գեռեւ փ—փէ դարերում պատմական հնչյունափոխութիւնը  
աւ>օ անցումը արդեն ավարտված օրինաչափութիւն էր արտա-  
սանութիւն մեջ:

Աւ>ու կամ աւ>ո փոփոխութիւնը դիտվում է նաև հայերեն  
հին ձևադիր մատչաններում: Լաղարչան ճեմարանի ավետարա-  
նում, օրինակ, հիշատակված են՝ յուժար (<յաւժար), յուժարեչ  
(<յաւժարեչ), ոգուա (<աւգուա)<sup>42</sup>, որ նույնպէս ապացույց է, որ  
տվյալ հնչյունափոխութիւնը ավանդված բառերը չի կարելի հը-  
նադրական սխալագրութիւն արդյունք համարել, այլ պետք է  
նրանցում նկատել բարբառային արտասանութիւն: Սակայն վի-  
ժական բնագրերում հանդիպում են այնպիսի վկայութիւններ էլ,  
որոնք բացառիկ, պատահական վրիպումներ են, փորագրութիւն  
սխալներ և շին արտացոլում տվյալ բառի արտասանութիւնը դրու-  
թիւնը: Օրինակ, Լորի հուշարձանի տապանագրում աներկբա կար-  
դացվում է. «Տվար զմեր հար (<հար) նահապետա հալալ ար-  
դեմը հոգս» (Լոր ԶՂԳ Գ II 109). հար>հար այլ օրինակ շունի  
ոչ միայն վիժագրերում, այլև միջին հայերենում կամ արդի բար-  
բառներում, մնում է մտածել, որ փորագրողը բաց է թողել և տա-  
ռածեր հար սև. հուշվածուս:

Վիժական բնագրերում ավանդված աւ>ո (օ)>ու հնչյունա-  
փոխութիւնը ինչ-որ նոր և անսպասելի երևույթ չէ հայերենի  
հնչյունային համակարգում: Ճիշտ է, հին և միջին դրական հայե-  
րենում այս իրողութիւնը չի նկատվում (աւ>ու, ու>ու), սակայն  
արդի մի քանի խոսվածքներում այդ փոփոխութիւնը վկայված է  
բազմաթիւ փաստերով: Այսպէս, Ղարաբաղի, Շամախի բար-  
բառներում նախաշեշտ կամ շեշտակիր վիճակում ունենք՝ ուրա-  
կան<աւրական, մուտանալ<մաւտանալ, Զուրատափ<Չաւրա-  
տափ, մուրոմ<մաւրոմ, ուրօրիլ<օրօրեւ (Ղարաբաղ 49, Շամա-  
խի 34): նույն դիրքում Աղույիսի, Կարճեանի և Մեղրու բարբառ-  
ները արտասանում են՝ ամուր<ամաւր, աղուրկ<աղաւրկ, ծա-  
նուր<ձանաւր (Աղույիս 84, Կարճեան 45, Մեղրի 62), Արարատ-  
յան բարբառի խոսվածքները՝ աղունիկ<աղանեակ (Լորի 59),

42 «Աւետարան քառ թարգմանութեան նախնեաց մեղոց», էջ Թ:



Շատախի, վանի բարբառները՝ մուրուս, ուսար < մօրուս, աւսար, խուսէլ < խասուէլ և այլն (Շատախ 41, վան 49):

Մյուս կողմից, որ աւ > ու անցումը չի առաջացել միանգամից, անմիջականորեն, այլ՝ աւ > օ (ո) պարզումից հետո, ապացույց է նաև հիշյալ բարբառներում ու > ու օրինաչափ փոփոխությունը բառամիջում գրեթե բոլոր դիրքերում, որ նկարագրել ենք ու ձայնավորի հնչյունափոխությունը շարագրելիս՝ (ծում < ծում, մում < մում, քարուզ < քարոզ, ախուս < ախոս, կուրկուս < կուրկատ, հուրք < հուրք և այլն):

Այստեղից կարելի է մակարերել, որ վիմագրերում պահպանված աւ > ու հնչյունափոխությամբ բառերը կարող էին ներթափանցել հիշյալ բարբառներից, որտեղ դեռևս գործում է այդ օրինաչափությունը:

Բ. Աս հնչյունակապակցությունը բառամիջում ձայնավորից առաջ սղվում է հին հայերենի քազաուր բառում: Եղած օրինակներն են. «Քազուր (< քազաուր) Զալալայ Գովլին հրամանավ, ես՝ Սմայատ որդի Հեզբին տվի էգատեղ Գրիգորոյ» (Մեծարանց ժԳ ՄԲ): «Ի դանութի Արզունին, ի քազուրի Գեմետրի» (Աղդան ԶԼՅ ՄՎ): «Շինեցի վստրանս հալալ արդեամբբ իմովբ եւ քազուրաֆայլին ծովն մեծ լրին» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 43): Թվում է, աւ-ի անկումը այս դեպքում տեղի է ունեցել ոչ միանգամից, պետք է մտածել, որ նախ սղվել է աուր ածանցի նախաշեշտ ա ձայնավորը (աուր > ար > վոր) և հետո ընկել նաև վ բաղաձայնը: Միջանկյալ վիճակի լավադույն օրինակ է նույն բառի քազվուր (< քազաուր) ձևը՝ վարդարուրի շինարարական արձանագրության մեջ. «ՆՂԹ թվականութեանս հաց ես՝ Կորիկե քազվուրս շինեցի» (1050 թ. ՍՍ)<sup>43</sup>: Վիմագրերում ավանդված քազվուր, քազուր ձևվերը կարող էին առաջանալ Շամախիի բարբառի քաֆօօր տարբերակի ազդեցությամբ, քանի որ մյուս բարբառները քազաուր բառում տարբեր փոփոխություններով պահպանում են աուր ածանցը (ավուր, ավօր, ավուր, ավէր, ավուր և այլն)<sup>44</sup>:

Գ. Աւ > ի հնչյունափոխությունը դիտվում է հին հայերենի մուրուս բառում, որ քանիցս հիշատակված է միրու(ս) ձևով. «Եթէ որ յեպիսկուպոսաց կամ յառաջնորդաց կաշառուր կամ անմիրու (< անմուրու) երէց առնէ» (Անի Զ Գ I 15), «Սաղկեալ միր-

<sup>43</sup> Առաջին և միակ հրատարակությունը տե՛ս Մ. Քծղյանց, ձանապարհորդություն ի Ահաստան..., Վենետիկ, 1830, էջ 82, այստեղ բնավոր բառը արտահրաված է՝ Կորիկե քազաուրս:

<sup>44</sup> Տե՛ս Հ. Անադյան, Արմատական բառարան, Բ, էջ 1074:



րուամ եւ դուարթալի տեսւեամ (=տեսլեամք) ի Քս փոխեցաւ»  
(Վարդէնիկ ՉԾԳ ՍՍ):

Մարու(ք) բառում աւ>ի հնչյունափոխութիւնը՝ միւրով  
դիտւում է արդի մի բանի բարբառներում. օրինակ, Արարատյան,  
Կարնո, Համշենի, Ն. Զուղալի, Թիֆլիսի բարբառներում բառս  
արտասանւում է միւրով, Ն. Նախիջեանում՝ միւրով (մարուք),  
իսկ Մեղրու և Կարաժարերդի բարբառներում՝ նաև մէրով:

Նույն հնչյունափոխութիւնը առաջանում է հին հայերենի  
յաւնք բառում, որ Պոլսի բարբառում արտասանւում է ինքվի (Պո-  
լիս 25):

#### Ի ԵՐԿԱՐԱՐԱՌ

Ի հնչյունակապակցութիւնը հին հայերենի գրական հուշար-  
ձաններում բոլոր դիրքերում չէ, որ ունեցել է իս երկբարբառային  
արտասանութիւն: Մեր քննած այ, ոյ, աւ երկբարբառների նման  
իւ-ը ևս միայն բաղաձայնին նախորդող դիրքում էր մնում երկբար-  
բառ՝ զիւղ = giuղ, ձիւն = jiuն, աղբիւր = aղbiur, աղիւս = aղiuս,  
բանիւք = baniukh, իսկ բառավերջում, ձայնավորից առաջ կամ  
միջձայնավորային դիրքում արտասանւում էր իբրև ձայնավորի  
և ձայնորդ բաղաձայնի կապակցութիւն, երկհնչյուն՝ իվ (iv)՝ հա-  
շիւ, զիւական, հովիւ, բանիւ — hašiv, divakan, hoviv, baniv:  
Պատմական հնչյունափոխութեան հետեանքով հետագա դարերում  
իւ-ը կորցնում է իր երկբարբառային հատկութիւնները նաև այս  
դիրքում և վերածւում պարզ ձայնավորի կամ ձայնավոր ու բաղա-  
ձայն հնչյունների կապակցութեան՝ իվ: Վիմական արձանագրու-  
թիւններում պահպանւել են հին հայերենի իւ կապակցութեան հըն-  
չյունափոխութեան դանազան երևույթների վկայութիւններ, որոն-  
ցից առավել կարևորները նկարագրում ենք այստեղ.

Ա. Ժ—ԺԳ դարերի վիմական բնագրերում հին հայերենի իւ  
երկբարբառը բաղաձայնին նախորդող վիճակում հնչյունափոխ-  
ւում է ի պարզ ձայնավորի, անկախ շեշտի ազդեցութիւնից, հա-  
ձախ նաև շեշտակիր վանկում: Ահա մի քանի վկայութիւններ.  
«Ես՝ Սոփի Սիճեաց (<Սիւճեաց) տիկին, Գերանկին դուստր, կին  
Սմպատա, որդի Աշոտի Սիճեց իշխանի շինեցի զեկեղեցիս» (Գնդե-  
վանք 931 Գ III 13), «Մատանի էր անակն եղիր Սոփի Սիճեաց  
տիկին» (նո): «Եկի Քաղաքադաշտէ ի գիղաբաղաբս» (<գիղա-  
բաղաբ) (Երերույք Ժ—ԺԱ ՄՎ): «Վասն Աշոտոյ հայոց թագաւորի  
և իւ (<իւ) որդեացն արեւշատութեան» (Թալին Քր. վանք ՆԲ  
ՄՎ), «Գնեցի զձոտակերտ և զիւ (<գիւ) զեղեան» (Խորակերտ  
ՉԱ. Հով ՆԱ 12), «Եւ ամեն յազգէ նալաթ իրեն (<իւրեան) վերա»



(Երևան ԶԺԳ ԿՂԵ 182), «Եւ յիւր (<յիւր) հաւատէն ապիպար է» (Հոսիսիսմէն ԶԽԵ ՄՎ), «Միտարանեցան վահրամ եւ ամուսին իւր Սոփի եւ Լատուն զիրենց (<զիրենց) պաշար» (Հոսոմայր ԶԼԵ ՄՎ), «Բորարե եւ սրգիր իւր Լատուն սր նշանս իրենց հոգո պաշար» (նա ՄՎ), «Զիմ արկած աչգին ի ճարբի իւր կատապանովն» (Վազուհաս ՈՂԳ ՄԲ), «Եւ իրենց սրգուն Զարարի» (Անի ԶՄԹ Գ 1 64), «Եւ զՂամաղանց իրենց ամէն հոգով ու ջրով» (Հովհաննավանք ԶԼԲ ԿՂԶ 91), «Իւր (<իւր) թաղավորայգարն սրգի» (նա ԺԳ ԿՂԶ 100), «Ով զիրու (<զիրեար, զիրեար) տայ, այ անիծած եղիցի» (Մըշկավանք ԶԺԲ ՄՎ), «Իշխանաց իշխանին եւ սրգո իւր Պապացին» (Խնձորուտ Զ ՄՎ), «Եւ Քս ըզիշողքն յիշէ իրում (<իւրում) գալլատեն» (Յձուն ԶԺԵ ՄՎ), «Վս Իվանի եւ իւր սրգեացն արեւշատութե համար» (Յձուն ԶԻԳ ՄՎ), «Պարոն Շահանշի եւ Խուանդին եւ իրենց սրգուն» (Անի ԶՄԹ Գ 1 64), «Եւ Լատու զՇինաձոր իւր սահմանովն» (Գաղի վանք ԺԳ Մով 88), «Զիւր ճորտերին Խէր կացուցել... զիւր ապրանքն անխնայ բաշխէր» (Բջնի Պէ)<sup>45</sup>, «Գրիգորի եւ ծնողաց իւր» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 48), «Եւ ի սէրն իւր սրգորէր (Բնունիս ԶԶ Գ II 116): «Եւ զարգարեցի բազում զարգիք» (<զարգիւք) (Անի ՈԿԳ Գ 1 63): Նույն փոփոխութիւնը դիտվում է նաև մի քանի անձնանուններում, որոնք գրաբար մատենագրութեան մեջ մնում էին անհնչյունափոխ. «Եւ սորա խոստացան :Գ: պատարագ ի տանի Կիրգի» (<Կիրէղ) (Հովհաննավանք ԺԲ ԿՂԶ 78): «Ես՝ Մարիամ Բազրատունի դուտար արքային Կիրիկի» (<Կիրիկէ-ի) (Սանահին ՈՒ ԿՂՍ 114): Վերացական դոյականներ կազմող ուրիւն ածանցք, փնչպես եւ արգի բարբառներում, հաճախ ավանդված է հնչյունափոխված՝ ուրիւն, որ անշուշտ գալիս է բարբառային արտասանութիւնից, քանի որ ածանցք հայտնի է միայն գրական լեզվում: Մեզ ենք բերում եղած վկայութիւնները. հնագույնը Թալինի տաճարի մի նվիրագրում. «Եկի ծառաւորին» (<ծառայուրին (նՅԶ ՄՎ անտիպ): «Կանգնեցի սր խայշու փրկուրին (<փրկուրին) հոգոյ Հովանիս» (Յձուն ՈՂԳ ՄՎ): «Տուի զԱրգր եւ զՏորենոյ զիրիցուրինն» (Լճրատ ԺԲ ՄՎ): «Ի ՈԽԹ քուականուրինն» (Անտառուտ ԿՂԶԲ 169): «Ընգայար Սարգսի զմիարանուրինն» (ն. վարագ ՈՅԷ ՄՎ), «Յաւգնականուրինն անձին իւրս» (Շխմուրագ ԺԲ ՄՎ):

Ինչպես կարելի է նկատել այս օրինակներից, իւ>ի հնչյունափոխութեան վկայութիւնները վիճակական բնագրերում այնքան

<sup>45</sup> Ե. Մուշեղյան, նշվ. հոդվածը, ԳՍ «Տեղեկագիր», N 5, 1956, էջ 98—99:



էլ հին շին և դալիս են ժ—ժԱ դարերից: Նույնն է վիճակը նաև հնագույն ձեռագիր մատյաններում: Լաղարյան ձեռագրանի 887 թ. ավետարանում վկայված են այնպիսի բառեր, որոնցում հին հայերենի իւ երկրարբառի փոխարեն բաղաձայնից առաջ գրված է ի ձայնավորը և հակառակը՝ իւ-է գրված ի-ի փոխարեն, իբու-դուխուն, որ սպացույց է, թե իւ երկրարբառը ավելի ուշորում արտասանվում էր իբբն ի պարզ ձայնավոր: Ահա այդ բառերը՝ շիղ (<շիղ), սփիոս (<սփիոս), ուլիղ (<ուլիղ), Պիղատոս (<Պիղատոս)<sup>46</sup>: Հնագույն ձեռագրերի հիշատակարաններում իւ>ի հնչյունափոխության երևույթը ավելի հազվագեղ է, քան իւ>ու կամ իւ>ոյ, իւ>իոս: 1173 թ. մի հիշատակարանում առաջին անգամ գիտվում է իւ>ի փոփոխությունը ձիւն>ձին բառում՝ «այնչափ ձին երեկ և պաղէց» (Գ222 452):

Այսակերպ, սեւաք է կարծել, որ իւ>ի հնչյունափոխության առաջին արտահայտությունները վկայված են ժ—ժԱ դարերից, իսկ երևույթը գերակշիռ օրինաչափություն է դառնում ավելի ուշ՝ ժԳ—ժԴ դդ., թեև դրանից հետո էլ իւ երկրարբառի գրությունը երկար ժամանակ շարունակվում է մնալ գրաբարյանը, ավանդականը:

Բ. Հին հայերենի իւ երկրարբառը բառամիջում բաղաձայնից առաջ նախաշեշտ կամ շեշտակիր վիճակում հնչյունափոխվում է ու պարզ ձայնավորի: Զեռագրերի հիշատակարաններում և միջին հայերենի գրական արտագրանքներում այս փոփոխությունը ավելի լայնորեն է տարածված, քան իւ>ի անցումը: Հնագույն վկայություններից կարելի է նշել՝ բուրայալատիկ (<բուրալատիկ), ավանդված ենթադրաբար է դարին վերագրվող ձեռագիր պատանիներում (Գ222 38), նուղ մի (<նիւղ) (Գ222 ժ ո. 131), գուր (<գիւր) յանցանեն (Գ222 ժԱ դ. 235), գհայրն մեհ գԱռուծն (<Առիւծ) (Գ222 ժԱ 540): Վիճական բնագրերում այս հնչյունափոխության նախնադույն հիշատակությունը դանում ենք Տաթևի վանքի շինարարական բնագրում 3հԴ (895) թ. «Երկրորդ կարգեցալ եպիսկոպոս Սուենաց» (<Սիւենաց) (Դ II 13), ապա Քալինի Քրիստափոր վանքի 3Ղ (941) թ. բնդարձակ արձանագրության մեջ. «Հրաման յած ի վերա գուղաբաղաբիս (<գիւղաբաղաբ) Քալինա» (Քալին ՄՎ): Նույն իւ>ու փոփոխությունը վկայված է դրանից մի քանի տարի անց Կուրթանի խաչարձանի հիշատակագրության մեջ. «նլն թվականիս հայոց թագավորութեն Կուրիկէի» (<Կիւրիկէի) (986 թ. ՄՎ): Անձնանունը ավելի ուշ շրջանի վիճագրում ևս

<sup>46</sup> «Սեւտարան բառ վարդմանութեան նախնեաց մերոց», էջ Թ:



փորագրված է իւ>ու անցումով. «Ես՝ Մամա Թադուհի ամուսին-  
 Հասանա, զուտար Կուրիկիա (<Կիւրիկի) Թադուրի» (Գաղի  
 վանք ՈՂԱ ՍԱՐ)<sup>47</sup>, ապա Ուղուղուի եկեղեցու շինարարական բնա-  
 գրում՝ «Ի գալ մուս (<միւս) ամի եհաս փնձ հրուեր ի վերին ար-  
 բունի» (նՍ ՍԱՐ 174): Հետագա դարերի արձանագրություններում  
 ավելի հաճախանում են այս փոփոխությունն արտացոլող հիշա-  
 տակությունները. ահա դրանցից մի բանիւր. «Հայրս, մուս  
 (<միւս) վարդապետս եւ այլ միաբանքս հատուցին ինձ» (Բաղ-  
 նայր ՈՂԱ ՍԱՐ 133): «Լմբատայ սր Ստեփանոսի եւ յուր (<յիւր)  
 Խաչատրոյ սպասաւորի» (Լմբատ ժԲ)<sup>48</sup>: «Եւ ուր (<իւր) որդին  
 Յովանէս» (Անի ժԳ Գ I 11, ԲԱՍ 105), «Որ Քս ձեզ յիշէ յուր  
 (<յիւր) ողորմութի» (Աղշկարերդ ՉԼԳ ԲԱՍ 71), «Ստեփաննոս  
 քահանայի եւ ամուսնի ուրա» (<իւրոյ) (Քարազուխ ժԳ Գ III  
 175), «Հոգեւոր եղբայրն ուր զԳրիգոր» (Հաղարծին ՈԿԸ ՄՎ),  
 «Բրտայձորի իգին ուր բնձանովն» (Սանահին ժԳ ԿՂՍ 137): «Ես՝  
 Առուս (<առիւս)» (Անի ժԳ Գ I 11, ԲԱՍ 104), «Ես՝ Առուս որ-  
 դի Գաղիկանց Մաղիկանն» (Բարձրաբաշ ժԳ)<sup>49</sup>: «Տվար ՚Բ: սկիր  
 ՚Ա: բուրվառ ՚Ա: կանթեղ արծաթի եւ այլ արդունք» (<արդունք)  
 (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 51), «Կանկեցար խաշս ի հալալ ար-  
 դունաց (<արդիւնք) մերոց» (Հերհեր ՉԼԳ Գ III 50): «Ետու զիմ  
 աչգին ի սր Ստեփանոս ի հուրառն» (<հիւրատուն) (Աղշոց ժԳ  
 Հով ԽԱՂ III 71): «Եւ էվանիարունին (<էանիուրին) եւան Ակո-  
 բայ» (Մրեն ՉԿԹ ՕրՃ Մ 4): «Ա: ինձ, ՚Ա: Կուրապաղաին (<Կիւ-  
 րապաղաա — հուն. κούρασιον = հազարապետ, բառացի՝ հա-  
 զարաճու պալատի)<sup>50</sup> (Հոռոմոս ՉԺՆ ՍԱՐ 157): Կուրապաղաա  
 բառի հնագույն հիշատակությունը Մրենի տաճարի 640 թ. շինա-  
 րարական բնագրում. «Յիրշխանութեան Գաթի ամենագոյլ պատրկի  
 կուրապաղաաի եւ սպարապետի Հայոց եւ Ասորոց» (ՕրՃ III  
 401): «Յովանէսի Սունեաց (<Սիւնեաց) կպիսկոպոսի (Տաթև Թ  
 դ. Գ II 13), «Մի ար Մխիթարս եւ մի ար Յովանիսի խաշգու-  
 տին (<խաշգիւտ) (ն. Գեարիկ ժԳ ՄՎ): «Ի զուս (<գիւս) եկե-  
 ղեցի իսկ շկար շինած» (Գոմուր ՉԺԲ Գ III 192):

Գ. ժԲ—ժԳ դարերի վիճակաւն արձանագրություններում հին

47 Կ. ՏԼԵ-Մովսիսյան. Հայկական երեք մեծ վանքեր..., էջ 90:

48 Հ. Եղիազարյան. Լմբատավանք..., «Էջմածին», 1970, Բ, էջ 57:

49 Գ. Սարգսյան. «Բարձրաբաշ» վանքը և նրա վիճակագրությունը. «Էջմածին», 1951, N 11—12, էջ 43:

50 Հ. Անտույան. Անձնանունների բառարան, Բ, էջ 637:



հայերենի մի շարք բառերի կամ նրանցից կազմված անձնանուններին մեջ իւ երկրարբանի փոխարեն բազաձայնից առաջ փոքրագրված է ոչ հնչյունակապակցությունը, որի արտասանությունը արվյալ գիրքում եղած վկայություններով հավաստի դժվար է որոշել: Այսպես, գրաբարից հայանի հիւրատուն բարդությունը մի քանի վիճաբեղում աներկրա ավանդված է հոյրաւուն, իսկ խաչգիւտին բառը քանիցս պարզ փոքրագրված է խաչգոյտին: Հարց է առաջանում, ի՞նչ հնչում է ունեցել իւ կապակցությունը այդ կարգի բառերում մինչև հնչյունափոխվելը և ինչպե՞ս է արտասանվել նոր առաջացած ոչ հնչյունակապակցությունը այդ բառերում: Հրեարավո՞ր է այստեղ իւ > ոչ հնչյունափոխությունը դիտել իբրև անցում մի երկրարբանից մյուսին՝ սուսկ վանկարար ձայնավորների և անվանկային ձայնորդների փոփոխությամբ, թե իւ երկրարբանը վերածվել է ձայնավոր և բազաձայն հնչյունների կապակցության, երկհնչյունի՞ ոչ:

Հայագիտ Կարսը նկատի ունենալով միջին հայերենի ԺԳ և հետագա դարերի գրական աղբյուրների նույնանման փաստերը՝ արիւն > առոյն, հարիւր > հարոյր, ախիւծ > առոյծ, հեբեխիւն > հեբեխոյն, դիւր > դոյր (դոյրութիւն, դոյրել), աղբիւր > աղբոյր, քիւր > քոյր, հիւր > հոյր, հիւան > հոյս, հիւր > հոյր, ձիւն > ձոյն (ի ձոյնաջրէ, ձոյնիւն, ձոյնով), ձիւր > ձոյր և այլն, դանում է, որ իւ, ոչ հնչյունակապակցությունները տվյալ գիրքերում արտասանվել են հին հայերենի իւ, ոչ երկրարբանների նման, այսինքն՝ իւ = iu (ձիւն), իսկ ոչ = ii (ձոյն)<sup>51</sup> և ըստ այսմ. արիւն = ariuu հին հայերեն բառը Մխիթար Հերացու երկում վկայված՝ այբոյն, աբայնի գրությունը ժամանակին արտասանվել է՝ aruiou, aruinni, հարիւր = hariur բառի՝ միջին հայերենում հնչյունափոխված հարոյր-ը՝ haruir, ախիւր՝ ahiuc, առոյծ-ը՝ auiuc և այլն: Պրոֆ. Ս. Ղազարյանը միջին հայերենի հնչյունաբանությանը նվիրված իր մենագրության մեջ նույնպես ներկայացնում է իւ > ոչ փոփոխությունը՝ արիւն > առոյն, դիւր > դոյր, ալիւր > ալոյր և այլն, և դրա առաջացումը բացատրում ժողովրդական խոսակցական լեզվի արտասանության ազդեցությամբ, որ հեղինակի կարծիքով տեղի է ունենում մի շարք հաճախ գործածվող բառերում, հատկապես Ե ձայնորդից առաջ, սակայն անորոշ է մնում ոչ հնչյունակապակցության հնչումը այդ կարգի բառերում<sup>52</sup>:

<sup>51</sup> J. Kars', Historische Grammatik..., S. 65, 124—125.

<sup>52</sup> Ս. Ղազարյան, *Միջին հայերեն*, էջ 241:



Թվում է, այս մեկնությունները այնքան էլ համարիչ չեն: Որ իսկապակցությունը կամ ավյալ դեպքում բաղաձայնից առաջ երկբարբառը հիշյալ բառերում տառադարձված է ոչ կապակցություն, ակնհայտ է, բանի որ հաստատվում է բաղմաթիվ վկայություններով և չի կարող առանձնակի, պատահական վրիպման արդյունք լինել: Սակայն այս պարագան որևէ պատկերացում չի տալիս ոչ-ի որակի մասին հնչյունափոխության պահին, արդյոք այն հնչվել է իբրև երկբարբառ, թե ներկայացրել է ձայնավորի և ձայնորդի կապակցություն: Ոչ երկբարբառի փոփոխությունները քննելիս տեսանք, որ Ժ—ժԱ դարերի վիմական բնագրերում այն կարող էր վերածվել երկհնչյունի, կամ ավելի հաճախ բաղաձայններից առաջ՝ պարզ ձայնավորների, մեծ մասամբ ու-ի: Մյուս կողմից, օտար լեզուների օջ երկհնչյունը նույն ժամանակներում տառադարձվում է ոչ (հմմտ. noyan մոնղոլ. զորապետ) կամ ու՛նոյին = նուին = նուինայ<sup>53</sup>, որ ասպացույց է, թե վկայված ժամանակաշրջանում ոչ-ը երկբարբառ չէր, այլ երկհնչյուն կամ պարզ ձայնավոր:

Այստեղից, պետք է կարծել, որ վիմական բնագրերում և միջին հաշիերենի գրական երկերում իսկ երկբարբառի հնչյունափոխությունը առաջացած ոչ-ը հին հայերենի երկբարբառային արժևք չի ունեցել, այլ արտասանվել է իբրև ոչ երկհնչյուն կամ նրան համապատասխան ու պարզ ձայնավոր, հավանաբար վերջինիս առաջնային շարքի արտասանությունը (ս):

Այս միտքը կարելի է հաստատել նաև արդի բարբառների փաստերով. հայանի է, որ հին հայերենի իսկապակցությունն ունեցող բառերում բարբառները այդ երկբարբառը հիմնականում վերածել են ի կամ ու պարզ ձայնավորների, վերջինիս առաջնային տարբերակով՝ ձին > ձին, ձուն, ձսն, արին > արին, արուն, արսն, սին > սին, սուն, սսն և այլն: Այստեղից, բնական է կարծել, որ այս կարգի բառերի՝ բարբառներում պահպանված ու-ով ձևերը կարող էին ի > ոչ երբեմնի հնչյունափոխության արդասիրը լինել, այսինքն, միջին դարերի վիմագրերում առաջացած ձոյն, արոյն, սոյն ձևերը այն բարբառների արտասանությանն են հա-

53 Վարզան Վարզապետ, Հավարտան պատմության, Վենետիկ, 1862, էջ 144, Մաղախիս Աբեղա, Պատմություն վասն ազգին նեառդաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 11, Սամուել Անեցի, Հավարտունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 153, 155:



մապատասխանում, որոնք նույն բաները ներկայումս հնչում են՝ ձուև, առուև, սուև կամ ծուև, առսև, սոսև<sup>54</sup>:

Ստորև ներկայացնում ենք հին հայերենի իւ երկրորդական կամ երկհնչյունի ոչ-ի հնչյունափոխվելու նկատված վկայությունները վիճաբանական հուշարձաններում. «Քանի ինքն կենդանի է Առոյծին (<Առիւծին) առնեն» (Հաղթատ ԺԳ ԿՂԶԲ 228), «Առոյծաւրէն խրոխտ մարնչէր» (Ամաղու Չեթ Դ III 287), «Ես՝ Վարդառոյծս եւ Աշակ եւ Խորեն միաբանեցար» (Բագնայր ԺԳ ՍԱԲ 181): «Ետու զիմ գնած այդին ի հոյրատունս» (<հիրատուն) (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 103), «Ես՝ Յակոբ էրէց ի վանքս շինեցի հոյրատուն... , չ: տներ շինեցի եւ զամէն հոյրատանն տվի... , ով որ հանգչի, զգուռն քնի, հոյրատուն տան» (Մարինն ԶԿԶ ՄՎ): «Եւ հաստատեցին ինձ խաչգոյտին (<խաչգիտ) տանն» (Սանահին ՈԿԶ ԿՂՍ 128), «Հատուցին ինձ յամէն ամի :ժ: ար պատարագ դտանն խաչգոյտին» (Հոռոմոս ԶԲ ՍԱԲ 157), «Ի տանի խաչգոյտին :Բ: պատարագ Ասլանա է» (Ն. Գետիկ ԺԳ ՄՎ), «Խաչգոյտին շարաթ արն առնեն զժամն» (Հառիճ ՈԶԳ ՄՎ): «Ետու զիմ գանձագին գեղն զնորաղբոյրիկ» (<նորաղբիւրիկ) (Բագնայր ԶԺԱ ՍԱԲ 181), «Ի նորաշենիկ զԱղբոյրատնիսն դռնաբացիք եկեղեցոյս» (Սաղմոսավանք ՈԿԴ ՄՎ): «Ստացա զսոյնս (<զսիւնս) հալալ արդեամբք» (Խաթրավանք ՈՍԳ ՍԲ): «Ետու զոսկի գնդերն իմ եւ այլ արդոյնեցի» (<արդիւնեցի) (Մակարավանք ԺԳ ՄՎ): «Գրեցաւ զիրս պարոն Խաթուշիին, որ ետ զայր (<զիր) հոգո բաժին» (Հայրավանք ԺԲ ՍԲ), «Եւ յետ ելից ոյրենն (<իւրեանն) կատարողքն արհնին (նա), հմմտ. բարբառներում՝ ուրան, սուան (Ղարաբաղ, Շամշադին, Իջևան):

Գ. Ժ—ԺԳ դարերի վիճական բնագրերում իւ հնչյունակապակցությունը բաղաձայնից առաջ ենթարկվում է մի քանի այլ փոփոխությունների ևս, որոնցում, սակայն, վկայությունների սակավության պատճառով հնարավոր չէ որևէ օրինաչափություն նրկատել: Մյուս կողմից, այդ կարգի բաների վերծանությունները մեծ մասամբ անստուգելի են, կասկածելի, ուստի և հաճախ զրծվար է որոշել, թե նրանցում զիտվող շեղումների և նորարանու-

54 Պրոֆ. Գ. Զահուկյանը գտնում է, որ իւ երկրորդական փոխարեն միջին հայերենում վկայված ոչ հնչյունակապակցությունը արտասանվել է միայն ու, սակայն այսպիսի մեկնության զեպրում անորոշ է մնում իւ-ի հնչյունափոխությունից առաջացած ոչ-ի և արմատական ու-ի տարբերությունը (ՏԽՍ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը, Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, հատ. 57, Երևան, 1956, էջ 81):



թյունների աղբյուրը բնագրի հեղինակներն են, թե ընդօրինակող-  
 վերծանողները: Այնուհանդերձ, ներկայացնում ենք վիճակներում  
 եղած օրինակները: Իս>իու գրությունը երկու անգամ հիշատակ-  
 ված է միայն գրական հայերենից հայանի միւս բառը, որ ծագում  
 է մի, եւս արձատններից և հնագույնս ավանդված է մեւս ձևով:  
 Ահա միուս (<մեւս, միւս) բառի վկայությունները. «Ի տարին մ:  
 աւբ ժամ կատարեն, մինն ինձ և միւսն Յովանիսի» (Բաղարան  
 ՈԶԴ ՍԱԲ 205), «:Բ: արտ՝ մին ժն մոթոյ տեղի և միուսն՝ լժն»  
 (Արճեշ Զե ՍԱԲ 208): Իս>ս միայն մեկ անգամ դիտվում է Կիւ-  
 րիկէ անձնանվան մեջ Վարդարչուրի արձանագրության մեջ. «Ես՝  
 Կուրիկէ թագվորս» (ԵՂԹ ՍՍ): Ինչպես նկատել ենք այս հատվա-  
 ծի Բ կետում, Կիւրիկէ անվան մեջ ավելի օրինաչափ է և գերակը-  
 շիւս իս>ու (= Կուրիկէի) փոփոխությունը, ուստի կարելի էր կար-  
 ծել, թե Վարդարչուրի բնագրում ևս առկա է նույնը, միայն թե  
 այստեղ փորագրողը բաց է թողել ւ տառաձևը ա-ից հետո, սա-  
 կայն Քորայրավանքի ԺԲ դարի շինարարական արձանագրության  
 մեջ նույն անձնանունը փորագրված է Կուրիկէ, որը և հավանա-  
 կան է դարձնում նաև Կուրիկէ հնչումը՝ աւ=ս համապատասխանու-  
 թյամբ: Ահա այդ բնագրի մեղ հետաքրքրող հատվածը. «Ես՝ Մա-  
 րիամ դուստր Կուրիկէի (<Կիւրիկէի) թագաւորի յազգէ Բագրա-  
 տունի» (Քորայր ՈՂ)<sup>55</sup>: Իս երկրարբառը սղվել կամ հնչյունափոխ-  
 վել է ր ձայնավորի առանց գրությունը արտահայտվելու Աղբրայ-  
 փոս (<աղբիւրափոս) տեղանվան մեջ. «զԱղբրայփոսն այգի արն-  
 կեցի և ավի արձայնագրով» (Սպիտակավոր ԶԶ Գ III 99):

Գրաբարի իս երկրարբառը բառամիջում բազաձայնից առաջ  
 հայերենի բարբառներում օրինաչափորեն պարզվում է հետևյալ  
 կերպ. ա. խոսվածքների զգալի մասում վերածվում է ու պարզ  
 ձայնավորին կամ նրա առաջնային շարքի տարբերակին՝ հավա-  
 նարար ձայնավորների ներդաշնակության ազդեցությամբ կամ  
 Աճառյանի օրենքով՝ ձիւն>ձուն (ձնն, ձնն, ցնն), ալիւր>ալուր  
 (ալիւր, ալուր, էլուր), աբիւն>արուն (արնն, էրուն, առուն),  
 ք. Մի քանի այլ խոսվածքներում վերածվում է ի (=է) ձայնա-  
 վորին՝ ձին (ձին, ձիվ), ալիւր (ալիւր, ալէր), աբիւն (արին, էրին),  
 գ. Բուլոք խոսվածքներում մի խումբ բառերի մեջ իւ-ք վերածվում է  
 միայն ու ձայնավորին կամ նրա առաջնային շարքի տարբերակին՝  
 աղբիւր>ախպուր, ախպուր, ախբուր, աղբուր, հախպուր, ձնք,  
 ձուք (<ձիւք) և այլն, ըստ որում, այս կարգի բառերում իս>ի

55 Ս. Տեր-Ավետիսյանի հավաքածուից:



պարզումը չի դիտվում նույնիսկ այն խոսվածքներում, որտեղ մշուս դեպքերում օրինաչափորեն տեղի էր ունենում սովյալ փոփոխությունը: Օրինակ, Արարատյան, Ղարաբաղի և նրանց հարող խոսվածքներում ունենք՝ ծին < ձին, ալիւ, ալէր < ալիւր, արին < ա-  
 շին, բայց միայն՝ ախպուր, ախպուր < աղբիւր, ծուր, ծնւր, ձուր < ձիւր:

Այս բնդհանուր կանոնից դուրս են մնում իս երկրարբանի փոփոխությունները հավանաբար միայն գրական հայերենից հայտնի ուրիւն ածանցում, որ նկարագրված բարբառներում վկայված է բացի օրինաչափ ուրուն (ութուն), ուրին (օթին, օթին) ձևերից, նաև՝ ուրլն (ուրեն), քոն (էլքրոն — կոյ), քրօն — զօրքօն:

Վիճական բնագրերում հին հայերենի իս երկրարբանի կրած փոփոխությունների մեր շարադրանքից ակնհայտ է դառնում, որ հայ բարբառներում այդ երկրարբանի պարզումների բոլոր ձևերը իրենց արտահայտությունն են գտել ժ—ժԳ դարերի վիճագրության մեջ:

Դատելով վիճագրերում պահպանված հիշատակություններից, պետք է կարծել, որ վկայված լեզվական միջավայրում առավել տարածվածը և բնդհանրականը, ինչպես և արդի բարբառներում, եղել է իս > ու փոփոխությունը, թեև հնագույն և հավաստի փաստեր կան նաև իս > ի անցման մասին, որ կարող էր առաջանալ սովյալ ժամանակաշրջանում այդ երևույթն ունեցող խոսվածքների ազդեցությամբ: Միայն հին հայերենի աղբւր, աղբիւր բառի եւ, իս երկրարբանը երկու վիճագրերում հնչյունափոխված ենք տեսնում ի պարզ ձայնավորի՝ երկրորդ եզրում աղբիւր բաղադրիչով կազմված տեղանուններում. «Յիմ հայրենի դարդուց զՄոշաղբիւր (<Մոշաղբիւր) գնեցի... Մոշաղբիւր յետ իմ մահուանն իմ վանացս հայրենիք լինի» (Զինչիբլու ԶՄ Հով ՏՄ 16—17), «Ետու ի սր Սարգիս զՎասակափող Մշկաղբիւրն»: Մշկաղբիւր բառի դործիական հոլովը սպասելի էր՝ Մշկաղբերք, այստեղ հոլովված է՝ Մշկաղբիւր-իւն = Մշկաղբյուրով, ըստ այդմ, Խծկոնքի վանքին նվիրվել է Վասակափող գյուղը՝ Մշկաղբիւր (<մուշկ աղբյուր) դաշտամասով (Խծկոնք ՌԿԳ Հով նԱ՝ 32)<sup>56</sup>: Արդի խոսվածքներում աղ-

<sup>56</sup> Նախորդ հրատարակություններում բնագրի տեղանունները ստույգ չեն վերձանվել՝ զՎասակափող, Մշկաղբիւն, Վեփին և այդի մի ի Բագարան (ՍԱԲ 209, Ալիշան, Շիրակ, 127), որի հետեանքով Զարբերի՝ վանքին նվիրած գյուղերը հասկացվել են երեք բնդգծվածները, մինչդեռ Գ. Լովսեփյանի բնդօրինակությունից ակնհայտ է, որ նվիրվել է մեկ գյուղ՝ Վասակափող՝ Մշկաղբիւր, որ հավա-



բիւր, աղբիւր > աղբիր արտասանութիւնը չի գիտւում, ուստի պետք է կարծել, որ վկայված լեզվական միջավայրում այդպիսի արտասանութիւնը կարող էր առաջանալ մյուս բաների համանմանութեամբ (իւ, եւ > ի, ձին > ձին, ալիւր > ալիւր և այլն):

Հայկական միջնադարյան ժողովրդական երգերում աղբիր հիշատակւում է միայն մեկ անգամ. «Աղբիր մը Մըրզա լեռը փուտ ուռուն տակը կու վազէ» երկառում<sup>57</sup>:

Գրաբարյան ուրիւն վերջածանցի հիշատակութիւնները վերկայում են, որ այստեղ իւ երկրարբառի պարզվելը թե ու-ի և թե ի-ի օրինաչափ է եղել ԺԲ—ԺԳ դդ. խոսակցական լեզվում, որանգից այդ փոփոխված ձևերը մուտք են գործել արձանագրութիւնների մեջ: Օձունի և Լմբատի բնագրերում առկա է ուրիւն > ուրին (փեկուրին, իրիցուրին), իսկ Մրենում՝ ուրիւն > ուրուն (էվանիարուն < էւանիուրին):

Բոլորովին առանձնակի է մնում հին հայերենի գիւղ, գեւղ բառի մեջ իւ, եւ երկրարբառի վերածվելը ու-ի, որ պարզ փորագրված է Թալինում 3Ղ (941) թ. գուղաբաղաբիս բարդութեան մեջ և ապա 1263 թ. (ՉԺԲ) վայոց ձորում, Գոմուրի հուշարձանի պատին՝ ի գուղս, կամ Հաղբատում ՈՄԹ (1210) թ. փորագրված՝ գուղաւագաց (< գիւղաւագ) բառերում: Մի կողմ թողնելով բնվող բառում իւ, եւ երկրարբառների նախնականութեան հարցը, որ գիւղ, գեւղ, գեւաղ արմատի՝ հավասար ստուգարանութիւնը շունենալու պայմաններում անլուծելի է մնում, հարկ է նշել, որ գիւղ, գեւղ > գուղ անցումը անծանոթ է աշ միայն գրաբարին, միջին հայերենին, այլ նաև ուսումնասիրված հայ բարբառներին, որտեղ բառս ավանդված է միայն՝ գլեղ, գեղ, գեղ, գիղ, կլեղ, կեղ, Բեղ, Բիղ, այսինքն առկա է՝ եւ, իւ > է > ի պարզումը:

Միայն Շամախի բարբառի խոսվածքներում ունենք կյուղ < գիւղ (Շամախի 192), որ հավանաբար առաջանում է գրական ճանապարհով (գիւղ > գյուղ > գյնւղ), ըստ որում ճյուղակից մյուս բարբառներում գրա փոխարեն գործածվում է՝ շէն, շին (Պարաբաղ—Հաղբութ 335, Կաթավարերդ 181, Կոզեն 195, Շամախի 218):

Այսուհանդերձ, վիմագրերի գուղ < գիւղ վկայութիւնները հրեւադրական պատահական վրիպումներ չեն, այլ բառիս այդպիսի

Խաբար հանդամաս է՝ ՏԷՍ նաև Ս. Հակոբյան, Հայ գյուղացիութեան պատմութիւն, հատ. 2, Երևան, 1964, էջ 45:

57 ՏԷՍ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 243:



արտասանության արդյունք: Այսօր էլ հյուսիսային Հայաստանի, Զանգեզուրի և Իջևան—Շամշադինի որոշ խոսվածքներում գիւղ արտասանվում է գուղ: Մյուս կողմից, հավանական ենք համարում գուղ, գող ձևերի ծագումը դնել ոչ թե գիւղ կամ գեւղ, այլ նույն արմատի գեւղ տարրերակից, որ հոարարբառի հնչյունափոխությամբ կարող էր վերածվել կամ գեղ-ի (եաւ>ե) և կամ՝ գաւղ>գող-ի (եաւ>աւ):

#### ԵՒ ԵՐԿԱՐՐԱՆ

Հին հայերենի մյուս իջնող-թուլացող երկբարբառների նման եւ հնչյունակապակցությունը ևս դասական գրաբարի հուշարձաններում հանդիպում էր երեք դիրքում՝ բաղաձայնից առաջ, ձայնավորից առաջ և բառավերջում: Եւ-ը երկբարբառային արտասանություն է ունեցել (eu) միայն բաղաձայնից առաջ գտնվելիս (եւքն, աեւծ=euthn, թեւս), մյուս դիրքերում դեռևս նախնազույն շքրջանում արտասանվել է իբրև երկհնչյուն՝ ev (հարեւան, տերեւ=harevan, terev): Հետագա դարերում պատմական հնչյունափոխությամբ եւ-ը կորցրել է երկբարբառային հատկանիշները և վերածվել ձայնավոր և բաղաձայն հնչյունների կապակցության՝ երկհնչյունի՝ նաև բաղաձայնին նախորդող դիրքում (եւ>էվ, եվ=e v): Ի տարրերություն մյուս երկբարբառների, հատկապես իւ-ի, եւ երկբարբառի սյարդումը ձայնավորների շի նկատվում և բոլոր դիրքերում օրինաչափ է միայն՝ եւ>էվ, եվ փոփոխությունը: Իրողության համողիչ օրինակներ են տալիս նկարագրված հայ բարբառները, որտեղ եւ ունեցող միավորներում ամենուրեք տվյալ հնչյունակապակցությունը արտասանվում է՝ էվ, եվ, նաև՝ ե, է>ի անցումով՝ իվ: Այսպես, բոլոր բարբառներում մասնակի տարբերություններով ունենք՝ քէվ, տիրէվ, արէվ, հրրէվան, հրլէվուր, անձրէվ (<քեւ, տերեւ, արեւ, հարեւան, ալեւուր, անձրեւ), այսինքն առկա է եւ>էվ, եվ: Արևելահայ մի քանի բարբառներում այս կարգի բառերում տեղի է ունենում հետագա է, ե>ի փոփոխությունը. օրինակ, էյքիվ<կաեւ (Շամախի 37), հիլիվիթօթին<ալեւուրօթին, քիվ<քեւ, արիվ<արեւ, տիրիվ<տերեւ (Մեղրի 63), անձրիվ<անձրեւ, քիքիվ<քեքեւ (Ազուլիս 86), քիվալուր<քեւաուր, ծիվիլ<ծեւիլ (Ղարաբաղ 49):

ժ—ժԳ դարերի վիժական բնագրերում գրաբարյան եւ երկբարբառն ունեցող միավորները ստիպալաթիվ են և, շնչած դրան,



եղած վկայությունները ևս հավաստում են, որ եւ-ը բոլոր դիրքերում, մանավանդ բառավերջում նույնպէս վերածվել էր էվ, եվ երկհնչյունին: Ներկայացնում ենք այդ փոփոխությունն արտացոլող մի քանի փաստեր. հնագույն հիշատակությունը պահպանվել է Քալինի Քրիստափոր վանքի մի նվիրագրում, որ փորագրվել է ՆԲ (953) թ. «Կամ եղեվ (=եղեւ) իմ Միսաէլի ևսու զիմ եզին» (անտիպ, ՄՎ): Բայաձևը նույն հնչյունափոխությամբ վկայված է նաև Սարիզամիշի խաչքարի նկ (911) թ. հիշատակագրում՝ «Կամ եղեվ հայո շրի զառուս վսն մեղացս հանել» (ԿՂՀԳ 88), իսկ Կիւրիկե թագավորի վարդաբլուրում ՆՂԹ (1050) թ. թողած շինարարական արձանագրության մեջ գիտվում է՝ եւ > էվ փոփոխությունը. «Ես՝ Կորիկէ թագվորս շինեցի... արէվշատուրին (<արեւշատուրի) իմոյ» (ՄՄ, անտիպ)<sup>58</sup>:

Հետագա դարերի վիճաբերում հին հայերենի եւ երկրարբանի փոխարեն մեծ մասամբ փորագրված է եվ կամ էվ, որ արտացոլում է վկայված ժամանակաշրջանում երկրարբանի արտասանության վիճակը: Այսպես, Առաքելոց հուշարձանախմբի ՉԺԶ թ. ընդարձակ բնագրում Առաքել վարդապետի մասին ասվում է. «Եւ էր զուռն եւ արվելի (<արեւելի) երկրիս» (անտիպ, ՄՎ): Թձունի տաճարի ԺԳ դ. արտոնագրում կարդացվում է. «Եւ պարոնացն արեվշատուրն համար ձեռնվորահակ ի վեր կալա» (ՄՎ): Մարինե հուշարձանի ԺԳ դ. նվիրագրում՝ «...որ տեառնընջու աովին ներէվ» (<ներեւ, ի ներեոյ, ներեո): Ավանի փոքր եկեղեցու ՉԿԹ (1313) թ. բնագրում. «Եւ տվար ի: Ես ի գինն Սէվրննին (<Սեւինը) այգոյն» (անտիպ, ՄՎ) և այլն:

Չպետք է կարծել, թե զրարարի եւ հնչյունափոխության փոխարեն բոլոր դեպքերում փորագրված է եվ կամ էվ. հնչյունափոխված ձևերին զուգահեռ վիճաբերում շարունակվում է ավանդական, զրական եւ զրություն, որը այլևս չէր պահպանում հին երկրարբանային արտասանությունը (eu) և կիրառվում էր դասական ուղղագրության հետևությամբ: Սակայն եւ հնչյունափոխությունը հին զրական հայերենում հանդիպում է նաև այնպիսի բառերում, որոնք մեծ մասամբ վկայված են կրկնակ զրությամբ՝ իւ-ով և եւ-ով. բեւ=բիւ, ալեւ=ալիւ, առեւ=առիւ, եղբեւ=եղբիւ, աղբեւ=աղբիւ, եւղ=իւղ և այլն: Հայերենագիտության

<sup>58</sup> Վիճաբերողները չէին տարբերակի է. և հնչյունները, զրությունները պետք է պատահական համարել (ծան. խմբ.):



մեջ այն համոզումն է տիրում, թե այդ կարգի բառերի զուգադիր ձևերից նախնականը եւ գրությամբ ձևերն են, որոնցից և հետագայում ձայնագարձով առաջացել են իւ-ով զուգահեռները<sup>59</sup>: Պրոֆ. է. Աղայանը վերջերս գրած հոդվածում այլ միտք է հայտնում. ըստ նրա, հիշյալ բառերի զուգադիր վիայությունների մեջ պետք է դիտել հայերենի հին բարբառների արտասանության հետքեր, ըստ այդմ իւ, եւ շեն սերում իրարից, զուրկ են իմաստազատիչ հակադրությունից և արտացոլում են հնագույն բարբառային տարբերություններ<sup>60</sup>: Հարցի բնությունը մեր աշխատության շքրջանակներից դուրս է, քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմագրական հուշարձաններում այդ կարգի բառերի գրության մեջ եւ զուգադիրը չի հանդիպում և նրանք վիայված են միայն իւ-ով: Սակայն վիմական բնագրերում հաճախ հիշատակվող գիւղ (նակ՝ գեւղ, գնաւ) բառի վիայությունները ցույց են տալիս, որ այդ բառի հնչյունափոխված ձևերը պետք է առաջացած լինեին ոչ թե գիւղ, այլ՝ գեւղ կամ գեւալ արտասանությունից: Քանի որ ցայժմ գիւղ—գեւղ բառը հավաստի ստուգարանված չէ<sup>61</sup>, դժվար է ասել, թե որն է նրա նախածեր, կամ գեւղ, գիւղ ձևերից որն է հնագույնը: Մի բան ահնհայտ է, որ արդի բարբառներում, ինչպես և վիմական արձանագրություններում, մեծ մասամբ բառքս ավանդված է գեղ, գեւալ (նակ՝ գաւղ), որ հավանական է դարձնում նրա ծագումը գեւղ սկզբնաձևից: Մեջ ենք բերում գեղ, գեւալ < գեւղ, գիւղ բառի մի քանի հիշատակությունները Ժ—ԺԳ դարերի վիմագրերից, որոնք կարող են նպաստել եւ, իւ երկբարբառներով վիայված զուգադիր ձևերի պարզարանմանը: Հնագույն հիշատակությունը սրահպանվել է Հոռոմոսի վանքի մի նվիրագրքում. «նաու զիմ գեղս զՍահառունիս» (ՆՁԵ ՍԱԲ 164), «...եթէ որ... յաիշտակէ զգեղն» (նտ): Այնուհետև գեղ բառը տարբեր հոլովաձևերով և բարդությունների մեջ բազմիցս հանդիպում է պատմական Հայաստանի բոլոր գավառների վիմագրության մեջ ավելի հաճախ, քան գրաբարյան զիւղ-ը. «...տուաք զգեղն Որդկան և զՏաճկամարգ» (Հովհաննավանք ՈԽԹ ԿՂՀ 76), «եւ որ զայն

59 Հ. Անտոյան, *Քննություն Աղայանգեղոսի կրկնագրի, «Հանգես ամսօրյա», 1913, էջ 1—19, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 125:*

60 է. Աղայան, *Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում, ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 5, էջ 76—78:*

61 Հ. Անտոյան, *Արձատական բառարան, Բ. էջ 216:*



գեաւղն յափշտակէ» (Հաղբատ ԺԱ ԿՂՀԲ 156), «Եւ կամ զայն գեղն յափշտակէլ շանա» (Հաղբատ ԺԱ ԿՂՀԲ 156), «Առի ՚Բ: գեղին փոխան զՀաղբ հայրենիք» (Հաղբատ ՈՄԹ ԿՂՀԲ 168), «Եւ է այն գեղ աշատ ամենայն հարկէ» (նտ), «Զիմ հոգո բաժին գեղն» (Հաղբատ ՈՂԸ ԿՂՀԲ 177), «Շինեցի զգեաւղս զՄարտիրոս» (Մարտիրոս ԶԼԲ Դ III 183), «Գեղ ՚Բ: զԱզարակի ձոր եւ Տխարբ» (Ամաղու ՈՂ Դ III 211), «...տվար...ի Գեղարբունի զգեղն Գառնո» (Յաղացքար Զ Դ III 149), «Եւ ետու յիմ հայրենացն ՚Բ: գեղ» (Ամաղու ԶԺ Դ III 219) «Տուի հիւրանոցս գեղ զԱւէշ» (Ամաղու ԺԿ Դ III 246), «Զմեր գանձագին գեղն զՎահրամագեղ» (Հովհաննավանք ԶԼԲ ԿՂՀ 91), «Տվեցի զգեղն Շալվաշէն» (նտ ԶԷ ԿՂՀ 98), «Գնեցի զգեղն Բաւլա» (Հաղբատ ԶԻԲ ԿՂՀԲ 194), «Ետու զիմ հայրենի բաժինք գեղն զՃոխբագոմ» (Հոռոմոս ԶԻԹ ՍԱԲ 158), «Ետու... զԶվա գեղն իւր բոլոր սահմանաբն» (Ամաղու Զեէ Դ III 216), «Ետու... ի Գեղարբունոյ զգեղն Վանէվան» (Արատես ԶՄ Դ III 126), «Զմեր հերենի գեղն զԱկող ի վանս տվար», (Հերհեր ԶԼԸ Դ III 51): Նույն գրութեամբ է վկայվում գեղ բառը նաև թեք հոլովածներում կամ բարդութուններում, շեշտակորույս կամ նախաշեշտ վիճակում. «...յամենայն գեղէ (<գեղչէ) երկու գրի հաց յաթոս տալ» (Անի ՈԿԶ Դ I 16), «Գաւոռոխոնեց գեղին կէսն» (Անի ՈԿԴ Դ 63), «Եւ յեղեգեց ձորին զԱրատէսն իւր գեղովն» (<գիւղի) (Ամաղու Զեէ Դ III 216), «Տվար շինական ի շինութի Զորիգեղին զԱւետիս» (Հովհաննավանք Զեթ ԿՂՀ 83), «Տվար գեղիս տեղի գերեզման» (Հաղբատ ԶԻԸ ԿՂՀԲ 265 ՄՎ): Միայն եղակի հիշատակութեամբ վկայված է գեղ > գող (կամ գիւղ > գուղ > գող) հնչյունափոխութեամբ Հաղբատի ԺԳ դարի արտոնագրում, բարդության առաջին եզրում. «Աղատ ամենայն հարկէ՝ ի պատրոնաց, ի ձեռնաւորաց, ի գողաւագաց» (<գիւղաւագ, գեղչաւագ) (Հաղբատ ՈՄԹ ԿՂՀԲ 168):

#### ԵՍ. ԵՐԿՐԱՐԱՌ

Հին գրական հայերենում լայն տարածում ունեցող եւ հնչյունակապակցութիւնը երկբարբառային արտասանութիւնը՝ ԵՍ, պահպանում էր միայն շեշտված վանկում, մնացած դիրքերում դրա փոխարեն ամենուրեք վկայված է Ե պարզ ձայնավոր: Գրաբարում այս երկբարբառը շեշտակիր վիճակում հնչյունափոխութեան չէր ենթարկվում, սակայն բառերի աճման, բարդացման, ածանցման կամ թեքման դեպքում շեշտակորույս լինելով՝ վե-



բածվում էր և պարզ ձայնավորի, օրինակ, սիրեաց > սիրեցի, մեծուրիւն > մեծուբեան > մեծուբեւէ, յորելեան > յորելեւնի, լեարդ > լերդիւ, կայեան > կայեւնի և այլն: Հետագա դարերում պատմական հնչյունափոխությամբ եւ երկրարբառ կորցնում է երկրարբառային հատկանիշները նաև շեշտված վիճակում և վերածվում ա, և պարզ ձայնավորների կամ յա երկհնչյունի: Արդեն ԺԱ.—ԺԲ դդ. միջին հայերենի գրական երկերում, հին ձեռագրերի հիշատակարաններում և մանավանդ վիմական արձանագրություններում գրարարի եւ երկրարբառի փոխարեն այլևայլ դիրքերում ամենուրեք վկայված ենք տեսնում և (է), ավելի սակավ՝ ա ձայնավորներ, հնչյունափոխություն, որ առաջանում է շեշտի ազդեցությամբ կամ անկախ նրանից: Վիմական բնագրերում եւ երկրարբառի փոփոխություններն արտացոլող վկայություններն ակնառու ցույց են տալիս, որ դեռևս Ժ—ԺԱ. դարերում ձևավորված և ավարտված օրինաչափություն էր դարձել այդ երկրարբառի՝ պարզ ձայնավորի վերածվելը, թեև նրա դրությունը հաճախ մնում էր կաշկանդված գրարարի կանոններով: Սակայն շեշտակիր վիճակում եւ > և փոփոխության առանձին արտահայտություններ են նկատվում դրանից մի քանի դար առաջ փորագրված հնագույն հայերեն արձանագրություններում: Բագարանի 631 թ. շինարարական բնագրում պարզ կարդացվում է. «Տրէ ամսեն ի քսան», իսկ Արուճի տաճարի ՅԺԶ (867) թ. արտոնագրում՝ «Զինչ իւրեանց բնին ռասմ էր լել», ըստ այդմ, ամսեան և լեալ կանոնավոր ձևվերը փորագրվել են եւ > և պարզումով՝ ամսեն, լել (Օրծ ՈՒ 393, ՄՎ): Հին ձեռագրերում տվյալ փոփոխությունը հազվադեպ է և վկայված ավելի ուշ շրջանից: Նախնազույն օրինակներ կարելի է համարել Ղ. Փարպեցու գրքում պահպանված՝ բաներդ (<բանեար-դ), զձեռներն (<ձեռներ-ն) և այլ ձևերը, որոնցում առկա եւր հոգնակերտի վերածում եւ-ի: Սակայն, անորոշ է Փարպեցու այդ վկայությունների ժամանակն ու աղբյուրը, թեևս գրքանք առաջացել են հետագա ընդօրինակությունների ընթացքում, գրիչների: բարբառների ազդեցությամբ:

Ավելի որոշ է Ագաթանգեղոսի կրկնագիր ձեռագրում ավանդված՝ ի դղեկ (<դղեակ), բարեցապարտն (<բարեացապարտն) ձևերի ժամանակը, որ ուսումնասիրողները համարում են Թ.—Ժ դարերը<sup>62</sup>:

62 Տե՛ս Ա. Ալտրեյան, Քենական քերականություն, էջ 79—80, Հ. Անտոյան, Կենություն կրկնագիր Ագաթանգեղոսի, ՀԱ, 1913, № 2, էջ 1—19:



նկարագրում ենք ժ—ժ' գարերի վիճական բնագրերում հին հայերենի եւս երկրարբանի կրած փոփոխությունները, ըսկըսելով հնչյունափոխական մի բանի մասնակի երևույթներէրց. Ա. Մի շարք բառերում, շնշտակիր վիճակում գրարարի եւս երկրարբանը հնչյունափոխում է ա պարզ ձայնաւորի: Շատ շին այս փոփոխությունն արտացոլող օրինակները, սր ապացուցում է, թէ իրողությունը ներթափանցելով որեւէ խոսվածքից, լայն տարածում չի ստացել և ընդհանրացել, սակայն եղած փաստերը չի կարելի պատահական վրիպում համարել: Այսպէս, «Շիննցի սննակ (<սննակ) :Բ: զսր Ստեփաննոս և զսր Քրիստափոր» (Անի ՆԶԹ Գ I 23): Արլղարիք Պահլավունու շինարարական արձանագրությունը, որից քաղում ենք այս հատվածը, փորագրված է ժամանակի կանոնավոր գրական լեզվով՝ գրարարով՝ առանց լեզվա-բերականական զգայի մեղանշումների կամ բարբառային ձևվերի, ուստի հազիվ թէ հնարավոր լինի սննակ գրության մեջ փորագրողի վրիպում տեսնել, ավելի հավանական է կարծել, որ այն հեղինակի արտասանության արգասիքն է: Եւս>ա փոփոխությունը դիտվում է հետևյալ օրինակներում. «Եւ ետու շիմ հայրենացն (<հայրենաց) :Բ: գեղ ի սր նախավկայս» (Ամաղու ԶԺ Գ III 219): Սիւնաց (<Սիւնաց) եպիսկոպոս կանդնցի խաչս» (Ամաղու ԺԳ Գ III 229): «Նոր կիրակէին հետ իւար (<իւրար) արնեն զժամն» (Բարձրաբաշ ԺԳ ՄՎ): «Յնգրէար զխաղաղութն աշխարհիս և զհաստատութի եկեղեցաց» (<եկեղեցեաց) (Մարմաշեն նէկ Օրծ IT 442): «Անտոնի պատարացն և իւրահացն (<իւրահաց) (Ն. Յետիկ ԺԲ ՄԲ): Այս փոփոխությունը տեղի է ունենում և խոնարհման բայերի եղակի հրամայականի ձևերում, որտեղ եւս վերջավորության փոխարեն երբեմն փորագրված է ա (յ): Հնագույն վկայությունը գտնում ենք Վանի միջնաբերդի Ժ գ. խաչարձանի հիշատակագրության մեջ. «ԳԳուրգեն յիշա՛ (<յիշեա՛) ի Քս» (Օրծ IT 249), ապա Անիում, ավելի ուշ շրջանի մի բնագրում, «Սպանդիարս յիշայ ի ձեր սր չաղաթս» (ԶԶԳ Գ I 64): Արդի նկարագրված բարբառների մեծ մասում հրամայականի բայաձևերի եւս երկրարբանը օրինաշատորեն պարզվում է Ե-ի՝ Րշխատէ, գրէ, սիւրէ, միայն Մեղրու, Ագուլխի, Կարավաբերդի, Կարճեանի, Համշենի և մի բանի այլ բարբառներում տեղի է ունենում եւս>ա՛՝ ըշխատա, գիւա, սիւա, ուստի վիճագրերում ափանգված հիշյալ ձևերը կարող էին ներթափանցել այս վերջին խմբի բարբառներից: Ինչպէս և միջին հայերենում, եւս>ա հըն-



չյունափոխությունը վիմական բնագրերում դիտվում է սակավաթիվ բառերում, այն էլ եա > ք օրինաչափ փոփոխությանը զուգահիշ ձևերում: Թրինակ, մեր թվարկած Սիւնաց, հայրենաց, եկեղեցաց հլովաձևերի կողքին վիմագրերում ավելի հաճախ վկայված են նաև՝ Սիւնեց, հայրենեց, եկեղեցեց ձևերը:

Բ. Գրաբարի եա երկրորդ փակ վանկում շեշտված կամ նախաշեշտ դիրքում հնչյունափոխվում է ե (է) պարզ ձայնավորի: Ինչպես արդեն նշել ենք, սկսած է—Ը դարերից վիմագրության մեջ կամ հնագույն ձևագիր մատյաններում ե, է գրերը հանդիպում են գործածված իրար փոխարեն, որ ապացույց է, թե ժամանակի հայերենում այդ գրերով արտահայտվող հին հայերենի հնչյունները պատմական հնչյունափոխության հետևանքով մոտեցել կամ նույնացել էին: Եա > ք հնչյունափոխությունն արտացոլող հիշատակություններում ես ե գրի փոխարեն երբեմն փոքրիկ էնք տեսնում է, սակայն անտարակույս է, որ բոլոր դեպքերում եա երկրորդ փակ վանկում է, սակայն անտարակույս է, որ բոլոր դեպքերում եա երկրորդ փակ վանկում է և պարզ ձայնավորի, որի հնչումը նույնն է եղել արդի հայերենի բառամիջի ե, է հնչյունների հետ: Ստորև ներկայացնում ենք վիմական բնագրերում եա > ք, է հնչյունափոխությունն արտացոլող վկայությունները ըստ առանձին բառախմբերի.

1. Գրաբարի ե լծորդության բայերի սահմ. եղանակի անց. կատարյալ ժամանակի եզ. III դեմքի բայաձևերի հաց վերջավորությունը (ցոյական հիմք) վերածվում է եց-ի, իսկ նույն ժամանակի հոգնակի III դեմքի եան-ը՝ են-ի: Անց. կատարյալ բայաձև վերում եա > ք, է փոփոխության հնագույն վկայությունը գտնում ենք Տայքում Ժ դարում ընդօրինակված վրացերեն մի ձևագրի հայերեն կարճառոտ հիշատակագրություններում, որոնք հայագետ Ի. Աբուլաձեի կարծիքով արտացոլում են Տայքի հայ բնակչության խոսակցական լեզվի իրողությունները: Ահա այդ ձևերը. «Ղուսաուէրէց (<լուսաուրեաց) գանձն զմէր... նորոզեց (<նորոզեաց)»<sup>63</sup>: Վիմական բնագրերում փոքրագրված բաղմաթիվ փաստերից նշում ենք կարևորները. «Խորհուրդ բարի ծագեց (<ծագեաց) ք սիրտ պատրոնացն» (Անի ԺԳ Գ I 1), «Յորժամ աիրեց (<աիրեաց) քաղաքից Անո» (Անի ՈԿԳ Գ I 63), «Սիրանէս քարգործն եկեղեցի շինեց» (<շինեաց) (Հալիձոր ԶԺԳ Գ II 52), «Հաստատեց լԱ: աւր պատարագ» (Աղավնաձոր ԶԽԱ Գ III 37), «Որ շի-

63 Ի. Աբուլաձե, նշվ. հոդվածը, էջ 36, էջ 39:



նեց զեկեղեցիս և անկեաց զայգիս» (Ռինդ ՉԾ Գ III 40), «Եւ նա մեծ ապատով մեծարեց զնա» (Ամազու ՈՂ Գ III 211), «Տր Ստեփանոս կարգեց ի տարին :Գ: ժամ» (Ամազու ՉԻ Գ III 220), «Յոյժ ցանկացող էր վարուց երանելի հարցն և շժամանեց» (Հովհաննաւանք ԺԲ ԿՂԷ, ՄՎ), «Իմ որդին Հազրայէկն ի Գարէգոյնէն զրաւկեց» (<զրաւկանեաց) (Հոռոմոս ՉԺԸ ՍԱՐ 158), «Վղն հաստաւեց ինձ :Բ: պատարագ» (Սաղմոսավանք ԺԳ ՄՎ), «Վարդապետն հաստաւեց :Բ: ժամ յայսմ խորանիս» (Խորանաշատ ՈԿԲ, ՈԿԹ ՄՎ), «Եւ զրեց վարդապետն :Բ: ար ժամ» (նա ՄՎ), «Դիմեց զՄծածինս» (Մակարավանք ԺԳ ՄՎ), «Յիմ յանուն շինեց և ևա ինձ» (Բարձրաբաշ ՈՁԸ ՄՎ), «Առաջնորդեց, զեկեղեցիս սալեց» (Մաթեր ՉեՁ ՄՎ), «Հայրապետ սահմանեց :Ա: ար պատարագ» (Տեղեր ԺԳ ՄՎ), «Ստեփանոս սահմանեց յայտնութի ճրագուցին :Գ: ժամ» (Տաշքենդ ԺԳ)<sup>64</sup>, «Վս Սասնաին և Քաթարա և Նորագինին որք անհետ կորեն (<կորեան) ի ձեռս անարեհաց» (Կողես ՈՂ ՄՎ): Այս օրինակներից երևում է, որ անցկատարյալ ժամանակի բայաձևերում եա > և փոփոխությունը վրկայված է միայն ԺԳ դարասկզբի վիճագրերում, որ մտածել է տալիս, թե իրողությունը նոր էր սաղմնավորվում և դեռևս տիրապետող օրինաչափություն չէր դարձել: Բացի դրանից, հիշյալ բայաձևերին զուգահեռ ավելի հաճախ հիշատակված են գրաբարյան, կանոնավոր եաց երկրարբառով ձևերը, որոնք պահպանվում են ավանդական արտասանության կամ գրաբարի ուղղագրություն հետևություններ:

2. Գրաբարի անցյալ դերբայի եալ վերջավորությունը հնչյունափոխվում է ել-ի, բաղադրյալ ժամանակների կազմության մեջ իբրև դերբայական բաղադրիչ՝ վաղակատար դերբայ կիրառվելիս կամ գոյականարար, ածականարար գործածվելիս, նաև հոգնակի թվում, շեշտակիր կամ նախաշեշտ վիճակում:

Ել (<եալ) մասնիկով վաղակատար դերբայի կիրառության սկիզբը ստույգ որոշված չէ: Ա. Այտրնյանը դերբայի հնագույն հիշատակությունները համարում է Ժ—ԺԱ դարերից, սակայն նրա առկոչած վկայությունները բաղված են միայն ԺԲ—ԺԳ դդ. մասնագրությունից (Մխիթար Հերացի, Սմբատ Սպարապետ, Վարդան Արևելցի և այլն)<sup>65</sup>: Պրոֆ. Ա. Արբահամյանը հայերենի դեր-

64 Ս. Բաբխուպաշյան, Գիտություններ և նոր նյութեր..., նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, ժողովածու, էջ 259:

65 ՏԵ՛ս Ա. Այտրնյան, Քննական բերականություն..., էջ 60:



բայնորի մասին իր հմտալից ուսումնասիրության մեջ դժվարանում է որոշակի նշել ել մասնիկով դերբայի գործածության քակրը և Այսրենյանի փաստերին ավելացնում է Ն. Շնորհալու, Կ. Գանձակեցու և հատկապես կարծեցյալ Շապուհ Բաղրատունու երկերից մեջ բերված նոր վկայություններ, որոնք հնարավոր են դարձնում դերբայի կիրառությունը կամ համենայն դեպս նրա նախնագույն հիշատակությունը համարել ժԲ դ. վերջերից<sup>66</sup>: Վիմական բնագրերում ավանդված օրինակները հիմք են տալիս ել լեզվաբանության վաղապատար դերբայի առաջին կիրառությունների ժամանակը որոշել Թ—ժ դարերը: Բաղմաթիվ վկայություններից մեջ ենք բերում մի քանիսը տարբեր ժամանակների վիմական բնագրերից: Հնագույնը Արուճի տաճարի ՅԺԶ (867) Թ. արտոնագրում է. «Հաւասարեցի զչուրն ընդ Կոշ և ընդ յԱրուճ, զինչ իրեանց բնիկ ռասմ էր լել» (<լեալ) (ՄՎ Հով ՔԱՐ 11), նույն բնագրի շարունակության մեջ, անեծքի բանաձևում փորագրված է նգել լիցի (<նգովեալ լիցի), սակայն այստեղ չի կարելի զիտել նույն փոփոխությունը, ինչ լել<լեալ դերբայում, քանի որ փորագրողը ակնհայտորեն բաց է թողել գրերի մի մասը, ուստի նգել (<նգովեալ) արտասանությունը բացառվում է: Լել<լեալ հնչյունափոխված դերբայը գտնում ենք Տեկորի տաճարի ԺԱ դարի մի արձանագրության մեջ, որի վերձանությունը գիտությունը հայտնի է Ն. Սարգիսյանի եզակի հրատարակությամբ և անստուգելի է. «Զինչ առջի թագաւորութեն լել է (<լեալ է)» (Տեկոր նՁՆ ՍԱՐ 208), իսկ ավելի ուշ նույն ձևը հանդիպում է նաև Բաղարանում. «էտու զմեր գանձագին էզին, որ Գունեխանց հող է լել» (Բաղարան ՈԶԳ ՍԱՐ 204), կամ Անիում, ԺԳ դարի մի արտոնագրում. «Թողի զքասանկին զղամղէն քաղաքիս, որ ի գրուց գայ, որ յառաջն շէր լել» (Գ I 30): Այս օրինակները հաստատում են, որ լել գրությունը այդպիսի արտասանության արտացոլումն է և հաղիվ թե հնարավոր լինի նրանում ա գրի անտեսումը պատահական, հնագրային հապավում համարել: Հաջորդ վկայությունները կարող են հաստատել այս համոզումը. «Առել (<առեալ) զսա զանպար լույսո» (Կարմրաշեն ՆԼԹ Գ III 42): «Զայն որ ի գետեզերն իմ ձեռաց արկել» (<արկեալ). (Մրեն նեԱ ՕրԾ Մ 3), Ագառել եմ զՄրենոյ զհարկին» (Մրեն նՂ ՕրԾ Մ 2): «Զիմ

<sup>66</sup> ՏԷ՝ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 174—175:



ձևաց արկել (<արկեալ) այգին ի սուրբ Քրիստափոր էսու» (Քա-  
 լին ժ գ. ՄՎ): «Զքաղարս մեր նորոգել (<նորոգեալ) շինեցին»  
 (Անի ժԳ Դ I 1): «Նգովել եղիցի» (Անի ժԲ Դ I 3): «Մարիսարսն  
 Գրիգոր շնորհել և հաստատեալ էր» (Անի ՈԶԸ Դ I 17): Որ զգրելս  
 (<գրեալ) մեր խափանիցէ» (Անի ժԳ Դ I 19): «Մարդն էն նգո-  
 վել եղիցի» (Անի ժԳ Դ I 28): «Նկել (<եկեալ) բնակեցա ընդ հո-  
 վանեւ» (Սանահին ՈՄԴ ԿՂՍ 183): «Նկել (<եկեալ) կատարեցի...  
 զհրամանելս (<հրամանեալ) ինձ» (Անի ՉՂԱ Դ I 44): «Եւ վանքն  
 Բելսենց կոչեցել» (Անի ՈԿԴ Դ I 63): «Ածաին շնորհարն լցել  
 (<լցեալ)... զմուղային ուսել» (<ուսեալ) (Բնունիս ԶԶ Դ II 116):  
 «Կիսարեայ փոխել (<փոխեալ) աշխարհե..., քաղել (<քաղեալ)  
 մեզ դառն կսկիծ» (նա): «Ծնողաց մերոց՝ հեծել (<հեծեալ—աս-  
 պետ) Աւագին, Գալաթիին» (Գլոյարաս ԶԼԳ Դ III 45): «Որ ի  
 սմա նկարել (<նկարեալ) կան տիպ նշանաց» (Հերհեր ԶՄԹ Դ III  
 60): «Ինձ բաժին էր հասել» (Քանաս ԶԶԵ Դ III 80): «Այս նը-  
 շան կանգել (<կանգեալ) և արձան ւածել (<ւածեալ) արեամբ  
 անմահ թագաւորին» (Հորբաղեղ ԶԽ Դ III 165): «Հաճո եղել  
 (<եղեալ) այլազգի դարացն նկողաց» (Հովհաննավանք ՈՂԹ  
 ԿՂԶ 103): «Կացել (<կացեալ) ընդ հովանեւ սր նշանիս» (Հաղ-  
 բաս ԶԻԷ ԿՂԶԲ 158): «Գանձով գնել էի (Հաղբաս ՈՂԸ ԿՂԶԲ 177):  
 «Կացել (<կացեալ) իմ ամս բաղում» (նա ՈԶ 180): «Մարդն այն  
 նգովել եղիցի..., երեւել և տատանել լիցի» (նա ՈԶԲ 251): «Որ  
 զէղել (<եղեալ) ուխտս մեր խափանէ» (Սանահին ժԳ ԿՂՍ 125):  
 «Որ շինել էր արեն մերձաւոր վաղն իմ» (Սանահին ԶԽ ԿՂՍ 139):  
 «Ի փառաց որդոյն որոշել է (<որոշեալ)» (Սանահին ՇԺ ԿՂՍ  
 148): «Ահրենել ած (<աւրհնեալ)» (նա ՆԿ 181): «Սահմադին  
 կոչեցել» (<կոչեցեալ) (Արճեշ ԶԽ ՍԱՐ 269): «Եւ հասել (<հասե-  
 ալ) յայիս» (ն. Վարազ ԶԺ ՄՎ): «Այս զիր յիշատակի սահմանե-  
 լին (<սահմանեալ-ին) երիտասարդի» (Մակարավանք ժԳ ՄՎ):  
 «Որ բաղում որոգայթեց նեղել (<նեղեալ) հասել (<հասեալ) հը-  
 բաման արարչին, անկել (<անկեալ) յերիվարէն, և ի կենցաղոյս»  
 (Մակարավանք ժԳ ՄՎ): Ըստ հրամանին այ բերել եղա (<բերե-  
 ալ) ի տունս» (Մակարավանք ժԳ ՄՎ): «Ես՝ վարդարուս սնել  
 (<սնեալ) ի սր ուխտս» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 59): «Ես՝  
 սնել ի սր ուխտս (նա ժԳ 45): «Որ էր նմանել (<նմանեալ)  
 սր Առաքելոցն» (Առաքելոց ԶԺԱ ՄՎ): «Կատարողքն արհնել եղի-  
 ցին» (Կապաավանք ժԳ ՍՍ): «Ես՝ Սարգիս մեղուցել (<մեղու-  
 ցեալ) բահանայ կանգնեցի զխալս» (Ազարակ ԶԺԷ ՄՎ): «Ես՝



մեղուցն յ Ահարոն երէց... ետու արդիւնս» (Երեան ԶԿԳ ԿՂԵ 173): «Անարժան մեղուցելս նորագեցի զկեղեցիս» (Աստղածար Գ՛ԼԵ ՍՍ): «Մէք՝ մեղուցն ծառայքս» (Հավուց թառ ժԳ Հով 26): «Եւ բնակչաց սորա րախաննել (<րախաննել) դիս» (Լմբատ ժԲ ՄՎ): «Ի յոյսն ամենեցուն ի Քս ապալինել» (<ապալինել) (Մարինէ ԶԶԲ ՄՎ): «Յուսացել (<յուսացել) յողորմութիւն յայ» (նա ժԳ ՄՎ): «Անկել (<անկել) կան առ ոտս սորա» (Սաղմոսափանք ԶԳ ՄՎ), «Կանգնումն խախանել (<խախանել) էկեղեցոյս (Ուշի ԶԺԳ ՄՎ): «Որ էր կարգել (<կարգել) հրամանաւ Զարարէի» (Տեղեր ժԳ ՄՎ): «Շինեցի զսա ի հիմանէ, սկսել (<սկսել) յուսով անմահին այ» (Խորակերտ ԶԱ Հով նԱ 12): «Հանել (<հանել) լիցի այդպիսին» (Գեղարդ ԶԼԲ Հով ԽԱՂ III 24): «Եւ զարնել (<զարնել) զաւակս նորա» (Գեղարդ ԶԼԲ Հով ԽԱՂ III 14): «Եւ արհնել հող զնայ մի ծածկեացէ» (Հոփոսիմէ ԶԽԵ ՄՎ): «Որ խափանէ, նզովելէ» (<նզովել) (Օշական ՈՂ ՄՎ): «Նզովել եղիցի» (Փարպի ՈԽ ՄՎ): «Ու մին տարի անցել (<անցել) լինի, այլ յետ չհասնի» (Երեան ԶԺԳ ԿՂԵ 179): «Եւ զհաստաւել դիրս մեր խափանել ջանա» (Ավան ԶԼԳ ՄՎ): «Տղա աւրաւք մեռել (<մեռել) եւ սուք անմիթար էթող» (Վարդենիկ ԶԼԵ ՄՎ): Գոյականաբար (ածականաբար) զործածված անցյալ զերբայում կան նրա հոգնակի՝ թվում. «էտվի ի սբ Առաքելիս» (<առաքելի-ք) (Անի Շէ Գ I 13): «Որք երկրպագէք զմեղուցելիս (<մեղուցելի-ք) յիշեցէք» (Մարց ԶԼԳ Հով 26 72): «Միարանեցա ի սբ Առաքելիս» (Առաքելոց ժԳ ՄՎ): «Աղբէացելս (<եղբայրացելիս) եւ Ազատարի միարանեցար Ածածնիս» (Շխմուրատ ժԳ ՄՎ): «Ի ճշմարիտ սիրոյն Քի յարդուելիք (<յարդուելիք) եւ ի սէր արարչական վստահացելիք (<վստահացելիք) (Սաղմոսափանք ՈԿԳ ՄՎ): «Ի սէրն Քի յուսով ապալինելիս (<ապալինելիք) (նա ժԳ ՄՎ): «Յիշեցէք աշխատելիք (<աշխատելիք) ի սմա (Ուշի ԶԺԳ ՄՎ): «Տղա եղելիք (<եղելիք) յայսմ աշխարհի» (Խայֆալու ժԳ)<sup>67</sup>:

Այս թվարկումից ակներև է դառնում, որ ժ—ժԳ դարերի վիճական արձանագրություններում հին հայերենի անցյալ զերբայի վերջավորության հնչյունափոխված ձևերը ավելի հաճախ են հանդիպում, քան կանոնավոր եւլ հանգոզները, որ ապացույց է, թե ավելի շրջանում նրանցում եա>ե պատմական հնչյունափո-

67 «Բանասէր», Փարիզ, 1901, էջ 137:



3. Եւ > Ե հնչյունափոխությունը դիտվում է գրաբարի ու-Եւ կամ Եւն հոլովման պատկանող, փնչպես և մի շարք անեզական բաների հոգնակի թվի սեռ. արական, բացառական հոլովածնվերում, որտեղ Եաց վերածվում է եց-ի, Եան-ը՝ Են-ի: Բազմաթիվ օրինակներից նշում ենք կարևորները տարբեր ժամանակների վիժական բնագրերից. «Շինեցի զանգակատունս ի հալալ արդենց (<արդեանց) իմոց» (Անի ՇԻ Դ I 43): «Եւ արդեմք (<արդեամք) բազմաք վերագրել պարոնացն» (Ն. Գեորգի ԶԽ ՄՎ): «Ի մեր հալալ արդենց» (Յանն ՈՂԳ ՄՎ): «Տվի զծախս մատոնիս յիմ հալալ արդենց» (Թանատ ԺԳ Դ III 73), «Շինեցար մեր հալալ արդեմք» (Գոմուր ԶԺԱ Դ III 192), «Ի հալալ արդեմք» (Առաքելոց ԶԺԶ ՄՎ), «Աւղեական եղի արդեմք» (Մակարավանք ԺԳ ՄՎ): «Մարագն հետ բաղենցն» (<բաղանեաց) (Անի ՈԿԴ Դ I 63): «Ես՝ Տարսայիճս գիր ավի հայրենեց» (<հայրենեաց) (Հալիձոր ԶԺԴ Դ II 52), «Մեր հաւրենեցն ի Խստորալէզ» (Վերնաշին ԺԴ Դ III 97), «Տվար... ի հայրենեցն մերոց զգեղն Գառնո» (Յաղացքար Զ Դ III 149), «Եւ հայրենեցն փոխան երես զՀարաշկարերդ» (Ամաղու ՈՂ Դ III 211), «Այս տուրքն ոչ յիմ հաւր հայրենեցն» (Սանահին ՈԿԴ ԿՂՍ 121), «Յիմ հէրենեցն» (Բագնայր ԶԺ ՍԱՐ 188): «Ես՝ Սահմադին որդի պարոն Աւետեց» (<Աւետիք> Աւետեաց) (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 79), «Աւետեց տանն... Ժամհարն է» (Սանահին ՈԻ ԿՂՍ 116), «Ի տանի Աւետեց Ածածնին Խոուն» (Նա ԺԴ 149), «Ամուսին եղրար իմո Աւետեց» (Նա ԺԴ 168), «Որդի պարոն Աւետեց» (Նա), «Պարոն Սէնուպ Սահմադինիս Աւետեց որդոյս» (Մրեն ԶԼէ Օրճ Մ 6), «Տվար :Բ: Ժամ Աւետեցն տանին» (Մշկավանք ԶԺԲ ՄՎ), «Ես՝ Սահմադինս պարոն Աւետեց զԵրեւան գնեցի» (Երևան ԶԺԳ ԿՂՆ 189): «Ըստ նախնեց (<նախնեաց) իմոց» (Սանահին ԶԻ ԿՂՍ 118), «Եւ այլ նախնեցն մերոց» (Հովհաննավանք ԶԿ ԿՂԶ 115), «Մեր նախնեց հոգոյն համար ազատեցար» (Գառնի ԶԽ)<sup>70</sup>: «Եդար ի վերա եկեղեցեց (<եկեղեցեաց) հոց» (Սաղմոսավանք ԶԲ ՄՎ), «Զամեն եկեղեցեց պատարագն մեզ առնեն» (Հաղբատ ԶԻԹ ԿՂԶԲ 198), «Զի նա եղի փրկութի եկեղեցեց» (Դիլիշան Զ)<sup>71</sup>: «...ի վերա այլազգեց» (<այլազգիք> այլազգեաց) (Կարս ՈԶԳ ՍԱՐ 103), «Եւ ի քրիստոնէից և այլազգեց եղեն բարողք» (Առաքելոց ԶԺԶ ՄՎ), «Ի քրիս-

70 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի, III, էջ 45:

71 Ս. Ավագյան, Նորահայտ վիժական արձանագրություն Ումեկյան տոհմի մասին, «Բաների Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 208:



տանկից կամ յայլագրեց» (Գառնի ԶԿԴ)<sup>72</sup>: «Հայմալ թողար գէղեց  
(<այգեաց) գինս եւ խաղողի խալէն» (Մրեն ԶԼէ Օրծ Մ 5), «Թո-  
ղի զՓարպոս այգեց շարիատն» (Փարպի ժԳ ՄՎ), «Թողի զԱւա-  
նայ գայգեց շարիատն» (Ավան ԶԼԶ ՄՎ): «Զարհուրեցա ի սպառ-  
նալեց» (<սպառնալեաց) (Ն. վարազ ԶԺ ՄՎ): «Ե նաւակատեց  
(<նաւակաւիւմ-նաւակատեաց) սր Տիրամարն մատուցեն» (Տե-  
ղեր ժԳ ՄՎ): «Տէլի գիմ ձիքենեց (<ձիքենեաց) այդին» (Հալուց  
Սառ ժԳ Հով ՀԲ 28): «Ենդրեցէր ի Քէ իմ որդեցն» (<որդուց,  
որդեաց) (Ամաղու ՈՂ Դ III 211), «Որդեց մեծին Սարգսի» (Սա-  
նահին ՈՄԴ ԿՂՍ 183), «Իւր որդեցն արեւշատութեն» (Ղաշաղան  
ՆՁ ՄՎ), «Իւր ամէն որդեցն» (Մակարավանք ժԳ ՄՎ), «Իւրեանց  
որդեց արեւշատութեան» (Թալին Քր. վանք 3Ղ ՄՎ), «յորդեցէ  
յորդիք ազատ ի բաժէն» (Շիրակավան ՈՂէ ՍԱԲ 170), «Վս արեւ-  
շատութն որդեց իմոց» (Մրեն ԶԻԲ Օրծ Մ 6), «Որդեց մեծին  
Սարգսի» (Հաղարծին ՈԿԲ ՄՎ), «Գնեցի յԱրտաւազա յիւր ամէն  
որդեցն զայգին» (Մակարավանք ԶԹ ՄՎ), «Եւ որդեց իմոց» (Կա-  
րավաձոր ՈԿԷ, Աթարբեկյան Զ ՍԲ), «Ետու ի կարեց (<կարիւմ>  
կարեաց) ժամու :Մ: դեհեկան» (Բարձրաբաշ ՈՂԸ ՄՎ):

Նույն օրինաչափությամբ եւս հոլովման պատկանող մի շարք  
բառերի սևո. արական հոլովաձևերում վերջավորությունը հըն-  
չյունափոխվում է են-ի: Այս կարգի բառերի մեջ եւս >ե հնչյունա-  
փոխության փաստեր են տալիս հայերեն հնագույն վիմական  
բնագրերը. օրինակ, Բազարանի տաճարի 631 թ. շինարարական  
արձանագրության մեջ ամիս բառի սևոական հոլովաձևը պարզ  
փորագրված է ամսեն (<ամսեան) «...կատարեաց սուրբ եկե-  
ղեցիս Աննայ Բաին ամուսին տրէ ամսեն ի քսան...» ((Օրծ ՈՒ  
393)<sup>73</sup>: Նույնը ժամանակների այլ վիմագրերում ամիս >ամսեան  
կամ ամսոյն կանոնավոր է, օրինակ, Բազավանի 639 թ. շինա-

72 Բ. Աստիկյան, Փաղարեններ..., Բ, էջ 100:

73 Ամիս բառը ծագել է հնթ. mens բառից և հին հայերենում հոլովվել է կա-  
նոնափոր ո բնով՝ ամսոյ, ամսով, ամսոց, սակայն հին ժառանգագրության մեջ բա-  
ռիս ներդրչական հոլովաձևեր մեծ մասամբ վերջաված է յամսեան (ի նախորդվ արա-  
կան՝ յամսեան). որ ազդեցույց է, մե ամիս կրկնակի հոլովում է ունեցել նախա-  
պեւ և յամսեան ներդրչականը եւս հոլովման միակ մնացորդն է: Այսպիսով, Բա-  
զարանի տաճարի է դարձի բնագրում ամսեանոված է բառիս եւս զուգորդի հոլով-  
ման սևոական հոլովաձևը՝ ամսեն<ամսեան: Ավելի մանրամասն տե՛ս Ա. Մեյն,  
Հայերենի մեջ «յամսեան» ներդրչականը, «Բանասեր», Փարիզ, 1899, էջ 144—  
146, Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխառներ և նրա ծագումը, Երևան,  
1959, էջ 125, 272:



բարական բնադրում՝ «...հրոտից ամսոյն..., կամ «ամսեանն նա-  
 տասարդի, որ արքսան էր» (Օրծ ԻԴ 37): նշում ենք ժ—ժԴ դարե-  
 րի վիժագրերում եղած վկայութիւնները. «Պատարագողք մարմնոյ  
 եւ արեանն (<արեան) Քի (Անի ՈԿԴ Դ I 63), «Որ շինել էր  
 արեն մերձաւոր վազն իմ» (Սանահին ժԳ ԿՂՍ 145), «Պարտական  
 լիցի սպանման արեն որդոյ ամ» (ԶԼԳ Օրծ Մ 6), «Շինեցի ի մեր  
 հայրենի վանքս Հաղարծին ժամատուն վիմարդեն» (<վիմարդեան)  
 (Հաղարծին ՈԿԲ ՄՎ): «Յիշեցէք զամենեսեն» (<զամենեսեան)  
 (Կողք Ոն ՄՎ), «Ջամենեսեն առհասարակ յիշեցէք» (Խնձորուտ  
 Զ ՄՎ): «Տուար հողոյն զալրստեն (<զալրստեան) արն» (Սանա-  
 հին ժԳ ԿՂՍ 164), «Հաստատեցաւ ի տարին :ն: ժամ երկրորդ  
 զալրստեն» (Մշկավանք ԶԺԲ ՄՎ), «Քս ըզիշողքն յիշէ յիրում  
 զալրստեն» (Օձուն ԶԺԵ ՄՎ), «Հողոյն զալրստեն շարաթ արն»  
 (Սաղմոսավանք ժԳ ՄՎ), «Ակն ունելով զալրստեն սորա (Սաղ-  
 մոսավանք ԶԳ ՄՎ), «Ի տանի զալրստեն սր հողոյն» (Ն. Գեաթիկ  
 ժԳ ՄՎ), «Հինգշարաթ ար հողոյն զալրստեն» (Քանաա ԶԾԶ Դ  
 III 76): «Արժանի հանգստեն (<հանգստեան) սորա» (Ն. Վարագ  
 ՈԶ ՄՎ), «Տեղի հանգստեն հար մերո Մարտիրոսի» (Խնձորուտ Զ  
 ՄՎ), «Վս հանկրստեն պատրոնին մերո Շահնշահի» (Անի ժԲ Դ  
 I 31):

4. Այս փոփոխութիւնն են ենթարկում նաև մի շարք անեզա-  
 կան աշխարհագրական անուններ և տոհմանուններ սեռ. տր. բա-  
 ցառական հոլովածներում. «Գաւոռխտենեց (<Գաւոռխտենի> Գաւոռ-  
 խտենեաց) գեղին կէսն...: Մշակունեց (<Մշակունի> Մշակունեաց)  
 կէսն» (Անի ՈԿԴ Դ I 63): «Ջար Հայրապետ Սիւնեց (<Սիւնեաց)  
 էպիսկոպոս» (Տաթև ԶԺԸ Դ II 29), «Ես՝ Սոփի... կին Սմայատա-  
 որդի Աշոտի Սիւնեց իշխանի» (Գնդեվանք 32 Դ III 13), «Ես՝ սր  
 Յովանէս Աւրպել Սիւնեց արհէպիսկոպոս» (Արենի ԶԶ Դ III 29),  
 «Ի հայրապետութի սր Ստեփաննոսի Սիւնեց աթոռակալի» (Հեր-  
 ճեր ԶեԶ Դ III 68), «Տր Սիւնեց էպիսկոպոս Աւրպելի եւ միարանքս  
 հաուն (Յաղացքար ժԳ Դ III 150), «մեծի մեարապալիտին Սիւ-  
 նեց Ստեփաննոսի» (Ամաղու ԶԾԲ Դ III 233), «Որ իշխեցող էի  
 Սիւնեց նահանգիս» (Ամաղու ԶԻԴ Դ III 235): «... տազերէցն  
 Տփլսեց (<Տփլսեաց<Տփլսի) Տերտերն եւ ամուսին իւր նազմե-  
 լիք» (Հաղրատ ԶԼԵ ԿՂԸԲ 205): «Ի տանէ Աշակունեց (<Աշակու-  
 նեաց)» (Սանահին ժԱ ԿՂՍ 97): «Յամար ձորով՝ ճինարին հա-  
 տովն, Գոմցեց (<գոմացի> գոմացեաց) ձորովն» (Հառիճ ՈՄ



ՄՎ), «Եւ յեղեգէց (<Եղեգիւ> եղեգեաց) ձորին զԱրատէսն իւր  
գեղովն» (Ամադու Զեէ Դ III 216): «Որ եհաս սասանումն աշ-  
խարհիս մերոյ անարէն Խորագմեցն» (<Խորագմեաց) (Հաղ-  
բաս ՈԶԲ ԿՂՀԲ 250):

5. Եա>Ե հնչյունափոխությունը տեղի է ունենում հին հա-  
յերենի հավաքական տոհմանունների թեր հոլովաձևերում, որի  
հետևանքով առաջանում են հայերենի ազգանունները: Ինչպես  
հայտնի է, հին հայերենում տոհմանունները կամ ազգանունները  
կազմվում էին տոհմավաղի անձնանվանը եան վերջածանցն ա-  
վելացնելով՝ Արեղ-եան, Մամիկոն-եան, Սուխաս-եան և այլն:  
Նույն վերջածանցը է հոգնակերտով կազմում էր տոհմանվան կամ  
ազգանվան հավաքականը՝ Արեղ-եանք, Յովսէփ-եանք, Սուխաս-  
եանք, որից էլ այդ ազգանունների հոգնակի սեռական հոլովա-  
ձևը՝ Արեղ-եանց, Մամիկոն-եանց, Սուխաս-եանց: Միջին դարե-  
րի մատենագրության մեջ այս կարգի տոհմանունները հանդի-  
պում են հետևյալ ձևերով՝ եան—եանք—եանց՝ Արեղ-եան, Արեղ-  
եանք, Արեղ-եանց, ըստ որում, նրանցում եա երկբարբառի հըն-  
չյունափոխությունը Ե պարզ ձայնավորի դիտվում էր միայն շեշ-  
տակորույս վիճակում, իսկ շեշտակիր վանկում եա-ն կանոնա-  
վորապես անփոփոխ էր մնում: Իբրև օրինակ կարելի է նշել հնա-  
գույն շինարարական արձանագրությունների փաստերը. Արուճի  
տաճարի 668 թ. բնագրում պարզ կարդացվում է. «Հիմնարկեցաւ  
սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի»: Մտտավորա-  
պես նույն տարիներին փորագրված Արտավազդ Կամսարականի  
տապանագրում ևս տոհմանունը վկայված է եա>Ե փոփոխու-  
թյամբ՝ «Եւ ամուսին Շուշանա Մամիկոնեանի» (Օրծ ՍԴ 402, 412):

Ժ—ԺԳ դարերի վիճական բնագրերում այս կարգի հավա-  
քական տոհմանունների մեջ տեղի է ունենում օրինաչափ եա>Ե  
հնչյունափոխություն, անկախ շեշտի ազդեցությունից, բոլոր  
դիրքերում, որի հետևանքով եանք, եանց հավաքական կազմող  
վերջածանցները դառնում են ենք, ենց՝ Հոն-եանք>Հոն-եանց, Սա-  
լուք-եանք>Սալու-եանց, Ճոու-եանք>Ճոու-եանց և այլն:

Վիճական արձանագրություններում ենք, ենց ածանցներով  
հավաքական տոհմանուններ են կազմվում ոչ միայն տոհմավազ-  
ների կամ այլոց անձնանուններից, այլ հաճախ նաև հասարակ  
անուններից, այս դեպքում արտահայտելով տվյալ անհատի մեր-  
ձավորների, ազգականների ամբողջությունը, հավաքականությու-  
նը: Օրինակ, Հաղբատի հուշարձանախմբի բնագրերից մեկում ու-



նենք. «Բիրենց հայրենաբն», որ անշուշտ առաջանում է՝ **բոյր** > **բիր**-ենց-**բոյր**, **բոյրենց**, տվյալ դեպքում **բոյրենց** պատկանող սեփականություն, ունեցվածք: Հերհերի արձանագրության մեջ կարգացվում է. «հողն վարդապետենց առաք», որ պետք է հասկանալ վարդապետենց տոհմից գնվել է ինչ-որ հողամաս, ըստ այդմ, վարդապետ-ենց կամ ենց նշանակում է վարդապետի տոհմը, գերդաստանը, ազգականները հավաքական իմաստով: Կամ Բագնայրի տաճարի ԺԳ դարի մի նվիրագրում. «ես՝ Առիմս կառու զիմ տուն ի սբ ուխտս, որ ընդդէմ Քահանենց եկեղեցոյն» (ՍԱՐ 182), որ պետք է հասկանալ Քահանենց < Բահանայ-եանց > Բահանայենց > Բահանենց > Բահանենց:

Ենք, ենց ածանցներով տոհմանուններ կամ ընդհանրապես հավաքական անուններ անծանոթ են հին գրական հայերենին ոչ միայն դասական շրջանում, այլև հետագա դարերի գրաբար մատենագրության մեջ: Ն. Ակինյանը այս ածանցներով հավաքական անունները հատուկ է համարում միայն միջին հայերենին և ժողովրդական լեզվին, այսինքն այն լեզուներին, որոնցում հին հայերենի եա երկբարբառը օրինաչափորեն հնչյունափոխվում է ե պարզ ձայնավորի: Ավելի ուշ շրջանի պատմագիտական երկերում հանդիպում են ենք, ենց ածանցներով մի քանի անուններ՝ Ստեփանոս Երկարենց (1321 թ.) ներսես Պալիենց, Յովհ. Քերովբենց, Մերենց, որոնք հավանաբար ներթափանցված են տեղական, ժողովրդական խոսվածքներից<sup>74</sup>, վիմական բնագրերում ենք, ենց ածանցներով հավաքականները ավելի լայն տարածում ունեն, քան գրաբարյան անհնչյունափոխ եանք, եանց ածանցներով կազմվածները:

Մեջ ենք բերում այդ կազմություններից մի քանիսը տարբեր ժամանակների և հուշարձանների վիմական բնագրերից. «ես՝ Սարգիս Միլենց (<Միլեանց) բաժրարս» (Անի ԺԲ Դ I 3): «Զայն տունն, որ Սեւբենց (<Սեւիթ>Սեւբենց) հմնակից է» (Բագնայր ՈԶԲ ՍԱՐ 184): «Ետու զիմ գանձագին զայդին ի Բազրանի, որ կոչի Տափկենց» (<տափակ, տափո՞ւկ—Տափակենց) (Բագնայր ԺԳ ՍԱՐ 182): «ես՝ Մխիթար Խարենց» (<Խարեանց) (Անի ԺԳ Դ I 4): «ես՝ Մխիթար Շերասցի որդի Զուսիմի Սալուբենց» (Անի

74 Ն. Ակինյան, Մականունակերտ ածանցներ հայերենի մեջ, «Մատենագրական հետազոտություններ», հատ. 6, Վրենա, 1953, 421, 2. Անուշյան, Աննն. բառարան, Բ, էջ 569:



ՉԻ Գ 1 43): «Մեծ արա Բեխենցն» (Անի ՈԻԹ Գ 1 47): «Որ ի Յուշապենց դոան» (Անի ՉԲ Գ 1 52): «Ես Տիգրան որդի Սմբատա-  
 բենց, յազգէն Հոնենց» (Անի ՈԿԳ Գ 1 63): «Պապենց խանաբարն»  
 (Անի ՈԿԳ Գ 1 62), «Հոփսիսիմենց տաւնին (Ամաղու Չե Գ III  
 220): «Ի տաւնի սրբոց Հոփսիսիմենցին» (Ն. Վարազ ԺԳ ՄՎ), «Ի  
 տաւնի Հոփսիսիմենց» (Ջինջիրլու ԺԳ Հով ՏՄ 17): «ԴՍր Սիսնի տա-  
 կի հողն Վարդապետենց առաք» (Հերհեր ՉԿէ Գ III 56): «Ես՝  
 Սմայատ որդի կիպարտի, յազգէ Աւրպէլենց» (Հերհեր ՉԿՁ Գ III  
 55): «Տվար զԿկուարարին հողն Հովվենց (<հովվենց) հողովն»  
 (Թանատ ԺԳ Գ III 78): «Տվար զՄազմանենց եւ զԱւանշենց էզին»  
 (Թանատ ՉՂէ Գ III 81): «զՋանենենց այգին, գՊարենց այգա-  
 տեզին կէսն տվար» (Վերնաշեն 22 Գ III 97): «Տվի զՎախրան-  
 կենց այգին» (Նա ՉՁԸ Գ III 98): «Գնեցի Եշորարոյ զՇատենց եւ  
 զՄարգարտա այգին» (Ամաղու ՉԿԱ Գ III 239): «Այգի զԱխրա-  
 մաբենց բաժինն» (Ամաղու ԺԳ Գ III 248): «Եւ զՔարկենց փոսն»  
 (Հովհաննավանք ՉԼԲ ԿՂՀ 91): «Ես՝ Սարգիս Խլենց» (Նա ԺԳ  
 103): «զԴաւթի իրենց հայրենաւորն... քնծանցաւ ի գրատունս»  
 (Հաղբատ ՉԻԹ ԿՂՀԲ 196): «Յազգէ Մամիկոնենց» (Նա ՉԻԹ 197),  
 «Թոսն Համազասպենց» (Սանահին ՈԿԳ ԿՂՄ 121): «Որդի չնո-  
 լենց Պողոսոս» (Յձուն ԺԳ ՄՎ): «Այգին, որ ք Կողբ է, որ Պառա-  
 տենի կոչի» (Արշո առիճ ՉԼԸ)<sup>75</sup>:

Կնց, ենք ածանցները արմատական բառի ո (օ) ձայնավորի  
 ազդեցութեամբ փոխակերպվում են ոնք, ոնց-ի, որոնցով նույն-  
 պէս վիճադրերում վկայված են բաղմաթիվ տոհմանուններ. Գոր-  
 ոսնոնք (Սանահին ՈԿԳ ԿՂՄ 122), Աշոտոնց (Բազնայր ՈԿ ՍԱԲ  
 184), Թորոսոնց (Նա ԺԳ 182), Գոգոնց (Խժկոնք ՈՀ ՍԱԲ 210),  
 Փշրոնց (Հաղարծին ԺԳ ՄՎ), Տարոգոնց (Սաղմոսավանք ԺԳ  
 ՄՎ), Գոնրոնց (Հավուց Թառ ԺԳ Հով ՀԹ 26), Սապոնոնց (Հայ-  
 բավանք ՈՀԱ ՍԲ) և այլն: Մատենադրութեան մեջ ոնք, ոնց ա-  
 ծանցով հատուկենա տոհմանուններ են հիշատակված ուշ շրջա-  
 նից՝ Քաջկոնք (1310 թ.), Մոգոնց (1369), որոնք անտարակույս  
 կազմված են բարբառային արտասանութեան օրինաչափութուն-  
 ներով:

6. Հին հայերենի ին, ուրիւն վերջածանց ունեցող մի շարք  
 բառերի եզակի սեռ. արական հոլովածներում: Այս կարգի բառե-  
 րում եա > Ե փոփոխութեանը հին հայերենում տեղի է ունենում

<sup>75</sup> Ալիշան, Նիբալ, էջ 123:



միայն բառերի աճման ժամանակ, շեշտակորույս վիճակում. զարուրիւն — զարուրեան > ի զարուրենէ, արիւն — արեան > յարենէ, Բերմնջիւն — Բերմնջեան > ի Բերմնջենէ և այլն, շեշտակիր վիճակում սովորաբար կա երկրաբար մնում էր անփոփոխ: Վիճակաւ բնագրերում իւն, ուրիւն ածանցներով բառերի թեր հարստացման կա երկրաբար հաճախ հնչյունափոխված ենք տեսնում նաև շեշտակիր վանկում, իրազույթում, որ լայնորեն դիտվում է արդի բարբառներից մեծ մասում և հավանաբար վիճակագրության մեջ կարող էր արտահայտվել ժամանակի խոսակցական լեզվի ազդեցությամբ: Հին ձևագրերում տվյալ հնչյունափոխության նախնազույն օրինակը գտնում ենք 978 թ. Տառ-Կլարջեթում ընդօրինակված մեղ ծանոթ վրացերեն ձևագրի հայերեն հիշատակագրություններում: Այստեղ ժամանակի կատարյալ գրչությանը գրված է՝ ողորմութիւն և ... ձէթ ողորմութեն (<ողորմութեան): Նշում ենք վիճակաւ բնագրերում պահպանված վկայությունները. «Վասն փրկութեն (<փրկութեան) հոգոց մերոց և յերկարկենդանութեն պարոնի մեր Շահնշահի» (Օձուն ՈՂԳ ՄՎ), «Ի փրկութեն հոգոց մերոց» (Օձուն ՈՂԳ ՄՎ), «...վասն յերկարկենդանութեն ամիրսպասաւարին Շահնշահի» (Օձուն ՈՂԷ ՄՎ): «Նշ քվականութեն հայոց» (Ղաշաղան ՆՇ ՄՎ): «...Իր որդեցն արեւշատութեն» (Նա), «...Ի բարեխաւսութեն ինձ» (Ազարակ ԶԺԷ ՄՎ), «ՆՂԹ քվականութենս հաոց ևս՝ Կորիկէ թագվորս» (Վարդարուր ՆՂԹ ՄՄ): «Մեղաց քոզութեն և արեւշատութեն իմոյ» (Նա), «Ի քվականութես հայոց ի ՈՂԸ ևս՝ Ումեկս շինեցի դմատուն» (Կուրթան ՈՂԸ ՄՎ): «Աշխարհայկալութենն այլզանաց» (Ուշի ԶԺԳ ՄՎ): «Արհիպիսկոպոսութեն Համագասպայ, աշխարհակալութեն և զարապետութեն Սաթունին, ի քաղաւորութեն Գաթի, ևս՝ Ստեփանոս որդի Յահանա գնեցի զեռնակերտ» (Խորակերտ ԶԱ Հով ՆԱ 12): «Ի տէրութեն բարէպաշտ ամասէր թագադրին վրաց Աւագին» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 13): «Ի փարշահութենն Արղուն խանին, ի քաղաւորութենն Գէմէտրիի, ի պարունութենն սպասաւար Խարկրծեալին Լորարն Իվանէի, որդոյն մեծին Շահնշահի» (Արուճ ԶԼԳ ՄՎ), «Ի քաղաւորութենն Ըռուղուզանա» (Կարս ՈՂԳ Օրճ ՈՒՏ 471): «Որչափ եկեղեցիքս ի շինութեն էն» (Սանահին ԺԱ գ. ԿՂՍ 97): «Նս՝ Թորոս կանկնեցի դիաւշս ի բարեխաւսութեն» (Սրվեղի վանք ԺԲ ՄՎ): «Ձկնի յայտնութեն» (<յայտնութեան) (Ն. Գետիկ ԶԽԲ ՄՎ):

Կարելի էր մտածել, թե թվարկված օրինակներում առկա է



ոչ թե եա>ե հնչյունափոխություն, այլ եան վերջավորության հա-  
պավում հնադրության կանոններին համապատասխան, սակայն  
մեջ բերված վկայությունները ամենուրեք պարզ փորագրված են  
առանց հապավման նշանի՝ պատվի, ուտի և հապավման հնարա-  
վորությունը բացառվում է: Բացի գրանից, ին, ուրիւն հանգոզ  
բառերի սեռական-արական հոլովածները սովորաբար հապավ-  
վում են քեան վերջավորության քե գրերից վերև դժիկ փորագրե-  
լով (արեւշատութեան-արեւշատութե, յիշխանութեան-յիշխանութե,  
բողութեան-բողութե և այլն), իսկ մեր առկոչած դեպքերում նույն  
քեան-ը արտահայտված է քեն գրերով, այն էլ առանց դժիկի  
(բողութեն, պարոնութենն): Մյուս կողմից, Խորակերտի բնագրի  
նախաբանում հիշյալ հնչյունափոխված ձևերի հետ փորագրված է  
նաև կանոնավոր՝ «...ի հայրապետութե...», անկցին հաւատոց և  
Բառնութենէ», որ նույնպես ապացույց է քեն (<քեան) արտա-  
սանության:

7. եա>ե փոփոխությունը տեղի է ունենում իւր դերանվան  
եզակի և հոգնակի թեք հոլովածներում: Միջին հայերենի գրական  
երկերում այս երևույթը ավելի լայն տարածում ունի, և հնչյունա-  
փոխված ձևերը գիտակցվում են իրրև սկզբնաձևեր: Վիմական բը-  
նագրերում հնչյունափոխված ձևերի վկայությունները հազվադեպ  
են, որ մտածել է տալիս, թե իրողությունը դեռևս տիրապետող օ-  
րինաչափության շէր վերածվել: Մյուս կողմից, հնարավոր է նաև  
կարծել, որ վկայված անհնչյունափոխ ձևերը գալիս են ոչ թե կեն-  
դանի լեզվում այդպիսի արտասանությունից, այլ - գրական ճա-  
նապարհով, գրաբարի ուղղագրության հետևություններ:

Մեջ ենք բերում վիմագրերում եզած վկայությունները. «Եւ  
աննցի, որ իւրենն (<իւրեան) մորթելիք գնէ, բաժն ազատ է» (Ա-  
նի 1060 թ. Գ I 37), «Տէրաէրն և ամուսին իւր նազմելիք հանգերձ  
որդով իւրենց (<իւրեանց) ետուն ընծայ» (Հաղբատ ԶԼԷ ԿՂԶԹ  
205), «Որչափ կենդանի են իւրենց ծնողացն առնեն» (Հաղբարժին  
ԺԳ ՄՎ), «Ետուն սր նշանս իրենց հոգս պաշարն» (Հոռոմայր  
ԶԼԹ)<sup>76</sup>, «Ետուն զիրենց պաշար» (նա ԶԼԷ), «Վս պարոն Շահանշի  
և Խուանդդին և իրենց որդուն Զարարի» (Անի ԶԾԹ Գ I 64),  
«Եղամաղանցն իրենց ամէն հողով և ջրով» (Հովհաննավանք ԶԼԹ  
ԿՂԶ 91), «Մէկն ի վերա կուղպակին է և մէկն իւրենն գիմաց»  
(Հոռոմոս ԺԳ ՍԱԲ 155), «Եղանձայհանքն ու զՋողբայգոմն իրենց

<sup>76</sup> Ս. Տեր-Ավետիսյանի անտիպ հավաքածու:



հանդայվարարն» (նտ ԶԶԵ ՍԱՐ 158), «Որչափ կենդանի է ծնողացն անենն եւ սպայ իւրենն» (Հոռոմայր ՈՍ ՄՎ), «Տվին զիւրենց հոգո բաժին» (Հայրավանք ԺԳ ՍԲ), «Իւրենց հողովն ու ջրբովն» (Բազնայր ԶԺԱ ՍԱՐ 188):

Տ. Եա>Ե գիտվում է հին հայերենի մի քանի այլ բառերի անփոփոխ ձևերում, անկախ շեշտի ազդեցությունից, հաճախ նաև շեշտակիր վիճակում. «Ես՝ Շաշ միակեցս (<միայնակեաց) ..., յիշեցէր զՇաշ միակեցս» (Հերհեր ԶԵԶ Դ III 68), «Թե արեղա, թե միակեց» (Շիրակավան ՈՂԷ ՍԱՐ 170), «Ես՝ վարդանշահ միակեց... նորագեցի զեկեղեցիս» (Ասողաձոր ԶԼԵ ՄՎ), «Ես՝ Խաչատուր միակեց» (Սանահին ԶԻԹ ԿՂՍ 159), «Ես՝ Անանիա միայկեց կանգնեցի զխաչս» (Բարձրավան ԶՄԴ Դ II 51): Գրաբարում այս բառը հնչյունափոխվում էր միայն նախաշեշտ կամ շեշտակորույս վիճակում՝ միայնակեցի, միայնակեցաց և այլն: Եակ (ի + ակ) քնքշացնող վերջածանցով բառերում անկախ շեշտի ազդեցությունից նաև շեշտի տակ եակ-ը վերածվում է եկ-ի. «Յիշեսչիք զմեզ հոգևոր պատանեկն (<պատանեակ) իմ զԳրիգոր» (Սաղմոսավանք ԶԴ ՄՎ): «Ես՝ Որդեկ (<որդեակ) երէց Կողբցի» (Արշո առիճ ԶԼԸ)<sup>77</sup>: «Ահեկ (<ահեակ) խորանիս... ար նոցա արբացեն» (Հոգեվանք ԺԳ ՄՎ): «Եվ առաջի տարին տվի լի: կապիճ ցորեն» (<ցորեան» (Հոռոմոս ԶԲ ՍԱՐ 157): «Վարդէվարի յայն գինէն տանի լերեն (<լեան) (Սանահին ԶԻԹ ԿՂՍ 162):

Եա>Ե հնչյունափոխությունը է առաջացել վեցկի (<վեցեակ-ի> վեցեկի—նախապես վեց լծկանով բանեցվող արու, հնտագայում՝ արու, գուրան) բառը, որ քանիցս հիշատակվում է վիմական քնադրերում և միայն մեկ անգամ Մ. Ուհայեցու «Ժամանակագրության» մեջ. օրինակ, Սանահնի վանքում՝ «... Ըոց վեժկի (<ուրնոց արու) ..., Ետու Ը-ոց վեցկի (ԶԺԳ, ԶԻ ԿՂՍ 118, 152), «ուժ հարիւր վեցկի եզանց ելանէին»<sup>78</sup>: Այս բառերը գրաբարում ևս Եա>Ե հնչյունափոխություն էին կրում, միայն բառերի աճման կամ ձևաբանական փոփոխությունների ժամանակ, շեշտակորույս վիճակում՝ ցորեան>ցորենոյ, ահեակ>ահեկի, պատանեակ>պատանեկիկ և այլն, շեշտի տակ սովորաբար մնում էին առանց փոփոխության:

Շեշտակիր վիճակում հին հայերենի եա երկրաբարառի վերած-

77 Ալիշան. Շիրակ էջ 123:

78 Մ. Ուհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 103:



վելը ա կամ և, է պարզ ձայնավորների կարող էր առաջանալ այն խոսվածքների արտասանության ազդեցությամբ, որոնցում ներկայումս դիտվում է այդ փոփոխությունը: Արդի բարբառներում գրաբարի եա երկբարբառը արմատական բառերում, բաղաձայնից առաջ պարզվում է վերածվելով մեծ մասամբ և, է, ավելի սակավ՝ ա, ան պարզ ձայնավորներին: Օրինակ, հին հայերենի ցարեան, կուրեակ բարբառների զգալի մասում անկախ շնչաից արտասանվում են՝ ցորեն, ցորէն, ցորին, ցուրին, կօրէկ, կուրէկ, այսինքն եա > է, է > ի պարզումով, միայն Շամախիի, Կարավաթերղի, Մեղրու, Կարճեանի, Ազուլխի, Հավարիկի բարբառներում՝ ցօրան, ցուրան, ցօւրան, կօրակ, որտեղ առկա է եա > ա, ան պարզումը:

Մյուս կողմից, լեարդ, շեամ և այս խմբի այլ բառեր ավանդվել են միայն՝ լէր, լէղ, լէր, շէմ, շեմ ձևերով, ըստ այդմ այստեղ եա > ա անցում չի նկատվում:

Քացի գրանից, նույն օրինաչափությամբ գրաբարի անցյալ (կամ կատարյալ) դերբայի եալ վերջավորությունը խոսվածքների մեծ մասում ավանդվել է՝ էլ, ել, էր, իր (կյրէլ, կյրիւր եմ, կյրիւրես և այլն), իսկ վերջ նշված մի բանի բարբառներում՝ ալ, ան (ացալ, անցան), (քակալ, սայրալ, աղանցալ): Ե խոնարհման բայերի անց. կատարյալի եզակի երրորդ դեմքի բայաձևերը բոլոր բարբառներում ավանդված են եա > և, է պարզումով, ինչպես ժամանակակից հայերենում (հրմբարեց, բզառեց), նույնիսկ ա խոնարհման բայերում՝ կարդէց, խօսէց (<կարդալ, խօսալ):

Այս համառոտ տեսությունից ակնհայտ է, որ ուսումնասիրված խոսվածքներում գրաբարի եա երկբարբառի վերածվելը և, է, ձայնավորների ավելի տարածված և զերակշիռ է, քան նույն երկբարբառի պարզումը ա, ան-ի:

Քնական է մտածել, որ սովյալ օրինաչափությունը գործել է նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանի խոսակցական լեզվում և այդ պատճառով վիմական բնագրերում տարբեր պայմաններում եա > և, է փոփոխությունն արտացոլող վկայությունները ավելի հաճախ են և բնդհանրական, քան եա > ա, ան պարզումը, որ անշուշտ իր ակունքներն ունի միայն Շամախիի, Մեղրու, Կարավաթերղի, Կարճեանի, Ազուլխի, Հավարիկի բարբառներում:

Չ. Քրաբարի ներգործակերպ է խոնարհման բայերի հրամայական եզանակի եզակի թվի եա վերջավորությունը վիմական բնագրերում, ինչպես և միջին հայերենում, հնչյունափոխվում է և



պարզ ձայնավորի, որը իրրև բառավերջի հնչյուն արտասանվում է գրվում էր նաև է-ով: Նկատված վկայություններից մեջ ենք բերում մի քանիսը: Բայաձևերում եա > ե, է հնչյունափոխության նախնազույն օրինակը գտնում ենք Ավանի (Աշտարակի շրջան) հին խոյակի երեսին փորագրված հիշատակագրության մեջ, որը վերծանող Գ. Հովսեփյանի կարծիքով, ստուգապես Զ-է դարերի գործ է, իր տառաձևերով հար է նման Հոփսիմե տաճարի շինարարական արձանագրությանը. «Քս ան արհնեալ ես յախտեանս, յիշէ (<յիշեա՛) քո Ստէփանոսի քո թագաւորութեան»<sup>79</sup>: Հին ձևադրերում այս պարագայում եա > ե, է փոփոխությունը հազվագեղ է. իրրև օրինակ կարելի է նշել 978—988 թթ. Տառ Կլարջեթում բնդօրինակված վրացերեն ձևագրի հայերեն լուսանցագրությունները, որտեղ, ի շարս բարբառային այլ ներթափանցումների, ուղարմեա, պահեա բայաձևերը մի քանի անգամ գրչագրված են՝ ուղորմէ՛ պահէ՛ (պահե՛), ար ողորմէ՛ Միքայլի, ար պահէ ի շարէ (ար պահե ի շարե), ար ողորմէ՛ Ստեփնա և այլն<sup>80</sup>: Հետագա դարերի վիճադրերում այդ բայաձևի վկայությունները ավելի հաճախանում են. «Ով կարգաք ար ողորմէ (<ողորմեա) ասացէք» (Գնդեվանք 32 Գ III 14): «Յիշէ քս զՀասան զորդի Սմբատա» (Հավուց թառ Ծլ Հով 2Թ 11): «Սուրբ Սարգիս ազնէ (<ազնեա) Սարգսի» (Անի ՈԿԳ Գ I 2): «Տր Յս Քս ողորմէ Առանշահի և ամուսնս իր» (Մակարավանք ՈՀէ ՄՎ): «Տր ան ազնե պարոն Գորդէ» (Մաթեր 2Խ2 ՄՎ): «Քս որդի Գաթի ազնէ Հասանայ» (Մարխաշբար 2ԻԳ<sup>81</sup>): «Յիշէ Քս ան զԴափթ» (էոր 2ԽԳ Գ 109): «Կանկընողս Ովասարս յիշէ» (Վարդենիկ 2ԼԹ ՍՍ): «Տր ան Յս Քս ազնէ Տարսախճի» (Ամադու ԺԳ Գ III 235): «Տր ան Յս Քս ազնէ Բիրթեկին, Բէշքէնին, և Իանէի» (Ալայազ ԺԳ Գ III 108): «Ան ողորմէ Գորդայ և Գրիգորոյ» (Աղջոց ՈՂ Հով ԽԱՂ III 76):

Գրաբարի և լժոյրգության բայերի եզակի հրամայական բայաձևի նա կրկրարբառը՝ գրեա, սիրեա բարբառներում մեծ մասամբ վերածվում է է (>ի), ավելի սակավ՝ ա (ան)-ի, բոտ այդմ, աշխատել, ազատել, գրել, սիրել բայերի եզակի հրամայականը առաջին խմբի բարբառներում կլինի՝ աշխատէ (<ըշխատէ), բզա-

79 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակութային պատմության, պր. Գ, Նյու-Յորք, 1954, էջ 22:

80 Տէ՛ս Ա. Արուստան, նշվ. հոդվածը, էջ 36—37:

81 Մ. Բարխաղարյան, Արցախ, Բարս, 1895, էջ 405:



տէ (ազա'տէ), գրէ, սիրէ, որոշ խոսվածքներում նաև դուզահո' աշխատի, բզատի, գրի, սիրի, այսինքն է>ի փոփոխությամբ (եա>է>ի), իսկ Մեղրու, Ազուլիսի, Կարավարերգի, Կարձեանի, Համշենի և մի քանի այլ բարբառներում՝ բշխատա, բզատա, գր-րա, սէրա, այսինքն տեղի է տնկնում եա>ա:

Վիմադրերից մեր առկուշված վկայությունները ցույց են աա-լիս, որ հին հայերենի և լծորդության բայերի եզակի հրամայա-կանի բայաձևերում եա>է հնչյունափոխությունը կարող էր առա-ջանալ այն խոսվածքների ազդեցությամբ, որոնք ներկայումս, ու-րեմն նաև անցյալում, նույն բայաձևը կազմելիս են եղել տվյալ փոփոխությամբ, այսինքն՝ եա>է>ի՝ գրե'ա>գրէ'>գրի':

Ինչպես տեսանք, հրամայականի բայաձևերում եա>է պարզ-ման արտահայտությունը Զ—է դարերից է, սակայն երևույթը տիրապետող օրինաչափություն է դարձել ավելի ուշ, հավանաբար ԺԳ—ԺԴ դարերում:

10. Քննվող եա>ե փոփոխության արգասիք պետք է համա-րել նաև հին հայերենում սակավ կիրառվող եար, նեար հոգնակերտ մասնիկների վերածվելը եր, ներ-ի, որ միջին հայերենում, արդի լեզվում և բարբառներում ամենաարդյունավետ հոգնակերտներն են: Գրաբարում եար մասնիկը իբրև հոգնակերտ կիրառվում էր մի քանի միավանկ բառերի հոգնակին կազմելիս. բան-բանեար, վան(հ)-վանեար, վարժ-վարժեար, որ-որեար (ազատորեար, ա-ազոր-եար, հայոր-եար, ֆաջոր-եար), իսկ նեար-ը՝ իկ նվազական վերջածանցով սակավաթիվ կազմություններում. բարձիկ-բարձի-նեար, նաիկ-նալ-նեար, ֆաղաֆիկ-ֆաղաֆկնեար, խցիկ-խցկ-նեար և այլն<sup>82</sup>: Եար, նեար հոգնակերտների հնչյունափոխվելը եր, ներ-ի գիտվում էր, թեև հազվադեպ, դեռևս Ե դարի մատենագրու-թյան մեջ. Ղ. Փարպեցու «Պատմության» մեջ, օրինակ, վկայված են՝ թողէք ի բաց զբաներդ (<բան-եար), զհարկեք (<հարկեար) ղիմոյ աշխարհին Հայոց, և ընդ վահանայ և այլ հայերդ (<հայլ, հայեար), և տեսեալ նիխորոյ զհայերն, շարժեալ զձեռներն ի զո-վութիւն այլոց և այլն<sup>83</sup>:

Ժ—ԺԴ դարերի վիմական արձանագրություններում և միջին հայերենի երկերում եար-ը հանդես է գալիս եր հնչյունափոխված տեսքով, իբրև առավել արդյունավետ ինքնուրույն հոգնակերտ

82 Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պեսա զարգացելոց, Վե-նետիկ, 1852, էջ 48,

83 Ա. Այտրեյան, Քննակ. քերականություն, էջ 79—80,



մասնիկ, ըստ այդմ, հին հայերենի եւր կամ նեւր հոգնակերտ-ներով նոր ձևեր այլևս չեն հանդիպում: Միակ վկայությունը դրտ-նում ենք Անիում Աբլղարիք Պահլավունու արձանագրության մեջ. «...զնեցի հալալ ընչից իմոց... այզի եւ հողեւար» (<հող) նՁԵ Դ I 44): Եւ (եւր) հոգնակերտ մասնիկի բաղմամբիվ կիրառություն-ները վիմական բնագրերում քննելու ենք այդ բնագրերի լեզվա-բերականական, ձևարանական իրողությունները նկարագրելիս, այստեղ եւր > եւ հնչյունափոխության կապակցությամբ մեջ ենք բերում եւ հոգնակերտի մի քանի վկայությունները առավելապես հնագույն վիմագրերից: Առաջին հիշատակությունը գտնում ենք Վանեկանի տաճարի դմբեթի վրա փորագրված ՅՄԲ (303) թ. Շապուհ Բագրատունու նշանավոր արձանագրում, նորաչեն վանքի հասույթները սահմանող նախադասության մեջ. «ՄԿ դրամ ի Կո-թարար, յՇէ: ի Բոտելեցն: Ո՛ւ: յԱղիբողանաց: ԶՂ, ի Կարբին գետերէն եւ ի նաերէն» (ՄԲ, ՄՎ, ՍՍ)<sup>84</sup>:

Ա. եւ մասնիկը վիմական բնագրերում միավանկ բառերի հոգնակի կազմույթյան մեջ: Տուն-աներ, միջնադարում հաճախ

<sup>84</sup> Վանեկանի այս կարևոր արձանագրությունը գիտականորեն հրատարակ-ված չէ և սովորաբար մեջ է բերվում Ստ. Թրբեյանի «Պատմություն նահանգն Միտական» գրքից, որտեղ պատմիչը այլ վավերագրերի և վիմագրերի շարքում տեղավորել է նաև այլալ բնագրի իր ընդօրինակությունը, որը որոշ սրբագրում-ներով հանդերձ, հիմնականում հարազատ է քարի վրա փորագրվածին: Արձա-նագրության վերջին նախադասությունը փորագրված է այլ, ավելի անարվեստ ատտակներով, բովանդակությամբ անբարեն չի կապվում հիմնական բնագրին և հավանաբար հետագա դարերի ընդմիջարկություն է: Տարակույս է առաջացնում նաերէն բառը, որ ոմանք հասկանում են ոչ թե նավ, մակույկ, լաստ սովորական իմաստով՝ այլ՝ «փայտե լայն խողովակ, որով ջուրը շաղաքը կերթա, լայնա-բար՝ ջրաղի, ջրանցի», որ այս նշանակությամբ ավանդված է Արարատյան, Ղա-րաբաղի բարբառներում (նա > նով) (Ս. Պաղուսյան, Գյուղացիների ճորտացու-մը, ... 1935, էջ 196, 2. Անադյան, Հայերեն զավատական բառարան, էջ 810): Մեզ համար այս դեպքում կարևորը այդ բառերի հոգնակի եւ վերջավորությունն է, որ երկու դեպքում էլ պահպանում է իր ձևարանական նշանակությունը: Իրրև վիմական բնագրերում եւ հոգնակերտի առաջին հիշատակությունը երբեմն մատ-նացույց է արվում Մազարիթանի ականակետ խաչի հիշատակությունը (ՆժՆ 966 թ.), որտեղ մեր հարցի հետ առնչվող համվածը կարգացվում է. «եղու Շամ-բա ջղցնեւն, Երասխի նան, Ասպտու հողն սր նախվկն» (...Շամբա շաղաց-ները, Երասխա նավն և այլն): Սակայն, ինչպես համոզիչ ցույց է տալիս Կ. Բամաջյանը, Աշու թագավորի այդ հրովարտակը մի շարք պատճառներով զուրկ է հավաստիությանից և ետին դարերի կեղծիք է, ուստի նրանում հիշված շաղացներն հոգնակին չի կարելի համաստի համարել: (Տե՛ս Ալիշան, Միտական, էջ 518, «Բանասեր» 1902, էջ 98, «Հանդես ամսօրյա», 1941, № 7, էջ 146, Գ. Հովսեփյան, Հիշատակարանը ձևագրաց, Անթիլիաս, 1951, էջ 421):



նվիրվող կամ առուծախվող ունեցվածք է հատկապես բազարներում կամ գյուղաբաղաբներում, հնագույնը Մարմաշենում. «Ի յմեի տներ կղպականի» (ՆԼԷ ՕրՃՈՒՒ 142), ապա՝ Անիում. «Եւ իմ տներոյս յապշտակէ...», եւ յիմ տներոյս յապշտակէ (Անի ՆՂԹ Դ I 43); Բազարանում՝ «եառու եւ Առեղին տներն Բագրնի» (ՆՁԳ ՍԱՐ 203), Խժկոնքում՝ «տուար զսա երկու դուռն տներն» (ՈԿԲ)<sup>85</sup>: Նույն հոգնակերտը դիտվում է նաև երկրորդ հզրում տուս ունեցող բարդություններում. «Տվի զիմ :Բ: կուղպակն ներքնատրներովն ու խղիրովն (<խուղեր) (Երևան ՉՄ 171); Հողեր (Անի ՈԳԿ Դ I 63, Խաթրավանք ՈՂԴ ՍԲ, Քանաա ժԳ Դ III 80; Արջո առիճ ժԳ ՍԱՐ 191, Գաղի վանք ՉԿԱ Մով 97); Խառեր-ով (Անի ՈԿԴ Դ I 63). Բակեր (Տաթև ժԳ Դ II 33, նա ՉԿԵ 22); Գումեր (Վաղաղնի վանք ՉՂԵ Դ II 101); Գեղեր (<գիւղեր) (Հաղբատ ՈՄԹ ԿՂՂԲ 168, ն. Գեաթիկ ժԳ ՍԲ); Գնդեր-գինդ-եր («եառու զոսկի զընդերն իմ» — Մակարավանք ժԳ ՄՎ); Արտեր (Հերմոնի վանք ժԳ Դ III 138, Արջո առիճ ժԳ ՍԱՐ 192); Կովեր > կովերոյն (Անի ՉԿԹ Դ I 27), «ով զկովերն եկեղեցոյս հանէ» (Վաճառ ժԳ ՍԲ); Գբեր < զուբեր-վոս, խանդակ (Հառիճ ՈՄ ՄՎ); Տեղեր (Կոչիկ ՉժԳ ՕրՃՈՒՒ 181), «կամ գրկել ջանա այս տեղերս...» (Տեղեր ՈԿԲ ՄՎ) իբրև հատուկ անուն, տեղանուն՝ «Ես՝ Խնժորիկս միաբանեցա սր ուխտիս Տեղերս» (նա ՄՎ); Պապեր, ծաղեր («եւ մեր պապերէ...», «Ի Մաղերոյն Շատարեանք...» Սանահին ՈՂ ԿՂՍ 125, 133); Մովեր (Իգ. անձնանուն. «Փանոս և Մովեր միաբանեցար Աժաձնիս» — Խորանաշատ ՈՂԱ ՄՎ); Խղեր (Երևան ՉՄ ԿՂԵ 17); Բերդեր (Գաղի վանք ՈԲԱ Մով 97); Բուրջն-բուրջներ > բրջներ (առաջին հիշատակությունը՝ «...շիննցի զբուրջնս» Անի ՈԹ Դ I 2, երկրորդ փոխառություն է արար. burj-բուրգ բառից. Անի ՈՄԵ Դ I 7, նա ժԲ Դ I 4, Կարս ՈՁԳ, ՈՁԵ ՕրՃՈՒՒ 470—471); Քոտներ (Էմբատ ժԳ ՄՎ); Խաչեր (Կոզր ՈԽ ՄՎ Հավապատուկ ՈԼԳ ՕրՃՈՒՒ 198, Կեչառիս ՈԿԴ ՍԲ, Ամադու ՈՂ Դ III 213, Ալայսոլ ՉԲ Դ III 114, Գեղձուտ ժԳ ՄՎ, Եղիշե Առաքյալի վանք ՉՁ ՍԲ, Սանահին ՉՂԵ ԿՂՍ 112 Աթարբեկյան Չ ՍԲ), այս բառից կազմված բարդություններում. «Շատախաչերն տուել ին» (Հաղբատ ժԳ ԿՂՂԲ 200):

Բ. եր մասնիկը վիմական բնագրերում բազմավանկ բառերի հոգնակի կազմության մեջ: Ինչպես և միջին հայերենում, վիմական բնագրերում ևս բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է

<sup>85</sup> Ալիշան, Այբբարատ, էջ 113:



եր (<եար) հոգնակերտով, որ ապացույց է, թե այդ շրջանում գեռու չէր առաջացել ներ (<նեար, նի + եր) մասնիկը: Շատ շեն բաղմավանկ բառերի եր հոգնակիով վկայությունները, սակայն եղած օրինակներն էլ հիմք են տալիս համոզվելու, որ նորամուտ եր մասնիկը վիճազրույթյան մեջ փոխարինելու էր դալիս հին հայերենի Բ հոգնակերտին նաև բաղմավանկ բառերի հոգնակի համակարգում: Երկրորդ եզրում միավանկ բազադրիչ ունեցող բարդությունների եր հոգնակերտով բառերը արդեն նշել ենք, այստեղ մեջ ենք բերում մյուս բաղմավանկ բառերի եր-ով վկայությունները. «...շինեցի... գաշախնաներս» (Անի ՈԿԲ Դ I 34): «Կտրեցեք գերեզմաներս ի բարէ» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 265, բաղում է Հ. Ղրիմեցու ձեռագրի 126-րդ էջից, արձանագրության վերծանությունը անստուգելի է և կասկածելի): Եպիսկոպոսեր, վարդապետեր (Կեչառիս ԺԳ ՍԲ), վարդապետերս (Կեչառիս ՈՂԷ ՍԲ): Զուլահկերույն (<չուլհակ) հուրակաւն (Ավան ՉԼԶ ՄՎ): Արեւագիներ (Հառիճ ՈՄ ՄՎ): Խոտամարգեր (Հաղբատ ՈՄԹ ԿՂՀԲ 168): Մուտերկերուն (<մուտերիկ) (Անի ՉԻԵ Դ I 22): Թվարկված բառերի սակավությունը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ բաղմավանկ բառերի հոգնակին եր մասնիկով դեռևս տիրապետող չէր դարձել վիճական բնագրերում, քանի որ այդ կարգի բառերի հոգնակին շարունակում էր կազմվել գրաբարյան Բ հոգնակերտով:

11. Հին հայերենի եա երկրաբարառը միայն իրեար > իրար գերանվան մեջ հնչյունափոխվել է ու սարդ ձայնավորի: Եղակի հիշատակությունը Մշկավանքի ՉԺԲ Բ. մի նվիրագրում, անեծքի ձևվակերպման մեջ. «Ով զիրուր (<զիրեար) տայ այ անիծած եղիցի» (ՄՎ): Դերանվան նույն փոփոխությունը այժմ էլ գիտվում է Արցախի մի քանի խոսվածքներում, օրինակ, զիրուր տալ (խառնել, տեղահանել) առաջանում է գրաբարի զիրեար տալ հարադրավոր բայից, տիրուր տալ կամ տուրուր տալ (շարժել, տեղահանել)՝ բնդ իրեար տալից և այլն:

Հին հայերենի իրեար փոխադարձ գերանունը հայ բարբառներում բացի կանոնավոր օրինաչափ եա > ա փոփոխությամբ ձևվերից՝ իրար (Արարատյան, Համշենի, Պոլսի, Թիֆլիսի, Կարնո և այլ բարբառներ), յիրար (Մշո, Մարաղա), զիրար (Մոկս), ավանդված է նաև զգալի շափով հնչյունափոխված՝ ուրուր, ուրար (Հաղբույթ, Ղարաբաղ, Շամախի, Կարճևան, Կաթավաբերդ):

Միջին դրություն են ներկայացնում Լոռու, Շամշաղիների, Իջևվանի խոսվածքները, որտեղ բառս պահպանվել է՝ իրուր և առանց



քմայնացման: Մշկավանքի բնագրում փորագրված գիրուր տայ-ի հետ համադրելի են՝ դիրուր տալ (ն. Ջուղա, տուրուր տալ (Ղարաբաղ, Հաղբուխ), տուրուն տալ (Շամախի), դուրուր գալ (Գանձակ), բոլորն էլ արտահայտում են շարժել, շարժվել, խախտել իմաստ և ծագում գրաբարի՝ ընդ իրեար տալ (գալ) ձևից, վիմագրի օրինակում ընդ նախդիրը փոխարինելով գ-ով<sup>86</sup>:

#### ԵՌԱՐԱՐՔԱՆՆԵՐ

Հին հայերենի եռարարառաները միջին հայերենի գրական երկերում լայն կիրառում չունեին և մեծ մասամբ շեշտի ազդեցությամբ կամ անկախ նրանից հնչյունափոխվել էին պարզ ձայնավորների՝ քրխտոնեայ > քրխտոնէլի, միջաւրեայ > միջաւրէ, գաւեայ > գաւէ, սեւաւ > սեւ, սէվ, առաջեաւ > առաջեւ > առջեւ, առջէվ և այլն<sup>87</sup>:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական արձանագրություններում եռարարառաների վկայությունները սակավ են և հանդիպում են միայն ժամանակի անխառն գրական լեզվով շարագրված բնագրերում, գրաբարյան բառերի ձևարանական փոփոխությունների համակարգում, մեծ մասամբ մի խումբ բառերի եղակի գործիական հոլովաձևերում (լեզուաւ, բաւեաւ, այգեաւ, տաւեաւ, տեղեաւ, մանկտեաւ և այլն): Վիմագրության ընձեռած փաստերով հաղիվ թե հնարավոր լինի ամբողջական զաղափար կազմել հին հայերենի եռարարառաների՝ հետագայում կրած փոփոխությունների մասին, քանի որ ավանդված վկայությունները հատուկ են և մեծ մասամբ փորագրված գրաբարի քերականական օրինակափոխությունների հետևությամբ, ըստ ամենայնի դերձ կենդանի լեզվի արտասանության ազդեցություններից: Եղած նյութերով կարելի է որոշ շարժով դատել միայն եայ եռարարառի արտասանության մեջ առաջացած տեղաշարժերի մասին, ըստ այդմ, բառավերջի վանկում եայ-ը մեծ մասամբ հնչյունափոխվում է ե սարդ ձայնավորի, իսկ նույն դիրքում բաղաձայնից առաջ՝ է-ի: Հավանաբար այս տարրերությունն առաջ է գալիս այն պատճառով, որ

86 Չ. Ահեռյան, Արժատական բառարան, Գ, էջ 109—110, Գալատական բառարան էջ 279, 320, Ղարաբաղի բարբառում զ նախդրով նույն կազմությամբ ձևեր՝ գիրաւ ածել (<գիրեաւ ածել) - փռել, ծածկել, գիրաւ անցնել - փովել, տաւաւովել, Շամշաղինում՝ գիրով տալ (<գիրեաւ տալ) - փարսել և այլն:

87 J. Karst, Historische Grammatik..., S. 71—72.



եայ եռարարբառը բառավերջի բաց վանկում նախ կորցնում է յ ձայնորդը, որը ինչպես նկատել ենք, ա, ո ձայնավորներից հետո այդ դիրքում այլևս չէր հնչվում, ապա եա-ն օրինաչափորեն հընչյունափոխվում է ե-ի. փոփոխությունը տեղի է ունենում եայ > եա > ե ընթացքով (կեսարեայ > կեսարեա > կեսարե): Ինչ մնում է եայ > է հնչյունափոխությանը, այստեղ էլ նախ ընկնում է ա ձայնավորը, ապա մնացած է յ հնչյունակապակցությունը վերածվում է իր համազոր է պարզ ձայնավորին, այս ընթացքով՝ եայ > եյ > է (ֆրիստոնեայ > ֆրիստոնեյ > ֆրիստոնէ): Ներկայացնում ենք այս փոփոխություններն արտացոլող հիշատակությունները. ա. եայ > է «Յաղաթս յիշեցէք Ստեփանոս քահանա՝ եկեղեցոյս պաշտանէս» (<պաշտանեայս) (Արծվանիկ ՆՂԴ Դ II 133): «Սուրբ նշանիս պաշտանէք յաղաթս յիշեցէք (Աղուղի ԺԳ Դ III 98): «Մենք՝ Կարուց ֆրիստոնէս (<ֆրիստոնեայֆ) շինեցար զբրշներս» (Կարս ՈԶԳ ՕրՃՈՒՏ 471): «Ձերկիրս ի շորս դիաց անբնակ արար ու զֆրիստոնէք անխնայ կոտորէին» (Բշնի Պէ):<sup>88</sup> «Խոստացան ի տարոջն : Գ: ար : Ա: ինձ : Ա: իմ հարն Սարգսի : Ա: իմ մարն Քրիստոնէ» (Հալուց թառ ԺԳ Հով 2թ 26): «Եւ փոխարէն հատուցման զվարդեարին քառասունքն եւ զխաշ ուրարէֆն» (<ուրարեայֆ) (Մարմաշեն ԺԳ ՕրՃՈՒՏ 445), «Եւ տր Սարգիս ետ : Զ: ար սր ժամ յուրարէֆն (Մեծարանց վանք Զ):<sup>89</sup> «Որ տվի յիմ հայրենիքն Ածածնիս ուրարէֆն յայտնութի ժամն Դաթի» (Գյուղամբուլաղի վանք ԺԳ Դ III 119): «Հալալ յարդեանց իմոց նորոգեցի զփայալ (<փայտեայ) ժամատունս սալելով» (Հովհաննավանք ԶԻԳ ԿՂԶ 106):

Եայ > է (ե) հնչյունափոխությամբ է բացատրվում ի հանգոդ բառերի, մեծ մասամբ անձնանունների եզակի թվի սեռ., տրական հոլովաձևերում առանձին, գրաբարին անձանոթ վերջավորության՝ է (ե) ինքնուրույն հոլովակաղմիչի առաջացումը, որ լայնորեն դիտվում է միայն Ժ—ԺԳ դդ. վիմական արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում: Հնչյունափոխությունը տեղի է ունենում հետևյալ ընթացքով՝ ի-ով վերջացող անձնանուններին սեռ., տրական հոլովներում ավելանում է գրաբարյան ա (այ) հոլովիչը՝ րագունի + այ-րագունիայ > րագունեայ, ապա եռարարբառի պարզումով՝ րագունի կամ րագունե, ըստ այսմ՝ եայ > է (ե): Թեև գրաբարում օրինաչափ էր եայ եռարարբառի պարզումը է-ի, սա-

<sup>88</sup> Ե. Մուշեղյան, նշվ. հոդվածը, ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 5, էջ 98:

<sup>89</sup> Խ. Դադյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասիր», 1901, էջ 137:



կայն այս կարգի բառերի սեռ., արական հոլովներում է (ե) հոլովակազմիչը շէր հանգիպում, քանի որ ի հանգող բառերը, նաև անձնանունները իբրև կանոն հոլովվում էին ու բնով՝ քազունույ, ոսկույ, զինույ և այլն: Իրողությունը ավելի հանգամանորեն նկարագրել է ներ այդ հարցին նվիրված առանձին ուսումնասիրության մեջ<sup>90</sup>, այստեղ ներկայացնում ենք սեռ., արական հոլովաձևերում է (ե) հոլովակազմիչով վկայված ի-հանգող բառերի և անձնանունների մի քանի օրինակներ տարբեր ժամանակների վիճական բընագրերից: Հնագույնը Ալամանի տաճարի Ժ դ. մի արտոնագրում. «Այս իմ գիր է Սոփէ» (<Սոփի, Սոփիա)<sup>91</sup>, սպա Անիի Մայր տաճարի 1056—1060 թթ. բնագրում. «Ազատեցին զվեցիկէ կոս» (<վեցիկի-վեցկիի կոս) (Գ I 37): Ավելի հաճախ ԺԲ ԺԳ զգ. վիճակներում. — Խարուբե, Խարուբէ < Խարուբի (Կողբ ՈՂԳ ՄՎ), Խաղողէ < Խաղողի (Հոռոմայր ՈՅ ՄՎ), Շաաբաբէ < Շաաբաբի (Կապտավանք ԺԳ ՄՎ), Սէվնէ < Սէվնի (Բարձրաբաշ ՈՂԱ ՄՎ), Էրմանէ < Էրմանի (Հավուց Թառ ԺԳ Մով 2Թ 26), Վարդենէ < Վարդենի (Հառիճ ՈՍԵ ՄՎ), Վանենէ < Վանենի (Հաղբատ ՈՂԷ ԿՂԶԲ 175), Գէորգէ < Գէորգի (Մորո ձորո վանք ԺԲ ՄՎ), Ղիմեբէ < Ղիմեբի (Անի ՈՍԹ Գ I 40), Ջոնէ < Ջոնի (Ասաղաձոր ՉՄԹ ՍԲ), Տուաէ < Տուաի (Սանահին ՈՂԳ ԿՂՄ 180, 189), Տուլաէ < Տուլաի (Հոռոմոս ԺԳ)<sup>92</sup>, Ջանէ < Ջանի, Բեսունէ < Բեսունի (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 101), Մերշէ < Մերշի (Անի ԺԳ Գ I 85), Սիրբէ < Սիրբի (Անի ՈՅԹ Գ I 55, 65), Ալամսրբէ < Ալամսրբի (Ն. Լաշինդայա ԺԳ ՄՎ), Ամբարսբէ < Ամբարսբի (Երևան ՉՄ ԿՂԵ 176), Ամիսբէ < Ամիսբի (Ալայազ ՉԲ Գ III 114), Մամսրբէ < Մամսրբի (Արքս առիճ ԺԳ)<sup>93</sup>, Նուրսբէ < Նուրսբի (Հառիճ ԺԳ ՄՎ, Երևան ՉՄ ԿՂԵ 173), Սիրեբե < Սիրեբի (Անի ԺԳ Գ I 67), տեղնորդե < տեղնորդի (Խորանաշատ ԺԳ ՄՎ)<sup>94</sup>:

90 Տե՛ս «Ի հանգող անձնանունների սեռ., արական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ զգ. վիճական արձանագրություններում», «Մատր և Հայագիտության հարցերը» ժողովածու, 1968, Երևան, էջ 129—186:

91 Այիշան, Շիրակ, էջ 125:

92 Նույն տեղում, էջ 21:

93 Նույն տեղում, էջ 123:

94 Բնագրի առաջին մասը հրատարակված է՝ Կ. Ղաֆաղաբյան. Պատմահնագիտական զիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» ԳԱ Հայկական ֆիլիալի, Երևան, 1940, № 4—5, էջ 169—172, այստեղ տեղնորդե գիրոված է անձնանուն, որի ստուգաբանությունը բոս ավյալ վերձանություն տե՛ս Հ. Անադյան, Անձն. բառարան, Ե, էջ 142:



է (ե) — ով սեռ. տրական հոլովածներ ավելի սակավ նկատվում են նաև ժ—ժԳ դդ. ձևադրերի հիշատակարաններում, որ կողմնակի ապացույց է, թե տվյալ հնչյունափոխությունը կարող էր առաջանալ խոսակցական լեզվի ազդեցությամբ: Նշում ենք մի քանի փաստեր ձևադրերից — ՈւլՁ (1187) թ. մի հիշատակարանում կարդացվում է. «նաև յիշատակ ծնողաց Գրիգորու և Հատուկէ», անձնանվան ուղիղ ձևը՝ Հատուկի (ԳՀՀՁ 514): Նույն ժամանակների մի այլ ձևադրում. «Մեղաց թողութիւն Յոհաննիսի նուստ քահանայի և հարն իւրոյ Կարապետի և մարն իւր Վահանարէ» (<Վահանարի) (ԳՀՀՁ 562); ՈեԲ (1193) թ. արտագրված ավետարանի հիշատակարանում. «Մեղաց թողութիւն հայցեցէք վարդէ քահանայի» (<Վարդի քահանայ) (ԳՀՀՁ 562):

Բ. եայ > և տեղի է ունենում բառավերջում, շեշտակիր վիճակում. «ես՝ վանենի... կին Աբասա թագաւորի, որ կիսարե (>կիսարեայ) վախճանեալ խաւարեցոյց զմեզ» (Սանահին ՈեԱ ԿՂՍ 185): «Ի բարեխաւսութի որդոց իմոց Յունանա և Մխիթարա, զի կեսարե վախճանեցան» (Կողբ ժԲ ՄՎ): «Կանգնեցի զխաչս ի վերա հանգրստարանի կենակցի իմոյ Անիփայի, զի կեսարե փոխեցաւ յաշխարհէն» (Կողբ Ոե ՄՎ): «Կանգնեցի զխաչս եղբար քիմ Փալկա, որ կիսարե փոխեցաւ ի Քս (Ամաղու ՉԼԳ Դ III 242): «Այս է հանգիստ շնորհաց Աբրեհամ քահանայի, որ կիսարե փոխեցաւ» (Կեչաօխ ՉԻԲ ՍԲ):

Հին հայերենի եւս եռարարանը, որ մեծ մասամբ հանդիպում էր ի հանգող բառերի եզակի և հոգնակի գործիական հոլովածներում և ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի կատարյալի եզակի երրորդ դեմքում (կարասի, կարասեաւ, կարասեաւ, այգի-այգեաւ, այգեաւ, ջորի-ջորեաւ-ջորեաւ, կորնչիմ-կորեաւ) վիճական բնադրերում բառավերջում շեշտակիր վիճակում հնչյունափոխվում է եւ երկրարբառի, այսինքն սղվում է ա ձայնավորը: Ահա եղած օրինակները. «ես՝ հայր Յոհանես զաւառաւ եաշինեցի եկել բնակեցաւ ընդ հովանեւ (<հովանեաւ) սրբոյ Ածածնիս և շինեցի զհիւրատունս» (Սանահին ՈՄԳ ԿՂՍ 183): «ես՝ Միթլասան... կացել ընդ հովանեւ սր նշանիս, զիմ հոգո արգիւնս... ընծանցի ի սր նշանս» (Հաղբատ ՉԻԷ ԿՂՀԲ 158), «Վս նջեցելոց մեր, որ ընդ հովանեւ սորա» (Մակարավանք ժԳ ՄՎ): «Ի դոանս վանիցս առջեւ» (>առաջեաւ) (Անի ՈԿԴ Դ I 63):

Գրարարյան եռարարանների նշված փոփոխությունները նրկատվում են նաև արդի նկարագրված բարբառներում:



Արևելահայ բարբառների մեծ մասում եայ> է փոփոխությունը դիտվում է հարաբերական ածական կերտող ածանցում. ինչպես՝ բրկաբէ, փատէ, քարէ <բրկաբեայ, փայտեայ, քարեայ (Ղարաբաղ 50), մազէ, առձրբէ <մազեայ, առձաթեայ (Խոյ 32, Մուշ 40), քրխտէ, օսկէ <քղրեայ, ոսկեայ (Կարին 22): Հալա-նարար եայ> է փոփոխության հաջորդ աստիճանն է նույն ածականներում ի վերջածանցի առաջացումը՝ եա> է> ի բնթացքով, որ տեղի է ունենում մի բանի այլ բարբառներում՝ մազի, փէտի, էրկաթի, էրձաթի <մազեայ> մազէ > մազի և այլն (Լոռի, Արարատյան, Շամախի):

Հին հայերենի մի շարք գրական և կրոնական բառերում եայ եռարարբառի վերածվելը է պարզ ձայնավորի՝ քրխտոնէք, պաշտաւնէք, ուրարէք և այլն կարող էր տեղի ունենալ ժամանակի խոսակցական լեզվի հնչյունափոխության օրինաչափություններով՝ քրխտոնէայք — քրխտոնեայք > քրխտոնէք: Այդ կարգի բառերը արդի բարբառներում ավանդված են՝ նաև քրխտոնա, քրխտոնյա, քրխտոնյա, պաշտոնյա ձևերով, այսինքն՝ եայ > յա > ա պարզումով, որ արտացոլված է Ամադուի նորավանքի բնագրերից մեկում՝ «Միաբանք խոստացան :2: պատարագ յայտնութի ուրարացն (<ուրարեայցն) (ՉՂԳ Գ III 223):

Գրաբարի եա եռարարբառի՝ բարբառներում կրած պատմական, բնդհանրական փոփոխությունը եվ, էվ, հնչյունակապակցությունը վերածվելն է, որ հին հայերենից ավանդված ձևերում դիտվում է գրեթե բոլոր խոսվածքներում. օրինակ, բարեաւ, սեաւ բարբառներում արտասանվում են՝ պարէվ (պարօվ), բարէվ, փարէվ, սէվ, սեվ, սրէվ:



ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՒԼ ԵՎ ԶԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Հին գրական հայերենի հնչութաբանական վերլուծություններից պարզվում է, որ դասական գրաբարի բաղաձայնական համակարգը գրի առնվելու ժամանակ ունեցել է հետևյալ բաղաձայն հնչյունները. ա. ձայնեղներ՝ ք, գ, դ, ձ, շ, վ, ժ, զ, ք. խուլեր՝ պ, տ, կ, ծ, ն, ս, հ, խ, գ. շնչեղ խուլեր՝ փ, ք, ք, ց, չ, և դ. ձայնորդներ՝ ր, ո, մ, ն, լ, յ, լ, դ: Այս բաղաձայններին հետագայում ավելանում են ևս երկուսը. ղ ձայնեղը, որ առանձնանում կամ անջատվում է առաջնալեզվային լ ձայնորդից, իբրև նրա ետնալեզվային ձայնեղ-բաղաձայն տարբերակը և Ֆ խուլ շփականը, ներմուծված հարևան լեզուներից՝ սրանց համապատասխան հնչույթը հայերենում արտահայտելու համար: Գրաբարի բաղաձայնները ըստ արտասանական հնչյունաբանության կամ արտաբերության եղանակի բաժանվում են՝ ա. պայթականների կամ հպականների՝ դ, կ, ք, գ, տ, ք, ք, պ, փ, ք. շփականների՝ խ, հ, ս, շ, ժ, վ. գ. բարդ կիսաշփականների (կիսապայթական, պայթաշփական)՝ ձ, ծ, ց, ջ, ն, չ:

Գրաբարի բաղաձայն հնչյունների այս բաժանումից ակնհայտ է, որ նրանց տարբերակումը կամ հակադրությունը հիմնված է պայթական և պայթաշփական հնչյունների համար եռյակ հատկանիշների՝ ձայնեղության-խլության-շնչեղության վրա, իսկ շփականների համար՝ միայն երկակ հակադրության՝ ձայնեղության-խլության վրա: Որքան էլ դժվար է սոսկ ավանդված միավորների հնչութաբանական վերլուծություններով, առանց ժամանակակից փորձառական հետադրությունների տվյալների հավաստի պատ-



կերացում կազմել վաղուց շխտավող գրական լեզվի՝ գասական գր-  
բարբարի բաղաձայնների որակի կամ նրանց տարրերակիչ հատկա-  
նիշների մասին, հայագետներին հիմնականում հաջողվել է որո-  
շել մեսրոպյան այբուբենի գրերով արտահայտված հնչույթների  
արտասանական և ձայնային էական հատկանիշները, ըստ այդմ  
ն գարի գրական հուշարձաններում ավանդված լեզվային միավոր-  
ների քննությունից պարզվում է, որ այբուբենի բաղաձայն գրե-  
րից յուրաքանչյուրը ներկայացնում է հին հայերենի մի առան-  
ձին, ինքնուրույն հնչույթ, և որ գրաբարում շկա որևէ բաղաձայն  
հնչույթ, որ չունենա իր համապատասխան տառաձևը մեսրոպ-  
յան այբուբենում:

Սակայն գրանից չի հետևում, թե գրաբարի բաղաձայնական  
համակարգի հնչույթների և մեսրոպյան այբուբենում նրանց հա-  
մապատասխանող տառաձևերի միջև լիակատար նույնականու-  
թյուն է տիրում, այդ հնչույթների ձայնային ու արտասանական  
բոլոր հիմնական հատկանիշները սպառիչ պարզաբանված են և  
այլևս այդ բնագավառում չպարզված կամ կնճռոտ հարցեր չկան:  
Այդպիսի չպարզված կամ վիճելի կետերից թերևս ամենաէական-  
նը, որ շատ կարևոր նշանակություն ունի նաև միջին հայերենի  
կամ վիճական բնագրերի բաղաձայնական համակարգը հստակ  
ըմբռնելու համար, գրաբարի կամ բովանդակ հայերենի բաղա-  
ձայնական համակարգում ձայնեղ պայթական շնչեղների գոյու-  
թյան և նրանց հարաբերության հարցն է հնդեվրոպական համա-  
պատասխան շարքի հնչույթների հետ: Այս խնդիրը կամ հայերե-  
նի արդի մի քանի բարբառների շնչեղ-ձայնեղ պայթականների  
ծագումնաբանության հարցերը վերջերս արծարծվեցին կենտրո-  
նական ու տեղական գիտական հանդեսներում բացված բանավե-  
ճում, որանդ իրենց տեսությունները շարադրեցին հայ և օտարազ-  
գի մի շարք նշանավոր հայագետներ (Ա. Ղարիբջան, է. Աղայան,  
Գ. Զահուկյան, Գ. Սևակ, Ս. Ղաղարյան, է. Բենվիենիսո, Հ. Յոզտ,  
Վ. Պիդանի, Վ. Գեորգիև, է. Մակահ և այլք):

Բանավեճը բնդհանուր առմամբ շուտեց հայերենի շնչեղ-ձայ-  
նեղների ծագման կամ նրանց հնդեվրոպական համապատասխա-  
նությունների կնճիռը, սակայն զգալի նպաստ բերեց նրա հետա-  
գա ուսումնասիրությանը: Մի կետում միայն արտահայտվող հա-  
յագետների մեծ մասը համերաշխ էր. հայերենի մի քանի բար-  
բառներում (Արարատյան, Ն. Զուղա, Մուշ, Համշեն և այլն) այժմ  
էլ գոյություն ունեցող bh, gh, dh, jh շնչեղ-ձայնեղները անմի-



չականորեն շին ծագում հնդեվրոպական համապատասխան հընչյուններից, այսինքն այդ հնչյուններն ունեցող բարբառները շին ներկայացնում ավելի հնագույն հնչյունական վիճակ, քան գրաբարի հնչյունական համակարգն է, ինչ ձգտում էր ապացուցել բանավեճը նախածնունդ ակադ. Ա. Ղաբիրյանը, այլ, կամ ուշ շրջանի, հեռգրաբարյան գոյացումներ են, կամ ժառանգություն են մնացել գրաբարից, եթե հաստատվի, որ դասական գրաբարում տեղի է ունեցել ձայնեղ բաղաձայնների շնչեղացում և, ըստ այսմ, եղել է ձայնեղ շնչեղների՝ պայթականների կամ կիսապայթականների շարքը:

Արդ, ունեցե՞լ է արդյոք դասական գրաբարն այդպիսի հընչյութներ: Այս հարցին գրաբարի հնչյութային համակարգն ուսումնասիրող հայագետները մեծ մասամբ բացասական պատասխան են տալիս: Հին հայերենի գիտական հնչյութաբանության հիմնադիր Հ. Հյուրշմանի «Հին հայերենի արտասանության և գրության մասին» (1875) նշանավոր հոդվածում գրաբարի բաղաձայնական համակարգի պայթական և պայթաշփական հնչյութների հարաբերությունները ներկայացված են միայն եռյակ հակադրությամբ՝ ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ՝ ա. բ, գ, դ, ձ, ջ, բ. պ, կ, տ, ծ, ճ. գ. փ. ֆ, ք, ց, շ, այսինքն այդ համակարգում բացառվում է հնդեվրոպական ձայնեղ-շնչեղության հակադրությունը<sup>1</sup>:

Հյուրշմանի այս տեսությունը համընդհանուր ճանաչում գրտալ դասական հայերենագիտության մեջ և երկար ժամանակ համարվում էր գրաբարի բաղաձայնական համակարգի միակ իրական և ընդունելի մեկնությունը: Սակայն հայերենի արդի մի քանի բարբառներում պայթական կամ պայթաշփական շնչեղ-ձայնեղ հնչյունների գոյության փաստը եվրոպացի հայագետներին, նախ Հ. Պեդերսենին, ապա նաև Ա. Մեյերին, է. Բենվենիստին, Հ. Ֆոգտին և ուրիշներին մղեց այն համոզման, որ այդ բարբառների bh, gh, dh, Jh հնչյունները կարող են էին առաջանալ միայն հին հայերենի համապատասխան ձայնեղ-շնչեղներից և ըստ այդմ, գրաբարի այն հնչյունները, որոնք Հյուրշմանը և մյուս հայագետները ավանդաբար տառադարձում են b, g, d, j գրերով, իրականում, ց դարի գրական արտագրանքներում և կենդանի արտա-

<sup>1</sup> Sieh H. Häbschmann, Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen. ZDMG. 1876, S. 53—54, է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 140—141:



սանության մեջ ներկայացրել են հնդեվրոպական անփոփոխ մընացած շնչեղ-ձայնեղ պայթականներ ու կիսապայթականներ: Հայագետ Հ. Ֆոգար, օբինակ, գտնում է, որ գրաբարի բաղաձայնական համակարգը ներկայացնում է հնդեվրոպական վիճակից արդի բարբառներին անցնելու միակ միջանկյալ շրջանը, ըստ որում հին հայերենի ք, գ, դ տառերով արտահայտվող հնչույթները Ե դարում bh, gh, dh ձայնեղ-շնչեղ պայթականներ են եղել<sup>2</sup>:

Սակայն դասական գրաբարի բաղաձայնական համակարգում շնչեղ-ձայնեղների գոյություն և ընդհանրապես ձայնեղ պայթականների կամ կիսապայթականների շնչեղացման օգտին արտահայտվող հայագետները շին բերում այդ վարկածը հաստատող բիշ թե շատ համոզիչ ապացույցներ, կամ հայերենի բարբառներում գրաբարյան պայթականների կրած փոփոխություններն արտացոլող հնչութարանական վերլուծություններ, որոնք հնարավոր դարձնեին նման ենթադրությունը, և նրանց կարծիքով այդ ենթադրությունը մնում է հնարավոր միակ միջոցը բարբառներում նույն հնչույթների առկայությունը բացատրելու:

Իր հերթին, դասական հայերենագիտությունն էլ գրաբարի բաղաձայնական համակարգի արտասանության և գրության համար հիմք է ընդունում մեսրոպյան այբուբենը կամ այլ լեզուներից ներմուծված և հայերենից այլ լեզուներում տառադարձված միավորների հնչյունական համապատասխանությունները, ըստ որում, հին հայերենի պայթական հնչույթների՝ բարբառներում կրած փոփոխությունները քննելիս անտեսվում և անբացատրելի է մնում նրանցում bh, gh, dh, յh շնչեղ-ձայնեղների ծագման պարագան: Եվ արդարև, եթե դասական գրաբարին անձանոթ էր ձայնեղ-շնչեղություն հակադրությունը, այդ դեպքում «բտեղի»-ց են հայ բարբառները ժառանգել այդ հնչույթները: Այս տեսակետները մոտեցնելու և բարբառներում շնչեղ-ձայնեղների գոյությունը մեկնաբանելու ուշագրավ փորձ է կատարում պրոֆ. է. Աղայանը գրաբարի հնչյունաբանությանը նվիրված իր մենագրության մեջ: Այստեղ հեղինակը հայերենի բարբառների հնչութարանական վերլուծություններից և մանավանդ նրանց փորձառական ուսումնասիրություններից ելնելով հանգում է այն համոզման, որ գրաբարի պայթականների և պայթաշփականների համակարգը բա-

<sup>2</sup> Sht'a B. Pizani. Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, № 4, 1961, стр. 47—48.



ցի հիմնական տարրերակիչ ձայնեզուսթյուն-խլություն հակադրու-  
թյունից, բնութագրվում էր նաև լրացուցիչ՝ լարվածություն - ոչ  
լարվածություն հակադրությամբ, իսկ վերջինս հավանական է,  
կարող էր հանգեցնել որոշ կապակցություններում այդ հնչյուննե-  
րի շնչեղացման, ինչպես այդ տեղի է ունենում արդի մի քանի  
բարբառներում<sup>3</sup>:

Այստեղից, հնարավոր է, որ դասական հայերենի գրի առնը-  
վելու ժամանակ Հայաստանի որոշ զավառներում, որոշակի գիր-  
քերում, հատկապես բառասկզբում ձայնեղ պայթականները կամ  
կիսապայթականները արտասանվել են շնչեղացված, սակայն բո-  
լոր դեպքերում այդ հնչյունները հնդեվրոպական շնչեղացված  
ձայնեղների ժառանգները չէին, այլ հայերենի օրինաչափություն-  
ներով առաջացած նոր իրողություններ:

Այսպիսով, ըստ պրոֆ. է. Աղայանի, գրաբարի ք, պ, վ-գ, կ,  
բ-դ, ա, ք-ն, ծ, ց-չ, ն, շ համակարգում շնչեղացված արտասա-  
նությունը, եթե անգամ եղել է, ապա հնչութային արժեք չի ու-  
նեցել, այլ կարող է գիտվել իբրև տարրերակային, գիրքային  
հատկանիշ, որը, ինչպես և ձայնեղ-շնչեղներ ունեցող արդի բար-  
բառներում, ի հայտ է գալիս միայն բառասկզբում<sup>4</sup>:

Նույն անորոշ վիճակում է գտնվում նաև հին հայերենի  
պայթականների քմայնացման հարցը: Ելնելով Թրակացու քերա-  
կանություն հայերեն թարգմանության մեկնություններում մեշ  
բերված գեամ, գամ, գամ բայաձևերից, որոնք ենթադրում են պայ-  
թականների քմայնացում որոշ դեպքերում, ինչպես և արդի բար-  
բառներում քմայնացած պայթականների գոյության փաստից,  
հայագետներից ոմանք ենթադրում են, որ գրաբարում ևս տեղի է  
ունեցել պայթականների քմայնացում որոշ կապակցություննե-  
րում: Սակայն բաղաձայնների քմայնացումը գրային որևէ ար-  
տահայտություն չի ստացել հին հայերենի գրական հուշարձան-  
ներում և այդ պատճառով, ինչպես շնչեղ-ձայնեղների, այնպես  
էլ քմայնացած պայթականների գոյության խնդիրը մնում է գր-  
բարարի բաղաձայնական համակարգի չլուծված կետերից մեկը,  
որ կարոտ է հետագա ուսումնասիրության:

Հին գրական հայերենի վերը համառոտ ներկայացված բա-  
ղաձայնական համակարգը իր հիմնական հատկանիշներով ա-  
վանդված է Ե գաբի հարուստ գրական հուշարձաններում, որտեղ

3 է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 154:

4 Նույն տեղում, էջ 155:



այդ համակարգը ըստ գոյություն ունեցող համոզման պահպանվել է զրեթե անխաթար, նրա խախտումները կամ նորարանությունները հազվադեպ են և, դատելով մեզ հասած զրական վկայություններից, մեծ մասամբ վերաբերում են ձայնորդ հնչյունների՝ իրրե արդյունք հնադույն բարբառային տարբերությունների: Ընդ սմին ենթադրվում է, թե զրաբարի բաղաձայնական համակարգում, հատկապես պայթական և պայթաշփական բաղաձայնների արտասանության և գրության մեջ նկատվող փոփոխությունները առաջացել են ավելի ուշ շրջանում, բարբառների կամ միջին հայերենի հնչյունափոխական իրողությունների ազդեցությամբ: Սակայն հին ձևագրերի քննությունից պարզվում է, որ բարբարի պայթական և պայթաշփական հնչյունները գեոևս դասական մատենագրության մեջ կամ հունարանների նրկերում զգալի փոփոխություններ էին կրել, որոշակի դիրքերում՝ հատկապես ն, ր ձայնորդներին և ձայնավորներին հաջորդելիս կարող էին ձայնեղանալ կամ խլանալ, նույնանալ կամ գործածվել իրար փոխարեն, իրողություններ, որոնք դիտվում են նաև արդի բարբառներում, ըստ որում, անկախ այդ բարբառների բաղաձայնական համակարգում ձայնեղների, խուլերի տեղաշարժ-տեղափոխության վիճակից: Ինչպես այլ առիթով նշել ենք, այս կարգի բաղաձայնի վկայություններ է պարունակում Փ. Բուզանդի «Պատմությունը», որտեղ ն ձայնորդից հետո նկատվում է՝ կ>զ -մանգիկ, մանգունև, մանգուրեն, ցանգուրի, բնգերի էր, բնգալա, անգանելոց, անգեալ և այլն, գ>կ - կանկենել, աիրանենկև, խանկարեալ, տ>դ - բնդանիս, յրնդանուրիւն, բնդիրս, ծ>ծ - պանծացեալ, բնծայիւ, ն>ջ - վախշան, շ>ջ - գոջէին և այլն<sup>5</sup>: Հաղարյան ճեմարանի 887 թ. ավետարանում ևս նկատվում են նույն դիրքում ձայնեղ և խուլ պայթականների շփոթման և միմյանց փոխարեն կիրառելու դեպքեր — կ>զ — անգեան, մանգունև, մանգալի, յանգողնիս, յունգանէ (<ունկն), անգեալ, գանգացան<sup>6</sup>, ավելի սակավ՝ գ>կ — ժառանկուրիւն, անկունել, հանկեցիկ<sup>7</sup>:

Տվյալ հնչյունափոխության առանձին արտահայտությունները

<sup>5</sup> Փատառոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1583, էջ 24, 29, 37, 38, 44, 47, 68, 74, 116:

<sup>6</sup> «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց յերոց» էջ 17:

<sup>7</sup> Չառարկելով այդպիսի հնչյունափոխությունների հնարավորությանը, նրշենք, որ դրանք ուշ շրջանի գրիչների գրության արդյունք են (ձան. խմբ):



այլ դիրքերում Հ. Աճառյանը դիտել է հունարանների սանդժած բերականական տերմիններում. ապարաց (<\*ապաղարձ), առկա են՝ դ > ք, ձ > ց, ներքող (<\*ներփող (ոց)), տեղի է ունեցել՝ փ > ք և այլն<sup>8</sup>:

Հնարավոր է, որ նշված փոփոխությունների մի մասը առաջացած լինի հետագա ընդօրինակությունների ընթացքում, սակայն հաղիվ մե բոլոր վկայությունների նկատմամբ այդպիսի վերապահությունը արդարացի համարվի: Մնում է արձանագրել զբարար հին մատենագրության մեջ պայթական, պայթաշփական բաղաձայնների ն դարի հնչման և գրության մեջ առաջացած փոփոխությունները, որոնք հավաստում են ժամանակի կենդանի խոսվածքներում այլ, դասական զբարարից զգալիորեն տարբերվող բաղաձայնական համակարգերի գոյությունը, որոնց մասին է ակնարկում նաև Գրոնինսիոս Թրակացու բերականություն Անանուս մեկնիչը (է դար)՝ առկոշելով բազուկ, պազուկ, փազուկ տարբերակները:

Հետագա դարի զբարար մատենագրության մեջ այդ շեղումները ավելի են հաճախանում և ընդգրկում նաև մյուս բաղաձայնները տարբեր դիրքերում: Հնագույն ձեռագիր հիշատակություններում հաղիպում են անա (<անդ), յայա, գիրա (<գիրդ), սակաա (<սակա-դ) (ԳՀՀԶ, ըստ բովանդակության է դար, էջ 8, 35, 38), շապարապահա (<շաբարապահ), զպարոն Ամպակում (<Ամբակում) (նա ըստ բով. Զ—է դդ. 8, 235), ալաակար (<ալգաակար), ժառանկորդ (<ժառանգորդ), ձկաել (<ձգաել), յադակս (<յադագս (նա, ըստ բով. է—Թ դդ. 39, 44, 61), փափափումն (<փափագում), կարֆա (<կարգ), սուփ (<սուրբ), բարֆմանեաց (<բարգմանեաց) (նա, ըստ բով. է—Թ դդ. 39, 43, 71): Տայրում Ժ դարում ընդօրինակված մեզ ծանոթ վրացերեն ձեռագրի հայերեն հիշատակագրություններում ևս դ ցուցական հոդը գրված է խլացումով՝ ա—բանա (<բանդ) ալ<sup>9</sup>:

Այլ է միջին հայերենի գրական արտադրանքներում ավանդված լեզվական միավորների բաղաձայնական համակարգի պատկերը:

Ինչպես հայտնի է, մեզ է հասել միջին գրական հայերենով շարնդրված պատմադրական, բժշկագիտական, աստղաբաշխական, գեղարվեստական արձակ ու շափածո հարուստ գրականու-

<sup>8</sup> Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, Բ, էջ 135, 383:

<sup>9</sup> Ի. Արուստան, նշվ. հոդվածը, էջ 36:



թյուն, այլև կիլիկիայի թագավորական զիվանի գրադրության պատասխիկներ՝ մի քանի դաշնագրեր ու արտոնագրեր, որոնց լեզվաբանական քննությունը պարզում է այդ գրական հուշարձանների լեզվի հատկությունները, նրա տարբեր առնչությունները հին գրական հայերենի ու ժամանակի կենդանի բարբառների հետ, մասնավորապես նրանում դասական գրաբարի հնչյունական համակարգի և բերականական կառուցվածքի հետագա արտացոլումները:

Այդ ուսումնասիրություններից պարզվում է, որ թեև միջին հայերեն լեզվի գրություն համար նույնպես օգտագործվել են մեսրոպյան այբուբենի գրերը՝ օ, Ֆ նորամուտ գրերի հավելումով, սակայն այդ այբուբենի տառերը պատմական զարգացման ընթացքում մեծ մասամբ փոխել էին դասական գրաբարում արտահայտած հնչումները: Մեր ուսումնասիրության համար կարևոր է պարզել, թե որոնք են այդ փոփոխությունները կամ ինչպես են արտասանվել հին գրական հայերենի բաղաձայնները միջին հայերենում:

Այս խնդիրները և ընդհանրապես միջին հայերենի հնչյունաբանությունն առաջին անգամ մանրազնին քննության է առել գերմանացի հայագետ Յ. Կարստը՝ «Կիլիկյան հայերենի արտասանությունը և գրությունը» ուշադրավ դիտարկելուց, որը հետագայում անփոփոխ տեղ գտավ հեղինակի՝ կիլիկյան միջին հայերենի համապարփակ ուսումնասիրությանը նվիրված «Կիլիկյան հայերենի պատմական բերականություն» (1901) սովորածաբանական մենագրության մեջ: Այստեղ հայագետը հին հայերենի բաղաձայնների հնչումը կիլիկյան հայերենում որոշելու համար օգտագործում է հետևյալ միջոցները. ա. Հին հայերենից ավանդված միավորների ժամանակակից արտասանությունը. բ. Արդի արևմտահայ բարբառների հնչութային համակարգը, որ հեղինակի կարծիքով մասամբ կիլիկյան հայերենի շարունակությունը կարող է դիտվել, գ. Միջին հայերենի բանաստեղծական հանգը, դ. Մի քանի կիլիկյան հայերեն բառերի գրության փոփոխությունները, ե. Այլ լեզուներից կիլիկյան հայերենը ներմուծված կամ նրանից ուրիշ լեզուներ անցած միավորների առադարձությունը<sup>10</sup>:

Հիշյալ միջոցներով կատարված հնչութաբանական վերլուծություններից ակնհայտ է դառնում, որ կիլիկյան միջին հայերեն-

<sup>10</sup> I. Karst, Historische Grammatik..., S. 15.



նում առաջիկ դրաչի փոփոխութիւնները տեղի են ունեցել գրաբարի խուլ ու ձայնեղ պայթականների և կիսապայթականների արտասանութեան մեջ, ըստ այդմ, Յ. Կարստը հայագիտութեան մեջ առաջին անգամ հավաստում է այդ հնչյունների արտասանութեան մեջ ժ—ժև գդ. ձևափոխված նոր, տիրույն փոփոխութիւնը, այսպէս կոչված հայերենի ներկարդ հնչյունափոխարկունը կամ ձայնադարձը<sup>11</sup>: Այս փոփոխութիւնը կայանում է նրանում, որ կիլիկյան միջին հայերենի գրական հուշարձաններում ավանդված գրաբարյան խուլ պայթականներ արտահայտող գրերը՝ պ, կ, ա համապատասխան ձայնեղների՝ բ, գ, դ, հնչում են ստացել գրեթէ բոլոր դիրքերում՝ բառակերպում, բառերի մեջ կամ վերջում: Այս իրողութեան համողիչ ապացույցը Կարստը համարում է հարևան լեզուներից միջին գրական հայերեն ներմուծված բառերի տառադարձութիւնը, ըստ այդմ, հիշյալ բոլոր դիրքերում այդ լեզուների ձայնեղ հնչյունները ամենուրեք արտահայտված են հին հայերենի համապատասխան խուլ տառերով, ուրեմն, բնական է մտածել, որ վերջիններս կիլիկյան հայերենում ձայնեղների արժեք ունեին: Այսպէս, օրինակ, պրս. bazar, divan, հֆր-bail, defendrie, duc, baron, banier, արար. burj բառերը կիլիկյան գրական հայերենում ամենուրեք տառադարձված են՝ պազար, աիվան, պայլ, աըֆընդիլ, աուկ, պարսն, պաներ, պուրն, այսինքն բառակերպում կիլիկյան պ, կ, ա համապատասխանում են այլ լեզուների b, g, d: Նույն համապատասխանութիւնը նկատվում է նաև բառամիջում և վերջում, ըստ որում, արար. xabar, sabun, muhtasib, rubb, պրս. margit, ligam, հֆր-double կիլիկյանում տառադարձված են նույն շարքի խուլ գրերով՝ խապար, սապոն, մուխթասիպ, ըստ պ, մզկիթ, լիամ, աուպլ:

Մյուս կողմից, սրան հակառակ, դասական հայերենի ձայնեղ հնչույթներն արտահայտող գրերը կիլիկյան հայերենում բոլոր դիրքերում համապատասխան խուլերի հնչումն են ստացել, որ ակնատու երևում է հետևյալ տառադարձութիւններից. աղբիլ = հֆր. otrier, բլայր = plait, գոնր = cont'e, դամփլ = temple, մարգիզ = marchis, Ռոբէն, Քոուրեն = Ropinus և այլն<sup>12</sup>:

Խուլերի և ձայնեղների արտասանութեան նույն տեղաշարժը գիտվում է նաև հին հայերենի պայթաշփական հնչույթներն արտահայտող գրերի կիրառութեան մեջ. այստեղ ևս փոխատու լեզու-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 31—32:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 30:



ների խուլ պայմաշփականները կիրիկյանում արտահայտվում են համապատասխան ձայնեղներով, իսկ ձայնեղ պայմաշփականները՝ նույն շարքի խուլերով, օրինակ հֆր. prince, calonge, champagne, chancelier, chaperon, chastier տառադարձվում են՝ բրին, ջալունը, ջամբո, ջանցլեր, ջաբոն, ջաստէլ, ջստ ալամ, փոխատու լեզվի խուլ կիտաշփականները արտահայտված են հին հայերենի համապատասխան ձայնեղներով: Մյուս կողմից, հակառակ օրինաշփությամբ հֆր. Josselin, lige, passage, bourgeois, արար. պրս. Jusan, zanjabii վկայված են ձուլին, լին, բասան, բուրնև, նուշան, դըննպիլ, և այլն<sup>13</sup>:

Սակայն ձայնեղների խլացման ու խուլերի ձայնեղացման հնչյունափոխությունը դրուսյան մեջ արտահայտվում է միայն փոխառյալ բառերի տառադարձության մեջ, այն էլ միայն այն բառերի, որոնք կիրիկյան գրական հայերենում մուտք են գործել բննվող հնչյունափոխությունը ձևավորվելուց հետո: Ինչ մնում է մինչ այդ փոխառված կամ հին հայերենից ավանդված բառերի գրությունն ու արտասանությունը, ապա այստեղ պահպանվել է նրանց ավանդական գրաբարյան գրությունը, սակայն արտասանության մեջ պայմական կամ կիտաշփական հնչյունները ներկայանում են նույն փոփոխությամբ, այսինքն ձայնեղները հնչվում են խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ, ջստ ալամ, պետք է մտածել, որ հին հայերենի՝ վկայ, նուգ, պանիր, ապրեմ, կարենամ, ծառ, ծառայ բառերի գրությունը համապատասխանում են՝ vga, ĩrak, banir, abrem, garenam, jař, jařa հնչումները: Մյուս կողմից, մինչև քննվող հնչյունափոխությունը փոխառված հուն. դիմոս, պրս. դարպաս, գումբեր (գմբեր), արար. սուլտան և այլ բառերը պահպանում են այդ գրությունը համապատասխան հնչումը՝ դիմոս = dimos, գրմբեր = gumbād, այսինքն՝ ճ = դ, ց = գ, ք = բ, և այլն, մինչդեռ, եթե նրանք փոխառված լինեին ավյալ ձայնադարձից հետո, պետք է օրինաշփորեն հնչվեին և տառադարձվեին՝ աիմոս, տարբաս, կումբեր, սուլդան և այլն: Այստեղից, հեշտ է համոզվել, որ հնում փոխառված բառերի գրությունը մնում է գրական, ավանդականը, իսկ արտասանությունը ենթարկվում է նոր առաջացած հնչյունափոխությանը<sup>14</sup>:

Հին հայերենի ձայնեղների խլացման և խուլերի ձայնեղացման այս բնդհանուր օրինաշփությունը խախտվում է մի բանի

<sup>13</sup> նույն տեղում, էջ 31:

<sup>14</sup> նույն տեղում, էջ 30—31:



գեպրերում, երբ ավանդական, պատմական ուղղադրության փոխարեն միջին հայերենի գրական արտադրանքներում հանդիպում է ըստ հնչման կամ արտասանության գրությունը: Յ. Կարստի կարծիքով այս վերջին գրությունը միջին հայերենի գրական երկերում դիտվում է հեռակալ գեպրերում. Ա. Ն անդային ձայնորդից հետո հին հայերենի ձայնեղների փոխարեն միջին հայերենում մեծ մասամբ գրված են համապատասխան խուլերը, միայն սակավ գեպրերում պահպանելով գրաբարյան գրությունը, օրինակ, հիւնկ-հիւնգ, ժառանկ-ժառանգ, հանկիստ-հանգիստ, զանկատ, զանկավոր-զանգատ, զանգատավոր և այլն<sup>15</sup>:

Այս դիրքում գ > կ գրության բացատրությունը տալիս են նոր հայերենը և մի շարք բարբառներ, որտեղ և անդային ձայնորդից հետո գրաբարի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները անփոփոխ են մնում նույնիսկ համընդհանուր խլացման գեպրում: Կարստը ենթադրում է, թե նույնը պետք է լիներ նաև միջին հայերենում, և քանի որ կիլիկյան հայերենում գրաբարի խուլ հնչյուններ արտահայտող գրերը՝ կ, տ, պ, ծ, և ձայնեղների հնչում ունեին, ուստի և-ին հաջորդող հին ձայնեղները փոխարինվում են նոր՝ կ, տ, պ, ծ, և ձայնեղներով: Բ. Նույն օրինաչափությամբ գրաբարի այդ դերանունը և դ երկրորդ դեմքի ցուցական կամ դիմորոշ հոգը կիլիկյանում հաճախ գրվում են՝ այտ, այտի, տ<sup>16</sup>:

Հիմք ընդունելով ժամանակի մի քանի բարբառներում (լեհաստանի հայերի, Տրապիզոնի և այլն) այդ միավորների արտասանությունը՝ ad (ադ), adi (ադի), d (դ), Կարստը գտնում է, որ այս գեպրում ևս առկա է ըստ հնչման գրությունը, քանի որ ավանդական գրաբարյան գրությամբ սպասելի էր՝ այդ, այդի, դ: Սակայն, այլ բարբառներում նույն միավորները հնչվում են ատ (էտ), ատի (էտի), տ, ուստի նրանց այտ, այտի, տ կիլիկյան հայերենում վկայված գրությունը կարող է նաև այդպիսի հնչման արտացոլումը լինել, ըստ այդմ, փրոզությունը կարելի է դիտել իբրև պատմական հնչյունափոխություն, ձայնեղների խլացման արտահայտություն՝ այդ > այտ և այլն:

Գ. Պատմական, ավանդական գրությունը, ուրեմն և գրաբարյան արտասանությունը պահպանվում է նաև ստ, շտ, սպ, շպ, շկ հնչյունակապակցություններում, որոնց կազմի մեջ մտնող խուլ

15 Նույն տեղում, էջ 32—33:

16 Նույն տեղում:



պայթականները, հակառակ ընդհանուր ձայնադարձի, չեն ձայնեղանում: Այս երևույթի ապացույցը ևս տալիս են ինչպես փոխառյալ բառերի տառագարձությունը, այնպես էլ նոր հայերենում նույն կապակցությունների արտասանությունը, ըստ այսմ, նրանցում հիշյալ խուլերի ձայնեղացում չի դիտվում. օրինակ, հֆր. chastier, maister, hospitel, contestable, պրս. durust կիլիկյան գրականության մեջ վկայված են՝ ջաստեմ, մայստո, ուսպիրալ (ոսրիրալ), զունդուսապլ, տրբտիմ գրությունք, այսիքն, պ, տ. խուլ գրերը Ե, Ճ ձայնեղների հնչումը շունեն, այլ հավանաբար նախորդ ս խուլ սուլականի ազդեցությամբ պահպանում են իրենց գրաբարյան խուլ հնչումը: Նույնն է ցույց տալիս հիշյալ կապակցություններն ունեցող բառերի արտասանությունը բարբառենբում, ըստ այդմ, այստեղ ևս խուլերը մնում են անփոփոխ և չեն ձայնեղանում, թեև այդ բարբառներում մնացած դեպքերում օրինաշափոթեն տեղի է ունենում խուլերի ձայնեղացում: Ահա այդ բառերից մի քանիսը՝ հարուստ = harust, սպրկիկ = sprigig, կշտաֆամ = gštanam, հասկեամ = hasknam, ոսկի = voski, շպրանլ = šprtél, բժիշկ = pžišk և այլն<sup>17</sup>:

Անորոշ և հետագա քննության կարոտ է մնում հին հայերենի ձայնեղ պայթականների կամ պայթաշփականների վերածվելը խուլ շնչեղների՝ ք > փ, գ > ք, դ > ք, ձ > ց, ջ > շ: Յ. Կարստը, կիլիկյան գրական հայերենի վկայությունները նկատի ունենալով, տվյալ հնչյունափոխությունը դիտում է միայն որոշ դիրքերում, այն է, ր ձայնորդից և ձայնավորներից հետ, օրինակ. եքք > եքփ, եփ, գերդ (<գիարդ)> գերք, կարգ > կարք, էգուց (<այգուց)> էֆուց, էֆսի, կամ մի քանի այլ բառերում փոխազդեցական հնչյունափոխությամբ՝ հոգացող > հոքացող, ց խուլ պայթաշփականի ազդեցությամբ: Պրոֆ. Ս. Ղազարյանը հիմք ընդունելով կարծեցյալ Շապուհ Բագրատունու երկում և ուշ շրջանի ձեռագրերի հիշատակարանների օրինակները, հին հայերենի ձայնեղ պայթականների հնչյունափոխությունը խուլ շնչեղների համընդհանուր օրինաշափոխություն է համարում միջին հայերենում, թեև մեջ բերված վկայություններում ևս տվյալ փոփոխությունը դիտվում է մեծ մասամբ նույն՝ ր ձայնորդին և ձայնավորներին հաջորդող դիրքում՝ գերքն, անխարբախ, գերք, վարբայպեմֆս, ֆուրոշ և այլն<sup>18</sup>: Հա-

17 Նույն տեղում, էջ 33—34:

18 Յ. Կարստ, եջվ. աշխ., էջ 83—84, Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 472, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 258—259:



վանաբար պրոֆ. Ս. Ղազարյանի այս համոզման համար հիմք են տվել նաև արևմտյան մի քանի բարբառները (Տիգրանակերտ, Ռոզասթո, Զեյթուն և այլն), որոնցում, հիրավի, հին հայերենի պայթական կամ կիսապայթական ձայննշները բոլոր դիրքերում վերածվում են համապատասխան խուլերի՝ բան>փան, բերդ>փերք, բածին>փածին, որբեր>որփեր, ձիւն>ցուն, ջուր>չուր և այլն:

Սակայն, ինչպես տեսանք, միջին հայերենի զրական արտադրանքներում ք>փ, գ>ֆ, դ>ք, ձ>ց, ջ>չ և հակառակ փոփոխությունները վկայված են միայն որոշ կապակցություններում, համընդհանուր օրինաչափություն չեն դարձել և հավանաբար պետք է բացատրվեն դիրքային կամ փոխազդեցական հնչյունափոխությամբ, որ զործում է նաև բարբառների մեծ մասում և արդի հայերենում՝ երբ>երփ, որբ>վօրփ, հագնել>հաֆնել, հոգի>հոֆի, վարդ>վարք, մարդ>մարք և այլն: Այդպիսի համընդհանուր տիրապետող օրինաչափությամբ զրաբարյան ձայննշ պայթականները և կիսապայթականները միջին հայերենում մեծ մասամբ վերածվում են համապատասխան խուլերի, որ ակնհայտորեն երևում է մեր թվարկած տառադարձություններից:

Հին հայերենի պայթական և պայթաչփական հնչյունների՝ միջին հայերենում կրած փոփոխություններն արտացոլող մեր համառոտ տեսությունը հնարավորություն է տալիս քիչ թե շատ իրական պատկերացում կազմել նաև Ժ—ԺԴ դարերի վիմագրական հուշարձաններում նույն հնչյունների գրության և արտասանության մեջ կատարված տեղաշարժերի մասին: Դիտելի է, որ հնագույն հայերեն վիմական բնագրերում (Զ—Ք դդ) զրաբարի բաղաձայնական համակարգը և հատկապես քննության առարկա պայթական կամ պայթաչփական հնչյունները՝ դատելով նրանց փոքրագրված վկայություններից, նկատելի փոփոխություններ չեն ունեցել և հիմնականում պահպանել են դասական հայերենի արտասանությունը: Որոշ տեղաշարժեր նկատվում են ձայնորդների գրության և հնչման մեջ, որ նկարագրելու ենք այդ հնչյունների փոփոխությունները շարադրելիս (Ղ, դ տարբերակումը, Վ, յ ձայնորդների հնչումը և կիրառությունները և այլն):

Այդ բնագրերում հին հայերենի բաղաձայնների հնչյունափոխությունը դիտվում է է դարի արձանագրություններում փորագրված Հեռակղ անձնանվան մեջ, որ քանիցս հանդիպում է Եռակղ ձևով, բայտ այսմ, առկա է հ-ի անկում բառասկզբում: Բացի դրանից, Արուճի տաճարի 668 թ. շինարարական բնագրում վկայված է Կոստանաթին անձնանունը, հուն. Κοσταντινος, լատ. Cons-



tantinus նախաձևի նույնական տառադարձությունն է, մինչդեռ հայերենում դործող կայուն օրինաչափությամբ և բնգայինից հետո սպասելի էր, և հայտնի է բաղմաթիվ վկայություններով, ձայնեղացում՝ տ > դ - Կոստանդ(ին) հմմտ. Անիի մայր տաճարի 1060 թ. բնագրում. «Ինքնակալ թագաւորին Կոստանդեա դուկի» (Գ 1 37):

Մեր ուսումնասիրության համար կարևոր է որոշել հին հայերենի ձայնեղ և խուլ պայթականների ու կիսապայթականների դրություն և հնչման դրությունը Ժ—ԺԳ դարերի վիմական բնագրերում, ըստ մեզ հասած և հավաստի հրատարակված վկայությունների. արդյոք այստեղ ևս դիտվում են կիլիկյան հայերենում նրկատվող հնչյունափոխական օրինաչափությունները, հատկապես ձայնեղների ու խուլերի տեղաշարժը, թե վիմական բնագրերում անփոփոխ պահպանվում են դրաբարյան հակադրությունների եռաստիճան համակարգը կամ առաջանում նոր փոփոխություններ:

Այստեղ ևս հուսալի է այլ լեզուներից կատարված նոր փոխառությունների և բուն հայերեն դրաբարյան միավորների տառադարձությունը կամ փորագրությունը քարերի վրա:

Վերցնենք այլ լեզուների ձայնեղ պայթական հնչյուններով սկսվող և արձանագրություններում վկայված մի շարք բառերի տառադարձությունները:

Ա. Բ(=b) ձայնեղ պայթականը բառասկզբի դիրքում. Բազազ—արար. bazzaz—կաավավանառ, սրանից կազմված՝ բազզփողոց, բազբզնոց—կաորեղենի խանութ, կաորեղենի շարք: Բարար—պարս. barat, մուրնակ: Բուբիար = bunyat, հիմք: Բարխահարկ—վրաց. balaxi—խոտ, հայ. հակ (հարկ)—արտոների հարկ: Հին փոխառություններից՝ բած, բածբար, պրս. պհչ. bāž—հարկ, հասույր, որից՝ բածաուց, բածպետ: Բեկար—չի ստուգարանված, նախաձևն անորոշ, պրս. ba-kār (°): Բուա—ատոր bud—եկեղեցական տեսուչ և այլն:

Այս ցանկից ակներև է, որ փոխառու լեզուների բառասկզբի b ձայնեղ պայթականը Ժ—ԺԳ դդ. վիմական բնագրերում փորագրվել, ուրեմն և արտասանվել է նույնական՝ Բ:

Բացառություն է կազմում պարոն (պարոնուրին) - իշխան, մեծավար բառը, որ թեև ստուգարանորեն ծագում է հֆր. baron-իշխանավոր, աեք բառից, բազմիցս փորագրված է այս ձևով, այսինքն փոխառու լեզվի b=պ, ինչպես կիլիկյան հայերենում: Միայն Տարսայիճ Օրբելյանի պալատի շքամուտքի բնագրում կարգացվում է՝ «Ած շնորհաւոր անէ դարարաս բարոն Տարսայիճին» (Ա-



լայազ ՉԻԴ Դ III 115), այստեղ դարձաբան, բարոն գրությունը փոխանակ վիճազբերում օրինաչափ՝ դարապաս, պարոն, հավանաբար պետք է վերագրել կրիլիկյան գրական արտասանության ազդեցությանը, որը անխուսափելի էր Օրբելյանների և Կրիլիկյայի հոգևոր կենտրոնների սերտ հարաբերությունների պայմաններում: Թվում է, այս բառը փիմագրության մեջ է անցել ոչ թե անմիջականորեն, փոխառու լեզվից, այլ միջնորդաբար-կրիլիկյան գրական հայերենից, որտեղ *baron* > պարոն տիպոսը վարչա-ֆեոդալական այլ կոչումների շարքում (շանցլեր, գունդատապլ, մաբաջախտ և այլն) կարող էր փոխառվել հին ֆրանսերենից: Մյուս կողմից, անհավանական չէ նաև, որ պարոն արտասանությունն առաջանար նույնպես ֆրանսերենից ավելի վաղ փոխառված պարոն բառի առնամանությամբ՝ = *patron*-պաշտպան, պետ, հովանավոր<sup>19</sup>:

Բ. Գ (= ց) ձայնն պայրական բառակցի դիրքում. — Գոնձէն (< գոնձայ, գոնցայ), որից իգ. *անձնանունը*, ընդունելի սառուղաբանություն չունի, ծագումը ենթադրվում է կամ պրս. *gonce-*կոկոն բառից, կամ, որ ավելի հավանական է վրաց. Գվանցա անձնանունից, որ բառացի կարող է նշանակել ապարանջանի: Թանկագին մաս (հմմտ. Հերհերի ՉԿԵ Բ. նվիրագրության մեջ. «ղիմ առպնձանի գոնձէն ավար» Դ III 56)<sup>20</sup>, տվյալ դեպքում մեզ համար կարևորը՝ ց=գ համապատասխանությունն է: Գումբեր, գմբեր-պհլ. *gumbād*, *gmbet* պրս. *kunbad*, *gumbad*, վիճական բնագրերում վկայված՝ գումբիէր (Ախթամար Ժ. դ. ՍԱՐ 277), գումբեր (Կոթ ԺԺ դ. ՄՎ), կումբեր (Անի ՉՂԱ Դ I 44), ըստ այդմ՝ ց=գ. միայն Անիի օրինակում՝ կումբեր, որ հավանաբար դայիս է պրս. *kunbad* ձևից: Գրիւ - պրս. *griub*, պհլ. *grīw*, փոխառված է հնում, արձանագրություններում վկայված է միայն՝ գրիւ, գրվի, գաիւ, գրուի, ըստ այդմ՝ ց=գ. Գունդելս, գոնդեղ-արար. *gundax-բողիշաղգամ*, իբրև անձնանուն հիշատակված Օձունի ՈՂէ (1228) Բ. խաչքարի հիշատակագրում (ՄՎ):

19 Ն. Աճառյանը, հետևելով Ն. Բյուզանդացուն պարոն բառի առաջին հիշատակությունը համարում է Հոսոմոսի վանքի Ոհէ (1198) Բ. արձանագրության վկայությունը. «Ի տերութեան վանացս քսառէր պարոնացս Գրիգոր հեճպին եւ Սմայատա եւ եղբարց իւրևանց...» (ՍԱՐ 149), մինչդեռ նույն բառը պարզ կարգացվում է դրանից ավելի քան մեկուկես դար առաջ՝ ՆՂԳ (1044) Բ. փոբագրված Բյուրականի մի արտոնագրում. «...ևտու գրիւրականի վրաստակն Շահաշահի Դիմ պարոնիկն հոգոյն» (ՄՎ) տե՛ս Ն. Աճառյան, Արմ. բառարան, Ե, էջ 950—951, Գ. Նովսիկյան, Խաչքարային... Գ. Նյու-Յորք, 1942—43, էջ Ի—ԻԱ):

20 Ն. Աճառյան, Անձն. բառարան, Ա. էջ 487:



Հիշյալ օրինակներից ևս ակնհայտ է, որ փոխառված բառերի սկզբի ց ձայնեղը փոքրագրվել է արտասանվել է նույնական գ:

Գ. Գ(=d) ձայնեղ պայթականը բառակզրի դիրքում. Գուկ. ֆր. duc-դուս, բառացի՝ առաջնորդ, վկայված եսժիտերում նՁԲ (1033) Բ. վեստ և ղուկ (ՍԱՐ 209), Տեկորում՝ նՁԵ (1036) Բ. Արեւելից ղուկիս (ՍԱՐ 208), Կեչառիսում՝ կիտանտին և ղուկին (ԺԱ. Հով ՔԱՐ 15), Անիում՝ 1056—60 ԲԲ.՝ Բագատրին Կոստանդեա ղուկի (Գ. I 37): Գուլար-արար. dovlat -հարստություն, ինչք. «Վահրամա և Աղպուղին ղուլարով» (Խորանաշատ ՈԿԲ ՄՎ): նույն բառի փոփոխակը՝ Գուլա, Գուլա - արար. dovla - քաղալոր, իշխան, վկայված՝ Ջալալ Գուլա (Գանձասար ՈՁԲ ՍԲ, Վաճառ Չ ՍԲ, Գարարաս ՉԻԱ. Գ II 114), «Ջալալայ Գուլին հրամանով» (Մեծարանց ՉԱ.)<sup>21</sup>, նույն բառը Փախրաղալա բաղադրյալ անձնանվան մեջ, որ ծագում է արար. faxr-ud-dovla-պարճանք պետության (Ամաղու ՈՂ Գ III 221, ԺԳ 228, 230): Գահեկ- պրս. dahyak—տասանորդ, տասից մեկը, վկայված ղահեկ (Անի ԺԳ Գ I 28), ղահիաֆ (Երևան ՉԺԳ ԿՂԵ 176), ղահիակ (Քանաքեռ ՉԺԵ ՄՎ): Գուլի-արար. dava-դատ, պահանջ, վկայված՝ անղալի (Ամաղու ՉԽԷ Գ III 216), ղալի արնէ (Հառիճ ՉՄԳ ՄՎ), ղալի, անղալի (Քանաքեռ ՉԺԵ ՄՎ, Մարինե ՉՁԲ ՄՎ): Գուկատ - լատ. ducatus, իտալ. ducato, ֆր. ducat<sup>22</sup> -դրամի միավոր, վկայված՝ ղուկատ ղահեկան (Մրեն ՉՁԵ ՕրՃՄ 83), կարմիր տուգաթի (Ն. Գեարիկ ՉԼԲ ՄՎ), Ռ. ղուկատ (Կեչառիս ՈՂԷ)<sup>23</sup>, Գեկան-հուն. δέκαν- լատ. decanus, բառացի տասնպետ, վանական միաբանության հոգևոր հայր, վկայված՝ «ղեկան վղապետս և միաբանքս խոստացան» (Հաղարծին ՈՂԷ ՄՎ): Գեկանոզություն - հուն. վրաց. dekanoz և հայ. ուրիւն ածանցից-հոգևոր առաջնորդություն, վկայված՝ «ծինամծղարութենն ղեկանազութենն Աւրրոպիրին» (Ախթալա ԺԳ)<sup>24</sup>, Գղալիալ-վրաց. dedophali-քաղունի, վկայված «Ի տերութենն պար ղղալիալ Թամարին» (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 100), «ղիտոլիալ Թամարին» (Հավուց Թառ ԺԳ—ԺԳ Հով ՉԲ 26): Գեմէքար-պրս. heh (dih)=-գյուղ, կողմ, երկիր և mehtar-մեծ, ավագ բառերից կազմված բարդություն՝ dehmehtar=ղեմէքար, ղեմէքար-գյուղավագ, գյուղի առաջնորդ, ռախ, վկայված՝ «ղեմէքարս

21 Ե. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր» 1901, էջ 139—140:

22 J. Karst, WBM. ղուկատ բառի տակ:

23 Հ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը..., «Էջմիածին», 1955, № 12, էջ 48:

24 Ս. Տեր-Ավետիսյանի անտիպ հավաքածուից:



Նորաավաց (Նորադուզ ժԳ ՍԲ), «Ն. ամ դեմեբար կացի» (նտ):  
 Նույն բարդութիւնից և հայ. հակ բառից կազմված՝ դեմեբարա-  
 հակ-գլուղավագի օգտին հավաքվող հարկ. վկայված՝ «զայս թո-  
 ղի դեմեբարայիակն» (Ն. Գեառաշեն ԶԻԳ ՍՍ): Ավելի վաղ փոխառ-  
 ված բառերում, որոնք համանաբար վկայված են երկրորդ փոխառ-  
 ությամբ. դեն, դին-այ՛լ. den, պրս. dih-գլուղ, երկիր, աշխարհ  
 իմաստից, վկայված՝ «...զայն հողն, որ ի վերի դեհին է» (Սանա-  
 հին ՈՂԱ ԿՂԱ 183), ներքին դեհն (Հոռոմոս ՈՄ ՍԱՐ 151, 155),  
 դեղին դեհն, արեւելից դեհն..., ներքի դեհն (Բագարան ժԳ ՍԱՐ  
 181, Հոռոմոս ԶԶն ՍԱՐ 159, նտ ԶԻԳ 162): Դեն-այ՛լ. den-կրոն,  
 հավատք. վկայված՝ «եւ ի դեհէ եւ յառաջնորդաց փրեանց» (Ն.  
 Վարագ ՈՂԶ ՄՎ): Դանգ, դանկ-այ՛լ. dang, պրս. dang կամ dank  
 -ամբողջի շրջող մասը, վիճազրեբում՝ միայն վեցերորդ մասը,  
 վկայված՝ «:Ն: դանկն» (Անի ՈԿԳ Դ I 63), «:Բ: դանգն (նտ): Դի-  
 ւան-պրս. divan-ատյան, դատարան, խորհրդարան, որից՝ Սահիր  
 Դիւան անձնանունը (վկայված՝ Անի ժԳ Դ I 19, նտ ԶԻԵ Դ I 22,  
 նտ ԶԺԸ Դ I 24): Վիճազրեբում դիւան=նաև պետական հարկի տե-  
 սակ (Ամաղու Զեէ Դ III 216): Դահեկան-պրս. դարեհական դրա-  
 մի անունը, վիճազրեբում՝ ընդհանրապես արծաթ և ոսկի դրամի  
 որոշ միավոր. վկայված՝ դահեկան, դեկան, դեհեկան, դեհկան  
 ձևերով: Դարապաս- պրս. darvaz-բակի, ֆաղափի, մեծ դուռ, վիճա-  
 գրեբում՝ պալատական շենք, իշխանական ապարանք, վկայված՝  
 «պարոնին նստոց ու դարապաս շկայր» (Մրեն ԶԻԵ Мapp HM 83,  
 Դ I, VI), «ամ շնորհատոր անէ դարաբաս» (Եղեգիս ԶԻԳ Դ III 115),  
 «պահող էաք դարապիս գանձին արբունեաց» (Մաղեվանք ԶԻԳ  
 ՍՍ):

Մեջ բերված վկայութիւններից ակներև է, որ հին և նոր փո-  
 խառութիւնների բառասկզբի ճ ձայնեղ պայթականը վիճազրե-  
 բում ամենուրեք փորագրված է Դ: Բացառութիւն է կազմում դու-  
 կատ բառը, որ Մրենում և Կեչառիսում փորագրված է օրինաչափ  
 դուկատ, իսկ Ն. Գետիկի ԶԻԲ Բ. արձանագրում երկու անգամ  
 վկայված է կարմիր տուգատ, այսինքն առկա է նախաձևի ճ=տ,  
 կ=գ, կիլիկյան միջին հայերենին հատուկ համապատասխանու-  
 թյունը:

Այժմ քննենք փոխատու լեզուների ձայնեղ պայթական հըն-  
 շյունների տառադարձութիւնը բառամիջում և վերջում: Արաբեկ.  
 արաբակ-չաղաթ. atabeg-մեծ հայր, կառավարիչ, վիճազրեբում՝  
 վրացական արքունիքի բարձրաստիճան պարոններ, Զաքարյան  
 իշխանների մենաշնորհը, վկայված արաբակ (Անի ժԳ Դ I 4, նտ



ՈՉԱ 8, նա ՈԿԹ 17), արապակ (Անի ՉՂԱ Դ I 44): Արգան-պրս. āb-շուր, gane-ական, ային ածանցը = չրային հարկ, չրահարկ, վկայված միայն վիմական բնագրերում՝ արգան (Դսեղ ԺԳ ՄՎ, Սանահին ԺԳ ԿՂՍ 123), գավգանն թողի (Աղուդի ԺԳ Դ II 97), ալգան (Լոր ՉՂԳ Դ II 109, Թանաս ԺԳ Դ III 78): Թիրանուշան-պր. iuva- ձալի, banaiša-մանիշակ բաներից, ֆրբե անձնանուն վկայված՝ «մար մերս Թիրանուշանի» (Մարց ՉՂԴ Հով 2Թ 76): Փեղամբար-պրս. peyčambar-պատգամաբեր, մարգարէ, վկայված՝ փեղամբարաց (Անի ՉԿԹ Դ I 27, Հառիճ ՉԾԳ ՄՎ), «իւր փեղամ-պարէն» (Ամաղու Չեէ Դ III 216): Քերոբար-ստուգարանությու-նը և վերձանությունը անորոշ, ըստ Աճառյանի պրս. kutuval-բեր-դապան, ըստ Հ. Մանանդյանի՝ շրշանի ֆարաուդար, նուար<sup>25</sup>, Վիմագրերում եղակի վկայությամբ՝ վրաց իշխանական տիրոգոս-«ես»՝ Սանփանոս ձեռնաւորս և Վահրամ Բերոբարս» (Օշական ՉԼՅ ՎՏ 129): Մուրասիր-արար. muhtasib- շուկայում հսկիչ պաշտոն-յա, ոստիկան, վկայված՝ «զոր տայր մուրասիրն» (Անի 1055—56 Դ I 36): Սահիր-արար. saib-հիշտ, ուղիղ, արդարամիտ, իբրև անձնանուն վկայված՝ Սահիր Դիւան (Անի ԺԳ Դ I 19, 22, 24, 27): Քոբ-ստուգարանությունն անորոշ, ըստ Աճառյանի պրս. kop, արդի հնչումով՝ kup-կարաս, ավելի հավանական է ն. Մառի ըս-տուգարանությունը, որ հանում է վրաց. khvabi-կարսա բա-ռից: Վկայված է Հաղարծնի վանքում գտնված պղնձե մեծ կաթ-սայի ՈՉԱ (1232) թ. արձանագրության մեջ. «...ստացա զֆոբս» (Հով ԲԱՐ 18): Անգարիոն-հուն. αγγαρύου-տարապարհակ, կոս վկայված միայն Անիի 1060 թ. արձանագրության մեջ «... աղատեցին զվեցկէ կոս և զսայի և զկամին և զանգարիոն» (Դ I 37): Մխարգրձել-վրաց. mxargzdeli-երկայնարագուկ, այս-պես էին կոչվում վրաց արքունիքի վասալ Չարարյան իշխաննե-րը, նաև նրանցից ոմանց անձնանունները, վկայված՝ «ամիրսպա-սալար Մխարգրձելին» (Անի ԺԲ Դ I 58), «ես՝ Մխարգրձել (Հաղ-բատ ԺԳ ԿՂՀԲ 171, Սանահին ԺԳ ԿՂՍ 125), «Ի պարոնութենն սպասալար Խարկրձեային» (Արուճ ՉՂԴ ՄՎ): Սիգել-լատ. sigil- lum-կնիք բանից, հրաման արտոնագիր, վկայված՝ «զՄորի սիգել-լով մեղ էին տուեալ» (Հաղբատ ՈԿ ԿՂՀԲ 231), «Իմ պապն գնել էր ու սիկելով յիս տվելի» (Բագնայր ՉԺԱ ՍԱՐ 188): Ճաղագ-վրաց.

<sup>25</sup> Հ. Աճառյան, Արմ. բառարան. 2, էջ 1442, Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., Գ, էջ 250:



նալակի, ուտ. նալագ. լազ. նալա-գետափնյա մացառուտ, վկայված «Աւ գութանի հող նաղագովն» (Սաղմոսավանք ժԳ ՄՎ): Մանկանայ-պրս. māh-լուսին, ամիս և ցառե-ային, ական, ածան-ցից-ամսական տուրւ. ամսավեար, վկայված՝ «Եւ զջաղացի մանկանա» (Գառնի ԶԿԴ)<sup>26</sup>, «Թողի...գմահանէն» (<մահանայն) (Բջնի ժԳ նա): Զուկակ-արար. zugag-փողոց, վկայված միայն Անիի և մերձակայքի վիճագրերում՝ «քուրք տներ Հասեցոնց զուկակի» (Անի ՈԿԴ Դ I 63), «Գնեցի կուղպակ ի Մազուկակին» (Հոռոմոս ԶԺԵ ՍԱՐ 157, Խծկոնք ՈՂ ՍԱՐ 219): Մծիկնաւարբուխուցէս - վրաց. meignobari — ֆարաուղար, դիվանադպիր-բարդությունը՝ ֆարաուղարների պետ, ավագ, վկայված միայն Անիի ԶԾԹ (1310) Թ. նվիրագրում՝ «...մծիկնաւարբուխուցէս Մաթէս և իմ կենայկից Սթենի «(Անի Դ I 64): Կանդիդատ, կանկիտատ, սպարաւկանկիտատ - հուն. κανδικαντατος բառից-բյուզանդական գինձորական աստիճան, վկայված՝ երկու անգամ Անիի նույն արձանագրության մեջ. «Գրիգոր Լապաստակա որդին սպարաւկանկիտատն և Սարգիս Արտաուզա որդին սպարաւկանկիտատն - (Անի Դ I 37, 1060 Թ.): Մանդատորբախուցէս - վրաց. mandaturt-uxucesi-հին վրացական արքունական տիրադաս, ոստիկանապետ, վկայված՝ մանդատորբախուցէս (Անի ժԲ Դ I 2, նա ՈՍԷ Դ I 4) մանդատորբախուցէս (Հաղբաա ՈՍԹ ԿՂԷԲ 168): Մողանիս - արար. maydan - հրապարակ, շուկա, վկայված՝ Անիի վիճագրերում, «Ի մողանիս խանապարն կուղպականովն» (Անի ՈԿԴ Դ I 63): Մուտէրիկ-արար. mudarrak - հսկիչ, շուկայի հսկիչ, մեկ անգամ վկայված՝ «Զայս գիր տվար Անս մուտէրիկերուն» (<մուտէրիկ-եր-ոյն) (Անի ժԴ Դ I 22): Փանդուկ, փնդուկ-արար. fundug-կամ funtug-պանդուկ, խան բառից, որ ծագում է հուն. πανδουκον պանդուկ, հյուրանոց ձևից, վկայված է միայն վիճագրերում՝ «Խաչօրկանն հողերն և փնդուկն..., կամարակապ փնդուկն» (Անի ՈԿԴ Դ I 63), «գեղն կամարան և փնդուկն» (Հոռոմոս նԶԵ ՍԱՐ 168), «Վասիին փրնդկին ընդդեմ է» (Բագնայր նԶԱ ՍԱՐ 178), «շինեցի ի: փնդուկ» (Կոթավանք 1020 ՄԲ): նույն բառը նաև իբրև տեղանուն գործածված. «Եւ զհինն, որ կոչի Աւեր փանդուկ» (Անի ժԳ Դ I 58):

Ճղումտել-վրաց. չԽՈՆԴԻԸԵԼԻՎ-վեզիրների վեզիր, վկայված՝ «Իւր մեծամեծ իշխանացն Սարգսի, ամիր Քրդին, Անտոնի

26 Գ. Գրիգորյան. Գիտություն միջնադարյան մի տարրի մասին, ՊԲԷ, 1964, № 2, էջ 263:



ձղունտեյին, Ելբեկին» (Հաղարծին Ուր)՝<sup>27</sup> Հին փոխառություններից՝ անդարձ, անդարձագիր-պհլ. andarz, պրս. պատվեր, խրատ, վերջին կտակ, վկայված՝ «գրիմ անդարձս այլ ցեղ դարձանէ» (Գեղարդ ԶԻՐ Հով ԽԱՂ III 14), անդարձագիր (Անի Ո ԿԳ Գ I 63), անդարձաւ Խաչերեսին (Անի ԺԳ Գ I 4), անդարձ էր արարեալ (Մրեն նեԱ ՍԱՐ 197), իմ դրամագին է անդարձ (Ամաղու ԶԻ Գ III 218—220), կատարեցաք զանդարձ (Բարձրաբաշ ՈԶԸ ՄՎ): Մոդհուն. բնուց-բնդեղենի չափ, լատ. modius, վկայված՝ «Կատապալանով եւ լինի տա սերմ :Ո: մոդ» (Անի 1060 Գ I 37), «Արտ. :ԺԵ: մոքոյ տեղ» (Արճեշ Զե ՍԱՐ 269):

Այս ցանկից ևս ակներև է, որ Ե, Գ, Ժ ձայնեղ պայթականները բառերի մեջ կամ բառավերջում ևս մեծ մասամբ տառադարձված են նույնական Բ, Գ, Դ գրերով: Բացառություն կաղմոզ բառերի մի մասը զուգահեռ վկայություններով է հայանի, ըստ որում, գրանց մեծ մասը օրինաչափ է՝ Գ=Գ, Ժ=Դ, (մխարգրձել=խարկրձեալ, սիգել=սիկել, մոդ=մոք և այլն), մյուսները հավաստում են Ժ=Մ, Գ=Կ կիլիկյան միջին հայերենին հատուկ տառադարձությունը (ducat=տուգատ), որ հավանաբար գալիս է գրական ճանապարհով: Բյուզանդական կանդիդատ=kandidat զինվորական կոչումը տառադարձված է կանկիտատ. այստեղ, անշուշտ, դեր է խաղացել Կ, Մ հնչյունների առնմանությունը, որի հետևանքով բառամիջի դ-ն կ-ի ազդեցությամբ նույնացել է նրա հետ, իսկ Ժրկոթող դ-ն տ-ի ազդեցությամբ դարձել է տ՝ kandidat > կանկիտատ, սպարաբկանկիտատ:

Որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական բնագրերում կիլիկյան գրական հայերենում տեղի ունեցած պայթական կամ պայթաշփական բաղաձայնների ձայնեղ > խուլ, խուլ > ձայնեղ տեղաշարժը չի նկատվում, կարելի է համոզվել նաև այլ լեզուների խուլ պայթականների տառադարձություններից վիմագրության մեջ, ըստ այդմ, փոխառված բառերում և անձնանուններում փոխատու լեզվի Բ=Ա, Փ, Ժ=Մ, Բ, Կ=Կ, Բ, մինչդեռ կիլիկյան գրական հայերենում, ինչպես վերը տեսանք, օրինաչափ էր այդ խուլների ձայնեղացումը՝ Բ=Բ, Ժ=Դ, Կ=Գ և այլն:

Այդ են ցույց տալիս հաջորդ վկայությունները Ժ—ԺԳ դդ. վիմագրերից. Բ=Ա-Իպատոս հուն. ἵπατος-բյուզ. զինվորական կո-

<sup>27</sup> Տե՛ս Ս. Երեյան, Агаринская надпись, 1184 г. «Исследования по истории культуры народов Востока», Сборник в честь Н. А. Орбели, М.—Л., 1960, стр. 84—85.



չում, վկայված՝ «Մխիթար իսլատոսն Կրտինն արդին» (Անի 1060 Գ I 37): Կատապան-հուն.  $\kappa\alpha\tau\alpha\pi\alpha\lambda\alpha\upsilon\tau\alpha$ -ֆաղաֆապետ, գլխավոր, լատ. katapanus հումանիշից, հիշատակված՝ «Արեւելից կատապանիս վիկացոյս...», կատապան ով եւ լինի տա սերմ :Ո: մող (Անի 1060 Գ I 37): Պախտ - հուն.  $\pi\alpha\chi\tau\alpha\upsilon$ -հարկ, ռենտ, հիշատակված՝ եզակի՝ «...վասն պախտից տանց բաղաբիս» (Անի 1956 Գ I 38): Պատրոն-հֆր. patron-պատրիկ, պետ, հովանավոր, բազմաթիվ վկայություններից առաջինը Բյուրականի ՆՂԳ (1044) թ. արտոնագրում՝ «Ետու զԲիրականի զթաստակն Շահանշահի՝ իմ պատրոնին հոգոյն» (ՄՎ): Շահապ - պհլ. šahrap - իշխան, գավառապետ, ֆաղաֆապետ, վկայված՝ «գրեցի հրամանս իշխանիս Զայէ շահապս» (Լժբատ Զ)<sup>28</sup>:

K=կ, ք, -Չարեկ, շարեկ-պրս. čaryak-ֆառոդ, վիճադրութում բանիցս հիշատակված նաև՝ շարեֆար-հեղուկաչափ, բնդեղենի կամ հողի տարածության չափի որոշ միավորի իմաստով. «Տվաք :Ա: շարեկ ի կարողիկէս» (Անի Զեթ Գ I 40), «յամէն զրբէս շարէէ ձէթ» (Կարբի ԺԳ ՄՎ), «զասարանոցիս շարէէն» (Հերհեր ԶՄէ Գ III 52): Առաջին օրինակում՝ հողատարածության միավոր, երկրորդում՝ հեղուկաչափի, երրորդում՝ ամբողջի մեկ ֆառոդը: Սալուֆ-արաբ. saluk-ընչագուրկ, աղֆառ մարդ, վկայված Քոփքրիկուլախի Ժ դարի բնագրում՝ «...կամ Բագրատունի, կամ ազատ, կամ սալուֆ<sup>29</sup>»: Կրուլ-վրաց. kruli-անիծված, վկայված՝ «Եւ վրացին կրուլ եւ անիծած լիցի» (Անի ԶԿԹ ԲԱՄ 87): Կուղպակ, կուղպականի, կղպականի,-պրս. kurba կամ kulba-խանութ բառից, բազմաթիվ հիշատակություններից առաջինը Մաքենոցաց վանքի 3Մ (901) թ. արձանագրության մեջ. «Ետու :Ե: կուղպակ յԱնի» (ՎՏ 5):

T=տ, ք-Թաղար-չաղաթ. tarar - պարկ, աման, հետնաբար՝ հարկ, տուրք վկայված այլ հարկերի թվում՝ «...երարձին զմրուր եւ զբաղար» (Անի ԺԳ Գ I 1), «Ոչ եղին քաղար, ոչ մեծ շար, ոչ փոքր» (Շիրակավան ԺԳ ՍԱՐ 171), «...թողի... զկովայհամարն, զկալարաղարն (Բջնի ԺԳ)<sup>30</sup>: Թարխան-պրս. tarxan-ապահարկ, հարկից ազատ, արտոնյալ, վկայված՝ Բջնիի Պէ (1358) թ. բնագրում: Նալաք - արաբ. lanat > nalat շրջյալ ձևից -ա-

28 Հ. Եղիազարյան, Լժբատավանք, «էջմիածին», 1960, № 2, էջ 57:

29 Աշխ. Քալանթար, Վանսասանի արձանագրությունները (անտիպ), Ս. Ա. Վազյան, Նոր ստուգարանություններ..., «Երասեր», 1969, № 6, էջ 49-50:

30 Հ. Եղիազարյան, Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները, «էջմիածին», № 9-10, էջ 47:



նեծք, նզովք, վկայված է վիճական բնագրերի անեծքի բանաձևի՝ մահմեդականներին վերաբերող մասում. «Զիւր Մահմէտէն ապի-զար լինի եւ յի:Տ: Նալար առնու» (Վաղաղնի վանք Զ ԿԳ Դ II 101), «Ի փեղամբարացն նալար է» (Հառիճ ԶԾԳ ՄՎ): Շորտայ-արար, Տorta-ոստիկանական պաշտոնյա, հանդիպում է՝ «Ոչ շորտայի, ոչ այլ ոչ ում» (Ամազու ԶԻԳ Դ III 234—235)<sup>31</sup>: Տամ-ղա, տաղմաշի, տաղմատար, թախար, լեռչա, բառացի՝ զր-րոշմ, ձեռնադրոշմ, վիճագրերում՝ հարկի տեսակ, «Ի սկզբանէ բաժ ու տամղա չէին տվել» (Անի ԶԻԹ Դ I 23), «Զչաղացնոյս ամէնոյ զտամղէն» (նա ԺԳ Դ I 28), «Որ Անոյ տաղմանի էի» (=հարկահավաք) (նա ԺԳ Դ I 28), Գառն տաղմատարես (Գառ-նի ԶԿԳ)<sup>32</sup>: Արախ>արախ-ույղուր, ortak, urtak-առևտրի բն-կերակից, պաշտոնակից, վկայված մեկ անգամ՝ «Ես՝ արախ Յով-անէս միարանեցա սր վանքս» (Վանստան ԺԳ դ.)<sup>33</sup>: Խատ-վրաց, xati-պատկեր, նկար, ավանդված Անիում, Տիգրան Հոնենցի եկե-ղեցու արձանագրում. «...զարգարեցի պատկերագործ խատերով» (Դ I 63): Տրապեզ, տրապիզ-հուն, τραπεζα-սեղան, սեղանատուն, վկայված՝ «էտու ազնութիւն տրապեսգիս... շինեցաք զը-հրաշագեղ տրապէզն» (Հաղարծին ՈՂէ ՄՎ): Տակոպետոց-պհլ. takarpat-մատովակների ավազ, վիճագրերում հիշատակ-ված հնձանի կամ մառանի իմաստով «...արկի եւ զմատնարկն, շի-նեցի տակոպետոց» (Հոռոմայր ՈՄ ՄՎ): Թիւրանուշան, բարդու-թյուն կազմված պրս. tuva - ծալք և banafša - մանիշակ բա-ռերից, վիճագրերում հիշատակված փրբե անձնանուն՝ «Եւ մայր մերո Թիւրանուշանի» (Մարց ԶԼԹ Հով ԶԹ 76):

Փոքր-ինչ այլ պատկեր է ներկայացնում օտարլեզվյան պալ-թաշիականների տառադարձությունը Ժ—ԺԳ դարերի վիճական ար-ձանագրություններում: Այդ հնչյուններից ձ և ծ-ն հանդիպում են միայն վրացերենից փոխառված սակավաթիվ բառերում (Վարձիա, ծինամձոր, մծիկնարարոյխուցէս և այլն), որտեղ նրանք հա-մապատասխանում են վրաց. յ, շ հնչյուններին: Ավելի լայն կիրա-ռություն ունի շ-ն, հատկապես արևելյան լեզուներից ներմուծված

31 Շորտայի բնկերցման մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Ավագյան, նոր ստուգարանություններ և վերձանություններ վիճական արձանագրություն-ներում. «Լրարեր», 1969, № 6, էջ 47:

32 Գ. Գրիգորյան, Գիտադրություն միջնադարյան մի տուրքի մասին, ՊԲՀ, 1963, № 2, էջ 263:

33 Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրությունները (անտիպ):



տերմինների մեջ, ըստ այդմ, փոխատու լեզուների յ-ն վիճագրե-  
րում սովորաբար տառադարձվում է կամ ձայնեղ ջ-ով, կամ այն-  
չի սակավ՝ համապատասխան և խուլով, երբեմն էլ նույն միավո-  
րը գրված է զուգահեռ՝ ջ=ն-ով: Մեջ ենք բերում եղած վկայու-  
թյունները.

յ:=ջ, Զեւկի-թուրք. ջրվալը, բառացի ջվալի, պարկի հա-  
մար (պարկային) հետնաբար՝ հարկի, պարտույթի տեսակ, վկայ-  
ված միայն վիճագրերում. «...զեզին շար եւ զջեւկի վեր կալաք»  
(Նորագույն ժԳ ՍԲ, ՄՎ): Զոնի, ջունի-արար. juhi, ծաղրածու,  
խեղկատակ, վիճագրերում հանդիպում է իբրև անձնանուն՝ «Ես՝  
Զոնի...կանգնեցի զխաշս... Զոնէ» (Աստղածոր ԶԺԶ ՍԲ): Զույ-  
հակ, ջուլահկ-եր-պրս. julahak-ստայնահկ բառից, հնագույն  
հավաստի հիշատակությունները վիճագրերում՝ «Եւ շարես  
առնու կամ հորայկտաւ ի ջուլահկէ» (Ավան ԶԼԳ ՄՎ, ԿՂԱ.19-վեր-  
ծանվել է՝ ի ջուլահկէ), «Եւ զջուլահկերոյն հորակտաւն (նա ԶԼԶ  
ՄՎ, ԿՂԱ.21-վերծանվել է՝ զջուլահկերոյն հորակտաւն): Զալալ-  
արար. jalal - անունից, բառացի՝ փառք, վեհուրջուն, վիճա-  
գրութեան մեջ քանիցս հիշատակվում է իբրև անձնանուն, առանց  
ջ հնչյունի խլացման—«Թագոր Զալալայ Դովին հրամանով...  
յիշխանութեան Զալալին..., Զալալին հրամանաւ» (Մեծարանց  
վանք Զ, ժԳ)<sup>34</sup>, «Ես՝ Զալալ Դաւա Հասան» (Գանձասար ՈԶԹ ՍԲ):  
Մուլաջիուր, հավաստի շի ստուգաբանված և վերծանված է՝ մու-  
սայիպ, հիշատակվում է Անիի գլխավոր դարպասի արձանագրու-  
թեան մեջ, մի բանի զիջված հարկերի թվում. «Ի բաժ, ի դաղմա  
և ի մուլաջիուր դարձուցին» (Անի ժԳ Գ I 1):

յ=ջ, ն-խարաջ, խարան, խարն-արար. xara]-գլխահարկ,  
ծախս, վիճագրերում՝ բնդհանրապես հարկ, նաև՝ ծախս,  
ծախսում—«Յողար զխարան ջողջաց» (Շիրակավան ՈԶ ՍԱՐ 171),  
«ոչ մեծ կամ փոքր խարնի» (Մարինե ԶԶԲ ՄՎ) «հաստատեցի ամէն  
խարջովն անչար» (Դադի վանք ԶԺԳ Մով 96). «Է:Ճ: սպիտակ ի  
վերա խարն արար» (Հոռոմոս ԶԺԸ ՍԱՐ 258), «Ու խարն, որ և-  
ղաւ դարապասիս :ն:ն: դուկատ դահեկան» (Մրեն ԶիԵ Մարր ՀՄ  
83, Գ I VI): Լեջուր արար. hajib-սենեկապետ, արաբոլապետ,  
վիճագրերում կիրառված է նաև իբրև անձնանուն. «...Ես՝ Մնջատ  
որդի Լեջրին տվի էգատեղ» (Մեծարանց ժԳ)<sup>35</sup>, «Ես՝ Մուշեղ որդի  
Լեջրին» (նա ԶԻԲ ՍԲ), «Ես՝ Լենուպս ևւ ամուսին իմ Անիվան»

<sup>34</sup> Ե. Գաղյան, Մեծարանց որ և Ս. Լակորա վանից արձանագրություններ,  
«Բանասեր», Փարիզ, 1901, էջ 137—147:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 148:



(Վանեվան ՉԿԹ)<sup>36</sup>, «...պատրոնն հեջուր վահրամ շինեաց զվա-  
յելուչ ժամատունս» (Հառիճ ԺԳ ՄՎ), «Գաաեր մեծին հեհուր վար-  
համա» (Ն. Վարագ ԺԳ)<sup>37</sup>: Ինչու, խասինջու-մոնդ. enju, inju  
տիրունի, աբունի և արար. has-մախուր, իսկական բառերից  
կաղճված բարդություն, հզակի վկայությունը Անիի ԺԳ—ԺԴ դդ.  
մի արտոնագրում. «Որ եղև մայրաքաղաք խասինջու» (Գ I 1):  
Սա. Օրբելյանի նրկում՝ էնջու-տերունի<sup>38</sup>: Հունրա-պրս. huja-  
կրպակ, տաղավար, սենյակ կարավանատան-մեկ անգամ վկայ-  
ված՝ «և ի խանապարին ներքի դեհն :Բ: հունրա» (Հոսոմոս ՉԻԹ  
ՍԱԲ 162): Ապարանջան, հեանաբար՝ ապրանջան-պրս. abranjan  
-ձեռքի զարդարանք օղական, վիմագրերում հզակի հի-  
շատակություն՝ «Զիմ առպեհանի գոնծէն տվար» (Հերհեր ՉԿԷ  
Գ III 56): Սարան փողոց, Սաորնփողոց արար. sarraj-քամ-  
բագործ, համեաագործ, Անի քաղաքի թամրագործների, համեաա-  
գործների շարքը կամ փողոցը, բանիցս հիշատակված քաղաքի և  
մերձակայքի հուշարձանների վիմագրերում. «Նոու... Սաորնփո-  
ղոցին կուղպակ» (Բագնայր ՈԶԳ ՍԱԲ 285), «Սարան փողոցի  
կուղպակն :Գ: ժամ» (Արջո առիճ ԺԳ ՍԱԲ 191):

Փոխառված բառերում պայթական ու պայթաշփական հընչ-  
յունների տառադարձությունը Ժ—ԺԴ դարերի վիմական բնագրե-  
րում հստակ պատկերացնելու նպատակով կարելի է այն համեմա-  
տել նույն բառերի՝ կիրիկյան միջին հայերենի գրական հուշար-  
ձաններում ավանդված տառադարձության հետ: Ահա երկակ տա-  
ռադարձություն մի շարք միավորների համեմատական տախ-  
տակը.

Վիմական բնագրերում	Փոխառու լեզվում	Կիրիկյան միջին հայերենի գրական երկերում
1	2	3
1. Բագագ, Բագրգեց, բագփողոց. — կառվա- վաճառ, ձոթավաճառ, խանութների շարք	արար. bazzaz	պագագ, պագրգեի,
2. Քունիար — ճիմք	պրս. bunyad	պունյար
3. Բուրջ — աշտարակ	արար. burj	պուրն, պուրնեի, պուր- նէս — բագրեի

<sup>36</sup> Ալիշան, Սիսական, էջ 62:

<sup>37</sup> Կ. Ղաֆաղարյան, Պատմահնագիտական դիտողություններ..., «Տեղեկա-  
գիր» ԳԱ Հայկական ֆիլիալի, Երևան, № 4—5, էջ 172:

<sup>38</sup> Տե՛ս Ի. Март, Новые материалы по арм. эпиграфике, СПб., 1893,  
стр. 77—79, J. Karst, WBM, ինչու բառի տակ:



1	2	3
4. Աբդղարիք, Ղարիք <sup>39</sup> — անձնանուն	արաբ. ğarib պանդուխտ, հայր պան- դուխտի	Ապլխարիի, Ղարիի, Ղարիին
6. Աբարեկ, արարակ, արապակ—խնամակալ բազմաթի	չաղաթ. atabeg	արապակ, արապեկ
7. Գմբեք, կումբեք	պճլ. gumbad պրս. gunbad, kumbad	կումպեք
8. Իզդիշ—անձնանուն	թաթ. igdiš—խառնա- ծին (ձի)	Իկաիշ
9. Գուլի—դատ, պա- հանջ	արաբ. dava	տաւի եւ խամ
10. Գարգաս, դարասյաս, դարարաս—դուռ, շր- բանուտք, ապարանք	պրս. darvaz — բակի, բազարի մեծ դուռ	տարգաս, տարգասեի— դատարան
11. Գիւան—պետական	պրս. divan—առյան, խորհրդարան, դատա- րան	տիւան
12. Գովար—ինչք, ու- նեցվածք	պրս. dovlat—նարստու- րյուն, ինչք	տովար, նահ իզ. անձ- նանուն՝ Տովար
13. Գուլայ, Գովլայ, նահ անձնանուն՝ Փախրաղայլա—պե- տուրյուն, տերուրյուն, բազմաթ	արաբ. dovla—պետու- րյուն, պարծանք	վկայված է միայն, Փախ- րատուլայն
14. Գուկ—իշխան, տեր	ֆր. duc	տուկ, տուկերոյ եւ մուխ- րասպներոյ
15. Կանդիդատ, կանկի- տատ—բյուզ, զինվո- րական աստիճան	նուց. kandidat	չի վկայված
16. Մոդ, մոր—չափի միա- վոր	նուց. modus — չափի միավոր	մոր; մորոյն

39 Այս կարգի այլ անձնանուններում. Արուխանում, Ապուխանրմ - արաբ. abul hanum-հայր եանուսի-կիրիկյան հայերենում ավանդված՝ Ապուխանում: Աբուլհասան > Բլխասան-արաբ. հայր Հասանի, ավանդված Ապրլխասան, Աբաղա. Ապաղա-չաղաթ. abaga-հորեղբայր - Ապաղա: Ագրուղա-չաղաթ. ag-buga-սպի-տակ ցույ, ավանդված՝ Ախպուղա, Ագրուղա: Խուրլուրուղա-թթր. guisu -ե-շանիկ և buga-ցույ բառերից -ավանդված՝ Խուրլուրուղայ, Խուալուրուղայ (Հաղ-բատ, իր որդնանկարի մակագրության մեջ - ԿՂԸԲ 152): Հարբ, Հարպ - արաբ. harb-կարին, Բաշ-կիրիկյանում միայն՝ Հարպ(ին): Ապանբեկ, Ապանպեկ-թաթար. aslan - առյուծ և beg - իշխան բառերից - կիրիկյանում հիշատակված՝ Ապանպեկ(ին):



1	2	3
17. Մոզանիս — հրատարակ, շուկա	արաբ. maydan — հրատարակ	ժայռան, մկյտան
18. Մուրասիբ — շուկայի հսկիչ, ոստիկան	արաբ. mu htasib — նույննչ.	մուխրասուլի, մուխրասուլենի
19. Սահիպ, Սահիբ — անձնանուն (Սահիբ Ելիան)	արաբ. sahib — պետ, ավագ, տեր գրասենյակի պետ, ավագ	Սահիպ
20. Սիգել, սիկել — արտանագիր, հրամանագիր	լատ. sigillum — կնիք, հրաման	սիկել
21. Փեղամբար — մարգարե, պատգամբեր	պրս. peyambar — պատգամավոր, մարգարե	փաղամբար, բէլամբար
22. Փնդուկ — պանդուկ, խան	արաբ. fundug — նույննչ.	փնտուկ

Այս տախտակից ևս ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն կիլիկյան միջին հայերենի, որտեղ օտարլեզվյան ձայնեղ պայթականները մեծ մասամբ արտահայտվում են հին հայերենի համապատասխան խուլերով, երբեմն նաև՝ շնչեղներով՝ b = պ, փ, g = կ, d = տ, p, յ = ն, շ, վիմական բնադրերում այդ տեղաշարժը չի նկատվում և թվարկված միավորներում այլ լեզուների ձայնեղ պայթականները մեծ մասամբ (բացառությամբ մի բանի զուգահեռ ձևերի) տառադարձվում են հայերենի համապատասխան ձայնեղներով՝ b = բ, g = գ, d = դ, յ = ջ:

Սակայն փոխառված բառերի բաղաձայնական համակարգի՝ վիմական բնադրերում ավանդված տառադարձություններից չի կարելի այն համոզմանը հանգել, թե վկայված ժամանակաշրջանում դոյություն է ունեցել լիակատար համապատասխանություն փոխառու լեզուների և վիմադրերի ձայնեղ և խուլ պայթականների արտասանության ու դրության միջև, և, ըստ այդմ, հին հայերենի բաղաձայնական համակարգը նկատելի տեղաշարժեր չի ունեցել վիմական արձանագրություններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև վիմական բնադրերում կիլիկյան միջին հայերենում դիտվող՝ հին հայերենի պայթական բաղաձայնների տեղաշարժը՝ ձայնեղների խլացումը և խուլերի ձայնեղացումը իրրե տիրապետող օրինաչափություն չի դործում, այսուհանդերձ, այդ օրինաչափության զանազան արտահայտությունները կարելի է նկատել նաև վիմագրական հուշարձաններում: Եվ



դա միանգամայն հասկանալի է. պատմական Հայաստանի արեւելեցան և հյուսիսային գավառների ինքնուրույն իշխանութիւնները և մանավանդ նրանց հոգևոր ու մշակութային կենտրոնները սերտ հարաբերութիւններ են ունեցել Կիլիկիայի հայկական թագաւորութեան ու համապատասխան կրթական, մշակութային օջախների հետ և բնականաբար ենթարկվել գանազան փոխազդեցութիւնների՝ գիտութեան, արվեստի, գրականութեան, նաև լեզվական մշակութի բնազավառներում:

Մյուս կողմից, մեր հետազոտութեան ատաղձը՝ Ժ—ԺԳ դարերի հայերեն վիմական արձանագրութիւնները և ընդհանրապես բովանդակ հայ վիմագրութիւնը իր ճնշող մասով տեղավորված է պատմական Հայաստանի արևելեցան և հյուսիսային գավառների, առավելապես Մեծ Հայքի ընդարձակ տարածքի վրա սփռված ճարտարապետական հուշարձանների պատերին, որ մտածել է տալիս, թե արևելեցան և հյուսիսային Հայաստանի տարրեր գավառներում փոքրագրված բազմահազար վիմագրեր կազմողները կամ գրիչները նույն լեզվով շին խոսել և ավանդել այդ բնագրերում, այլ ունեցել են բարբառային ինչ-ինչ տարրերութիւններ, իհարկե, ոչ այն աստիճան, ինչ գոյութիւն ունի արդի խոսվածքներում: Ահա այդ տարրերութիւնները նկատվում են նաև քննութեան առարկա պայմական հնչյունների արտասանութեան ու գրութեան մեջ<sup>40</sup>:

Այսպիսով, փոխառված բառերի պայմական կամ պայմաշը-

40 Արևմտյան Հայաստանի՝ հայագիտութեանը հայտնի Ժ—ԺԳ դդ. վիմական արձանագրութիւնների ընդհանուր քանակը անհամեմատ պակաս է և ժողովրդի հաշիւներով չի անցնում մի քանի հարյուրից: Վիմագրերի սակավութիւնը միայն մասամբ կարելի է բացատրել այն իրողութեամբ, որ այդ տարածքի վրա հնագիտական, վիմագրագիտական որոնումներ և հետազոտութիւններ չեն կատարվել կամ կատարվել են պատահական, ոչ հիմնավոր ու սպառիչ: Արձանագրութիւնների սակավութեան հիմնական պատճառը, մեզ թվում է, Կիլիկիայի պետութեան սահմաններում վիմագրութեան իբրև պաշտօնական, նվիրաբերական, արտոնագրային կամ հուշագրային վավերագրութեան ավանդութեան բացակայութիւնն է, որ հավանաբար մասամբ փոխարինվում էր պետական, պաշտօնական և այլ գրութիւններով՝ թղթերի վրա, մատյաններում: Մյուս կողմից, Կիլիկիայի Հայաստանից մեզ հասած Ժ—ԺԳ դդ. վիմագրերի լեզվաբանական ուսումնասիրութիւնից պարզվում է, որ հակառակ սպասածի, այդ բնագրերի լեզուն իր հիմնական զծերով շատ բիշ ընդհանրութիւն ունի կիլիկիայի միջին դարական հայերենի հետ և բոլոր հատկութիւններով հիշեցնում է արևելեցան Հայաստանի, Արարատյան աշխարհի կամ Երրակ-Արագածոտնի վիմագրութեան ուրույն կիսազրաբար, կիսաբարբառային (գերազանցապես ում ճյուղի բարբառների) ավանդական լեզուն:



փական հնչյունների վիճական բնագրերում փորագրված տառա-  
գարձությունների մեր քննությունից ակնհայտ դարձավ, որ բա-  
ցառությամբ մի քանի բառերի երկակի գրության, մնացած բոլոր  
գեպրերում հին հայերենի պայթական հնչույթների հոյակ հակա-  
գրությունը՝ ձայնեղ-խուլ-շնչեղ, պահպանում է իր արժեքը և նկա-  
տելի փոփոխություններ չի կրել, այսինքն կիլիկյան հայերենում  
գիտվող՝ բաղաձայնների տեղաշարժը  $b = \text{պ}$ ,  $p = \text{բ}$  և այլն, վիճա-  
գրերում չի գիտվում:

Հաջորդ քննությունները պետք է պարզեն, թե ինչ փոփոխու-  
թյուններ է կրել գրաբարի բաղաձայնական համակարգը ընդի  
հայերեն բառերում, որոնք ավանդված են սուսամհասիրվող ժամա-  
նակաշրջանի վիճագրական հուշարձաններում: Այստեղ ևս վեր-  
լուծությունները սկսում ենք պայթական և պայթաշփական հրնչ-  
յունների գրության այն վկայություններից, որոնք անձանոթ են  
գրաբարին և շեղվում են նրա արտասանությանից:

1. Բ ձայնեղ պայթականը բառ վիճական բնագրերի. ա. Մի  
շարք բառերում կամ անձնանուններում բ ձայնեղի փոխարեն փո-  
րագրված է պ խուլը մ, լ, ր ձայնորդներից հետո -Սմբատ>Սրմ-  
պատ, Սնպատ-գրաբարի մատենագրության մեջ այս փոփոխու-  
թյունը չի գիտվում: Հնագույն հիշատակությունը Համամ իշխանի  
890 թ. տապանագրում, որ պահվում է Բարվի թանգարանում.  
«Այս գիր դամբանիս եղբար Համամ իշխանի ևս ան Փղիպէի ևս  
ան Սնպատա»<sup>41</sup>: Այնուհետև անձնանվան նույն ձևը վկայված է  
գրանից մի տասնամյակ անց, Վանեվանի տաճարի 30Բ (903) թ.  
արձանագրության մեջ. «Ի ժամանակս հայոց թագաւոր մեծի Սրն-  
պատայ» (ՍՍ), ապա՝ տարբեր ժամանակների այլ վիճագրերում.  
Սմպատայ (Անի նՄ Դ I 35, նՂԲ Դ I 19, Սիսիան նԿԶ Դ II 89,  
Վահանավանք ԺԱ Դ II 139, Գնդեվանք 931 թ. Դ III 13, Ալայաղ  
ԶԻԹ Դ III 123, նա ԺԳ Դ III 115, Յաղաջ բար ՈԿ Դ III 142, Շա-  
տին ԺԳ Դ III 156, Ամաղու ԶԻԲ Դ III 236, Հաղբատ ՇԼԲ ԿՂԶԲ  
150, նա ՇԺԲ 151, նա ԺԱ 156, նա ԺԳ 163, Սանահին Ո ԿԳ ԿՂՍ  
122, նա ՈՂԱ 130, Հոսոմոս ՈԻԳ ՍԱԲ 150, նա նԶԵ ՍԱԲ, 166, նա  
նԿԲ ՍԱԲ 168, Վանե-Գանձատար ՈՂԸ ՄՎ, Հաղարծին ՈՄԷ ՄՎ,  
Աղջոց վանք ԺԳ Հով ԽԱՂ III 67, Գաղի վանք ԺԳ Մով 88, նա  
ՈՂ 95): Սնպատայ (Կարմրաշեն նԼԹ Դ III 41, Հալիձոր ԶԺԳ Դ II

41 Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, «ՅԱ Տեղե-  
կագիր», 1964 թ. 1, էջ 64:



52, վաղազնի վանք Դ II 100, նա ժԳ ԴII 102, Հավապտուկ ՈՂԳ  
 Հով ԽԱՂ III 33, Քանաբեռ ՉժԵ ՄՎ, Պառալաձոր ՈՂ ՄՎ, Մաք-  
 րավանք ՈԿ ՍԲ): Արբելեան > Արպէլեան, վայոց ձորի իշխանա-  
 կան տան շառավիղների անուն - տոհմ - անունները բազմիցս վը-  
 կայված նբանց և ուրիշների արձանագրություններում, մեծ մա-  
 սամբ անհնչյունափոխ, բայց երբեմն նաև ր > պ խլացումով. «Ստե-  
 փանոս Արպէլեան» (վաղազնի վանք ՉՂԵ Դ II 101), «զաւակին  
 մեր Արպէլին» (Բնունիս ՉՉ Դ II 115), «Ես՝ ար Յովանէս Արպէլ»  
 (Արենի ՉՂ Դ III 29), «յազդէ Արպէլենց» (Հերհեր ՉԿՉ Դ III 55,  
 Սելիմ ՉՉԱ Դ III 178), «Սիւնեց եպիսկոպոս Արպէլ» (Յաղաց  
 քար ժԳ Դ III 150), «Թոռն մեծի Արպէլեանց» (Ամաղու ՈՂ Դ III  
 211), «Տուն իմաստից և հանձարոյ Արպէլ զՈվանէս» (Ամաղու  
 ՉՉԴ Դ III 232): Եղբայրանուն > Ախպերանուն - «Զպատարազն՝  
 Սաթունին, Ախպերանն և Խորասուի» (Հազրատ ժԳ ԿՂՀԲ 165)  
 278 էջում անունների ցանկում անձնանունը վերականգնված է՝  
 Ախպերան, մինչդէռ Ախպերանն (< Աղբերաննոյ) արական հո-  
 լովաձևը կարող էր առաջանալ Ախպերանուն-ից, ինչպես որ այն  
 անհնչյունափոխ վկայված է Պեմղաշենի Մակարավանք հուշար-  
 ձանի հավանարար ժ-ժԱ դ. արձանագրում. «Ես՝ եղբայրանուն  
 ետու» (ՄՎ, անախ): Նալբանդնոց > նալպրեդնոց (Բազնայր ժԳ  
 ՍԱԲ 136): Բարեպաշտ > պարեպաշտ (Բազարան ժԳ ՕրԾՈՒՏ 30),  
 այստեղ հավանարար փոփոխությունն արդյունք է պ բաղաձայնի  
 առնմանության: Փայլ Ներբարիք > Ներպարիք (Խժկոնք Ո ԿԳ Հով  
 ՆԱ 33): Լմբա > Լմպա (Լմբատավանք ժԳ ՄՎ). «ԿՏորենոյ զիրի-  
 ցութիին Լմպատա, Լմպատայ սուրբ Ստեփանոսի...»): Եան հոլով-  
 ման գոյականների գործիական հոլովակազմիչը վկայված է պ < ր.  
 «Այս խաչս Քս-ի արեմպ (< արեամբ) մրկած է» (Գլաձոր ՉԻՉ Դ  
 III 102):

բ) Հակառակ գրությունը՝ հին հայերենի պ խուլ գրի փոխա-  
 րեն ր ձայնեզը նկատվում է մ ձայնորդից հետո և սակավաթիվ  
 այլ բառերում: Ամպ > ամբ, հավանարար մ բնգային ձայնորդի  
 առնմանությամբ. «Յորժամ փայլես ընդ ամբս երկնի» (Առաքելոց  
 ժԳ ՄՎ), «Եւ իջանել ամբ լուսեղեն» (Կոչ ՈՆԵ ՄՎ): Փարպի > Փար-  
 րի - «Ես՝ Բարգուղիմէոս արեղա Փարբեցի ետու այգին, որ ի Փար-  
 րի է» (Հոսոմոս ժԳ ՍԱԲ 148), «Տուար զմեր հայրենի այգին, որ  
 ի Փարրի» (նա ժԳ ՍԱԲ 148): Խանապար = խանարար - հյուրա-  
 նոց, կարավանատուն, բառի ստուգարանությունն անորոշ է, և-



ինքնդունենք Յ. Կարստի մեկնությունը՝ xanaparan<sup>42</sup>, ապա առկա է պ>բ -«Պապենց խանաբարն» (Անի ՈԿԳ Դ I 63):

զ) Մի շարք բառերում և անձնանուններում տեղի է ունենում բ>փ շնչեղ խլացում գրություն մեջ-Ղարիբ>Ղարիփ-Ղարփին (Անի ՈԶԸ Դ I 17, նա ՈՄԹ 55, Սանահին ժԱ ԿՂԱ 97), Արլխարիփ (Բաղարան Ո Կ ՍԱՐ 203, Հմբատ Մ Կն ՄՎ), Մարմաշեն ՈԶԳ ՕրծՈՒՏ 443, Հաղբաա նճ ԿՂԶԲ 150, Մարինե ՉԶԲ ՄՎ): Խարեմ>խափեմ. «ուլ խափէ, դատի այ» (Աղգան ժԳ ՄՎ), «ուլ խափէ» (Մորո ձոր վանք ժԲ ՍՎ, Հավուց թառ ժԳ Հուլ ԶԹ 26): Գուր>գուփ- «նւ գուփ գերութեան» (Ամաղու Չեմ Դ III 236): Հակառակ երևույթը, այսինքն փ>բ գրությունը դիտվում է խափանեմ բայի դիմավոր և դերբայական ձևերում և մի քանի անձնանուններում. «եթէ որ դայս արձանս խարանէ» (Անի ժԳ Դ I 28, 30, Սանահին ժԳ ԿՂՍ, 136, 160), խարանէլ ջանա (Անի ՈԿԳ Դ I 63, նա ՉԼԵ 36, Մարինե ՉԶԲ ՄՎ), անխարան կատարէ (Անի ՈԶ Դ I 51, Քարազուխ ժԳ Դ III 174), խարանողին դատին (Թանատ ՉԶԹ Դ III 15), որ խարանեն (Բաղնայր ժԳ ՍԱՐ 158), թագաւորին Արխազաց (<Ափխազաց) (Ամաղու ՈԶ Դ III 211), այլ վիճազըրերում՝ անհնչունափոխ՝ «Ի թագաւորութեան Ափխազաց Գեորգեա» (Հաղարծին ՈԼԳ ԱԱ): Յովասափ>Յավասար (Շողուազավանք ՈԶԳ ՍԲ), «ես՝ սուտանուն երէց Յովասարս...» (Հայրավանք ՈԿԵ ՍԲ), «Մեք եղբարբս նէրսէս եւ Յովասար...» (Ն. Գեորգի ՈՄԷ ՍԲ), «Շինեցար զեկեղեցիս Սերորս եւ Ովասարս..., կանգնողս Ովասարս յիշէ» (Վարդենիկ ՉԼԹ ՍՍ):

II. Գ ձայնեղ պայքականը բառ վիճական բնագրերի. ա. Ն ոնգային ձայնորդից հետո մի շարք բառերում հին հայերենի գ ձայնեղի փոխարեն փորագրված է համապատասխան կ խուլը. «վս հանկրտեն (<հանգտեան) պատրոնին մերո» (Անի ժԲ Դ I 3), «Ի հանկրտարանի ծնողաց իմոց» (Առաքելոց ՉԺԶ ՄՎ), «Կանկնեցար ի վերա հանկտարանի սորա» (Կեչառիս ժԳ ՍԲ), «Սահմանեցար զտեղիս հանկրտարան մեզ» (Քանաքեռ ՉԺԵ ՄՎ), «Այս է հանկիստ Աննեկին» (Չարբենդ ՉՄԷ ՍԲ), «Նորոգեցի զընծայս նախնեաց իմոց զանկակս» (Ն. Գեորգի ժԳ ՄՎ), «Նուս ծախս զանկակիս» (Թանատ ժԳ Դ 65), «Շինեցար զանկակատունս» (<զանգակատուն) (Անի ժԳ Դ I 65), «Չինեցի զանկակատունս» (Անի ՉԶ Դ I 43, տպագրված է՝ զանգակատունս, լուսանկարում և դժա-

<sup>42</sup> J. Karst, WBM, խանապար բառի տակ, Հ. Անատյան, Արմ. բառարան, Գ, էջ 365:



գրում՝ բերի զանգականիս եւ շինեցի զանկակատունս), «Շինեցար զանկակս եւ զտուն նորս» (Վերնաշին ԶԶԹ Դ III 101), «Աւրհնեցի զեկեղեցիքս զանկակատանս» (Սանահին ԺԳ ԿՂՍ 145), «Շինեցի զուլէն զանկակատունս» (Հոռոմոս ԶԼԵ ՍԱԲ 162), «Շինեցար զանգակատունս» (Ն. Գեաթիկ ԶԽ ՍԲ): Հինգ>հինկ - «Հատուցին մեզ... հինկ ար պատարաք» (Անի ԶԼԵ Դ I 36): Ժառանգեմ>ժառանկեմ. «Մասն զՈւղայի ժառանկէ» (Երեան ԶԺԳ)<sup>43</sup>, «անէծն ժառանկեցէ» (Մրեն ԶԼԳ ՕրԾՄ 6), նահանգ>նահանկ. «Առաջնորդ Արարատեան նահանկի» (Վանստան ԺԳ)<sup>44</sup>: Կանգնեմ բայի գիմալոր և անգեմ ձևերում, որոնք հուշարձանաշին կոթողների, հատկապես խաչքարերի հիշատակագրության անհրաժեշտ և առավել հաճախ գործածվող միավորներն են, վիճադրերում բաղմիցս անհնչյունափոխ ձևերին զուգահեռ վկայված են բառամիջի գ>կ խլացմամբ՝ կանկնեցաւ, կանկնեցաք, կանկնեցի, կակնեցի և այլն: Այստեղ նշում ենք այդ վկայությունների ունեցող հուշարձանները և բնագրերի աղբյուրները. կանգնեմ>կանկնեմ հնչյունափոխության հնագույն օրինակը Սարիղամիջի խաչքարի բնագրում է. «նս՝ Գորդ կակնեց խաչս» (ՆԽԱ ԿՂԶԳ 88), այնուհետև Կոթավանքում ՆԿԲ (1013) Բ. կանկնեցաք (ՍԲ), Ղաչաղանում՝ ՆԶ (1021) Բ. կակեց (ՄՎ), իսկ հետագա դարերում հնչյունափոխված ձևերը կանոնավորների հետ զուգահեռ են գործածվում. այսպես. կանկնեցաւ փորագրված է (Անի ՈՒԷ Դ I 67, նա Ո ԿԷ 71, Տաթև ԺԴ Դ II 13, Արկազ ԶԽԵ Դ III 70, Եղեգնաձոր ԺԳ Դ III 104, Առաքելոց ՈՂԴ ՄՎ, Կարմրավոր ՈՂԳ ՄՎ, Մարինե ԶԽ ՄՎ, Հավուց Բառ ԺԳ Հով ԶԹ 23, Գեղարդ Հով ԽԱՂ III 51, Վարդենիկ ԶԼԸ ՍՍ): Կանկնեցաք, կանկեցաք (Լոր ԶԻ Դ II 107, Անգեղակոթ ԶԽԷ Դ II 123, Թալին, Քր. վանք ՈՂԲ ՄՎ, Քանաքեռ ԶԺԵ ՄՎ, Ավան ԶԽԶ ՄՎ, Առինջ ՈԿԸ ՍՍ, նա ՈԿԲ ՍՍ): Կանգնեցի, կակնեցի, կակնեցի (Աղավնաձոր ԶԼԹ Դ III 38, Կարմրաշեն ԶՄԲ Դ III 43, Հերհեր ԶԼԴ Դ III 50, Գյոյարաս ՇձԽԹ Դ III 46, Հերհեր ԶԼ Դ III 50, Քարապուխ ԶԼԹ Դ III 177, Մարտիրոս ԶԼԲ Դ III 183, Զառիթափ էձԷ Դ III 195, Առաքելոց ԶԺԶ ՄՎ, նոր Գեաթիկ ԶԻԲ ՄՎ, Օձուն ՈՂԳ ՄՎ, Կուրթան ՈՂԷ ՄՎ, Սաղմոսավանք ԶՄԸ ՍՎ, Տեղեր ՈԿ ՄՎ, Հավուց Բառ ՈԿ Հով ԶԹ 22, Աղ-

43 Կ. Ղաֆաղարյան, Երեանի Կաթողիկեի և նորահայտ հուշարձանի վիճական արձանագրությունները, ՀԽՍՀ Պատմ. և գրակ. ինստիտուտի Տեղեկագիր 1938, էջ 165—193:

44 Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրությունները (անտիպ):



չոց վանք Զէ Հով ԽԱՂ III 70, Մեծարանց վանք ժԳ<sup>45</sup>, Զարբենդ ՈՂԳ ՍԲ): «Գիր տվի վարդապետին, կեղիս (<գեղիս) Գրիգորին» (Հերհեր Զեե Դ III 69):

բ) Գ>կ փորագրված է մի շարք բառերում, հաճանարար փոխադրեցական հնչյունափոխության հետևանքով, որ արդյունք է հարևան խուլ հնչյունների առնամանության. «Գանձով գնել էի... գԱկուաւանո» (Հաղբատ ՈՂԸ ԿՂՀԲ 177), «Տուի... լԺ: դեհեկան տարենն յԱկուարոյն» (<Ագուարոյն) (Առաքելոց ՈՂԴ ՄՎ), «Մի տանական մակաղար» (<մագաղար) (Բագնայր ԶժԱ ՍԱԲ 177), «Ի պարոնութենն սղասալար Խարկրձեալին» (ալլ վիմագրերում անհնչյունափոխ կանոնավոր «ես՝ ամիրսպասալար Մըխարգրձէլս»-Սանահին ժԳ ԿՂՍ 125, «Մտա մեծին Իվանէի և Մխարգրձէլին»-Փձուն ժԳ ՄՎ):

գ) Հին հայերենի գ ձայնեղ պայթականի փոխարեն համապատասխան շնչեղ խուլ ք է փորագրված մի շարք բառերում հետևյալ դիրքերում. Ա. Բառավերջում, ձայնավորից հետո. «Ամուսնոյ իմոյ Աւախարունին» (<Աւաղխարուն) (Անի Զլէ Դ I 29), «Եւ գաւակի իմո Աւախարունին... լԲ: Աւախարունին» (Հոսոմոս ժԳ ՍԱԲ 148), «Որդոյ իմոյ Աւախարունին» (Անի ժԳ Դ I 50), «ես՝ Տիրացու, Երուանդ, Աւախ, Խուշոյ որդիքս տվար» (Վերնաշեն ժԳ III 96), «տվար գաւախ հինկ շարաթն Ամենտիկնա» (Խորակերտ ԶԱ ՄՎ): «Խոստացան ի տարոջն լԺԲ: պատարախ» (Հովհաննավանք ժԵ ԿՂՀ 101), «Խոստացան լԲ: պատարախ» (Թանատ ժԳ Դ III 73), «որ գմեղ ի պատարախն յիշեն» (Վերնաշեն ժԳ Դ III 98), «հինկ աւր պատարախ» (Անի Զլե Դ I 36), «:Ա: աւր պատարախ» (Արատես ժԳ Դ III 128), «որք պատարախէք յիշէցէք ի սր պատարախս ձեր» (Գոմուր ԶժԶ Դ III 193): «Դանն սուխ (<սուգ) էթողին» (Թերփ ԶժԶ Դ III 199), «եւ սուխ անմխիթար ծնողացն էթող» (Վարդենիկ Զլե ՍՍ), «վայ և սուխ մարն» (Գյոյարաս ՇՃԽԹ Դ III 46): «ետու գիմ հայրենի մարախանին» (<մարագանի) (Քարազուլիս Զե Դ III 172): «Փափախող (<փափագ) եղեւ» (Հաղբատ ժԳ ԴՂՀԲ 160), «փափախմամբ յարինել» (Ուզուզու ժԳ ՍԱԲ 174):

Բ. Բառերի մեջ կամ վերջում: ր ձայնորդից հետո. «ես՝ Մխիթար որդի Սարխիսի» (<Սարգիս) Մոց ԶլԸ Դ III 24), «ես Սասնայս ու Սարսու ու Սարխիս կանգնեցար գխաշս» (Գյոյարաս ԶլԲ

45 Ե. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր», 1901, էջ 138—140:



Դ III 45), «Ես՝ Սարգիս սարգաւագ...» (Քանաւ ժԳ Դ III 83), «Եւ որդոց Սարգի» (Սելիմ ԶԶԱ Դ III 178), «տր. Սարգի» (Ամազու ԶՄԵ Դ III 243), «Ի սր Սարգի կողման ննջեցեալսն» (Խրժ-կոնք ՈԶԲ ՍԱՐ 211), «էգրեցաք ամիր Սարգի որդոյն» (Մակարավանք ժԳ ՄՎ): «Ես՝ Գեբի (<Գեարգ) եւ ամուսին իմ Շարարս» (Հաւուց Բառ ԶԽԲ Հով 23), Գ. Մի քանի այլ բառերում եւ անձնանուններում հարեան խուլ հնչյունների առնմանութեամբ կամ ձայնեղների տարնմանութեամբ. «Յաղափս (<յաղագս) պատրոնին հոգոյն» (Անի ԶԿԹ Դ I 27), վերջնահանգ ա խուլ սուլականի առնմանութեամբ: «Յաղափս վարդանա եւ Սարգսի» (Մակարավանք ժԳ ՄՎ), «Ես՝ յոհնամեղ եւ ապիկար Ստեփանոս» (Ամազու ժԳ Դ III 215): Գրիգոր, Գէարգ անձնանունները վկայված են բառասկզբում գ>ք շնչեղացումով, «Ես՝ Քորգի եւ կենակից իմ Սթէէս կատարեցաք» (Անի ԶԽ Դ I 68), «գուտար Քրգորոյ Մագիտրոսին» (Տեկոր նՂԱ ՍԱՐ 207): Մագիտրոս տիտղոսը եւ նրանից առաջացած անձնանունները երբեմն հիշատակվում են՝ Մափստրոս, մափստոս. «գոր մափստրոսն Գրիգոր շնորհել եւ հաստատեալ էր» (Անի ՈԶԸ Դ I 17), «Ես՝ տր Սարգիս, որդի Մափստոսին» (Անի ժԳ Դ I 19), «Ես՝ Ապուղամբ որդի Մափստրոսի» (Բաղնայր ԶԺ ՍԱՐ 187), «Այս է հանգիստ՝ Ապուղամբի որդոյ Մափստրոսի» (Մարմաշեն ժԱ ՕրԾԻՏ 445): Ռուսուզան > Ռուսուֆան. «Եւ ամուսին իմ Ռուսուֆան» (Հաղբատ ՈՂԱ ԿՂԶԲ 178), «Քամարին, Ռուսուֆանայ, Աբասայ, Բարինայի» (Հովհաննավանք ՈԿԱ ԿՂԶԲ 175): «Առի զանառիկ ամբոցս զԱնբերդոյ յաղախնայծին որդոյն Հաֆարու» (<Հագարու) (Անտառուտ ՈԽԹ ԿՂԶԲ 169):

Հին հայերենի կ խուլ պայթականի փոխարեն փորագրված է նույն շարքի գ ձայնեղը հետեւյալ դեպքերում:

Ա. ն անգային ձայնորդից հետո. «ցանգացող (<ցանկացող) էղա» (Անի 1055—56 Դ I 38), «ղխաշա անբնգալ» (<բնկալ) (Անի ժԲ Դ I 70), «բնգալա ես՝ Գրիգոր վարդապետ» (Սանահին ՈԶԳ ԿՂՍ 161), «բնգալափ զնա» (Հոռոմոս ՈՂԷ ՍԱՐ 154), «վարձս բարեաց բնգալցին» (Շիրակավան ՈԶԷ ՍԱՐ 170), «պարախ եմ բնգեցեալ» (Մրեն նեռ ՍԱՐ 197), «Ընդ նոյն անիծիւքս անգցի» (<անկցի) (Խժկոնք նԶԲ Հով ՔԱՐ 15), «խոռվութեն անգանի» (Գառնի ԶԿԳ)<sup>46</sup>, «Հրամանաւ պատրոնի բնգալափ» (ն. վարագ ՈԽԷ ՄՎ): Հրաշագեղ մանգանն» (Ամազու ԶԽԵ Դ III 236), «Որդի Մանգիկ (<մանկիկ) իրիցու» (Բագարան ԶԺԱ 187), «Աշխարհա-

46 Գ. Գրիգորյան, նշվ. հոդվածը, ՊԲԷ, 1963, № 2, էջ 262—263:







հայրենի գեղէս Ազրնագեղոս գփնտկի (<Փնդուկ) (Սաղմոսավանք ժԳ ՄՎ): «Եւ որ անտգնի (<յանդգնի) մեղացն եւ անցանացն պատասխանի» (Ն. Վարադ ժԲ ՄՎ):

Գ. Մի շարք բառերում և անձնանուններում դ ձայնեղ պայթականի փոխարեն փորագրված է ք շնչեղ խուլը. «Գուտր ասբարակ Սարունին» (<Սաղուն) (Հաղբատ ժԳ ԿՂՀԲ 171), «Այս է հանդիսս Սարունին» (նտ ժԳ 189), «Զարապետութեն Սարունին» (Խորակերտ ՉԱ. Հով նԱ. 12): «:ժե: մորոյ (=մող) տեղի... :ե: մորոյ տեղ» (Արճեշ Չե ՍԱԲ 269): «Ես՝ վաչէ Անբերեցի» (<Անբերդ) (Մակարավանք ժԳ ՍՎ): «:Ա: շարաթ աւր Քրքին» (<Քուրդ). (Ուշի ՉՀԸ ՍՎ): Վերջին անձնանուններում դ>ք անցումը բառակազմի ք-ի առնմանությամբ պետք է բացատրել:

Դ. Հակառակ երևույթ, երբ հայերենի ա խուլ պայթականի փոխարեն վիմագրերում փորագրված է նույն շարքի դ ձայնեղը, դիտվում է մեծ մասամբ ն, ր ձայնորդներից հետո. «Ածահաճոյ եւ ընդբեալ (<ընտրեալ) սր միայնակեացն Գանձակեցի» (Անի ժԳ Դ I 26): «Այս յարկ տապանի, բանդ (<բանտ) բարկութեան է» (Ամաղու ՉեՆ Դ III 236): «Յաւագաց կամ յնրդանեաց (<ընտանեաց) կամ յաւտարաց» (Անի ժԲ Դ I 12): «Մեծաւ աշխաթութթ շինեցաք պարդեզն» (<պարտէզ) (Հաղարծին ժԳ ՄՎ):

#### ԵՌՈՒ-ՀՆՉԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Ինչպես կիլիկյան միջին հայերենի գրական հուշարձաններում, գրաբարի խուլ-շնչեղ պայթականները ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական բնագրերում պահպանում են իրենց հակադրությունները և նկատելի փոփոխություններ չեն կրում: Կարելի է միայն մատնանշել վ, ք, ր հնչույթներն արտահայտող գրերի գործածությունը նույն շարքի սլարդ խուլերի՝ պ, ա, կ փոխարեն և հակառակը, որ հավանաբար արտացոլում է կենդանի խոսվածքներում այդ հնչյունների արտասանությունը և ընդգրկելով սակավաթիվ միավորներ՝ ընդհանուր օրինաչափության շի հասնում: Մեր ուսումնասիրությունը ամբողջացնելու նպատակով նշում ենք այդ անցումներն արտացոլող վկայությունները ժ—ժԳ դդ. վիմագրերում:

Դ. Փ-ի փոխարեն պ-է փորագրված յափշտակեմ բայի դիմավոր և անդեմ ձևերում, մատենագրական աղբյուրներում այս փոփոխությունը շի դիտվում. «...եւ իմ տներոյս յապշտակէ..., եւ



յիմ աներոյդ յապշտակէ... և յիմ աներոյդ յապշտակէ» (Անի նՂԹ Դ I 43), «...որ որ ստե կամ յապշտակել ջանայ» (Մբեն նՂԱ ՕրճՄ 3): «Եթէ որ յապշտակէ...» (Բագարան նՂԳ ՍԱԲ 203), «Զհողն յապիշտակել» (Բջնի նՂ)<sup>49</sup>, «...և կամ իմ գրենոյս յապշտակէ» (Անի նՂՁ Դ I 49): Հոփսիմէ կույսի անունը երկու անգամ փոքրագրված է Հոփսիմէ ժողովրդական արտասանության հետևությունը, որ այլուր ավելի ուշ շրջանում ավանդված է նաև Հոսումսիմ, Հուտումսիմ, Խոտումսիմա, Հուտումսիմա ձևերով. «Ի ձեռն Պատրոնիկեա և սբ Հոփսիմեացն» (Ն. Վարագ ՈՁ ՄՎ), «Ետուն :Ա: Ժամ ի տանի Հոնսիմէ» (Առաքելոց ԺԳ ՄՎ), բստ այդմ, առկա է փ>մ անցումը, անշուշտ, բառամիջի մ ձայնորդի հաջորդականությամբ:

II Ք-շնշեղ-խուլի փոխարեն կ-է փոքրագրված միայն հայերենիք (սեփականություն, ունեցվածք) բառի վերջում. «Չունի որ իշխանութի... հայրենիկ եկեղեցոյս խափանել» (Բագարան ԺԳ ՕրճՄ 466):

Հակառակը՝ կ-գրի փոխարեն ք-է կարգացվում հետևյալ վրկայություններում. «Ես՝ Ոսփան (<Ոսկան) կանգնեցի զխաչս» (Թառաթումբ Զ Դ III 166), «Ի ներքե մգֆրին ընդդէմ» (Բագնայր ՈՄԸ ԲԱՍ 152): «Գնեցի Կաշփակարանց (<Կաշփակարանց-հավանարար հանգամասի կամ հողամասի անունով-) և ավար ի սբ Ածածնիս» (Խորանաշատ ԺԳ ՄՎ): Կ>ք շնշեղացումը կարող էր առաջանալ բառի մեջ երեք կ-երի տարնմանությունը: «Սիրելի որդիք իմ հարազատք՝ Պապաքն, Մֆղեմ (<Մկղէմ-բստ Հ. Աճառյանի արար migdam-ժրաշան, ջանասեր<sup>50</sup>), այլ բնագրերում՝ եւ Մկղեմին (<Հով ԽԱՂ III 12 ՉԺԵ, Կեշառիս ՈԿԳ ՍԲ): Այս է հանգիստ ելբէֆին (<Ելբեկ-թաթար. el-ժողովուրդ և beg-իշխան բառերից կազմված անձնանուն<sup>51</sup>, անհնչյունափոխ վկայված Հաղարծնի ՈԼԳ (1184) Թ. բնագրում. «Մեծամեծ իշխանացն Սարգսի, Ամիր Քրդին, Անտոնի Ճղունտելին, Ելբեկին»<sup>52</sup>: «Այս է հանգիստ Տելբէֆին» (<Տելբէկ) (նտ ՈՂ ՍԲ), «Որդի Սիսաֆին (<Սիսակ) (Կոշիկ ԺԳ ՍԲ): Միայն մեկ անգամ կարդեմ բայաձևում, վերջնահանգ ք-ին կից չ տառաձևն է փոքրագրված: Ահա այդ երևույթի վկայությունը. «Որ կարդեմ (<կարդայմ>կարդեմ) և երկիրսպա-

49 Այիշան, Այրարատ, էջ 273

50 Հ. Անտոյան, Անձն. բառարան, Գ, 292:

51 Հ. Անտոյան, Անձն. բառարան, Բ 225:

52 Ս. Երեմյան, նշվ. հոդվածը, էջ 84-85:



գանէք իշեցէք (Կուրթան ժԳ ՄՎ): Հնարավոր է կարծել, որ այստեղ յ-ն փորագրվել է իբրև յիշեցէ՛ք բայաձևի սկիզբ, որից հետո որոշվել է ավելացնել երկրորդ ստորոգյալը՝ երկրպագանէ՛ք, և դրա հետևանքով յ-ն միայնակ է մնացել, իսկ յիշեցէ՛ք-ը փորագրվել է՝ իշեցէ՛ք: Բայց մյուս կողմից, իշեցէ՛ք առանց յ-ի քանիցս հանդիպում է այլ վիճադրերում ևս (նկարագրվում է յ հնչյունի անկման էրևույթները շարագրելիս) և կարող է առարկել այդ ենթադրության դեմ: Այլ օրինակներ շունենալով, դժվարանում ենք հավաստիորեն որոշել յ գրի նշանակությունը կարգե՛լյ տառաշարում:

III. Ք շնչեղ-խուլի փոխարեն համապատասխան պարզ ա-է փորագրված հետևյալ միավորներում. «Ես՝ Սանճար, որդի Տանկրադուլին» (<Քանգրիդուլի-թաթար. tangri-աստված և gul-ժառա-աստվածատու<sup>53</sup>-բառասկզբի ք-ն բոլոր հիշատակություններում անփոփոխ է մնում (Ամաղու ՉՄԲ Գ III 222): «Պարոն Խուլուրուդայ» <խուրլուրուդա-այլ բնագրերում անձնանունը կանոնավոր՝ «Ես՝ աթարեկ եւ ամիսպասալար Խուրլուրադայ» (Ավան ՉԼԶ ԿՂԱ 20, Հաղբատ ժԳ ԿՂՀԲ 152): «Շինեցաք զսա ի դառն ժամանակս տարաւաց» (<բարաւաց) (Հաղբատ ՈՂԳ ԿՂՀԲ 222), «Բերի զչուրս, զոր տարաւուս (<բարաւենի ժամանակ) խուպանեալ էք» (Հոռոմոս Չ ՍԱԲ 156), «Յետ աւիրման տարաւիս» (նա). «Յետ կործանման տարաւին» (Հոռոմոս ՈՂԵ ՍԱԲ 154), «Գնեցի ի ԿՈՒ: սպիտակ սուլտանի» (<սուլթան-դրամի միավոր միջնագարում) (Խորակերտ ՉԱ Հով նԱ 12): Հակառակ երևույթը՝ ա խուլի փոխարեն ք շնչեղ է փորագրված. «Ես՝ Սրեփանոս (<Ստեփանոս ծառա Այ (Ձառինջա ժԱ ՄՎ): «Թողութի շնորհեցէք ինձ՝ սուրանուն (<սուտանուն) մեղաւոր քահանայիս» (Անի ՉՄԶ Գ I 70):

Խուլ-շնչեղ պայթականների փոփոխություններն արտացոլող թվարկած վկայությունները չեն շոշափում վիճական բնագրերում ավանդված պայթական բաղաձայնների համակարգային հատկանիշները կամ նրանց շարքերի հակադրությունները և կարող են դիտվել իբրև ավյալ հնչույթի դիրքային տարբերակում, որ հընչութային արժեք չի ստանում և արդյունք է բարբառային արտասանություն: Մյուս կողմից, գրաբարի խուլ-շնչեղների գրությունն նշված շեղումները կամ նրանց համապատասխանությունները նույն շարքի պարզ խուլերի հետ չի կարելի նաև պատահական,



հնադրական վրիպումներ համարել, բանի որ մեջ բերված հիշատակութունների մեծ մասի ընդօրինակութունները ստուգվում են տեղի վրա լուսանկարով և ըստ այդմ երկրայության հիմքեր շին տայիս: Որ փ>պ, ք>ա, ֆ>կ և հակառակ անցումները կենդանի խոսվածքներում այդպիսի արտասանության արգասիք են, ապացույց են նաև նույն համապատասխանութունների վկայութունները հայերեն հնագույն ձևագրերի հիշատակութուններում և կարծեցյալ Շապուհ Բագրատունու երկում, որտեղ ունենք՝ քխտոյս, քուլա առի ի ներսիսէ (ըստ բովանդակության է գ. 1158 ք. 9222, 37, 372), ափշեցան (ժ գ. 9222 176), քէպէք ևւ, ընդ անընթեկ (<քնտեկ) իրս (1179 ք. 9222 478), ի մայրաքաղաքն Աղեկսանդրու (ժԱ գ. 9222 266), յանափառ (<անապառ), զաւաֆ (<զաւակ) (ժԳ գ. 22 47, 56), աբկունի (<աբկունի), առակեաց (<առակեաց), զերեկ (<զերեկ) (ՇԲ 5, 8, 29) և այլն

#### ԵՈՒԼ ԵՎ ՉԱՅՆԵՂ ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆՆԵՐ

Հին հայերենի մատենագրական երկերում կիսաշփական հընչյունների համակարգը բնութագրվում է եռյակ հատկանիշների հակադրությամբ՝ ձայնեղութուն-խլութուն-չնչեղութուն, ըստ այսմ, առկա են՝ ձ, ծ, ց, և ջ, ն, շ շարքերը: Հայերենագիտության մեջ այն համոզումն է հաստատված, որ դասական գրաբարի մեղ հասած հուշարձաններում տվյալ հակադրությունների խախտումներ կամ նույն շարքի հնչյունների փոխադարձ անցումներ շին արձանագրված և ըստ երևույթին անհավանական են նույնիսկ այն աղբյուրներում, որտեղ ենթադրվում է պարզ պայթականների խլացում կամ շնչեղացում: Օրինակ, Թրակացու բերականության Անանուն մեկնիչի (է դար) առկոշած միավորներում ք>պ, ք>փ փոփոխությունները՝ բազուկ>պազուկ, բազուկ>փազուկ, հիմք են աալիս կարծելու, որ տվյալ շրջանում գոյություն են ունեցել գրաբարի բաղաձայնական համակարգի, մասնավորապես պայթական հնչյունների արտասանության և նրանց փոփոխությունների բարբառային կամ ենթաբարբառային տարբերություններ, սակայն դրանցում պայթաշփականների փոխանակություններ շին արձանագրվում և կարող են ենթադրվել միայն տեսականորեն: Մակայն հին մատենագրության երկերում ավանդված վկայութունները հաստատում են, որ և ձայնորդից հետո և միջձայնավորային դիրքում ձայնեղացում կամ խլացում տեղի է ունենում նաև դասական գրաբարի պայթաշփական բաղաձայնների համա-



կարգում: Իրողության հնագույն օրինակներ է տալիս Փ. Բուզանդի «Պատմությունը», որի ընդօրինակություններում հանդիպում են. պանձացեալֆ, բնձայիւֆ = ծ > ն, գոչէիւ < գոչէին = շ > ջ, վախաբան < վախնան = ն > շ, հարկանէր զերկիրն Արձայսայ (< Արցախ) = ց > ձ և այլն<sup>54</sup>:

Ժամանակի խոսակցական լեզվում հին հայերենի խուլ և ձայնեղ պայթաշփականների շփոթության և միմյանց փոխարեն արտասանվելու մասին հնագույն վկայությունը պահպանվել է Գր. Մազիսարոսի «Մեկնություն Քերականին» երկի մեզ ծանոթ հատվածում. «Եւ ոմանք ի մէնջ ոչ երբեք զձայնակիցս կամ զլծորդս փոխանակեն իբր զմանկանց կամ զպատանեաց, որպէս զխէ փոխանակ հոյի դիտեալք կամ զձա՝ ձայի»: Ըստ այսմ, ի մացվում է, որ Մազիսարոսի ժամանակ (ԺԱ դ.) և դրանից առաջ որոշ խոսվածքներում արդեն դիտվում էր խուլ կիսաշփականների ձայնեղացում՝ ծ > ձ, ուրեմն և հակառակը՝ ձայնեղների խլացում, որի առանձին արտահայտությունները Աճառյանը նրկատում է նաև Զ—է դդ. հունարանների գործերում (հմմտ.՝ ապաղարձ > ապարաց) առկա է՝ դ > ք, ձ > ց, \*նեւիողոց (< նեւրող), փ > ք և այլն<sup>55</sup>: Այդպիսի փոփոխություններ կամ պայթաշփական ձայնեղների խլացման և խուլների ձայնեղացման առանձին երևույթներ առաջանում են միջին դրական հայերենում և Ժ—ԺԳ դարերի վիճական արձանագրություններում: Քննենք վիճական բնագրերում պայթաշփական բաղաձայնների կրած փոփոխությունները:

1. Գրարարի չ ձայնեղ պայթաշփականն արտահայտող գրի փոխարեն փոքրագրված է նույն շարքի շնչեղ-խուլ արտահայտող շ հետևյալ դեպքերում.

Ա. Ոչ հուլովման բառերում, այդ վերջավորությունը կամ հոլովակազմիչը փոքրագրված է ոչ հետևյալ բնագրերում. «Եւ կենակցին իմոյ Տիկնոչն» (Տիկին > Տիկնոչ) (Անի ՌԿԴ Գ I 35), «:Ա: Տիկնոչն» (Արշո առիձ ԺԳ ՍԱԲ 191), «Խաւութի՛ կնոչ իմ, որ կոչի Տիրամայր» (Կուրթան ՈՂԸ ՄՎ), «Յերեցն :Ա: դահեկան յիւրո ևւ կնոչէ» (Ամբերդ ՆՉԵ ՄՎ)<sup>56</sup>, «Կանգնեցի զխաշս... ինձ

<sup>54</sup> Փատոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 31, 49, 67, 167:

<sup>55</sup> Н. Адонц. Двоименный Фракийский... стр. 224. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. Բ, էջ 135, 383:

<sup>56</sup> Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի արձանագրությունները..., «էջմիածին», 1961, № 5, էջ 51, խնդրո առարկա կապակցությունը վերծանված է՝ յիւրոչէ կրնոչէ:



և կնոջ և ծնաւդաց» (Մրեն ժԲ ՕրճՄ 9), «Իմ կնոջն զբաժին-  
քն...» (Բագնայր ՉԺԱ. ԲԱՍ 181): «Վասն իմ հոգուս, որ տարոջ  
(<տարոջ) յն: ար ժամ արնել» (Թալին, Քր. վանք ժ Գ. ՄՎ),  
«Սոյասուարք խոսաացան ի տարոջն ՚Գ: ար ժամ» (Գեղարդ ժԳ  
Հով ԽԱՂ III 49): «Եւ Բուրոջ (<Բուրոջ) իմոյ նորիխաթուծի և  
Բուրոջ դստեր իմոյ Բեուանդզի» (<Եուանդզի) (Ախթամար ՉՄԲ  
Օրճ I 127): «Գնեցի դամէն մեկ զիւր տիրոջէն» (Մրեն ՉԻԵ Մարք  
ԻՄ 83, Գ I VI): «Տվի զՔարուողինին հոգն ի Հոսոմա Ազ-  
չոց (<Ազչոց) վանացն» (Ազչոց վանք ժԳ Հով ԽԱՂ III 64—65):  
«Թսան մեծ Քրզին, արի և Բաշին (<Բաշ) Վաշէի» (Հովհաննա-  
վանք ՉՂԹ ԿՂՀ 92):

Բ. Մի շարք բաներում, մեծ մասամբ և անգային ձայնոր-  
չից հետո չ ձայնեղն արտահայտող զրի փոխարեն փորագրված  
է նույն շարքի և խուլը. «Զիմ սուկի ապունանի (<ապարանչան>  
ապունչան) գոնծէն տվար» (Հերհեր ՉԿէ Գ III 56): «Ես՝ Սան-  
նար (<Սանչար) ու Քաճմլըքս միարանեցար» (Թանաա ժԳ Գ  
III 78), «Ես՝ Սաննար որդի Տանկրաղուլին» (Ամաղու ՉՄԲ Գ III  
222): «Տվար յն: սպիտակ ի գինն Սեվրենին (<Սեիենչ) այ-  
գոյն» (Ավան ՉԿԲ ՄՎ) - թաթար. sevini - ուրախություն,  
ցնծություն<sup>57</sup>: «Նոր շինեցի զկարմուես» (<կամուրջ, կարմունջ)  
(Կուրթան ժԳ ՄՎ), «տար ջաղացն վերա կարմենին» (Ամբերդ  
նշե ՄՎ), «ջաղացանի, որ կան ի կարմրենէն ի վայր և վեր»  
(Մարմաշեն ՈՂԳ ՕրճՄԻ 443): «Կանկնեցի զխաչս եղբայր նան-  
մանդին» (<նաչմադին-ին) (Գյոյարաս ՇՃԽԹ Գ III 46): «Ես՝  
Ամսանան» (<Ամսաչան) (Հերհեր ժԳ Գ III 57, Հովհաննավան-  
քում՝ Ամսաչան-ժԳ Գ. ԿՂՀ 101): Քաշ>բաշեր>բաներ (Թանաա  
ժԳ Գ III 76, Վերնաշեն ժԳ Գ III 98, նա ՉՂԹ 101), Մարաիրոս՝  
Թաներոյն (ՉԼԵ Գ III 180, Բագնայր ժԳ ՍԱԲ 185, 187, Տեղեր  
ժԳ ՄՎ, Ազչոց վանք ժԳ Հով ԽԱՂ III 68): Քաշմլէֆ>թանմլէֆ  
(Արատես ժԳ Գ III 127): Զանդուլի>ճանդուլի (Թերփ ՉԺԳ Գ III  
199): Զաչուո>ճաչուո>ճաչուա (Հալապատուկ ՈԻԲ Հովդ ԽԱՂ I  
31): Խոչա>խոնայ>խոնայս, Խոնէս (Հոփսիսիմե ՉԽԵ ՄՎ): Խարչ  
>խարեն (Վերնաշեն ՉՉԱ. Գ III 97, նա ՉՉԸ 98, Հոսոմոս ՉԺԸ  
ՍԱԲ 158, Մրեն ՉԻԵ Մարք ԻՄ 83, Մարինե ՉՉԲ ՄՎ): Հեչուր>  
Հեհէս>Հեհպին (Հովհաննավանք ՉԽԹ ԿՂՀ 83): Խեչիս>Խեհիս>  
նեիս (Բարձրաբաշ ՈՉԸ ՄՎ, Մրեն ժԳ ՍԱԲ 199):

Գ. Հակասակ իրողությունը, երբ հին հայերենի և խուլ հրեչ-

57 Հ. Անուշյան. Անճն. բառարան, Գ, էջ 485:



չունն արտահայտող տառածևի փոխարեն փորագրված է նույն շարքի ձայնեղ ջ-ն, հանդիպում է միայն վաղջանի բայածևում, որ դանում ենք Սաղմոսավանքի ԶԿ Թ. արձանագրության հատուցման ձևակերպման մեջ. «Թե քահանայ կամ գործաւոր ի տեղս վաղջանի (<վախնանի) :Ա:Խ: և զիշերապաշտան արենն» (ՄՎ): Այստեղ խ>ղ ձայնեղացումը հավանաբար տեղի է ունենում նախորդ ղ ձայնեղ շփականի առնմանությամբ, որն իր հերթին մի շարք բնագրերում առաջանում է արմատական խ խուլ բաղաձայնի ձայնեղացումից (աղախիւն>աղաղիւն): նույն վախնանեմ բայի մեջ անհնչյունափոխ խ-ի առկայության դեպքում դիտվում է ոչ թե ն>ջ ձայնեղացում, այլ օրինաչափ՝ ն>չ շնչեղացում, որի վկայությունը գտնում ենք Գաղի վանքի ՈՒԷ (1196) Թ. բնագրում. «որզո իմո Խոսարովիկա, որ վախչանեցաւ ի մեջ այլազգեաց»<sup>58</sup>:

2. Հին հայերենի ձ պայթաշփականը Ժ—ԺԴ դարերի վիմական բնագրերում ենթարկվում է հետևյալ փոփոխություններին.

Ա. Մի շարք բառերում, անձնանուններում և տեղանուններում ձ ձայնեղը ն ոնգային ձայնորդից հետո արտահայտված է նույն շարքի համապատասխան ծ խուլով: Այս հնչյունափոխության հնագույն վկայությունը գտնում ենք Գառնիի խաչքարի ՅԻԸ (879) Թ. հիշատակագրության մեջ, որտեղ ինձ դերանունը պարզ փորագրված է ինձ. «Ես՝ Կատրանիզե հոռոց Թագոհ, որ կանգնել զսուրբ խաչս ի բարեխոսութի ինձ»<sup>59</sup>: Այնուհետև նույն փոփոխությունը դիտվում է նաև հետագա դարերի այլ վիմագրերում. «Տա սերմ մի: մոզ և ծախք զրնձելոյն» (<հնձելոյն) (Անի 1060 Գ I 37)<sup>60</sup>: «Զկաէփոսոյ հողն ու զՏանձին (<տանձին-Տանձին) սեռն» (Աղափնաձոր ԶԶԱ Գ III 36), «ափի... զՏանձի հող իւր :Դ: հատովն» (Թանաս ԶԶԱ Գ III 96), «Տփի յիմ հալալ հայրենացն զՏանձիկ» (Ամաղու ԶՄԲ Գ III 222), «Գնեցար զՏանձուլանը»

58 Մ. Տեր-Մովսեսյան, Հայկական երեք մեծ վանքեր..., էջ 92:

59 Բ. Аракелян, Гарни I, стр. 84.

60 Կատեղյան Բագրատի այս արձանագրության մի քանի տառաշարքեր տակալին ստույգ վերծանված չեն և կարոտ են մանրազնին բնության. դրանցից է զրնձել-ոյն տառաշարքը, որ Կ. Բասմաճյանը համարում է բնծայ բառի փոփոխված ձևը (բնձայելոյն>բնձելոյն). խոչ նույն բնագրի առաջին դիտական հրատարակիչ Վ. Բենեշեվիչը ծախք զրնձելոյն թարգմանում է расходы на посев, որ էրկու դեպքում էլ ակնհայտ վրիպում է: Այլիս ստույգ կլինեք տվյալ կապակցությունը թարգմանել՝ расходы на косьбу (տե՛ս В. Бенешевич, ԿՉՎ. աշխ. էջ 23, К. Basmadjian, ԿՉՎ. աշխ. № 23):



Շիկի նորքն» (Հավուց Թառ Չեթ Հով ՀԹ 23)<sup>61</sup>, «Ես գճանձագալիք այգին յիւր եկեղեցիս» (Սաղմոսավանք ՈԿԴ ՄՎ): «Ես՝ Խնձորիկս (Խնձոր-իկ) միաբանեցա սր ուխտիս» (Տեղեր ՈԿԶ ՄՎ): «:Ա: Խնձորկին, :Ա: Բատային (նտ): «Տվի Աձաձնիս :Լ: փաս բաժակի Մեղկածուր» (Աղավնաձոր ՉԾԷ Դ III 35), այլ բընազրեքում կանոնավոր՝ նոր Մեղկածուր..., Մեղաղկածուր (Թանաստ ԺԳ Դ III 87), զԹեղուան ի Մեղկածուր (Արատես ՉԾԹ Դ III 124): «Տէր Փանձարաղին» (Թանաստ ՉՂԷ Դ III 81), նույն բնազրի շարունակութեան մեջ անհնչյունափոխ՝ որ ի Փանձարաղին: «էտու... յիմ ինաս այգուն :Ճ: կուժ գինի զրնձի (<պղնձի) մեծ կժով» (Ն. Գեաթիկ ՉԾ ՄՎ): Հնձանք միջնազարում այգինների հետ կամ առանձին հաճախ նվիրարեքովոդ ունեցվածք է և վիճազրեքում մեծ մասամբ հիշատակվում է ձ > ձ խլացումով. ահա եղած օրինակները. «Մաղկոցն, որ յԱշնակ իւր հնձանովն» (Բազնայր ԺԳ ՍԱԲ 181), «շինեցար հնձանս» (Հովհաննավանք ՉԻԸ ԿՂԷ 106), «արկի այգի եւ շինեցի հնձան» (Բազարան ՆՉԳ ՍԱԲ 203), «տվար զմեր բնձանն» (Կարբի ԺԳ ՄՎ), «զիմ բնձանն ծախեցի» (Լմբատ Չ)<sup>62</sup>, «շինեցար վերստին զբնձանանի» (<հնձան-անի) (Հոռոմոս ՉԷ ՍԱԲ 157), «յԱկոռի զնձանադուռն (<հնձանադուռ) (Ամաղու ԺԳ Դ III 246), «Ետու զիմ այգին որ ի գեղին առաջի բնձանատուով» (<հնձանատուն) (Սանահին ՉԻԸ ԿՂՍ 158): «Վասնոդ զանձոյն (<զանձ-ոյն) յիշել մաղթեմ» (Գառնի Չե)՝<sup>63</sup>, «Ետու զիմ զանձաղին հայրենիքն զնորսն» (Բազնայր ՉԺ ԲԱԱ

61 Բնազրեք ստուգվող կամ հավաստի բնագործակութուն շունի Առաջին հըրատարակիչ Մանկունին հատվածը կարգացել է. զնեցալ գտանձուրան Զոշիկին որ Բնի :Ռ: սղ եւ տուալ ի սուրք ուխտս («Այրիվանք կամ Գեղարդա վանք» վաղապատ 1871, էջ 50): Մանկունու բնագործակած գտանձուրան տառաշարը տեղ է գտել Հ. Աճառյանի Արմ. բառարանում իրրն Եանհայտ իմաստով նորադուրատ» (Չ, էջ 772): Այս վերձանություն մով և անհասկանալի կետերը զատողություն ուժով աշխատել է շտեյլ Թ. Ավգարիեղյանը (ՏԿՍ ՀՍԽԷ Գիտություն և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, 1927, № 2, էջ 55), իսկ Գ. Հովսեփյանը ապրիս է նույն բնազրի լիակատար վերձանությունը, որտեղ վիճելի հատվածը կարգացվում է. զնեցալ գճանձուրան, Զոշիկի նորն Ե. Ռ. սպիտակի եւ տուալ ի սր ուխտս (ան՝ս Հավուց Թառի Ամենափրկիչը..., էջ 23. մանրամասնությունները տե՛ս նաև մեր «Վիճազրական սրբագրումներ» հոդվածում, ՊԲԷ 1968, № 4 էջ 216):

62 Հ. Եղիազարյան, Լմբատավանք «էշմիածին» 1960, № 2, էջ 57:

63 Բ. Առաքելյան, Գառնի III, էջ 45:



178)<sup>64</sup>: «Ատաջար դաւակ անձնուանալի» (<անձնուանալի) (Ամաշու ժԳ Դ III 224): Զարարյանների տան վրացական իշխանական մականունը՝ Մխարգրձեյի (Երկայնաբազուկ), նաև նրանից առաջացած անձնանունները կանոնավոր, անհնչյունափոխ ձևերին դուզահեռ հանդիպում են նաև ձ>ժ խլացումով: «...ամիրսպասալար Մխարգրձեյին Սարգսի» (Անի ժԲ Դ I 58), «Ի սարունութենն սպասալար Խարկրձեյին Եղբարն Իվանէի» (Արուճ ՉԼԴ ՄՎ): Զ>ժ դիտվում է մերձ բառում նախորդ ր ձայնորդի ազդեցությամբ. «Մերձ ի մայրաքաղաքս յԵղեգիս» (Ալայազ ՊԱ Դ III 118):

Բ. Հակառակ փոփոխությունը, երբ հին հայերենի ծ խուլ կիսաշփականի փոխարեն փորագրված է ձ ձայնեղը, նկատվում է նույն դիրքում՝ և ձայնորդից հետո, ընծայ բառում, որ բազմիցս վկայված է նաև՝ ընծայ, ընծա. «Խոու ընծա» (Անի ՉԼԷ Դ I 29), «էտու նուէր ընծայից գիմ գեղն» (նա ժԳ Դ I 58) «էտու ընծայս» (Անի ՈԿԴ Դ I 63), «ընծայալ փարթամացուցի (նա), «Խոու ընծայ» (Թանատ ժԳ Դ III 82, Հովհաննավանք ՈԶԹ ԿՂՀ 81, Հոռոմոս ՈՂԹ ՍԱՐ 154, նա Չ ՍԱՐ 156, Բագնայր ՈՂԱ ՍԱՐ 186, Արջո առիճ ՉԼԸ ՍԱՐ 192), տվալ ընծա (Վերնաշեն ժԳ Դ III 98, Ածրնկալ ՈՂԴ ՄՎ, Կեչառիս ժԳ ՄՎ, Գեղարդ ժԳ ՀովեԱՂ III 49, Զինչիրլու ՉՄ Հով ՏՄ 18, Հաղարծին ժԳ ՄՎ, Մրեն ՉԿԹ Mapp HM 84, ՕրծԻՏ 4): «Մխարանեցայ սր ուխտիս ընծախալ» (Յաղաց քար Դ III 150), «ընծանեցալ ի սր կաթողիկէս» (Հաղբատ ՉԻԹ ԿՂՀԲ 197), «ընծանեցի ի: արտ» (Բագարան ՈՅԷ ՍԱՐ 181), «ընծանեցի դսա սր Ստեփաննոսի հայրենիք» (Լմբատ ՈԿԵ ՄՎ), «...տրաւք և ընծախալ նորոգեցաք և զգաւիթրն» (Սաղմոսավանք ՉԲ ՄՎ), «Եթէ որ յառաջնորդաց յընծաից

64 Միջնագրի վիճական արձանագրություններում քանիցս հիշատակվող նոր բառը (Բագնայրում՝ տուալ գվարդեանեց նորեն, Հովհաննավանքում՝ զենցալ գևչտարախո նորեն և այլն) արտահայտում է նորատունկ այգի, մատնարկ իմաստը և տվյալ իրադրության մեջ չպետք է տեղանուն համարել, ինչպես վարվել են հիշյալ բնագրերի հրատարակողները: Սակայն Բագնայրի օրինակում հրատարակող է, որ նորսն արտահայտի գաղտնաձայնի կամ բնակավայրի անուն՝ դարձնաբառ է, որ նորսն արտահայտի գաղտնաձայնի կամ բնակավայրի անուն՝ դարձնաբառ է՝ անդատաձայն, հողովն և ջրովն, որ հավանաբար կարող էր վերաբերվել տեղանվանը, գյուղին (Մանրամասնությունները տե՛ս Թ. Ավդալբեկյան, Մի գաղտնիք վիճական արձանագրությունները մեջ, ՀԱԵՀ Գիտություն և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, 1927, № 2: Տե՛ս նաև մեր «Վիճակագրական սրբագրումները» ՊԲՀ, 1968, № 4, էջ 216):



խորէ» (Հառիճ ժԲ ՄՎ), «...քննայեցաք ի սմայ նուէր զմեր հայ-  
րենի գեղն» (Մարմաշեն ՈՂԴ ՕրԾ ՈՒՏ 443):

Գ. Հին հայերենի շ պայթաշփական շնշեղ հնչյունն արտա-  
հայտող տառաձևի փոխարենն և ձայնեղն է փորագրված խաշ բա-  
ռի վերջում, ուշ միջնադարի մի քանի խաշարձանների հիշատա-  
կագրություններում: Գրանցից հնագույնը վկայված է Նորագույն  
ԶԻԵ (1276) թ. տապանագրում, որտեղ աներկբա կարգացվում է.  
շինեցի խաձս (ՄԲ). մյուսները վերաբերում են ԺԶ դարին և փո-  
րագրված են տարբեր վայրերում՝ հիմնականում Գեղարքունիքում  
և Վայոց ձորում կանգնեցված խաշքարերի վրա: Ահա խաձ = խաշ  
գրության եղած վկայությունները. սբ խաձ քարէխաւս վէլումին  
(ԶԶԹ Վաղաշեն ՄԲ), խաձ գուրն... ԹՎ ՈՄԸ (Արատես — Դ III  
130), խաձ Անդրիասի (նա), սբ խաձ քարէխաւս (նա), կանկնեցի  
խաձ Սարգսի (նա), խաձ Գարինա (նա), «ես՝ Տրիացս կանկնեցի  
խաձ Սարգսի» (Հերմոնի վանք ԺԶ Դ III 140), խաձ Մասունփին  
(Հոստուն Ռ Դ III 163), «ես՝ Աղէս կնկնեցի խաձ» (նա), «Կանկե-  
ցաք խաձեսս» (Մադրա ԶԶԸ ՄԲ), խաձս Տէրունականին (Զոդ ԺԶ  
ՄԲ), «կնկեցի խաձ Բարսէղ քննին» (ԿոթաՎանք ԶՂԱ ՄԲ), «եսաձս  
քարէխաւս» (նա), «եսաձս քարէխաւս» (Վ. Ղարանլուղ ԶՂԹ ՄԲ),  
«խաձս քարէխաւս» (Վ. Քուլաղան ՈՂԸ ՄԲ):

Իրողությունն առաջին սնգամ մատնացույց է անում և մեկ-  
նարանում հայ վիմագրության նանաշված վերժանող Ս. Բարխու-  
դարյանը՝ միջնադարյան նարտարապետ-քարագործներին նվիր-  
ված արժեքավոր ուսումնասիրության մեջ: Հրատարակելով  
խաձ = խաշ վկայություններից մի քանիսը, հեղինակը զրանցում  
չ> և փոփոխությունը նկատում է իրրև հնագրական վրիպում՝ ա-  
ռաջացած շ, և իրար նման գլխագիր տառաձևերի շփոթումից, որ  
գիտվում է այլ վիմագրերում ևս, և ըստ այդմ, անհավանական է  
համարում քրիստոնեական հավատի հետ կապված և հաճախ  
գործածվող այդ բառի խաձ արտասանությունը<sup>65</sup>:

Վիմագրագետը իր աշխատության նպատակից ելնելով, չի  
տալիս այդ հայեցակետը հիմնավորող փաստեր, մասնավորապես  
տվյալ վիմագրերում այլ տառակապակցություններում շ, և տա-  
ռաձևերի հնագրական վերլուծություններ, որոնք հաստատելին  
չ> և փոխարինումը գրության մեջ, բացառելով խաձ հնչումը,

65 Ս. Բարխուդարյան. Միջնադարյան հայ նարտարապետներ և քարգործ  
վարպետներ, Երևան, 1963, էջ 192:



ուստի  $չ=à$  համապատասխանությունը առկա վիճակով մնում է շարքովի և կարող հետագա բնություն:

Հին հայերենի պայթյալական խուլերը վիճակյալ բնագրերում արտացոլվում են նույն հակադրություններով, ինչ նրանք ունեին դասական գրարարի հուշարձաններում: Նրանց ձայնեղացման առանձին երևույթները մեծ մասամբ փոխադրեցական են կամ գիրքային և տեղի են ունենում և՛ ղային ձայնորդից հետո, որ նկատվում է նաև պարզ պայթյալական խուլերի դեպքում՝  $ընծայ > ընծայ, ընծայեցի > ընծայեցի, յանցանաւ > յանձանաւ$  և այլն:

Սակայն մի քանի դեպքերում գրարարի խուլ շնչեղները արտահայտող գրերի փոխարեն արձանագրություններում փորագրված ենք տեսնում նույն շարքի համապատասխան պարզ խուլերը, որ անշուշտ բարբառային արտասանության ազդեցությամբ կարելի է բացատրել, եթե բացառվի գրչության պատահական վրիպման հնարավորությունը: Օրինակ,  $ց$ -ի փոխարեն  $ծ$  է գրված հետևյալ միավորներում. «Զիմ ոսկի առպնճանի զոնծէն (<զոնցայ-զարդարանքի մաս) տվար» (Հերհեր ԶԿԷ Գ III 56): «Ի ձևուս ի: հարազատածս (<հարազատաց) Զարարէի եւ Իւանէի» (Հաղբատ ՈՄԹ ԿՂՀԲ 168), «զինչ գրած է ով իծէ (=իցէ) յետ առու կամ ի նածանէ (<նացանէ) արգան առու ՅԺԸ: հայրապետացն կապած է» (Տաշքենդ ԺԳ)<sup>66</sup>: «էտու ի, ոց վեծկի (<վեցկի=ուրնոց առո) պատրաստութի» (Սանահին ԶԻ ԿՂՍ 118): Միայն Քորայրավանքի մի բնագրում  $ծ$ -ի փոխարեն  $ց$  է փորագրված սնուցած բայաձևում. «Ես՝ Խաչգունդս Մամբանա սնուցացս (<սնուցած) գնեցի զՔրախս այգիս» (ՈԼԵ)<sup>67</sup>, այստեղ  $ծ > ց$  փոփոխությունը արդյունք է  $ց$ -ի առաջընթաց լիակատար առնմանության:

\* \* \*

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճակյալ բնագրերում հին հայերենի բաղաձայնական համակարգի, հատկապես պայթյալական ու պայթյալական հնչյունների փոփոխություններն արտացոլող մեր համառոտ տեսությունը հնարավորություն է տալիս քիչ թե շատ իրական գաղափար կազմել հիշյալ բաղաձայնների

66 Ս. Բաբխաչյան. Դիտողություններ և նոր նյութեր... նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, Նրևան, 1963, էջ 259—285:

67 Աշխ. Քալանթար. Վանասանի արձանագրությունները (անտիպ):



արտասանութեան մեջ միջին դարերում առաջացած տեղաշարժերի մասին: Գատեղով մեղ հասած և հալաստիոքեն վերձանված ժ—ժԳ դարերի վկայութեաններից, վիմական արձանագրութեաններում ավանդված պայթական կամ պայթաշփական հնչյունների համակարգը շի նույնանում կիլիկյան գրական հայերենի եռաստիճան տեղաշարժ-տեղափոխութեան համակարգի հետ (հին հայերենի ձայնեղների և խուլերի տեղափոխութեան, շնչեղ խուլ շարքերի պահպանումով), որ հանդամանալի ներկայացված է հայագետ Յ. Կարստի գրքում: Վիմագրերում արձանագրված համակարգը ընդհանուր կղրեր շունի նաև երկաստիճան խլաղուրկ այն համակարգի հետ, որ համընդհանուր, միասնական միջին հայերենին վերագրում է պրոֆ. Ս. Ղազարյանը, այսինքն այնպիսի վիճակ, երբ գրարարի ձայնեղները վերածվում են ոչ թև պարզ խուլերի, այլ շնչեղ-խուլերի, խուլերը՝ ձայնեղների, իսկ հին շնչեղ-խուլերի շարքը մնում է անփոփոխ<sup>68</sup>:

Օտարլեզվյան պայթական հնչյունների՝ վիմական բնագրերում ավանդված տառագարձութեաններից երևաց, որ փոխատու լեզուների ձայնեղ պայթականները գրեթե բոլոր դիրքերում արտահայտվել են մեծ մասամբ հին հայերենի համապատասխան ձայնեղ, իսկ խուլերը խուլ տառաձևերով՝ այսինքն,  $b = p$ ,  $g = q$ ,  $d = n$ ,  $j = z$ : Համապատասխանութեան է նկատվում նաև շնչեղ-խուլերի շարքում: Այսպիսով, վիմագրութեան մեջ կիլիկյան միջին հայերենի տեղաշարժ-տեղափոխութեանը շի նկատվում և վիմական արձանագրութեաններում ներկայացված պայթականների ու պայթաշփականների համակարգը կարելի է բնութագրել իբրև եռաստիճան անտեղաշարժ, որտեղ գրարարի ձայնեղների, խուլերի և շնչեղ-խուլերի շարքերը հիմնականում պահպանվել են առանց էական փոփոխութեանների:

Սակայն բնիկ հայերեն միավորներում պալթական և պայթաշփական բաղաձայնների՝ վիմագրերում ավանդված համապատասխանութեանները ցույց են տալիս նաև, որ երբեմն վիմագրերում գրարարի ձայնեղ պայթական հնչյութը արտահայտող տառաձևերի փոխարեն փորագրված են նույն շարքի խուլ կամ շնչեղ-խուլ արտահայտող գրեր և ընդհակառակը՝ գրարարի խուլերի կամ շնչեղ-խուլերի տեղում փորագրված են ձայնեղներ արտահայտող տառաձևեր: Արդյոք այս իրողութեանը շի մատնում վիմական բը-

68 Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 164—169:



նագրերում տեղի ունեցած հին հայերենի բաղաձայնների տեղա-  
շարժ-տեղափոխությունը: Մեզ թվում է, որ ոչ և ահա թե ինչու:

Գրական կամ վիճագրական հուշարձաններում հայերենի  
լեզվական միավորների բաղաձայնական համակարգի համապա-  
տասխանությունները քննելիս, ամենից առաջ պետք է նկատի ու-  
նենալ այն պարագան, թե ինչ բնույթի են նկատվող շեղումները  
կամ համապատասխանությունները. արդյոք դրանք շոշափում են  
բաղաձայնների համակարգային հասկանիչները, թե տեղի են  
ունենում առանց խաթարելու տվյալ համակարգի հիմնական  
հասկանիչների հակադրությունները: Առաջին դեպքում գործ ու-  
նենք բաղաձայնական ամբողջ համակարգի արմատական փո-  
փոխության կամ տեղաշարժի հետ, իսկ երկրորդում՝ դիրքային  
կամ փոխադրեցական հնչյունափոխության առանձին երևույթնե-  
րի հետ, որոնք չեն խախտում ամբողջ բաղաձայնական համա-  
կարգը: Իբրև օրինակ առնենք գրաբարյան ր, դ, զ, ձայնեղ-պայ-  
թականների նկատված շնչեղացումը բնիկ հայերեն միավորնե-  
րում՝ ըստ վիճակային բնագրերի վկայությունների՝ ր > փ, խափէ,  
զուփ, զ > ֆ՝ աւաֆ, պատարաֆ, սուֆ, մարաֆ, փափաֆ, յոֆնա-  
ւնեղ, Սարքիս. դ > ք, Անբերք, Թեոքոս, մոք = մող, Սարուն = Սա-  
ղուն և այլն: Հարց է առաջանում, ի՞նչ հնչյունափոխական երե-  
վույթ է արձանագրված այս ձևերում: Հայագետներից ոմանք  
հակված են այն համոզմանը, որ այստեղ հին ր, զ, դ ձայնեղնե-  
րին փոխարինած փ, ք, ֆ խուլ-շնչեղները վկայված ոչորտում ու-  
նեցել են լծորդ ձայնեղների արժեքը, որ ապացույց է, թե տվյալ  
բաղաձայնային համակարգը ներկայանում է իբրև երկաստիճան  
խլազուրկ, այսինքն ենթադրվում է նրանում նաև հին պարզ խու-  
լերի ձայնեղացում կամ տեղափոխություն-տեղաշարժ ամբողջ  
համակարգում: Մեզ թվում է, ձայնեղների շնչեղ-խլացման հիշ-  
յալ վկայությունները պետք է համարել ոչ թե ամբողջ համակար-  
գի տեղաշարժ, այլ սոսկ բովանդակ հայերենին հատուկ պատմա-  
կան հնչյունափոխություն, որը շոշափում է միայն ձայնեղ, շքն-  
չեղ-խուլ շարքերը, այն էլ բառամիջի և բառավերջի դիրքերում  
և ըստ այդմ շունի հակառակ գործողություն, այսինքն համակար-  
գային արժեք: Առաջին տեսակետի կողմնակիցները տվյալ վի-  
ճակը քննելիս հիմք են ընդունում արդի արևմտյան բարբառնե-  
րի (Ա ճյուղ) բաղաձայնական համակարգերի տվյալները, ըստ  
որոնց, հին հայերենի ձայնեղ պայթականները հիրավի բոլոր  
դիրքերում վերածվել են շնչեղ-խուլերի՝ (դուուն > քուո, քան >  
փան, ձուկն > ցուկ, գոյն > ֆույն), իսկ խուլերը՝ ձայնեղների



(աուն > դուն, կացին > գացին, պանիր > քանիր, ծով > ձով): Մյուսները իբրև ելակետ վերցնում են այն բարբառների բաղաձայնական համակարգը, որոնցում հին ձայնեղ-պայթականների շնչեղացումը տեղի է ունենում անկախ ամբողջ համակարգի անդաշարժից, չունի հետագարձ գործողություն և կարող է դիտվել սոսկ իբրև դիրքային կամ նույնիսկ փոխադրեցական հնչյունափոխություն: Այդ բարբառները արևելյան կամ հյուսիսային Հայաստանի, Արարատյան և Արցախի խմբի բարբառներն են, որոնք ամենայն հավանականությամբ հանդիսանում են Ժ—ԺԳ դարերի վիճակի արձանագրությունում ոչ գրաբարյան ներթափանցումների կամ նորարանությունների աղբյուրները:

Մյուս կողմից, համակարգային տեղաշարժային փոփոխություն է համարվել նաև ռ ձայնորդից և ձայնավորներից հետո կամ բառավերջում ձայնեղ պայթականների կամ կիսապայթականների շնչեղացումը՝ գբերն (<բերդ), անխարբախ (<անխարդախ), գերք (<գերդ), վարբայլետֆս (<վարդապետֆս), Աաֆ տիկնա (<Աազ), ֆուռոչ (<ֆուռչ), փափաֆման (<փափաֆ), յոֆնամեղ (<յոզնամեղ) և այլն<sup>69</sup>, մինչդեռ հանրահայտ իրողություն է, որ Արարատյան բարբառի խոսվածքներում, Արցախի խմբի բարբառներում և արդի հայերենում «խուլ-շնչեղացման ամենաուժեղ տենդենց նկատվել է ռ ձայնորդին հաջորդող դիրքում», բառավերջում և ձայնավորներից հետո<sup>70</sup>, ուրեմն թրվարկված բառերն էլ արտասանվել են հենց այնպես, ինչպես գրված են, այսինքն ձայնեղների խլացումով՝ բերքն, ոչ թե՛ բերդն, Աաֆ, ոչ թե՛ Աազ, փափաֆ-փափազ և այլն, ըստ այդմ, այստեղ առկա է ոչ թե բաղաձայնների տեղաշարժ, այլ նրանց փոխադրեցական հնչյունափոխություն տվյալ դիրքում:

Մի շարք վիճադրերում և ձևագրերի հիշատակարաններում հին հայերենի դ ցուցական կամ դիմորոշ հոգը գրված է ա՝ Փրեկ-չիտ, ժամտ, ծառայիցտ և այլն: Յ. Կարստը և Մ. Ղաղարյանը հիմք բնգունելով արևմտյան բարբառներում դ հոգի, այլև այլ դերանվան արդի՝ դ (d), ադ (ad), ադի (adi) արտասանությունը, ենթադրում են, թե տվյալ վկայություններում ամենուրեք ա-ն ունեցել է դ ձայնեղի արժեք, այսինքն արձանագրվում է հին հա-

<sup>69</sup> Վ. Ասաբեկյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 127, 130:

<sup>70</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 32—33, Վ. Ասաբեկյան, նշված աշխ., էջ 128—129:



յերենի խուլ-պայթականների տեղաշարժ դեպի ձայնեղները և հակառակը<sup>71</sup>: Մինչդեռ վիմագրերում ա (=ղ) հոդը փորագրված է միայն բառավերջում, այն էլ խուլ բաղաձայններից կամ ձայնավորներից հետո, որտեղ անհավանական էր ձայնեղ արտասանությունը և ենթադրվում է զ-ի խլացում նաև փոխազդեցական կամ դիրքային հնչյունափոխության (տոնմանություն, խլացում) հետևանքով, ուրեմն, բացառվում է ա > զ համապատասխանությունը և վկայված փոփոխությունը պետք է համարել զ ձայնեղի խլացում՝ բառավերջում, ի ձայնորդից և ձայնավորներից հետո: Եվ հիրավի, արդի հայերենում և բարբառների մեծ մասում զ հոդը ու այդ դերանվան զ-ն տվյալ դիրքում նույնպես խլանում կամ հնչյունափոխվում են ա-ի, անկախ տվյալ խոսվածքի բաղաձայնական համակարգում պայթականների տեղաշարժ-տեղափոխությունից, և այդ պատճառով բնական է կարծել, թե նույնը տեղի է ունեցել նաև այն խոսվածքներում, որոնց արտասանությամբ ՓԱ.—ԺԲ դարերում փորագրվել է՝ Փրկչիտ, ժամա, յիշողքա և այլն:

Փ—ՓԴ դարերի վիմական բնագրերին վերագրելով հիմնական եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ (հին հայերենի ձայնեղների, խուլերի և շնչեղ-խուլերի անփոփոխ շարքերով), չի կարելի շնկատել նաև այնպիսի համապատասխանություններ, որոնք վկայում են այդ բնագրերում այլ համակարգերի դանազան ներթափանցումները:

Տեսականորեն ևս դժվար է պատկերացնել, որ միջնադարյան Հայաստանի բնդարձակ տարածքի վրա, որը ձգվում էր Բարձր Հայքից մինչև Արցախական աշխարհը և Վասպուրականից մինչև Հայաստանի «Հյուսիսային կողմանք»՝ Լոռին, Գուգարքն ու Մահանաբերդը, որտեղից մեզ են հասել հազարավոր վիմական արձանագրություններ, ժամանակաշրջանի ավատական մասնատվածության և զանգվածային տեղաշարժերի պայմաններում հայ բնիկները խոսել և արձանագրություններ են հորինել նույն լեզվով, կամ տվյալ դեպքում՝ բաղաձայնական համակարգի միևնույն համապատասխանություններով: Նույնիսկ զուտ կիլիկյան միջին դրական հայերենի համար, որ գրավոր հուշարձաններով ամրագրված ու նորմավորված պետական լեզու էր կիլիկիայի հայկական թաղավորության սահմաններում, հայազես Կարստը մի հիմնական եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ հա-

71 Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 172—173:



մակարդ որոշելով, միաժամանակ նշում է նաև այդ համակարգի այլևայլ տարբերությունները զանազան հեղինակների երկերում (Մխիթար Հերացի, Սմբատ Սպարապետ, Վարդան Այդեկցի և այլն), ինչպես և Բջնիի 1358 թ. առաջին աշխարհաբար արձանագրության մեջ<sup>72</sup>։

3. Կարստը նույնիսկ միջին գրական հայերենը համասեռ ամբողջություն չի համարում, այլ շատ ավելի լայն, քան կիլիկյանը, որ միջին հայերենի արևմտյան կամ փոքրասիական բարբառախմբի հարավային ճյուղի՝ կիլիկյան խմբի բարբառների խոսակցական հիմքի վրա առաջացած գրական լեզու էր։ Այդ բարբառախմբի մյուս՝ հյուսիսային ճյուղի բարբառները կամ ներքանց գրական արտահայտությունները Կարստի կարծիքով արևմտյան միջին հայերենի բարբառների ընդհանուր գծերի հետ ի հայտ են բերում նաև մի շարք էական տարբերություններ, այդ թվում նաև բաղաձայնական համակարգում, որոնք կարոտ են մանրամասն քննության։ Միջին հայերեն մյուս բարբառները, հատկապես արևելյան խմբի խոսվածքները նկարագրության արդի վիճակով դժվար է հետազոտության ենթարկել, քանի որ ներքանց մի մասը ավանդված է հատուկինտ, ուսումնասիրության համար ոչ բավարար գրական հուշարձաններով, մյուսներն էլ բնավ դուրկ են որևէ գրական հիշատակարանից<sup>73</sup>։

Այս վերջինների մեջ են մտնում պատմական Արևելյան և Հյուսիսային Հայաստանի, մասնավորապես Արարատյան ու Արցախական խոսվածքներում կամ բովանդակ հայ վիճագրության մեջ ամբարված արժեքավոր վկայությունները, որոնք զանազան պատճառներով դուրս են մնացել հայագետ Կարստի՝ 1901 թ. հրատարակած գրքից և աննշան մասով տեղ գտել նրա անտիպ մնացած միջին հայերենի ստվարածավալ բառարանում։

Այլ է միջին հայերենի մյուս ականավոր մասնագետ Ս. Ղազարյանի մոտեցումը։ Միջին հայերենը համարելով «X—XVII դարերի զեղարվեստական, դիտական, այլև պատմական գրականությունը ավանդված լեզվական այն բաղմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»<sup>74</sup>, այսինքն այդ լեզուն դիտելով իբրև միասնական, համընդհանուր գրական հայերեն,

<sup>72</sup> Տե՛ս J. Karst, Historische Grammatik..., S. 3—5.

<sup>73</sup> J. Karst, նշվ. աշխ., էջ 137—138։

<sup>74</sup> Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 92—93։



հեղինակը ամբողջ միջին հայերենին հատուկ է համարում մեկ հիմնական երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ (հին հայերենի ձայնեղները վերածվել են շնչեղ-խուլերի, խուլերը՝ ձայնեղների, իսկ հին շնչեղ-խուլերը մնացել են անփոփոխ)։ Սակայն այս տեսակետը հաստատելու նպատակով առկոչված վկայությունները մի շարք դեպքերում չեն ծառայում այդ նպատակին, քանի որ հաճախ նկատված համապատասխանությունները զուրկ են համակարգային արժեքից և ներկայացնում են սոսկ դիրքային փոփոխություններ կամ պատմական հնչյունափոխության առանձին երևույթներ, որ դիտվում են այլ համակարգերում ևս։ Այսպես է, օրինակ, հին հայերենի ձայնեղ-պայթականների վերածվելը շնչեղ-խուլերի՝ գրերքն, անխարբախ, գերք, փափաբանացն, զոբնամեղ, վարբայպետիս և այլ բառերում, որ հեղինակը հակված է բացատրելու ոչ թե նախորդ ք ձայնորդի կամ ձայնավորների փոխադրեցությունը, այլ ընդհանրապես ձայնեղների խուլ-շնչեղացումը կամ համակարգային տեղաշարժով, միանգամայն անկախ փոխադրեցության կամ դիրքային գործոններից։ Մինչդեռ արդի բարբառներում նույն հընչյունափոխության վկայությունները ցույց են տալիս, որ ձայնեղ-պայթականների շնչեղացում որոշ դիրքերում տեղի է ունենում անկախ (բաղաձայնական) համակարգի տեղաշարժ-տեղափոխության վիճակից, գրեթե բոլոր բարբառներում։ Այսպես, բաղաձայնական եռաստիճան (ըստ որոշ ուսումնասիրողների նույնիսկ բառաստիճան) համակարգ ունեցող լոռու խոսվածքում, որտեղ առավել անխափար են մնացել զրբարբյան պայթականների շարքերը, ք>փ, գ>բ, դ>ք, ձ>ց ջ>չ խուլ շնչեղացումը օրինաչափորեն տեղի է ունենում բառամիջում և բառերի վերջում՝ դարփին, խափիլ, շափար, վոբփ, հաբնիլ, յէբբ, կաբբ, ֆոբյի, մաոք, դարբ, էվէլնոք, դախց, օց, ախչիկ, աչ, աչառ և այլն (լոռի 61—64)։ Սակայն նույն փոփոխությունը դիտվում է նաև երկաստիճան ձայնեղազուրկ, ասենք Ղարաբաղի, Շամախու կամ Խոյի բարբառներում, որտեղ նույնիսկ բառասկզբին ունենք՝ քբբանալ (<գտանել), քբբալ (<գղալ), քբբեր (<գիշեր), իսկ բառամիջում կամ վերջում շնչեղացումը ընդհանրական է։ Մյուս դեպքում էլ, թվարկելով հին հայերենի պայթական կամ պայթաչփական բաղաձայնների փոփոխությունները միջին հայերենում, հեղինակը հաճախ արձանագրում է նաև այնպիսի համապատասխանություններ, որոնք չեն համընկնում իր իսկ սահմանած համ-



ընդհանուր երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգին և ներկայացնում են այլ համակարգերի արտահայտություններ: Այսպես է օրինակ, ձայնեղ պայթականների ու կիսապայթականների վերածվելը համապատասխան խուլների՝ պլպուլն, խապար, փոխիւտ, պագրկան, ակննովս, Բաշուրիւն և այլ բառերում, որ մեջ է բերվում առանձին դեպքերի մեջ, սակայն ակընհայտորեն մասնանշում է ավյալ ոլորտում բաղաձայնների եռաստիճան տեղաշարժ-տեղափոխություն համակարգի առկայությունը:<sup>75</sup>

Այսպիսով, նկատի ունենալով Ս. Ղազարյանի գրքում մեջ բերված բաղաձայնների համակարգային համապատասխանությունները, միջին գրական հայերենին կարելի է վերագրել ոչ միայն երկաստիճան խլազուրկ համակարգ, ինչպես վարվում է հեղինակը, այլ նաև եռաստիճան տեղաշարժ-տեղափոխություն (ինչպես կիլիկյան գրական հայերենում), եռաստիճան անտեղաշարժ, որ, ինչպես տեսանք, ներկայացված է ժ—ժ՛ դարերի վիճական բնագրերում<sup>76</sup>, և նույնիսկ եռաստիճան խլազուրկ (հին խուլ պայթականները վերածվում են ձայնեղների, ձայնեղները՝ շնչեղ-խուլների, հին շնչեղ-խուլների անփոփոխ վիճակով), որ գիտվում է կարծեսցալ Շապուհ Բագրատունու երկում, Ամիրզովյաթի բժշկարանում և մի շարք ձևագրերի հիշատակարաններում՝ Վասրուրական, Համագասր, բորփոխեմ, Բիշեռ, մեքեցուցանեմ, փարուկ, բայտ, առ արն զեռոյ, արգունի, արգային, մարդս դադանաց (ՇԲ 2, 4, 8, 12, 13, 18, 23, 39), ղոզել, երգալ, ստամոզ և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճական արձանագրություններում հին հայերենի պայթական կամ պայթաշփական բաղաձայնների փոփոխություններն արտացոլող վկայությունները ցույց են տալիս, որ բացի եռաստիճան անտեղաշարժ վիճակից,

75 Ս. Ղազարյան, *Միջին հայերեն*, էջ 253:

76 Բաղաձայնական նույն համակարգն է արտացոլված նաև ժ՛՛ դարում Սյունիքում գրված արարերեն-պարսկերեն-հայերեն բառարանում (Մատենադարանի ձևագիր № 7151), որտեղ պարսկերեն Ե, Ջ, Ճ, Յ, Շ, Չ ձայնեղները բոլոր դիրքերում առաջարձված են հայերենի ք, գ, դ, չ ձայնեղ հնչույթներն արտահայտող գրերով (տե՛ս Աբարեբեն-պարսկերեն-հայերեն բառարան, Երևանի պետական համալսարանի Մատենադարանի, № 9, 1969, էջ 392—398, 2. Գ. Մուրադյան, *Միջին հայերենի բաղաձայնական համակարգի հարցի շուրջը*, ՊԲՀ, 1969, № 2, էջ 96):



այդ բնագրերը ավյալներ են պարունակում նաև եռաստիճանության պայմաններում ձայնեղների խշացման և խուլների ձայնեղացման տեղաշարժի մասին, որ առավել ցայտուն դրսևորվում է և ձայնորդ անգայինին հաջորդող դիրքում այդ բաղաձայնների գրության մեջ: Ելակետ ընդունելով այն հանրահայտ պարագան, որ բովանդակ հայերենում ն-ից հետո տեղի է ունենում ձայնեղացում, պետք է ենթադրել, որ այդ դիրքում ավանդված պայթական և պայթաշփական հնչյունները վկայված շրջանում արտասանվել են ձայնեղ, անկախ նրանից, թե այդ հնչյունները ինչպես են արտահայտված գրության մեջ՝ մևերոպյան այբուբենի ձայնեղ թե խուլ հնչյուններն արտահայտող տառաձևերով: Օրինակ, վիմագրերում ունենք մի կողմից՝ հանկիստ, զանկակատուն, հինկ, ժառանկ, նահանկ և այլն, որտեղ հին հայերենի ֆ ձայնեղ հնչյունն արտահայտող գրի փոխարեն փորագրված է կ խուլը, մյուս կողմից՝ ցանգացող, մանգուրեան, անընգալ, մանգանն, նորատունգ, բնգոյզ և այլն, որոնցում գիտվում է հակառակ իրողության՝ հին կ գրի փոխարեն վկայված է՝ գ, ըստ որում երկու դեպքում էլ ն-ից հետո հնչվել է ձայնեղ գ, սրանից հետևվում է, որ գրաբարի խուլ-պայթական հնչյուններն արտահայտող գրերը վկայված ուղարտում համապատասխան ձայնեղների հնչյունն են ունեցել:

Վիմագրերից մեր առկոչած օրինակներում դ ձայնեղ պայթականի համար հիշյալ դիրքերում ունենք՝ Անարեաս, Սանարխտոյ, Ջունական (<Ջունդիկ), փնակի (<փնդուկ), անտգնի (<յանդգնի), որտեղ դ ձայնեղը փոխարինված է համապատասխան խուլով, բայց գիտվում է նաև՝ բնդրեալ, բանդ (<բանտ), յրնդանեաց և այլն, որտեղ հին խուլ ա-ն արտահայտված է ձայնեղ դ-ով: Հասկանալի է, որ այս շարքում ևս, ինչպես և գ ձայնեղի դեպքում, ն-ին հաջորդող դիրքում ձայնեղ դ հնչյունը արտահայտված է կամ ձայնեղ դ-ով (բանդ<բանտ), կամ խուլ ա-ով (յանտգնի<յանդգնի): Նույն օրինաչափությամբ գրաբարի ք ձայնեղի համար վիմագրերում ունենք՝ Սմպատ, Լմպատ, արեմպ (<արեամբ), Աւրպել (<Աւրբել) և այլն, այսինքն հին ք ձայնեղ հնչյունը արտահայտված է համապատասխան պ խուլով, բայց նաև՝ ամբ (<ամպ), Փարբի (<Փարպի), որտեղ արձանագրվում է հակառակը՝ հին խուլ պ-ին փոխարինում է ք ձայնեղը:

Այժմ տեսնենք պայթաշփական ձայնեղների գրությունը և ձայնորդին հաջորդող դիրքում: Վիմագրերում վկայված են մի



կողմից՝ ինձ (<ինձ), հեծել, հեծան (=բեծան), տանձ, խնձո-  
 րիկ, զանձ, անձեռ (<անձեռ) և այլն, այսինքն գրաբարի ձ ձայ-  
 ննդի փոխարեն առկա է նույն շարքի ծ խուլը, բայց նաև՝ բնձայ-  
 բնձայնձ, յանձանաւ, որտեղ հին խուլ ծ-ին փոխարինում է ն  
 ձայննդը: Ինչ մնում է ջ ձայննդին, ապա վիճադրերում մի կող-  
 մից փոքրագրված է՝ կնոչ, տիրոչ, Բուրոչ, Բաչ և այլն, որտեղ ջ > չ  
 անցումը կարելի է բացատրել նաև փոխադղեցական հնչյունա-  
 փոխությամբ, որ կարող էր առաջանալ բառավերջում կամ ձայ-  
 նավորներին հաջորդող դիրքում և դիտվում է այլ համակարգն-  
 րում ևս, մյուս կողմից ունենք՝ առպնեան (<ապարանջան), Սան-  
 քաւ, Սեվիինն, կարմունն, քան, խոնա ձեերը, որոնք ակնհայտո-  
 րեն վկայում են բաղաձայնների տվյալ համակարգում առաջա-  
 ցած տեղաշարժի մասին, որի հետևանքով հին ջ ձայննդը արտա-  
 հայտված է նույն շարքի խուլ Գ-ով:

Այսպիսով, հին հայերենի պայթական և պայթաշփական  
 հնչյունների՝ վիճական բնագրերում կրած փոփոխությունների  
 վերլուծություններից ակնհայտ է դառնում, որ Ժ—ԺԳ դարերի  
 վիճադրական հուշարձաններում առկա է բաղաձայնների մեկ  
 հիմնական, լայն տարածում ունեցող եռաստիճան անտեղաշարժ  
 համակարգ՝ որտեղ գրաբարյան պայթականների երեք շարքերը՝  
 ձայննդ, խուլ, շնչեղ-խուլ հիմնականում մնում են անփոփոխ:  
 Բացի այս համակարգից, վիճադրերում նկատվում է նաև ավելի  
 սահմանափակ տարածմամբ եռաստիճան տեղաշարժ-տեղավո-  
 խություն համակարգը, որի մեջ գրաբարյան խուլ-շնչեղների ան-  
 փոփոխ պահպանմամբ, ձայննդները վերածվել են խուլերի, իսկ  
 խուլերը՝ ձայննդների:

Բաղաձայնական այս համակարգերն ունեցող և վիճական  
 բնագրերում արտացոլված խոսվածքների տեղորոշման և արդի  
 բարբառների հետ նրանց ունեցած համապատասխանությունների  
 խնդիրը, որ ինքնին կարևոր նշանակութուն կարող է ունենալ հա-  
 յերենի պատմության համար, հազիվ թե հնարավոր լինի բավա-  
 րար շտիով լուսաբանել միայն հնչյունաբանական վերլուծություն-  
 ներով, առանց հետազոտության մեջ ներգրավելու վիճական բնա-  
 գրերում ավանդված և նույն խոսվածքներից եկող ձևաբանական-  
 բառակազմական իրողությունները:

Հարցի ուսումնասիրության ներկա վիճակով միայն հնարա-  
 վոր է արձանագրել այն բնդհանրությունը, որ նկատվում է վիճա-  
 կան բնագրերում ավանդված բաղաձայնական համակարգի, հատ-



կապես պայթական և պայթաշփական հնչյունների գրաբարյան համապատասխանությունների և ժամանակակից արևելյան կամ Ում, Արս հյուզերի բարբառների հնչյունական օրինաչափությունների միջև: Ժ—ժԴ դարերի վիմական արձանագրություններում արտացոլված հիմնական եռաստիճան անտեղանշարժ համակարգը ավելի մոտ է այն բարբառներին, որոնք գրաբարի բաղաձայնական համակարգը պահպանել են առանց զգալի տեղաշարժերի, զրեթե անփոփոխ, եթե նկատի չունենանք դիրքային կամ փոխազդեցական հնչյունափոխության առանձին երևույթները, որոնք մեծ մասամբ ընդհանրական են բովանդակ հայերենի համար: Դրանք են եռաստիճան (կամ բառաստիճան) բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները՝ Աբարատյան, Կարնո, Լոռու, Մեղրու, Ազուլիսի, Կարճեղանի, Կաքավարերգի և այլն:

#### ԽՈՒԼ ԵՎ ՁԱՅՆԵՂ ՇՓԱՍՈՒՆՆԵՐ

Ինչպես և միջին հայերենի գրական երկերում, ժ—ժԴ դարերի վիմագրական հուշարձաններում հին հայերենի պարզ շփական բաղաձայնների համակարգը որակական զգալի փոփոխություններ չի ունեցել և զրեթե անփոփոխ պահպանել է հիմնական հատկանիշների երկակի՝ ձայնեղություն-խլություն հակադրությունը: Միջին դարերում գրաբարի շփական բաղաձայնների քանակն ավելանում է երկու նոր հնչյունով՝ ղ (չ) ետնալիզվային ձայնեղ շփականով, որ դատորոշվում, ինքնուրույնանում է դասական գրաբարի Ղ ձայնորդից՝ դառնալով ինքնուրույն բաղաձայն հնչույթ՝ իրրե ձայնեղ՝ խ խուլի հակադրությամբ և Փ շրթնատամնային խուլ շփականը՝ իրրե նույն շարքի ձայնեղ շփական Վ-ի հակադրություն, որ ներմուծվում է հայերենի բաղաձայնական համակարգը այդ հնչյունն ունեցող փոխառյալ բառերի հետ:

Ժ—ժԴ դդ. վիմական արձանագրություններում Փ գրի և հնչյունի առաջին կիրառությունը գտնում ենք Տաթևի վանքում, Սյունյաց եպիսկոպոս, մետրոպոլիտ, նշանավոր պատմագիր Ստ. Օրբելյանի 1295 թ. շինարարական արձանագրության մեջ. «Ձոր Ստեփաննոս մետրապոլիտ Սիւնեաց, որ է պատաւֆրանտէս Հաոց Մեծաց... շինող սր՝ եկեղեցոյս յիշեցէք» (ՁԽԴ Գ II 25): Օրբելյանը առանձին հակում ունեւ օտար բառեր, տերմիններ գործածելու երբեմն նաև գրաբարյան համարժեքների փոխարեն (ղէղէպոպ, դպել, դէմնբար, ծինամձոր, սիգել, պէնտէկոստէ, փաղա, կղերիկոս և այլն), և այդ պատճառով նրա «Պատմության»



մեջ բաղձիցս վկայված են ժամանակի վարչական, ֆեոդալական հարաբերություններին կամ հոգևոր կյանքին վերաբերող բաղձաթիվ բառերի փոխառություններ, զրանցից է նաև պրոտոֆրանտէս-ը, որ ծագում է հուն. *πρωτοφρασις*, բառացի՝ առաջին խնամակալ, այստեղ՝ նախարար պատրիարհ, Այունյաց հոգևոր բարձրագույն իշխանության՝ եպիսկոպոսական աթոռի հունական հորջորջումը, որ բացի այս վիճադրից, հիշատակվում է նաև ՉԾԳ թվի մի ձևագրի հիշատակարանում. «Տէր Ստփ մետրապոլիտ Սիւնեաց որ է պրոտոֆրանտէս ամենայն հայոց», ինչպես նաև Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկում. «Եւ կարգէ զՍիւնիք նախաթոռ պատրիարքին, որ կոչի ի հոռոմ լեզու պրոտոֆրանտէս Հայոց Մեծաց»<sup>77</sup>:

Հին ձևագրերի հիշատակարաններում ֆ գիրը հանդիպում է զրանից շատ առաջ՝ ԺԱ.—ԺԲ զզ. ոչ միայն փոխառություններում, այլև երբեմն բնիկ հայերեն բառերում՝ գործածված նույն շարքի ձայնեղ Վ-ի փոխարեն: Օրինակ, Աշոտ Ողորմածի նշանավոր սարգևագրում, որ Գ. Հովսեփյանը ենթադրաբար, ըստ բովանդակության, վերագրում է 976 թ., կարգացվում է. «ըստ մեծի մերոյ տէրութեան արևելից եւ հարաֆայնոյ (<հարաւ) հայոց թագաւորի՝ Աշոտ յորջորջեալ անուամբ» (ԳՂՀԶ 130): Հետագա դարերում ֆ նորամուտ գիրը ձևագիր մատչաններում ավելի հաճախ է երևում այդ հնչյունն ունեցող փոխառված բառերի գրության մեջ, այնինչ վիճագրական հուշարձաններում այն այլևս չի գործածվում և հատուկենա կիրառություններն էլ վերաբերում են ուշ ժամանակների (ԺԸ.—ԺԹ զզ.):

Ինչ մնում է նորամուտ մյուս շփական բաղաձայնին՝ հանալեզվային ղ ձայնեղին, ապա Ժ—ԺԳ դարերի վիճական բնագրերում նրա արտասանությունը այնքան է հեռանում Վ ձայնորդից, որ նրանց զուգահեռ գործածության և շփոթության դեպքեր այլևս չեն հանդիպում և ղ-ն հանդիս է դալիս իրրև ինքնուրույն բաղաձայն՝ հակադրվելով արդեն նույն շարքի համապատասխան խխույին: Սակայն ղ հանալեզվային ձայնեղ բաղաձայնը իր արտասանության տեղով երբեմն այնքան է հաղնում, որ կարող է նույնանալ ձայնեղությանը իրեն հակադրվող խ-ին, այս դեպքում արդեն հին հայերենի նախկին հանալեզվային ղ ձայնորդի

77 Ստ. Օրբելյան, Պատմություն..., 1911, էջ 26, Ալիշան, Սիսական, էջ 236, 2. Անադյան, Արմ. բառարան, Գ, էջ 633:



կամ նոր փոխառությունների ղ (չ) բաղաձայնի փոխարեն արձանագրություններում փորագրված ենք տեսնում խ խուլը, ըստ այդմ, եթե մինչև Թ—Ժ դարերը ղ ձայնորդը նույնանում կամ շփոթվում էր ավելի առաջնալեզվային լ ձայնորդի հետ, ապա Ժ—ԺԳ դդ. բնագրերում ղ—ն արտասանվելով լեզվի հանամասով, ավելի մոտենում, երբեմն էլ նույնանում է խ—ի հետ, այսինքն տեղի է ունենում ղ>խ խլացում: Այս իրողությունը հաստատող հիշատակություններից նշում ենք մի քանիսը տարբեր ժամանակների հուշարձանների վիճագրերից. Ղարիբ (արաբ. garib-պանդուխտ) —խարիբ>խարիփ>խարիպ—հնագույն հիշատակությունը նորագույն խաչքարի նե. Թ. հիշատակագրության մեջ. «Ես՝ խարիբ կանգնեցիր սուրբ Քրիստափոր հոգոյն»<sup>78</sup>, «եղբայր իւր խարիփ (Անի ՈԶԸ Գ I 17, Բաղարան ՈԿ ՍԱՐ 203, Մարմաշեն ՈԶԳ ՕրԾՈՒՒ 443): «Ես՝ խարիբշահ (<Ղարիբշահ) կանգնեցի զխաչս» (Տեղ ԶԻԲ Գ II 71), «Որդո իմո խարիփշահին» (Մարտիրոս ԶԼԲ Գ III 183), «:Ա: պատարագ արասցեն խարիբշահի» (Զուխտակ վանք ԺԳ ՄՎ): «Ես՝ Արլխարիբ (<Արլարիբ) (Հաղբատ նշ ԿՂՀԲ 150), «Ես՝ Արլխարիփ հայոց մարզպան» (Սանահին ԺԱ ԿՂՍ 97), «Բարեխաւս տն ամոյ Ալլխարիպա» (Պեմզաշեն նշե ՄՎ), «Եւ Արլխարիբ հայոց մարզպան» (Մարմաշեն նկէ ՕրԾՈՒՒ 442): եղբայր>աղբայր>ախբայր. «...մեր ախբար որդաւքս զմեր հայերենի հոդն տվար ի սբ Ստեփանոս» (Ազավնաձոր ԶեԱ Գ III 37), «...գոր գնել էի յիմ ախբարէն» (Ամազու ԶեԷ Գ III 216), «Մեր ծնողացն առնեն զպատարագն՝ Մաթունին, Ախպերանն (<Ախպերանն<եղբայրանն) եւ Խորասուփ» (Հաղբատ նշ ԿՂՀԲ 150): «Տեր Յովանիսի անյախք (<անյաղք) գիտնականի» (Աթոռիկ ԶԻԸ ՄՎ, ԿՂՀԲ 265՝ քաղված է Հ. Ղրիմեցուց, էջ 147, որը վերծանել է՝ անյաղք, այստեղ խլացումը տեղի է ունեցել ք շնչեղի առնմանությամբ): «Ես՝ Գրիգոր որդի Ախբակա (<խաղբակ) ազնեցի եկեղեցոյս» (Աղջոց վանք ՈԿԲ Հով ԽԱՂ III 65): «Եւ ախանշան (<ասողանշան) որդոյն Գրիգորի» (Տաշքենդ ԺԳ ՍԲ): «Հաստատուն պահալիսն (պահաղ—էն) արհնին» (Անի ԶԻԹ Գ I 23): «Կին լեալ որդոյ նորա Արուխամր» (<Արուղամր) (Մարմաշեն ԺԱ ՕրԾՈՒՒ 446): Այս-

78 Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, էջ 48, տախտակ ՂԱ, Ե. Մուշեղյան, Հայերեն արձանագրությամբ առարկաներ, Երևան, 1964, էջ 50—51, Մուշեղյանը իր հրատարակությունը առաջինն է համարում:



տեղ շենք նշում այն դեպքերը, երբ փոխառու լեզուների համապատասխան հնչյունը վիճազրեբում տառադարձվում է երկու ձևով՝ դ-ով կամ խ-ով, օրինակ, դան < խան (թաթ. ույզուր. xan-իշխան, տեր, վկայված՝ Անի ՉԻԹ Գ I 23, Քանաա ժԳ Գ III 74, Մրեն ՉԻԵ ՕրԾՄԻ 82, Արճեշ Չե ՍԱՐ 269, Աղզան՝ «ղանուրի Արղունին»-ՉԼԵ ՄՎ, Հառիճ ՉԾԳ ՄՎ): Ղափլան-եափլան (թուրք. gaplan-վագր (վկայված՝ Հովհաննատվանը ժԳ ԿՂԷ 104, Քարձրաբաշ ժԳ ՄՎ), «ես՝ եափլան եւ կենայկից իմ Քամար»: Վախտանգ = Վաղտանգ = Վաղբանգ, ծագումն անորոշ, բայց վրաց շրջապատում սովորական՝ Վախտանգ (վկայված կրկնակի ձևերով՝ Գաղի վանք ՈՂ ՍԲ, Կեշառիս ՈՂԷ Հով ԽԱՂ III 37, Քանաա ՉԿԲ Հով ԽԱՂ III 78, Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III 45):

Մի քանի բառերում հին հայերենի խ խույ շփականի փոխարին է վիճազրեբում փորագրված է համապատասխան ղ ձայնեղը, ըստ այդմ արտասանության մեջ տեղի է ունենում խույ շփականի ձայնեղացում: «Վաղնանեցան (<վախնանեցան) ի պատերազմի» (Սառնաղբյուր ժԲ ՄՎ), «Որբ անյիշատակ վաղնանեալ են յաշխարհի» (նա), «Քահանա կամ գործաւոր ի տեղս վաղջանի» (Սաղմոսատվանը ՉԿ ՄՎ): «ես Սեղա աղաղին (<աղախին) եւ դուստր Հասանայ» (Մեծարանց վանք ժԳ)<sup>79</sup>, այստեղ խ > ղ ձայնեղացումը դ-ի առնմանության արդյունք է:

Չ. Ս շփականները վիճական բնազրեբում պահպանում են էջարարյան հակադրությունները և նկատելի փոփոխությունների շեն ենթարկվում: Մի քանի բառերում և անձնանուններում նկատվում են այդ շփականների միմյանց փոխարեն գործածվելու դեպքեր, որ մեծ մասամբ արդյունք են փոխազդեցական հնչյունափոխության: Նշում ենք նկատված վկայությունները: Չ > Ս խույացումը դիտվում է Ազնաուր-հսկա, դյուցազուն անձնանվան մեջ, որ քանիցս հաշատակված է Ասնաուր ձևով Աշտարակի և Հովհաննատվանքի հուշարձանների բնազրեբում. «ես՝ Ասնաուրս եւ ամուսին իմ Ղուտալլար» (Մարինե ՉԷՆ ՄՎ), «ես՝ Ասնաուրս եւ Ղուտալլարս միարանեցար սբ Ածածնիս» (Կարմրավոր ժԳ ՄՎ), «ես՝ Ածատուր մականունն Ասնաուր մեղուցեկ բահանա շինեցի գէկեղեցիս» (Հովհաննատվանը ՉԿ ԿՂԷ 114—118)<sup>80</sup>: Եսգիտարուն

<sup>79</sup> Ե. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Քանաակ», 1901, էջ 130—141:

<sup>80</sup> Ասնաուր = Ազնաուր անձնանունը ավագ վկայությունների հիմամբ Հ. Ա. Հատչանը ծագած է համարում հայ. ազն արձափց ատր (=ատր) անանցով,



պրս. nazxatun-կաղմված նազ(անՖ) և տիկին բառերից, վիժա-  
 գրերում անհնչյունափոխ ձևերի հետ հիշատակվում է նաև զ>  
 ս խլացումով՝ նասխարուն, այստեղ խլացումը արդյունք է խ  
 հնչյունի ետընթաց առնմանության. «Ա: ար ինձ, :Ա: իմ հարն  
 Ստեփանոսի, :Ա: նասխարունին» (Գեղարդ ժԳ Հով ԽԱՂ III  
 49), «...մայր իմ և քվերք իմ՝ Մաթութս, նասխարունս ծախե-  
 ցար... զմեր հայրենիք այգիս» (Քանաքեռ ՉԺԵ ՄՎ): «Եւ անու-  
 անեցի ժամատանս տեղի անբաղ (<անգրաղ) աղաւթից» (Գե-  
 ղարդ ՉԼԸ Հով ԽԱՂ III 60), խլացումը տեղի է ունենում գ, ք  
 ձայնեղների տարնմանությամբ: «Ի սկսբանէ (<սկզբանէ) բաժ ու  
 տամղա շէին տվել» (Անի ՉԻԹ Գ I 23), խլացումը արդյունք է  
 նախորդ կ-ի առնմանության: Հակառակ երևույթը ս>զ դիտվում է  
 միայն Ասփա անձնանվան մեջ՝ Ազփա. «Եւ կենակցին իմո Ազ-  
 փաին» (Ամաղու ՈՀ Գ III 211):

Հ, Խ — Որքան էլ հին հայերենում այս բաղաձայնները ար-  
 տասանության տեղով և եղանակով իրար շատ մոտ են եղել, նը-  
 րանց նույնացման կամ իրար փոխարեն գործածվելու վկայու-  
 թյուններ գոնե հին մատենագրության մեջ չեն հանդիպում, և այդ  
 հնչյունները գրաբարի բաղաձայնական համակարգում հանդես  
 են գալիս հիմնական հատկանիշների որոշակի հակադրությու-  
 ներով: Սակայն, արդի մի քանի բարբառներում (վան, հոյ, Շա-  
 տախ, ն. Զուղա և այլն) բնիկ հայերեն արմատական բառերի  
 հ-ն որոշ գիրքերում պատմական հնչյունափոխության հետևան-  
 քով արտասանվում է խ՝ խաց<հաց, խէր<հայր, ջուխակ<ջուլ-  
 հակ, պախրէզ<պահէզ, ակախ<ագահ, նամբախ<նամբահ և  
 այլն: Կարևոր է որոշել, թե ե՞րբ առաջացավ այս հնչյունափո-  
 խությունը:

Միջին դարերի գրական հուշարձաններում կամ հին ձեռա-  
 գրերի հիշատակարաններում հ>խ փոփոխությունն արտացոլող  
 վկայություններ չեն պահպանվել, ուստի տվյալ իրողության ա-  
 ռաջացման մասին այդ աղբյուրների տվյալներով որոշակի քիչ  
 բան կարելի է ասել:

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն քնծայության» երկի հա-  
 չերեն թարգմանության նորահայտ պատահիկներում, որ ուսում-  
 նասիրող Ս. Քուլանջյանի կարծիքով գրչագրված են Թ դարում,  
 ավանդված են ինչպես հ>խ, այնպես էլ հակառակ՝ խ>հ արտա-

որ նշանակում է հսկա. վիրխաբի մարդ. դյուցազուն: Այս ստուգաբանությամբ  
 Ասնատու անվան մեջ բնական է դիտել զ>ս խլացումը:



սանության օրինակներ, հատկապես բառակցրի անկախ ու զորեղ գիրքում. «չորն, որ ի վիմէն խոսեցաւ (<հոսեցաւ) ..., վասն հնամոյն (<խնամոյն) եւ գթոյն...»<sup>81</sup>; Ժ դարի մի ձեռագրի հիշատակարանում վկայված է զՇատահն<sup>82</sup>, տեղանվան Շատախ արդի արտասանության դիմաց, ըստ որում զժվար է հավաստիորեն որոշել, թե ինչ փոփոխություն է արձանագրված այստեղ՝ հ>խ, թե՛ խ>հ, քանի որ տեղանունը ստուգաբանված չէ և անհայտ է նրա նախաձևը:

Սակայն, հազիվ թե հնարավոր լինի այս եզակի օրինակներով հավաստել բոլոր գիրքերում հ>խ հնչյունափոխություն, որ կարող էր ներթափանցել այն խոսվածքների արտասանությունից, որոնց ժառանգորդները ներկայումս էլ պահպանում են այդ օրինաչափությունը: Բացի դրանից, հնամոյն (<խնամոյն) վկայությունը արտացոլում է ոչ թե հ>խ, այլ հակառակ՝ խ>հ անցում, որ նույնպես դիտվում է արդի մի քանի բարբառներում, այսպես, Ղարաբաղի, Լոռու, Ազուլխի բարբառներում ունենք. հաղօղ (<խաղօղ), հաղ (<խաղ), հաղաղ (<խաղաղ), քացան (<քացախ), ծոհ (<ծուխ), ծահիլ (<ծախել), ճհառակ (<ճախառակ), սոհ (<սոխ)<sup>83</sup>:

Նույնիսկ կարծեսցալ Շապուհ Բագրատունու երկում, որ կազասական հայերենի այլ հուշարձանների համեմատ ամենից ավելի է խճողված ժողովրդական խոսակցական լեզվի՝ գեղջուկ քանի հնչյունական, ձևաբանական իրողություններով և աշխարհիկ բառամթերքով, հ>խ փոփոխության վկայություններ չեն նկատվում:

Այդպիսի հնչումով բառեր, ըստ որում նաև բառամիջում, գտնում ենք հնազույնս ԺԴ դ. մեծ մասամբ վասպուրականի և վայոց ձորի վանքերում արտագրված ձեռագրերի հիշատակարաններում, ուստի ավելի բնական կլիներ երևույթի ձևավորման ժամանակը համարել այդ դարերը: Ահա հ>խ, խ>հ գրությունը մի քանի բառեր ԺԴ դ. հիշատակարաններից. ի խալալ (<հալալ) վաստակոց (վայոց ձոր, 1321 թ.), փրփրաղեղ կոխակաւֆ (<կո-

81 Ս. Քոլունջյան, Նորահայտ պատասխաններ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից, «Բանբեր Մատենադարանի» 1960, № 5, էջ 227:

82 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 182:

83 Կ. Դավրյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 70: Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1967, էջ 182: Հր. Ահալյան, Քննություն Ազուլխի բարբառի, էջ 103:



հակալ) (Ախթամար, 1381 թ.), Նախապետ (<Նահապետ) (տեղն անհայտ, 1351 թ.), Ուրխա (<Ուռհա) (Խրդան, 1395 թ.), զամենայն ազգատոխմֆն իմ (<ազգատոհմ) (Արճեշ, 1317 թ.), առնէի զտեարակս հաղին (<խաղին), հաղաեւորակս (Վասպուրական, 1304) և այլն<sup>84</sup>:

Ժ—ԺԳ դարերի վիճական բնագրերում փորագրված են սակավաթիվ բառեր, որոնցում հ>խ անցում արձանագրված է ոչ միայն բառակերպում, այլև բառերի մեջ կամ վերջում: Հնագույն վրկայութիւնը փորագրված է Բյուրականի հին եկեղեցու հարավային մուտքի վերևում, և մեզ հետաքրքրող մասում հստակ կարգացվում է. «նՂԳ (1044) Բուականութեանս հայոց, այս իմ գիր է Զարարէ իշխանաց իշխանի, որդոյ Վահրամա, որ աղգաւ Պախղաւ, որ ետու զԲիւրականի զթաստակն...», հետևում են հատուցման և աննծրի ձևակերպումները<sup>85</sup>:

Ակներև է, որ ստույգ վերծանված Պախղաւ-ը Պահլաւ-Պահլաւունի տոհմանունն է, առաջացած պրս. Pahlavi-անունից, բառայում, տվյալ տառաշարքում առկա է մի կողմից դ-ի առաջնալեզվային ձայնորդ արտասանություն, երբ այն շատ մոտ էր զրարարյան լ ձայնորդին և դեռևս չէր վերածվել ետնալեզվային ձայնեղբաղածայնի, և ապա հ>խ հնչյունափոխություն՝ Պահլաւ>Պախղաւ, որ անտարակույս կարող էր ներթափանցել ժամանակի այն խոսվածքներից, որոնց արդի ժառանգորդները պահպանել են հ>խ արտասանությունը:

Բյուրականի այս կարևոր արձանագրությունը միայն վերջերս է ընդօրինակվել և հայտնի դարձել գիտական շրջաններին. թվում է, հավասարի վերծանված Պախղաւ (<Պահլաւ) հիշատակությունը հնարավոր է դարձնում հ>խ հնչյունափոխության ժամանակաշրջանը կամ համենայն դեպս նրա հնագույն վկայությունը համարել Ժ—ԺԱ դարերից: Նույն անձնանունը անհնչյունափոխ ձևով փորագրված է նաև Երանոս գյուղում կանգնեցված խաչքարի անթվական, հավանաբար ուշ շրջանի հիշատակագրում. «սր խաչս բարեխաւս Պահլաւին»<sup>86</sup>:

84 «ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 23, 130, 170, 501, 578, 611:

85 Բնագրի միակ հրատարակությունը տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձուրի հնությունները և արձանագրությունները. «Էջմիածին» 1961 № 5, էջ 48:

86 Մ. Ամբասյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, 1895, էջ 607:



Հ>խ փոփոխություն մյուս վկայությունները պահպանվել են Արճեշի Հարություն գյուղի եկեղեցու ժԳ դ. շինարարական-նվիրատվական ընդարձակ արձանագրության մեջ, որի միակ ընդօրինակությունը հրատարակել է Ն. Սարգսյանը: Ծիշտ է, այս վերձանությունը և տվյալ վկայությունները անստուգելի են, կասկածելի և առայժմ անմատչելի նոր ընթերցումների համար, սակայն նույն հեղինակի մյուս, ստուգելի վերձանությունները (հասկացես Անիի և Բաղնայրի վիճագրերի ընդօրինակությունները) կատարված են այդ ժամանակների համար բացառիկ նույնականություններ, ուստի և հույս են ներշնչում, որ անխաթար պահպանված այս արձանագրության ընթերցումը ևս զգալի վրիպումներ չպետք է ունենա: Ահա հ>խ ունեցող նախադասությունները. «Յիշեսչիք զպարոն ... Սահմադին նախնիք և հարազատաւք և զխոզեւոր (<զհոզեւոր) հայրն իմ զՄէլէք Ստեփանոս...», ևս Աւարշախն (<Աւարշահ) և Մեթարն զԻւրեանց այգին ի Գողթան ՚ի տակ»<sup>87</sup>:

Այստեղից, բնական է կարծել, որ Հարություն գյուղի բնակիչները կամ տվյալ բնագիրը կազմողները հոզեւոր, Աւարշահ (=շահ, Շահ) բառերը ժԳ դարում արտասանել են հ>խ անցումով՝ խոզեւոր, շախ, Օտարշախ: Մյուս կողմից, վիճագրերում նկատվում են նաև բառամիջում խ>հ փոփոխությունն արտացոլող վկայություններ. օրինակ, Ախթամարի վանքի 1317 թ. բնագրերից մեկում պարզ կարդացվում է. «և նոյն ամին Գրիգորիան վահնանեցաւ» (<վախնանեցաւ)<sup>88</sup>: Թեև ընդգծված բայաձևը վրկայված է վանի լեզվական միջավայրում, որտեղ օրինաչափ է բոլոր գիրքերում հ>խ անցումը, սակայն հազիվ թե հնարավոր լինի այն դիտել իբրև տվյալ երևույթի արտահայտություն, ավելի հավանական է այստեղ նկատել խ>հ (խաղող >հաղող, հաղուղ, ծախել >ծահիլ), որ, ինչպես տեսանք, տեղի է ունենում մի շարք բարբառներում:

Հավանաբար հ>խ հնչյունափոխությունն է արտացոլված նաև Խաղրակ, Խաղրակեանք առհմանվան մեջ, որ մասնաճարական աղբյուրներում վկայված է նաև՝ Հաղրակ, Հաղրակեանք ձևվով, ըստ այսմ, զժվար է ցույց տալ նախաձևը, բանի որ անձ-

87 Ն. Սարգսյան, Տեղագրությունք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 268—269:

88 Н. Орбели. Избранные труды, 1963, стр. 228.



նանունը հավասար չի ստուգաբանվում<sup>89</sup>: Դիտելի է, որ միջին դարերի պատմիչների երկերում անձնանունը մեծ մասամբ Հաղբակ է, իսկ վիմական բնագրերում՝ Խաղբակ, Խաղբակեանք<sup>90</sup>:

Հին հայերենի և հազագային շփականը խ հնչող արդի բարբառներում ավյալ փոփոխությունը միևնույն օրինաչափությամբ չի գործում. ելնելով ուսումնասիրված բարբառների փաստերից, կարելի է տարբերել և՛ խ ունեցող խոսվածքների երկու հիմնական խումբ.

ա) Բարբառներ, որոնցում և՛ խ արտասանությունն ընդհանրական է և որոշ բացառելի շեղումներով տեղի է ունենում և ունեցող միավորներում բոլոր դիրքերում՝ բառակազմում, բառերի մեջ և վերջում: Դրանք են՝ Վանի, Ն. Զուղայի, Շատախի, Խոյի, Մարաղայի բարբառները, որտեղ բառակազմի դիրքում ունենք՝ խամբրէլ, խայիր, խառնիս, (<համարել, հարիւր, հարսանիք), խաստ, խալի (<հաստ, հայելի), խիվանդ, խոկյի, խովիվ (<հիվանդ, հոգի, հովիւ), խաշկ, խառնէլ (<հասկ, հատանել), խամ, խաց, խայ (<համ, հաց, հայ): Բառամիջում դիտվում է՝ շնախավօր, տնօխնէք, չովսլակ, պախէլ, պախէզ, պատխան, պատուխաս, քյախանա (<շնորհաւոր, տնօրհնէք, չովհակ, պահել, պահէզ, պատուհան, պատուհաս, քահանայ): Վերջապես, բառերի վերջում. ախ, բախ, մախ, շախ, զրէխ, ախախ, համբախ (<ահ, բահ, մահ, շահ, զահ, ազահ, համբահ)<sup>91</sup>:

բ) Բարբառներ կամ խոսվածքներ, որոնցում և՛ խ արտասանությունը չի ընդգրկում բոլոր բառերը, ընդհանրական չէ և, հավանաբար, առաջանում է կամ փոխազդեցական հնչյունափոխությամբ, կամ հարևան ճյուղակից բարբառների ազդեցությամբ: Այս խմբի մեջ մտնում են՝ Մշո, Ազուլխի, Ղարաբաղի, Պուլսի, Համ-շենի, Մեղրու, Շամախիի, Լոռու բարբառները: Մեղրու բարբառում, օրինակ, պրոֆ. էզ. Աղայանը և՛ խ փոփոխությունը դի-

89 Տե՛ս Զր. Անաոյան, Անձնանունների բառարան, հ. Բ, էջ 456:

90 Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մտեղի, 1860, էջ 65, Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 394, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., Ա. էջ 31-40, Գ. էջ 2, Տ. 10, 12, 13:

91 Տե՛ս Զր. Անաոյան, Քննություն Ն. Զուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 111, 112, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1959, էջ 65: Մ. Ասատրյան, Խոյի (Ուրմիայի) բարբառը, Երևան, 1962, էջ 53: Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 50, Կ. Գավրյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային բարբառը, էջ 50:



տում է բառամիջում, այն էլ միայն ընկն հնչյունախմբում, որը այստեղ և մի բանի այլ խոսվածքներում վերածվում է խն-ի. օխնէլ <օրհնել, ջրօխնէլ <ջրօրհնէլ, ինչպես նաև խարփուխ (<հարբուխ) բառի մեջ, որտեղ հ> խ արդյունք է վերջնահանգ յ շփական բաղաձայնի առնմանության և դիտվում է նաև Ազուլիսի, Ղարաբաղի (խարփուխ), Համշենի (խարպուղ) բարբառներում<sup>92</sup>: Պուլսի և Համշենի բարբառներում բննվող հնչյունափոխությունը Հր. Աճառյանը նկատում է միտղն բառակզրում, դ ձայնեղ բաղաձայնին նախորդելիս, որ նրա կարծիքով առաջանում է հաջորդ կամ վերջնահանգ դ-ի առնմանումով՝ խօղ, խէօղ, (<հօղ), խալօրք (<հաղորդ)<sup>93</sup>:

Շամախիի, Ղարաբաղի, Արարատյան բարբառներում ևս հ> խ փոփոխությունը դիտվում է օխնէլ (<օրհնել), խէ՞, խի (<հի՞) բառերում. դա, հավանաբար, այլ խոսվածքների ազդեցությամբ պետք է բացատրել: Առանձնակի է մնում Մշո բարբառը, որը տվյալ փոփոխությունը պահել է միայն երեք միավորներում՝ խրտ (<հետ), ախ (<ահ), դախ (<դահ), այստեղ ևս հավանական ենք համարում հարևան բարբառների (Վան, Շատախ) արտասանության ազդեցությունը, որոնցում, ինչպես տեսանք, հ> խ բոլոր դիրքերում ընդհանրական է<sup>94</sup>:

Նկատի ունենալով Վանի բարբառում հ> խ հնչյունափոխության ավանդված օրինակները, մասնավորապես հ-ով սկսվող փոխառյալ բառերում այդ հնչյունի արտասանությունը, Հր. Աճառյանը տվյալ փոփոխության առաջացման ժամանակը համարում է արարական արշավանքից հետո (է-Ը դդ.), բայց մինչև սելջուկ թուրքերի տիրապետությունը (ԺԱ-ԺԲ դդ.), բանի որ բառակզրի առավել անկախ դիրքում հ> խ պահպանվել է միայն արարերենից փոխառված բառերում, մինչդեռ պարսկերենից կամ թուրքերենից ներմուծված միավորներում փոխատու լեզուների հ-ն բոլոր դիրքերում մնում է, անփոփոխ կամ սակավ դեպքերում ընկնում է իսպառ՝ ենթարկվելով հայերենի հնչյունափոխական օրինաչափություններին: Այսպես. օրինակ, խսրամ = ապօրինի, արար. haram, խարար = կարոտ, արար. hasrat, խալալ = օրի-

<sup>92</sup> էդ. Ազայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 54: Հր. Աճառյան, Քննություն Ազուլիսի բարբառի, էջ 118: Կ. Դավրյան, նշվ. աշխ. էջ 71:

<sup>93</sup> ՏԵՍ Հր. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 51, Քննություն Պուլսի բարբառի, Երևան, 1940, էջ 53:

<sup>94</sup> ՏԵՍ Բաղդասարյան-Փափալցյան, Մշո բարբառը, Երևան 1958, էջ 66:



նական, արաբ. haial (ժԲ—ժԳ դդ., վիմագրերում՝ միայն հալալ), խէֆլիմ—բժիշկ, արաբ. hakim (ժԲ—ժԳ դդ. վիմագրերում միայն հեֆիմ), ըստ այսմ արաբերենի և հնչյունը վանի բարբառում արտասանվում է խ: Մյուս կողմից, հայդուգ=վիրխարի, թուրք. haydug, ամսրւթ=ժրաշան, թուրք. hamarat և այլ բաներում թուրքերենի հ-ն մնում է անփոփոխ կամ իսպառ ընկնում, մի խոսքով չի վերածվում խ-ի<sup>95</sup>:

Գր. Մագիստրոսի մի վկայությունը հիմք է տալիս ավելի մոտեցնել միջին հայերեն բարբառներում հ>խ հնչյունափոխության ձևավորման ժամանակագրական սահմանները: «Մեկնութիւն Քերականին» աշխատության մեջ խոսելով իր ժամանակի խոսակցական լեզվում հին հայերենի մի շարք բաղաձայնների տարբեր հնչումների մասին, Մագիստրոսը նշում է նկատված տարբերությունները, ըստ այդմ. «ոմանք ի մէնջ ոչ երբեք զձայնակիցս կամ զլծորդս փոխանակեն իրր զմանկանց կամ զպատանեաց, որպէս զխէ փոխանակ հոյի գիտեալք կամ զձա՝ ծայի»: այստեղից, իմացվում է, որ Մագիստրոսի ժամանակ (ժԱ դար) և դրանից առաջ էլ հին հայերենի հ-ի փոխարեն որոշ բարբառներ (ոմանք) խ-են արտասանել, իսկ ծ-ի փոխարեն՝ ձ<sup>96</sup>:

Այսպիսով, հայերենում հ>խ հնչյունափոխության առաջացման ժամանակը կարելի է համարել ժ—ժԱ դարերը, որը հաստատվում է նաև վիմագրական հուշարձաններում պահպանված հնագույն վկայություններով, հատկապես Բյուրականի վերորչրյուլ արձանագրության օրինակով:

Բառասկզբում յ>հ պատմական հնչյունափոխության մասին պատմելու ենք գրաբարյան յ ձայնորդի՝ վիմական բնագրերում կրած փոփոխությունները նկարագրելիս: Այստեղ հարկ է նշել, որ վիմագրերում ավանդված սակավաթիվ վկայությունները հնարավորություն չեն տալիս որոշակի պատկերացում կազմել այդ ընդհանրական հնչյունափոխության առաջացման և կայուն օրինաչափության վերածվելու ժամանակաշրջանի մասին: Մյուս կողմից, ժԳ դարի մի քանի արձանագրություններում հիշատակություններ են պահպանվել հակառակ՝ հ>յ գրության մասին, որ հանդիպում է մեծ մասամբ բառավերջում և ապացույց է, թե արհանդիպում է մեծ մասամբ բառավերջում և ապացույց է, թե արհանդի մի քանի խոսվածքների նման, որոշ դիրքերում հին հայերենի

95 ՏԷ՛ս Ըր Անտոյան, Քննություն վանի բարբառի, էջ 66—67:

96 ՏԷ՛ս Н. Адоиц, Дионисий Фракийский... Петроград, стр. 224.

Ըր. Անտոյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ., Երևան, 1951, էջ 383:



և հազագային բաղաձայնը արտասանվել է յ, որը վկայված ժամանակաշրջանում ունեցել է ոչ թե գրարարյան յ ձայնորդի, այլ միջնաշիջվային յ կիսաձայնի հնչում: Սրանից կարելի էր մակարերել, որ և > յ արտասանությունն այս դեպքում ցույց է տալիս, որ յ տառածեք և բաղաձայնի արժեք է ունեցել վկայված միավորներում և ըստ այդմ դիտվում է հակառակ՝ յ > և հնչյունափոխություն: Սակայն այս վարկածի դեմ առարկում է նախ այն պարագան, որ յ > և վերաբերում է բացառապես բառակզրի դիրքին, մինչդեռ և > յ տեղի ունի մեծ մասամբ բառավերջում կամ բառերի մեջ, և ապա, արդի բարբառների փաստերը ևս հավաստում են, որ հիշյալ միավորներում հին հայերենի և բաղաձայնը արտասանվում է իբրև յ կիսաձայն բաղաձայն՝ ըստ այսմ, առկա է և > յ և ոչ թե հակառակը:

Այս փոփոխությունն արտացոլող բազմաթիվ օրինակներ է տալիս Մշո բարբառը և ն. Բայազեղի խոսվածքը, որտեղ հայերենի և հազագր բառամիջում և բառավերջում կանոնավոր կերպով արտասանվում է կիսաձայն յ. մայ < մահ, շայ < շահ, բայ < բահ, տոյմ < տոհմ, սայման < սահման, պայել < պահել, Թափույի < Թագուհի և այլն (Մուշ 66): Մեջ ենք բերում և > յ հնչյունափոխության նկատված հիշատակությունները ԺԳ դ. վիմական բնագրերում. «Ես՝ Շարվենշահ և Շայ (< Շահ) կանգնեցար զխաչըս» (Խոտ ՉԼԱ Դ II 60): «Հայրենիքս, զոր կորոյ շինեցի ևտու. Մլխշայ» (< Մլխշահ) (Աղավնաձոր ԺԳ Դ III 39): «Թ տանի հագոց գայտան Դ: Շահանշայի (< Շահանշահ) Դ: Շովանշահի» «Հովհաննավանք ԺԳ ԿՂԷ 101): «Պատրոն մեծին Շայանշայի» (Օձուն ՈՁԴ ՄՎ): «Քուր ամիրսպասալար Շայանշահի» (Չինչիրլու ՉՄ Հով ՏՄ 16): «Եւ որոց մերոց Տարսախճին, Շայանշահի ևւ էլուկումին» (նտ): «Ես՝ վարդանս ևւ ամուսին իմ Խորիշայ» (< Խորիշահ) (Ավան ԺԳ ՄՎ): «Ես՝ Շահանշայ որդի Ջոհէ կանգնեցի զխաչս» (Աստղածոր ՉԺԹ ՍՍ): «Ես՝ ամապակ Շահինշայ որդի ամապակ Ջաղային» (Բշնի Պէ)<sup>97</sup>: «Որդի Իւանի թոռն մեծին Շահանշայի» (Հոռոմոս ՉՉԵ ՍԱԲ 158): «Պարոն Շայինշի Ազրուդին ևւ Արտայշիրին» (նտ):

Նույն փոփոխության ավելի սակավաթիվ օրինակներ դիտվում են ՈՄԸ (1169) Թ. ձեռագրի հիշատակարանում. «Երանելի Թագոյի (< Թագուհի).... Շայինշայի» (ԳՂԶ 398, 401):

<sup>97</sup> Ե. Մուշեղյան, Բշնի 1358 թ. արձանագրության առթիվ, ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 5, էջ 97—98:



Վ ձայնեղ շփականը վիմական բնագրերում նկատելի փոփոխություններ չի կրել և հանդես է գալիս դասական գրաբարում ունեցած իր արտասանական հիմնական հատկանիշներով: Ետդասական գրական հուշարձաններում և վիմագրության մեջ հին հայերենի և ձայնորդի արտասանությունը զգալի շփով շրջանայնանալու հետևանքով, այդ հնչյունը մոտենում, համարյա նույնանում է Վ բաղաձայնի հետ և այդ պատճառով նրանց հակադրությունները հարթվում են, առաջացնելով Վ, և տառաձևերի կիրառության զանազան շեղումներ, իրար փոխարեն գործածվելու բազմաթիվ օրինակներ: Վ=ւ համապատասխանության վկայությունները քննում ենք և ձայնորդի փոփոխությունները շարագրելիս:

### ՁԱՅՆՈՐԳՆԵՐ

Հին հայերենը հնդեվրոպական մյուս լեզուների նման հարուստ էր ձայնորդ հնչյուններով, որոնք էական դեր ունեին լեզվի հնչույթային համակարգում: Մեսրոպյան շրջանի գրական հուշարձաններում ավանդված են յ, զ, մ, ն, յ, ո, ր, և ձայնորդները, որոնք հայերենի գրի առնվելու ժամանակ իրենց որական հատկանիշներով զգալիորեն տարբերվելով հնդեվրոպական համապատասխան ձայնորդ հնչյուններից, գրաբարի հնչույթային համակարգում հանդես էին գալիս իբրև ինքնուրույն բաղաձայն կամ ձայնավոր հնչյուններ, հիմնական հատկանիշների որոշակի հակադրություններով: Միջին հայերենի և հատկապես վիմական արձանագրությունների փաստերը ցույց են տալիս, որ հին հայերենի ձայնորդ հնչյունների արտասանության մեջ միջին դարերում տեղի են ունեցել որակական զգալի փոփոխություններ, որոնց մասին պատկերացում են տալիս հին բառերի ուղղագրությունը, կամ հետագայում հարևան լեզուներից փոխառված ու տեղական բարբառներից ներմուծված բառերի տառագարձությունը:

Ձայնորդների պատմական հնչյունափոխության և բնդհանրապես հայերենի հնչյունափոխական երևույթների ուսումնասիրության համար արժեքավոր և հավաստի ալյալներ են տալիս մեզ հասած վիմական բնագրերը, որոնք հայերենի պատմության այլ աղբյուրների համեմատ ավելի բազմազան են, մեծ մասամբ ստույգ թվագրված ու տեղագրված, ավելի նախնագույն և ան-



խաթար: Ճիշտ է, հատկապես հնագույն շրջանի սակավաթիվ վիժմական արձանագրությունները մեծ մասամբ շարադրված են ընդունված կանոնիկ կաղապարով, խստորեն հետևելով ավանդական, գրաբարյան արտասանությանն ու նրան համապատասխան գրությունը և այդ պատճառով շատ բիշ նյութ են տալիս տվյալ ժամանակաշրջանի խոսակցական լեզվի հնչումը պարզելու համար, սակայն կենդանի, ժողովրդական արտասանության ներթափանցումները դասական հայերենի խախտումների, շեղումների և նորարանությունների տեսքով նկատվում են նաև նախնական բնագրերում, սկզբում ավելի սակավ, իսկ Ժ—ԺԳ դարերում հետզհետե ավելի հաճախանալով և գերակշիռ դառնալով:

Ներկայացնում ենք դասական գրաբարի ձայնորդ բաղաձայնների արտասանության մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ ըստ վիժմական արձանագրություններում պահպանված վրկայությունների:

Ա. Ղ.—Այս գրերով արտահայտվող հնչյունները հին հայերենի գրի առնվելու ժամանակ ինքնուրույն ձայնորդներ են եղել, սակայն նրանց որակական տարբերությունը այնքան զգալի չի եղել, ինչպես արդի հայերենում կամ բարբառներում: Երկուսն էլ առաջնալեզվային ձայնորդ հնչյուններ էին այն տարբերությամբ, որ Ղ-ն արտասանվում է լեզվի ծայրով, ավելի նուրբ, փափուկ, իսկ Ղ-ն՝ հաստ կամ թանձր, ավելի լեզվի միջամասով: Որ գրաբարի նախնադույն շրջանում Ղ Պ շատ մոտիկ ձայնորդներ են եղել ապացույց է Ե դարի գրական հուշարձաններում օտար բառերի տառադարձությունը, ըստ այսմ, հունարեն ղ. հնչյունի դիմաց Թրակացու թարգմանիչները տառադարձում են մերթ Ղ, մերթ ղ:

Մի կողմ թողնելով հայ հին մատենագրության մեջ պահպանված հայտնի վկայությունները, որոնք կարող են լիակատար վստահություն չներշնչել հետագա արտագրությունների ժամանակ աղավաղվելու կամ ուշ շրջանի արտասանությանն ու ուղղագրությանը հարմարեցվելու պատճառով, այստեղ մեջ ենք բերում իրողությունը հաստատող այլ փաստեր հայերեն հնագույն, ստույգ թվագրված կառուցողական արձանագրություններից, որոնց ընդօրինակությունները ստուգվում են լուսանկարներով: Նախնադույն վկայությունը պահպանվել է Ավանի հին տաճարի երկլեզվյան հունարեն-հայերեն է դարի ծածկագիր արձանագրության վերջում և Կ. Ղաֆաղարյանի վերծանությամբ կարդացվում



է. «Սամէղ ծառայ թի»<sup>98</sup>. այստեղ Սամէղ-ը Սամուէլ անձնանվան ձևերից մեկն է, որ հանդիպում է նաև «Գիրք թղթոց»-ում<sup>99</sup>: Մըրենի տաճարի 639—640 թթ. շինարարական արձանագրության մեջ պարզ փորագրված է. «ամույն քսան եւ իններորդի շերակղի բարեյազթող թագաւորի...», եւ յեպիսկոպոսութեանն սրբասիրի Քեովիիղոսի...» (ՕրճԻՏ 401): Ընդգծված անձնանունները հունարենում հնչվել են Ηρακλ.η, Ηρακλ.ηζ եւ Θεοφιλος (Theophilus)<sup>100</sup>, ըստ այդմ հուն. լ. հնչյունը տառադարձվել է համապատասխան ղ ձայնորդով: նույն անունները նույն դրութեամբ վկայված են նաև Ալամանի է դարի կեսերի մի վիճագրում. «Քսան եւ եւթն եմույ շերակղի բարեպաշտ թագաւորի...», եւ Քեովիղոս Աշարունեաց եպիսկոպոս, ես՝ Գրիգոր եղուստ եւ Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս...» (ՕրճԻՏ 395):

Եղուստ բառը ըստ Հ. Աճառյանի ստուգարանության նույնն է էլիստրուքիւն բառի հետ, որ նշանակում է հունական իշխանական մի աստիճան եւ առաջանում է հուն. ἑλ.η, ἑλαρχος-հեծելազորի զեղապետ արմատից<sup>100</sup>: Այստեղ եւս հուն. լ. հնչյունին համապատասխանում է հին հայերենի ղ ձայնորդը:

Բագավանի 639 թ. բնագրում նույնպես երկու անգամ փորագրված է Երակղ, իսկ բնագրի վերջում հաղորդվում է տաճարի շինարար-ճարտարապետի անունը՝ լ. = ղ համապատասխանությամբ. «Եղեւ կատարումն... վարդապետութեամբ Եւրայեղի (Երբ. Israhel անունից) Գոռաղճեցույ» (ՕրճԻՏ 371):

Լ, ղ ձայնորդների արտասանության եւ դրութեան այս երկակի վիճակը շարունակվում է մինչև Ը դարը, երբ պատմական հնչյունափոխությամբ այդ հնչյունների տրակական ընդհանրությունը նվազում է եւ նրանք ղգալի շափով հեռանում են իրարից: Լ գրով արտահայտվող հնչյունը պահպանում է իր առաջնալիզվային, փափուկ արտասանությունը, իսկ ղ-ն փոխում է թե՛ արտաբերության տեղը եւ թե՛ մանավանդ հնչման ձայնեղությունը, դառնալով ետնալիզվային ձայնեղ բաղաձայն, ինչպիսին է արդի հայերենում եւ բարբառներում: Այս հնչյունափոխական երևույթի, այսինքն լ-ի ղ դառնալու ժամանակը Հ. Աճառյանը համոզվել կերպով գնում է Թ դ.:

<sup>98</sup> Կ. Ղաֆաղարյան, Ավանի երկեղվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 8—10 «Գիրք թղթոց», Քիֆլիս, 1901, էջ 74:

<sup>99</sup> Հ. Աճառյան, Անձն. բառարան, Գ, էջ 82:

<sup>100</sup> Հ. Աճառյան, Արմ. բառարան, Բ, էջ 673, 715:



Սակայն լ, ղ ձայնորդներն արտահայտող գրերի գրաբար-  
 յան կիրառությունները շարունակվում են երկար ժամանակ՝ հե-  
 տեելով ոչ թե կենդանի արտասանությանը, այլ դասական գրա-  
 բարի ուղղագրությանը, այսինքն թ գարից հետո ղ հնչյունը այլ-  
 ևս լ-ի նման առաջնալիզվային ձայնորդ չէր, այլ ետնալիզվա-  
 յին ձայնեղ բաղաձայն, սակայն գրության մեջ դեռ ավանդույթի  
 ջածով շարունակվում էին այդ հնչյունների նույնացման կամ ի-  
 բար փոխարեն գրելու դեպքերը: Այս երևույթի բազմաթիվ վկա-  
 յություններ են տալիս հայերեն հնագույն ձևագիր մատյաննե-  
 րը: Ազաթանդեղոսի կրկնագիր ձևագրում, օրինակ, որ Ը—Թ գդ.  
 կատարած ընդօրինակություն է համարվում, ավանդված են՝ այդ  
 (<այլ), գայզն (<գայլ), բոյզ (<բոյլ), բուլագույն (<բուլա-  
 գույն) և այլն<sup>101</sup>: Լազարյան ձեմարանի 312 (887) թ. ավետարա-  
 նում նույնպես պահպանվել են բառերի մեջ լ-ի փոխարեն ղ-ի  
 գրության դեպքեր՝ այդ (=այլ), նեղեազ (=նեղեալ), այդակեր-  
 պել (=այլակերպել), բոյզ (=բոյլ)<sup>102</sup>: Նույն ժամանակների այլ  
 ձևագրերի հիշատակարաններում հանդիպում են՝ Կոստանդինա-  
 պոլիս (35Ը Գ222 107), բազմափայզ (=բազմափայլ) (Ժ գ.  
 Գ222 127), այզ, այզոց (=այլ, այլոց) (նԻԲ Գ222 128, 138.  
 153), Սամուէլի (=Սամուէլի) (ԺԱ գ. Գ222 223):

Այս կարգի վկայություններ գիտվում են նաև Ժ—ԺԿ դարե-  
 րի և ավելի հաճախ՝ հնագույն վիժակսն արձանագրություննե-  
 րում: Համամ իշխանի՝ Բարվի թանգարանում գտնվող տապանա-  
 րարի վրա, օրինակ, կարդացվում է. «Նորար Համամ իշխանի և  
 ան Փղիպէի» (<Փիլիպէ)<sup>103</sup>, իսկ Ն. Բայազետի խաչքարի հիշա-  
 տակարանում՝ «Նա՛ Հայրակղ (=Հերակղ, Հերակլ) կանգնեցի...  
 ևս՛ Հարակղ» (=Հերակղ (նԻԲ)<sup>104</sup>, կամ խժկոնքում Վեստ Սար-  
 գսի վերամբարձ հուսոորական գրաբարով շարագրված նշանա-  
 վոր արձանագրության մեջ. «Ժամանակի, որ էր որդիացեալ (=որ-  
 դիացեալ) և սիրեղի (=սիրելի) ճորտ Սարգիս» (խժկոնք նԶԲ  
 ՍԱՐ 209): Նկատելի է, որ լ-ի փոխարեն ղ տառաձևի գրու-  
 թյունը հանդիպում է առավելապես անխառն գրաբարով շա-

101 Հ. Անառյան, Քննություն կրկնագիր Ազաթանդեղոսի, «Հանդես ամսօրյա»  
 1913, № 1, էջ 1—19:

102 Անտարան քառ թարգմանութեան նախնեաց մերոց, Մոսկվա, 1899, էջ Թ:

103 Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, ԳԱ «Տեղե-  
 կագիր», 1964, № 1, էջ 63:

104 Ը. Ավդալբեկյան, նոր Բայազետի նորագրուտ սեպագիրք..., էջ 16:



բազմաթիվ և խոսակցական լեզվի իրողութուններին ազատ  
 բնադրերում. «Առել զսա ղանպար (=լամպար) լույսո»  
 (Կարմրաշեն նվճ Գ III 42): «:ժ: ից յարեղենաց (<յորելեան)  
 եւ :լ: և :Ձ: թվոց» (Տաթև ՇԼՁ Գ II 28): «Ի ՌՈՁԺ ղրմպիաղի  
 (<լիմպիաղ<ոլիմպիաղ) լինելութեան արարածոց, ՄԿ ղրմպի-  
 աղի (<լրպիաղի<ոլիմպիաղի) այ մարմնանալոյ և ի նՁԵ թա.  
 հայոց» (Հոռոմոս նՁԵ ՍԱՐ 166): «Այս իմ գիր է Ձաքարէ իշ-  
 խանաց իշխանի որդոյ վահրամա, որ ազգաւ Պախղաւ» (=Պահ-  
 լաւ) (Բյուրական նՂԳ ՄՎ): «Ոչ ունելով զոր ոգնական, այլ  
 (=այլ) միայն զբաւականն յամենայն» (Անի Ոեթ Գ I 47): «Եւ  
 ինձ ետուն Բ ար պատարագ զԱւետեաց Աձածնին և մին այլ»  
 (=այլ) (Հաղբատ Ոեթ ԿՂՀԲ 237): «Գնեցի ի յերեւան զՄեղի-  
 տոնոյ (=Մելիտոն, Մելիտե) էգոյն շարէքն» (Կեչառիս ՈԺԲ Հով  
 եԱՂ III 30): «:Ա: Խաշատրոյ: Ա: Մեղետոնին» (Գեղարդ ԺԳ Հով  
 եԱՂ III 48): «Տվար :Ա: կանթեղ արծաթի և այլ (=այլ) արդունք»  
 (Գեղարդ ԺԳ Հով. եԱՂ III 51): «Եւ մին այլ ամի խաւա-  
 բեցաւ արեգակն» (Կոչ Ոեթ ՄՎ), «Ածի զպաղատն (=զպալատն)  
 զԱրճն» (Հաղբատ ՉԻԲ ԿՂՀԲ 194)<sup>105</sup>:

Ղ հնչյունի լ ձայնորդից հեռանալու և ինքնուրույն ձայնեղ  
 բաղաձայն դառնալուց հետո նրա արտասանության և գրության  
 շփոթությունները վերանում են: Արդեն Թ—Ժ դարերի վիմական  
 բնադրերում հարևան լեզուներից կատարված նոր փոխառությու-  
 ներում այդ լեզուների լ-ն ամենուրեք տառադարձվում է լ ձայ-  
 նորդով, իսկ ՚-ն՝ ղ ձայնեղ բաղաձայնով: Օրինակ, միջնադարում  
 լայնորեն հայանի մոնղոլական ալթայցի հարկը արձանագրու-

105 Հին հայերենի գրական հուշարձաններում լ ձայնորդի հնչյութային տար-  
 բերակումը կամ երկու տեսակի լ-երի (ավելի առաջնալեզվային և ավելի ետնա-  
 լեզվային) գոյությունը, որոնցից Թ—Ժ դարերում առանձնացավ ղ ձայնեղ բա-  
 ղաձայնը, հանրահայտ իրողություն է և բացատրված գրարարի ձևափոխումում:

Հայտնի է Արուսեանի հայերենի այդ ընդհանրական, պատմական հնչյու-  
 նափոխությունը փորձում է բացատրել վրացերենի ազդեցությամբ: Ժ դարի վը-  
 բացերեն մի ձևագրի հայերեն հիշատակագրություններում վկայված դուստա-  
 րելեց (<լուստաուրեաց) բառի գոյությունը նկատի ունենալով, նա էլ ղ ձևերի շը-  
 փոթումը և միմյանց փոխարեն կիրառելը բացատրում է վրացական բառասանու-  
 թյան ազդեցությամբ, մինչդեռ մեր առկա ձև վկայություններից ակներև է, որ  
 ավելի փոփոխությունը ընդհանրական երևույթ է հայերենում, որն առաջացել է  
 հիշյալ վրացերեն ձևագրի ընդգրկնակությունից շատ առաջ: նաև այլ բարբա-  
 րային միջավայրերում (տե՛ս Բ. Արուսեան, X դարի վրացերեն մի ձևագրի հա-  
 յերեն հիշատակագրությունները. «Բաների Մատենագրանի», N 4, Երևան, 1958,  
 էջ 40):



Թյուններում վկայված է՝ աղլահակ, աղլհակ, ըստ այդմ, ույ-  
 դուր. աչձ-փարախ բառի չ հնչյունը տառադարձված է ղ հա-  
 մազորով, իսկ Լ-ն՝ առաջնալեզվային և ձայնորդով: Այսպես  
 նաև տամղա, տաղմաշի բառերում, որ բանիցս հիշատակված են  
 Անիի արտոնագրերում և ծագում են թաթար. tamγa-դրոշմ,  
 խարանադրոշմ, հեանարար նաև հարկ, տուրք արմատից, փոխա-  
 տու լեզվի չ-ին համադաստասխանում է ղ-ն, կամ այլղան, էլ-  
 խան, իլխան բառերում, որ ծագում են մանղ. ույդուր. eyixar  
 բարդությունից-կրկի, ցեղի իշխան իմաստով և վկայված են Ա-  
 նիի մի բանի բնագրերում, ժամանակը մատնանշող բանաձևում՝  
 Թվին :ՉԻԵ: էլղանին, էլղանի Թվին ՉԼԸ: Թվին :ՉԻԹ: էլղանին,  
 :ՉԺԸ: էլղանին..., էլղանին (Դ I 22, 23, 24), այստեղ ևս փոխա-  
 տու լեզվի x-ն տառադարձվում է ղ ձայնեղացումով, իսկ Լ-ն  
 նույնական Լ-ով: Թաղար ծագում է շաղաթ. taγar - պարկ, ա-  
 ման արմատից, ըստ այդմ՝ չ=ղ: Եաղլեխ-ծագում է թաթար.  
 yarliչ արմատից, ըստ այդմ՝ չ=խ, ղ>խ խլացումով: Մուհասիլ-  
 muhassil, արար. հարկահան պաշտոնյա, այսինքն՝ Լ=լ:  
 Նալար - արար. lanat>nalat—անեծք բառից (α:β:β: հա-  
 լար առնու-Վաղագներովանք ՉԿԴ Դ II 101), Լ=լ: Նալպնդնոց-ա-  
 րար. nalband, հայ. նոց ածանցով (սեռու երկու կուղպակ  
 չիմ կուղպականոյն որ նալպնդնոցին»- Բազմայր ԺԳ ԲԱՍ 171):  
 Սիգել - լատ. sigelium - հրաման, կնիք, ըստ այդմ՝ Լ=լ  
 (...չԾորի սիգելով մեզ էին տուեալ (Հաղբատ ՈԿ ԿՂՀԲ 231): Աս-  
 լուր - արար. saluk-աղբատ, ունեզուրկ մարդ. «կամ Բազրատու-  
 նի, կամ աղատ կամ սալուր նդովեալ եղիցի» - ՆԸ (959 թ. Վան-  
 ստան)<sup>106</sup>, Փեղամբար - պարս. - peyγambar մարգարէ (α... եւ  
 իւր փեղամպարէն ի Մահմեդէ ապիզար լինի» Ամաղու ՉԻԷ Դ III  
 216, αյայ եւ ի փեղամբարաց նալաթ է»- Հառիճ ՉԾԳ ՄՎ): Բա-  
 լախահակ-վրաց. balaxi - խոտ և հայ. հակ բառերից, ըստ  
 այդմ առկա է՝ Լ=լ (α:Ի: ոչխարն :Ա: բալախահակ»- Գառնի ՉԻ<sup>107</sup>):  
 Կրուլ վրաց. kruli անիժյալ. Լ=լ (αև վրացին կրուլ եւ անիժած  
 լիցի» (Անի ՉԿԹ ԲԱՍ 87, Դ I 27):

Մեր թվարկած և բաղմամբիվ այլ փոխառյալ բառերի գրու-  
 թյունից ակնբեր է դառնում, որ սկսած Թ—Փ դարերից, Լ, ղ հրնչ-  
 յունների արտասանության Ե դարի վիճակը զգալապես փոխվում

<sup>106</sup> Աշխ. Փալեմբար, «Վանստանի արձանագրությունները» (անտիպ ժողո-  
 վածու):

<sup>107</sup> Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի III, Երևան, 1962, էջ 45, Բ.  
 Առաքելյան, Քաղաքները...Բ, էջ 276:



է: Նրանք բոլոր հատկանիշներով այնքան են հեռանում իրարից, որ այլևս չեն գործածվում միմյանց փոխարեն: Ղ ձայնեղ բաղաձայնը կանաչիզվային դառնալով ավելի մոտենում է նույն շարքի խուլ շփական խ-ին և հաճախ շփոթվում նրա հետ: Հենց մեր մեջ բերած ցանկից երևում է, որ մի քանի փոխառյալ բառերում փոխառու լեզվի  $\gamma$  հնչյունի դիմաց արձանագրություններում փոքրագրված է նույնական ձայնեղ ղ-ի հետ երբեմն նաև խ խուլը՝ օրինակ, *yarlıγ = եառլելա, դարիր = խարիր, Արլլարիր = Արլլա-րիպ, Արուդամր = Ապուխամր* (Մարմաշեն ՆԼԷ ՕրԾԻՏ 442):

Մ, և - Հին հայերենի մ, և ձայնորդները ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական բնագրերում, որքան այդ հնարավոր է պարզել ավանդված վկայություններից, նկատելի փոփոխություններ չեն կրել և հիմնականում պահպանել են և դարի գրական հուշարձաններում իրենց ունեցած որակական հատկանիշները: Այդ ձայնորդների որակի մեջ նկատվող միակ փոփոխությունը նրանց փոխազդեցական հատկության առաջացումն է, որով ներգործում են նախորդ բաղաձայնների վրա և փոխում վերջիններիս որակը կամ ձայնեղությունը: Հնչյունափոխական այս երևույթի մասին ավելի մանրամասն խոսվել է տվյալ դիրքում բաղաձայնների արտասանության իրողությունները բննելիս: Մյուս կողմից, վիմական արձանագրություններում պահպանված բաղմաթիվ վրկայությունները, որոնցում գրաբարյան մի շարք բառեր ավանդվել են ձայնորդ բաղաձայնների, հատկապես մ, և հնչյունների անկումով (նջեցելոց, կանկեցի, կազնեցի, առու (<առնու), իմէ (<իմմէ), բարակ (<բամբակ) և այլն) քննվելու են հնչյունների անկման իրողությունները նկարագրելիս: Այստեղ հարկ է նշել և > լ փոփոխությունը, որ դիտվում է նապաստակ բառից առաջացած անձնանվան մեջ: Այս անվան հնագույն հիշատակությունը Անիի Մայր տաճարի պատին 1060 թ. փորագրված՝ կատական Բազրատի արտոնագրում է, բաղաբի բյուղանդական մի քանի պաշտոնյաների թվարկման մեջ. «Եւ Գրեզոր Լապաստակա որդին սպաթարկանկիտատն» (Գ I 37): Նույն գրությունը անձնանունը ավանդված է նաև Հոռոմոսի վանքի ԺԳ դարի մի կալվածագրական բնագրում, մի քանի այլ անունների շարքում. «Ի յԱրուճ փորը այգիք են վանացս՝ Քաւշուտին, Լապաստակայն (= նապաստակայն), Հանկանն, Առեւկանն...» (ՍԱՐ 155): Դեռ կատական Բազրատի արձանագրության առաջին դիտական հրատարա-



կիչ Վ. Բենեշեկիչը նկատել է, որ այդ բնագրի Լապաստակ անունը առաջանում է հայերեն նապաստակ բառի բարբառային անվից, որ տարբեր փոփոխություններով, բայց բառակզրի ն>լ անցումով պահպանվել է ժամանակակից բարբառների մեծ մասում՝ լափուտագ, լապրստրակ, լապուտակ, լափստրակ, Լրպրստրակ, Ըլրբաստրակ և այլ ձևերով<sup>108</sup>:

Բ, և ձայնորդները արձանագրություններում պահպանել են իրենց դրաբարյան արտասանությունը և հնչույթային որոշակի տարբերությունները: Սակայն վիմական բնագրերում ավանդված են այնպիսի բառեր, որոնցում բ, և ձայնորդների արտասանությունը նույնացել կամ մոտեցել է այն աստիճան, որ նրանք որոշ դիրքերում կիրառվում են միմյանց փոխարեն: Այս փոփոխությունը դիտվում է նաև միջին հայերենի գրական երկերում և ձեռագրերի հիշատակարաններում:

Այստեղ նշում ենք  $\alpha = \epsilon$  երևույթը հաստատող մի բանի վրեկայություններ տարբեր ժամանակների և հուշարձանների վիմագրերից: Հին հայերենի  $\alpha$ -ի փոխարեն փորագրված է  $\epsilon$ . արևնմ> արևնն, «Պարտին սպասաւորք սորա ի տարւոյն: Ե: ար ժամ արևնն» (Անի ԺԲ Դ I 12), «Ի փարթամաց և աղբատաց առհասարակ միապես արևնլով» (նա ՈԿԵ Դ I 14), «զպատարագն Գերգայ արևնն» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 168): «Ամուսնաւ իմով Բուսուղանաւ», այլու: Բուսուղան (Հաղբատ ԶԲ ԿՂՀԲ 163): «Իմ հարն արևնն... և իմ քվերն արևնն» (Հաղբատ ՈԼԸ ԿՂՀԲ 175): «Մբ Հրիփսիմէ (= Հոփսիմէ (Ն. Գետիկ ՈԾԷ ՄՎ): «Յայն գինէն տան ի լերնն» (Սանահին ԶԻԴ ԿՂՍ 162): «Ա: ժամ արևնն վաշքմբերին» (Հաղարծին ԺԳ ՄՎ), «Յիշման արժանի արևնն» (Ն. Գետիկ ԶԵ ՄՎ), «Ով իսափանէ դրեալս և կամ շարնէ զիմ ժամն դատի» (Բարձրաբաշ ՈՂԶ)<sup>109</sup>: «Առաքելի հրչակաւոր վարդապետի» (Գեղձուտ ԺԳ ՄՎ): Գրաբարյան  $\epsilon$ -ի փոխարեն փառագրված է  $\alpha$ . «Կամ եղև իմ Բաղբատ մագիստոսիս» (<մագիստրոս) (Անի 1060 Դ I 37), «Ես՝ տր Սարգիս որդի Մագիստոսին» (Անի ԺԳ Դ I 19), «Ես՝ Գրիգոր մագիստոս որդի Հասանա» (Կեչառիս ՆԾԲ Հով ՔԱԲ 13, ԽԱՂ III Ի), «Գրիգոր մագիստոսին, կիտանտին և դուկին» (նա 15): «Ես՝ Տարսայիճ որդի Լիպառտի» (<Լի-

<sup>108</sup> В. Н. Бенешевич, Три надписи..., стр. 26, 2. Անտոյան, Արմ. բառարան, Ե, էջ 44—45:

<sup>109</sup> Գ. Աբրգոյան, «Բարձրաբաշ» վանքը և նրա վիմագրությունը, «էջմիածին», 1951, № 11—12, էջ 50:



պարիս) (Հալիձոր ժԳ Գ II 52): «Զիմ ոսկի առպնեանի (<ապարանջան) գոնծեն տվար» (Հերհեր ԶԿէ Գ II 56): «Այս իմ գիր է ետունա» (<տարեն) (Գյուլումբուլազի վանք ժԳ Գ III 171): «Տվի: Յ: սպիտակ ի յԱսիայ գնեցի... և զերկու ակն ի ջաղացն յԱսիա» (Ամադու ժԳ Գ III 123, 246): «Ես՝ Լուիկ առփանցի ետու յԹ: դահեկան» (Գեղարդ ժԳ Հով ԽԵՂ III 57): «Աարտակէս (<Արխատակէս) և այլ եղբարքս էտուն» (Մշկավանք ժԳ ՄՎ), «:Զ: պատարագ ի աւանի Ռրատակեսի» (Կեչառիս ՈՂէ ՍԲ): «Ես՝ Գրիգոր, որդի Վառամա (<Վահրամ) ծառա Սմբատա Բաղրատունո» (Աբուճ ՅԺԶ ՄՎ):

Մեր թվարկած վկայութիւնները հնարավորութիւն չեն ընծնում պարզել, թե որ դիրքերում է տեղի ունենում  $r = a$  մտեցումը, սակայն ակներև է, որ այդ ձայնորդների կիրառութիւնը իբար փոխարեն տվյալ դեպքում չի կարելի պատահական վրիպում համարել, այլ պետք է դիտել իբրև այդպիսի հնչման արգասիք: Գրաբարում նույնպես, որոշակի դիրքերում տեղի է ունենում  $r = a$  անցումը. այսպես, և ընդային ձայնորդին նախորդելիս  $a - ն$  պահպանում էր իր ավելի թրթռուն որակը, մինչդեռ նրանից հետանալով, վերածվում է  $r - ի$ ՝ ամառն, բայց՝ ամրան, ամառայնի, դուռն, դանակ, դանապան, բայց՝ դրան, դրանդի, դրբանիկ, մատուռն, բայց՝ մատրան, մատրունք, մատրանոց և այլն:

Սակայն վիճաբանութիւնից բերած մեր օրինակներում հին հայերենի այս օրինաչափութիւնը չի գործում, բանի որ այստեղ  $a > r$ , կամ  $r > a$  փոփոխութիւնն առաջանում է նաև անկախ և ձայնորդի հարեանութիւնից՝ աւնով, աւնեն, Բուսուղան և այլն<sup>110</sup>: Այստեղից, պետք է կարծել, որ  $a > r$ ,  $r > a$  փոփոխութիւնները կարող էին առաջանալ ոչ թե գրական հայերենի, այլ կենդանի բարբառների արտասանութիւնն ազդեցութեամբ, բոլոր դեպքերում առանց հնչութային տարրերակման:

$r > j$  հնչյունափոխութիւնը դիտվում է ժԳ դ. մի խաշարձանի հիշատակագրութեան մեջ. «Եւ վանայկանիս գատիկ շաբաթ արին պատարագն ինձ էյես» (<երես) (Վարդենիկ ՄՎ—ՍՍ): Նույն փոփոխութիւնը այլ պարագաներում տեղի է ունենում նաև արդի մի բանի բարբառներում և կիլիկյան գրական հայերենում

<sup>110</sup> Սրանց մեծ մասը ուղղագրական նշանակութիւնից այն կողմ չի անցնում (ծան. խմբ.):



(հմմտ. արժեմ > այժեմ, արժենամ > այժենամ)<sup>111</sup>, երագ > այագ. Արամ > Այամ<sup>112</sup>, արձար > այձար, բարձր > պայսր, կարն > գայծ. մրջին > մէյշում, արչ > այչ, ցորեան > ցորէն > ցոյնի)<sup>113</sup>:

Ի-Պասական գրաբարում այս ձայնորդ հնչյունը լայնորեն կիրառվում էր հատկապես ա, ե, ի ձայնավորների հետ երկրարբաններ կազմելիս, իբրև այդ երկրարբանների ոչ վանկարար բաղադրիչ՝ աւ, գեղ, աղբիւր և այլն: Հետագա դարերում պատմական հնչյունափոխության հետևանքով և ձայնորդը զրկվում է ձայնորդային արտասանությունից և իր որակական հատկանիշներով մոտենում, ապա և նույնանում շրջնատամնային վ ձայնեղ բաղաձայնի հետ, հատկապես բառավերջում կամ միջձայնավորային դիրքում: Այս փոփոխությունն անշուշտ, երկարատև զարգացման արդյունք է և չէր կարող ձևավորվել ու գործուն օրինաչափություն դառնալ միանգամից:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը և՛ վ հնչյունափոխության հնագույն արտահայտությունը համարում է Կոշի նլ (981) թ. արձանագրության մեջ փորագրված յԱվանէ (<յԱւանէ) հոլովածը՝ «երևտ Աշոտ յԱվանէ զջաղացսն եւ զեգին» (ՄՎ): Կարելի է մի բանի այլ փաստերով հաստատել, որ դրանից ավելի վաղ, Թ—Ժ դարերում հին հայերենի և ձայնորդը արդեն նույն հնչումն ունենալով բաղաձայնի հետ, համենայն դեպս որոշակի դիրքերում, և այդ պատճառով էլ նրանք հաճախ գործածվում էին իրար փոխարեն:

Հնագույն վկայությունը գտնում ենք Սիսիանի Սյունի վանք հուշարձանի մի արձանագրության մեջ, որը թեև անթվական, բայց ստուգապես է դարի է. «Սուրբ Գրիգոր ողորմեա Արտավանայ (<Արտաւան) գործիվ (<գործիւ) Երայի» (Գ II 87): Նույնը, ավելի ուշ ն. Թալինի Քրիստափոր վանքի բնագրերում. «Ի քիվականիս նթ կամ եղեվ իմ Միսաէլի էտու զիմ եգին» (ՄՎ), «Եւ վասն Աշոտոյ հայոց քազավորի» (նս), «Ես՝ հայր Գավիր զիմ ձեռաց արկել այգին ի սուրբ Քրիստափոր էտու» (նս ԺԳ. ՄՎ): «Ի քազավորութեան Սինաբէրեմա... կամ եղեւ հայո ջրի գառուս հանել» (նեԱ. ԿՂԶԳ 88). Բջնիում՝ «:ն.Ձ. շնորհիվն այ այս հրամանք է» (ՍԲ), «Ի նՂԹ քվականութենն հաց ես՝ Կորիկէ քազավորս... արեվչատութեն իմոյ» (վարդարլուր ՍՍ), «Ճըշ-

111 J. Karst, Historische Grammatik..., S. 96.

112 Կ. Գավրյան, Հոնային Ղարարադի բարբառային բարեկարգ, էջ 67:

113 Հ. Անաոյան, Համշենի բարբառը..., էջ 64—65:



մարիտ հավատացելոց» (Երեբույք ժ դ. ՄՎ), «Ի Շլե Թվականիս հայոց քաղալորութեն Կուրիկէի» (Կուրթան ՄՎ) և այլն:

Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում ւ, վ հնչյունների նույնացումն արտացոլող վկայություններն ավելի տիրապետող են դառնում և տարածվում համարյա բոլոր բառերի վրա: Սակայն որոշ դիրքերում, հատկապես աւ, եւ, իւ երկբարբառներում ավանդական, գրարարյան գրությունը շարունակվում է նաև հետագայում: Մի քանի օրինակներ այս շրջանի վիմագրությունից. «կամավն ալ...» (Աղղան Չլե ՄՎ), «եւ էր դուռն եւ արվելի (<արեւելի) երկրիս» (Առաքելոց ՉժՁ ՄՎ), «ծառա մեծին Իվանէի... Ուձնա ձնվորութի» (<ձննաւորութիւն) «... եւ սարանոցն արեվշառութի համար զձեռնվորահակ (<ձեռնաւորահակ) ... ի վեր կալա» (Օձուն ժԳ ՄՎ), «շնորհիվն ալ... քաղալորալգարն որդի մեծին Մէլիբսէթեկին» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 100):

Ի=վ նույնացումը հայերեն հնագույն ձեռագիր մատյաններում հազվագեպ է, այն ավանդված է ավելի ուշ շրջանից: Լադարյան ձեմարանի 887 թ. ավետարանում աւ երկբարբառի փոխարեն մի շարք բառերում բաղաձայնից առաջ կամ միջձայնավորային դիրքում հանդիպում է ով հնչյունակապակցությունը, որը նույնպես այդ անցման արդյունք պետք է համարել: Այդ բառերն են՝ ամավք (<ամալք), բովական (<բաւական), համբով (<համբաւ), նոբով (<նոբաւ), արուսուով (<արուսուաւ)<sup>114</sup>:

Հետագա դարերի ձեռագրերի հիշատակարաններում ւ, վ գրերը հաճախ որոշ դիրքերում փոխարինում են իրար, որ ապացույց է, թե այդ հնչյունները միևնույն կամ մոտիկ արտասանություն ունեին: Այսպես, ձեռագրերում ունենք՝ աւավածային, բնբերցվածուց, մահվամբ, լվաւ (<լուաւ) (Ութ Գ222 554, 555), մի որ գրկրացի (ՆԿԳ Գ222 325), ի ՇՂԸ Թվականիս (Գ222 359) և այլն:

Յ—Հին հայերենում այս ձայնորդը ինչ-որ միջին դիրք էր գրավում ի ձայնալորի և y յոտ կոչվող կիսաձայնի միջև, սակայն իր արտաբերության տեղով և եղանակով y-ն ավելի մոտ է եղել ի ձայնավորին և, ինչպես Մ. Արեղյանն է կարծում, հանդիսացել է ի ձայնավորի անվանկային տարատեսակը: Գրարարում վանկարար ի ձայնավորի և անվանկային y հնչյունի տար-

114 «Աւետարան բոս թարգմանութեան նախնեաց մերոց» էջ Թ:



բերութիւնն այնքան էլ զգալի չի եղել. երկուսն էլ առաջնալիզ-  
վային, նման սրակի հնչյուններ էին և տարբերվում էին միայն  
արտասանութեան ուժով, ըստ սրում յ-ն ի ձայնավորի ավելի  
թույլ տեսակն էր: Այս իրողութեան լավագույն օրինակ է գրաբա-  
րի ի նախդիրը, որ բաղաձայնից առաջ մնում է վանկային՝ ի  
գործ, ի մարտ, մինչդեռ ձայնավորից առաջ վերածվում է ան-  
վանկային յ-ի՝ յանապատ<sup>115</sup>: Յ անվանկային ձայնորդի այս  
հատկութեամբ էին պայմանավորված նրա լայն կիրառութիւն-  
ները հին հայերենում: Հայտնի է, որ գրաբարում ա, օ ձայնա-  
վորներով վերջացող բառեր չկային, բացի մի բանի բացառու-  
թիւններից (մի բանի դերանուններ՝ սա, դա, նա, սրանց թեր-  
ձևերը՝ սորա, նորա, բայերի եզակի հրամայականի ձևերը՝ սի-  
րեա՛, մատո՛, փոխառյալ հատուկ անունների ուղղականը՝ Յու-  
դա, Սեղա, Գալիլեա), մնացած դեպքերում այդ կարգի բառերը  
իրրև կանոն ներփակվում էին յ-հնչյունով՝ ծառայ, Բահանայ,  
գետոյ, մարդոյ, Արշակայ և այլն: Սակայն յ հնչյունի արտասա-  
նութեան և գրութեան այս վիճակը երկար չի շարունակվել: Հնա-  
գույն ձևագիր մատյաններում և հատկապէս վիճական արձանա-  
գրութիւններում հանդիպում են այնպիսի ձևեր, որոնցում տե-  
ղի են ունեցել այդ գրութեան դանաղան խախտումներ: Այսպէս,  
վկայված են ա, օ ձայնավորներով վերջացող բառեր առանց յ  
գրի, որ ապացույց է թէ յ-ն բառավերջում այլևս չէր հնչվում, ու-  
րեմն և կարող էր չգրվել: Պրոֆ. Ա. Արբաճամյանը հատուկ ու-  
սումնասիրութեան նյութ է դարձրել ավելի դիրքում յ-ի անկման  
ժամանակի հարցը և հանդել այն համոզման, թէ այդ երևոյթի  
առանձին արտահայտութիւնները նկատելի են դեռևս հայերեն  
հնագույն վիճական բնագրերում: Իրրև առաջին վկայութիւն  
մասնացույց է արվում Գլինի կաթողիկէ եկեղեցու մոտ գտնվող  
տապանաքարի արձանագրութիւնը, որը ըստ հնագետների փո-  
րագրվել է Ե դարում, «Այս դիրս Գէորգա (<Գեորգայ) քահանա-  
յի է» (ԿՂԳ 224): Առանց վերջնահանգ յ-ի է փորագրված բա-  
ռերի ա, օ ձայնավորներով վերջացող սեռական հոլովաձևերը  
Գալիթ Գնթունու տապանագրում, որը հնագետ Կ. Ղաֆաղար-  
յանի կարծիքով Զ դարի գործ է. «Այս է հանդիսա Գալիթ Գրթու-  
նեաց ան որդո վասակա» (<որդոյ վասակայ) (ԿՂԳ 246): Յ հնչ-  
յունի անտեսման դեպքեր են վկայված նաև է դարի շինարարա-

115 ՏՃՍ Կ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, Երևան, 1965, էջ 88-89:



կան արձանագրություններում, որոնց՝ լուսանկարով ստուգվող վերձանությունները հայտնի են գիտությունը: Բազարանի տաճարի 631 թ. արձանագրության մեջ պարզ կարգացվում է. «տերութեան Վահայնա (<Վահանայ) ... երեսուն և շորթորդ ամի Խոսրովայ արևախ» (<արևախի) (ՕրճԻՒՒՒՒ 390): Մաստարայի եկեղեցու է դարի շինարարական բնագրում՝ «... շինեցաւ ամախն (<ամախն) տունս... (ՄՎ)<sup>116</sup>: նախճաւանում գտնվող Արտավազդ Կամսարականի տապանագրում, որ է դարի կեսերին է փորագրվել, կարգացվում է. «Որդի Հրահատա պատրկի» (ՕրճԻՒՒՒՒ 441): Գլխի կաթողիկե տաճարի վերջին նորոգման ժամանակ 607—617 թթ. օգտագործվել են ծածկի կղմինդրներ զանազան արձանագրություններով, որոնք կատարվել են կղմինդրների վրա փափուկ վիճակում, թրծելուց առաջ, տառաձևերը ճնշելով: Այդ մակագրություններից մեկում վկայված է՝ ծառա, փոխ. ծառայ: Ավելի մեծաթիվ են բառավերջում ա. ո ձայնավորներից հետո յ հնչյունի անտեսման փաստերը Թ—Ժ դարերի արձանագրություններում և ձեռագիր մատյաններում: Միայն Արուճի տաճարի ՅԺԶ (867) թ. նշանավոր արձանագրության մեջ հստակ կարգացվում են՝ հաոց, Զաբախի. զԿոշա (<Կոշ), Վառամա (<Վահրամայ), ծառա, Սմբատա Բագրատունո, Արնո (<Արուն), Կոշա, ի Սմբատա, բայց նաև՝ Աշոտոյ, Սմբատայ, Բագրատունոյ (Հով ՔԱՐ 13): Նույն Արուճի ՆԼԶ (987) թ. կարճառոտ արտոնագրում փորագրված է. Աշոտո. իսկ Կոշի եկեղեցու ՆԼ (981) թ. նվիրագրում՝ Խաչկա, Սմբատա, բայց նաև՝ Գրիգուրոյ (ՄՎ):

Այս հնչյունափոխական իրողությունը նկատվում է նաև հայերեն հնագույն ձեռագիր պատասխիկներում. օրինակ, զեսոյն Երասխա, Սմբատա. համարեցա (բառ բովանդակության Զ դար, ԳԶԶԶ 7, 8), Բագրևանդա (Զ դար, նա 8), Արամազդա (Զ—Ժ դ. նա 9), Հոփիսիմեա, Մարիկա (<Մարիկ), Համազասպա (է դար նա 22, 36, 47): Հիշյալ ձեռագիր պատասխիկների թվագրումը կարող է կասկածելի համարվել և բառ անոթ վկայությունների ժամանակը անորոշ, սակայն կազարյան ձեռարանի ստուգատես ՅԼԶ (887) թ. ավետարանում ավանդված ձևերը հաստատում են, որ թվարկված բառերում վերջնահանգ յ-ի անկումը այդ ժամանակներում չի կարելի գրչագրական պատահական բացթողում կամ տեղի խնայում համարել, այլ պետք է դիտել իրրև այդ հնչյունի արտասա-

116 Գ. Հովսեփյան. Քարտեզ հայ հնագրության, էջ 8, տախտակ Գ:



նության մեջ նոր օրինաչափության արտահայտություն: Ահա ավետարանում պահպանված այդ կարգի վկայությունների համառոտ ցանկը. գոյականների ուղիղ և թեք հոլովածներ՝ Վարդա (=Վարդայ), յուրոտ (=յուրոտյ), քզննոտ, միոտ, արտաֆոտ, սատանա, ձորձոտ (<ձորձո), պիտոտ, եղ. թվի տարբեր բայածներ՝ ողորմեցա (<ողորմեցայ), հանեցա, բանա (=բանամ, բանաս, բանայ), երկեա (<երկեայ), Բաղցեա, ատեա<sup>117</sup>:

Սակայն չ ձայնորդի արտասանության և գրության գրաբարյան վիճակի խաթարումները միայն հիշյալ դիրքերում չ-ի անկումով չեն սահմանափակվում: Վիճական բնագրերում և հին ձեռագրերում ավանդվել են նաև այնպիսի ձևեր, որոնցում չ-ն կիրառված է ավելագրաբար, այսինքն չ է գրված այնտեղ, որտեղ գրաբարը շուներ այդ հնչյունը ոչ գրության և ոչ էլ, պետք է մըտածել, այդ բաների արտասանության մեջ: Օրինակ, հայերեն թվագիր ունեցող առաջին շինարարական արձանագրության մեջ, որ փորագրված է Թալինի մեծ տաճարի մույթի վրա ՄՂԲ (783) թ. հստակ կարդացվում է. Ուխտայտուր, վանայկան, գրաբարում կանոնավոր՝ Ուխտատուր (=ուխտով տրված, ուխտական զավակ) և վանական<sup>118</sup>: Անիում Փրկիչ հուշարձանի նՁԵ (1036) թ. նվիրագրում փորագրված է՝ շահայնշահի (=շահանշահ, շահինշահ, շահնշահ) (Դ I 48). նույն գրության մեջ է ավանդված շահինշահ, շահնշահ բառը նաև եծկոնքի հնագույն եկեղեցու արձանագրության մեջ. «Ի թագաւորութեանն Գագկա շահայնշահի» (նՄԴ)<sup>119</sup>, Յաղաց քար վանքի հին բնագրերից մեկում վկայված է. «Յիշեցէք առայջի (<առաջի) ղենւոյն Քսի» (նՂ Դ III 151), իսկ Երբրույքի բազիլիկայի Ժ դարի արտոնագրում՝ նորոյցեցի (<նորոցեցի) (ՄՎ): Թալինի Քրիստափոր տաճարի պատին. «Մը ուխտիս Քրիստայիորի» (Ժ դ. ՄՎ) և այլն: Այս օրինակների թվարկումը կարելի է շարունակել, Ժ—ԺԴ դարերում դրանք ավելի են հաճա-

117 Աետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց, էջ Բ:

118 Գ. Զովսեփյան. Քարտեզ հայ հնագրության, էջ 10, Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 88: Արձանագրության այդ մասում քարը քայքայված է և չ գիրք պարզ չի երևում, սակայն տողավերջում մի տառատեղ ազատ է մնացել: Կ. Ղաֆաղարյանը այդ մասում վերականգնել է չ գիրք և խաթարված տառաշարքը վերծանել՝ վանա<յ>կան: Գատկով այդ բառի հետագա շրջանի վկայություններից (Վարդենիկի ԺԴ դարի մի բնագրում. «և վանայկանիս պատիկ շարաթ արին պատարագն ինձ էլետ» (ՍՍ)), այս վերականգնումը թվում է հավանական:

119 Կեպե, եծկոնք, «Ազգագրական հանդես», 1896, դիրք Ա, էջ 45:



խանում և վիմական բնագրերում տարրեր դիրքերում յ-ի ավելադրումը յուրատեսակ օրինաչափություն է դառնում: Այս հնչյունափոխությունը ավելի հանգամանակի լուսարանվում է նոր հնչյունների հավելման իրողությունները բննելիս, այստեղ բավարարվում ենք նույն երևույթը հաստատող մի քանի փաստերի մատնանշումով հին ձևագրերում: Է դարին վերագրվող ձևագիր պատասիկներում վկայված են՝ քանձրայզունիցն, հեշալար, հարգայրան, դիրալուր, (<դիրալուր), բուրայպատիկ (<բիրապատիկ), վարգայպեաֆն, զանայզան, մեծայտունդ, հայրց (<հարց), նուաստայզունից, Չորոյփորեցոյ (ԳՀՀԶ 37, 38, 39, 40, 43, 44, 50): Լազարյան ձևաբանի ավետարանում հանդիպում են՝ յայզեցան (<յազեցան), նմայ (<նմա), սմայ, բայց հրամայական եղանակի եզ. ձևում՝ կոշեա՛յ (=կոշեա՛), գործեայ (=գործեա՛), պատճառական բայերի նույն եղանակի ձևերում՝ դարձո՛յ (=դարձո՛), մատոյ, հատոյ և այլն<sup>120</sup>:

Մեր թվարկած բառերում յ-ի անտեսման կամ ավելադրության երևույթներն ապացուցում են, որ յ-ն որոշ դիրքերում, հատկապես բառավերջում ա, ո ձայնավորներից հետո փոխել էր իր գրարարյան հնչումը և այլևս չէր արտասանվում, թեև գրության մեջ շարունակվում էր նրա ավանդական գործածությունը: Հասկանալի է, որ յ-ն չի հնչվել նաև այն բառերում, որտեղ այն գրվել է ավելադրաբար, հին հայերենի կանոնավոր, առանց յ-ի կազմություններում յ ներմուծելով, քանի որ այս դեպքում գրությունը չի համապատասխանել արտասանությանը, այլ կատարվել է հին հնչման կամ ուղղագրության հետևությունով: Մի խոսքով, անտարակույս է, որ մեր հիշած յայզեցան, նմայ, սմայ, զանայզան, մեծայտուն բառերը վկայված ժամանակաշրջանում արտասանվել են ոչ թե տվյալ գրությամբ, այլ՝ յազեցան, նմա, սմա, զանազան, մեծատուն, այսինքն առանց նորամուտ յ հնչյունի: Մի անգամ, որ յ-ն որևէ դիրքում, ասենք բառավերջում, ա, ո ձայնավորներից հետո համբանում և չի հնչվում, այնուհետև առաջանում են նրա ավանդական, գրարարյան կիրառությունների այլևայլ շեղումներ, ըստ այդմ, յ-ի գրությունը անջատվում, անկախ է դառնում նրա արտասանությունից և այդ պատճառով որոշ դիրքերում կարող է գրվել առանց արտասանվելու, նույն ձևով էլ ուրիշ դիրքերում կարող է արտասանվել, առանց գրու-

120 «Անետարան ըստ թարգմանության նախնեաց մերոց», էջ Թ:



Յլամբ արտահայտվելու Այսպիսով, վերջնահանգ չ-ի անկման առանձին արտահայտությունները գրության մեջ դիտվում էին դեռևս հնագույն՝ Ե—է դարերի վիմական բնագրերում, իսկ արտասանության մեջ այդ հնչյունափոխական երևույթը կայուն և գերակշիռ օրինաչափություն է դառնում, ըստ Ա. Աբրահամյանի՝ Թ—ժ դարերում: Հետագա դարերում, միջին հայերենի գրական հուշարձաններում և հատկապես վիմական բնագրերում չ հնչյունի արտասանության և գրության այս գրությունը այնքան է հեռանում հին գրական հայերենի օրինաչափություններից, որ անհրաժեշտություն է առաջանում հատուկ ուղղագրական կանոններ սահմանել՝ գրության արվեստում այդ հնչյունի ավանդական գրարարյան գրությունը վերականգնելու համար: Նկատի ունենք Արիստակես Գրչի կանոնները, որոնք հիմնականում նվիրված են չ-ի գրության խառնաշփոթությունների կանխմանը և գրարարյան օրինաչափությունների հաստատմանը:

Մեր հետազոտության համար կարևոր է պարզել, թե ժ—ժԳ դարերի վիմական արձանագրություններում չ-ի անկումը կամ համբանալը որ դիրքերում է տեղի ունենում և ինչ գործոնների ազդեցությամբ: Եղած բազմաթիվ վկայությունները հնարավորություն են տալիս նկատել հետևյալ օրինաչափությունները.

Ա. 3-ն չի արտասանվում և բնկնում է բառերի անփոփոխ ձևերում, ա, ո ձայնավորներից հետո. Մառա (<ձառայ) (Տեղեր ՆժԳ Հով ՔԱՐ 12, Անի ԺԲ Գ I 9, նա ԺԲ Գ I 4, ԺԳ Գ I 8, նա ՆՂԹ Գ I 43, նա ՉԼԵ Գ I 36, Տաթև 1087 Գ II 287, Հալոյց Քառ ՇԼ Հով 2Թ 11, Մակարավանք ՈՂԳ ՄՎ): Վկա (<վկայ) (Քարկոփ 3ԾԹ Գ III 207, Տաթև ՇԼԶ Գ II 28): Քահանա (<հահանայ) (Անի ՆՂԳ Գ I 46, նա Ո Գ I 56, նա ՈԿԹ Գ I 17, Բազարան ՆՂԳ ՍԱՐ 202, Արծվանիկ ՆՂԳ Գ II 133): Ընձա (<բնձայ) (Սանահին ԺԱ ԿՂՍ 97, Անի ՉԼԷ Գ I 29, նա ՉԼԵ Գ I 36, Տեղեր ՈՂԳ ՄՎ): Ի վերա (<վերայ) (Անի ՇԳ Գ I 51, Տաթև ՇԼԶ Գ II 28): Տղա (<տղայ) (Ամաղու ՈՂ Գ III 218, Հերհեր ՇՂԸ Գ 49): Սատանա (<սատանայ) (Մարմաշեն ՆՂԸ ՕրՃՄԿ 442): Ակամա (<ակամայ) (Անի ՈԿԹ Գ I 17): Շոջազատրեան (Հովհաննավանք ՈԿԵ ԿՂԶ 84, Տաթև ՇԼԶ Գ 28): Քահանաուրեան (Հերհեր ՇԼԸ Գ III 49): Մարդկաին (Անի ԺԲ Գ I 26):

Բ. 3 հնչյունը չի արտասանվել և բնկել է բառավերջում, ա, ո հոլովման բառերի սևո. տր. և բացառական հոլովաձևերում: Այս հնչյունափոխության առաջին արտահայտությունները, ինչ-



պէս նշել ենք, նկատվում են հայերեն հնագույն վիճադրերում,  
 սկսած Ե—Ձ դարերից: Ժ—ԺԴ դարերում այդ հոլովածներում յ-ի  
 անկումը տիրապետող է դառնում, թեև գրութայն մեջ երբեմն  
 շարունակվում են յ-ով ձևերը՝ ավանդական, գրարարյան ուղղա-  
 գրութայն հնահոլութամբ: Բառերի և պնձնանունների թեր հոլո-  
 վածներում ա, ս ձայնավորներից հետո յ-ի անտեսման օրինակ-  
 ները այն աստիճան համատարած են, որ ավելի դյուրին է թվար-  
 կել գրարարյան կանոնավոր ձևերը, քան շեղումները: Մեր ու-  
 սումնասիրությունն ամբողջացնելու նպատակով մեջ ենք բերում  
 հիշյալ փոփոխություններն արտացոլող մի քանի վկայություն-  
 ներ տարբեր ժամանակների վիճական արձանագրություններից.  
 1. Հին հայերենի յ-ի անկումը բառերի թեև հոլովներում ա ձայ-  
 նավորից հետո. «Ես՝ Աբուղամը որդի Վահրամա» (Անի նՁ Դ I  
 12): «Եւ կամակցութիւն ամիրախս Երկարա» (Անի ՈԿԹ Դ I 17):  
 «Կամ եղև իմ Շուշանա, որ ետու զՄրուանա կուղղակն» (Անի  
 Ժ դ. Դ I 31): «Գագկա, Վասակա, Սնպատա, Աբասա, Աղամա»  
 (Անի նՄ Դ I 35): «Ի ֆազաւորութեան Սմբատա որդւո Գագկա...  
 Եղբայր Վահրամա եւ Վասակա» (Անի նՁԵ Դ I 44): «Սմբատա  
 որդւո Գագկա» (Անի նՁԵ Դ I 49): «Ի ֆազաւորութեան Սնպատա»  
 (Տաթև ԺԱ դ. Դ II 19): «Հրամանով Թագաւորին Սնպատա» (Վա-  
 դուզի նեՔ Դ II 100): «Վասակ որդի Սնպատա» (նտ): «Եւ ա-  
 մուսին Գրիգոր Թագաւորի որդո Աշոտկա» (Վահանավանք ՇԼԵ Դ  
 II 138): «Ես՝ Սուրի Սինեաց տիկին, կին Սնպատա» (Գնդեվանք  
 931 Դ III 13): «Ի ֆազաւորութեան Սնպատա որդո Վասակա»  
 (Կարմրաշեն նԼԹ Դ 41): «Այս իմ գիրէ Արտաւագա... :ն: աւր  
 Վարդկա ժամ առնեն» (Աբասա ՇԻԲ Դ III 122): «Յայս :ն: Ե-  
 կեղեցումս ժամ Վարդկա շառնէ» (Յաղաց քար նՁԸ Դ III 146):  
 «Եշխանաց իշխանի Հասանա» (Ամագու ՇնԳ Դ III 226): «Կամ  
 եղև ինձ հայր Վարդկա... վասն Վարդա» (Յաղաց քար Շ Դ III  
 152): «Փրկութեան Սիրատա (<Սմբատայ) եւ Գուրգենա» (Հաղ-  
 րատ նե ԿՂՀԲ 142): «Ես Մուկն որդի Հոնովարա» (նտ նԿԵ ԿՂՀԲ  
 145): «Ի հայրութի Յովսէփա յուխտիս Հաղբատա» (նտ նՄԷ  
 ԿՂՀԲ 179): «Ի ֆազաւորութեանս Գուրգենա և Գագկա եւ յառաջ-  
 նորդութի... հար Յովսէփա» (նտ նՄԷ ԿՂՀԲ 199): «Այս է հան-  
 գիտա Գուրգենա Բագրատունո շահնշահի» (Սանահին նԼԸ ԿՂՍ  
 171): «Ես՝ Յովանէս շահանշահ որդի Գագկա» (Հոռոմոս նՁԷ  
 ՍԱԲ 146, նտ նՁԵ ՍԱԲ 166): «Ես՝ Գաւիթ Վարդա որդի... տն  
 Սահակա» (Մրեն նեԱ ՍԱԲ 197).. «Գուսար Վասակա (Տեկոր



նՄէ ՍԱՐ 207): «Ապլիասնա եւ Խաապա... յեղերն Երասխա» (Խժկոնք նՁԲ Հով ՔԱՐ 14): «Ի Բաղաւորութեան տն Գաղիկա» (Տումի նեթ ՄՎ): «Դուատր Արասա» (Երերույք նՁԵ ՄՎ): «Ենու-րովա կրանաւորի» (Հովհաննավանք ժԳ ԿՂՏ 112): «Ես՝ Գրի-գոր որդի Վառամա» (Արուճ նՂՁ ՄՎ): «Դատեր Տիգրանա» (Մար-մաշեն նԿԴ ՕրՃՄԻ 445): «Կամ եղև իմ Բագրատա... Գրիգոր Լապաստակա որդին... Սարգիս Արտաւագա որդին» (Անի 1060 Գ I 37): «Գէորգա աւագերիցո» (Անի Ոեթ Գ I 47): «Խաղբակա (Կեշառիս ՈԿԳ ՄՎ): «Ես՝ Մխիթար որդի Գեղիկա» (Վ. Ուլղյուր ՉեՍ. Գ III 37): «Ես՝ Շապու Գարդա պատրիկա որդի» (Սխիան ժ գ. Գ II 90): «Որդո Վախտանգա, Հասանա» (Գանձասար ՈՁԹ ՍԲ): «Ընդ Բելիարա» (Արատես ՉԺԹ Գ III 124):

Ա. (յ) Հանգող բառերի և անձնանունների թեք հոլովածները ժ—ժԴ դարերի արձանագրություններում վկայված են կամ զը-բարարյան զրությամբ՝ յ-ով ներփակված և կամ ըստ արտասանության, այսինքն առանց յ-ի:

Սակայն եթե հիշյալ բառերի անփոփոխ ձևերում վերջնահանգ յ-ն այլևս չէր հնչվում, ապա նույնը չի կարելի ասել այդ բառերի թեք հոլովածներում յ-ի մասին: Հայերենի արտասանության օրինաչափություններից դատելով, պետք է կարծել, որ այս դիրքում՝ ա, ո ձայնավորներին այլ ձայնավոր հաջորդելիս համբացած յ-ի արտասանությունը վերականգնվում է նաև ձայնավորների հանդիպումից կամ հորանջից խուսափելու պահանջով: Իրողության լավագույն օրինակ է վիճադրերում հաճախ հիշատակվող հայոց բառը: Հայ ցեղանունը հին հայերենի այ-ով վերջացող միավանկ այն բացառություններից է, որոնց վերջնահանգ յ-ն պահպանել է դասական հնչումը նոր հայերենում, զրբվում և արտասանվում է՝ հայ, բայ, խոյ, վայ, այ<sup>121</sup>: Հաղիվ թե հնարավոր լինի կարծել, թե միջին դարերում հայ, հայք, հայոց արտասանվել են առանց յ-ի՝ հա, հաք կամ հաոց: Սակայն վիճական բնագրերում հաոց զրությամբ բազմաթիվ վկայություններ են ավանդված, որոնցից հնագույնը Գառնիում Կատրանի-զեի խաչքարի հիշատակության մեջ է. «Թվականիս ՅԻԸ (879) ես՝ Կատրանիզե հաոց թագոհ»<sup>122</sup>, այնուհետև՝ Նորադուղի նե (991) թ. խաչքարի բնագրում. «Ի Թուականութեանն հաոց նե և

121 Ա. Այսրենյան, Քննական քերականություն, Բ, էջ 371:

122 Ե. Аракелян, Гарни I, стр. 84.



ի թագաւորութեանն Գագկա»<sup>123</sup>», կամ Անիում, Փրկիչ հուշար-  
 ձանի շինարարական արձանագրութեան մեջ. «Ես՝ Ասլլղարիս  
 հաոց մարգպան» (ՆԶԹ Դ I 33), Հերհերի արձանագրում. «Ի թվակա-  
 նիս հաոց» (ՆՂԸ Դ III 49), և վերջապես նույն Անիում, Չարարյան-  
 ների շրջանի մի արտոնագրում. «Աձասէր իշխանացս հաոց աղգա-  
 տոհմիս» (ՈԿԵ Դ I 14): Իսկ Աշտարակի Մարինե հուշարձանի  
 նվիրագրութեան մեջ նույն բառը նույն գրութեամբ հիշատակված  
 է իբրև նվիրատուի անձնանուն. «Ես՝ Հաոցս միարանեցս սր  
 սխտիս և ավի արդիւնս» (ՉԶԵ ՄՎ): Այստեղից, պետք է կար-  
 ծել, որ ա-ով վերջացող բառերի թեր հոլովներում առանց յ-ի  
 գրութեանը չի համապատասխանում այդ դիրքում նրա արտա-  
 սանութեանը և առաջ է եկել բառավերջում այդ հնչյունների ան-  
 կումից կամ համրանալուց, ըստ այդմ, այստեղ գործում է նույն  
 օրինաչափութեանը, ինչ նկատել ենք նույն ժամանակներում Ք  
 ձայնավորի գրութեան և հնչման դեպքում, այսինքն, յ-ն որոշ  
 դիրքերում (բառավերջում ա, ո ձայնավորներից հետո) կարող է  
 գրվել, բայց հնչվել և ընդհակառակը բառավերջում ա, ո ձայնա-  
 վորներին այլ ձայնավորներ հաջորդելու դիրքում նրանց մեջ կա-  
 րող է հնչվել յ, բայց չգրվել: Այս իրողութեանը կարելի է հաս-  
 տատել Ժ—ԺԳ դարերի վիճական բնագրերի բաղձաթիվ փաստե-  
 րով, նշում ենք դրանցից մի բանիւր. Սեւադաի < Սեւադայի (Վա-  
 հանավանք ԾԼԵ Դ II 138), Կատաիւն < Կատայիւն (նտ), Բահանաի  
 (Գնդեվանք 322 Դ III 14, Բագարան ՆԶԳ ՍԱԲ 203, Հերհեր ԾՂԸ  
 Դ III 49, Անի ՈՒԹ Դ I 47), աբխաիւն < աբխայիւն (Սրբերույր ՆԶԵ  
 ՄՎ, Ամաղու ԾեԳ Դ III 226, Սանահին ՈԼԳ ԿՂՍ 180): Սեդաի <  
 Սեդայի (Յաղաց բար ԾՂ և ԺԳ Դ III 152, Անի Ժ գ. Դ I 31):  
 Ամիրաիւ < ամիրայիւ (Անի ԺԳ Դ I 17), ամիրաուրիւն (Անիի յա-  
 միրաուրեան պարոն կիպին - ԶԿԹ Դ I 27): Ուդաիւն < Յուդայիւն  
 (Քարկոսի 35Բ Դ III 206—207, Հաղբատ ԶԻԲ ԿՂԶԲ 258, Արա-  
 տես ԶՍ Դ III 126, Վաղաղնի վանք ԶԶԵ Դ II 10, Վերնաշեն ԶԶ  
 Դ III 99, Լոր Զ—ՂԳ Դ II 109): Տդաիւն < տդայիւն (Ամաղու ԶՍԳ  
 Դ III 233): Մառաիւն < ձառայիւն (Անի ԺԳ Դ I 31): Ագվաիւն < Աս-  
 փայիւն (Ամաղու ՈԶ Դ III 211): Աննաիւն < Անաիւն < Աննայիւն (Հաղ-  
 բատ ԺԳ ԿՂԶԲ 220, Սելիս ԶԶԱ Դ III 177): Տարաիւնիւն (Ամաղու  
 ԶՍԷ Դ III 243): Դամաիւն < Դամայիւն (Ամաղու ԺԳ Դ III 219): Զա-  
 ֆարիաի (Անի ԺԳ Դ I 14, Սպիտակավեր ԺԳ Դ III 97): Թումաի < Թու-  
 մայի (Ամաղու ԺԳ Դ III 88, Սանահին ԶԱ ԿՂՍ 184): Լաշաիւն < Լա-

123 Գ. Հովսեփյան, Քարանդ հայ հնագրութեան, էջ 48, տախտակ ՂԱ:



շայի (Քանաա ժԳ Գ III 88): Կուկաին < Կուկային (Քարազուխ ժԳ Գ III 174): Մամաին < Մամային (Սանահին ՉԺԳ ԿՂՍ 154): Եանաին < Եանային (Սանահին ՈԶԳ ԿՂՍ 162, Հաղբատ ՈՂԸ ԿՂԶԲ 178): Սասնաին (Սանահին ՉԻ ԿՂՍ 48): Տալախաին (Սանահին ժԳ ԿՂՍ 146): Բորինաի (Հաղբատ Ոեթ ԿՂԶ Բ 158): Յացաին (Հաղբատ ՉԻԷ ԿՂԶԲ 158): Գոնցաին (Հերհեր ՉԼԲ Գ III 51): Այս կարգի բառերի մեջ յ-ի ուղղագրությունն է պարզաբանում Արիստակես Գրչի է կանոնը<sup>124</sup>:

2. Հին հայերենի յ-ի անկումը բառերի քեֆ հոլովներում ու ձայնավորից հետո. Հնագույն հիշատակությունը Գավրիթ Գնթունու տապանագրում, որի ժամանակն է 2—է դդ. «որդո (< որդու) վասակա բարէպաշտի<sup>125</sup>, աշնուհեան Քարկոսիի վանքի ՅՄԲ (903) Բ. բնագրում. «ան իմո (< իմո) Աշոտի... ելանել ի մարմնո աստի..., ան իմո փոխելոյն..., այսմ գրո» (Գ III 206—207): «Որդո վասակա (Կարմրաշեն նԼԹ Գ III 41): «Ի փրկութիւն հոգո իմո» (Արատես նԺԶ Գ III 122): «վասն վարդա՝ Զաբարէի որդո» (Յաղաց քար Շ Գ III 152): «Ի ծանր լծո» (Հովհաննավանք Ոեթ ԿՂԶ 76): «Ես՝ Շուշիկ դուստր Գրիգորո» (նա ՈեԷ ԿՂԶ 77): «Ես՝ Ապլխարիի որդի Գրիգորո» (Հաղբատ նԶ ԿՂԶԲ 150): «Որդո իւրս Աւագին» (նա ՈՍԹ ԿՂԶԲ 169): «Ես՝ Գրիգոր վարդապետ որդի Տուտէ Խաչենացո» (Սանահին ՈԼԳ ԿՂՍ 180): «Որդո Աշոտոյ» (Բագնայր նՂԱ ՍԱՐ 178): «Որդի Շապին քահանաի» (Բագարան նԶԳ ՍԱՐ 203) «Հատապալոի Քս հայոց» (Անի նՄ Գ I 34): «Լերիցո որդիք» (Պառաւաձոր ՈԼ ՄՎ): «Ի փրկութիւն հոգո իմո» (Տումի նեթ ՄՎ): «Առանց ամալրո» (Հովհաննավանք ՈԻ ՄՎ): «Յովանիսի վարդապետի Տաուշեցո» (Հովհաննավանք ժԳ ԿՂԶ 112): «Որդի Աշոտո շահանշահի» (Արուճ նԼԶ ՄՎ): «Կենոշ վահրամա Պահլաւունո» (Մարմաշեն նԿԳ ՕրԾՈՒՏ 445): «Ողորմեա Գրիգորո» (Անի ժ դ. Գ I 31, նԶԹ Գ I 33): «Սմբատա որդո Գաղկա» (Անի նԶԵ, նՂԹ Գ I 44, 43): «Շինոզ սրբո եկեղեցեացո» (Տաթև ժ դ. Գ II 14): «Սրբո սեղանոյս..., արքային Գրիգորո» (Բղենո նորավանք ՇԺԱ Գ II 45): «Աձահանո եղբարք» (նՏ): «Ի ձեան Շահանդիստո բարեպաշտ Թադուհոյ» (Վաղագնի վանք նեթ Գ II 100): «Որդի Յուսիկ երիցո» (ԱրծավանիկնՂԳ Գ II 133): «Մար

<sup>124</sup> Ազիլի մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 245, և. Խաչերյան, «Գրչություն արվեստի» լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 82:

<sup>125</sup> Ե. Մաշեկյան, Հայերեն արձանագրություններ առարկաներ, էջ 50:



Շահանդիստո ողորմեայ» (Վահանավանք ՇԼԵ Դ II 138): «Գուստրե հաշերեսին լատեցու» (Անի ՈԿԸ Դ I 3): «Ի մեր կորդո արկած էր» (Անի ՆՁԵ Դ I 48): «Տուար դմեր կորդո շինած տունս եւ գրակս» (Նա ՆՂԹ Դ I 43): «Շինեցար սմա ժամատունս ամաբանո եւ ձմերանո» (Անի ՈԽԲ Դ I 47): «Թոռն Գէորգա աագերիցո» (Նա), «Վասն ոչ զոյս մեր ի միասին ժառանգ բառ մարմնո» (Վահանավանք ՇԼԵ Դ II 138): «Ուրդա Գրիգորո Պահլաւունո» (Անի ՆՂԵ Դ I 48): «Պատարազն Սահակդիստո է» (Անի ԺԲ Դ I 57): «Զունի որ հրամանս խափանելո» (Սանահին ՈԱ ԿՂՍ 99): «Զթագ պարծանաց զլլա իմս» (Հաղարծին ՈԿԲ ՄՎ): «Պոռչո... որդո նորին էաչո» (Մարտիրոս ԶԼԷ Դ III 180):

Գ. 3-ի անկումը դիտվում է գրաբարյան բայերի կրավորաձև խոնարհման անց. կատարյալ ժամանակի եզ. առաջին դեմքի և ներկայի եզ. երրորդ դեմքի բայաձևերում, շեղումներ, որոնք արձանագրված են Արիստակես Գրչի Զ կանոնում: Այս հնչյունափոխությունը ևս մարմնավորվելով Զ—է դարերում, տիրապետող օրինաչափություն է դառնում և տարածվում բոլոր դեպքերի վրա Թ—ժ դարերում: Լազարյան ճեմարանի ավետարանում ավանդված են առանց վերջնահանգ յ-ի հիշյալ ժամանակների մի շարք բայաձևեր. ողորմեցա (= ողորմեցայ), հանեցա, բանա (= բանամ, բանաս, բանայ), երկեա, քաղցեա, առեա, գո (= գում, գոս, գոյ) և այլն<sup>126</sup>: Հնագույն ձևադրերի հիշատակարաններում ևս վկայված են հիշյալ բայաձևերում յ-ի անտեսման դեպքեր. համարեցա (Զ դ. ԳՀՀԶ 8), կարդա (<կարդայ) (Ժ դ. ԳՀՀԶ 109), համարձակեցա, փոխեցա, վարկա (Ժ դ. ԳՀՀԶ 113, 115, 129):

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճական արձանագրություններում ևս դիտվում են, թեև ոչ այնքան հաճախակի, բայաձևերում վերջնահանգ յ-ի անկման վկայություններ: Այս սակավությունը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ վիճական բնագրերում ավանդված բայական համակարգը հիմնականում մրենացել է գրականը, գրաբարյանը և մյուս խոսքի մասերի համեմատությամբ ավելի պակաս է ենթարկվել խոսակցական, բարբառային օրինաչափությունների ազդեցությանը: Մեջ ենք բնութամ գրարարի ներկա և անց. կատարյալ ժամանակների բայաձևերում յ-ի անկման եղած հնագույն օրինակները. «Որ կարդա (<կարդայ). դիս. յիշեցէ» (Արատես ՆԺԶ Դ III 122): «Հանեւ շանա» (Նա ԺԳ Դ III 125): «էթէ որ բնդդիմանա» (Մրեն ԺԱ դ ՕրՅՈՒՏ 8): «Որ

<sup>126</sup> «Աւետարան բառ թարգմանութեան նախնեաց մերոց», էջ Թ:



հակառ կա նգովի» (Անի ՌԻԹ Դ I 12): «Եւ ստացա զաւետարանս» (Անի Շէ Դ I 13): «Եւ ազնութիւն տա» (Անի ՈԿԹ Դ I 17): «Որ կա ի գրի ասա» (Անի ՈԿԱ Դ I 42): «Իսկ որ հակառ կա չիմոց կամ յաւատարաց» (Անի ՆՆԳ Դ I 32): «Հարկեցա ի ծնողական սիրոյն» (Անի ՆՁԹ Դ I 33): «Յողորմութիւնն այ ապաւինեցա» (Անի ՆՄ Դ I 35): «Ով եւ լինի տա սերմ :Ո: մող» (Անի 1060 Դ I 37): «Եւ կամ զագահութեան զհետ երբա» (Անի ՆՁԳ Դ I 46): «Եւ երկիրդիւ այ ոչ հոգա» (Անի ՆՁԵ Դ I 48): «Որ ոք բնդդիմանա» (Մրեն Ժ ՕրՃՈՒՏ 4): «Եւ որ յապրշտակել ջանա» (նա Ժ դար): «Եւ այլ ուրիք ջոր տա» (Հոսոմոս ՈՍԵ ՍԱՐ 43): «Որ դմա հակառակ կա» (Քաղաքան ՆՁԳ ՍԱՐ 302): «Հանել ջանա» (Քարկոսի ՅՄԹ Դ III 206): «Իշխան, որ տիրէ հակառ կա, դատի յայ» (Ամբերդ ՆՀԵ ՄՎ): «Միաբանեցա մեծափառ սուրբ կաթողիկէիս» (Անի ՈՁԳ Դ I 35): «Սկսա շինել» (Քարձրաբաշ ՈՀ ՄՎ): «Զարհուրեցա ի սպառնալից» (ն. Վարազ ԶԺ ՄՎ): «Կիսարեա առ ամ փոխեցա» (Մարմաշեն ՆԿԴ ՕրՃՈՒՏ 445): «Եկել բնակեցա ընդ հովանեւ սրբոյ Ածածնիս» (Սահահին ՈՄԴ ԿՂՄ 183): «Խափանել ջանա» (Հաղբատ ՆՀ ԿՂՀԲ 151): «Յափշտակել ջանա» (նա ՇԺԲ 151):

Դ. Հին հայերենի մի շարք բառեր և անձնանուններ վիճական բնագրերում փոքրագրված են առանց նախահունչ յ-ի: Թվում է այս դեպքում ևս գործում է յ-ի գրութեան և հնչման մեր նշած օրինաչափությունը, ըստ որի որոշակի դիրքերում յ-ն (կամ ր-ն) կարող է չգրվել, բայց արտասանվել: Նկատված օրինակներից կարելի է հիշատակել. «Յադաթս իշեցէք» (<յիշեցէք) (Սիսիան ՆԿՁ Դ II 89): «զՍահակիկ իշեցէք» (նա ՆԿՁ Դ II 89): «Իշեայ Քս ամ գրեիգոր երէց» (Թանատաց վանք ՆԼԵ Դ III 96): «Ով կարդայք, իշեցէք ի Քս» (Լոր ԶԶԶ Դ II 108): «Մինախաթուն իշեցէք» «...նւ Քս բզիշողքն յիշէ» (Օձուն ԶՁԵ ՄՎ): «Սարկաւագ իշէք» (Մամասի վանք ԺԳ Դ III 175): «Տվի իշատակ ինձ եւ իմոցն» (Վերնաշեն ԶԶ Դ III 99): «Հակառակն գնդային (<զՅուդային) և զԿայենին աոցէ» (նա): «Մասն ու բաժին գնդայի աոցէ» (Արատես ԶՄ Դ III 126): «Նարան ավին ինձ զայտնութեան :Ե: տր» (Թանատ ԺԳ Դ III 82): «Ձեանութենն (<յայտնութեանն) ժամն նրջիսին արնեն» (Ծաթեր ԶԵԶ ՄՎ): «զՍտեփանոս իշեցէք» (Շատին ԺԳ Դ III 156): «Սարկավագ իշեք» (Քարազուխ ԺԳ Դ III 175): «Իշեցէք ի Քս» (Թերի ԶԺԶ Դ III 199): «Իշեցէք փ ադաթս ձեր եւ ամ զձեզ իշէ, (Կուրթան ԺԳ ՄՎ): «Ովանէսին իշեցէք» (Ծովակ ՆԿՁ ՍՐ): «Ած



պարունացն աչողում (<յաչողում) երևա» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 101): «Եւ որ անդգնի (<յանդգնն) եւ անցանացն (<յանցանացն) պատասխանի» (Ն. Վարազ ժԳ ՄՎ): «Շինեցար սբ զխորանս իշատակ մեզ եւ ծնողաց մերոց» (Ալուշալու ժԳ ՄՎ): Հին հայերենի յուզել բայը (<յոյզ=որոհում, փնտրում բառից, որի ծագումը Աճառյանը դնում է պ՛հ. yoz=շարժել, տատանել, ծփալ արժատից)<sup>127</sup>, բանիցս փոքագրված է առանց նախահունչ յ-ի, ինչպես ավանդված է արդի բարբառների մեծ մասում. «Ով որ այլ բաժ ուզէ կամ տամղայ» (Անի ՉԻԹ Գ I 23): «Ձունի որ իշխանութի բաժ ուզելու... ով այլ խաւսբ կամ աղման անէ բաժ ուզելու» (Անի ՉԺԸ Գ I 24): Այլ վիճակներում հանդիպում է նաև կանոնավոր յ-ով ձևը. «Ձունի հրաման մուտք յուզելու (Անի ՈԿԹ Գ I 17):

Անձնանունների սկզբում յ հնչյունի անտեսման դեպքերը նրկարագրելու ենք և բաղաձայնի անկման երևույթները քննելիս՝ Յովսէփ > Ովսէփ > Ուսէփ, Յովհաննէս > Ովանէս, Յովասափ > Ովասափ, Յակոբ > Ակոբ և այլն:

Սակայն բառասկզբում յ-ի անկման այս վկայություններից դժվար է հաստատապես որոշել, թե իրականում, արտասանության մեջ որ հնչյունն է ընկնում՝ հին հայերենի յ ձայնորդը, թե այդ դիրքում պատմական հնչյունափոխությանը արդեն և հազագի վերածված բաղաձայնը: Հայտնի է, որ գրաբարյան յ ձայնորդը բառասկզբում և է արտասանվում արդի հայերենում և բարբառներում: Միջին հայերենի գրական հուշարձաններում ևս յ > և փոփոխությունը տիրապետող օրինաչափություն է և գրաբարյան բնագրերի բառասկզբի յ-ն այդ դիրքում ամենուրեք նոր գրական ընթերցմամբ և է արտասանվում՝ յաշխարհ-հաշխարհ, յազենւմ-հազենւմ, յիշխանութեան-հիշխանութեան:

Յ > և հնչյունափոխության ժամանակաշրջանը հայագիտության մեջ ստուգապես որոշված չէ, և այդ պատճառով հազիվ թե հնարավոր լինի պարզել, թե մեր թվարկած բառերի սկզբից ընկած յ-ն ինչ հնչում է ունեցել ավյալ վկայության ժամանակ՝ գրաբարյան յ ձայնորդի (առաջնալիզվային ի ձայնավորի ավելի թույլ արտասանվածքը կամ անվանկային ի), թե և հազագային բաղաձայնի, որ առաջացել է պատմական հնչյունափոխությանը, մի խոսքով կարևոր է որոշել, թե այդ դիրքում որ հնչյունն է ընկել՝ յ-ն, թե և-ն: Պրոֆ. Ս. Ղազարյանը հատուկ քննության է ենթարկել այս հարցը և հանգել այն համոզման, որ միջին հայե-

127 Հ. Աճառյան, Արժ. բառարան, Գ, էջ 1312:



րենի, գրական արտադրանքներում հին հայերենի մի շարք բառերի սկզբի յ-ի անտեսումը կամ իր բառերով՝ հանրանալը (մեջ բերված բոլոր փաստերը Շ. Բագրատունու երկից, անաղբելի <անյաղբելի, արուցեալ, աղբուրեամբ, ապաղէր) պետք է բացատրել, բառասկզբի և հնչյունի անկման օրինաչափությամբ, որ լայնորեն դործում էր միջնադարի մի շարք մատենագիրների դործերում, օրինակ, «Թէ շես աւտալ...», քան զսէրն այլ քաղցրիկ պտուղի յաշխարհս շաւտամ թէ լինի»<sup>128</sup>: Ստացվում է, որ հիշյալ բառերում բառասկզբի յ-ի անկումից առաջ արդեն տեղի էր ունեցել յ>ի պատմական հնչյունափոխություն, ուրեմն այստեղ դործ ունենք նախահունչ և հագագի թուլացման և անկման հետ:

Սակայն թվում է, այս դիրքում յ-ի անտեսումը գրության մեջ կարող էր առաջանալ անկախ նրա կրած հնչյունափոխությունից, այն օրինաչափությամբ, ըստ որի յ հնչյունը ը ձայնավորի նման այլևայլ դիրքերում գրվում է առանց արտասանվելու, ուրեմն և կարող է արտասանվել առանց գրվելու: Մյուս կողմից, ինչպես երևաց թվարկված օրինակներից, բառասկզբում յ-ի անտեսման առաջին փաստերը գալիս են Ժ—ԺԱ դարերից (Թանաանլն, Սիսիան-նկՁ, ն. Թալին Ժ դ. և այլն), որ հազիվ թե հնարավոր լինի յ>ի հնչյունափոխության ձևավորման ժամանակ համարել:

Ն. Պատմական հնչյունափոխությամբ հին հայերենի յ ձայնորդը բառասկզբում ամենուրեք արտասանվում է և: Այս օրինաչափության առաջացման ժամանակի մասին հայագիտության մեջ որոշակի բիշ բան է հայտնի: Ուսումնասիրողները սովորաբար այս երևույթի մասին պատկերացում են կազմում ոչ թե նրա հրնագույն վկայություններից, այլ նոր հայերենի արտասանությունից, որտեղ արդարև գրաբարյան յ-ն այդ դիրքում անխափր և է հնչվում:

Հայագետ Կարստը յ>ի փոփոխությունն արտացոլող միայն երեք բառ է մատնանշում միջին հայերենի գրական մեծաբանակ աղբյուրներում, դրանք են՝ հեա = յեա, հեաի = յեաի, որտեղ հին հայերենի յ-ն տառադարձվել, ուրեմն և հնչվել է և, և յայրենեքփեմ = հայրէնէքփուրիւն, որտեղ անկա է հակառակ երևույթը՝ գրաբարի և բաղաձայնի փոխարեն ներկայացվել է յ ձայնորդը<sup>129</sup>:

<sup>128</sup> Ս. Ղազարյան, Միջին հայերեն, 1960, երևան, էջ 180:

<sup>129</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 34, 92.



Նոր հայերենից բերված օրինակները կարտը բաղում է Ա. Այ-տրնյանի գրքից. յարմար, յապաղել, յոյս, զՅակոր, անյապաղ, քերայոյս, որոնցում յ-ն բաղաձայն հնչյուն է և արտասանվում է հ՝ հարմար, հապաղել, հույս և այլն<sup>130</sup>։ Սակայն կարտի մեջբերած երեք բառերը ոչ մի շափով չեն պարզում, թե երբ առաջացավ բառակազմի յ>հ հնչյունափոխությունը, քանի որ դրանք սակավաթիվ են և վկայված միայն կիլիկյան գրական հայերենով հորինված ԺԳ դ. գրվածքներում։

Կարտի աշխատության գրախոսականում հայագետ Ն. Ֆին-կը կիլիկյան միջին հայերենով շարադրված «Պատմութիւն խրոնիկոնին» երկի Չեմ (1296) թ. ձեռագրից մեջ է բերում բառակազմի գիրքում հ=յ համապատասխանության մի քանի նոր վրկայություններ, որոնցում հ-ի փոխարեն գրված է յ՝ յայրապետի (<հայրապետ), յէրէտիկոս (<հերէտիկոս), յրամայեաց (<հրամայեաց), սակայն անորոշ է յ, հ գրերով արտահայտված հնչյունների որակը հիշյալ բառերում, ուստի և չի իմացվում, թե ինչ փոփոխություն է արձանագրված նրանցում՝ հ>յ, թե՛ յ>հ։ Իրրե բառակազմում յ>հ անցման օրինակ պրոֆ. Ս. Ղազարյանը մատնացույց է անում միջին հայերենի հայնց (<հանցեղ, հանչաֆ) բառը, որն առաջանում է յ նախորդից և այնց դերանունից՝ յ-այնց>հայնց>հանց (հայնչափ>հայնչաֆ>հանչաֆ)<sup>131</sup>։ Սակայն երկու դեպքում էլ յ>հ անցման ժամանակը մնում է անորոշ։ Յ>հ հնչյունափոխության ձևավորման ժամանակաշրջանի մասին որոշակի քիչ բան կարող են ասել նաև նոր հայերենի կամ բարբառների փաստերը։ Հարցի պարզարանմանը կարող էին նպաստել հայերեն հնագույն ձեռագիր մատյանները և մանավանդ վիմական արձանագրությունները, սակայն այստեղ էլ, հակառակ սպասածի, հնչյունափոխական այս երևույթի արտահայտությունները այնքան էլ ակնառու չեն և բավարար հիմքեր չեն տալիս նրա ժամանակաշրջանը պարզելու համար։ Ազաթան-գեղոսի կրկնագիր ձեռագրում, օրինակ, որ մասնագետները Ը—Թ դարերի գործ են համարում, յ>հ փոփոխությունը վկայված է նույն յետ-հետ բառով և այդ պատճառով Հ. Աճառյանը զգուշա-

<sup>130</sup> Ա. Այտրնյան, Քենական քերականություն, ... Բ, էջ 371։

<sup>131</sup> Տե՛ս Franz Nikolas Finck, Besprechung Dr. J. Karst Grammatik des Kilikisch—Armenischen, ZAPh, B. I, Marburg, 1903, S. 172. Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Երևան, 1960, էջ 179—180։



նում է այդ եզակի փաստի հիմամբ հավաստիորեն նշել իրողության ժամանակը<sup>132</sup>:

Հին ձեռագրերի հիշատակարաններում և Հաղարյան ճեմարանի 887 թ. ավետարանում ավանդված են հնչյունափոխական տարրեր իրողություններ, ձևաբանական այլևայլ նորարանություններ կամ խոսակցական, կենդանի բարբառների այլ ներթափանցումներ, սակայն յ>հ փոփոխությունն արտացոլող բառեր չեն հիշատակված: Հակառակ փոփոխությունը՝ հ>յ, ինչպես կարատի և Ֆինկի նշած՝ հայրենէրփուրիւն-յայրենէրփիւմ, յրամայեաց-հրամայեաց օրինակներում, այն էլ բառերի մեջ կամ բառավերջում դիտվում է միջնագարի մի քանի ձեռագրերում և վիմագրության մեջ. օրինակ. «նույնպէս և երանելի քաղոյի» (<քաղունի) (ԳՀՀՁ ՈԺԸ 399): «Ես՝ Վարդանս և ամուսին իմ Խորիշայ (<Խորիշան) միաբանեցար» (Ավան ԺԳ ՄՎ): «Ես՝ Շահանշայ (<Շահանշահ) որդի Ջոհէ կանգնեցի դիսաշս» (Աստղածոր ԶԺԹ ՍԲ): «Կէս ինձ և կէս ամուսին իմոյ Անայտին» (<Անատին) (Թայլլարուխ ՈԺ)<sup>133</sup>: «Եւ որդոց մերոց Տարսաիճին, Շայանշահի և էլուկումին» (Զինչիրու ԶԾ Հով ՏՄ 16):

Սակայն այս վկայությունները հավանաբար կարող են ապացույց ծառայել ոչ թե յ>հ, այլ միայն հակառակ հնչյունափոխության համար, այսինքն հաստատել, որ տվյալ դիրքում հին հայերենի հ բաղաձայնը վկայված ոլորտում արտասանվել է յ ձայնորդ կամ կիսաձայն հնչյունի նման, մի իրողություն, որ դիտվում է նաև արդի մի քանի խոսվածքներում (հմմտ. Արարայան բարբառի ն. Բայազետի խոսվածքում՝ սայման <սահման, շայ <շահ, անմայական <անմահական, մայվան <մահվան, Մշո բարբառում՝ պայել <պահել, աոյմ <տոհմ, Թաֆույի <Թագունի և այլն- Մուշ 66):

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիմական արձանագրություններում պահպանվել են մի քանի բառեր, որոնցում բառակցքում հին հայերենի յ (=ի) նախդիրի փոխարեն փորա-

132 Ե դարի գրական հուշարձաններում հետ, յետ, Ես դուրսհեռ գործածություն ունեն իբրև հնթ. \* ped արմատի տարրեր արմատաձևեր, ըստ որում նախնականը համարվում է հետ-ը (հմմտ. սրովհետև, այսուհետև): Հաջիվ թե հնարավոր լինի այդ ձևերը հ>յ կամ յ>հ հնչյունափոխության արդասիր համարել (տե՛ս Հ. Անատյան, Արմ. բառարան, Գ, 267, 1289, է. Աղայան, Գրարարի քերականություն, Ա, էջ 163—164):

133 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ձովազարգ գավառի, Վաղարշապատ, 1895, 365:



գրված է և հազարը, այսինքն արձանագրվում է յ>ն հնչյունա-  
 փոխություն բառերի սկզբում: Հնագույն վիայությունը գտնում  
 ենք Երեբույքի բազիլիկ տաճարի նշէ (1028 թ.) արտոնագրում.  
 «Ազաաէցի Հերերվաց (<յերերուաց) թաստակս յորդէց յորդիս»  
 (Մվ)<sup>134</sup>, ապա՝ Տաթևի հուշարձանի ժԳ դարի մի նվիրագրության  
 մեջ. «Եւ այժմ հրամանաւ տն Ստեփանոսի նւիրեցի հիւրեանց  
 (<յիւրեանց) սեփական եկեղեցիս» (Տաթև ժԳ Դ II 3), կամ Բա-  
 գավանում. «Գնեցի զհոռչատախս իւրեանց հողով ու տովի հայս  
 (<յայս) եկեղեցոյս» (Բագավան ժԳ ՕրծՈՒՏ 446): Անիի նՁԳ  
 (1035) թ. արձանագրության մեջ հիշատակված է հին հայերենի  
 հետ-յետ բառը. «Եւ կամ դադահութեան զհետ երթաւ եւ զեկեղե-  
 ցոյս մուտքս խորէ... նզովեալ լիցի» (Դ I 46): Մի վերջին օրի-  
 նակն էլ հանդիպում է ավելի ուշ շրջանում վայոց ձորի Յաղաց  
 քար եկեղեցու վիմագրության մեջ. «Տվար ի սբ Հովհանէս  
 (<Յովհանէս) վս ծովացել մեղաց մերոց» (ՊժԶ Դ III 145):

Հասկանալի է, որ թվարկված սակավաթիվ փաստերը հնա-  
 րավորություն չեն տալիս որոշակի համոզման հանգել բառա-  
 սկզբում յ>ն պատմական հնչյունափոխության առաջացման և  
 տիրապետող օրինաչափության վերածվելու ժամանակաշրջանի  
 մասին:

134 Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, էջ 13, տախտակ ժԲ:



## ԳԻՐՔԱՅԻՆ ԵՎ ՓՈՒԱԶԳԵՅԱԿԱՆ ՀՆԶՅՈՒՆԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԴՐԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

Դրափոխութիւնը հնչյունափոխական այն երևույթն է, երբ բառի կազմի մեջ մտնող երկու հարեան կամ իրարից հետո գրանվող հնչյուններ արտասանութեան ժամանակ փոխում են իրենց տեղերը և արտաբերվում ետևառաջութեամբ: Հնչյունների դրափոխութիւնը տեղի է ունենում բառերի արտասանութեան ընթացքում և այդ պատճառով ավելի լայնորեն դիտվում է հատկապես խոսակցական, կենդանի լեզվում: Հայերենի դրական հուշարձաններում հնչյունների դրափոխութեան օրինակները հազվադեպ են:

Սակայն հնչյունների դրափոխութեան հետևանքով առաջացած նոր ձևերը լեզվի զարգացման ընթացքում երկար գործածվելով, կարող են դիտակցվել իբրև բառերի կանոնավոր ձևեր և, այդպիսով, մտնելով դրական լեզվի մեջ, դուրս մղել նախկին օրինաչափ արտասանութիւնը կամ պահպանել զուգահեռ գործածութիւն: Օրինակ, հին հայերենի խտոր բառի մեջ խ, ս բաղաձայնների դրափոխութեամբ առաջացած սխտոր-ը արդի հայերենում և բարբառների մեծ մասում համարվում է բառի կանոնավոր ձևը, թեև մի քանի խոսվածքներում դեռևս պահպանում է հին՝ խտոր արտասանութիւնը:

Միջին դարերի վիժական արձանագրութիւններում պահպանվել են հնչյունների դրափոխութեամբ բառերի բաղմամբով հիշատակութիւններ, որոնք պարզում են այդ բառերի արտասանութիւնը տվյալ ժամանակաշրջանում: Վիժական բնագրերում հան-



դիպող հնչյունների դրափոխության վկայություններում կարելի է նկատել հետևյալ օրինաչափությունները.

Ա. Բառամիջում դրափոխվում են բաղաձայն + ր կամ ր + բաղաձայն հնչյունակապակցությունները հետևյալ բառերում. դատարկ > դարտակ. «Ու մի դարտակ գրաստէն կէս սոյ անուին» (Անի ՈՂԵ Դ I 22); վահրամ > վարհամ անձնանվան մեջ և նրանից կազմված տեղանուններում երկու ձևերն էլ հավասար տարածում ունեն, մեծաթիվ օրինակներից մեջ ենք բերում մի քանիսը. «Ես՝ իշխանս վարհամ շինեցի զկաթողիկես» (Ամբերդ նՂԵ)<sup>1</sup>, «պահեա վարհամ պատրիկ» (Անի ՈՁ Դ I 5), «ես՝ վարհամ Շահուռեցի» (Թանատ ԺԳ Դ III 80), «...զմեր գանձագին գեղն զվարհամագեղ» (Հովհաննավանք ՉԼԲ ԿՂԶ 91), «...գրեցաք վարհամա ժամ անխափան» (Հաղրատ ԺԱ ԿՂԶԲ 155), «...ես՝ վարհամ Կանաչողկեցի (Խորանաշատ ՈԿԵ ՄՎ), «...եզբար իմոյ վարհամա» (Խծկոնք ՈՂԹ ՍԱՐ 210):

Աւհրնել > աւհրնել, «Կատարեցի շինութք եւ աւհրնեցի..., ի հայոց թիվ ՇԺԱ աւհրնեցաւ» (Բղենո նորավանք ՇԺԱ Դ II 45—46), «աւհրնել ամ ամէն» (Սանահին նԿ ԿՂՍ 181); Կամուրջ > կարմուրջ և նրանից կազմված մի քանի այլ բառերում, վիմական արձանագրություններում ավելի հաճախ է դրափոխված ձևը. նախնազույն օրինակը Ամբերդի արձանագրության մեջ. «տւար ջաղացն վերա կարմնին» (Ամբերդ նՂԵ)<sup>2</sup>, «...ի Բէշքենակապէն ինչուրվի կարմուրջն» (Անի ՈԿԴ Դ I 63), «շինեցի կարմուրջս» (Շատին ԺԳ Դ III 162), «...ակն ի մին ջաղաց բոլոր ի կարմրնջին ձորին (Հոռոմոս ՈՁԳ ՍԱՐ 153), «...հտուի Բովաշարու կարմրնջէն (նտ ՉԺԵ 157), «...զկարմեջխելին ներքի ջաղացն» (Բաղարան ՈԿ ՍԱՐ 203), «նոր շինեցի զկարմունս (Կուրթան ԺԳ ՄՎ), «ի կարմրնջէն ի վայր եւ վեր (Մարմաշեն ՈՂԳ ՕրԾՈՒՒ 443), «տվար Կարմեջատափա այգենն» (Դադիվանք ՈՂ)<sup>3</sup>: Հայրապետ > Հարապետ ավանդված նոտ գյուղի ՉԼԸ (1289) թ. խաշարձանի հիշատակագրության մեջ. «Ես՝ Գնդիկ ու Հարապետ կանգնեցաք զխաշս» (Դ II 61). անձնանունը նույն դրափոխությամբ հիշատակված է նաև ավելի ուշ շրջանի խաշարի քնագրում, իբրև հուշարձանը կերտող վարպետի անուն. «Հարապետ կազմող թիվ. :ՌԵ:»

1 Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի արձանագրություններ..., «Էջմիածին» 1961, № 5, էջ 50—51:

2 Ե. Տեր-Մինասյան, նշվ. հոդվածը, էջ 51:

3 Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր..., էջ 95:



(Աշտարակ, Կարմրավոր)<sup>4</sup>: Ապարանջան <առպնջան (պր>ոպ), հիշատակված է Վայոց ձորի Հերհեր հուշարձանի Չկէ Թ. վիմագրում. «զիմ ոսկի առպնջանի գոնծէն տվաք» (Դ III 56): Պր>ոպ գրափոխությունից բացի առպնջան բառի մեջ տեղի են ունեցել նաև հնչյունափոխության այլ երևույթներ. ջ ձայնեղ կիսաշփականը ն՝ ոնգայինից հետո վերածվել է և խուլի, որ այս դիրքում նվաղ օրինաշարի է, շորս ա-երից երկրորդ նախաշեշտ ա-ն սղվել է, իսկ ր ձայնորդը փոխարինվել ավելի Բրթուն ու-ով, որ սովորական է միջին դարերի գրական երկերում և մանավանդ վիմական բնագրերում (հմմտ. Մագիստրոս = Մագիստոս, առնեմ = արենեմ, Արխատակէս = Ռստակէս, Արփա = Աոփա և այլն): Առպնջան գրափոխությամբ տարբերակը առանց ջ>ն խլացման (առպնջան, առպրնջան) պահպանվել է միայն Մոկսի և Շատախի բարբառներում, իսկ ապառնան ձևով՝ վարդանի առակների հրնագույն ձևագրերում<sup>5</sup>:

Գ. Մղ>ղմ տեղափոխությունը նկատվում է փոխառյալ տաղմաշի, տաղմանի բառում, ըստ որում տամղա բոլոր վկայություններում կանոնավոր է, առանց գրափոխության՝ tamγa («բաժ ու տամղա շէին տվել -Անի ՉՀԹ Դ I 23), իսկ նրանով կազմված բաղադրյալ բառերը միայն գրափոխված՝ տաղմաշի, այսպես, «մեր՝ տաղմանիֆս (Անի Դ I 24), «մեր՝ Անոյ դաղմաշիֆս (նա ՉՀն Դ I 22), «Անոյ դաղմանի էի» (նա ԺԳ Դ I 28), «Գառնո տաղմատարֆս» (Գառնի ՉԿԴ)<sup>6</sup>:

Դ. Su>ստ գրափոխությունը դիտվում է Վայոց ձորի Քարկոփի վանքի 910 թ. արձանագրության մեջ, վանքին նվիրված Արաասամուխ գյուղանվան մեջ: Բնագրում գյուղի անունը փորագրված է եղել երկու անգամ, սակայն առաջին հիշատակությամբ քարը չի պահպանվել, իսկ երկրորդի վրա հստակ կարդացվում է՝ յԱրաստամող (Դ LII 206, նկ. 225): Քարկոփի այս արտոնագիրը փոքր-ինչ ազատ շարադրանքով մեջ է բերում իր «Պատմություն» մեջ Սա. Օրբելյանը. այստեղ գյուղանունը Արաասամուխ է: Բացի դրանից, պատմիչը այլ առիթներով երկու անգամ հիշատակում է տեղանունը նախ՝ Արաստամուխ («ի սահմանին Հրասեկայ Բերդոյ մերձ յԱրաստամուխ գեաւղ»), ապա՝ Արասա-

4 Ս. Բաբխուդարյան, Միջնադարյան հայ հարտարապետներ..., էջ 171:

5 Տե՛ս Н. Марр, Сборники притч Варлана, 1899, стр. 178.

6 Գ. Գրիգորյան, Գրադրություն միջնադարյան մի տուրքի մասին, ՊԲԶ, 1963, № 2, էջ 262:



մութն (ամերձ յԱրասամութն գեաղ...)<sup>7</sup>: Արասամութն, Արաս-  
 տամութն տեղանունը շի ստուգաբանված և նրա նախածեր դժվար  
 է որոշել: Մեզ հավանական է թվում գյուղանվան մեջ տեսնել  
 արտաար, արտասու՛մ արմատը, որ իր հիմնական իմաստից բա-  
 ցի, փոխաբերաբար նշանակում է նաև՝ ծառից վազած հեղուկ,  
 խէժ, ափշ (հմմտ. արտասուարեբ, արտասուալից, արտասուակար  
 և այլն)<sup>8</sup>: Բարդության երկրորդ բաղադրիչի նախածեր կարելի է  
 վերականգնել ըստ արձանագրության մեջ փորագրվածի՝ ոչ թե  
 մութն, այլ՝ մութն > մոզ (Արաստամոզ), որ կարող էր առաջանալ  
 բառավերջում դ > խ օրինաչափ խլացումով: Այստեղից, տեղան-  
 վան սկզբնածեր Արասամութն > Արասամութն Քարկոփի բնագր-  
 բում և Օրբելյանի երկում ավանդված է զուգադիր ձևերով՝ ան-  
 փոփոխ և տս > ստ գրափոխությունը՝ Արաստամոզ, Արաստամութն  
 (Դ III 207, նկ. 225):

Ե. Հլ > լն տեղափոխությունը տեղի է ունենում Պահլաունի  
 ազգանվան մեջ, երբ խախտվում է լ, և բաղաձայնների արտա-  
 սանություն հաջորդականությունը. վիմական բնագրերում հաճախ  
 ազգանունը ավանդված է Պալհաունի գրությամբ: Նախնագույն  
 հիշատակությունը Անիում, Փրկիշ հուշարձանի նՁԵ (1036) թ.  
 արձանագրում. «Որդւոյ Գրիգորո Պալհաունո» (Դ I 48, այստեղ  
 սխալմամբ տպագրված է՝ Պահլաունո, այնինչ գծագիր բնագրի-  
 նակություն մեջ և Կ. Բասմաշյանի գրքում (№ 15) գրափոխված  
 ձևով է՝ Պալհաունո): Մանահինի վանքի ՓԱ դարի երկու բնա-  
 գրերում ևս անձնանունը փոքրագրված է նույն տեղափոխումով.  
 «...ի տոհմէ Պալհաունի» (ՇԺ ԿՂՍ 147), «յազգէ Պալհաունի»  
 (ՓԱ դ. ԿՂՍ 97): Մարմաշենում նԿԴ (1015) թ. տապանագրում.  
 «կնոջ վահրամա Պալհաունո (ՕրճՈՒ 445):

Զ. Հնչյունների գրափոխության օրինակներ են հանդիպում  
 նաև մի շարք այլ բառերում, որոնք շեն են թարգմանում օրինաչա-  
 փության, քանի որ հայտնի են առանձին վկայություններով, զը-  
 բանցից նշելի են. Զատկին > Զակաին (ուղղ. Զատիկ), փոքրագր-  
 ված է վայոց ձորի Շատի վանքում, Ս. Սիոն Եկեղեցու մուտքի  
 մոտ: «Ամուսին իմ Զակաին» (Դ III 156, ԺԳ դար): Ասիին > Ասի-  
 սին (ուղղ. Ասիա), ար. Ասիային (> Ասիին), հանդիպում է Ա-  
 մադուի նորավանքում ԶԼԴ (1285) թ. կանգնեցված խաչարձա-  
 նի հիշատակության մեջ. «մաւր իմո Ասիին» (Դ III 242):

7 Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սրսական, էջ 234—235:

8 Հ. Անտոյան, Արմ. բառարան, Ա, էջ 767:



Սակայն, չպետք է կարծել, որ Յվարկած բոլոր դեպքերում հնչյունների գրափոխությունը բառերը արտասանվել են այնպես, ինչպես փորագրված են արձանագրություններում: Վերջին երկու օրինակում վկայված գրափոխությունը հավանաբար ոչ թե այդպիսի արտասանության արդյունք է, այլ փորագրող վարպետների սխալի ու շփոթման հետևանք, ինչպես իրավամբ նշում է վերժանող Ս. Բարխուդարյանը: Այսպիսի դեպքերում հնչյունների վերկայված տեղափոխությունը կատարվել է ոչ թե արտասանության ընթացքում, այլ տվյալ տառաշարքում հարևան գրերը փորագրելիս, երբ տեսողության խարկանքով խախտվել են նրանց տեղերը և ընկալվել ու փորագրվել ետևառաջությամբ:

է. Վիմական ընադրերում ավանդվել են այնպիսի բառեր, որոնցում տեղի է ունեցել ոչ թե բաղաձայնների, այլ ձայնավոր ու բաղաձայն հնչյունների գրափոխություն կամ վանկի շրջում: Ահա մի քանի օրինակներ. Վայոց ձորի Թանաթի վանքի ԺԳ դարձանագրության մեջ կարգացվում է. «...կատվհատին ազան էլ տվաք» (Գ III 78), ընդգծված բառի կանոնավոր ձևն է՝ կտաւատ (Ամբերդի ՆՇԵ Բ. բնագրում՝ կտաւահատ), ըստ այսմ, առկա է տա>ատ վանկային գրափոխություն: Նույն փոփոխությունը նկատելի է նաև վիմագրության մեջ եղակի հիշատակությամբ հայտնի ջուլհակ բառում, որ Ավանի հնագույն տաճարի երկու արտոնագրերում ավանդված է միևնույն՝ ջուլահկէ, ջուլահկերոյն գրությամբ. «...և շարետ առնու կամ հորայկտա ի ջուլահկէ» (ՉԼԳ), սրանից երկու տարի անց՝ «Թողի վԱւանայ գայգեց շարետն ու զջուլահկերոյն հորակտան»<sup>9</sup>: Ակներև է, որ այս բնագրերում ջուլհակ արտասանվել և փորագրվել է հա>ահ վանկաշրջումով, որ հավանաբար տեղի է ունեցել հոգնակի թվում և թեք հոլովածներում (ջուլահկերոյն, ջուլահկէ), քանի որ եղակի թվի ուղիղ ձևում ջուլահկ<ջուլհակ փոփոխությունն անհավանական է: Դիտելի է, որ բառիս մեջ հ. ՚ բաղաձայնների գրափոխությունը նկատվում է նաև մի շարք բարբառներում - օրինակ, ջուլհակ = ոստայնանկ բառը արտասանվում է՝ ջուլհակ (Թիֆլիս),

9 Կ. Ղաֆաղաբյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 19—21: Բնագրի՝ ի ջուլահկէ, զջուլահկերոյն տառաշարքերը բնօրինակվել են՝ ի ջուլհակէ, զջուլհկերոյն, իսկ ետևաբառային արտոնագրի խաթարված մասում առաջին բառը իրավամբ վերականգնված է՝ ի ջուլահկէն, որտեղ և հոգը թվում է անհարկի: Արտոնագրի գծագիր ընդօրինակության վրա առաջին դեպքում կարգացվում է՝ ի ջուլահկէ, իսկ երկրորդում՝ զջուլհկերոյն:



չուհլագ (Երևան), ցնալօգ (Ջեյթուն), չուֆլաօգ (հ > ֆ անցումով-Տիգրանակերտ), չուֆլակ (Ախալցխիսե), չուխլակ (հ > խ անցումով- Ն. Զուղա)<sup>10</sup>: Այստեղից, Ավանի բնագրերում փորագրված ձևերի հետ համագրելի են Երևանի, Թիֆլիսի բարբառների՝ չուհլակ, չուհլագ ձևերը:

Մյուս կողմից, Հ. Աճառյանի ստուգարանությամբ չուհլակ փոխառված է պրս. *jušāh(ak)* = ստաշնանկ բառից<sup>11</sup>, որ բառամիջում նախաշեշտ ա-ի սղումով օրինաչափ կերպով կարող էր դառնալ՝ չուլահակ > չուլհակ և միայն այդ ձևով վկայված է գրական հայերենում և բոլոր բարբառներում: Սակայն փոխառված բառի նախաձևն ընդունելով անհնչյունափոխ՝ չուլահակ, հոդնակի թվում կամ թեք հոլովներում կարելի է օրինաչափ համարել նաև երկրորդ ա-ի սղումը և այդ դեպքում չուլահակ-եր կամ չուլահակ-է միջին հայերենի հնչյունափոխություն օրենքներով կանոնավոր կերպով կտային՝ չուլահկերոյն, չուլահկէ (հմմտ. արուպան-արուպներոյ, ծառատակ-ծառուկեր, ջաղացպան-ջաղացպներոյ, վանառական-վանրոկներ) և այլն<sup>12</sup>:

Սակայն քննվող բառը հայերենում վկայված է միայն չուլհակ, ուտի այս վերջին ենթադրությունը այնքան էլ հավանական չէ, և մնում է հավաստել, որ Ավանի վիմագրերում հիշատակված չուլահկերոյն, չուլահկէ բառերում առկա է հա > ահ գրափոխություն: Նույն փոփոխությունը դիտվում է նաև Շևորհատր > Շնհատր > Շնահատր անձնանվան մեջ, որ վկայված է Ավանի ՉԿ թ. տապանագրում. «Այս է հանգիստ Շնահվորին» (ՄՎ): Վանկի շրջում է կատարվել Շահուանեցիք տոհմանվան մեջ, որ կանոնավոր վրկայությունների հետ հանդիպում է նաև Շահուանեցո ձևով (ուռ > ու): «ես՝ Գոնցէ ամուսին Վարհամայ, որդո Շահուանեցո» (Հերհեր Գ III 80): Իհ > իր շրջումը դիտվում է Գրիգոր անվան մեջ. «Շիր եւ Շահի որդի Գրիգոր կանկնեցի խաչս» (Ալայագ ՉԻԸ Գ III 116): Գրական աղբյուրներում այս գրափոխությամբ անձնանունը չի հանդիպում, մինչդեռ բարբառներում Գրիգոր սովորական է: Ես > ահ գրափոխություն է տեղի ունեցել միայնակեաց բառում, որ փորագրված է Խոսրովանուշ թագուհու ՆԸ (959) թ. արտոնագրի վերջում, փորագրող Մատթէոսի հիշատակագրության մեջ. «Ես

<sup>10</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Արմ. բառարան, Ե., էջ 1234, Գաղտնական բառարան, էջ 339:

<sup>11</sup> Հ. Աճառյան, Արմ. բառարան, Ե., էջ 1234:

<sup>12</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 174.



գրեցի Մաթէոս միայնակաեցս Տարաւնէցիս» (Վանստան)<sup>13</sup>։ Այլ օրինակներ չունենալով դժվար է հաստատել, թե այս գեղքում գրափոխությունը այդպիսի արտասանության հետեանք է, հնարավոր է նաև, որ այն հնագրական վրիպում լինի, անկախ բառի արտասանությունից։

#### ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

Քաղաձայն հնչյունների կորուստը հիմնականում տեղի է ունենում բանավոր, կենդանի խոսքի ընթացքում և սովորաբար գրական հուշարձաններում հազվագեղ է արտահայտվում։ Հնչյունափոխական այս երևույթը առաջանում է տարրեր պատճառներով, սակայն բոլոր դեպքերում այն արտացոլում է ավյալ լեզվի ձգտումը հասնելու բառաձևերի հնարավոր սեղմության ու բարեհնչյունության, իհարկե, առանց խաթարելու նրանց իմաստային ամբողջականությունը։

Ձանաղան հնչյունների անկման դեպքեր ավելի հաճախ են միջին հայերենում և հատկապես արդի բարբառներում, որտեղ հին հայերենի և հետադայում փոխառված բաղմաթիվ բառեր արտասանվել և գրի են առնվել բաղաձայնների զգալի կորուստներով։ Այսպես, գրաբարի աճձն, ձեռն, հարսն, ձուկն, արեգակն և այլ բառերը միջին հայերենում արտասանվել ու գրվել են առանց վերջնահանգ և ձայնորդի՝ զանծրս, ձեռուի, հարս, ձուկ, արեգակ։

Քաղաձայն հնչյունների անկման այլևայլ օրինակներ են հանդիպում նաև միջին դարերի վիմական արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում։ Եվ այդ պատահական չէ. հայանի է, որ այդ բնագրերը, հատկապես վիմական արձանագրությունները սովորաբար շարադրվում էին հասարակության տարրեր խավերի, մեծ գրագիտություն չունեցող մարդկանց խոսակցական լեզվի զգալի խառնուրդով, և բնական է այդ լեզվի հնչյունափոխական իրողությունների արտահայտությունները վիմագրերում։ Սակայն, վիմական բնագրերում բաղաձայն հնչյունների կորուստի երևույթները քննելիս, պետք է նկատի ունենալ, որ բոլոր դեպքերում չէ, որ գործ ունենք այս կամ այն հնչյունի անկման հետ արտասանության մեջ. երբեմն փորագրված բառի մեջ ավյալ բաղաձայնը կարող էր անտեսվել կամ բաց թողնվել նաև անկախ այդ բառի արտասանությունից, տեղի խնայողության, հապավման կամ փորագրողի վրիպման պատճառով։ Օրինակ, Քա-

<sup>13</sup> Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրությունները (անտիպ ձողովածու)։



գավանի տաճարի ԺԳ դ. մի նվիրագրում կարգացվում է. «...ևտու  
զիմ դրամագին կոպակն» (ՕրճԻՏ 468), այստեղ կոպակն <կուդ-  
պակն բառն է, որ միջին դարերում հաճախ նվիրվող ունեցվածք  
է, և բազմիցս տարբեր փոփոխություններով վկայված վիճազրե-  
րում: Սակայն դ-ի անկումով՝ կոպակ այլ օրինակ չունի, ուստի  
պետք է մտածել, որ այս դեպքում կոպակ չի արտասանվել և վը-  
րիպումը գալիս է փոքրագրողից, որը բաց է թողել ղ տառաձևը:  
Նույն ձևով Հաղբատի բնագրերից մեկի հատուցման բանաձևում  
փոքրագրված է. «...հին պատարագ ամենայն տարի անխափան  
մատուցանել»։ պարզ է, որ ընդգծված բառը որևէ հնչյունափո-  
խության արդյունք չէ, այլ փոքրագրման վրիպակ, որ պետք է  
հասկանալ կամ մին պատարագ, ինչպես վերականգնել է Կ. Ղա-  
ֆազարյանը (Հաղբատ ԺԱ. ԿՂՀԲ 152) կամ՝ հին <գ> պատարագ:  
Այսպիսի դեպքերում անհրաժեշտ է նկատի ունենալ նույն երևույ-  
թի մյուս օրինակների կամ տվյալ հնչյունի անկման հավանակա-  
նությունը՝ դատելով մյուս վկայություններից:

Միջին հայերենի և արդի բարբառների փաստերից հայտնի է,  
որ բառերի արտասանության ժամանակ ամենից հաճախ ընկ-  
նում են ձայնորդ հնչյունները, անկախ այդ հնչյունափոխության  
առաջացման գործոններից. նույնն է վիճակը նաև միջնադարի  
վիճական բնագրերում, ուստի և հարցի բնությունը սկսում ենք  
ձայնորդ հնչյունների անկման իրողություններից:

Մ ձայնորդն ընկնում է իմվե (<ես) բացառական հոլովա-  
ձևում, որ վկայված է Անիում. Արուղամբենց տաճարի ն2Թ (1040)  
թ. շինարարական արձանագրության մեջ. «Թէպէտ եւ անտես էի  
ի հարէ իմէ յաղագս կրսերութեան» (Դ I 33): Այստեղ, ինչպես  
և կրկնակ բաղաձայններ ունեցող այլ բնագրերում, բաղաձայննե-  
րից մեկի սղումը կարող է արտասանության արտացոլումը չի-  
նել, այլ Ժ—ԺԳ դարերի վիճազրերում գործող այն օրինաչափու-  
թյան արտահայտությունը, ըստ որի տեղի և ջանքի խնայողու-  
թյան նպատակով նույն դիրք կամ վանկը տառաշարքում կարող  
է կարգացվել երկու անգամ կամ ծառայել երկու եզրերի համար:  
Այս կարգի բաղձաթիվ օրինակներից մեջ ենք բերում երկուսը.  
Արուճի տաճարի ն12 (987) թ. վիճազրում փոքրագրված է. «էթն  
որ իմ վճռիս դիմադարձ լինի նզովեալ իցի», ակնհայտ է, որ նզու-  
վեալ դերբայի վերջնահանգ լ-ն ծառայում է նաև լիցի բային,  
այսինքն ընդհանուր է երկու եզրերի համար: Ն. Գետաշենի հու-  
շարձանի մի արտոնագրում պարզ կարգացվում է. «Յաշխարհա-



կառնութի Ապաղանին», որտեղ դա վանկը ծառայում է երկու եղ-  
բերի համար (Ապաղա դանին) և պետք է կարդալ երկու անգամ,  
բայտ այսամ հիշյալ հատվածը պետք է վերծանել՝ «Յաշխարհակա-  
լութի Ապաղա դանին (ՉԻԴ ՄՎ):

Մ-ն ընկնում է մի բանի բառերում այնպիսի դիրքերում, որ  
հազիվ թե հնարավոր լինի որևէ օրինաչափություն սահմանել-  
նույն Արուճի տաճարի ՉԻԴ թ. նվիրագրության մեջ Զարարյան-  
ների Մխարգրձել վրացական անունը (=Նրկայնարազուկ) փորա-  
գրված է Խաբլրձեալ. «ի պարոնութենն սպալար Խաբլրձեալին»  
(ՄՎ): Հազրատի վանքի հնագույն շինարարական արձանագրու-  
թյան մեջ Սմբատ թագավորի անունը փորագրված է առանց մ  
ձայնորդի՝ Սիրատ. «շինեցար զեկեղեցիս փրկութեան Սիրատա և  
Գուրգենա» (Նե ԿՂԶԹ 141—142): Այստեղ բացատրվում է փորա-  
գրողի պատահական վրիպումը, բանի որ նույն անունը առանց մ  
ձայնորդի հանդիպում է նաև Արցախի Մեծարանց վանքի ավելի  
ուշ շրջանի (ԺԳ) նվիրագրում. «Ես՝ Սպատ որդի Հեջրին, տվի  
էդատեղ»<sup>14</sup>, ինչպես նաև հայերեն հնագույն ամբողջական ձևա-  
գրի՝ Լազարյան ձևարանի 887 թ. ավետարանի հիշատակարա-  
նում. «գրեցաւ սուրբ և կենսարբ աւետարանս այս 312 թու-  
ականութեան հայոց... ի տերութեանն Սրատայ Թագրատունույ»<sup>15</sup>:

Բամբակ բառը Ամբերդի եկեղեցու և Հոփսիմեի տաճարի  
արձանագրություններում բոլոր դեպքերում փորագրված է մ-ի  
անկումով՝ բարակ, որ ապացույց է, թե բառը հենց այդպես էլ  
արտասանվել է: Ամբերդում՝ «ամին նշե...ի Քաղքողաշտի բա-  
րակն: Ժ: լիար»<sup>16</sup>, Հոփսիմեի վանքում՝ «...թողար զՀոփսիմուցս  
գրարակին շարիատն և զՀահնաին բարակի հակն»<sup>17</sup>: Հ. Աճառ-  
յանը բառիս ծագումը հանում է պ՛կ. pambak ձևից, որի բա-  
ռասկզբի ք-ն բառամիջի ք=ք-ի առնմանությամբ հայերենում  
դարձել է ք՝ բամբակ և այս ձևով ավանդված է հին մատենագր-  
րության մեջ: Այլևայլ հնչյունական փոփոխություններով բամբակ

14 Խ. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Քանասեր»,  
1901, էջ 145:

15 «Աւետարան բայ թարգմանութեան նախնեաց մերոց», էջ 229:

16 Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի արձանագրությունները, «էջմիածին»,  
1961, № 5, էջ 50—51:

17 Գ. Հովսեփյան, Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրություն, «Ա-  
րարատ» 1898, էջ 442, Կ. Բաումաշյան, Հայոց հին զեղարվեստի վարպետները,  
Փարիզ, 1926, էջ 61:



բառը պահպանվել է բոլոր հայ բարբառներում՝ բամբակ, բամբազ, փամբազ, պամբակ, բիմբակ, բանբակ, որ դիտվում է նաև պրս. panba ձևում և հավանաբար արդյունք է հաջորդ ք ձայնեղ պայթեցմանի տարեմանության<sup>18</sup>: Սակայն հիշյալ դեպքերից և ոչ մեկում բառս չի հանդիպում առանց մ-ի՝ բարբակ:

Ն ձայնորդի կորուստը դիտվում է հետևյալ բառերում. ա. Կրկնակ ն ունեցող ննջեցելոց բառում. «...վասն յիշատակի նջեցելոց իւրոց» (Շխմուրատ ԺԲ գ. ՄՎ), «ՎՄ նջեցելոց մերոց» (Մակարավանք ԺԳ ՄՎ): Ինչպես արդեն նշել ենք, նջեցելոց բառում ն-ն կարող է կրկնակի հնչյունի նշանակություն ունենալ և ըստ այդմ բառս արտասանվել է ննջեցելոց և երկրորդ ն-ի սղուժը տեղի խնայողության արտահայտություն է, քանի որ այլ արձանագրություններում նույն բառը փորագրված է կանոնավոր՝ ննջեցելոց (Ամբերգում Վաչէի արտոնագրում՝ «մեր ննջեցելոցս» (ՈԿԵ ՄՎ), նորագրում՝ «ամենայն ննջեցելոց»—ԺԳ ՄՎ):

բ. Հին հայերենի առնույ բայի սահմ. եղանակի ներկա ժամանակի եղ. III դեմքի կանոնավոր ձևը՝ առնու մի շարք դեպքերում փորագրված է առու, այսպես, «զՀաղրն յիտ առու» (Հաղբատ ՈԾԲ ԿՂՀԲ 169), «էթէ որ հետ մեր յանդզնի եւ առու» (Ալաման ԺԱ ՍԱԲ 194), «զհողն անշար, ով շար առու մեր մեղացն տր է» (Մեծարանց ՈՂ)<sup>19</sup>, «ով խլէ ակաւս մի կամ ի բահավարէ շարետ առու, դատապարտի» (Ավան ՈԿԸ ԿՂԱ 18)<sup>20</sup>: գ. Կանգնեմ բայի անց. կատարյալ ժամանակի դիմավոր ձևերը՝ կանգնեցի, կանգնեցաւ, որ հատկապես խաշարձանների հիշատակությունների նախադասության ստորոգյալը կազմելով, հաճախ է զործածվել, փորագրված է առանց բառամիջի առաջին կամ երկրորդ ն ձայնորդի, իսկ երբեմն իսպառ զանց առնելով ն-երը:

Ահա օրինակներ կանգնեմ բայի մեջ առաջին ն-ի անկման. հնագույնը Գառնիում, Կատրանիդեի ՅԻԸ (879) Թ. խաշբարի արձանագրության մեջ է. «որ կազնել զսուրբ խաշ<sup>21</sup>, ապա Տեկորի

18 Հ. Անադյան, Արմ. բառարան, Ա, էջ 929:

19 Խ. Դադյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր» 1901, էջ 142:

20 Բնագրի վերլուծականում վերծանող Կ. Ղաֆադարյանը բանավար բառը «հասարակական տերմին» համարելով, բացատրում է՝ բանով վարող: Մեր կարծիքով այս արտոնագրում խոսքը բանով վարվող, մշակվող հողերի մասին է, ըստ այսմ, վերացվել է այգիներից, բանջարանոցներից, մի խոսքով բանավար հողամասերից անվող հարկը՝ շաբխար և ոչ թե բանով վարողից գանձվող տուրքը:

21 Б. Аракелян, Гарни, стр. 84.



խաշքարի հիշատակագրութեան մեջ՝ «կազնեցի զխաշս յայս» (ՆժԳ ԿՂՀԳ 88), Սարիղամիշի խաշքարի վրա. «ես՝ Գորգ կակնեց խաշս» (ՆԽԱ ԿՂՀԳ 88): Այնուհետև ժԲ—ժԳ դարերի վիմագրերում և-ի անկման դեպքերը ավելի են հաճախանում. «ես՝ Հոդեղեղ կազնեցի զխաշս» (Շնհեր ԶԷ Գ II 57), «կազնեցալ զխաշս» (Խոտ Գ II 60), «քստացա կազնել զխաշս» (Գաստակերտ ԶԿԹ Գ II 128), «կակնեցալ խաշս» (Սոյլան ՈՂԱ Գ III 23), «կազնեցալ խաշս Բագրատա» (Ազարակաձոր ԶԾ Գ III 26), «կազնեցալ ի փրկութե Մահեան իշխանի» (Ամաղու ԶԻԶ Գ III 242), «կակնեցալ սր նշանս» (Կարմրավոր ՈՂԳ ՄՎ), «կակնեցի զխաշս (Աշտարակ ԶԳ ՄՎ):

Նույն բայաձևերում երկրորդ և-ի անկման օրինակներ. հրնագույնը Գնդեվանքի խաշքարի հիշատակագրում. «հայր Սուփան կանգող սուրբ նշանիս» (3ԶԶ Գ III 15), ապա Ճամբարակի խաշքարի տապանագրում՝ «կանգեցի խաշս սուր Գրգոր» (ՆՀՆ ՄՎ): Այնուհետև ժԲ—ժԳ դարերի բազմաթիվ վիմագրերում. «ես՝ Ամիրբեկս կանկեցի զխէշս» (Սիսիան ԶԾԶ Գ II 91), «կանգեցալ ուրախ նշանս» (Աղավնաձոր ՈՆԸ Գ III 35), «կանկեցի խաշս» (Կուրթան ՈՂԵ ՄՎ), «ես՝ Գրգոր կանկեցի զխաշս» (Ալայաղ ՈՂԶ Գ III 114), «կանկեցալ զխաշս» (Լոր ԶԶ Գ II 107), «Ի թվ Չե կանկեցալ» (Աշտարակ ՄՎ), «կանկեցի սր նշանս» (Սաղմոսավանք ժԳ ՄՎ):

Օձունի տաճարի ՈՂԳ Բ. տապանագրում նույն բայաձևը փորագրված է առանց և-երի կամ հապավման նշանի. «ես՝ Ածատուր կակեցի զխաշս» (ՄՎ):

Կանգնեմ բայի դիմավոր ձևերի գրութեան այս օրինակները չեն կարող փորագրողի կամ բնագիր կազմողի պատահական սրխալագրութիւն կամ հապավում համարվել, քանի որ հիշված դեպքերում բննվող տառաշարքերը փորագրված են առանց հապավման նշան-գծիկի, իսկ պատահական սխալներն էլ բացառվում են եղած վկայութիւնների մեծ թվով, որտեղ նման գրութիւնը դերակշռող է: Անտարակույս է, որ հիշյալ բայաձևերը արտասանվել են այնպես, ինչպես փորագրված են:

դ. Ն ձայնորդն բնկնում է նաև մի քանի այլ բաներում և անձնանուններում, որոնցում գծվար է օրինաչափութիւն նկատել. Շիրվանշահ > Շրվանշահ > Շրվաշահ. «Կանգեցալ զխաշս եզբար իմ Շրվաշահի» (Խոտ ԶԱԱ Գ II 60): Տիկնաց > Տիկաց, «նՂԱ թվ Լս՝ Տիկաց աիկին» (Տեկոր ՍԱՐ 207). այս վկայութիւնն ան-



ստուգելի է, կասկածելի և թերևս սխալ ընդօրինակության արդյունք: Կանանց > կանաց. «որք անյիշատակ վախճանեալ են յաշխարհի արանց. կանաց, ծերոց» (Հոգեվանք ԺԳ ՄՎ):

Բ ձայնորդ հնչյունը բառամիջում ընկնում է հ, շ, ս բաղաձայններից առաջ հետևյալ բառերում. արհնեմ > արհնեմ > օհնեմ. «— Բսկ առնելին արհնեմ է» (Յաղաց քար ՆՁԸ Դ III 146), «կատարողքն արհին» (Սանահին Զե ԿՂՍ 139), «կատարիչքն օհին» (նա Պե ԿՂՍ 152), «... արհնեցի զեկեղեցիս» (Բաղնայր ՇՂԴ ԲԱՍ 147), «... հաստատուն պահողն արհին» (Հավուց թառ ԺԳ Հով. ՀԹ 26), «կատարիչքն արհնիք» (նա 28): Բ-ն չի փոքրագրված շնորհաւոր տառաշարքում՝ և նրանից կազմված անձնանունների մեջ այս բնագրերում. «ած շնհաւոր անէ» (Քանաքեռ ԶԺԵ ՄՎ), «ած շնհաւոր արասցէ» (Մրեն ԶԶԵ Դ I VI), «Գրիգորէս եւ կին իւր Շնհվոր» (Վերնաշեն ԺԳ Դ III 98), «կազմեցաւ ձեռամբ Շնհաւորիս» (Մարտիրոս ԶԼԲ Դ III 183), «Մխիթար, Շնհոր աղբար քարագործ յիշեցէք» (Գոմուր ԶԺԲ Դ III 193), «Ես՝ Շնհաւոր տփի յձ: զեկան» (Ամադու ԺԳ Դ III 217), «Ես Շնհաւոր տփեկցի» (Հաղբատ ԶԺ ԿՂԶԲ 168), «Այս է հանգիստ պարուն Շնհվորին» (Ավան ԶԿ ՄՎ), «:Ա: իմ հարն Շնհվորին» (նա ԶԿԲ ՄՎ), «զՇնհաւորիկ քարագործ յիշեցէք» (Մարմաշեն ԺԲ ՕրԾ ՈՒՏ 448), «ի բարեխաւս Շնհաւորին» (Վարդենիկ ԶԼԸ ՄՎ): ձա-նապարհ > նանապահ, «զեկաւորս նանապահաց» (Անի ՈԽԹ Դ I 47): Արշակ > Աշակ, 'նկատվում էր զեռև հնագույն վիմական արձանագրություններում. օրինակ, Միսիանի տաճարի է դարի մի հիշատակագրության մեջ կարգացվում է՝ «Յիշեայ Աշակի» (Դ II 87), որտեղ անձնանունը, անշուշտ, Արշակ է: «Ես՝ Վարդառոյծս եւ Աշակ» (Բաղնայր ԺԳ ԲԱՍ 158), «:Գ: Վարդառոյծին, :Գ: Աշակա» (նա): Արշակունի > Աշակունի, «Ի տանէ Աշակունեց» (Սանահին ԺԱ գ. ԿՂՍ 97), «Յազգէ Աշակունեաց» (նա ՇԺ ԿՂՍ 147): Արշարունեաց > Աշարունեաց, զուգահեռ գործածությունը գալիս է զեռևս է դարից: Քալիմում Կամսարականների տաճարի շինարարական արձանագրության մեջ՝ «Ես՝ ներսեհ ապոհիպատ պատրիկ Շիրակայ եւ Աշարունեաց աէք» (ՕրԾՈՒՏ 434), հետագա դարերի վիմագրերում ալիլի կանոնավոր է համարվում առանց ք ձայնորդի գրությունը. «ան Սահակա Աշարունեաց եպիսկոպոսի» (Մրեն Ժ գ. ՕրԾՈՒՏ 5), «Ես ար Անանիա Աշարունեաց եւ ձակատոց եւ Արայրատեան գաւառի եպիսկոպոս» (Հոռոմոս Զ ՍԱԲ 156): Գուր (ս) > զուս, այս բառը զուսն արմատի երկրորդ ձևն



է, որ հին հայերենում գործածվում էր միայն անկարար՝ դուրհ, դրաց, դուրս՝ ի դուրս, արտաքս իմաստով: Այս արմատաձևերից կաղմված բառերում՝ դրանդ, դրացի, դրակից ր ձայնորդի կորստի գեպքեր չեն նկատվում: Այս երևույթը դիտվում է մի քանի բարբառներում, որանդ դուրս-ի փոխարեն ունենք՝ դուս, ալուս, քուս, դոյս, տիւս և այլն<sup>22</sup>: Նույն փոփոխությունը երևում է նաև միջին դարերի վիմագրութեան մեջ հետևյալ օրինակներում. «Եւ յիմ մտաց դուս, առանց վարդպետի ձևեցի ու հիմն ձգեցի» (Մրեն ԶԻԵ ՕրծԻԿ 10), «յիմ տապանատանէն ի դուս եկի» (Բարձրաբաշ ՈՂէ ՄՎ), «տուար զՓնտկի տափն, որչաք ջուրն ի դուս գա» (Սաղմոսավանք ԺԳ ՄՎ), «եթէ որ եկեղեցոյս... ջուր ի դուս տա, նդոված է» (Հովհաննավանք ԺԳ ԿՂՀ 96): Նուրսի > նուսի. իգական անձնանունը Հ. Աճառյանի ստուգարանությամբ բաղադրված է արար. ուր = լույս և սիւ = տիկին. արմատներից, Լույս-տիկին իմաստով<sup>23</sup>: Միջին դարերի ձևագրերի հիշատակարաններում և վիմագրերում ավանդված է կանոնավոր ձևով, բայց նաև առանց ր ձայնորդի՝ նուսի: Հաղբատի վանքի մեծ գավթի տապանաքարերից մեկի վրա փորագրված է՝ նուսի (< նուսի) (ԺԳ դ. ԿՂՀԲ 190), իսկ Ն. Վարագի գլխ. եկեղեցու մի նվիրագրում՝ անձնանվան տրական հոլովաձևը՝ նուսարէ (ԺԲ ՄՎ):

Բ ձայնորդն ընկնում է ջ, և կիսաշփականներից առաջ. նարչիս > նրնիս > ննիս իգ. անձնանվան մեջ, որ ըստ Աճառյանի ծագում է արար. narjis ծաղկի անունից<sup>24</sup>: Զարարիա և Իվանն իշխանների բրոշ անունն է, որ ԺԳ դարասկզբի վիմագրերում քանիցս հիշատակվում է նրչիս ձևով. «դատերն նրչսին» (Հառիճ ՈԶԳ ՄՎ)<sup>25</sup>, Սանահնի գրատան նախագավթի տապանաքարերից մեկի վրա՝ «Ճղնաւորն պատրոն նրչիսն է» (ԺԳ ԿՂՍ 171): Նույն անունը հանդիպում է նաև առանց ր ձայնորդի. «ած ողորմի նշիսին» (Ալայազ ԺԳ Գ III 113), «ՍԳՍ քճ ևւ բոյր մեր ննիս կանգնեցար զիսաչս» (Մրեն ԺԳ ՍԱԲ 199): «Այլ փոքր աշխատեցայ ու ըզկամունջն (< կամուրջ) շինեցի» (Աստղածոր ԶԼԾ ՄՎ):

Բ բաղաձայնի անկման երևույթը տեղի է ունենում միայն վիմական արձանագրություններից հայտնի արարերենից փոխառ-

22 Հ. Աճառյան, Արմ. բառարան, Բ, էջ 606:

23 Հ. Աճառյան, Անձն. բառարան, Գ, էջ 97:

24 Նույն տեղում, էջ 99:

25 «Բազմավեպ», 1957, № 11—12, էջ 270:



յալ արմատով և հայ. անոց ածանցով կաղմված ասարանոց = ան-  
 քահանա քառի հնչյունափոխված տարբերակներում. «Ան գնեցի ի  
 վաղատնոյ զասրնոցին : Ը: բաժնէ դմինն» (վաղադնի վանք ԺԳ  
 Դ II 104): Այլ բնագրերում և արդի մի քանի խոսվածքներում՝  
 ասարնոց (Հերհեր ՉՄէ: Դ III 52), սրանոց ձևերով, այսինքն մի-  
 ջինն հայերենի հնչյունափոխության օրենքների ազդեցությամբ  
 սղվել են նախաշեշտ ա-երից մեկը կամ երկուսը (ասարանոց > ա-  
 սարնոց > սրանոց): Առանց ր տառաձևի է փոքրագրված Ժ—ԺԴ դա-  
 րերի վիճական արձանագրություններում նաև ջրաղաց > ջաղաց  
 բառը: Զրաղացը միջնադարի նվիրագրերում հաճախ հիշատակ-  
 վող ձևնարկություն է և ջաղաց գրությունը արտացոլում է բա-  
 ուի արտասանության վիճակը այդ դարերում: Մատենագրության  
 մեջ ջրաղաց-ի վկայությունը ԺԲ դարից է. նույնիսկ Մխիթար Գո-  
 շի Դատաստանագրքում բառս անհնչյունափոխ է՝ ջրաղաց («ջրա-  
 ղաց եւ տուն, յաղագս դատաստանաց ջրաղացաց, զհար ջրաղա-  
 ցին» և այլն): Վիճական բնագրերում ջաղաց-ի հնագույն հիշա-  
 տակությունը Ժ դարից է, Կոշի տաճարի նկ (981) Թ. արձանա-  
 գրության մեջ. «երես Աշոտ յԱվանէ զջաղացսն» (ՄՎ)<sup>26</sup>: Զրա-  
 ղաց > ջաղաց փոփոխությունը լեզվաբան Վ. Առաքելյանը դասում  
 է արտակարգ հնչյունափոխության երևույթների շարքին, երբ ար-  
 տասանության դյուրացման և արտասանվածքի կրճատման նպա-  
 տակով ամբողջ վանկեր, բառամասեր են բաց թողնվում կամ նա-  
 խադասության մի քանի անդամներ մի բառով են արտահայտ-  
 վում (հմմտ. ջրհորդան > ջորդան, ես ինչ իմանամ > եսիմ և այ-  
 լըն)<sup>27</sup>: Այստեղ մեջ ենք բերում ջաղաց-ի մի քանի վկայություն-

26 Գիտական գրականության մեջ ջրաղաց > ջաղաց բառի հնագույն վկայու-  
 թյունը համարվել է Մաղարթավանքի ականակուռ խաչի արձանագրությունը («...  
 ետու Շամրա ջղցներն, երասխի եան, Ատպաու հողն սր նախվիրն...»), որի  
 թվականն է ՆԺԵ (966) Թ. (Տե՛ս Թ. Ավղայրեզյան, Հայ շինականի ու զեղջկուհու  
 աշխատավարձը հինգերորդ դարում, «Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտության և արվեստի  
 ինստիտուտի 1927, № 2, էջ 69, Ն. Անադյան, Արժ. բառարան, Զ. էջ 1245, Ն.  
 Շանխարունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 307), Սակայն Կ. Բասմաճյանը հա-  
 մոզիչ ապացուցեց, որ այդ արձանագրությունը հնագրական ու ժամանակագրա-  
 կան մի շարք անհամաձայնությունների պատճառով (օ տառաձևի գրությունը,  
 Աշոտ թագավորի սխալ ծննդաբանությունը և այլն) չի կարելի վավերական հա-  
 մարել և հավանաբար հետագա ժամանակների դորձ է, ուստի և նրանում հիշա-  
 տակված ջղցներն բառի վկայությունը հաղիվ թե հնարավոր լինի վերագրել հիշ-  
 յալ ժամանակաշրջանին (մանրամասնությունները տե՛ս Կ. Բասմաճյան, Մեր հը-  
 նությունները, «Բանասեր» Փարիզ, 1902, էջ 97—98, Գ. Հովսեփյան, Հիշատա-  
 կարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 421):

27 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ 150:  
 339



ները տարրեր ժամանակների և հուշարձանների վիժմական արձանագրութուններից. «շինեցի զշաղացս և արարի ազատաղաց» (Հաղթատ ՇԼԵ ԿՂՀԲ 263), «...և Գ շաղաց ի Գողոս» (Մարմաշեն նկ ՕրճՆԻՏ 442), «շինեցի ակն մի շաղաց (նտ ժԱ ՕրճՆԻՏ 447), «և շաղաց մի Մրենի» (Բաղարան ՆԶԳ ՍԱՐ 203), «ի շաղացէն Համգնո, և շաղաց մի» (Ն. Վարագ ՈՆԷ ՄՎ), «և տու :Գ: ակն շաղաց» (Բաղնայր ՈԶԳ ԲԱՍ 169), «գնեցաք Շուբերեսին շաղացբազն» (Բաղարան ժԳ ՍԱՐ 204), «գնեցի զշաղացն» (Մորո ձորո վանք ժԲ ՄՎ), «մայրիւք և շաղացովք» (Հաղթատ ԿՂՀԲ ՈՍԲ 169), «շաղանիս (<շաղացանի) աւեր և զրաւական էր... և շաղացն թափեցի» (Հոռոմոս Զ ՍԱՐ 156), «թողաք զխարաճ շաղաց (Շիրակավան ՈԶ ՍԱՐ 171), «քակեցի զշաղացն» (Հոռոմոս ՈԿԶ ՍԱՐ 152), «...էտու... ակն մի շաղաց» (Անի ժԳ Դ I 58), «հող դրան շաղացին» (Թանատ ժԳ Դ I 86): Վիժմագրերում գործածվում է նաև կանոնավոր, անհնչյունափոխ՝ ջրաղաց. «տվաք զԱւագական ջրաղացն» (Թանատ ժԳ Դ III 80): Բ-ն ընկել է ուլդուր. փոխառյալ օրտակ, ւրտակ-ընկերակից, առարի գործակից բառում, որ վանստանի ժԳ Դ. նվիրագրում վկայված է արախ < արբախ. «Ես՝ արբախ Յովանէս միարանեցա»<sup>28</sup>:

Բ ձայնորդի անկումը դիտվում է հին հայերենի առնեմ (ա-նեմ, գործեմ, կատարեմ, ստեղծեմ) բայի դիմավոր ձևում, որ հաճախ հիշատակվում է այրենեմ > այնեմ > անեմ: Փոփոխութիւնը սկսվել է և ձայնորդի քմայնացումով և Ե-ի վերածվելով (առնեմ > այրենեմ), իսկ հետագայում յ, Ե հնչյունների անկումով առաջանում է անել: Միջին հայերենի գրական երկերում այնել-անել բայաձևերը ավելի լայն տարածում ունեն, քան գրաբարի առնեմ (արարի):

Վիժմական բնագրերում միայն մի քանի օրինակներ են վրկայված, որ աղացուլց է երևույթի հաղիվ սաղմնավորման. «ով շանէ նզովի... որ շանէ դատի ի տէ» (Հովհաննավանք ժԳ ԿՂՀ 85, 87), «տարին յայտնութեան :Ը: արացն անեմ» (Մարինե ԶԿԱ ՄՎ), «որչափ կենդանի ևմ իմ հարն անեմ, երբ մեռանիմ ինձ անեմ... որ Գրիգորի տուն անեմ զժամն» (Մեծարանց վանք)<sup>29</sup>, «...ամ շնորհաւոր անէ» (Ալայազ ԶԲԳ Դ III 115), «ով դաւի անէ:

<sup>28</sup> Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրութունները, ժողովածու:

<sup>29</sup> Խ. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրութունները, «Բանասեր» Փարիզ, 1901, էջ 135—145:



ՅԺԸ: ից նզոված է» (Քանարեո ՉԺԵ ՄՎ), «անխափան անեն» (Հայրավանք ԺԲ ՄՎ): Բ-ն ընկնում է երկրորդ թվականում Սյու- նի վանքի Ժ—ԺԱ դդ. մի-րնագրում. «եկրորդ շարաթին հինգշա- րաթ ար (Դ II 90)

Բ ձայնեղ պայթական հնչյունի անկումը դիտվում է ա. Հին հայերենի ան, եան հոլովման բառերի գործիական հոլովածուում, որ արձանագրություններում երբեմն փոքրագրված է առանց ր հո- լովականադմիչի՝ արղեամբֆ > արղեամֆ: Հնագույն վկայությունը Ա- նիի բնագրերից մեկում. «զարդարեցի ոսկոով եւ արծաթով եւ ակամֆ (<ակամբֆ) պատուականաբ» (Անի նՁԵ Դ I 44), այ- նուհետե ԺԳ դ. մի շարք բնագրերում. «աւետարան ոսկով եւ մարգարտով եւ ակամֆ» (Բարձրաբաշ ՈՂԴ ՄՎ), «զեկեղնցին այլ մենք շինեցաք մեր հալալ արղեամֆ» (Գոմուր ՉԺՁ Դ III 192), «որ նորա հալալ արղեամֆ շինեցաւ» (Ամաղու ԺԳ Դ III 212), «շինե- ցաւ սբ եկեղեցիս արղեամֆ Խաթունին» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 270), «արղեամֆ դստերն իւրո Վանենէ» (Սանահին ԺԳ ԿՂՍ 134), «մի- արանեցայ հալալ ընչիք եւ հանապաղ արղեամֆ» (Մակարավանք ԺԳ ՄՎ), «աւղնական եղէ արղեամֆ ի վարձն» (նտ ԺԲ ՄՎ), «շի- նեցի զմատուռնս արղեամֆ իմով» (Բարձրաբաշ ԺԳ ՄՎ), «միա- բանեցա... իմ հալալ արղեամֆ» (Առաքելոց ԺԳ ՄՎ), «...զարդարե- ցի խաղիւք եւ մասամֆ» (<մասամբֆ) (Բարձրաբաշ ՈՂ)<sup>30</sup>: «Մաղ- կեալ միրուաք եւ զուարթալի տեսեամ» (<տեսեամբֆ) (Վար- դենիկ ՉՄԴ ՍՍ):

Գործիական հոլովի ր հոլովականադմիչի անկման հնագույն օ- րինակներ են ավանդված Լազարյան ճեմարանի 312 (887) թ. ա- վետարանում. արղեամֆ (<արղեամբֆ), ողջամ (<ողջամբֆ), մա- տամն (<մատամբն), քաւամֆ, եղեզամ (<եղեզամբֆ) և այլն: Միջին հայերենի գրական երկերում ևս նկատվում են ր հոլովա- կադմիչի անկման դեպքեր, հավանաբար նրա ձևաբանական նը- շանակությունը մթազնելու և այդ իմաստը նախորդ մ-ին (<ն) անցնելու հեռանքով: Այսպես, Մխ. Հերացու բժշկարանում վը- կայված են՝ քաւամֆ (<քաւամբֆ), երկամֆ (<երկամբֆ), սիս- ուամ (<սիսուամբֆ) և այլն: Վիմական բնագրերում նույն երևույ- թի արտահայտությունները կարող էին թափանցել միջին հայե- րենից, քանի որ հայ բարբառներում ր հոլովականադմիչը գործածու-

30 Գ. Սարգսյան. «Բարձրաբաշ» վանքը և նրա վիճագրությունը. «էջմիածին» № 9—10, էջ 45, № 11—12, էջ 49:



թյուն շունի: Մյուս կողմից, ր-ի անկման հետևանքով առաջանում է կիլիկյան միջին հայերենի գործիական հոլովի նոր վերջավորություն՝ ամ (= օմ), ամբ > ամ > ամ > օմ ընթացքով (կարն > կարամ-կարօմ, մատն-մատամ-մատօմ և այլն)<sup>31</sup>: ր. Բ բաղաձայնը ընկնում է Արլղարիբ անձնանունից կաղմված Ալխարիպաշինի (<Արլղարիբաշէն) տեղանվան մեջ, որ վկայված է Պեմզաշենի խաչարձանի նՁԵ (1036) Թ. հիշատակագրության մեջ, մի շարք նվերների թվում. «...և զայգին Բաղորձի, և զայգին Ալխարիպաշինի» (Պեմզաշեն նՁԵ)<sup>32</sup>:

Դ ձայնեղ հնչյունը մյուս բաղաձայնների նման ընկնում է կրկնակի գրության դեպքերում. րնղղեմ > րնղեմ, «մռննչէր րնղեմ այլասև զնղին» (Ամաղու Չեթ Դ III 237), «շիշխէ որ հրամանացս րնղիմանալ, տղա թէ որ րնղիմանալ... նղովեալ եղիցին» (Քրիստափորի վանք նՔ ՄՎ): Ինչպես վերևում այլ առիթով նշել ենք, գրության մեջ կրկնակի դ-երից մեկի բացթողումը կարող է շհամապատասխանել այդպիսի արտասանությանը, այլ տեղի ունենալ խնայողության նպատակով, ըստ այդմ բառը արտաբերվում է կրկնակի դ-երով՝ րնղղեմ, սակայն գրվում է րնղեմ, որտեղ դ-ն կրկնակի է հասկացվում, ինչպես երկու եղրերի համար ընդհանուր միևնույն տառածևի դեպքում: Առանց դ տառածևի է փորագրված նաալսարդ բառը Թանատի վանքի մի նվիրագրում. «սահմանեցին Վ: աւր ժամ նաալսարին» (Դ III 84): Դ ձայնեղի կորուստը այս դեպքում կարող է և այդպիսի արտասանության արտացոլումը շինել, այլ փորագրողի բաց թողման հետևանք: Այլ օրինակներ շունենալով, դժվար է ստուգապես դատել հնչյունափոխական այս երևույթի մասին: Նույնը չի կարելի ասել վարդապետ > վարդպետ > վարպետ բառի մեջ տեղի ունեցած դ հնչյունի անկման մասին, որի հետևանքով իմաստային տարբերություն է առաջացել այդ ձևերի միջև:

Տ խուլ պայթական հնչյունը համապատասխան ձայնեղ դ-ի նման ընկնում է կրկնակ գրության դեպքում կամ տք նույն շարքի հնչյունախմբում. վատքար > վարքար, «թէ լաւ և թէ վարքար իրիցակին վախճանի» (Անի ՈԿԲ Դ I 17): Մաարէոս > Մարէոս, այս փոփոխությունը նկատելի է նաև հնագույն արձանագրություններում:

<sup>31</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 162—163, «Աւետարան...», էջ Թ., Ս. Ազգարյան, Միջին հայերեն, էջ 258—259:

<sup>32</sup> Ա. Մանուչարյան, նշվ. հոդվածը, էջ 88:



Այսպես, Ավանի հին տաճարի հյուսիսային պատին հավանաբար կառուցման ժամանակ՝ Ե—Զ դարում փորագրել են՝ Մարեոս (ԿՂԱ 16), Սյունի վանքի գմբեթի բարձրաքանդակների տակ պահպանված ավետարանիչների անունները, որ անշուշտ փորագրվել են տաճարի շինության ընթացքում, է դարում՝ Յովհաննէս, Մաքրէոս, տառադարձված են՝ Յովանէս, Մարէոս, այսինքն այնպես, ինչպես ժամանակին տվյալ ոլորտում արտասանվել են այդ անձնանունները (Գ II 87): Նույն գրությամբ է փորագրված Խոսրովանուշ թագուհու նշ՛ Թ. արձանագրության վերջում հիշատակված քանդակող գրչի անունը՝ ես գրեցի Մաքրէոս միայնկաեցս Տարանէցիս<sup>33</sup>, կամ Մարտիրոս գյուղից երկու կմ. հր-արևելք վիճափոր եկեղեցիների մոտ կանգնեցված խաչքարի հիշատակագրութան մեջ. «ես՝ Մաքրէոս կանգնեցի զնշանս» (ԶԻԳ Գ III 179): Տ բաղաձայնը ընկնում է ստ, տս հնչյունակապակցություններում. կրսսեր > կրսեր, «թէպէտ եւ անտես էի ի հարէ իմէ յազագս կրսերուրեան» (Անի նՁԲ Գ I 33), «ես՝ Խաթուն զուս Խալաշի» (Թանատ ԺԳ Գ III 75): Միակ օրինակը լինելով զուս (< զուստ) արտասանությունը և գրությունը կասկածելի է, կարող է փորագրողի վրիպում լինել, քանի որ քննվող ժամանակների արձանագրություններում և միջին հայերենում ավելի օրինաչափ կըլիներ հակառակ փոփոխությունը, այսինքն սր > ստ (հմմտ. Խոսրով > Խոստրով):

Խ հտնակեղվային խուլ շփականը հին հայերենի կայուն բաղաձայններից է և հազվադեպ է փոխում իր հնչումը կամ ընկնում: Հնչյունափոխական միակ երևույթը, որ նկատվում է միջնադարի ձեռագրերում և միջին հայերենում, դ. խ հնչյունների շփոթման դեպքերն են, ավելի հաճախ դ ձայնեղի խլացման հետևանքով որոշ դիրքերում նրա խ հնչումը (Ղարիք > Խարիփ, անյաղք > անյախք և այլն): Ավելի սակավ նկատվում է նաև հակառակը՝ խ > դ վախճանի > վաղճանի, սխալանք > սղալանք<sup>34</sup>: Ժ—ԺԳ դարերի վիճական քնագրերում ևս խ բաղաձայնը անփոփոխ է մնում, կարելի է նշել այդ հնչյունի անկման միայն երկու օրինակ. սրախողխող > սրախողղղ, «մինչ հնգետասան ամեա էի սրախողղղ եղա» (Օշական ՈՀԱ Մվ): Խաղրակ > Ախրակ, «ես՝ Գրիգոր որդի

<sup>33</sup> Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրությունները (անտիպ ժողովածու):

<sup>34</sup> J. Karst, Historische Grammatik..., S. 69—70.



Ախրակա ազնեցի եկեղեցոյս» (Աղջոց վանք ՈԿԲ Հով ԽԱՂ III 65): Խաղրակ անձնանունը արձանագրութիւններում երբեմն հիշատակված է նաև Հաղրակ ձևով, սակայն տվյալ դեպքում ավելի հավանական է Խաղրակա վերականգնումը, բանի որ մերձակայքի այլ բնագրերում անունը ավանդված է այդ գրութեամբ:

Ղ. Եանալեղվային ձայնեղ շփականը բացի խլացումից (ղ>խ) այլ փոփոխութիւնների չի ենթարկվում: Վիմագրութեան մեջ նրկատվում է այդ հնչյունի կորստի երկու օրինակ. աւղորղ (<ուղորղ) >աւղորղ, վկայված է Տեկորի հնագույն տաճարի նՁԵ (1036) Բ. արձանագրութեան մեջ, Տեկորի և Ագարակի ջրօգտագործման կարգը սահմանող հրամանագրի վերջում. «Եւ դիտողքս նգովուք եւ երզնելով աւղորղն այս է» (ՍԱՐ 207): Այս բնագրի միակ վերծանութիւնը անստուգելի է, կասկածելի, սակայն ուղղորղ >ուղորղ >աւղորղ >ըղորղ >ղորղ բնթացքը դիտվում է նաև միջին հայերենում և արդի բարբառներում, ուստի այդպիսի արտասանութիւնը ԺԱ. դարում թվում է հավանական: Մյուս կողմից, վերը նշված Տեկորի տաճարի օրինակում ղ-ն կարող էր կրկին նշանակութիւն ունենալ՝ վիմագրութեան մեջ կրկնակի բաղաձայնների գրութեան օրենքով: Կողպակ >կոպակ, «Խաու դիմ դրամագին կոպակն յայս սր էկեղեցիս» (Բագավան ԺԳ ՕրճԻՏ 468), արդեն նշել ենք, որ այստեղ կարելի է՝ դիտել ոչ թե ղ հնչյունի կորուստ արտասանութեան մեջ, այլ նրա անտեսումը փորագրողի կողմից:

Հ հազագային բաղաձայնը արտասանվում է առանց խոսողական օրգանների մասնակցութեան, սոսկ օդի հոսանքի կամ շնչի արտաբերումով: Հնչյունի կազմավորման կամ արտասանութեան այս բնույթով են պայմանավորվում նրա կրած փոփոխութիւնները հայերենում: Հին հայերենի և հազագը մեր լեզվի դարգացման շրջաններում զգալի փոփոխութիւններ չի կրել և հիմնականում պահպանել է իր որակական հատկանիշները: Միակ փոփոխութիւնը, որ նկատվում է, և բաղաձայնով գրաբարյան բառերի արտասանութեան մեջ միջին հայերենում կամ արդի բարբառներում Ե ձայնորդին հաջորդող դիրքում նրա անկումն է. աշխաբեհ > աշխաբ > աշխաբ, շնորհ > շնորհ, աբհամաբեհ > աբհամաբեհ և այլն, կամ մի բանի բարբառներում և >խ անցումը՝ հաց > խաց, հայր > խէր, պահէզ > պախէզ, հիւզ > խիւզ, բահ > բախ, զբահ > զբախ և այլն: Ժ—ԺԳ դարերի վիմական արձանա-



գրություններում և բաղաձայնի անկման բաղմամբիվ վկայություններում կարելի է դիտել հետևյալ օրինաչափությունները.

Ա. Բառասկզբի և-ն մի շարք բառերում ձայնավորներին նախորդող դիրքում բնկնում է. Այս հնչյունակախության և քրեույթը կարող է տեղի. անենալ այն դեպքում, երբ և հազագի արտասանելու համար անհրաժեշտ կոկորդի շփման և հաջորդ ձայնավորի ձևավորման համար ձայնաշարերի թրթռալն սկսվելու միջև պահանջվող հաջորդականությունը խախտվում է, որի հետևանքով ձայնաշարերը ավելի շուտ են թրթռում, քան և շունչի արտաբերումը, այս դեպքում և-ն չի արտասանվում, բնկնում է: Վիճական բնագրերում բաղմամբիվ են բառասկզբում և-ի անկման դեպքերը և հնչյունակախության այս երևույթի արտահայտությունները գալիս են շատ հնուց: Նախնազույն օրինակը Բաղաձայնի տաճարի 639 Թ. նշանավոր շինարարական արձանագրության մեջ է, որտեղ Բյուզանդիայի կայսր Հերակլի (= Հերակղ) անունը նրկու անգամ փոխադրված է առանց և-ի՝ Երակղ. «Քսան եւ մի ամուտն ամապահ Երակղի թագաւորի...», նոյն Երակղի թագաւորի» (Բաղաձայն ՕրՃՄՏ 386): Հետագա դարերի վիճական բնագրերում բառասկզբի և-ի կորուստի օրինակները ավելի հաճախանում են. նշում ենք գրանցից առավել բնորոշները. հոգի > ոգի, «իմ ոգոյս եւ իմ ծնողաց» (Անի ԺԱ Գ I 12), «վասն մեղաց թողութեան եւ ոգոյ փրկութեան» (Բաղնայր ՆՂԱ ԲԱՍ 145), «ետու զիմ որդոյն զԱստիսամբի ոգեբաժին (Անի ԺԱ Գ I 32), «որ տուեալ է զոգորոշակ» (Անի ԺԱ Գ I 34): Հնձան > հրնձան > բնձան > բնձան բառի մեջ և նրանով բաղադրված այլ կազմություններում և-ի անկման փոփոխությունն այստեղ առաջանում է զազանավանկումը բաղաձայնի ներմուծումից հետո և այդ պատճառով մի շարք դեպքերում այդ արտասանվող բ-ն նաև փոխադրված է. «շինեցար վերստին զբնձանանի» (< հնձանանի) (Հոռոմոս ԶԷ ՍԱՐ 157), «տվի զվերի էզին իւր բնձանովն» (Բաղնայր ԶԺԱ ԲԱՍ 181), «այգին եւ զբնձանն» (Հառիճ ՈՄ ՏՎ), «տվար զմեր բնձանն» (Կարբի ԺԳ ՄՎ), «զիմ բնձանն ծախեցի» (Լմբատ Զ)<sup>35</sup>, «տուի... յԱկոսի զնձանադուռնն» (Ամադու ԺԳ Գ III 246), «ետու զիմ այգին, որ ի գեղի առաջի՝ բնձանաառով» (Սանահին ԶԼԸ ԿՂՍ 158): Հնձեմ > բնձեմ բայի գիմավոր ձևերում. հնազույն վկայությունը Բազրատ կատականի 1060 Թ. նշանավոր արտոնագրում. «եւ կատասպան ով եւ լինի, տա սերմ ռ: մոզ եւ ծախք զբնձելոյն

35 Հ. Եղիազարյան, Լմբատավանք, «Էջմիածին» 1960, № 2, էջ 57.



(Անի Դ I 37)<sup>36</sup>, «Յիմ խոտահարն յձ: բարդ խոտի տեղ, որ վանքըս բնձէ» (Բագնայր ԶԺԱ ԲԱՍ 181)<sup>37</sup>: Հովիտ > ուլիտ, հանդիպում է Բագնայրի մի խաթարված արձանագրության մեջ. «Ի Կառնովտի (<Կառննովիտ) եւ հողս ի Դարբեին նոյն տեղն» (ՆԶԴ ՍԱՐ 202):

Մի շարք անձնանունների սկզբի արմատական յ-ն, որ միջին հայերենում և վիմական արձանագրություններում Ժ—ԺԴ դարերում սկսել էր արտասանվել հ, բնկնում է՝ յ > զրո կամ յ > հ > զրո բնթացքով: Բազմաթիվ փաստերից մեջ ենք բերում տարբեր ժամանակների հուշարձանների բնագրերից մի քանիսը. հնագույնը Անիի պալատական եկեղեցու արձանագրում է, որտեղ գիտվում է՝ Յովսէփ > Ովսէփ > Ուսէփ, «Ես՝ Ուսէփ բացմամեղ ծառա այ» (Անի Ժ Դ I 9): Ուսէփ անձնանունը մատենագրական աղբյուրներում չի հանդիպում. Ուզուպ, Ուսէփ ձևերով վկայված է ուշ շրջանի ձեռագրերի հիշատակարաններում<sup>38</sup>: «Մնողաց իմաց Վարդա եւ Ովսեփա» (Թառաթումբ ԶԴ Դ III 168): Յովհաննէս > Ովանէս, «տուն իմաստից եւ հանճարոյ Աւրայէլ զՈվանէս» (Ամաղու ԶԶԴ Դ III 232), «այս այ հանգիստ Ովանիսի» (Մոզ ԶԵԴ Դ III 24), «Ես՝ Ովանէս կանգնեցի զխաչս» (Խոտ ԶՄԵ Դ II 61): Յովասափ > Ովասափ, «մեր՝ եղբարքս հարադատք Սարկաւազս եւ Ովասափ» (Հովհաննէսովանք ԺԳ ԿՂԶ 89), «կանգնողս Ովասաքս յիշէ» (Վարդենիկ ԶԼԹ ՄՎ): Յակոբ > Ակոբ, հնագույն վկայությունը Արծվանիկի եկեղեցու բնագրում է. «զԱկոբ էրէց» (ՆՂԴ Դ II 134), «Ակոբ կանկեցի խաչս» (Մարտիրոս ԶԶ Դ III 185), «Եւ էվանթուսն ին եւան Ակոբայ» (Մրեն ԶԿԹ ՄարրԻՄ 89, ՕրճՄ 4): Մոնղոլական իլիսան Հուլաղուսի անունը հիշատակված է նաև Ուլաուն ձևով «Ի ժամանակս տէրութե Ուլաուն զանին» (Հարություն Զ՛ն ՍԱՐ 269):

Ժ—ԺԴ դդ. նվիրատվական արձանագրություններում անեծքի ձևակերպման մեջ հաճախ հիշատակվող Յուղա ամետարանական անունը մեծ մասամբ փոխադրված է, ուրեմն և արտասանվել է առանց յ (հ) տառաձևի՝ Ուղայ, Ուղա, նաև նախդրավոր ձևերում.

36 Վ. Բեճեշիչը այս բառը թարգմանել է расходы на посев, որ վրիպում է, սկսոք էր՝ расходы на косьбу (Նշվ. աշխ, էջ 23):

37 Վերձանող Կ. Բասմաշյանը բնագծված բառը ժողովածուին կցված բառարանում (էջ 218) բացատրում է՝ բնձէ < բնձայ, բնձայ, որ անհարկը է վկայված իրադրությունը և ակնհայտ վրիպում:

38 Հ. Անաոյան, Անձն. բառարան, Գ էջ 722—723:



բաղմամբիվ օրինակներից նշում ենք մի քանիսը. հնագույնը Տեկո-  
րի տաճարի բնագրում. «բաժին նորա ընդ Ուղայի» (ՆԿԳ ՍԱՐ 207),  
«...և բաժին գուղախն» (Ամադու ԶԺ Դ III 218—219), «մասն գու-  
ղախ առնու» (Լոր ԶՂԴ Դ II 109), «մասն և բաժին գուղախն» (Վա-  
ղաղնի վանք ԶԶԵ Դ II 101), «մասն գուղային առցէ» (Մբեն Զ  
ՍԱՐ 198. ՕրՃՄ 7): նույն յ>հ> զրո օրինաչափությամբ հ-ն ընկ-  
նում է մի քանի այլ բառերում. «ած պարոնացն աջողում (<յաջո-  
ղում) երես» (Հովհաննավանք ԺԳ ԿՂԶ 101), «և որ անդգնի (<  
յանդուզն, յանդգնեմ) և անցանացն (<յանցանաց) պատասխա-  
նի» (Ն. Վարազ ԺԲ ՄՎ):

Բ. Բառամիջում հ հնչյունը սովորաբար չի արտասանվում և  
հնչյունայնամբ ընկնում է ր ձայնորդին հաջորդող և նախորդող դիր-  
քերում: Այս դիրքերում հ-ի կորուստը դիտվում է նաև միջին հա-  
յերենում և բարբառներում: Ահա վիմագրերում պահպանված օ-  
րինակները. աւհնեմ>աւհնեմ. «զաւհնել (<զաւհրենել) զաւակս  
նորա» (Գեղարդ ԶԼԸ Հով ԽԱՂ III 67), «աւհնած ևս Սարգիս»  
(Աղջոց վանք ՈՂ ԽԱՂ 67), «կատարիչքն աւհին» (Բարձրաքաղ  
ԺԳ)<sup>39</sup>: Շնորհ բառից կազմված բայաձևերում և անձնանուններում.  
«Մեղաց թողութիւն շնորեցեմ» (Օձուն ՈՂԳ ՄՎ), «մեղ մեղաց թո-  
ղութիւն շնորեցեմ» (նա ՈՂԳ ՄՎ), «շնորաւն այ» (Սաղմոսա-  
վանք ԶԲ ՄՎ), «շնորիւն այ» (Կեչառիս Ծ Հով ԽԱՂ III 28): Շնոր-  
հաւոր>Շնորոք>Շնաւոր. «մաւր իւր Շնորար տիկնա» (Սանահին  
ԶԼԸ ԿՂՍ 158), «զՇնաւորիկ քարգործ յիշեցէք» (Մարմաշեն ԺԲ  
ՕրՃՄ 448): Միրան>Միրան, հնագույն վկայությունը Մուղնիի  
հուշարձանախմբի պարսպի մեջ ագուցված խաչքարի հիշատակա-  
գրում. «ես՝ Միրան ծառայ այ» (ՆԼԵ)<sup>40</sup>, «ես՝ Գաւթ և Միրան  
զաւզանն տվար» (Լոր ԶՂԳ Դ III 109): Աշխարհ>աշխար, «առի  
զաշխարս ի տաճկաց» (Փարպի ՈՆ ՄՎ): Վահրամ>Վարհամ>Վա-  
րամ, թվում է այստեղ հ-ի կորուստը տեղի է ունեցել հր>րհ զը-  
րափոխությունից և ր>ռ կոշտացումից հետո, որ ինչպես տեսանք  
լայն տարածում ունի այս ժամանակների վիմագրության մեջ.  
միակ օրինակը պահպանվել է Արուճի տաճարի վաղ շրջանի  
մի արձանագրության մեջ. «ես՝ Գրիգոր որդի Վառամ» (ՅԺԶ

39 Գ. Սարգսյան, «Բարձրաքաղ», վանքը..., «Էջմիածին» 1951, № 11—12,

էջ 46:

40 Ա. Շանինյան, Հայկական խաչքարերի արվեստը, «Էջմիածին», 1960, №

6., էջ 47:



ՄՎ)<sup>41</sup>: Այս դեպքերից բացի, հ-ն բառամիջում ընկնում է նաև միջձայնավորային դիրքում հետևյալ բառերում. քազումի > քազուի, «ես՝ բարէպաշտ քազուիս գուտար Աբասա» (Երեբույք, նշէ ՄՎ)<sup>42</sup>: նույն ձևով է վկայված բառս նաև Չանգլիի նեՊ (994) թ. բնագրում- Քազուոյ (<Քազուուոյ, Քազուուոյ)<sup>43</sup>: Միջձայնավորային դիրքում հ-ն ընկնում է՝ Սահիր, Սահիպ արաբերենից փոխառված բառում, որ ծագում է sahib-տէր, կառավարիչ բառից: Արձանագրություններում Սահիր Գիւան Շամսետդինը բաղմիցս հիշատակվում է Սահիպ, Սահիր ձևերով, միայն մեկ անգամ հանդիպում է Սաիպ փոփոխակով՝ «Արզուն աղին և Սաիպ Գիւանին» (Անի ժԳ Գ I 19):

Այս հնչյունափոխությունները է առաջացել ղեկան-դրամ բառը, որի սկզբնական անհնչյունափոխ ձևը եղել է ղանեկան (ծագում է հարս. ղարեհական, Գարեհի նշանով դրամ, հետևաբար՝ առհասարակ դրամ)<sup>44</sup>: Ահա մի բանի օրինակներ. «ետու :հ: ղեկան» (Աղջոց վանք ժԳ Հով ԽԱՂ III 71), «ետու :հ: ղեկան» (Քանաա ժԳ Գ III 75), «ավի :ծ՝ ղեկան» (նա ՉԿԹ 77), «ավի :ի: ղեկան» (նա ժԳ 84): Զսկաթ է շփոթել ղեկան հունարենից փոխառված բառի հետ, որը հոգևոր պաշտոն է նշանակում: Ահարոն անձնանունը Անիի 1055—56 թթ. արձանագրության մեջ փորագրված է՝ ևս՝ Առաւնս տառագարձություններ, ըստ այդմ առկա է հա վանկի սրբումը և ր ձայնորդի ավելի թրթռուն դառնալը կամ կոշտացումը: Մատենագրական հնագույն վկայություններում անձնանունը ամենուրեք կանոնավոր է՝ Ահարոն, որ ծագում է երբ. Aharon նախաձևից: Սակայն Անիի հիշյալ բնագրում Առաւնը բյուզանդական պաշտոնյա է և կարող է հայերին հայտնի լինել Ահարոն երբայական անվան հունական արտասանությամբ, այսինքն առանց հ-ի՝ Aaron, Aron (հմմտ. լատ. Aaron, Aron արաբ. Hārūn) այս դեպքում արդեն կարելի է դիտել ոչ թե հ-ի անկում, այլ նախաշեշտ ա-ի սղում և ր ձայնորդի կոշտացում՝ Aāron > Առաւն<sup>45</sup>: Հ-ն ընկել է Սահակղուխա անձնանվան մեջ, որ Մշկավանքի ժԳ դարի արձանագրության մեջ փորագրված է՝ Սազղուխա. «Կաման ալ ևս՝ Սազղուխաս միարանեցա սր Ածածնիս» (ՄՎ), բնագրում՝

41 Գ. Հովսեփյան, Քարեհ հայ հնագրության, էջ 11:

42 նույն տեղում, էջ 13, տախտակ ժԲ:

43 ՏԵ՝ «Эпиграфика Востока», 1954, № 9, стр. 73.

44 Հ. Ահարյան, Արմ. բառարան, Բ, էջ 383:

45 ՏԵ՝ Հ. Ահարյան, Անձն. բառարան, Ա, էջ 90—91:



Ես՝ Ազգուխատս, սակայն ակներե է, որ ես-ի ս-ն ծառայում է երկու եզրերի համար, ուրեմն պետք է կարգալ՝ ես Սագղուխատս: Անձնանունը նույն ձևով վկայված է նաև Հայրավանքում. «Ես եւ Սագղուխա ամուսին իմ» (ՈԶ ՄՎ):

Գ. Հ հագագային բաղաձայնի անկումը նկատվում է նաև բառավերջում, այս փոփոխությունը պայմանավորված է հնչյունի դիրքով և տեղի է ունենում բառերի վերջում արտասանության թուլացման կամ որոշ դադարի հետևանքով, երբ արտասանելիս դեռևս բառավերջի հնչյունը շարտաբերած՝ մեր խոսողական օրգանները նախապատրաստվում են արտաբերելու հաջորդ՝ բառակերպի հնչյունները, այս դեպքում առաջին բառի վերջնահանգ հնչյունը չի արտաբերվում, ընկնում է արտասանական շղթայից: Ինչպես ցույց են տալիս հայերենի, հատկապես բարբառների փաստերը, ավելի հաճախ այս ձևով ընկնում է հ կոկորդայինը. մյուս բաղաձայնները այդ երևույթի հետևանքով սովորաբար չեն ընկնում, այլ միայն փոխում են իրենց որակը (խլացում), իսկ ձայնավորները մեծ մասամբ ընկնում են (հին հայերենի տեղի, հիւսիսի, արձուի, տղայ, ծառայ և այլ բառերի վերջնահանգ հնչյունների կորուստը այդ օրինաչափությամբ և բացատրվում): Դեռ հին հայերենում սկիհ բառը գործածվում էր նաև առանց հ-ի, որ ապացույց է, թե վերջնահանգ հ-ի կորուստը դիտվում էր նաև պարբերում: Վիմական արձանագրություններում այս բառը բարձր ձևերում մեծ մասամբ առանց հ-ի է. «...սկի եւ սր նշան» (Անի ՆԶԶ Գ I 49), «երկու սկի արծաթիք» (Անի ՈԿԲ Գ I 34), «...ետու... սկեան արծաթի» (Սանահին ՈԼ ԿՂՍ 114), «ավար :Բ: սկիբ» (Գեղարդ ԺԳ Հով ԵԱՂ III 51), «ավար :Բ: սկի արծաթի» (Հոռոմոս ԶԻԳ ՍԱԲ 162):

Հ-ն ընկնում է մի շարք փոխառյալ անձնանունների վերջում. Շապուհ > Շապու, հնադույն վկայությունը պահպանվել է վանեվանի տաճարի ՅՄԲ (903) թ. արձանագրում. «ես՝ Շապու Բաղրատունի հայոց սպարապետ» (ՄՎ), «զհայր Շապու յիշեցէք» (Տաթև ԺԳ. Գ II 14), «զՇապու երէց խաւտեցի» (նտ ԺԳ. Գ II 15), «ես՝ Շապու Գարդա պատրիկա որդի Գորգացի» (Սիսիան Ժ Գ II 90): Գրական վկայություններում անձնանվան հ-ն չի ընկնում, որ ապացույց է, թե վիմագրության օրինակները պալիս են խոսակցական լեզվի արտասանությունից<sup>46</sup>:

Հ բաղաձայնը ընկնում է շահ բառով բաղադրված անձնա-



նունների մեջ. «...կազմեցաւ խաչս ի բարխոտութի Աստաւշահն (<Աստաւշահ) (Գոմուր ԶԺԶ Դ III 192)<sup>47</sup>, «ես՝ Շաաբեր (<Շա-հաբեր) եւ Շահձմայր կանգնեցաք զսր Գերգս» (Տեղ ԶԻԱ Դ II 71)<sup>48</sup>:

#### ՀՆՆՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵՆՈՒՄ

Բառերի կազմում նոր հնչյունների առաջացումը արդյունք է հնչյունափոխական տարրեր գործոնների ազդեցության եւ սովորաբար տեղի է ունենում կենդանի, բանավոր խոսակցության ժամանակ: Բաղաձայն նոր հնչյուններ կարող են առաջանալ որոշ հնչյունական կապակցություններում, երբ առաջին բաղաձայնի արտաբերումից մինչև հաջորդի արտաբերումը խոսողական օրգանները աշխատում են՝ կազմավորելով բառի մեջ շեղած նոր հնչյուններ: Զայնավոր հնչյուններ են առաջանում տվյալ լեզվի արտասանական հնարավորությունների թելադրանքով, երբ անհրաժեշտություն է զգացվում որոշ հնչյունախմբերում այս կամ այն ձայնավորի ներմուծումը: Կավագույն օրինակ կարող է ծառայել հայերենի այն օրինաչափությունը, ըստ որի, իրար հաջորդող բաղաձայն հնչյունների մեջ մտնում են ձայնավորներ, մեծ մասամբ ը, որը գրությամբ չի արտահայտվում: Այս բաժնում բնական է, շին քննվելու նոր հնչյունների ներմուծման այն դեպքերը, երբ այդպիսիք առաջանում են բառի կազմում եղած այլ հնչյունների փոփոխությամբ կամ երկու հնչյունների միացումով (հմմտ. Խնձորարակ (Խաթրավանք ՈՄԳ ՄՎ), բարէկուրա (Քարագույս ՈՀԹ Դ III 169), հոգորածին (Տեղեր ԺԳ ՄՎ), հոգեաուն (Սելիմ ԶԶԱ Դ III 178) ձևերում նոր հողակապ հնչյունների առաջացումը), քանի որ դրանք դիտվում են ոչ թե իբրև արտասանվածքի մեջ նոր հնչյունների կազմավորում, այլ եղած մեկ կամ երկու հնչյունի փոխակերպումը նոր հնչյունի, հնչյունափոխական իրողություն, որ քննվում է այդ հնչյունների կրած փոփոխությունների բաժնում:

<sup>47</sup> Վերծանող Ս. Բարխուդարյանը իրավամբ անձնանունը վերականգնում է Աստաւշահ, նույն անունը Գ. Հովսեփյանը վերծանել է՝ Աստաւշա (տե՛ս Խաղբակյանը, ... հատ. Գ, էջ 6):

<sup>48</sup> Վերծանող Ս. Բարխուդարյանը երկրորդ անձնանունը կարգացել է Շահձմայր, մինչդեռ բարի վրա հստակ երևում է՝ Շահձայր (Գ II 71, լուս. XVII, 63): Մայր բաղադրիչով կազմված անձնանունների մասին պատմում ենք ե, ի ձայնավորների փոփոխություններին նվիրված բաժնում:



Մյուս կողմից, նույն նկատառումով շեն արծարծվելու նաև բառասկզբում կամ բառամիջում ը ձայնավորի գրության այն դեպքերը, որոնք արտացոլում են այդ հնչյունի հնչման վիճակը, բանի որ նման դեպքերում գործ տևենք ոչ թե նոր հնչյունի առաջացման կամ հղածի հնչյունափոխման հետ, այլ բառակազմում հղած, արտասանվող, բայց ուղղագրությամբ շարտահայտվող ձայնավորի գրության փաստի հետ. օրինակ, Հառիճավանքի ԺԹ դարի մի բնագրում փորագրված է. «...շինեցի տեղի սնընդեան... եւ կարգեցի ի սմա արքս ընտրեալս», ընդգծված բառերում ը-ն նորամուտ հնչյուն չէ, այլ միայն նորամուտ տառաձև, ըստ այդմ ենթադրվում է, որ սննդեան, արս կանոնավոր գրության դեպքում էլ այդ բառերում ը-ն հնչվել է:

Հնչյունների հավելման լավագույն օրինակ է միջին հայերենում և հայ բարբառներում նր հնչյունակապակցության մեջ դ կամ ա բաղաձայնների ներմուծումը. ծանր > ծանդր, մանր > մանար, ծունր > ծունդր, քանիր > քանդիր<sup>49</sup>:

Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում դիտվում են բառերի մեջ ձայնավոր և բաղաձայն նոր հնչյունների ներմուծման բազմաթիվ դեպքեր, որոնցում կարելի է սահմանել այս օրինաչափությունները.

Ա. մր, սր հնչյունախմբերի մեջ առաջանում են բ կամ տ պայթական բաղաձայններ՝ ըստ նախորդող հնչյունի որակի. համարեմ > համբարեմ > համբրելէ. «...թողար ղկովերոյն եւ ղիշանուն զհամբրելէն եւ ղդոնագիրն» (Անի ԶԿԹ Դ I 257), «թողի ղեզինն հազրն, ղկովին համբրելէն, ղոշխարին աղլահակն» (Անի ԶՄ Դ I 29); խոսրով > խոսարով, «կանկնեցի խաշս ինձ եւ խոսարովկայ» (Աղավնաձոր ԺԳ Դ III 38), «գուսար խոսարովկա» (Հերհեր ԶԳԴ Դ III 56), «ես՝ խոսարով» (Արկաղ ԶԻԴ Դ III 70), «իմ հաւրն խոսարովին» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 161), խոսարովիկ (Հաղպատ, տապանագիր ԺԳ դ. ԿՂՀԲ 187), յորդո իմո խոսարովիկա» (Գաղի վանք ՈԽԵ)<sup>50</sup>:

Բ. Բառամիջում նոր բաղաձայններ կարող են առաջանալ բառի կազմում հղած այլ բաղաձայն հնչյունների առնմանությամբ, երբ ավյալ հնչյունի մտապատկերը մնում է գիտակցության մեջ նաև հնչյունը արտասանելուց հետո և այդ պատճառ-

<sup>49</sup> Տե՛ս J. Karst, Historische Grammatik..., S. 10.

<sup>50</sup> Ա. ՏԵՐ-ՄԱՎԻՍՅԱՆ, Հայկական երեք մեծ վանքերը..., էջ 93:



ուով նույնը արտաբերվում է երկրորդ անգամ. օրինակ, կանաչ բառում և անգայինի առնմանությունումը նրանից հետո արտասանվում է երկրորդ և-ն և ստացվում է նույն բառի կանաչ ձևը, որ լայնորեն տարածված է միջին հայրենում և համարյա բոլոր բարբառներում: Վիմագրերում այդ հավելումը հանդիպում է նաև նույն բառից կազմված տեղանուններում. «և յիշատակ որդս իմս կանանչին» (Պատմ. ՈՂԷ ՄՎ), «զկանանչաւոր զեզն այլ նոր հաստատեցի» (Գաղի վանք ԶԺԳ): Նաչմաղին > նանմանղին, «կանկեցի զխաչն եզրար նանմանղին» (Գյոյարաս ՇՃԽԹ 1200 ք. Գ III 29): Գշխոյ > դժշխոյ. «և զդժշխոսափաղ քասսէր զոյզն իւր զՎախախն» (Արևնի ԶԶ Գ III 29): Վասիլ > վարսիլ. «ես՝ վարսիլ որդի Պարորտայ կանգնեցի զխաչս» (Շնհեր ԶԺ Գ II 55): Գատումն սևս. զատման > զատմման = աշխատանք, խոնջանք նշանակությամբ. «ես զայն նրա զատմման փոխարէնը արարի» (Հալիձոր ԺԳ Գ II 52): Հավանաբար այս օրինակաբանությունումը պետք է բացատրել նաև և անգայինի ներմուծումը կամուրջ բառի մեջ՝ կարմունջ, որ լայնորեն հայտնի է արդի բարբառներում և միջին հայերենում: Վիմագրական հուշարձաններում և-ով ձևը ավելի հաճախ է հանդիպում, քան կանոնավոր կամուրջ-ը ոչ միայն առանձին գործածվելիս, այլև բարդություններում կամ տեղանուններում: Բազմաթիվ նվկայություններից նշում ենք մի քանիսը. հնագույնը Ամբերդում Վահրամ Պահլավունու թողած նշանավոր արձանագրության մեջ է. «տուք շաղացն վերա կարմենին» (նՆՆ ՄՎ)<sup>51</sup>, «շինեցի կարմունջս, հագտունս» (Շատիճ ԺԳ Գ III 162), «Բոփաշարու կարմեջէն» (Հոռոմոս ԶԺԵ ՍԱՐ 157), «զկարմեջխելին ներքի շաղացն» (Բագարան ՈԿ ՍԱՐ 203), «տուք զկարմեջատափա այգենն» (Գաղի վանք ՈԳ)<sup>52</sup>, «այլ փոքր աշխատեցայ ու ըզկամունջն շինեցի» (Աստղածոր ԶԼԵ ՍՍ): Արատէս > Արատէնս. «և յնդեզեց ձորին զԱրատէնսն» (Ամաղու ԶԽԷ Գ III 216): Խորիշահ > Խորինշահ. «ես՝ Խորինշահ ամուսինն Զարարելի» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 51):

և անգային ձայնորդի հավելումով է առաջացել հին հայերենի մի թվականի մին ուղիղ ձևը, որը վիմագրերում ավանդված է

51 Ե. Տեր-Մինասյան. Ամբերդածորի արձանագրությունները, «էջմիածին», 1961, № 5, էջ 51—52:

52 Մ. Տեր-Մովսիսյան. Հայկական երեք մեծ վանքեր..., էջ 95, այստեղ արվյալ հատվածը վերծանված է. տուք... զկարմեջատափա այգեննի հոգնեկոց, ուղղում ենք քստ Ս. Բարխուդարյանի անտիպ վերծանությունների:



բաղմաթիվ հիշատակություններով: Միջին հայերենում մի>մին  
 թվականը կիրառություն չունի, քանի որ այստեղ գրաբարի մի  
 բառը մեծ մասամբ դորժածվում է իրրե անորոշ հոդ, իր տեղը  
 զիջելով նոր առաջացած մէկ, մեկ (<միակ) բառին: Մին պահ-  
 պանվել է Ղարաբաղի, Մեղրու, Շամախիի, Ն. Զուղայի բարբառ-  
 ների որոշ խոսվածքներում, մրն հնչյունափոխված ձևով՝ Գորի-  
 սում և մույն՝ Ազուլիսում:

Մին առաջանում է հին հայերենի մի թվականից և հոդի հա-  
 վելումով, որ կարող էր տեղի ունենալ հինգը, եաւթը, օխարը, ուրը:  
 տասը բարբառային ձևերի համանմանություններ:

Տվյալ դիրքում և հոդի մթագնման լավագույն օրինակներ է  
 տալիս Ն. Զուղայի բարբառը, որտեղ մի թվականից բացի և եր-  
 բեմնի հոդով են վկայված նաև ի հանդու մի քանի այլ բառեր՝  
 քին (<քի), սկին (<սկին, սկի), լեղին (<լեղի) և այլն<sup>53</sup>:

Ահներե է, որ վիմական արձանագրություններում մին թը-  
 վականը կարող էր առաջանալ հիշյալ խոսվածքների ազդեցու-  
 թյամբ: Մեջ ենք բերում մին ձևի մի քանի վկայություններ տար-  
 բեր ժամանակների վիմական բնագրերից: Հնագույնը կարդաց-  
 վում է Սյունի վանքի մի անթվական նվիրագրում, որ տառա-  
 ձևերի հնագրական հատկություններից դատելով փորագրվել է  
 Թ—Ժ դարերում. «Ես՝ Շապու Գարդա պատրիկա որդի գնեցի ար  
 մին ժամ» (Գ II 90): Այնուհետև նույն ձևերը հանդիպում են մի-  
 այն ԺԹ—ԺԳ դդ. վիմագրերում. «...զմին ար ինձ» (Հաղբատ Ուե՛  
 ԿՂՀԲ 176), «ետու... մին արտ» (Մանահին ՈՂԱ ԿՂՍ 130), «աը-  
 վար...մին արավար հող» (նա ՈՂ 133), «ետու... այդի մին ի  
 Մարմեա..., ետու... շինական մին» (Խժկոնք ՈԿ ՈԿԲ ՍԱԲ 210,  
 213), «մին ար ժամ Ծովինարին..., մին սեղան պատարագ» (Խո-  
 րանաշատ ՈՂԱ ՄՎ), «գնեցի զմին ակն» (Հաղբատ ՈԿԹ ԿՂՀԲ  
 174), «հաստատեցին մեղ ար մին պատարագ» (Անի ՈԿԳ Գ 1  
 35), «ետու Գ: արավար արտ եւ մին եղն» (Հոռոմայր ԺԳ ՄՎ),  
 «հայրենիք որ փոխած լինի ու մին տարի անցել լինի» (Երևան  
 ԶԺԳ ԿՂԵ 175), «մին այդի հիւրատանն» (Գաղի վանք ԶԲ Մով  
 95), «գրեցաւ մին պատարագ» (Մակարավանք ԺԳ ՄՎ, Կապ-  
 տավանք ՈԶԳ ՍՍ), «մին կանթեղ արժաթիւք» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ  
 171):

<sup>53</sup> ՏԵ՛ 2. Անառյան, Կրակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 1,  
 Երևան, 1952, էջ 249—250, Քննություն նոր Զուղայի բարբառի, Երևան, 1940,  
 էջ 160:



Գ. Բառամիջում նոր ձայնավոր հնչյուններ կարող են առաջանալ բաղաձայն հնչյունների միջև, երբ այդ դիրքում արտասանվող ք ձայնավորը չի գրվում և բաղաձայնների կուտակումից խուսափելու ու բարեհնչյունության նպատակով արտասանվող ք-ն փոխարինվում է այլ ձայնավորներով. օրինակ, յալիշտակել > յապըշտակել > յապիշտակել. «եթէ զհողն յապիշտակել ջանայ» (Բջնի նՁ ՄԲ), «որ որ ստե կամ յապիշտակել ջանա» (Մրեն նեՆ ՕրՃՄ 3): Գալստեան > գալքստեան > գալեստեան. «ած յիւր քի միտանգամ գալեստեան (Կոշ նլ ՄՎ): Սմբատ > Սրմբատ > Սիբատ. «Փրկութեան Սիբատա և Գուրգենա» (Հաղթատ նե ԿՂՀԲ 142):

Դ. Բառասկզբին նոր հնչյուններ են առաջանում հետևյալ դեպքերում. ք ձայնավորն ավելանում է ու-ով սկսվող մի քանի բառերի և անձնանունների սկզբում: Այս երևույթը պայմանավորված է հայերենի արտասանական հնարավորություններով, երբ դ, ո, ր հնչյունների համար բառասկզբը բացառված դիրք էր. նույնը դիտվում է նաև դասական մատենագրության մեջ, օրինակ Փ. Բուզանդի «Պատմության» մեջ վկայված են. բռագմիկ = ռագմիկ, Ըոշտունի և այլն<sup>54</sup>: Վիմական բնագրերում պահպանված օրինակներից նշելի են. «կնոջ իւր Ըոուզուբանա» (<Ռուզուբան) (Մղարթ ՈՄ ՄՎ), «ես՝ Ըոուուզան նմին արբաի դուսար» (Սանահին ՈՂ ԿՂԱ 115), «թագատրին մերոյ Ըոուուզանայ» (Կարս ՈԶԳ ՕՃՄՏ 471), «ի թագատրութես Ըոուուզանա» (Կարս ՈԶԳ ՕրՃՄՏ 471), «ես՝ Ըոութեն (<Ռութեն)... որդի Գաթի» (Անի ՉԼԵ Գ I 36), «Ըոութէին լիւր բարէխաւս» (նտ), «ի բարէխաւսութի Ըոութենին» (Զինչիրլու ՉեՆ Հով ՀԲ 80), «մեր՝ հարազատ եզրարբ Ըոութեն. Խաշատուրս և Եղիա շինեցար զեկեղեցիս» (Զինչիրլու ՉՄԵ Հով ՏՄ 14), «ես՝ Տիկին դուստր Զունդկանն և կենակից Ըոատին» (<Ռատ) (Բարձրաքաշ ժԳ ՄՎ), «ես՝ Ըոատս միարանեցա էկեղեցոյս» (Սաղմոսավանք ժԳ ՄՎ): Ռայիս > ռայիս (> ռէս, գյուղավագ). «ես՝ Վարդս Բաղարանայ ռայիսս» (Բագարան ՈԶԳ ՍԱՐ 203), «...որդի Մխիթարա ռաիսին» (Բագնայր ժԳ ԲԱՍ 203):

Բառասկզբում ո ձայնորդից առաջ ք ձայնավորի հավելումով սկտր է բացատրել նաև Արխաակէս անձնանվան Ըստակէս փոփոխակի առաջացումը, որ հաճախ է դիտվում միջին դարերի

54 Փատուսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 38—56:



ձեռագրերի հիշատակարաններում և վիմական բնագրերում: Ը հնչյունի հավելումն անշուշտ տեղի է տանեցել Արխատակէս > Ռստակէս = Ռրստակէս օրինաշատի հնչյունափոխությունից հետո, երբ ընկնում է բառասկզբի նախաշեշտ ա-ն, իսկ նրան հաջորդող ր ձայնորդն էլ կոշտանում կամ ավելի թրթռուն է դառնում, վերածվելով ո-ի: Վիմագրության մեջ ավանդվել են թե՛ Ռստակէս > Ռրստակէս և թե՛ Ըստակէս > Ըրստակէս: Այսպես, Մշկավաճարի ԺԳ դարի արձանագրություններում հանդիպում է Ռրստակէս (Ռրստակէս և միարանգս), Ըրստակէս («ես՝ Ըրստակէս և այլ միարանքս հաստատեցար»-ՄՎ), Արստակէս («Արստակէս եւ այլ եղբարքս» ՄՎ), կամ Հերհերում՝ «ես՝ Ըրստակէս եւ այլ միարանքս հաստատեցար ի տարին ի Ժ ժամ» (ԺԳ դ. ՄՎ):

Ա ձայնավորն ավելանում է մեկից ավելի բաղաձայնով սկսվող փոխառյալ բառերի վրա: Հնչյունակազմավորման այս երեւոյթը հատուկ է հայերենի բարբառներին և այլ լեզուների (արար. թուրք.), որտեղ արտասանության դյուրացման նպատակով բաղաձայններից առաջ բառասկզբում սովորաբար մտնում է որևէ ձայնավոր հնչյուն (հմմտ. Platon արար. Afātun Alexandr — Skandar — Iskander և այլն): Ա ձայնավորի հավելումը այդ կարգի բառերի սկզբում դիտվում է հայերեն հնագույն վիմական արձանագրություններում. Արուճի տաճարի ՅԺԶ (867) թ. բնագրում հստակ կարդացվում է. «Սմբատայ հաց սպարապետի (= սպարապետ) Բագրատունոյ» (ՄՎ)<sup>55</sup>, նույն հավելումով է փորագրված սպարապետութիւն բառը նաև Կոշի եկեղեցու նկ (981) թ. նվիրագրության մեջ. «Յասպարապետութեանն Գրիգարոյ» (ՄՎ)<sup>56</sup>: Պատմական Ջահուկ դավառի ն. Մանկուս դյուրում կանգնած խաչքարի ավելի ուշ շրջանի հիշատակագրության մեջ ևս քննվող բառը վկայված է նույն հավելումով. «մեծին Մամիկոնա սպարապետին» (ԺԳ դ. Հով 2թ 72), «մեծ սպարապետին վարհամա (Հերհեր ՉԼԹ Դ III 50—51), կամ Վայոց ձորի Թանատ հուշարձանի մի նվիրագրության մեջ. «ամուսին Հասանա՛ սպարապետին հաց» (ՉԾԶ Դ III 76): Ասպարապետ բառը այս ձևով է վկայված նաև Սմբատ Սպարապետի (Գունդատար) ինքնագիր հիշատակարանում. զմեղաուր հողս Ըզամբատ հայոց

55 ՏԵ՛ս Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, էջ 11:

56 Մ. Տեր-Միքայել, Իմ գործակալության ժամանակ հավաքած մի քանի արձանագրություններ, «Բանասեր», Փարիզ, 1903, № 1, էջ 27—28:



ասպարապետս յիշեջլիք ի Քս<sup>57</sup>: Ա հնչյունի հավելումով է փորագրված Սկանդար, Սփանդար անունը. հայտնի է, որ այս անձնանունը ծագում է հուն. Alexandros նախաձևից, որ սրանից բացի ուշ միջնադարում (ժՆ դար) վկայված է նաև Սփանդար, Սկանդար, Իսկանդար, Իսփենդէր, Իսփանդար տարբերակներով, որ արաբ. Iskandar-ի փոխառությունն է անփոփոխ, կամ բառասկզբի նախաշեշտ ի-ի սղումով<sup>58</sup>: Նույն անձնանունը ուղիղ ձևով՝ Սկանդար և բառասկզբում ա հնչյունի հավելումով՝ Ասկանդար հանդիպում է ավելի վաղ շրջանի վիմագրության մեջ, այսպես, Հաղարծնի վանքի ՈՄՆ (1206) Թ. նվիրագրում վկայված է՝ «Սկանդարանց հողն գնեցի» (ՄՎ)<sup>59</sup>, իսկ Ասկանդար, որ վերծանող Բ. Բարխուդարյանի կարծիքով նշանավոր գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ-ճարտարապետ Մոմիկի որդու անունն է, երկու անգամ փորագրված է Աղավնաձորում կանգնեցված խաչարձանի տասանագրում. «ես՝ Ասկանդար Մոմկա որդի... յիշեա Քս<sup>60</sup> ամ զԱսկանդար» (ժԳ Գ III 39): Բառասկզբում ա ձայնավորի հավելումով է վկայված վրաց Գեորգի Լաշա Թագավորի անունը Զարարիա ամիրսպասալարի անթվագիր արձանագրության մեջ, փորագրված Բագարանի տաճարի պատին. «ի Թագաւորութիւն Ալաշայ.» (ժԳ ՕրճԻՏ 466), նույն անունը Հոռոմայրի ՈՄՆ (1206) Թ. բնագրում ավանդված է կանոնավոր, առանց ա-ի՝ «ի Թագաւորութեանն Լաշային» (ՄՎ):

Ե. Ավելի բազմաթիվ են բառասկզբին նոր-բաղաձայն հնչյունների հավելման դեպքերը. դրանցից նշելի են. և հազագային շրփականը ձայնավոր հնչյուններից առաջ այն դեպքում, երբ խախտվում է հաջորդականությունը տվյալ ձայնավորի ձևավորման նրպատակով ձայնալարերը թրթռալու և շունչը արտաբերելու միջև, թրթռումը ուշանալու դեպքում ձայնավորով սկսվող բառերի սկզբում կազմավորվում է և հազագր: Հայերենի մի քանի բարբառներում նկատվում է և հնչյունի հավելումը տվյալ դիրքում՝ էգուց-հէգուց, արի-հարի, ամուլ-համուլ<sup>60</sup>: վիմագրերում նկատում ենք. արեղա > հարեղա. քաշխարհական հարեղայի :Թ.Խ:» (Հոռոմոս

57 Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, 1958, Երևան, էջ XXXVIII:

58 Հ. Անառյան, Անձն. բառարան, Գ, էջ 681—682:

59 Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 366:

60 Տե՛ս Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, էջ



ՈՒՅՒ ՍԱՐ 150), «աշխարհական հարեղաին եւ մանգանն ՚Բ.Խ:» (Արջո առիճ ժԳ ՍԱՐ 191):

Նոր հնչյունների հավելման բաժնում պետք է քննել նախ 3 գրի, հաճախ նաև հնչյունի հավելման բաղմամբիվ դեպքերը ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիժմական արձանագրություններում: Հայտնի է, որ հին հայերենի 3 հնչյունի արտասանության և գրության մետրոպյան շրջանի օրինաչափությունները հետագա դարերում կենդանի, խոսակցական լեզվի ազդեցությամբ զգալի փոփոխություններ էին կրել և հետագեւ գրարարից այն աստիճան, որ հրամայական անհրաժեշտություն էր առաջացել հատուկ կանոններով նորմավորելու 3-ի ուղղագրությունը, վերահաստատելով դասական, գրարարյան գրությունը: Նկատի ունենք Արիստակես Գրչի ուղղագրական տասը կանոնները, որոնցից ութը նվիրված էին տարրեր դիրքերում 3-ի գրությանը: Վիժագրական հուշարձաններում, ինչպես և հին ձեռագրերի հիշատակարաններում գիտվում են 3-ի ուղղագրության մեջ նկատվող այն բոլոր խառնաշփոթությունները, որոնք նկարագրված են Արիստակեսի երկում և որոնց կանխման համար էլ հեղինակը սահմանում է իր կանոնները: Յ-ի հավելման դեպքերը ամօժանոթ էին հին հայերենին և դիտվում են միայն միջին հայերենի գրական արտադրանքներում:

Ա. Յ ձայնորդն ավելանում է հին հայերենի մի քանի պարզ բառերի մեջ ա, ո ձայնավորներից հետո, անկախ շեշտի ազդեցությունից կամ հնչյունափոխական այլ երևույթի ներգործությունից: Մեջ ենք բերում եղած օրինակները. Խաչ>խաչչ: Հնագույն հիշատակությունը կարգացվում է Սյունի տաճարում (Միսիան) քնկած բեկորի վրա. «խաչչս յանուն սրբոյ Փրկչին» (Դ II 91), հրատարակող Ս. Բարխուդարյանը իրավամբ գտնում է, որ այս բեկորը Սյունի վանքին չի պատկանում և բերված է այլ հուշարձանից. թվում է բեկորը կազմել է Աղուղիի հնագույն մահարձան-կոթողի վերնամասը, որ փլվելուց հետո տեղափոխվել է Սյունի վանք: «Ազգին է խաչչս» (Անի ժԳ Դ I 65), «խաչչս Պետրոսի է» (Վերնաշեն ժԳ Դ III 101), «կանգնեցաւ խաչչս» (Քարազուռի Զե Դ III 175), «տվ սր խաչչ փրկական» (Մրեն ժԳ ՍԱՐ 199), «կանկնեցի զխաչչս» (Օձուն ՈԶԳ ՄՎ), «էկանգնեցար խաչչս» (Օձուն ՈԶԳ ՄՎ), «ես՝ Մխիթար կանգնեցի զխաչչս» (Հոռոմայր ՈՅ ՄՎ), «կանկնեցի խաչչս» (Կուրթան ՈՂԵ ՄՎ), «կանգնեցաւ խաչչս» (Մարց ԶԷԴ Հոլ 2Թ 76), «կանգնեցաւ խաչչս ի բարե-



խաւսութի. Տիրացու քահանաի» (Քարագլուխ ժԳ Դ III 175), «կանգնեցի զխաչս» (Ազարակ ԶԺՆ ՄՎ), «կանգնեցար զխաչս» (Աշտարակ, խաչքար ԶԻԲ ՄՎ), «ի նոյն ար խաչին» (Սաղմոսավանք ժԳ ՄՎ), «կանկնեցի զխաչս» (Նորագուղ ՈՂ ՄՎ): 3-ն ավելանում է նաև խաչ>խաչը բառով բաղադրված անձնանուններում և տեղանուններում. «Հիւսիսոյ գեհն խաչով փարախն» (Հոռոմոս ԶԶՆ ՍԱՐ 159), «եւ մարն իմ՝ Մեծանցին, Խաչատրո» (Հովհաննավանք ԶԿ ԿՂԷ 115), «եւ փեսաց մերոց անպատճառ քահանայից Խաչատրո (Մարց ԶԼԴ Հով ԷԲ 76), «ես՝ ազրեր Առեղս, Խաչատուր, Խաչաճորտս» (Ալուշալու ժԳ ՄՎ), «եսուար զ Ա: ին խորանս սբ Գրիգորին տանին Իվանոյ Խաչենեցուն» (Ն. Վարագ ժԲ ՄՎ):

Աշակերտ>աշակերտ. «ձեռնայսուն աշակերտի» (Ամադու ՈԷ Դ III 212), «հայր Արայհամ» (<Արահամ)... տվար ձիբայհանաց հակէ կէս լիար ձէթ» (Հովհաննավանք ՊԱ ԿՂԷ 81), «ես՝ Կարայպետս (Լմբատ ժԳ ՄՎ), «Կոշիկ անայպատոյ «<անապատ) (Կոշիկ ժԳ ՍԲ), «ի զարմէ երկուց հայրագատաց (<հարագատ) (Բջնի ՊԷ)<sup>61</sup>, «մէք՝ հայրագատ եղբարքս» (Անգեղակոթ ԶԵԷ Դ II 123), «յիշայտակ ինձ (Գեղարդ ԶԼԲ Հով ԽԱՂ III 55), «սր Մանխոր նայհատակեցին (<նահատակ) (Մաստարա ԶԵԶ ՄՎ), «նահայտակ յիշեցէք» (Կարմրաշեն Զ Դ III 43), «տաշլի (<տաշլի) գենլոյն Քի» (Յաղացքար ՆՂ Դ III 151), «Ա: ար նաայսաբղին» (Քանատ ժԳ Դ III 84), «նորոյգեցի» (<նորոյգեցի) (Երեբույք ժԳ ՄՎ), «ձնունդ հայգեար» (Անի ՆՄ Դ I 35), «սպարաին սպասաւորք սորա ի տարաշլն» (<տարաշլ) (Անի ժԲ Դ I 48):

Թվում է, մեզ բերված վիպայություններում շի կարելի սոսկ ուղղադրական վրիպումներ նկատել, ևնթադրելով, թե փորագրողները կամ բնագրի կաղմողները, հմուտ չլինելով ժամանակի գրական հայերենի ուղղագրությանը, չգիրը ավելացրել են անկախ ավյալ բառի արտասանությունից:

Նկատի ունենալով արդի մի քանի բարբառներում հիշյալ բառերի արտասանությունը՝ ա>այ, պեար է մտածել, որ այստեղ յ-ի հավելումը արտացոլում է ավյալ ոչորաում նրա հնչման վիճակը: Մյուս կողմից, որ խաչ հանրահայտ, հաճախ գործածվող

61 Ե. Մուշեղյան. Բջնի 1358 թ. արձանագրության առթիվ, ԳԱ «Տեղեկագիր» 1956, № 7, էջ 97—100, Еще раз о надписи из селения Блжии от 1358 г. Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի, հատ. 5, 1959, էջ 273:



բառը խաչը է արտասանվել, ապացուցում է նաև բառի հետագա հնչյունափոխությունը վիմական բնագրերում և բարբառներում, որի հետևանքով առաջացել է խէչ ձևը (<խաչ>), որ դժվար բացատրելի կմնար, եթե այստեղ գիտեինք սոսկ անմիջական՝ ա> է հնչյունափոխություն, մինչդեռ այ երկբարբառի վերածվելը է պարզ ձայնավորի բաղաձայնից առաջ դերակշիռ օրինաչափություն է միջին հայերենում և վիմագրության մեջ<sup>62</sup>։ Յ հնչյունի հավելման դեպքերը քննելիս, զանց ենք առնում այ, ոչ երկբարբառների կամ երկհնչյունների առաջացման վկայությունները, բանի որ դրանք նկարագրվում են երկբարբառների փոփոխություններին նվիրված բաժնում։

Բ. Յ-ն ավելանում է բարդ կամ վերջածանցավոր բառերի մեջ ա հոդակապից հետո։ Թվում է, այս դեպքում հավելումը տեղի է ունենում միայն գրության մեջ և չի փոխում բառերի արտասանությունը։ Տվյալ դիրքում յ-ի հավելումը կարող է առաջանալ այն պատճառով, որ կաղմության առաջին բաղադրիչը ա հոդակապով գիտակցվում է իբրև ա-ով վերջնավորվող ամբողջական բառ և ըստ այդմ, հետևելով գրաբարի ուղղագրության կանոններին, պետք է ներդրվի յ ձայնորդով։ Ի տարբերություն նախորդ

62 Արևա քիչ քն շատ ընդունելի ստուգաբանությամբ խաչ արձատր կապվում է բուն հայերեն խէչ, խոչ, խէչակ=փայտ, ցիւ բուսերի հետ և հավանաբար առաջանում նրանց ձայնադարձից (Հ. Անտոյան, Արմ. բառ., Գ, էջ 384—385)։ Սակայն այսպիսի մեկնաբանության դեպքում անորոշ է մնում միայն միջին դարերի վիճաբանություն ավանդված խաչը ձևի ծագումը կամ նրանում յ հնչյունի կամ դրի ներմուծման պատճառաբանությունը։ Ե. Մատի փորձերը ասորական կամ արամեական լեզվական միջավայրից հանելու օրիստոնեական հավասի հիմնական խորհրդանշանի՝ խաչի անվանումը հավանական արդյունքների շնն հասցրել և հայազեար ստիպված է եղել բարսի ծագումը որոնել իրերո-կավկասյան կամ հարևանական ոլորտում, ըստ այդմ, հին գրական հայերենի խաչ կամ տեղական բարբառների խէչ ձևերը համեմատվում են վրաց. խե = ծառ, խեչ-ա-կալի = կեռ փայտ, լազերեն խաչկեալի, խաչաբի = խեչակ բառերի հետ՝ այս բոլորի համապ. ենթադրելով մի ընդհանուր նախաձև, որ առայժմ չի վերականգնվում (Տե՛ս Н. Марр. Еще о слове «челеби», ЗВО, т. XX, СПб., 1911, стр. 14—17)։ Գիտելի է, որ խաչը (<խէչ>) վկայված է միայն ԺԲ—ԺԳ դ. վիմագրական հաշարձաններում և արդի մի քանի խոսվածքներում, որ ավելի հավանական է դարձնում մեր ենթադրությունը այդ ձևերի առաջացման մասին, ըստ այդմ, փոփոխությունն սկսվում է խաչ գրաբարյան արձատրում յ-ի հավելումով խաչ>խաչը, որ ինչպես տեսանք նկատվում է այլ միավորներում ևս (աշայկեա, մեծայտուն, հոյզետր)։ Իսկ վերջինիս մեջ այ հնչյունակապակցության կամ երկբարբառի վերածվելը է-ի՝ խաչը>խէչ արդեն փրկապետող օրինաչափություն էր Ժ—ԺԳ դարերի վիմագրական բնագրերում և միջին հայերենի գրական երկերում (տե՛ս Հ. Անտոյան, Արմ. բառարան, Գ, էջ 384—385)։



կետում մեր ներկայացրած յ-ի հավելումների, այս դեպքում ձայնորդի հավելումը գրության մեջ չի կարող արտասանական հիմք ունենալ, քանի որ կատարվում է ոչ թե բնադրի հեղինակի կամ փորագրողի խոսակցական լեզվի ազդեցությամբ, այլ հին գրական հայերենի ուղղագրության հետևությամբ, սակայն նրա սխալ կիրառումով: Օրինակ, Անիի պարիսպներից մեկի արձանագրության մեջ փորագրված է հաստայնիմն տառաշարքը (ԺԳ Դ I 5), բնական է մտածել, որ հեղինակը հաստա դիտել է իրրե ինքնուրույն բառ և, հեռուելով գրաբարի այն կանոնին, ըստ որի բառավերջում ա, ո ձայնավորներից հետո գրվում է յ, ավելացրել է յ դիրք: Կամ միջնադարում շատ տարածված խոցաղեղ անձնանունը, որ առաջանում է խոց և դեղ արմատներից՝ ա հոդակապով և նշանակում՝ խոցի դեղ, ցավի սպեղանի, վիմագրերում քանիցս ավանդված է՝ խոցայդեղ գրությամբ (Անգեղակոթ Զեէ Դ II 123), որ նույնպես կարող էր տեղի ունենալ խոցա բաղադրիչը ա հանդող ինքնուրույն բառ գիտակցելուց:

Հնագույն հայերեն ձևագրերում և միջին հայերենի գրական երկերում ևս այս հնչյունափոխական երևույթը լայնորեն տարածված է: Զեռագիր պատառիկներում, օրինակ, վկայված են ա հոդակապից հետո յ-ի հավելման բազմաթիվ հիշատակություններ՝ քանձրայգունիցն, հեշաայբաբ, դիւրայլուր, վարդայպետբ, ծանրայխորհուրդ, զանայզան, մեծայտուն և այլն (հեթագրաբար է դար, ԳԶ ԶԶ 37, 38, 39 40):

Ն. Մառը Վարդանի անունով հայտնի առակների ուսումնասիրության մեջ ներկայացնելով բննվող ձևագրերում յ-ի անհարկի հավելման բազմաթիվ օրինակներ, այն մխտըն է հայտնում, թե ա-ից հետո յ-ի հավելումը արտացոլում է տվյալ ոլորտում այդ բառերի արտասանության վիճակը, ըստ այդմ, այստեղ զործ ունենք այ երկրարբառի կամ երկհնչյունի առաջացման հետ անկախ այն պարագայից, թե ինչ դիրքում է գտնվում այ-ը՝ ինքնուրույն բառերի վերջում, թե բառամիջում ա հոդակապից հետո: Ահա իր նկատած վկայություններից մի քանիսը. նայ (<նա), նմայ, նոբայ, ապայ, մեծայտուն < մեծատուն, քարայգործ < քարագործ, բարձրայգոյն < բարձրագոյն, զգուրենայհատն < զգուրենահատն, որովայնայմուրքեան < որովայնամուրքեան, մեծայմեծբ < մեծամեծբ և այլն<sup>63</sup>: Վարդանի ժողովածուների հնագույն ձևագ-

<sup>63</sup> Н. Марр, Сборники притч Вардана, СПб., 1899, ч. I, стр. 162—165.



գրեցում (ժԳ—ժԴ զգ.) նույն հնչյունափոխությունը՝ այ երկհնչյունի առաջացումը Մառը դիտում է նաև ան հանգող մի շարք բաներում, երբ նրանց ավելանում է ն որոշիչ հոգը. այս դեպքում առաջին, արմատական ն-ի փոխարեն գրչագրված է յ, ըստ այդմ տեղի է ունեցել անն > այն -ահա առկոչված փաստերը. բերանգրեանն > գրեայն, նշանն > նշայն, իշխանն > իշխայն, պատմունանն > պատմունայն, դատաստանն > դատաստայն և այլն<sup>64</sup>: Հայագետն այս երևույթը բացատրում է յ-ի անհարկի կիրառությամբ, մինչդեռ ավելի հավանական է այստեղ նկատել ն > յ հնչյունափոխություն, որ կարող է առաջանալ կրկնակ ն-երի տարեմանությամբ: Վիժական բնագրերում այս փոփոխությունը չի դիտվում:

Միջին դարերի գրական արտադրանքներում և ձայնավորից հետո ներմուծվող յ տառածեփ նշանակությունը փորձում է բացատրել նաև Մ. Մաքսուդյանը: Նրա կարծիքով տվյալ դիրքում յ-ն չի հնչվել, այլ միայն նպաստել է նախորդ ա-ի երկարացմանը: Այս վարկածի համար հեղինակը հիմք է բնդունել այն իրողությունը, որ կիլիկյան գրական հայերենում փոխատու լեզուների օ երկար ձայնավորը մի քանի բաներում տառադարձված է նաև այ-ով՝ կումայշ, կումաշ, արար. gumāš, բայծ, բայծաուն, բած, պրս. bāž, աիւանպայշի, թուրք. պրս. divanbašy: Բնիկ հայերեն բաներում ևս ա-ից հետո յ-ի գրությունը, ըստ Մաքսուդյանի, արտացոլում է և ձայնավորի երկար արտասանությունը, օրինակ, կիլիկյան հայերենում վկայված. ըղտայբեոն, ձեռնայդրել, աստուածայպան և այլ բաներ ըստ հեղինակի արտասանվել են՝ ըղտաբեոն, ձեռնադրեց և այլն<sup>65</sup>:

Վիժական բնագրերում յ-ի հավելման մեր նկարագրած վկայությունները արտասանական հիմքից զուրկ են և առաջացել են դասական հայերենի ուղղագրությունը բավարար շարժվ շարժապետելուց:

Ստորև ներկայացնում ենք և հոդակապից հետո յ-ի հավելման մի քանի վկայություններ ժ—ժԴ դարերի վիժական արձանագրություններում. կենայկից < կենակից (Ձրառատ ՈԿԴ ՍԲ), սես՝ Փակլա և իմ կենայկիցս > (Ձառիթափ էՃԷ Դ 195), սեւ կե-

64 Նույն տեղում, էջ 23:

65 Մ. Մաքսուդյան, Երկար ձայնավորները հին հայերենի մեջ, «Արարատ» 1914, XII, էջ 1129:



նայկից իմո Արղուխաթունին», (Անի Չե՛ր Դ 1 68), «կենայկից իմ Սթէլս» (Անի ՉՄԹ Դ 1 64), «եւ իմ կենայկից Սթէնի, կենայկից իմ Թամար» (Բարձրաբաշ ժԳ ՄՎ): Միայրան, միայրանք, միայրանեմ (Հերհեր (Չե՛ր Դ III 51, նա ժԳ 58, Թանատ ժԳ Դ III 78, 72, 84, Վերնաշեն ՉՉ Դ III 99, Քարազուխ Չե՛ր Դ III 172, Հաղբատ ՉժՉ ԿՂՀԲ 162, նա ժԳ 192, Սանահին ժԳ ԿՂՍ 125, նա ՉԼԸ 158, Ն. Գետիկ ՈՉ ՍԲ, Շխմուրատ ժԳ ՄՎ; Մակարավանք ժԳ ՄՎ, Մորո ձորս վանք ժԲ ՄՎ, Կապտավանք ժԳ ՍՍ, Ավան ժԳ ՄՎ, Վարդենիս ժԳ ՍՍ, Հայրավանք Չ ՍԲ): Փակայկալ <փակակալ (Կեչառիս ՈՂԲ ՍԲ, Եղիշե Առաք վանք Չ ՍԲ): Գանձայգին <գանձագին (Բաղարան ՈՉԳ ՍՍ.Բ 203, Գեղարդ ժԳ Հովե՛ս ԱՂ III 14, Արուճ ՉԼԳ ՄՎ): Նորայվան <նորավան (Հալիձոր ժԳ Դ II 52): Փախրայղալէս <Փախաղալայս (Աղուղի ժԳ Դ III 97): Մինայխարուն <Մինախարուն (Դարսրաս ՉՁԱ Դ II 114): Խոցայղեղ <խոցաղեղ (Գնդեվանք Դ III 17, Ազարակաձոր ժԳ Դ III 27, Թալին ժԳ ՄՎ, Կեչառիս ՈՂԴ ՍԲ, Քանաթեռ ՉժԵ ՄՎ, Եղիշ. Առաքիլի վանք Չ ՍԲ, Անդեղակոթ Չե՛ր Դ II 123): Հերայղեղ <Հերաղեղ (Շխմուրադ ժԲ ՄՎ): Հայրայղեղ <Հայրաղեղ (Դրսեղ ժԳ ՄՎ): Սիրայղեղ <Սիրաղեղ (Մշկավանք ժԳ ՄՎ): Խոտայտեղ <խոտատեղ (Կապտավանք ժԳ ՍՍ): Զարայվար <զարավար (Հերհեր Չե՛ր Դ III 68): Գեղայսանձ <գեղասանձ (Հերհեր Չե՛ր Դ III 68): Խալայշահ <խալաշահ (Թանատ ժԳ Դ III 78): Մաքրայփայլ <մաքրափայլ (Թանատ ժԳ Դ III 83): Այգայտեղ <այգատեղ (Վերնաշեն ՉՉ Դ III 97): Արձայնագիր <արձանագիր (Վերնաշեն ՉՉ Դ III 97): Միայծին <միածին (Ալայաղ ՉԻԲ Դ III 116): Մշլպայշէն <Մշլպաշէն (Արատես ՉՄ Դ III 126): Շիկայկարբ <Շիկակարբ (Արատես ՉՄ Դ III 126): Նախայվկայ <նախավկայ (Ամաղու ՈՉ Դ III 217): Մանդատորբայխուցէս <մանդատորբայխուցէս (Հովհաննավանք ՉԷ ԿՂՉ 98): Ամայջան <ամայջան (Հովհաննավանք ժԳ ԴՂՉ 101): Վանայկան <վանական (Թալին ՄԼԲ ԿՂՀԲ 88, Վարդենիս ժԳ ՍԲ): Պարտայկան <պարտական (Հովհաննավանք ՉԻԳ ԿՂՉ 106): Թագավորայգարն <թագատրագարմն (Հովհաննավանք ժԳ ԿՂՉ 100): Տերունայկան <տերունական (Թումանյան ժԳ ՄՎ): Շահայնշահ <շահանշահ (Հոռոմոս ՆՉ ՍՍ.Բ 165, Խժկոնք ՆՄԴ)<sup>66</sup>: Ժամայտուն <ժամատուն

66 Կ. Հովհաննէւսյան (Կրպե), Խժկոնք, «Ազգագրական հանդես», 1896, Գիրք Ա, էջ 43:



(Սաղմոսավանք ժԳ ՄՎ, Գեղարդ ՉԼէ Հոյ ԽԱՂ III 20): Տապա-  
նատուն < տապանատուն (Բագարան ՈԿ ՍԱՐ 203): Հակառակա-  
բար < հակառակարար (Լմբատ ժԳ ՄՎ): Ուխտայտուր < Ուխտա-  
տուր (Քալին ՄԼՔ Քար 10): Ամենայգուր < ամենագուր (Գանձա-  
սար ՈԶԹ ՍԲ): Ամենայկալ < ամենակալ (Աշտարակ ժԳ ՄՎ, ևս  
ԶԿԶ ՄՎ): Ամենայիրկիչ < Ամենափրկիչ (Աշուշալու ՉԼԴ)<sup>67</sup>: Գա-  
մայգին < զբամագին (Մարինե ՉԿԱ ՄՎ, Քորայր ժԲ ՄՎ): Վա-  
հանայգավիթ (Մարինե ժԳ ՄՎ): Խորանայշատեցոյն < Խորանա-  
շատեցոյն (Գանձասար ժԳ ՍԲ): Աշխարհայկալուրեն < աշխար-  
հակալուրեան (Ուշի ՉԺԳ ՄՎ): Աղախնայծին < աղախնածին (Ան-  
տառուտ ՈԽԹ ՄՎ): Կախայբեր < Կախարբեր (Կեշառիս ՈՂԴ ՍԲ):  
Գանձայսար < Գանձասար (Կեշառիս ՈՂԴ ՍԲ): Քահայնայպետ <  
քահանայպետ (Կեշառիս ժԳ ՍԲ): Չարայբերդ < Չարաբերդ (Կե-  
շառիս ժԳ ՍԲ): Գերեզմանայտուն < գերեզմանատուն (Գեղարդ ժԳ  
Հոյ ԽԱՂ III 14): Ողջայբեր < Ողջաբեր (Գեղարդ ժԳ Հոյ ԽԱՂ III  
14): Կաայկերտ < Կաակերտ (Գեղարդ ժԳ Հոյ ԽԱՂ III 40—41):  
Շողայկար < Շողակար (Գեղարդ ժԳ Հոյ ԽԱՂ III 51): Հորայկ-  
տալ < հորակտալ (Ավան ՉԽԶ ԿՂԱ 20, ՄՎ): Մերձայկայից < մեր-  
ձակայից (Ավան ՉԽԶ ՄՎ): Ջաղացայտեղ < ջաղացատեղ (Վան-  
ստան ժԳ)<sup>68</sup>: Միայհամուտ < միահամուտ (Առաջածոր ՈՂԸ ՄՎ):  
Աստուծայպսակ < աստուծապսակ (Գարեհջա ՉԻԴ)<sup>69</sup>: Միայն  
կրկնագատիկ > կրկնոգատիկ բառում յ-ն ավելացել է ո հողակա-  
պից հետո՝ կրկնոյգատիկն է ժամն (Բագնայր ՈԿԴ ԲԱՍ 159):

#### ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունների առնամանությունը փոխազդեցական հնչյունա-  
փոխության, այն երևույթն է, երբ բառի մեջ արտասանվող հընչ-  
յուններից մեկը ազդելով մյուսի վրա՝ նույնացնում կամ նմանեց-  
նում է իրեն: Առնամանությունը լիակատար է համարվում, երբ այդ  
ազդեցության հետևանքով ազդվող հնչյունը բոլոր հատկանիշնե-  
րով նույնանում է ազդողի հետ. օրինակ բոկ(իկ) բառի բ ձայնեղ  
պայթական բաղաձայնը ազդելով հաջորդ կ խուլի վրա նրան լի-  
ութին նույնացրել է իր հետ՝ բոբիկ: Մասնակի առնամանության

67 Ս. Բարխուդարյան, Նոր հյուսիս..., էջ 268:

68 Աշխ. Քալանթար, Վանստանի արձանագրությունները (անտիպ ժողովա-  
ծալ):

69 Լ. Մելիքսեթ-Քեկ, Վերահայոց վիճական տարեգիր (անտիպ ժողովածու):



գեպքում հնչյունները շեն նույնանում, այլ միայն մոտենում, նը-  
 մանվում են իրար, ըստ որում այդ նմանությունը կարող է լինել  
 կամ ըստ արտասանության եղանակի (սլաբական, շվաբական և  
 այլն), կամ ըստ ձայնեղության (խուլ, ձայնեղ, շնչեղ), կամ ըստ  
 տվյալ հնչյունի արտաբերման տեղի (շրթնային, լեզվային, կո-  
 կորդային): Առնմանությունը ըստ ազդող հնչյունի տեղադրության  
 կարող է լինել առաջընթաց, երբ նախորդ հնչյունն է ազդում  
 հաջորդի վրա և ետընթաց, երբ տեղի է ունենում հակառակը:  
 Հնչյունների առնմանության հետևանքով առաջացած փոփոխու-  
 թյունները սովորաբար դիտվում են իրրև կանոնավոր ձևերի  
 ավանդախախտումների կամ արտասանության վրիպումների և լայն  
 տարածում չգտնելով լեզվի մեջ, օրինակափոխություն չեն դառնում:  
 Սակայն երբեմն առնմանությամբ առաջացած հնչումները զուգա-  
 հեռ գործածվելով սկզբնաձևերի հետ սլատմական դարգացման  
 ընթացքում կարող են հաղթել, դուրս մղել վերջիններիս և դառնալ  
 լեզվի հնչյունական համակարգի կանոնավոր, տիրապետող հնչում-  
 ներ: Հին հայերենում տեղի ունեցած մասնակի աքնմանության որոշ  
 իրողություններ հետագայում տիրապետող, օրինակափ են դարձել  
 մեր լեզվի համար և նորմավորվել: Այսպես է եան, ան հուլովման  
 բառերի գործիական հոլովաձևերում ն>մ փոփոխությունը, որ  
 կատարվել է ր հոլովակազմիչի մասնակի առնմանումով. ողոր-  
 մուրիւն, գործ. ողորմութեանք-ողորմութեամք, աբիւն, գործ. ա-  
 բեանք-աբեամք, տուն-տանք-տամք-տամբք և այլն:

Վիմական արձանագրություններում դիտվում են թե ձայնավոր և  
 թե բաղաձայն հնչյունների առնմանության բազմաթիվ դեպքեր,  
 որոնց բնությունը զգալի նպաստ կարող է լինել ոչ միայն բնա-  
 գրերի ստույգ վերծանությանը, այլև նրանց լեզվական առանձ-  
 նահատկությունների ու ժամանակագրության բացահայտմանը:  
 Մի կողմ թողնելով դեռևս հին հայերենից հայտնի օրինակները,  
 վիմագրական հուշարձաններում կարելի է դիտել հնչյունների առ-  
 նմանության հետևյալ դեպքերը:

Ա. Ձայնավորների առնմանությունը կամ ներգաշնակությունը  
 դիտվում է այս բառերում. կարողիկոս > կարաղիկոս, կարողի-  
 կէ > կարաղիկէ, այստեղ ա ձայնավորի լիակատար աքնմանու-  
 թյամբ ո հնչյունը նույնացել է ա-ի հետ: Հուն. *καθολικος, καθολικη*  
 բառերի տառադարձությունը հին մատենագրության մեջ անհր-  
 շյունափոխ է՝ կարողիկոս, կարաղիկէ: Առնմանությունը նը-  
 կատվում է հնագույն վիմական բնագրում՝ Տեկորի տաճարի հայտ-



նի շինարարական արձանագրության մեջ. «Ի ձեռն Յոհանու հայոց կարաղիկոսութեան<sup>70</sup>: է դարի շինարարական այլ բնագրերում նույն բառը հանդիպում է կանոնավոր՝ կարողիկոս (Հոփսիմեհ, Բագավան), կարաղիկե (Արուճ): Հետագա դարերի վիճագրերում կարաղիկոս անունանումով վկայությունները ավելի են հաճախանում. Արուճի տաճարի ՅԺԶ (867) թ. բնագրում կարգացվում է. «Ի կարաղիկոսութի Զաքարիայի» (ՄՎ), նույնը նաև Կոշի եկեղեցու պատին. «Ի կարաղիկոսութի տն Խաչկա» (Կոշ նլ ՄՎ), Անիի Մայր տաճարում՝ «տն Սարգսի հայոց կարաղիկոսի... (նՄ Դ I 35), «սուրբ կարաղիկեիս» (Անի Դ I 39), «Պետրոսի հայոց կարաղիկոսի» (Անի ՆՂԹ Դ I 43), «վկայ ենք, որ կարաղիկոսին հրամանք» (Անի, վրաստանի Եպիփանե կաթողիկոսի վրացերեն արձանագրության ներքեում. ՈԿԵ Դ I 61), «շինեցի զսբ կարաղիկես» (Յաղացբար նՂ Դ III 151), «տն Պետրոսի հայոց կարաղիկոսի» (Բագնայր նՂԱ ՍԱՐ 178), «ի սբ կարաղիկե» (Մրեն նեԱ ՍԱՐ 197), «սուրբ կարաղիկե» (նտ), «Սարգսի հայոց կարաղիկոսի» (Մակարավանք նՄ ՄՎ), «սուրբ կարաղիկե» (Թալին նՄԶ ՄՎ), «տն Դիոսկորոսի հայոց կարաղիկոսի» (նտ նՂԹ ՄՎ), «սալեցի զսուրբ կարաղիկես» (նտ ԺԴ ՄՎ):

Արդի բարբառներում կարողիկոս բառը ավանդված է զգալի շափով հնչյունափոխված տեսքով, սակայն բոլոր դեպքերում աղբյուրը գրաբարյան արտասանությունն է: Վիճագրերում փորագրված կարաղիկոս ձևին ավելի մոտ են Սալմաստի՝ կարաղալոս, Շամախիի՝ կարաղալոս, Երևանի՝ կարաղոգոս ձևերը: ՀԱճառյանը կարաղիկոս ինքնուրույն ձև է համարում և նրա առաջացման համար ենթադրում է մի այլ՝ գրաբարին զուգահեռ և նրանից տարբեր աղբյուրի գոյություն<sup>71</sup>: Այլ հետազոտողներ կարաղիկոս ձևի առաջացումը հնագրական սխալագրությամբ են բացատրում, գտնելով, որ ալ-ի փոխարեն փորագրվել է ա, ըստ այդմ, առկա է ալ=օ>ա հնչյունափոխություն՝ կարաղիկոս>կարաղիկոս<sup>72</sup>:

Մեւրապուլիտ, մեւրապուլիտ > մեւրապուլիտ, հունարեն

<sup>70</sup> Н. Марр, К датировке ктитурской надписи Текорского храма, ХВ, вып. II, 1914, стр. 58, Գ. Հովսեփյան, Քարտեղ... էջ 5:

<sup>71</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Արմ. բարբառն, Գ, էջ 854, Հայոց լեզվի պատմություն, Բ, էջ 389:

<sup>72</sup> Տե՛ս Գր. Խալաթյանցի առաջարանը «Աւետարան ըստ Քարգմանութեան ճախնեաց մերոց», Մոսկվա, 1899, էջ է—Թ:



μνηστευόμενος գրաբարում ամենուրեք արտասանվել և տառադարձ-  
 վել է մետրոպոլիտ, մետրոպոլիտ, հետնաբար նաև կանոնավոր՝  
 մետրապոլիտ<sup>73</sup>, ըստ այդմ վիմական բնագրերում առկա է ա ձայ-  
 նավորի ազդեցությամբ n>ա նույնացումը: Ահա եզած օրինակ-  
 ները. «մետրապոլիտ Սիւնեց» (Ամաղու ՉԶԴ Դ III 232), «մեծի  
 մետրապոլիտին Սիւնեց Ստեփանոսի» (նա ՉՄԲ Դ III 233): Ա-  
 րաբեկ>արաբակ>արապակ, կանոնավոր ձևերի հետ (թուրք.  
 atabek, շաղաթ. atā beg = մեծ հայր, կառավարիչ) զուգահեռ վը-  
 կայված են նաև առնմանումով առաջացածները. «ի պետութեա ա-  
 րաբակ Իւանէի» (Անի ԺԳ Դ I 14), «արաբակ Իւանէի» (նա ՈՂԱ  
 Դ I 7), «պատրոնաց մերոց արաբակ Իւանէի և ամիրասպասա-  
 լար շահնշահ Սարգսի» (Անի ՈԿԹ Դ I 17), «ես՝ արապակ վար-  
 համ» (Անի ՉԳԱ Դ I 44): Կատեպան- բյուզանդական պետական  
 պաշտոնյա, մարզի, թեմի կառավարիչ, կողմնապետ, կուսակալ-  
 հուն. κατεπανα = ֆաղաֆապետ, գլխավոր բառից: Անիի 1058—  
 1060 թթ. արձանագրում երկու անգամ հիշատակված՝ կատապան  
 (Դ I 37), ըստ այդմ եզրային ա-երի առնմանությամբ կամ ներ-  
 դաշնակցությամբ տեղի է ունեցել ե>ա՝ կատեպան>կատապան:  
 Բառիս անհնչյունափոխ նախաձևը՝ կատէպան Արարատյան բար-  
 բառում գործածվում է այգեպան, այգու պահապան իմաստով<sup>74</sup>:  
 նգոված, անմոռաց>նգաված, անմառաց, առկա է ա ձայնավորի  
 հտընթաց առնմանությունը, որի հետևանքով տեղի է ունեցել  
 n>ա՝ անմառաց խնդրէ (Մրին ԺԳ. ՕրՃՄ 1), նգաված եղիցի  
 (Հալիձոր ԺԳ Դ II 52): Շնահատր>շնահատր և այս բառից  
 կազմված անձնանուններում դիտվում է այլ փոփոխությունների  
 հետ նաև n>ա հտընթաց առնմանություն: «Ած շնահատր արաս-  
 ցէ» (Մրեն ՉԺ Mapp HM 83, Դ I VI), «ած շնահատր արասցէ  
 պարոն Սահմադիինին» (նա ՉԶԵ), «ես՝ Շնահատր տփխեցի» (Հաղ-  
 բատ ՉԲ ԿՂԶԲ 168), «Շնահատրին (Գյուլամբուլաղի վանք ԺԳ  
 Դ III 119), «որդո Շնահատրին» (Կեչառիս ՈՂԷ)<sup>75</sup>: Դահեկան>դե-  
 հեկան, դիտվում է ն ձայնավորի հտընթաց առնմանումով առա-  
 ջացած ա>ե հնչյունափոխություն: Ժ—ԺԴ դարերի վիմագրության  
 մեջ պահպանված բազմաթիվ գեղերից մեջ ենք բերում մի քա-  
 նիսը. «տվի... դեհեկան» (Տեղեր ՈՂԷ ՄՎ), «տուի լԺ: դեհեկան»

73 Տե՛ս Հ. Անտոյան, Արմ. բառարան, Գ, էջ 992—993:

74 Հ. Անտոյան, Գավառական բառարան, էջ 554:

75 Հ. Նղիպարյան, Կեչառիսի վանքը... «Էջմիածին», 1955, № 12, էջ 45:



տարենն» (Բարձրաբաշ ՈՂԳ), «հտու ի: դեհեկան» (նտ ԺԳ)<sup>76</sup>, «հտու իՃ: Խ: դեհեկան» (Հաւուց Թառ ԺԳ ՀՈՎ ՀԹ 27), «:Մ: դեհեկան» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ 52), «էտ ի: դեհեկան» (նտ 58), «հտու ի: Խ: դեհեկան» (Աղջոց ԺԳ նտ 71), «էտուար ի: դեհեկան» (Հոռոմայր ՈՀԹ ՄՎ): Մեծարանց > Մեծերենց, առաջընթաց առնամանության հետևանքով բառամիջի երկու ա-երը փոխվել են ե-ի, վկայված է նույնանուն վանքի մի արձանագրում. «Ի Մեծերենց աթոռս» (Մեծարանց վանք 2)<sup>77</sup>: Մեղաց > մեղեց. «մեղեց Թողութեն եւ արեւշատութեն իմոյ» (Վարդաբլուր ՆՂԹ ՍՍ): Ի վերայ > ի վերէնին, «տեսար զԱնո ցիրիցանիս, որ հարկ կէր ի վերէնին» (Անի ԶԼԸ Գ I 22): Ելիկում < էլիկում > Ալուկում > էլուկում, առկա է ի > ու անցումը ու-ի առնամանումով. «Եւ որոց մերոց Տարսա-իճին, Շայանշահի եւ էլուկումին» (< էլիկում) (Զինչիրու ԶՄ Հով ՏՄ 16), «իմ որոցն՝ Ալուկումին, Սմայատա, Իւանէի» (Ամաղու ՈՀ Գ III 211), նույն բնագրում երկրորդ անգամ անձնանունը փոքրացված է՝ Ալակումին: Ելիսկոպոս > իլիսկոպոս. «Սիւնեց իլիսկոպոս. «Սիւնեց իլիսկոպոս կանկնեցի խաշս» (Ամաղու ԺԳ Գ III 229): Զոբանշատափ > Զաբանշատափ, ա-երի ազդեցութեամբ տեղի է ունեցել n > ա նույնացումը: Միակ վկայութիւնը գտնում ենք Հաղբատի վանքի ս. Սիոն մատուռի ԺԳ դ. մի նվիրագրում. «Զաբանշատափի զիւր էզին» (ԺԳդ. ԿՂՀԲ 247): Բարդ բառերի առաջին բաղադրիչի ձայնավոր հնչյունի առնամանութեամբ հաջորդող ա, ե (=ի + ա) հոգակապը նույնանում է ազդող ձայնավորի հետ. օրինակ, հոգի-ա-տուն = հոգետուն > հոգոտուն. «շինեցի կարմուշս, հոգոտունս» (Շատին ԺԳ Գ III 162): Հոգերաժին > հոգորաժին-«Եւ տվար ի հալալ ընչից մեղ հոգորաժին» (Թանատ ԺԳ Գ III 86), «հտու զիմ ոգորաժին» (Անի ԺԳ Գ I 50): Խնձորաբակ > Խնձորաբակ- «գիւնձորաբակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի» (Խաթրավանք ՈՄԳ ՄՎ):

Բ. Բաղաձայն հնչյունների առնամանությունը դիտվում է հետևյալ բառերում. աստիհան > աշտիհան, և բարդ կիսաշփականի ազդեցությամբ ս սուլականը փոխվել է շ շլականի, այսինքն կա-

76 Գ. Սարգսյան, «Բարձրաբաշ» վանքը..., «էջմիածին», 1951, № 9-10, էջ 45, 11-12, էջ 46:

77 Խ. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր» 1901, էջ 137-138:



տարվել է հորնթաց մասնակի առնմանում. «ես՝ Տիգրան շինեցի գաշտիեաններս» (Անի ՈԿԲ Գ I 34); Անրախա > ամրախա, բ շրթնային պայթականի ազդեցությամբ և ռնդայինը մոտեցել է նըրան և դարձել շրթնային մ. «ամրախա Գրիգոր» (փորագրված է Անիում մի երեսապատման սրբատաշ բեկորի վրա, ՈՂԸ Գ I 71); Ճանապարհ > ճամբահ, նախ պ խուլ շրթնայինի առնմանմամբ և ռնդայինը փոխվել է մ-ի և ապա տեղի է ունեցել պ > ք ձայննդացում. «ի Բովաշարու կարմնջէն ի Վաղաիրու ճամբահն» (Հոռոմոս ՉԺԵ ՍԱՐ 157); Թեոդորոս > Թեոդոր > Թողր > Թոքր, տեղի է ունեցել դ > ք առնմանումը. «պատարագն կարապետին, նահապետին, Թոքրին» (Սանահին ՉԻԹ ԿՂՍ 159—160); Ջաղացք, սեռ. ջաղցաց > ջաղջաց, ըստ այդմ առկա է ջ ձայննդ կիսաշփականի ազդեցությամբ ց > ջ անցումը. «...թողար դխարաճ ջաղջաց» (Շիրակավան ՈՉ ՍԱՐ 171); Անսկզբան > անըսկսբան, տեղի է ունեցել զ > ս խլացում u սուլականի առաջընթաց առնմանումով. «ես եմ լոյս ընդ հար բարձրելոյ անըսկսբան» (Առաքելոց ԺԳ ՄՎ). «ի սկսբանէ (> սկզբանէ) բաժ ու տամղա շէին տվել» (Անի ՉԻԸ Գ I 23); Սամուէլ > Սանուէլ, միջձայնավորային մ հնչյունի փոխվելը ն-ի հազիվ թե հնարավոր լինի բացատրել նույն բառի կազմում եղած հնչյունների փոխազդեցությամբ: Գրական և վիմագրական այլ վկայություններում այս փոփոխությունը չի դիտվում<sup>78</sup>, մինչդեռ արդի մի քանի բարբառներում Սանուէլ արտասանությունը ավելի է տարածված քան կանոնավորը: Թվում է, այստեղ պետք է նկատել իր կազմությամբ Սամուէլ հիշեցնող Մանուէլ անձնանվան առնմանիչ ազդեցությունը կամ ձևաբանական առնմանություն: Վկայությունները Հոռոմայրի վանքի վիմական բնագրերում. «...ես՝ Սանուէլ առաջնորդ» (ՈՍ ՄՎ), «մենք՝ հայր Սանուէլ և միաբանքս» (ՉԼԵ ՄՎ), «ի հայրութեան Սանուէլի» (նա): Աթոռիկ պատմական գյուղատեղում կանգնած խաչքարի պատվանդանի ճակատին. «զՊետրոս, զՊաւղոս, զՍանուէլ» (ՉԻԸ ՄՎ, ԿՂԷԲ 265, քաղում է Հ. Ղրիմեցուց, որտեղ Մանուէլ է), «Սանվել քահանա որդի Սեթ քահանաի» (Գարարաս ՉՄԵ Գ II 111), նույն խաչարձանի պատվանդանի վրա փորագրված է Սանվելի եղբոր՝ Մանվելի արձանագիրը՝ «թվ ՉԼԶ ես՝ Մանուէլ կանգնեցի զխաչս»: Այստեղ բնական է Սամուէլ > Սանվել փոփոխությունը եղբոր անվան՝ Մանուէլ-ի համաբանությամբ (Գ II

78 Հ. Անառյան, Անձն. բառարան, Գ, էջ 380—387.



111)79: Խաղրակ > Ղաղրակ, դ հնչյունի և տրենթաց առնմանության հետևանքով առաջացել է խ > ղ ձայննդացում. «ես՝ վասակ, թոռն Ղաղրակայ» (Աղբոց վանք ժԳ Հով ԽԱՂ III 85): Կանդիդատ > կանկիտատ, վկայված է սպարաբանկիտատ կապակցությունում (հուն. κατακτανδιδότος), միայն Անիի բյուզանդական շրջանի արձանագրում. «Գրեգոր կապաստակա որդին սպարաբանկիտատն և Սարգիս Արտաազա որդին սպարաբանկիտատն» (Անի 1060 Դ I 37), այստեղ բառասկզբի կ հնչյունի ազդեցությամբ դ-ն փոխվել է կ-ի: Հոփսիմէ > Հոփմսիմէ. «և սբ Հոփմսիմեացն և թողկա» (Ն. վարագ ՈՁ ՄՎ), «սբ Հոփմսիմեաց տանին» (Հաղարծին ժԳ ՄՎ), մ ընդայինի և տրենթաց առնմանությամբ տեղի է ունեցել փ > մ նույնացում:

Հին հայերենի ան, եան հոլովման բառերի գործիական հոլովաձևերում բ հոլովակազմիչի առնմանությամբ առաջացած և > մ հնչյունափոխությունը՝ աբին-աբեան-աբեամբ, տունք-տանց-տամբք բնդհանրական, ավարտուն օրինաչափություն էր հայերենի գրի առնվելուց շատ առաջ: Հին մատենագրության մեջ և հնագույն վիճական բնագրերում այդ կարգի հոլովաձևերը եղակի և հոգնակի թվում վկայված են միայն հնչյունափոխված՝ ամբ-ամբք, եամբ-եամբք: Սակայն վիճագրերում գործիական հոլովաձևերը երբեմն փոքրագրվում են նաև նախնական ձևով, առանց մ > և փոփոխության, որ հավանաբար արտացոլում է այդ ձևերի ստուգաբանական գրությունը, անկախ նրանց արտասանությունից:

Ահա եղած օրինակները. հնագույնը Տաթևի Սյուն-գավազանի կառուցողական արձանագրում. «հրամանալ ամապահ տերանց և յաժարութեանք (= յաժարութեամբ) իմոց կրանաւորաց» (ՅԽԴ 895 Բ. Դ II 23), «միաբանութեանք հաւր Ստեփանոսի» (Թալին ՆՁԹ ՄՎ -անտիպ), «անվանքն (<անուամբ) այ ևս՝ Աշոտ, Թուկայ որդի» (Գնդեվանք ժԲ—ժԳ դդ. Դ III 16), «գրեցաւ և կնքեցաւ անուանքն այ» (Ն. վարագ ՈՁՁ ՄՎ):

79 Պրոֆ. Կ. Ղաֆազարյանը «Դիվան հայ վիճագրության» պր. II ժողովածուի մասին գրած գրախոսականում (ՊՐՀ, 1961, № 3—4, էջ 338) այս արձանագրությունների հեղինակներին նույն անձը համարելով, առաջարկում է ՉՄԵ Բ. բընագրի անձնանունը կարգալ Մանվել, բառ երևույթին անհավանական համարելով Յանուել > Մանվել փոփոխությունը: Թվում է, տարրեր ժամանակներում (ՉԼԶ և ՉՄԵ) փոքրագրված տապանագրերի բովանդակությունից հազիվ թե հնարավոր լինի այդպիսի հետևություն անել, պարզապես Մանուել-ը և Մանվել քահանան տարրեր անձեր են՝ Սեթ քահանայի որդիները:



Մասնակի առնմանության հետևանքով հին հայերենի բայերի սահմանակառն ներկայի հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունը՝ մ(f) միջին հայերենում և արդի բարբառներում հնչյունափոխվում է ն(f)-ի, այսինքն համալիզվային և շնչեղ պայթականի ազդեցությամբ նախորդ մ շրթնային ձայնորդը արտասանության տեղով մոտենում է նրան՝ վերածվելով ն-ի, ըստ այդմ, տեղի է ունենում սիրեմք > սիրենք, աղամք > աղանք, հեղումք > հենղունք և այլն: Մ(f) > ն(f) հնչյունափոխության առաջացման ժամանակաշրջանը ստույգ որոշված չէ. հարցի բնությունամբ զբաղվող հայագետները տվյալ փոփոխության ժամանակը որոշելիս սովորաբար հիմք են ընդունում մատենագրության մեջ ավանդված հնագույն վկայությունները, ըստ այդմ, Յ. Կարստը, Հ. Աճառյանը դրանք նկատել են նախ Մխիթար Հերացու միջին հայերենով շարագրված բժշկարանում՝ ենք (եմք), կանք, կամիք, յիշենք, տանք, տեսանենք, իսկ հետագայում, ավելի սակավ, նաև ժամանակի գրաբար երկերում, ասենք Վարդան Արևելացու «Պատմության» մեջ՝ ենք, չենք, չգիտենք, ուզենք և այլն<sup>80</sup>: Սակայն, հազիվ թե հնարավոր լինի թվարկված բայաձևերում մ(f) > ն(f) արտասանությունը աներկբա վերադրել Մ. Հերացուն կամ Վարդանին, բանի որ նրանց երկերը մեղ են հասել ավելի ուշ շրջանի արտագրություններով, որոնցում անխուսափելի էին հեռանդարյան ընդմիջարկությունները և սրբագրումները: Ինչպես տեսանք, կարծեսցյալ Շապուհ Բագրատունու երկում ևս ավանդված են այդպիսի ձևեր՝ մենք < մեք, տանք < տամք, սակայն այստեղ ևս վկայությունների ժամանակի անորոշության պատճառով զգուշանում ենք գրանք հնագույնը համարել: Ակներև է, որ թե միջին հայերենում և թե ժամանակի գրաբարով շարագրված երկերում մ(f) > ն(f) մասնակի առնմանությունը կարող էր առաջանալ խոսակցական լեզվի, բարբառային արտասանության ազդեցությամբ:

Վիմական բնագրերում և հին ձեռագրերում պահպանված վրկայությունները հնարավորություն են տալիս ավելի ստույգ որոշել մ(f) > ն(f) առնմանության սկիզբը կամ համենայն դեպս այդ ձևերի նախնագույն հիշատակությունների ժամանակը: Մեղ հայտնի հնագույն վկայությունը գտնում ենք Լազարյան ճեմարանի ՅԼՁ (887) թ. ավետարանի հիշատակարանում, որտեղ պարզ գրչա-

<sup>80</sup> J. Karst, Historische Grammatik... S 102, 109, 2. ԱճԱՐՅԱՆ. Լիտատար քերականություն... հատ. 4, Ա, էջ 402—403:



գրված է. «կատարենք ուխտ առ անձ շնորհիւ սբ Ածայծնին եւ ի մարդկանէ»<sup>81</sup>:

Վիմական արձանագրութիւններում հնագույնը պետք է համարել Հաղրատի ՇԺԶ (1067) թ. նվիրագրում փորագրվածը. «Յամենայն եկեղեցիքս ժամ առնենք..., իւր ծնողացն առնենք», կամ նույն ժամանակներում փորագրված թագավորական արտոնագրի հատուցման ձևակերպման մեջ. «Յամենայն եկեղեցիքս ժամ նմա առնենք» (ԿՂՀԲ 156, 157), Խժկոնքի ՆԶ (1031) թ. մի բնագրում, որի վերծանութիւնն անստուգելի է. «որ կանք (<կամք) ի թաղնամ»<sup>82</sup>: ԺԲ—ԺԳ դարերի բնագրերում փոփոխութիւնն արտացոլող բայաձևերի հիշատակութիւնները հաճախանում են, թեև գրքարարյան կանոնավոր մ(Բ) վերջավորութիւնը դեռևս տիրապետող է: Ահա մի քանի օրինակներ այդ դարերից. «տվինք տարում Գ: ար պատարագ» (Հավաստուկ ԺԲ Հով ԽԱՂ III 30), «վկայ ենք» (Անի ՈԿԵ Դ I 61), «կենդանի ենք» (Հովհաննավանք ՈՂԹ ԿՂՀ 103, Հաղբատ ՈՂԱ ԿՂՀԲ 178, Հոռոմոս ՈՂԴ ՍԱՐ 150, Սաղմոսավանք ՈՂ ՄՎ, Խորանաշատ ՈՂԳ ՄՎ), կանկեցցինք զխաչս (Ակունք ԺԳ ՍԲ, Հալիձոր ԺԳ Դ II 53, Խոտ ԺԳ Դ 62, Ամաղու ԺԳ Դ III 125), միայրանեցանք..., տվինք (Հովհաննավանք ԺԳ ԿՂՀ 108), կատարենք (Հոռոմոս ՈՂԵ ՍԱՐ 154), հաստատեցինք (Խորանաշատ ՈՂԳ)<sup>83</sup>, տվինք վախմն (Հայրավանք ՈԿԵ ՍԲ) և այլն:

Թվարկված վկայութիւնները հնարավոր են դարձնում I դեմքի բայաձևերում մ(Բ) > ն(Բ) հնչյունափոխության առաջին արտահայտութիւնները համարել Թ—Ժ դարերից, իսկ երևույթի տարածվելը և համընդհանուր օրինաչափութիւնն վերածվելը հետագա՝ ԺԳ—ԺԴ դարերում:

Հայերենագիտութիւնն մեջ այն համոզումն է հաստատված, որ հին հայերենի մեք դերանվան մեջ և ձայնորդի հավելումը և մեքն ձևի առաջացումը տեղի է ունեցել ն(Բ) վերջավորութիւնը հոգնակի I դեմքի, ինչպես նաև հոգնակի III դեմքի (սիրեն, կարդան) բայաձևերի ձևաբանական առնմանութիւնը՝ մեք սիրեմք > մեքն սիրենք:

Յ. Կարստը մեքն-ի մեջ դիտում է սոսկ և ձայնորդի հավելում, առանց պարզելու հնչյունափոխութիւնն պատճառները: Հիմք

81 «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց», էջ 110: Գ. Հովսեփյան, Հիշատակարանց ձևագրաց, Անթիլիաս, 1951, էջ 85:

82 Կրպե, Խժկոնք, «Ազգագրական հանդես» զիրք Ա, 1895, էջ 41—50:

83 Կ. Ղաֆազարյան, Պատմա-Վնագիտական դիտողութիւններ..., «Տեղեկագիր» ԳԱ Հայկական ֆիլիալի, № 4—5, Երևան, 1940, էջ 177:



ընդունելով Հերացու և կիլիկյան գրական հայերենով շարադրված մյուս գրվածքներում ավանդված վկայությունները, Կարսը մե՛նք <մե՛ք առաջացման ժամանակը համարում է ժԲ—ժԳ դդ.<sup>84</sup>: Վիճագրության մեջ մե՛նք այնքան էլ հաճախ չէ, ինչպես նե-ով բայաձևերինը: Միակ վկայությունը փորագրված է Հաղբատի վանքի ԶԺԱ. (1262) թ. նվիրագրում, որը բառ Կ. Ղաֆագարյանի վերծանության կարգացվում է. «...կենդանի ենք, զոր Աժ տա, այլ մե՛նք արդիւնս» (ԿՂՀԲ 212):

#### ՀԵՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունների տարնմանությունը առնմանության հակառակ հնչյունափոխական երևույթն է, որի հետևանքով բառի կազմի մեջ մտնող միատեսակ կամ նման հնչյունները ազդում են իրար վրա և այս կամ այն հատկանիշով հեռանում իրարից: Այս հնչյունափոխության ժամանակ սովորաբար փոխազդեցության մեջ գտնվող հնչյուններից մեկը պահպանում է իր նախնական հնչումը, իսկ մյուսը փոխվում, վերածվում է մի այլ հնչյունի: Օրինակ, հին հայերենի մղեղ բառը բարբառներում դարձել է մանղ, երկու դ-երի տարնմանության ազդեցությամբ: Յերեկ (= ց-երեկ(ույ) որոշ խոսվածքներում և միջին հայերենում հնչյունափոխվել է ցորեկ, բառամիջի և ձայնավորների տարնմանությամբ: Ինչպես և առնմանությունը, հնչյունների տարնմանությունը ևս կարող է լինել մասնակի և լիակատար, առաջընթաց և հտընթաց: Հնչյունների տարնմանությունը ավելի հաճախ առաջանում է կենդանի, խոսակցական լեզվում և սովորաբար հազվադեպ է արտահայտվում գրությունում: Միջնագարի վիմական արձանագրություններում պահպանվել են հնչյունների տարնմանության երևույթներով բազմաթիվ բառեր ու անուններ, որոնց իմացությունը կարևոր է ոչ միայն վիճակի բնագրերի հավաստի վերծանության, այլև մանավանդ միջին հայերենի և արդի հայ բարբառների հնչյունափոխական իրողությունները ստույգ բացատրելու համար:

Ա. Ձայնավոր հնչյունների տարնմանությունը դիտվում է հետևյալ բառերում. եպիսկոպոս > եպիսկապոս, տեղի է ունեցել երկու ու-երի տարնմանություն, որի հետևանքով վերջընթեր ու-ն վերածվել է ա-ի: Հնագույն վկայությունը Սյունի վանքի է դարի հիշատակագրության մեջ է, որ փորագրված է դմբեթի բարձրաբան-

<sup>84</sup> J. Karst, Historische Grammatik., S. 104, 225.



դականերից մեկի ներքևում. «սր Յովսէփ Սինեաց Եպիսկոպոս<sup>85</sup>», «եւ բարէպաշն ամիրապետ... էպիսկոպոս» (Սանահին Ժ—ԺԱ ԿՂՍ 99), «Մկրտիչ Եպիսկոպոս եւ եղբարքս խոստացան» (Հովհաննավանք ՈՂԲ ԿՂՀ 95): Գերենիկ > Գերանիկ, մատենագրութեան մեջ ևս վկայված է Ե-երի տարնմանութեամբ առաջացած Ե > ա փոփոխութիւնը. Թովմա Արծրունու Պատմութեան մեջ, օրինակ, կարդացվում է. «մեծանուն իշխանն Գրիգոր, անուանեալ Գերանիկ»<sup>86</sup>: Վիմագիր միակ հիշատակութիւնը պահպանվել է Գնդեվանքում. «ես՝ Սոփի Սինեաց տիկին Գերանիկին դուստր շինեցի զեկեղեցիս» (931 թ. Դ III 13): Սողոմոն > Սաղոմոն, առկա է անհանգիստ մեջ երեք Ե-երի տարնմանութեան, որով առաջինը վերածվել է ա-ի, դրական աղբյուրներում ևս դիտվում է այս հնչյունափոխութիւնը. Մաքնոցաց վանքի վանահայր Սողոմոնի անունը Կաղանկատվացու երկում ավանդված է՝ Սաղոմոն, Ստ. Օրբելյանի՝ «Պատմութեան» մեջ՝ Սաղոմոն<sup>87</sup>: Վիմագրութեան մեջ կանոնավոր ձևերի կողքին մեկ անգամ հանդիպում է՝ «ես՝ Սաղոմոն միաբանեցի» (Խորանաշատ ԺԳ ՄՎ): Աբրահամ > Աբրէհամ, դրական բազմաթիվ վկայութիւններում այս փոփոխութիւնը չի նկատվում<sup>88</sup>: Կեշառիսի տապանագրերից մեկում հանդիպում է. «այս է հանկիստ շնորհաց Աբրէհամ քահանայի» (ԶԻԲ ՄՎ): Սենեֆերիմ > Սինաֆերեմ > Սինաֆերիմ, երեք Ե-երի հարևանութիւնը մի բառի մեջ առաջացնում է նրանց տարնմանութիւն, որի հետևանքով նրանցից մեկը կամ երկուսը հնչյունափոխվում են ի կամ ա ձայնավորների: Մատենագրական երկերում ևս նկատելի է այդ իրողութիւնը՝ Սենաֆերիմ, Սենիֆարիմայ և այլն<sup>89</sup>: Վիմական արձանագրութիւններում այս տարնմանութեան հնագույն վկայութիւնը 992 թ. Մի խաչքարի հիշատակագրութեան մեջ է. «ի թագաւորութեան Սինաֆերեմա» (Սարիղամիչ ԿՂՀԳ 53, 88), այնուհետև գրութեան որոշ տարբերութիւններով նույն անձանունը գտնում ենք նաև Մարմաշենի վիմագրութեան մեջ. «գուստր մեծին Սենիֆերիմա (ԺԱ գ.

85 Ստ. Մնացականյան, Սիսավանի պատկերաքանդակները և տաճարի կառուցման փամանակը, ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 10, էջ 66—67 Դ. Чубукашвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, տախտակ 34

86 Թովմայի վարդապետի Արծրունայ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 459:

87 Սովսե Կաղանկատվացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 309, Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 224:

88 Հ. Անտոյան, Անձն. բառարան, Ա., էջ 30—43:

89 Հ. Անտոյան, Անձն. բառարան, Գ, էջ 490



ՕրծԻՏ 444), Ամաղուի նորավանքում՝ «որդո Սինիֆէրիմ արքաի» (ՇեԳ Դ III 226), Հաղբատի վանքի մի տապանադրում՝ «Սինաֆերիմ թոռն աւագ Սենաֆերիմա» (Հաղբատ ԺԳ ԿՂՀԲ 187): Շե-րենիկ > Շարենիկ, առկա է ե > ա տարնմանությունը՝ «աւար զոր Սարգսին տաւնն Շարենկանն որդոյն» (Սանահին ՈԱ ԿՂՍ 99)<sup>90</sup>:

Բ. Բաղաձայն հնչյունների տարնմանություն կարելի է նկատել հետևյալ միավորներում. դամպար > դանպար, պ խուլ պայթակա-նի տարնմանությամբ մ հնչյունը արտասանության տեղով հեռացել է նրանից և վերածվել ն-ի: Միակ հիշատակությունը Կարմրաշենի խաչքարի ընդարձակ հիշատակագրության մեջ է. «...տակ զսա զանպար յույսո ընդառաջ» (ՆԼԹ Դ III 41—42): Բառասկզբում զ-ն լ-ի փոխարեն ավանդական գրության հետևանք է, քանի որ Ժ դարում առաջնալեզվային լ-ն արդեն տարբերակվել էր ետնալեզվային զ-ից: Անգրաղ > անսրաղ նկատվում է զ, ք հարևան ձայնեղ հնչյունների տարնմանությունը, որի հետևանքով զ-ն հեռացել է ք-ից և վերածվել ս խուլ սուլականի. միակ օրինակը Գեղարդում է, Մխ. Այրիվանեցու ճգնարանի արձանագրության մեջ. «Եւ անուանեցի ժամատանս տեղի անսրաղ աղաւթից» (ԶԼԸ Հով ԽԱՂ III 56):

Սմբատ > Սերատ, Սնպատ, ք, պ պայթականների ազդեցու-թյամբ նախորդ ձայնորդը հեռացել է նրանցից և վերածվել ն ոնգա-յինի: Միջին դարերի վիմագրական հուշարձաններում այս փոփո-խությունը այնքան է տարածված, որ երբեմն դժվար է լինում որոշել, թե որն է անձնանվան օրինաչափ, կանոնավոր ձևը: Նշելի է, որ անձնանվան բաղձաթիվ գրական հիշատակություններում, նույնիսկ ձևագրերի հիշատակարաններում, տարնմանությամբ առաջացած մ > ն հնչյունափոխությունը չի նկատվում<sup>91</sup>:

Բաղձաթիվ վկայություններից մեջ ենք բերում տարբեր ժամա-նակների վիմագրերից մի քանիսը. հնագույնը Բարվի թանգարա-նի բաղձում բնկած՝ Համամ իշխանի հիշատակությամբ խաթարված տապանադրում է, որ հմտորեն վերականգնել է Ս. Բարխուդար-յանը. «եղբար Համամ իշխանի և տն Փղիպէի և տն Սնպատա» (ՅԼԸ = 889 թ.)<sup>92</sup>, հաջորդը Վանեվանի տաճարի գմբեթին փորա-գրված՝ Շապուհ Բագրատունու ընդարձակ արձանագրության մեջ.

90 Հ. Անսոյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 159:

91 նույն տեղում, էջ 557—568:

92 Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, ԳԱ «Տեղեկա-ցիր», 1964, № 1, էջ 63:



«ի ժամանակս հայոց թագաւորի մեծի Սրնպատայ» (ՅՄԲ ՄՎ), Կարմրաշենի վերը հիշված խաչքարի բնագրում. «ի թագաւորութեան Սնպատա» (ՆԼԹ Դ III 41), «կամ եղև իմ Սնրատա շահնշահի» (Թալին ՆԶԹ ՄՎ), «շինեցաւ հրամանաւ թագաւորին Սնպատա» (Վաղաղնի վանք ՆեԹ Դ III 100), «յիշխանութի Սնպատա» (Պառավաձոր ՈՂ ՄՎ), «:Ա: Սիրաղեղա :Ա: Սնպատա» (Ն. Վարադ Ոե՛ ՄՎ), «սրգոյ իմոյ Սնպատայ» (Հավապտուկ ՈՂԲ Հով ԽԱՂ III 33), «Պարոնացն Սնպատայ եւ հարադատի իւրոյ Տարսայիճին» (Հալիձոր ԶԺԴ 52), «եղբար իմ Սնպատա» (Շնհեր ԶԼ Դ II 56), «որդիք Սնպատա» (Մեծարանց Զ)<sup>93</sup>:

#### ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԶՅՈՒՆԱՓՈՒՅՈՒՅՑՈՒՆ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վիճական բնագրերում դիտվում են հնչյունափոխական այնպիսի երևույթներ, որոնք չեն բացատրվում հիշված օրինաչափություններով և այդ պատճառով անվանվում են արտակարգ կամ անսովոր հնչյունափոխություն: Այս դեպքում տեղի է ունենում բառի կամ արտասանվածքի կազմի մեջ մտնող առանձին հնչյունակապակցությունների, վանկերի կամ ամբողջ բառահատվածների ամփոփում, սղում կամ անկում, սովորաբար բաղմավանկ բառերի անփոփոխ ձևերում կամ նրանց ձևարանական-բառակազմական փոփոխությունների ժամանակ: Հնչյունների արտակարգ կամ անկանոն փոփոխությունները առաջանում են բանավոր, կենդանի խոսքի մեջ և արտացոլում են լեզուների հավերժական ձգտումը՝ արտասանությունը դյուրացնելու և նրա վրա ծախսվող ժամանակը և ջանքերը խնայելու:

Մակայն այս ձգտումը իրականում սովորաբար սահմանափակվում է արտասանվածքի տվյալ միավորի բառապատկերի և բառխմաստի ամբողջականությունը պահպանելու հակադիր ձգտումով, որի շնորհիվ արտակարգ հնչյունափոխության երևույթներ կարող են առաջանալ միայն հաճախ գործածվող բաղմավանկ բառերում՝ անձնանուններ, կոչական բառեր ու նախադասություններ, այսինքն այնպիսի միավորներում, որոնց բառխմաստը տվյալ հնչյունափոխությամբ զգալիորեն շի խաթարվում և կարող է ընկալվել ու հասկացվել նաև փոփոխված վիճակով: Արտակարգ հնչյունափոխությամբ առաջացած բառաձևերը կամ նախադասությունները մեծ մասամբ գործածվում են խոսակցական լեզվում, բանավոր արտասանության ոլորտում և հաղվադեպ են թափանցում

<sup>93</sup> Խ. Գաղյան, Մեծարանց վանքի արձանագրությունները, «Բանասեր», Փարիզ, 1903, էջ 137—139:



գրական լեզվի մեջ: Սակայն այդ ձևերը երբեմն երկար գործածվելով կարող են դիտակցվել իբրև տվյալ միավորի կանոնավոր, օրինաչափ հնչումներ և մուտք գործել գրականության մեջ իբրև զուգադիր կամ նույնիսկ միակ, գերակշիռ ձևեր: Այսպես, օրինակ, արդի հայերենում և բարբառներում հայտնի՝ նամիա, ջաղաց, ջուղան բառերը առաջացել են նաևապարհ, ջրհորղան, ջրաղաց նախաձևերից արտակարգ հնչյունափոխությամբ և հաշոգությամբ մրցում են նրանց հետ:

Հայտնի է, որ Ժ—ԺԴ դարերի վիմական արձանագրությունները սովորաբար շարադրվում էին խոսակցական լեզվի, տեղական բարբառների և ժամանակի գրաբարի խառնուրդով, ըստ որում նորամուտ բնիկ և փոխառված բառերը, հարկային-պարհակային, վարչա-բաղաբական տերմինները, հասկացությունները, տեղանուններն ու անձնանունները ավանդված են մեծ մասամբ բարբառային արտասանության օրինաչափությունների ղգալի աղղեցություններ: Այդ բնագրերում հանդիպում են արտակարգ հնչյունափոխության բաղմաթիվ արտահայտություններ, որոնց բնությունը ղգալի նրպաստ կարող է լինել ոչ միայն վիմական արձանագրությունների հնչյունական և ձևաբանական իրողությունները ստույգ հասկանալուն, այլև ավելի գործնական նպատակների՝ բնագրերի իրական ու հավասարի ընդօրինակման, վերականգնման և վերծանության գործին: Վիմագրության մեջ նկատվող արտակարգ հնչյունափոխության երևույթների վկայությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում. Ա. Հաճախ գործածավող բաղմաթիվ անձնանունների և տեղանունների աճման ժամանակ կամ ձևաբանական փոփոխություններում սղվում, ընկնում է նրանց հիմքի վերջին վանկը կամ հատվածը. ավս արեւատուփն պարոն Շահանշի (<Շահանշահի) և Խուանդիւն (<Խուանդգային) և իրենց որդուն Զաբարի (<Զաբարիայի) (Անի ԶԾԹ Դ I 64), այլ բնագրերում՝ Խս՝ Խուանդգէս (<Խուանդրգայս) (Անի ԶԿԹ Դ I 27), ավս արեւատուփի... պարոն Շայինշի (Հոռոմոս ՆԶէ ՍԱԲ 156), ընդգծված անձնանուններում արտակարգ հնչյունափոխության հետևանքով ընկել են ահ (Շահան-շահի > Շահանշի), այ (Խուանդգային > Խուանդգիւն), իայ (Զաբարիայի > Զաբարի) հնչյունախմբերը:

Այդպիսի փոփոխությամբ են վկայված նաև հաշորդ բառերը. Ես՝ Ալէս (<Ալեֆսանդր, Ալեֆսան անունից) որդի Ղաղարա, :Ե: ար ինձ՝ Ալէֆսիս» (Հոռոմոս ԶԺԵ ՍԱԲ 157), Ես՝ Ալէս վաճառական» (Բագնայր ԶԶ ԲԱՍ 179): Եմ գստերն Տիկիմամին



(<Տիկիւնամ, Տիկնիւնամ)<sup>94</sup> (Բագարան ՈԶԴ ՍԱՐ 204), «ես՝ Սագղոյստ (<Սահակաղոյստ) միարանեցա սր Ածածնիս» (Մըշկավանք ժԳ ՄՎ): Աճառյանը (Դ, էջ 372) վրացական արտասանութիւնն է համարում: «Զիւզակից իմ Ասուշիս (<Ասուշահիս), շարունակութեան մեջ ավանդված է անվան ուղիղ, անհնչունափոխ ձևը՝ աւղբ: ինձ՝ Ասլանիս եւ ՚Բ: Ասուշահին» (Հոռոմոս ՈԶ ՍԱՐ 147): «Կարապետին, Նահապետին, Թորրին» (<Թեղորոս, Թորրին) (Սանահին ԶԻԹ ԿՂՍ 159): Հին հայերենի շնորհաւորաբար և նրանից առաջացած անձնանունները վիճական բնագրերում վկայված են մի շարք հնչյունական փոփոխութիւններով, որոնք նկարագրված են վերևում, այստեղ նշում ենք արտակարգ հնչյունափոխութեամբ առաջացածները. «ած շնհաւոր անէ» (Քանաքեռ ԶԺԵ ՄՎ), «ած շնհավոր արասցէ» (Մրեն ԶԺԵ Դ I VI), «ած շնհաւոր արասցէ» (Մրեն ԶԺ Դ I VI), «ես՝ Շնհաւորս տվի ՚Ծ: դեկան» (Ամաղու ժԳ դ. Դ III 217), «եւ Շնորո տիկնա» (Սանահին ԿՂՍ 170), «Ա: Շնոհոր տիկնա, ՚Ա: Գոհարբսին» (Առաքելոց ԶեԵ ՄՎ), Շնհաւոր (Տաթև ժ—ժԱ Դ II 15), «իմ հարն Շնհաւորին» (Աղղան ժԳ ՄՎ), «եւ իմ դուստր Շնորհորս» (Կարբի ժԳ ՄՎ): «Զիմ դրամադին այգին Սերկլի (<Սերկելի) (Սաղմոսավանք ժԳ ՄՎ):

Բ. Բնիկ հայերեն կամ հետագայում փոխառված բառերի անփոփոխ ձևերում անկախ շեշտի ազդեցութեանից. «ես՝ միայլեց (<միայնակեաց) կանգնեցի զխաշս» (Բարձրավան ԶԾԴ 51), «ես՝ Շաշ միակեցս..., յիշեցէք զՇաշ միակեցս» (Հերհեր ԶեԶ Դ III 68), «թե արեղա, թե միակեց» (Շիրակավան ՈՀէ ՍԱՐ 170), «ես՝ վարդանշահ միակեց» (Աստղածոր ԶԼԵ ՄՎ), «ես՝ Խաշատուր միակեց» (Սանահին ԶԻԹ ԿՂՍ 159), «յիշատակ Յահաննէս միակեցին» (Բարձրաքաշ ժԳ ՄՎ), «գինշ մուտք որ ել միակեցին» (Հերհեր ԶեԵ Դ III 69): «Թագոր (<թագաւոր) Զալալայ Դովլին հրամանով» (Մեծարանց վանք ժԳ)<sup>95</sup>, «Բ: սլատարագ սահմանեցին ծաղարղին» (<ծաղարղարին) (Հերհեր ԶԿԵ Դ III 56), «եկեցպանս (<եկեղեցպան, եկեղեցեպան) միարան եղբայրաբրս» (Տեկոր նՉԵ ՍԱՐ 208), «Յամս ամագաւոր արֆէ (<արֆայի) Գեմեարա» (Ախթալա ժԳ)<sup>96</sup>, «ի վաղաւիրու նամբանն» (<նանա-

94 Հ. Աճառյան, Անձն. բառարան, Ե, էջ 152:

95 Ե. Գաղյան Մեծարանց վանքի արձանագրութիւնները..., «Քանաքեռ»

1901, էջ 145:

96 Ս. Տեր-Ավետիսյանի անտիպ հավաքածուից:



պարհն) (Հոռոմոս ԶԺԵ ՍԱՐ 157), «...այլ ի Կարբի Բանպորդի (<Բանապարհորդ) ձիաւախ շտան» (Կարբի ԶՂԲ ՄՎ), «...եսու :Խ: դեհկի (<դահեկան, դեհեկանի) Արթղա հողն» (Գեղարդ ԺԳ Հով ԽԱՂ III 59):

Գ. Արտակարգ հնչյունափոխութունն է տեղի ունենում նաև բառերի քերականական իմաստ արտահայտող թեքույթներում, որի հետևանքով վերջիններս ղգալի շափով հեռանում են կանոնավոր գրաբար ձևերից կամ բոլորովին բնկնում. օրինակ, սրղվում կամ իսպառ ընկնում է գրաբարի պատճառական բայերի ոյց>ուց ածանցը հետևյալ բնագրերում. «զիմ: Գ: գրամն ու զ:Գ: ջորին ի նորավանս դարձնեն» (<դարձուցանեն) (Ամաղու ԶԽ Գ 220), «զիմ անդարձս այլոց ևս դարձանէ» (<դարձուցանէ) Գեղարդ ԶԼԲ Հով ԽԱՂ III 14), «ես՝ Մալիբա սնցնող» (<սնուցանող) Խորիշահի» (Հովհաննավանք ԺԳ ԿՂՀ 109), «թէ որ յեկեղեցոյս իրաց պակասեցնէ» (<պակասեցուցանէ), «և որ պակասեցանել (<պակասեցուցանել) շանա, նզոված է» (Հաղբատ նԿԵ ԿՂՀԲ 145), «հակառակ կա կամ պակասցանէ, նզոված էյայ» (նտ ԺԱ ԿՂՀԲ 155), «յայս ժամէս պակասեցանէ» (նտ ՇԺԲ 151):

Գրաբարի Ե լծորդության բայերի հրամայականի հոգնակին կաղմվում է ոչ թե անց. կատարյալի ցոյական հիմքից, այլ ներկա ժամանակի II դեմքի բայաձևից, ոչ թե յիշեցէ՛ք, այլ յիշէ՛ք, բայտ այդմ սղվում է եց (<եաց) թեքույթը: Մեշ ենք բերում նրկաաված վկայութունները. «ով կարդէք յիշէ՛ք (>յիշեցէ՛ք) (Գյոյարաս Ոեթ Գ III 40), «յաղաթս յիշէ՛ք» (Հերհեր ԶԽ Գ III 59), «ով կարդէք, յաղաթս յիշէ՛ք» (նտ ԶԽԵ Գ III 59), «ով կարդէք, ամ ողորմի ասէ՛ք» (<ասացէ՛ք) (Գյաձոր ԶԿ Գ III 102), «Մահակ Երէց յաղաթս յիշէ՛ք» (Արատես նի՛Գ Գ III 122), «որք մտանէք, ամ ողորմի ասէ՛ք» (Մարտիրոս ԶԼԵ Գ III 180):

Հաճախ արտակարգ հնչյունափոխության հետևանքով սղվում է գրաբարի բայերի ստորադասական եղանակի սց (<ցց) հնչյունակապակցության ս հնչյունը, հավանաբար նրա ձևաբանական նշանակութունը մթազնելու հետևանքով: Իրողութունը դիտվում է դեռևս է դարի շինարարական բնագրերում. օրինակ, Բազարանի տաճարի արձանագրում. «Շուշան յիշեցի և ողորմեցի», փոխանակ օրինաչափ գրաբար՝ յիշեցի, ողորմեցի (ՕրճԻՏ 390): Մրենի տաճարի հնագույն արձանագրութուններից մեկում փորոգրված է. «և բաժին ընդ խաշահանս կրեցէ» (<կրեցէ) (Մրեն նե՛Ա ՕրճՄ 3): Ամբերդում վահրամ Պահլավունու նշանավոր հրամանագրի անեծքի ձևակերպման մեջ. «ժողովուրդ, որ ոչ կա-



տարէ, պատմեցի» (<պատմեցի) (Ամբերդ նշն ՍԲ), «եւ անեծս կրեցէ սր երրորդութենէն» (Տաթև ՇԻԹ Դ II 28), «չերից սր ժողովոյն որոշեցի» (<որոշեցի) (Վաղագնի վանք ՉՉն Դ 101), «որ կարդա, զիս յիշեցէ» (<յիշեցէ), «եւ ամ զնա յիշէ» (<յիշեցէ) (Աբառես նժՁ Դ III 122), «մի որ իշխեցէ (<իշխեցէ) լուծանել» (Տեկոր նի ՍԱՐ 207), «մի որ իշխեցէ մերձենալ ի սմա» (Համամ իշխանի տապանագիր Բաբու ՅԼԸ)<sup>97</sup>, «որ կարդա, զիս յիշեցէ» (<յիշեցէ) (Ն. Բայազետ նեթ)<sup>98</sup>, «զժամն Հասանա աւրացեն...», եւ յետ ելիցն Մագիստոսին աւրացեն» (<աւրացեն) (Կեչառիս Շ Հով ՔՈՐ 15), «յայ եւ ի մեզէ (<մէնչ, մեզանէ) նզովեալ եղիցի» (Սյունի վանք Ժ—ԺԱ Դ 90): Միայն մեկ անգամ ննջեցելոց բառը փորագրված է ննջելոց. «զմատուռն փորեցար յիշատակ մեզ եւ ննջելոց մերոյ» (Գեղարդ ՉԹ Հով ԽԱՂ III 59):

Վիճական արձանագրություններում արտակարգ հնչյունափոխությունների վկայությունները բննկլիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երբեմն բառերի մեջ վանկերի և հնչյունակապակցությունների սղումը կամ անկումը կարող է այդպիսի արտասանության հետևանք չլինել, այլ փորագրողի կամ բնագրի հեղինակի պատահական վրիպման կամ հնագրական հապավման արգասիք, այսինքն ենթադրվում է, թե այս դեպքում փոփոխությունը տեղի է ունեցել ոչ թե բառերի արտասանության, այլ սոսկ նրանց գրության մեջ: Օրինակ, Աշտարակի Կարմրավոր եկեղեցու է դարի կառուցողական արձանագրության մեջ պարզ կարգացվում է, «... տուար շինել զէկիս» (ՄՎ) նախադասությունը, որտեղ ընդգծված տառաշարքը անխաթար է պահպանվել և անշուշտ փորագրվել է զէկեղեցիս բառի փոխարեն: Ակնհերև է, որ զէկիս գրությունը փորագրողի պատահական վրիպման, ամբողջ վանկերի բացթողման արդյունք է և հազիվ թե հնարավոր լինի այստեղ դիտել զէկեղեցիս > զէկիս արտակարգ հնչյունափոխություն կամ հնագրական հապավում: Նույն ձևով Արուճի տաճարի ՅԺՁ (867) թ. արձանագրության անեծքի ձևակերպման մեջ փորագրել է նզել լիցի, որ պետք է լինի՝ նզովեալ լիցի, ըստ այդմ, այստեղ ևս տեղի է ունեցել ոչ թե հնչյունական փոփոխություն, այլ հնագրական վրիպում:

Մյուս կողմից, Ալուշալուի և Գետաշենի ԺԳ դարի երկու արձանագրություններում նույն գրությամբ պարզ փորագրված է՝

97 Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, ԳԱ «Տեղեկագիր» 1964, № 1, էջ 63:

98 Ք. Ավդալբեգյան, Նոր Բայազետի սեպագիրը... էջ 16:



«Յաշխարհակալութի Ապաղանին...» (ՍՍ), որ անվիճելիորեն պետք է վերծանել՝ «Յաշխարհակալութեան Ապաղա դանին», այսինքն անհարժեշտ է վերականգնել դա կապակցությունը կամ վանկը, որը գիտակցաբար, հապավման նպատակով բաց է թողնել, հետևելով միջնադարի վիճագրության մեջ գործող այն օրինաչափությանը, ըստ որի, միևնույն գիրը կամ վանկը միաժամանակ կարող է ծառայել երկու հարևան եղբորի համար և վերծանելիս այն պետք է ընկալել երկու անգամ:

Վիճական բնագրերում արտակարգ հնչյունափոխության մեր հիշատակած վկայությունների վերծանությունները ստուգվում են լուսանկարներով և ապահով են այդպիսի կասկածներից, ըստ այդմ կարող են իրական պատկերացում տալ այդ բառերի արտասանության և նրանում տեղի ունեցած հնչյունափոխական տեղաշարժերի մասին:



Հնչյունափոխական երևույթներ	Վկայության վայրը և ժամանակը	Հնագույն վկայություններ	Վերծանության աղբյուրը
1	2	3	4
Նախաշնչոտ ա-ի սղում, կամ վերածում Բ-ի	Տնկոր-ՆՁԵ-1036 Անի-ՆՁԵ-1036 Քաղնալը-ՆՂԱ-1042 Անի-1056-1060	գինչ աղջի (<առաջին) թագաորությունն առաջ գայրին Աշնի (<Աշնակի) ի Բզնայրին (<Բազնայր) վանս կամ եղև իմ Բագրատ (<Բագրատա) մագրատրոսիս սրբոյ Հովհաննի (<Հովհաննի)	ՄԱՐ 208 Գ 1 49 ՔԱՍ 145 Գ 1 37 Օրծ ԻՄ 408
Գրաբարի է-ի փոխարեն փոքրագրված է և (է=և)	Հոփոփի-Ե-618 Բագալան-631 Մրեն-638—640 Քալին-ՄԼԲ-783	տեղաբան վաճառյան (<տեղաբան) ի տանտեղաբան ներսնի քն թշխանաց որ խլի, իմ մեղացս պար- տական եղիցի (=բէ, խլէ)	Օրծ ԻՄ 391 Օրծ ԻՄ 401 Հով ՔԱՐ 10, ՄՎ Հով ՔԱՐ 5
ե-ի փոխարեն փոքրագրված է է (ե=է)	Երուսաղեմի խճանկար արձանա- դրություն-Զ-է դդ. Արուն 5ժԶ-867	Թարեխառ ունեւոյժ առ ած զտորք էսայի էրէ ալլ որ հակառակել շանա..., էնար Արուն գ'ոչ (<եբէ, ենար)	ՄՎ, Հով ՔԱՐ 11



1	2	3	4
Ը-ի գրություն գազանա-վանհում	Ազամանգուզուի կրկնագիր-Ք գ. Ապարան, Գավթի Գեթուու ա- պանագիր-Զ գ. Արում-ՏՏՏ Փ.Քուզանդ-Յ գ.	կլցել, մկնակրի (կկեցել, մկնակրի) Այս է հանգիստ Գալթի Գրքունեայ ան և Լեդինի Երթն գազակցի ակրքի, մարտնչի, Զրկայ (կրկի)	ՀԱ, 1913, № 1, 1-19 ԿԳԳ 246  Հով ՔԱՐ 3, ՄՎ «Պատմության հարց» Ս. Պանկրոպ, 1881, էջ 38, 56 128
Ը-ի գրություն բառակր-բում, առ, ու-յ առաջ	Ազամանգուզուի կրկնագիր-Ք գ. Քալին, առաջանագիր 319-514 վանկան-ՅՅՔ.ՏՅՅ  Սանահին-ՈՂ-1181 Բազարան-ՈՂՅ 1224  Փ. Քուզանդ-Յ գ.	գիտավրդին, ի տարեկն և՛ Սահագ, որդի Գանիկի որ ըստացա ամենայն փառք և Լեւոնիան ըստ- ուկոց և... և՛ Ղուսուպան և ինն արդաի զուսար... և՛ Վարդա Բազարանայ ըստիս (ևս- իս) Ղարաունի, ըստգմիկ	ՀԱ, 1913, № 1, 1-9 ՄՎ  ՄՎ ԿԳՍ 115  ՍԱՐ 203 «Պատմության հարց» Ս. Պանկրոպ, 1881, էջ 61-62
Բառակրում ի>ե, է	Նիսիան-է գ. Հոնիփոն-Տ18 Մասաթա-է գ. Աշտարակ, Կարմրավոր-է գ. Արեւիկանի-ՆԳԳ 1045	Ներսանի Բարենի Մամկունեան կուցայ լաթու որդուի Գրկարի ևս ինն Գրկարասայ Գրկարի թանկայի և Մանանի որդի Յիլու Քա ան զՍարգիս	Գ 11 88 Օշն ՄՐ 407 Հով ՔԱՐ 3, ՄՎ ՄՎ Գ 11 134
Ի հանգոց թանկի թիք և լոգնեթում՝ ալ>ալ (ա)	Ապարան, Գավթի Գեթուու ա- պանագիր-Զ գ.	Գալթի Գրքունեայ ան որդա (ևսրդալ) Վասակա	ԿԳԳ 246



1	2	3	4
	Բազմաբան-631	Երևանն է ու՞ր ամոյն...- ան Գրիգորի Վանանդացու (<ամոյն, Վանադաց- ւոյ)	Օրծ ԻՄ 303
Գրաբարյան աւ երկրաբար- բանի փոխարեն փորա- զոված է ա (ա=ա)	Արտւ-36Զ-867 Դանկի, խաչքար-33Ը-873 Վանեղան 36Բ-903 Անի-Ժ Գ.	ձառա Անբառա Բազմաբան Ի յտէխաւարի ինծ ձննափափոց անկառով յորժամ գառ փառով (<փառով) հար ի հարդէլ վերկից	Հով ՔԱՐ 11 Ե. Արք., Դարս 1 84 ՄՎ Գ 1 31
Ա-ի փոխարեն վկայված է աւ (ա=աւ)	Ազախանդեղանի կրկնաչր-Թ Գ. Հոփոփմն-576 Արտւ-668 Այ-ՆԷ-981 Արտւ-ՆԶ-987	ձնա. զպիտաւզան, անտաղաց (=ձնաւ) չինաւ, (=չինաղ) ի բարեխաւարիին զինաղաց զա յապարապարտութեանն Գրիգորոյ վան իմ հարն հարդն... է ձնաց բաղաւթան	ՀՄ, 1913, N 1, 1-19 Օրծ ԻՄ 408 Օրծ ԻՄ 402 ՄՎ ՄՎ
Այ երկրաբարի վարդում ա-ի (այ>ա)	Գնդկանք-3Զ-931 Թայն, թր. վանք-Ժ Գ. Աճրեղ-ՆԶ-1026	որ կաղան, որ յորով առցից հար (<հար) Գովիթ ձառա տար վա- նիս չիննչի զվաթղիկիս արտառաղանական	Գ III 14 ՄՎ ՄՎ, ՎԷՄ, 1961, № 5, էջ 51
Ավ կապակցութեան տեղում վկայված է ա	Երեբունք-ՆԶ-1028 Անբալա-Ժ-ԺԱ զգ. Տումք-ՆԵԹ-1000	Ամբառ յանանյանի կինն է Ալոսոյ ձառա զՖուռնա (<Մովսէս) բանա որդ Մանկի, ես՝ Մովի զուտար Մանկի	ՄՎ; Հով ՔԱՐ 13 ՄՎ ՄՎ
Գրաբարի որտ երկնայտանի վարդում վա երկնայտանի	Սեան-3Գ-874 Թայն, տաղանազից-3Գ-874	ազան (<առան) վան 3Գ րվակառարան հայոց	ԿՂԳ 68, 68 ՄարրԻՄ 89, ՄՎ



1	2	3	4
Գրաբարի ուս երկնյանի փոխարինում տ-ի	Գանի, խաչքար-36Ը-879 Մազա, խաչքար-3Է-881 Քաղաքան-631 Բ.	ՅԲԸ բվակնին ՅԷ բվակնուրեան հայոց հայոց ապկոսի յԱռեղեան (<Առեղեան...), Վահան, Հրահան և Արանդ (<Արանդ)	Ե. Արաք., Դարս I 84 ՄՎ Օրճ III 391 ԿՂԸՔ 141
Գրաբարի սև երկնայրաբար պարզում վն երկնյանի	Հաղթառ-նե-991 Մրեն-Ժ գ. (982)	նն րակ (<րական)	Օրճ M 3
Գրաբարի սի-ի վերանում վն երկնյանի, ի րսին> ի րվին	Հերհեր-ՇՂԸ-1149 Տալե-նե-991 Տումի-նեՔ-1000	սվեալ նմ (<սուեալ) և հաստատայ և զառարսմն Սարգսի վերակացի (<վերակացի)	Չ III 49 Չ II 32
նառ>առի>ավի	Հաղթառ-նԷԶ-1027 Քաղաքայր-ՆՂԱ-1042 Անի-ՇԷ-1058	ի նեՔ րվ նԷԶ րվ տուի զիմ դանձազին կուզպակնին	ՄՎ ԿՂԸՔ 242 ԲԱՍ 145
ի Հայկուզի սեղում վիտյ- ված է վ բազանայի	Քալին-նՐ-953 Կոչ-նԷ-981	լավի (<կուտի, կուտ) ի սբ Առաքելյա կամ եղև (<եղև) իմ Միսայի... ևս հայր Գավիթ (<Գուիթ)	Չ I 13 ՄՎ
Գրաբարի այ երկնայրաբար պարզում է-ի (այ>ն)	[ադ. նմ. ավետարան, ՅԷԶ-887 Քալին, Քր. վանք նՐ-953	երես Ալուս յԱվանի (<յԱանի) լազազան անովր (<անուր), համբով (<համբուս) և հուս եզին ի սուրբ Քրիստոսի	ՄՎ Մասկվա, 1899, ՄՎ
	Կոչ նԷ-981 նեկնիք-նՉՐ-1033	երես Ալուս յԱվանի զազազան և զեզին յն սբ այս գրոյս հավատի կա և յես (<այս) ի սրբոցս հանի	ՄՎ, շՔանախոս 1903 Հով ՔԱՔ 14



1	2	3	4
նայն երկարքանի պարզում է-ի (ա >է)	Քալին-ՆՁԶ-1007 Ամբրդ-ՆՁԵ-1026 Անի-ԺԱ գ.	նա՛ Մուսիս, որ էտու զիմ կզիս յԱրազածտանէ յկփն Ռ: փաստի էս (<ալս) իմ զիբ է պարտիս	ՄՎ ՄՎ, «Էրմ.» 1951, № 5, 50 Գ 1 9, ՌԱՍ 127
Գրաբարի ոչ երկարքանի պարզում ա-ի (ա >ա)	Քալին, Քր. վանք 3Գ-541  Քալին, Քր. վանք-Ժ գ. Անի-ԺԲ գ.	յիլատանի կատարն միարան սուրբ եկե- ղեցու էտու վանն իմ հոգու (<հոգու) Գտի ի խորագուն հորի քարաճաղ արա- բած	ՄՎ  ՄՎ Գ 1 70
նայն երկարքանի պարզում ի-ի (ա >ի)	Հաղբառ-ԶԻԲ-1273  Արշու առին-ԺԳ գ.	չճալիի իրենց (<արենց) հայրենաբն	ԳՂԶԲ 156
Գրաբարի աւ երկարքանի պարզում ա-ի (ա >ա օ> ա)	Նրնրույք-ՆՁԷ-1023 Նրնրույք-Ժ-ԺԱ զգ.	նա՛ կիստս (<յուստ) Մճրառ շահանյահի հզարի (<հզար) զիս յազուրս (<ազարս) յիլեայիք...	ՍԱԲ 191 Հով ՔԱԲ 13, ՄՎ ՄՎ
Գրաբարի աւ հյուսնակա- պակցութեան անկում (ա >զո)	Ավետարան (աղ. ճեմ.-3Գ-887 Վարդարուզ-ՆԳԹ-1050  Մեծարանց-ԺԳ գ.	յաւտար, յաւտել նա՛ հորիկէ քաղկեսս (<քաղկեսս)	Մասիվա, 1859, էջ Թ Բժշկյանց, էջ 82
	Վ. Ազգան-ԶԵ-1286 Գնչեվանք-3Զ-531	քաղկեսսի Գնճարի նա՛ Սոփի Սինեայ (<Սինեայ) տիկին	ՄՎ, «Արշախ» 347 Գ III 13
Իւ երկարքանի պարզում ի-ի (ի >ի)	Քալին, Քր. վանք-ՆԲ-953 Նրնրույք-Ժ-ԺԱ զգ. (աղ. ճեմ. ավետարան-3Գ-887	նե իր (<իր) որդեացն արնշատութեան եկի Քաղարուզալու ի զիզանազանս յիլ (<յիլ), սփիռն (<սփիռն)	ՄՎ ՄՎ Մասիվա, 1859, էջ Թ.



1	2	3	4
Ուփին>ուփին Իւ հրէշարբաւի պարզում ու-ի (իւ>ու)	Քային-ՆՄԶ-1007 Քային, Քր. վանք -39-541	էկի ծառային (<ծառայութիւն ի վերա զազախազախիս (<զիզախազախ Թալեա	ՄՎ ՄՎ ՄՎ
Իւ կազակցութիւն փոխարեն վկալված է այ (=ու)	Կուրման-ՆՆ-986 Ուղտալու-ՆՄ-1001 Հայրավանք-ժԹ Գ. Խաթրավանք-ՈՄԳ-1204 Սազմասավանք-ՈԿԳ-1215	Յազազորութեն Կուրիկէի (<Կիւրիկէ) ի գալ մաս (<միտ) աժի լեա էիք սյրենն (<իւ ընեն)	ՄՎ ՍԱԲ 174 ՄՔ ՄՔ ՄՎ, շէշմ., 1961 թ 6, 45
Իւ կազակցութիւն փոխարեն իւ իւ (իւ>իւ) Ուփին>ուփուն	Բազարան-ՈԶԳ-1235 Մրեն-ԶԿԹ-1320	վկարայրաանիսն (<Արիւրաանիս) էկէ- զնցայ մինն ինն և սիտսն (<սիտսն) Յովանիսի	ՄԱԲ 205 Օրճ Մ 4, Մարր HM 88
Գիւղ, գեղ>գեղ	Հառմաս-ՆԶԷ-1038 Հաղրատ-ՅԱ Գ.	Նաու զիմ գեղս զՍահաւանիս զայն գեղն յախչաակիւ շանա	ՍԱԲ 164 ԿՂՀԹ 156
Գիւղ, գեղ, գետ>գաղ	Հաղրատ-ՈՄԹ-1210	ի ձեռնաւորաց, ի զազառազաց (<զի- զառազ)	ԿՂՀԹ 168
Գրաբարի եւ հրէշարբաւի պարզում և-ի անկախ լին- աից.	Բազարան-631	ի տրէ ամեն (<ամենն) ի բան	Օրճ HT 333
ա. Նան հոլովում (եւ>ե)	Հազարմին-ՈԿԳ-1213	յիննի... ժամատուն վիմարդեն (<վի- մարդեն)	ՄՎ



1	2	3	4
բ. Անց. կատարյալ ժամ. բայանկերում՝ ետն>են, եաց>եց	<p>Նոգր-Ոճ-1191</p> <p>Անի-ՈՎԳ-1215</p> <p>Նոգր-ՈՂ-1241</p> <p>Տառ-Նյարչևթի վրաց. ձևադրի լուսանցադրեր-978-98 թթ.</p>	<p>խիչեցէք զամենեանն (&lt;ամենեանն)</p> <p>յորժամ տիրեց (&lt;տիրեաց) քաղաքիս Անա որք անհնա կորնն (&lt;կորեան)</p> <p>զուտաւորեց զանն զմէք... նազեց</p>	<p>ՄՎ</p> <p>Գ 1 62</p> <p>ՄԲ, ՄՎ</p> <p>ԵԲանք. Մատենադարանի, 1958, № 4, 40</p>
գ. Հոգնակի թվ. հոյուզ-ձևերում .եաց>եց	<p>Գնդեղանք-32-331</p> <p>Թային, թբ. վանք-3Ղ-341</p>	<p>որդն Աշտի Սինեց (&lt;Սինեաց) իյխանի</p> <p>իբնաց որդեց (&lt;որդաց, որդեաց) արևւ շատովեան</p>	<p>Գ III 13</p> <p>ՄՎ</p>
դ. Անցյալ գերբայում (զա-զախառք) եալ>ել	<p>Անի-ՇԻ-1071</p> <p>Մանահին ժԱ գ. Արուս-3ԺԶ-567</p>	<p>ի հայայ արդեց (&lt;արդեաց) իմաց</p> <p>ի տանէ Ալսկունեց (&lt;Ալսկունեաց) զինչ իւրանց բնիկ ուսմ էր լել (&lt;լեալ)</p>	<p>Գ 1 43</p> <p>ԿՂՄ 57</p> <p>Հով ԲԱՐ 11, ՄՎ</p>
ե. Հոգնակերս ձանկերում՝ եառ>եր	<p>Կարմրալեն-ՆԹ-990</p> <p>Մրեն-ՆեԱ-992</p> <p>Տեկոր ժԱ գ.</p> <p>Թային-Ժ գ.</p> <p>Վանեղան-ՅՄԲ-903</p> <p>Մարտալեն-ՆԻԲ-986</p> <p>Բազարան-ՆԶԳ-1024</p> <p>Ղ. Փարպեցի-Ե գ.</p>	<p>տակ (&lt;տուկալ) զաա զանգար յույտ ազատել եմ զՄրենոյ զարին..., իմ ձե- աաց արկել (&lt;ազատեալ, արկեալ)</p> <p>զինչ առջի Բազարարթն լել է (&lt;լեալ)</p> <p>զինձ ձեաաց արկել (&lt;արկեալ) աչդին</p> <p>ի Կարբին զետերէն եւ ի նտերէն</p> <p>յԱնի տներ եւ կղզապանի</p> <p>ետու եւ Մանդին տներն</p> <p>զբանեղ, զհարկեր, նայեղ</p>	<p>Գ III 42</p> <p>ՕրճՄ 2, 3</p> <p>ՄԱՐ 208</p> <p>ՄՎ</p> <p>ՄԲ, ՄՎ</p> <p>Օրճ III 412</p> <p>ՄԱՐ 203</p> <p>Այսբնյան, Բնագան... 79-80</p>



1	2	3	4
դ. Նը. հրատարական բայա- մեամ՝ ես>ն, է	Ազանի խոյակ-Ձ-ի գր- 96դեկտեմբ.-32-931	լիլն (<լիլնա) Ստեփանոսի	Հով 30, 1811, էջ 22
	Հավուց թառ-ՇՂ-1081	ար պարմէ (<պարմա)	Գ 111 14
	Տառ-Գլարչեթի վրաց ձեռագրի լու- սանցագրեր-Ժ Գ	լիլէ Քս զՀասան	Հով 20 11
է. Հավաքական արձանու- ներում՝ եմնէ>ենէ>ննց	Անի-ՈՒԲ-1193  Անի-ՈՒԳ-1215	ար պարմէ Միքայիլի..., ար պակէ ի շարժ  մէն աբա Քելեմեցն (<Քելեմեցն)	Երանդեր Մասնագրանի, 1858, № 4, 38-40  Գ 1 47
	Մանահե-ՈՒԳ-1215 Ղալազան-ՆՂ-1021	Ես՝ Տիգրան որդի Սմբատարեց, յազդն Հաննց Թոռն Համազասպեց	Գ 1 63 ԿՂՍ 121
զ. Արթին ատանցով բառ- բառ-արթին>արթն	Վարդաբուր-ՆՂԲ-1050  Տառ-Գլարչեթի վրաց- ձեռ. լու- սանցագրեր-978-988	նշ քվականութե (<քականութեան) հայոց ՆՂԲ քվականութեմ հայոց, մեկեց բազու- քնն և արեկյաասութե	ՍՎ ՍԳ  ՍԲ- ՍՎ, Բճկյան 82
	Մանահե-ԺԱ Գ Անի-1056-1080	միթ պարմութե	Երանդեր Մասնագրանի, 1958, № 4, 39
թ. Իրեան>իրեն	Մանահե-ԺԱ Գ Հառամայր-ՈՍ-1201	էկեղեցիք ի շինութե ևն և անցի, որ իրենն (<իրեանն) մոր- թիցիք զնէ, բամն ազատ է մեղացն անեն և ապա իրենն	ԿՂՍ 97  Գ 1 37 ՍՎ
Սա երկրաբանի գաղտնի ա-ի, անկախ լեզուի- եա>ս	Անի-ՆՂԲ-1040	չինեցի սենակ (<սենակ) Բ:	Գ 1 33



1	2	3	4
<p>Եւ երկարրաւի անցում եկ, կլ երկնայունի (ե&gt;եկ, կլ)</p>	<p>Վան-Միլենարդ-ժ դ. Մարմալեն-ՆԼԷ-988 Քալին, Քր. վանք-ՆՔ 953</p> <p>Սարդամիշ, Նև-991</p> <p>Վարդապետ-ՆՂԹ-1050</p>	<p>զթուրգեն լիլա' (&lt;լիլա')</p> <p>չ'աստատութի կեղեցաց (&lt;եկեղեցաց)</p> <p>կամ կզեկ (&lt;եզեկ) իմ Միսալի</p> <p>կամ կզեկ հայո լրի առա Վան մեղաց հանկ</p> <p>արեկաւարեն իմոյ... կզեկ</p>	<p>Օրճ ԻՒ 249</p> <p>Օրճ ԻՒ 442</p> <p>ՄՎ</p> <p>ԿՂԳ 88</p> <p>ՄՄ</p>
<p>Նայ եւարարաւի պարզում ե, է-ի'</p> <p>ա. Ի հանգղ քաւորի սեւ. ար. հալվաններում</p>	<p>Քալին-ժ դ.</p> <p>Ալաման-ժ դ. 532</p> <p>Սանահին-Ո(Գ-1184</p> <p>Չեապրերի հիշատակարան-Ո(Ը- 1187</p>	<p>անկին իմոյ Մագրունաց բազանն (&lt;բա- զանն-այ)</p> <p>այս իմ գիրէ Սոփէ (Սոփիայ) &gt; Սոփեայ)</p> <p>որդի Տարտէ (&lt;Տարտի) եւ շենացայ</p> <p>մուլաց իւրոց Գրիգորու եւ Հատտիկ (&lt;Հատտիկի&gt; Հատտիկու)</p>	<p>ՄՎ</p> <p>ՄԱՐ 194</p> <p>ԿՂՍ 160, 169</p> <p>Գ22Գ 514</p>
<p>բ. Բաւալներում բազանայ- ներով ներգալվելիս</p> <p>գ. Բաւալներում</p> <p>Սաւ եւարարաւի անցում եւ երկարրաւի (երկն- այունի)</p>	<p>Արեվանիկ-ՆՂԳ-1045</p> <p>Վարս-ՈԶԳ-1234</p> <p>Վարդ-ՈՆ-1191</p> <p>Սանահին-ՈՆՈ-1192</p> <p>Սանահին-ՈՆԳ-1205</p> <p>Սնի-ՈԿԳ-1215</p>	<p>լիլեցէք Մանգանու բանաւ կեղեցոյս պաշտանիս (&lt;պաշտանայս)</p> <p>մէք Կարոյ Բիստանիս</p> <p>զի կեսարե (&lt;կեսարեայ) փոխեցաւ</p> <p>որ կիսարե վախանեայ</p> <p>բնակեցա ընդ հովանն (&lt;հովանու)</p> <p>ի դաւա վանիցա աղն (&lt;աղանու)</p>	<p>Գ 11 133</p> <p>Օրճ ԻՒ 471</p> <p>ՄՎ</p> <p>ԿՂՍ 185</p> <p>ԿՂՍ 183</p> <p>Գ 1 63</p>



1	2	3	4
Կ խոյ պայթականի տեղում վկայված է Գ (ն-ից հետո)	Ն. Բուզանդ-Ե Գ. [ադ. ձև. աղետ. 312-887]	մանդիկ, մանգուն, զանգուրի, ընգալու անգեան, մանգուն, անգեալ, մանգոի	Ս. Պետրոսյան, 1881, էջ 37, 38, 44, 47, 68 Մասկվա, 1839 էջ Թ
Գ ձայննի տեղում վկայված է Կ (ն-ից հետո)	Փ. Բուզանդ-Ե Գ. [ադ ձև. աղետարան 312-887 Ղալազան-ՆՆ-1021 Կոթալանք-ՆԿԲ-1013]	սիրաննիկ, խանկարեալ, կանկնիկ ծառանկարին, անկունի, հանկեցին կակեց (<կանգնեաց) կանկնեցալ (<կանգնեցալ)	էջ 24, 29, 74 Մասկվա, 1839, էջ Թ ՄՎ ՍԲ
Տ խոյի տեղում վկայված է Գ (ն-ից հետո)	Փ. Բուզանդ-Ե Գ. ԱՆԻ-ՆՂԹ-1050	ընգանիս, լրնգանուրին, ընգիս բա՛անայր սր Փրկչյա (<Փրկչի)	էջ 68, 74, 116 Գ I 43
(Գ>Ք)	ՏՆԿԵ-ՆԶԵ-1036 Մախարալանք-ՄԳ	ալորքն ալո է (<ալորքն ալո է) եա՛ վալ՛ Անրեքիցի	ՍԱԲ 208 ՄՎ
Բ ձայննի տեղում վկայված է Կ խոյը	Բաբու Մանգարան-ՅՅ0 (Տիգրանահնդա աղան) Վաննվան-ՅՅԲ-903 Խժկոնք-ՈԿԳ-1214	եւ տն Փղիզի եւ տն Սեղառա (<Սեղառա) հայոց Մազառա մեծի Սընգառայ Նըրպարի	ՍԲ «ՏՆԳ» 1964, 63 ՍՍ, ՍԲ Հով ՆՍ 33
Պ խոյի տեղում վկայված է ք ձայննից	Կոչ-ՈՆԵ-1196 ԱՆԻ-ՈԿԳ-1215	եւ իլաննի աղբ (<աղբ) լուսնն Պաղնեց խանարան (խանարան)	ՄՎ Գ I 63
Փ ընդ խոյի տեղում վկայված է ք ձայննից	ԱՆԻ-ՈԿԳ-1215	զոր ինչ արանազորի է խաղաննի (<խաղաննի) ջանա... խաղաննի	Գ I 63



1	2	3	4
Գ ձայնեղի տեղում վկայված է Ի շնչեղ խուլը	ԱճԻ-ՈԶ-1231 Խճկոնք-ՈԶԲ-1233	զատարագ ինն առնել անխաբան ի սք Սարգսի (<Սարգիս) կողման	Գ 1 51 ՍԱԲ 211
Ս խուլ կիսաշփականի տեղում վկայված է ն (ն-ից հետո)	ԱճԻ-Չ(Ն)-1236 Փ. Բուզանդ-Ն զ.	հինկ այր պատարախ (<պատարախ) պաննացեալք, ըննալիս	Գ 1 36 էջ 31, 49
Զ ձայնեղ կիսաշփականի տեղում վկայված է ծ խուլը (ն-ից հետո)	ԱճԻ-ՈԿԳ-1215 Հառիճ-ԺԲ զ. Գառնի, խալաբար-ՅԻԸ-879	և չտու ըննայս (<ըննայ) ի վանքս ի լրննախյ ձկնչնցոյս խորնն ի բարխոտուլի ինն (<ինն)	Գ 1 63 ՄՎ Б. Архангелн, Гарни 84
Զ շնչեղ կիսաշփականի տեղում վկայված է ն ձայնեղը	ԱճԻ-1056—1060 Բազարան-ՆԶԳ-1034 Նորաբուլղ-ՉԻՆ-1276	տա սերմ.Ո: մոչ և ժախք զըննելոյն (<ճննելոյն) արկի այզի և շինեղի ճննան (<ճննան) շինեղի խանն (<խաշ)	Գ 1 37 ՍԱԲ 203 ՍԲ
Զ ձայնեղ կիսաշփականի տեղում վկայված է չ խուլ շնչեղը	Մազրա-ԶԶԸ-1429 Թային-Ժ զ. Ամբերդ-ՆԶՆ-1026	կանկնեցար խաննու սպասաորք խոտացան ի ստառչն (<ստառչն): Գ: այր ժամ :Ա: դահնկան չիւրս և կնոչ (<կնոչ)	ՍԲ ՄՎ. սէլմ.ա, 1961, № 5, 48, ՄՎ
Զ ձայնեղ կիսաշփականի տեղում վկայված է ն խուլը	Ամբերդ-ՆԶՆ-1026 Հավապտուկ-ՈԻԲ-1173	տաք շաղաջն վերա կարճննին (<կամուլ) մալոս (<Ջալոս>Ջալոս)	սէլմ.ա, 1961, № 5, 48 ՄՎ Հով ԽԱՂ 1 31



1	2	3	4
Յ գիրք և հնչյունը հանդիպում է	Տաթև-ՉՊԴ-1295  ձեռագիր Աշոտ Ողորմանի պարզակերթի-976	զոր Ստեփանոս մեծարգույիս Մինևաց, որ է պատասխանակու ըստ մեծի մերոյ տէրութեան Արևելից և հարախայնոյ (<հարու)	Գ II 25  Գ229 139
Ղ ձայնի շփականի տեղում վկայված է իս խուլը	Նորաշուշ-հե-391  Պեմզաչեն-ՆՁԵ-1636 Մարմաչեն-ՆԼԷ-968 Հաղաթ-ՆԶ-1021	Ես' կարիք (=Ղարիք) կանգնեցիք սուրբ Քրիստոսփոր հոգոյն  Բարեկաս ան իմոյ Աղլիստիպա ևս' Աղլիստիք հայոց մարզպան մեր ձեռզացն առնեն զպատարագն Մաթանին, Ապոլեանն (<եղայրանն)	Հով ՔԱՐ 48, ՂԱ  ՄՎ Օրճ III, 442 ԿՂԶՔ 150
Հ հազարի տեղում վկայված է իս	Մարմաչեն-ՅԱ Կյուրեղ Նորաաղանացու շնորհաբան իրի պատարագներ-Ք Գ. Բյուրական-ՆՂԳ-1044	կին լեւոյ որդոյ երա Արովսանր շուրն, որ ի վիճին խոսեցաւ (<հասցաւ)	Օրճ III, 446 ԵՔաների Մատենադարանի, 1960, № 5, 227
Խ խուլ շփականի տեղում վկայված է և	Կյուրեղ Նորաաղանացու իրի պատարագներ - Ք Գ. Անթամարի վանք-ՉԳԶ-1317	Այս իմ գիր է Զարարի իյխանաց իյխանի, որ ազգաւ Պակզաւ (<Պակզաւ) վանն հնամուտն (<խնամուտն) և գրոյն և եւրն ամին Գրիգորիան վաննանցաւ (<վաննանցաւ)	ԵՔաների Մատենադարանի, 1960, № 5, 227 Օրճ III 238
Հ հազարի տեղում վկայված է յ	ձեռագրի հիշատակարան-ՈՅԸ-1169  Յնուն-ՈՉԳ-1235	երանելի աստուծաւոր բարոյի (<բարանի)  ի Բագարտութիան Շախիլայի պատրան մեծին Շախիլայի	Գ229 398  Գ229 401 ՄՎ



1	2	3	4
<p>Յ-ի անկում բառակերպում ա, ո ձայնազորներից հետ.</p> <p>ա. Բաների անփոփոխ ձե- վերում</p>	Աստղատեր-ՉՃԹ-1263	Նա' Նանանայ որդի Զոհ' կանգնեցի զիալս	ՍՍ, ՍԲ
	Ետտ-Չ(Ա-1282	Նա' Շարվենյա' և Նայ (>Նան) կանգ- նեցաք զիալսա	Գ 11 60
	Դվին-Ծ-Չ գր. կղզիներների արև.	ծառա (<ծառայ)	ԳԳՑ 244
	Արուն-3ՃԶ-867	ծառա Սժբատա Բագրատուն	Հով ՔՍԲ 11
	Քարկոփ-3ՅԹ-910	վկա (<վկայ) Էժք այսմ գրա և վնոի	Գ 111 207
	Անի-ՆՉԳ-1034	խանան (<խանանայ), որ մեանի	Գ 1 46
	(ադ. նն. ալեուարան-3(Չ-867	սատանա (<սատանայ)	Մակվա, 1899, էջ Թ
բ. Բաների թեք նյութներում	Դվին, տապանադիր-Ե գ.	այս զիրս Կարգա բանանյի է	ԳԳՑ 244
	Ապարան, տապանադիր-Չ գ.	Դաթի Գրթուննաց ան որդա Վասկա (<արդայ Վասկայ)	ԳԳՑ 246
	Բազարան-631	տերթեան Վանայնա (<Վանանայ)	ՕրԾ ԻՒՒ 391
	Նախնավան-է գ.	որդի Հանեսա պարթի	ՕրԾ ԻՒՒ 412
	Արուն-3ՃԶ-867	որդի Վանան, ծառա Սժբատա Բագրա- տուն..., Մե և Կի Կոչա, Մե Անն (<Բագրատունայ, Աննայ)	Հով ՔՍԲ 11, ՍԿ
	Քարկոփ-3ՅԹ-910	ան ին..., ի սարմն..., այսմ գրա	Գ 111 207
	Արատն-ՆՃԶ-967	ի փրթուրիսն նոզա ինն	Գ 111 122
	(ազարյան ննմարանի ալեուարան- 3(Չ-867	Վարդա, յարդա, բփնո, միո, սրտախ, նորն, պիտա	Մակվա, 1899, էջ Թ



1	2	3	4
գ. Բայաններում	Քարվոր-30Թ-910	որ որ այսմ զհոխ շանա (=շանայ) խա- փանումն առնել	Գ III 207
	Արատես-նժԶ-967	որ կարգա, զիս իլնցէ	Գ III 122
	Անի-նեԳ-994	որ հովառ կս յիմոց կամ աւարաց	Գ I 32
	Անի-նՄ-1001	յոզոմոսիսնն ալ աղափնեցա	Գ I 35
	Մրեն-ժ ք.	որ որ ընդհմանա	Օրճ M 7
3-ի անկում բառակերպում	Միտան-նԳԶ-1917	յազալս իլնցէլ ( $\langle$ իլնցէլ)	Գ II 89
	Թանառաց վանք-ն(Ն-996	իլնայ Բա ամ զԳրիգոր Լրէց	Գ III 96
	Շողակ-նԳԶ-1017	Ովանտին իլնցէլ	ՍԲ
	Անի, պալատական կնիչ ժ ք.	ես՝ Ունի բազմամեղ ճառա ալ	Գ I 9
	Արժվանիկ-նՂԳ-1045	զ Ակոբ Լրէց	Գ III 134
3-ի անկում թեք հոլովա- ններում	Գնդկվանք-30Զ-937	առաջորդովանաք Սարգիս Բանանի	Գ III 14
	Երեբունյ-նՀՀ-1028	Մեքատ շահանջանի հզորի եւ արժանի այդպիսին ընդ Յուդի լիցի	Հով ՔԱՐ 13
	Քարվոր-30Թ-910	ես՝ Կատրանիզն հառց ( $\langle$ հայոց) թազո՛	Գ III 207
3-ի անկում հայոց բռնի մեջ՝ հառց	Գանի, խաչքար-3ԻԸ-679	ի թուականսմանն հառց նե	Ե. Արաքելյան, Գորն I, 84
	Նորաբունյ-նե-991	ազատչի Լեւեկաց ( $\langle$ լեւեկաց)	Հով ՔԱՐ, 48, ՂԱ
3 (=ի) նախորդի անկում վկայված է ն	Երեբունյ-նՀՀ-1028	թառտակա	Հով ՔԱՐ
	Բազարան-631	անբովան վանայեա ( $\langle$ վանանայ)	13 ՍՎ
3-ի հավելում բռնի մեջ ա, ս նայնախորհրդից հետո	Թայիե-Մ(Բ-763	ես՝ Ուխտայուտ վանայեան ( $\langle$ Ուխտա- ուտ, վանական)	Օրճ HT 391
			ԿՂԶ 88 ՍՎ



1	2	3	4
հայ>խայ	<p>Նժդեհ-ՆԺԳ-1005</p> <p>Սրբերայր-Ժ դ. ԱՆԻ-ՆԺ-1001</p> <p>Բազմայր-ՈԳԳ-1215</p> <p>Անաղորդի հիշատակարանների ըստ բովանդ. է դ. /ադ. ՃՆՄ. ավետարան-312-557</p> <p>Հոռոմայր-ՈՍ-1201</p> <p>ՅՆՈՆ-ՈԶԳ-1234</p>	<p>ի Մազադրամանն Գազիա լսնայլանյ (&lt;լսնանյան)</p> <p>նույլեցի (&lt;նուրզեցի)</p> <p>ձեռնդ հոյգետ (&lt;հոգետ) և արձան մշտեմնատր</p> <p>կրկնայգառիկն (&lt;կրկնոգառիկ) է ժամն ննչտայրար, դիտայրար, զանայգան, հայրց (&lt;հարց), վարդայգառն յայլեցան (&lt;յայլեցան)</p> <p>և՛ Մխթար կանգնեցի զխալս</p> <p>էկանգնեցար իսալս... կանգնեցի սր խալս</p>	<p>«Ազգ. հանդես» 1896 Ա 43 ՄՎ</p> <p>ՄՎ</p> <p>Գ I 35</p> <p>ԲԱՍ 159</p> <p>ԳՂԶ 38, 39, 43, 44, 50</p> <p>Մասկվա, 1899, էջ Թ</p> <p>ՄՎ</p> <p>ՄՎ</p>
3-ի հավելում բառավերջում	<p>/ադ. Անժարանի ավետարան-312-557</p>	<p>նմայ, սմայ, (նմա, սմա), կոխայ (&lt;կո- չայ), զարնո՛յ, մասո՛յ (զարնո՛ն, մասո՛)</p>	<p>Մասկվա, 1899, էջ Թ</p>
նոս>նոս (ո>զո)	<p>Դավարագանք-ՈՆՆ-1196</p>	<p>նոս (&lt;նոս) մեզացն գարտական նոցիցի</p>	<p>ՄՎ</p>
<p>նոս&gt;նոս (ն) (ո&gt;ա)</p> <p>նոս&gt;նոս (ո&gt;ա)</p>	<p>Թանառ ԺԳ դ. Մանահին-ՈՆ-1191</p> <p>ն. Վարդգ-ՈՆԷ-1198</p> <p>Մզարթ, իտայր-ՈՍ-1201</p>	<p>նոսան (&lt;նոս) տլին ինն և գրեցար զամլին կկեզեցիք նոսա ժամն և զատուրս հացն ի նոսա անուն զան- զանիս</p> <p>ով իսփանէ նոսան (&lt;նոս) մեզաց տլր է</p> <p>ի նոսա գափատման տուար ի Սանահինն նոսա հոգոյն</p>	<p>Գ III 82</p> <p>ԿՂՍ 106</p> <p>«Էլմ.», 1952, № 11—12, 27</p> <p>«Կրթեր» 1968 № 3, ՄՎ</p>



1	2	3	4
դ. Քայաններում	Քարկոփ-ՅՄԹ-910	որ որ այսմ վճռիս շանա (=չանայ) խա- փանումն առնել	Գ III 207
	Արատես-ՆԺԶ-967	որ կարգա, զիս յիշեցէ	Գ III 122
	Անի-ՆԻԳ-594	որ հական կա յիմոց կամ առարաց	Գ I 32
	Անի-ՆՄ-1001	յոզորմութիւնն ալ ապահնեցա	Գ I 35
	Մրեն-Ժ դ.	որ որ ընդդիմանա	Օրճ M 7
Յ-ի անկում բառակերպում	Մրտիան-ՆԿԶ-1017	յարալիս իլեցէլ ( $\langle$ իլեցէլ)	Գ II 89
	Քանառաց վանք-ՆՆ-596	իլեայ Քս ամ զԳրիգոր Էրեց	Գ III 96
	Շովակ-ՆԿԶ-1017	Ովանէսին իլեցէլ	ՄԲ
	Անի, պալատական եկեղ. Ժ դ.	ես՝ Ոսէի բազմամեղ ժառա ալ	Գ I 9
	Արծվանիկ-ՆՂԳ-1045	զ Ակոբ Էրեց	Գ III 134
Յ-ի անկում թեք հայտվա- ններում	Գնդեվանք-ՅԶԶ-937	առաջերգութեամբ Մարգիս Կանանի	Գ III 14
	Երեբունյք-ՆՆԷ-1028	Սմբատ շահանշահի հզորի եւ արմաի	Հով ՔԱՐ 13
	Քարկոփ-ՅՄԹ-910	այրախին ընդ Յուդաի լիցի	Գ III 207
Յ-ի անկում հայոց բառի մեջ հասց	Գանի, խայրաբ-ՅԻԸ-879	ես՝ Կաթանիդե հասց ( $\langle$ հայոց) Մազո:	Б. Аракелян, Гарни I, 84
	Նորադուղ-ՆՆ-991	ի թուականութեանն հասց նե	Հով ՔԱՐ, 48, ՂԱ
Յ (=ի) նախդիրի անկում վկայված է ն	Երեբունյք-ՆՆԷ-1028	ազատեցի Հեռեղաց ( $\langle$ Երեբունյք)	Հով ՔԱՐ
		թաստակա	13 ՄՎ
Յ-ի հավելում բառերի մեջ ա, ո ձայնավորներից հետո	Բազարան-631	տերութեան Վանայեա ( $\langle$ Վանայ)	Օրճ ИТ 391
	Թալին-ՄՂԲ-783	ես՝ Ուխտայտուր վանայեան ( $\langle$ Ուխտա- տուր, վանայեան)	ԿԳԶ 88 ՄՎ



1	2	3	4
	<p>Նժդեհ-ՆՅԳ-1005</p> <p>Նրերույժ գ. ԱՆԻ-ՆՅ-1001</p> <p>Բազմայր-ՈԿԳ-1215</p> <p>Ճնուգրերի հիշատակարաններ բառ բովանդ. է գ.</p> <p>Լազ. ճնմ. ավետարան-3(Զ-887</p>	<p>ի թարգմանմանն Գաբրիա շահայկանի (&lt;շահանյան)</p> <p>նորուզեցի (&lt;նորուզի)</p> <p>ձնունդ հոյզեւոր (&lt;հոզեւոր) և արձան մշակելնատր</p> <p>կրկնայգատիկն (&lt;կրկնագատիկ) է ժամն նկտայրաւ, քիտայրու, զանայզան, հայրց (&lt;հարց), վարդայպետն</p>	<p>ԵԱԳԳ. հանդես 1896 Ա 43 ՄՎ</p> <p>ՄՎ</p> <p>Գ 1 35</p> <p>ԲԱՍ 159</p> <p>ԳԶԶԶ 38, 39, 43, 44, 50</p>
<p>խաչ&gt;խաչ</p>	<p>Ղուկաս-ՈՄ-1201</p> <p>Յնուն-ՈԶԳ-1234</p>	<p>յայգեցան (&lt;յագեցան)</p> <p>և՛ Մխիթար կանգնեցի զխաչս</p> <p>էկանգնեցար իսալս... կանգնեցի ար խաչս</p>	<p>Մտովմ, 1899, էջ Թ</p> <p>ՄՎ</p> <p>ՄՎ</p>
<p>3-ի հավելում բառավեր- բում</p>	<p>Լազ. Ճնմարանի ավետարան-3(Զ- 887</p>	<p>նմայ, սմայ, (նմա, սմա), կռչեայ (&lt;կռ- չեա), դարնո՛յ, մատո՛յ (դարն՛ս, մատո՛)</p>	<p>Մտովմ, 1899, էջ Թ</p>
<p>նոսա&gt;նոս (ո&gt;զո)</p>	<p>Մակարավանք-ՈՆԻ-1196</p>	<p>նոս (&lt;նոս) մեզացն գարտական նղեցի</p>	<p>ՄՎ</p>
<p>նախ&gt;նախ (ն) (ա&gt;ա)</p> <p>նոցա &gt; նա ա (ո&gt;ա)</p>	<p>Թանտա ԺԳ գ.</p> <p>Սանահին-ՈՆ-1191</p> <p>Ն. Վարդգ-ՈՆԷ-1198</p>	<p>նախն (&lt;նոխ) այլն ինն</p> <p>և գրեցաք զամեն կնկեղեցիք նոցա ժամն և զատուրս հացն ի նոցա անուն զան- զանիս</p>	<p>Գ III 82</p> <p>ԿՂՍ 106</p>
<p>Նզարթ, իւրար-ՈՅ-1201</p>	<p>Նզարթ, իւրար-ՈՅ-1201</p>	<p>ով իափանէ նոցան (&lt;նոցա) մեզաց տէր է</p> <p>ի նոցա գտիտուման տուար ի Սանահինն նոցա հոգոյն</p>	<p>«էջմ.», 1952, № 11-12, 27</p> <p>«Իրարի» 1968 № 3, ՄՎ</p>



1	2	3	4
<p>Սոցա &gt; սացա (ս &gt; ա)</p> <p>ձ(ֆ) &gt; ճ(ֆ) / գնժքի բա- յաձձեքում</p>	<p>Բարձրարաշ-ՈԶԸ-1239</p> <p>Մղարթ, խաչքար-ՈՄ-1201</p> <p>Լազ. ճեմ. ամենաբան-ՅԼԶ-887</p> <p>Եծկոնք-ՆԶ-1031</p> <p>Հաղրատ-ՇԺԶ-1067</p> <p>Հաղրատ-ԶԺԱ-1262</p> <p>Սյունի վանք-Բ-Ժ գր.</p> <p>Հաղրատ-ՈՆԲ-1200</p> <p>Փանի-խաչքար-ՅԻԸ-879</p> <p>Շիրակական-ՈԶԷ-1228</p> <p>Հերհեր-ՉԻԲ-1283</p> <p>Հալիձոր ԶՓ-1260</p>	<p>բնկալա զազա (&lt; սոցա) յոյն</p> <p>որ ժարդ ի սացա դուռն չգա</p> <p>կատարենք (&lt; կատարեմք) որիտ առ ամ</p> <p>որ կանք (&lt; կամք) ի թաղման</p> <p>յամենայն եկեղեցիքս ժամ անենք (&lt; անենք) ..., իւր մեղացն անենք</p> <p>կենդանի ենք գոր ամ տա, ալլ մենք (&lt; մենք) արդինս</p> <p>Ես՝ Շապու Փարզա պատրիկա որդի գնե- ցի ար մին (&lt; սի) ժամ</p> <p>զմին (&lt; զսի) ար ինչ</p> <p>Ես՝ կատարանդն հասց բազոն</p> <p>Վրաց և Հասց և Եսիկն բազոնի և Բաբուկաշտոնոյ (&lt; Բաբուկաշտոնոյ) Սանդղատոյ</p> <p>Կանկենցիք զխաչա հուն (&lt; հար) ժերո Փորթա, մուն ժերո թէնիկա</p>	<p>եղջմ., 1951, № 9--10, 42, ՄՎ</p> <p>Վրացիք, 1968 № 3, ՄՎ</p> <p>Մանկիկա, 1899, էջ Բ</p> <p>ՍԱԳԳ. Հանդես, 1895, Ա, 41--50</p> <p>ԿՂԶԲ 156</p> <p>ԿՂԶԲ 212</p> <p>Գ 11 90</p> <p>ԿՂԶԲ 176</p> <p>Բ. Արաքեյն, Դարն 1, էջ 84, ՍԱԲ 170</p> <p>Գ 111 51</p> <p>Գ 11 53</p>
<p>Մեք &gt; մեք</p> <p>Մի &gt; մի</p>			
<p>Ունի &gt; ունի (ու &gt; ո)</p>			
<p>0 գիրք աւ երկրարարանի փո- խարեն, բաղամայնից ա- ռաջ</p>			



ՀԱՄԱՌՈՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՀ — «Ազգագրական հանդես»  
 ՐԱՍ — Բասմաճյան Կ., Հայերեն արձանագրությունք Անվոյ, Բազնայրի և Մարմա-  
 շինու, Փարիզ, 1931, Basmadjian K. Les inscriptions armeniennes d'Ani,  
 de Bagnair, et de Marmachen, Paris, 1931.
- Գ I — Գիվան հայ վիճագրության, սր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի,  
 Ե., 1966:
- Գ II — Գիվան հայ վիճագրության, սր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջան-  
 ներ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1960:
- Գ III — Գիվան հայ վիճագրության, սր. III, Վայոց ձոր, Եղեգնաձորի և Ազիզբե-  
 կովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1967:
- ՀԱ — «Հանդես ամսօրյա»  
 ՀԳՀԶ — Հովսեփյան Գ., Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951:  
 ՀՈՎ ԽԱՂ I — Հովսեփյան Գ., Խաղրակյանք կամ Պոռչյանք հայոց պատմության  
 մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928:  
 Հով ԽԱՂ III — Հովսեփյան Գ., Խաղրակյանք..., մասն Գ, Նյու-Յորք, 1942/3:  
 Հով ՀԹ — Հովսեփյան Գ., Հավոց թատի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձան-  
 ներ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937:  
 Հով ՆԱ — Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և  
 մշակույթի պատմության, սր. Ա, Երուսաղեմ, 1935:  
 Հով ՆԳ — Հովսեփյան Գ., Նյութեր..., սր. Գ, Նյու-Յորք, 1944:  
 Հով ՏՄ — Հովսեփյան Գ., Տարսայիճ Օրբելյանի և Մինասիաթունի սերունդը,  
 Անթիլիաս, 1947:  
 Հով ՔԱՐ — Հովսեփյան Գ., Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913:  
 ԿՂԱ — Ղաֆաղարյան Կ., Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը,  
 Ե., 1945:  
 ԿՂԳ — Ղաֆաղարյան Կ., Գլին քաղաքը և նրա պեղումները, Ե., 1952:  
 ԿՂԵ — Ղաֆաղարյան Կ., Երևանի կաթողիկեի և Կորահայտ հուշարձանի վիճական  
 արձանագրությունները, «Տեղեկագիր ՀՍՍՀ Պատմության և գրականության  
 ինստիտուտի», Ե., 1938, Ա. դիրք:  
 ԿՂՀԲ — Ղաֆաղարյան Կ., Հաղրատ, Ե., 1963:  
 ԿՂՀԳ — Ղաֆաղարյան Կ., Հայկական գրի սկզբնական տեսակները, Ե., 1939:  
 ԿՂԸ — Ղաֆաղարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948:  
 ԿՂՍ — Ղաֆաղարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները Ե., 1957:  
 МАРР НМ — Марр Н. Я. Новые материалы по армянской эпиграфике  
 СПб. 1893.  
 Մով — Տեր-Մովսիսյան Մ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և  
 Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938:  
 ՄՎ — Մեր հալաբաժու  
 ОРБ М — Орбели И., Надписи Мрена (անտիպ հավաքածու):  
 ОРБ ИТ — Орбели И., Избранные труды, Ереван, 1963.  
 ՊՐՀ — «Պատմա-բանասիրական հանդես»  
 ՍԱՐ — Սարգիսյան Ն., Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:  
 ՍԲ — Ս. Բարխուդարյանի անտիպ հավաքածու  
 ՍՍ — Ս. Սաղումյանի անտիպ հավաքածու  
 ՎՏ — Վիճական տարեգիր, Յուշակ-ժողովածու արձանագրությանց հայոց, կազ-  
 մեց Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913:  
 ЭВ — «Эпиграфика Востока»  
 ВЯ — «Вопросы языкознания»  
 WBM — Karst J., Wörterbuch des Mittelarmenischen-Մտանկադարանու մ,  
 պահպոյ արթիվ:



## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա ա ջ ա ր ա ն . . . . .	5
-------------------------	---

### I ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Միջին դարերի վիճական բնագրերն իբրև հաշիւների պատմության աղ- բյուրներ . . . . .	11
Բ. ակնարկ վիճական բնագրերի վերծանությունների և լեզվաբանական ուսումնասիրության պատմության . . . . .	44

### II ՀՆԶՅՈՒՆԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### Գ լ ու խ ա ո ա շ ի ն

#### Ձայնավորների փոփոխությունները

Ա. ձայնավոր . . . . .	81
Ե, է ձայնավորներ . . . . .	96
Ը ձայնավոր . . . . .	113
Ի ձայնավոր . . . . .	122
Ո (Յ) ձայնավոր . . . . .	130
ՈՒ ձայնավոր . . . . .	144

#### Գ լ ու խ ե ր կ ր ու ղ

#### Երկրարձների փոփոխությունները

ԱՅ երկրարձա . . . . .	159
ՈՅ երկրարձա . . . . .	177
ԱԻ երկրարձա . . . . .	184
ԻԻ երկրարձա . . . . .	191
ԵԻ երկրարձա . . . . .	201
ԵԱ երկրարձա . . . . .	204
Եոարարձաներ . . . . .	228

#### Գ լ ու խ ե ր ր ու ղ

#### Բաղանայների փոփոխությունները

Խուլ և ձայնեղ պայթականներ . . . . .	233
Խուլ-հեշեղ պայթականներ . . . . .	267



Խուլ և ձայնեղ պայթաշփականներ . . . . .	270
Խուլ և ձայնեղ շփականներ . . . . .	287
Ձայնորդներ . . . . .	299

**Գ Լ Ս Ի Ս Հ Ո Ր Ր Ո Ր Պ**

**Գիրքային և փոխազդեցական հնչյունափոխություններ**

Գրափոխություն . . . . .	326
Հնչյունների անկում . . . . .	332
Հնչյունների հալկում . . . . .	350
Հնչյունների առնմանություն . . . . .	363
Հնչյունների տարնմանություն . . . . .	372
Արտակարգ հնչյունափոխություն . . . . .	375
Ժամանակագրական տախտակ հայերենի հնչյունափոխության մի շարք երե- վույթների՝ վիժական բնագրերում ալանդլած հնագույն վկայություն- ների . . . . .	381
Համառոտագրություններ . . . . .	397







[1000, 1998]

ՉԱՍ Քիմնարար Չիտ. Գրադ.



FL0673591



11  
1108365